Universitäts- und Landesbibliothek Bonn

Patmowt'iwn tann Sisakan

Step'annos <Ôrbêlean>

Moskau, 1861

urn:nbn:de:hbz:5:1-9838

Visual Library

Goüsson 3257

89/8259

ՍՏԵՓԱՆՈՍԻ

ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՆՆ ՍԻՍԱԿԱՆ

Ի ԼՈՑՍ ՀՆԱՑԵԼՑ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

ՓՈՄՊԱՒ

1861

3257

Etienne de Siounie

Histoire de la famille de Tisak

éditée par B. Smirn

Moscou 1861

ՍՏԵՓԱՆՈՍ

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ

ՍՏԵՓԱՆՈՍԻ

ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՆՆ ՍԻՄԵՈՆԱՆ

Ի ԼՈՑՍ ԸՆԾԱՑԵԱՑ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

ԾԱԽԻՒՔ ՆԵՐՔԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԵԻ ԱՍՊԵՏԻ

ԽԱՉԱՏՐՈՑ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵՎԻ

ՓԱՐԻԶ

ՏՊԱՐԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

1861

Согласно одобренія г. Бероева печатать позволяется съ тѣмъ, чтобы по отпечатаніи было представлено въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. С.-Петербургъ, 4 Февраля 1860 г.

Цензоръ *В. Бекетовъ.*

Ի ԳԻՇԱՏԱԿ

ՀԱՆԳՈՒՅՑԵԼ ՀՈԳԵՐԿԵՐՉՈՒԻ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

ՆԵՐՔՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

ՍԻՆԵԿԱՊԵՏԻ ԵԻ ԱՍՊԵՏԻ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎՀԱԳԱՓԵՑԻ

ԼԱԶԱՐԵՎԻ

Ձերկու գրչագիր անեծուական օրինակս — յորոց մին թերի — և զտպագրեալն ի Պարիս ի 1859 ամի բնագիր Հեղինակիս ունէաք առաջի, որոց բաղդատութեամբ ի լոյս հանեմք զայս մեր տպագիր և յօժարամիտ նուիրեմք մերոց և օտարազգի բանասիրաց:

ՎՈՍԿՎԱ,
ՑՈՒԼԻՍ, 1861:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՆՆ ՍԻՍԱԿԱՆ

Հանդէսք բանից քաղցրավէպ պատմեն թէ ոմն Ցանս Սիսական՝ հրաշահիւս յօրինուածովք յարմարեալ գիշատակարանս հնոց նուագաց և ապիկար հոգւոյ Աստուածնոյ՝ Սիւնեաց այցելուն և նախագահ վեցապօլսի, որգւոյ մեծափառ իշխանաց իշխանի Ցարտայիճի. որ և կոչի առ յիշատակ յայնմ առեան։

ԳԼՈՒԽ Ա

Նախադրութիւն գրոցս և պարծանս առանձին։

Ակիզբն ամենայն գոյացութեանց Աստուած, ակիզբն ամենայն բարեաց սէր, ակիզբն ամենայն շնորհաց խոհականութիւն։ — Աստուած է ակիզբն ամենայն գոյացութեանց, զի՝ ի նմանէ սկսեալ և յառաջ եկեալ ամենայն բնութիւնք արարածոց երևելեաց և աներևութից՝ բաժանեցան՝ ի զանազան տեսս և՝ ի տեսակս, և տրոհեալ տպաւորեցան ըստ իւրաքանչիւր պատշաճի՝ ի ձեւս, ՝ի կերպս և յօրակս։ — Սէր է սկիզբն բարեաց, զի՝ ի նմանէ ճնանին ամենայն հոյլք զանազան բարութեանց առ Աստուած, առ հրեշտակս և առ մարդիկ. առ Աստուած՝ զի՝ ի սիրոյ շարժեալ գոյացոյց զեղեալքս ամենայն, և՝ի սիրոյ շարժեալ առակս պատկերին՝ ՚ այլն ոչ խնա-

յետ Աղբին, Աղբին ոչ լինայեաց յանձն, Հոգին ոչ լինայեաց ՚ի միշտ բաշխելն մարդկան. — սա հրեշտակք՝ զի անխոնարհ կամեք, անխզելի սիրով միշտ միացեալ են ընդ Աստուած, և միշտ հոգան վասն մարդկան՝ գոյակից և ծառայակից գոլով մեզ. — սա մարդիկ՝ զի ՚ի սիրոյ յղացեալ ծնանին զամենայն բարիս հոգևոր և մարմնական. հոգևոր այնպիսի՝ զի պանձիցս սակս սիրոյ արքայութեանն ՚ի մահ մնասնեն և ՚ի գանազան տանջանս և ՚ի ձգտունս անհնարինս առնք և ժամանակք. և մարմնաւոր, այսինքն՝ ըստ աշխարհիս այնպիսի, զի ՚ի խնդաց և ցնծալին և յանհնարինն ձևնասրկին: — Խոհականութիւն է սկիզբն շնորհաց. զի առաջին շնորհք որ ՚ի մարդիկ հոգևոր և մարմնական, եթէ ՚ի բանս և եթէ յարհեստս, նախ խոհականաւն խորհեալ լինի, և յետ բազում՝ որոնմանց և ընտրութեանց լաւին և վատթարին, օգտին և անօգտին, ապա յառաջ եկեալ լինի իմնատ և բան խորհրդական, և կամ արուեստ կատարեալ՝ ծնունդք գիտելիքք յընտիր ծնողէ խոհականութեանն:

Եւ արդ առեղծ Աստուած զմարդն առաջնոյ նման իւրեանն, և եդ զերիս զայս ՚ի նմա, որով կարող գոյ առաջնոյ նմանիլ Աստուծոյ, այս է՝ զարարչութիւնն, զէրն, զհոգևկանութիւնն, որ է բանականութիւն. — զարարչութիւնն, որով արարչակից լինի առեղծողին. զէրն, որով միշտ բազձայ ցանկալոյն, և հանապազ ջանայ հասանել և վայելել ՚ի նմին. զհոգևկանութիւնն, որով որշէ յանպիտանէ և կարող գոյ խորհիլ և ընտրել զպիտանին և զանպիտանն, զվնասակարն և զօգտակարն. և ուսմամբ և ջանիւ ՚ի կատարեալն հասանել հասակ: Եւ թէ ոչպէս լինի արարչակից, վարդապետք ուսմամբ զհոգևս ոգիսն առնեն այր կատարեալ. քահանայք զհոգեծին ծնունդս՝ անեղս, և զմարդիկ՝ աստուած. իսկ արհեստաւորք գոյացուցանեն յանպատշաճ իրաց զպատշաճաւոր և զպիտանի. որպէս հիւսունք ՚ի մկրտէ սեղան և աթոռ,

կարուսակք յօդևաց՝ կշռիկ և զգեստ. զպղծինք ՚ի քարանձ՝ երկաթի, և յերկաթոյ՝ սուսեր և այլ ինչ գործիք: — Ահա այսոքիւք ղանձնին մարդիկ Աստուծոյ և արարչակից կոչին: Ահա սակս այսր պատճառի ոչ կարէ զօրել մարդն զերիս զայս շնորհս յանձն մարմնոյն թագուցանել և անզգոյ պահել. այլ միշտ եւս զեւս կայտառացով և ջանայ զամենայն ՚ի գործ արկանել, զի ՚ի վերկոյս ունի միշտ զձգտումն և զարիւմն առ աղգակիցն և գործին [1]: Ապա ունակ յղացեալ մարդն ՚ի սիրոյն ևթէ բարի և ևթէ չար՝ սաղմն առեալ յարգանդի մոցն միշտ խորհի խոհականաւն, յօրինէ զնաթս պիտոյիցն և զանոյ ծնանիլ և ՚ի կատարումն ածել զպաշձալին. և ապա յառաջ բերեալ գործէ՝ զոր յղացաւն սիրով և յարմարեալ խոհականաւն. և լինի արարիչ այնմ իրի:

Յորոց մի և ևս վտանգարգոյնս քան զամենայն մարդ և վերջինս ՚ի ծնունդս ևկեղեցւոյ՝ լի անկարգութեամբ և պղծով յամենայն գործս պիտանիս և ճնացականս, լքեալ ՚ի լուսոյն և եղծեալ ՚ի շնորհացն, ոչ զօրեցի առնել այսմ արարչաւանդ պարգևացս, որ ՚ի բնութեանս մեր. այլ սիրմն առեալ ՚ի սիրոյն՝ վազ առուրըք և յորով ժամուանակք՝ եւս այր յիս տարփումն բաշձանաց. և խորհէի խոկայի խնդրէի սակաւ ինչ պրեթէ, քան լսանցին պաղարիկի ՚ի սուրբ ևկեղեցիս երկնահանգէտ և առաւաձարտակ Տաճս Ամասիոյ, այսմիսքն՝ ընձեռել զորով լսոյ խնամ կարի զգայագաստութիւն նախատարութեան և զմեծ նահապետութիւն բարձր իշխանութեան Աբրահամ, և զնախահպետութիւն վսեմական և առաւաձամեծար ամոռոց հայրապետութեանս այսմ: Եւ այս ոչ վայրապար, այլ Հոգւոյն սրգմամբ. զի ՚ի նուագիլ առուլցս և ՚ի վերջին ժամանակս տեսաք ամենայնիւ բարձեալ և ջնջեալ զիշատակ այսց գեղեցիկ և մեծատաւ ամոռոց ակրութեան. մարմնականն

---

[1] Աստ սր. գրափառն առ ագիմիցան և ֆորիե այս ֆառով:

բնաւին սպառեալ և՛ի մեռանելոյն անկեալ, և հոգևորն ոչ ընդ-
հատ քան զնա մերձ՝ ի սպառումն: Եւ յորով կրկնք որոնեալ՝
ոչ գտաք յառաջնոցն զիշատակ սոցա ընդ գրով արկեալ և
զինի եկելոցս թողեալ արձան գովելի: Եթէ ոչ էին գրեալ և
կամ թէ՝ ի բազում աւերմանց և հինահարութեանց կորու-
սեալ էր՝ ոչ գիտեմ: Յաղագս որոյ և մեք ոչ կամեցաք ան-
փոյթ առնել և ընդ անզիտութեան խաւարաւ թողուլ և կո-
րուսանել զորպիսութիւնս այսոց իշխանութեանցս, և զանա-
զան զբոյցս պիտանիս և գովելիս, հոգևոր և մարմնական գոր-
ծոց իշխանաց և հայրապետաց: Եւ այս կրկուս պատճառաս.
մի՝ զի մի՛ կորիցեն առաջնոցն գովելի գործք քաջութեանց և
զի մի՛ բնաւին ջնջեսցի և յանգիտութիւն անկցի զինի եկելոցս
յիշատակ առաջնոցն և ժառանգութիւն եկեղեցեացս, նաև
մի՛ շփոթեսցի ահման իշխանութեանս և խանգարեալ քակ-
տեսցի և պատակտեսցի՛ ի զանազան բաղբանջմանց, որպէս և
եղեւն իսկ բազում անգամ: և զի ծանիցեն զպատիւ և զպարծ
իշխանաց և հայրապետաց Միւնեաց և զամենայն կարգ սահ-
մանին նոցա, և մի՛ զրկեալ կողոպտեսցի յազահոգաց և՛ ի
դիւապատիր մարդկանէ: Այլ թէպէտ ցանկալի է ինձ այս,
այլ սաստիկ երկիւղիւ անկրթութեան ուղղոյս [1] ընդոստուցեալ
միտք իմ վրիպեցուցանէ զիս յառաջարկութեանցս: Սակս
որոյ սաստար առեալ ննջուկ և օդնական զաղօթս նախնին սուրբ
հայրապետացն և զձեր իսկ ընդերկրպադացդ, նաև զընտրհս մե-
ծի և առաքելական եկեղեցւոյս և աստուածապատմալ սրբոցս՝
կառուցից զգաղշատարս մտաց՝ ի յոյն անզրծանելի [2] և՛ի սէ-
բըն անկիզծաւոր, և զօրացեալ՝ ի Նանէն որ բանիւ զոյացոյց
զեղեալքս ամենայն՝ ուղղեցից զընթացս բանիս՝ ի վերայ ան-
յայտ շաւղաց անկոխ ոտիւս՝ սկիզբն առնելով համառօտիւք
հին և նոր զրուցաց յոդնաւանդեան վիսպագրութեանս, որոյ ա-

---

[1] Այլ օր. ուղղայս: — [2] Այլ օր. ի յոյն անզրծանելի:

ւսրան և նաւահանգիստն յանձն է քաջ և անմոլար նաւա-
պետին: Եւ արդ՝ ով եղբարք, ի բազում ամաց անչափակալ
իմ այսմ խրատոյ ծանութեան, զորոյ զպատճառն կանխագոյն
ասացի, և սահիկալ միշտ ի տապոյ բաղձանացս, բազում
խոյզ քննութեան ի մէջ առեալ՝ տեղեկացայ յաշխարհս հի-
ւսւսոս և ի մծռաւորս, ի վանորայս և յարկեղս հնագէտ
պատմութեանց, և ոչ ինչ գտաք միշտակ զբուցաբանու-
թեանց ուրոյն այսմ աշխարհի և կամ զտեղեկութիւն իրաց:
Ապա հանդէս արարեալ ամենայն պատմագրաց ՚այոց, և
զոր գտաք՝ հաւաքեցաք ի նոցանէ ամենայն ճշդիւ, նաև սա-
կաւ ինչ ի պետրոսի Արևնեաց եպիսկոպոսի ճառէյն, որ վասն
Ռարկայ՝ Արևնեաց տեառն, և այլ ինչ ի հին նամակաց թա-
գաւորաց ՚այոց և իշխանաց Արևնեաց, նաև ի կաթողիկո-
սաց ՚այոց և յեպիսկոպոսաց Արևնեաց, որ միաբանեալ էին ի
վաղ ժամանակաց յամուրս քարանձաւին, որ ի սուրբ ու-խ-
տրս հայրապետանոցիս Տաթեւ, եւս և յարձանագրութեանց
եկեղեցեաց և ի հիշատակարանաց գրոց ատտ և անդ գտեալ
զթիւ աւուրց և զթուականն ժամանակաց իշխանաց և եպիս-
կոպոսաց, և իւրաքանչիւր գործոց և բանից, շինութեանց և
աւերմանց, նաև կարգի և սահմանի և պատուոյ սուրբ սքո-
ռոյս և առատաձեռն պարգեւաց ի սուրբ եկեղեցիս, զորս ժո-
ղովեալ՝ սեւագեղով եդաք ի մի պատմութիւն[1] տակաւ ինչ
տեղեկութիւն, զոր հնարս էր ի մէնջ և կար: Եւ տակս տուս-
դութեանն առաւել տաժանելագոյ՝ սկսեալ յառաջին նա-
հապետէն Արամայ մինչև ի բաց բարձումն նոցին, և յա-
ռաջին եպիսկոպոսէն Արևնեաց ի Գրիգորէ մինչև ի մերս ա-
մանակ թշուառութեան, — զոր և ընկալ դու սիրով և հա-
ւատաս պրիսկացս ամենայն ողջմտութեամբ, և շնորհ կալ
՚ոդւոյն և զմեզ ամենապատիւ թոզ:

---

[1] Այլ օր. պարտիմիս:

ԳԼՈՒԽ Ա

Սուրբ պսակաւորութեան եւ նախնական նախապատրաստութեան. երիտասարդութեան նահապետութեան: Սիրոյն պսակին յանպատրաստ հետեւիլ:

Տիրապատուէր հրամանատուն պարտաւորեցուցեալ յանդգնաբար օրէնս ժամանակակից խնդրոցաց յայն՝ որ ասէ «Ամէն ինչ ձեզ դիտել ժամն եւ ժամանակս զոր Հայր եդ յիւրում իշխանութեան», միայն հետոց անուանցն եւ ծննդաբանութեանցն հետեւեցուք առաջ կոտակաւ՝ յարմարացոյն մարդկութեանս միջ՝ ի սկիզբն նահապետութեան աղգին Աբրահամ. եւ այս՝ վասն զի ծանիցես զնոսա ոչ՝ ի խառնիճաղանձ ամբոխից, կամ վասն յառաջադիմութեան ինչ կամ վասն պատահմանն ունել զնախահաւր նահապետութիւնն. այլ՝ ի ծայրագոյն եւ յազնուական տոհմէ յատուածատեղծ մարդոյն սկսեալ եւևելի հաղագաւորութեամբ զդիպիք զհարս փոխանակելով՝ հասին՝ ի նախարարութիւն:

Լոկ գաւառք ունի երկոտասան. առաջինն, որ ունի զբուն գահ իշխանացն եւ հայրապետաց, Ծղուկ գաւառ՝ անուանեալ՝ ի Ծղկոյ գաւառապետէ:

Երկրորդ՝ Վայոց Ձոր, որ՝ ի հասարակական դիպուածոյ ազգոյ եւ աշխարհանաց կոչեցաւ Վայոց ձոր:

Երրորդ՝ Գնդաքունի, որ՝ ի հայկեանն Գնդամոյ կոչեցաւ Գնդաքունի:

Չորրորդ՝ Սոթից գաւառ, որ սակս հանապազորդեան բրքոց եւ գառնաշունչ օդոյն կոչեցաւ Սոթք:

Հինգերորդ՝ Ողջաբերդ գաւառ, որ այժմ կոչի Կաշաթաղ եւ Խոժոռաբերդ:

Վեցերորդ՝ Հարանդ գաւառ:

Եօթներորդ՝ Կապք գաւառ, որ այժմ կոչի Ըձեն, որ՝ ի Կապակայ անուանեցաւ:

Ախթևրտրդ՝ Ասխատան գաւառ, որ այժմ Գրհամ կոչին։

Խնևերտրդ՝ Ըրևիք գաւառ, որ այժմ կոչի Տաշտան և Մեղրի։

Տաներտրդ՝ Ձորք գաւառ, որ ունի զանհնագոյց տաճարն Բաղաբերդ, և այժմ կոչի Կապան։

Մհասանևերտրդ՝ Եղինջակ գաւառ և Գողթն։

Երկոտասանևերտրդ՝ Ճահուկ գաւառ, որ և ձորն որ Շահատօնս կոչի։

Ընդ այսոքիկ են գաւառք երկոտասանք զլեառըք Մխենեաց։ Բայց այլ ևս ունի գաւառս յոլովս, զորս ոչ յիշեցաք. է՝ որ փոխեալ են անուանք սոցա, է՝ որ յայլ և այլ գաւառս բաժանեալ են։ Իսկ տաճարք անտառիկք՝ ի տա՛ս, որ՝ ի մարդկան հնարից հեռացեալ են, բայց միայն թէ Ցէր մատնեսցէ՝— Բաղաբերդ, զոր և մի ոմն՝ ի զարմից Մհասակայ՝ Բաղակ անուն, առեալ զայս գաւառ՝ ի մեռանելոցն ժառանգութեան՝ շինէ զքարն Բաղակայ յամրոցս, որ կոչի Բաղակի քար, և ամրացուցանէ զերկրն և կոչէ Բաղաբերդ. և գաւառն յիւր անուն կոչեցաւ Բաղաց գաւառ։ Իսկ մի ոմն՝ ի կանանց նոյն նահապետացն՝ Եղինջիկ անուն, շինէ և զանհնարին տաճարն Եղինջակայ և յիւր անուն բերդն և գաւառն կոչի Եղինջակ. և դնեն՝ ի նմա զտուն գանձու և հարկաց աշխարհին։ Եւ այլ ևս տաճարք գողթնիք անվախ և անտաման՝ ի հնարից մարդկան— Հայրաբերդ, Գրհամ, Մայրի, Շղբուտ, Ալքերդ, Բարկուշատաբերդ, Ընդոկաբերդ, Գևզաքաւնոյ բերդ, Ռղինոյ բերդ, Վանանդաբերդ[1], Ռոտոդանաբերդ, Հանբաղաբերդ, որ՝ ի նոյն տոհմէ Մհասակայ՝ ի Ձագկայ նահապետէ շինեալ՝ ի վերայ գետոյ միոյ, կոչէ յիւր անուն զձորն Ձագձոր և զբերդն՝ Ձագձորոյ բերդ, Բաշեթաղուց բերդ, Խոժոռաբերդ, Ռոտանբերդ, Մհունեաց բերդ,

[1] Ընդ որ. Վանդոյ բերդ։

Ռոտոց բերդ, Հ֊ահատօնից բերդ՝ ի Հ֊ահապայ պարսկէ շինեալ և զձորն յիւր անուն Հ֊ահատօնից ձոր, որ հատուա֊ծի պատճառաւ եկեալ էր առ նահապետս Միհնէ։ Իսկ ի Վ֊այոց ձոր՝ Կապոյտ բերդ, Հ֊րաւիկայ բերդ ի Հ֊րաւիկայ շինեալ անհնարին ամրութեամբ առառաւծատեղծ պարիս֊պօք ամրացեալ. Աուլեմաբերդ՝ ի Աուլեմայ տանուտեառնէ շինեալ, և այլ ևս յոլովս, զորս աւելորդ համարեցաք գրել։ Իսկ ունի մեզրաքաղաք զՆախիջևան։ —Եւ արդ այս այսքան տեղեկութիւն քեզ բերմանց[1] և տահմա֊նաց և բերդից և դաւառաց Միսական աշխարհիս։

ԳԼՈՒԽ Գ

Սակս նախախրքոնեան Սիսական տոհմին, ըստ որոց կոչեցեալ ի Վ֊ահրշակայ Ընտիսորէ Հայոց։

Փախադելի է մեզ այժմ թողուլ զամենայն մնոտիասպա֊տում վէպս հնոցն, և բուռն հարուլ միայն զերջանկաւէս բարեբաստութեանց և նախագահ նախակարգութեանց վե֊հափառ տերանցն Միհնէի և ցեղին Միսակայ. քանզի երկք աշ֊խատութեանց յոլով են, և շահ օգտութեան և ոչ մի ինչ. յորմէ ի բաց տարեալ զձգտումն մնացս՝ պիտանիքն միայն ի մէջ անցեալ արձանագրին մեզ։

Ընդ սկսեալ նահապետութիւնս այս ի նախնոյն Միսակայ երևելի հարազատութեամբ պայազատեան զտէրութիւնն որ֊դիք ի հարցն երկայն և բազում ժամանակօք։ Կազում և մեծամեծ քաջութիւնս ցուցեալ ի պատերազմունս թագա֊

---

1 Թէ և առաջնօր ակնարկէ մատենագիրս ի Բերմառն և ի պարսպաբնիկոն Սիւ֊նեաց աշխարհին, սակայն՝ ցաւէ մեզ ասել, զի այդ ցանկալի տեղեկութիւն ոչ տեսանի ոչ յերկոսին գրչագիր յօրինակս մեր և ոչ իսկ ի Փարիզ տպագրեալն։

ուրացան ՚ի Տայոց. և բազում և մեծամեծ պատգեաք և գահիւք պատուեցան ՚ի Թագաւորացն Պարթից և ՚ի Տայոց, նաև Յունաց իսկ: Եւ այնքան անուանիք եղեն, մինչ Հրամայիցաւ Նոցա գահոյս ունել արծաթի, և վարսակալ ածել մարգարտեայ և մատանի ունել վարազագիր, նաև կօշիկ կարմիր և մեկան ոսկի՝ ունելով ՚ի վերայ գրեալ զանուն և զպատիւ ցեղին: Եւ այսպէս հասեալ մինչև ցՎաղարշակ, զոր Թագաւորեցոյց Արշակ՝ եղբայր իւր, ՚ի վերայ Տայոց—սկիզբն Թագաւորութեան ցեղին Արշակունեաց ՚ի վերայ Տայոց, որ էր առաջինն Վաղարշակ: Սա ոչ կամեցեալ խառն կարգօք և անապղի մարդկամբ վարել զԹագաւորութիւն իւր — զի ցայն վայր ոչ էր եղեալ ումեք յառաջնոցն փոխել կարգի և դիզեցիկ յարմանման օրինի [1] Թագաւորութեան, այլ ըստ յառաջադիմութեան և պատահմանն առնային որ բարձրանայր և առնային որ խոնարհէր, —կարգի, սա զիզեցիկ յօրինուածով և գովելի կարգօք. նախ ՚ի գլխոյն սկսեալ՝ հրամայէ Վաղրատունեացն Թագադիր լինել և անուանել զնոսա առաջաս, և շնորհ ունել զնախնականն բարձ ՚ի վերոյ քան զամենայն: Եւ ապա կարգի ընդ սմա զձեռն ՚ի զաւակէ Վռամանացւոց ՚ի ցեղէն Գնթունեաց զգեցուցանողս ինքեան, և դնէ ՚ի վերայ արքունի հանդերձիցն. ըստ սոցա և զայլս ևս ըստ պիտոյից տանն արքունի: Իսկ յարևելից կողմանս կարգէ մեծ և առաջին նահապետութիւն զԱրտաշատեան տոհմին, ընդ սմա և զԿապամեանն. և հրամայէ Արտաշատեացն հրամանատար լինել ՚ի վերայ ամենայն արքունի զօրացն և երկրորդ Թագաւորութեանն իւրոյ և ընդդէմ կալ հանապազորդ պատերազմաւք զրանն Տոհատոց. որոյ անուն առաջնոյն Արտաշէս կոչէր: Իսկ ՚ի զաւակէ սոցա ընտրեալ այր մի յոյժ արի և գիզեցիկ և քաղցր բարուք՝ զՀռոման անուն, կարգէ նահապետ ՚ի վերայ մեծ գաշտին Ա-

[1] Ալլ. օր. օրինաց:

ուանայ՝ Հերասկայ մինչև ց՝ունաստակերտ: Եւ վասն քաղ-
ցըը բարուցն ՚ըը- ձայնէին զնա, որ և աշխարհն յանուն նո-
րա Ընդանք կոչեցաւ: — Ահա այս սակաւ մի տեղեկութիւն
քեզ, զի գիտասցես զսուտ ոչ միայն Մովսեայ, այլ և Ընդա-
նիցն զոլ նախնի, նաև երիցագոյն քան զնոսա:

ԳԼՈՒԽ Գ՝

Սակս լռաւորութեան աշխարհին այսմիկ ասպատաքէկտութեամբ և հա-
ստատուց էշխանացն ընդ Տրդատայ ՚ի յեռն ասրբ լուսաւորչին Գրի-
գորիսի ՚ի Քրէստոս Աստուած, և սահելոյ ընդհանուն և շինելոյ եկե-
ղեցւոյ, և յեռանդրութեան եպիսկոպոսին Սիւնեաց, և այլ շրոյտ պիտոյից:

Ընդառնելի լցեալ խնդութեամբ հրաշանան միտք իմ ՚ի վերայ սկզբանէ պատմութեանս որ առաջի կայ. զի ցայս վայր իբր զժահահոտ մեռելոյ ուրուք ձառեցաք զբանս, որք ՚ի հեթանոսական մոլորութենանց էին յարիշեալք [1], միայն մարմնոյ և եղծական փառաց հաղորդեալք, զուրկք և ունայն ՚ի ճշմարիտ գիտելութենէն և յանկողոպտելի փառաց: Ասկ այժմ վերկուց իրաց ունիմ գրել փառաւորութիւնս՝ զհոգևոր և զանմահական, զմնացականն և զյաւիտենաւորն, իբր զգիտելիկ և զանուշահոտ կենդանեաց, որք պայծառացան յանթառամ ճառագայթից արեգականն արդարութեան և երկու աշխարհս վայելչացեալ զարդարեցան:

Եւ արդ ըստ կարգի և հարազատութեան նահապետացն և իշխանացն Սիւնեաց ոչ ունիմ ինչ ասել զանուանց և ըզծննդոց նոցա մինչև ցայս վայր, զի և յառաջնոց պատմագրաց անյայտ էին իրքն. և մեք թէև բազում անգամ ջանացաք, այլպան միայն գտաք զոր վերադոյնն կարգեցաք. նման-

---

[1] Այլ օր. յոխրոմիւտ:

նապէս և յառաջիկայսդ է իմանալ: Եւ թէ էր աղագաւ՝ ա-
սացից զպատճառն, զի և դու մի պահանջեացես յինէն կար-
գըս և շարս իշխանաց և թիւս շարեալ ժամանակաց: Արդէս
՝ի սկզբան պատմութեանս ցուցաք, ոչ գոսաք յառաջնոցն
փոյթ եղեալ զայսմանէ և գրեալ ուրոյն առանձին զըոյցք և
որպիսութիւն այսր աշխարհի և ակունց, որպէս զայլոցդ տե-
սաք՝ զՄամիկոնեանն և զՏարոնոյն, զԱգբատունեացն, ըզ-
Ա՛ասպուրականացն, որք յետոյ թագաւորեցին, զԱ՛րցն
և զԸդուանիցն: Ա՛ստ այնորիկ ոչ երևին կարդք իշխանացն
և թիւք ժամանակաց. այլ յիր և ցան գոսաք յառաջնոցն վի-
պագրութիւնս աստ և անդ ընդ աղօտ նշանակեալ: Եւ այս՝
վասն զի յորում ժամանակի երևելի գործ ինչ ցուցեալ է իշ-
խանացն Արևնի ուրիք ուրիք, հարկ է եղեալ պատմողաց ժա-
մանակին զայն ևս յիշել. իսկ աննշանիցն և անյայտ գործոց
հասարակաբար չէ ինչ փոյթ լեալ, որպէս օտարի ուրուք:
Յաղագս որոյ և մեք ոչ հետևեցաք կարգի և ժամանակաց,
այլ քաղեալ զպիտանիսն որ ըստ աւուրց աւուրց հանդիպեալ
են յառաջնոցն բանից՝ շարայարեացուք ըստ կարի:

Ընդ ՝ի ծագել իմանալի ճառագայթից արեգականն ար-
դարութեան յաշխարհս ՚այոց և ՝ի ծաւալել յորդառատ
քարոզութեան աւետարանին յարևելս և ՝ի հիւսիս ՝ի ձեռն
բազմաշխարչար նահատակին առաքելական առնն սրբոյն Գր-
իգորի, ՝ի մկրտել զառաւածապատակ թագաւորն Տրդատ ամե-
նայն նախարարօքն ՚այոց և խառնիճաղանճ ամբոխիս Հե-
թանոս գեա, առնու անդ գինիք լուսաւոր մկրտութեան մեծ
իշխանն Արևնեայց իւրով գնդիւն, որ և գնացեալ էր ընդ սրբ-
բոյն Գրիգորի ՝ի Կեսարիա: Եւ ՝ի դարձին մնալ ՝ի Տարօն
գաւառ՝ բազում և մեծամեծ գործս քաջութեան ցուցեալ
անդ ՝ի պատերազմի քրմացն Գիսանեան կռոցն, զոր պատմէ
Խորենն Ո՛ւնեցւոյ եպիսկոպոսի Տարօնեացւոյ: Եւ բազում
դանձիւք և ջանիւ գործակից լինի շինուածոյ հանդուսանացն

սրբոյ Կարապետին, և կանգնել անդ ի վանս Գ-լահայ արձան գնչաւոն տէրունական ի յիշատակ իւր: Իսկ ի գալ և հանդիպիլ մեծ արքային Տրդատայ՝ հրաման առեալ ձանապարհորդ նախարարացն գնալ յիւրաքանչիւր գաւառս և հանդչել և մատակարարիլ գշինութիւն աշխարհայ իւրեանց—զի գնա և կայիր կաց և մեհենից բազմութիւնք ի գաւառս նախարարացն — հրաման առեալ ապա իշխանին Աիւնեաց յարքայէ՝ խնդրէ ի սրբոյն Գ-րիգորէ վարդապետս և ուսուցիչս, զի և աշխարհի իւրոյ ուսուցցէ զբրիստոսական աւետարանն և կոչնանեցէ, զբազխիս կաց: Եւ շնորհէ նմա զամն յԱ-ստուածոյ առաքել զոր բերեալ էր: Եւ անցեալ մեծաւ ուրախութեամբ ևկն յաշխարհ իւր և զամենայն ընտանիսն մկրտեաց աւազանն լուսաւորութեամբն, կոչնանեաց զամենայն բազխիս կաց, գարձոյց զաշխարհն առնայն ի քրիստոնէութիւն և զանգիան բազնաց նուիրէր ի շինութիւն եկեղեցեաց և առն Ա-ստուածոյ: Եւ գարձեալ միւսանգամ գնաց առ ընդ արքայն Տրդատայ և սրբոյն Գ-րիգորի ի հանդիպումն Կոստանդիանոսի. իսկ ի գառնալն ի Հ-ռոմէ և ի գալն յաշխարհս Հ-այոց այնուհետև ոչ գադարէր ի շրջելոյ սուրբն Գ-րիգոր և յուսուցանելոյ և կանգնելոյ զեկեղեցիս: Եւ երթեալ ի Վ-իրս և անտի յԱղուանս մինչ ի Ա-ապուեթս և ի պահանն Հ-ոնաց, և հաստատեալ զամենեսեան ի հաւատս՝ գայ ի Փոքրն Աիւնիք, և մտեալ յԱմարաս՝ շինէ եկեղեցի և թողու անդ սպասաւորս: Եւ եկեալ անտի՝ գայր ի սահմանս Արտաշատ աշխարհիս. որում ընդ յառաջ եկեալ մեծ նախարարն Աիւնի և բերեալ յաշխարհ և ի տուն իւր՝ մեծաձախ ընծայիւք և արքունական պատուարգօք պատուէ զնա. և շրջեցուցեալ ընդ գաւառսն առնայն՝ հաստատէ, ի հաւատս, ի պաշտաձառս տեղիս շինէ եկեղեցիս և կանգնէ զնշանն տէրունի: Ապա այնուհետև մինչ յանկեալ կատարեցաւ շնորհօքն Ա-ստուածոյ՝ խնդութիւն ոչ սակաւ լինչ լինէր առնեցուն. վա-

սըն որոց առաջի անկեալ սրբոյն Գրիգորի՝ հայցեր տեսուչս և առաջնորդս աշխարհին, զոր փութով և յօժարութեամբ յանձն առնու նա շնորհել։ Եւ եկեալ ի Վաղարշապատ ձեռնադրէ զամն յիւրոց մերձաւոր աշակերտաց, այր ճշմարիտ և լաւ, լի ամենայն հմտութեամբ, երիտասարդ հասակաւ, որոյ անունն Գրիգորիս. և տայ յիշխանն տանել վճռակիցս ցանել յեպիսկոպոսութիւն աշխարհիս Աիւնեաց [1]. որ և եկեալ մեծաւ ջանիւ հաստատէ ի հաւատս զնորածին քրիստոնեայսն, ոչ դադարելով յուսուցանելոյ զճշմարիտ վարդապետութիւն սրբոյ աւետարանին։

ԳԼՈՒԽ Ե

Զբոյժ հին ժամանակաց որ վասն գալոյ սուրբ առաքելոյն Բարթողիմէոսի յաշխարհս Սիւնեաց՝ ի գտառան գողման, և գարձս ցանել՝ ի հաւատս զմեռս, հաւատալ սնեալն և յիշատակել եղիկոպոսս։

Ասեքան զամենայն կարևոր և յոյժ պիտանի էր ինձ զայս իսկ ցուցանել, թէ, քան զ՝այսոսանենայս նախահաւատս սրեւելեայսն սոքա և նկին՝ ի հնազանդութիւն սրբոյ աւետարանին՝ ի ձեռն սուրբ առաքելոյն Բարթողիմէոսի. զոր և ոչ անտեղի այժմ կարծել՝ ի գառնան Բարթողիմեայ՝ ի Պարսից անցեալ ընդ Աորպատական՝ զայ իւրովք աշակերտաքն. և անցեալ ընդ գետն Երասխ՝ մտանել՝ ի տահմանս Աիսականու, և սկիզբն արարեալ քարոզութեան յԱրթվաս գիւղ և յԱրևիք գառատ և՝ ի տունն Բաղաց և՝ ի Գողթն. որք ընկալեալ զքարոզութիւն աւետարանին՝ լուսաւորեցան մկրտութեամբ աւազանին՝ ի ձեռն սուրբ առաքելոյն Բարթողիմէոսի։ Իսկ սուրբ առաքեալն շինէ եկեղեցի՝ ի Գողթն յարևմտից եղերն՝ ի վերայ վիմի միոյ յիւրեանց հանդստեան տեղ-

[1] Եպիսկոպոսն գրչագիր յօրինակս մեր, որպէս և՝ ի Փարիզ տպագրեալն՝ մտծեալ անուանէ զայս բան. — և առաքեալ նմա սիկբն եպիսկոպոսութեան Սիւնեաց։

ւոջն, ուր վանքն էին կազեալ, և անուն կոչեցին Տեառնընդառաջ և սրարին նշանս մեծամեծս. քանզի էր ջուր միասակաւ ի Արեվատ գիւղ, որ ոռոգանէր յամենայն ամի զամենայն անդաստանս և այգիս: Եւ աղօթեցին և յանկարծակի կորուսին զջուրն. որ և տեղին յայտ է մինչև ցայսօր:

Եւ էր իշխան գաւառին Շ՚ապ և որդի իւր Խոսրով և Թոռն իւր Վ՚ահան և կին իշխանին Դշնայ: Ապա կացուցանէ նոցա տեսուչս, զի մի վերստին մոլորեցուին ի կռապաշտութիւն՝ զոմն յաշակերտաց Իւղոց Պետմի անուն, ձեռնադրեալ զնա եպիսկոպոս: Եւ իջեալ յանձն սրարեալ զնա սուրբ Հոգւոյն՝ գայ ի Վ՚անանդ գիւղ. և մի յաշակերտացն անդ վախճանեցաւ Լ՚ուսիկ անուն, զոր ի նմին տեղւոջ եդին ի հանդստի և շինեցին փոքրիկ մատուռն ի վերայ. և կատարին մեծ սքանչելիք և բժշկութիւնք մինչև ցայսօր. և զամենայն յոյժ հնազանդեցուցանէ Հոգի գերիզմանին: Էր անդ և բազին մի, և կոթծանեաց զայն և շինեաց ի տեղին Խրիմին և կեղեցի և կոչեաց յանուն սրբոյն Թովմայի. և անդ լինին բազում նշանք: Իսկ սուրբ առաքեալն եղեալ անտի՝ գնաց ի մայրաքաղաքն Հայոց Դուին: Յետ այսորիկ վախճանեցաւ Պետմի. և նորա ոչ կամեցան առանց առաջնորդի մնալ. այլ ոչ ուրուք ունէին ակնկալութիւն: Ապա կացուցանեն իւրեանց առաջնորդ զԵսայիկ ոմն Խաբելաս անուն, և գինի սորա քաջալերեալք ի սուրբ Հոգւոյն՝ առաքեն առ սուրբն Թադէ զոմն մի Մուշէ անուն, որ ոչ կարաց անդրէն դառնալ. այլ սոքա կային միայն անտէրունչք բնակեալ այսր և անդր. և ոմանք զօղեալ ի լերինն Դարոնայ միայնաւորութեամբ զկեանս իւրեանց վարէին, զբազում ուսուցանելով յոլով ժամանակաք, մինչ ի գալ մեծի լուսաւորչին ի Հայս և լուսաւորելոյ զամենայն աշխարհս Հայոց: Ապա գնացեալ սոցա խընդրեցին իւրեանց առաջնորդ. և նա այր մի տարօնեցի Մովսէս անուն. և յետ սորա Ահակ տարօնեցի, ապա զՕրս-

անդատ, ապա զԱտենիանոս և ապա զՅովհաննէս: Եւ այսպէս ՚ի կարգ անկեալ մին զմին փոխանորդելով մինչև ցայժմ: Այլ զիտեա, զի ոչ եթէ հատուածեալ էին սոքա ՚ի Միւնեանց, այլ յառաջն մինչդեռ ոչ էին հաւատացեալ, և ոչ էր կարգած աշխարհս ՚այոց եպիսկոպոսաք՝ սոքա առանձինն ունէին տեսուչս: Իսկ ՚ի լուսաւորել սրբոյն Գրիգորի զ՚այս և ՚ի կարգաւորել զսարձ և զառոհիձան եպիսկոպոսացն, ըզսոսա յանձնեցաց եպիսկոպոսացն Միւնեաց, զի ընդ նոցա հրամանաւ [1] և ՚ի նվիրոյ կացցեն հնազանդութեան. որում վկայ՝ առաջին կաթողիկոսաց շնջաբերական թուղթքն և հին գաւազանք գաւառացն, որ վասն հարկաց եկեղեցւոյ. զի լիով ունի գրեալ յինքեան զբովանդակ գաւառն Գողթան. նմանապէս և իշխանք Գողթանն ոչ եթէ յայլմէ տոհմէ էին, այլ ՚ի նոյն Միսական ցեղէ, ըստ մասին ժառանգութեան առեալ էին զայս գաւառ, որպէս ցուցանէ քեզ Մովսէս Խորենացի: Եւ թէ որպէս է պատիւ և բարձ եպիսկոպոսացն ՚այոց՝ ցուցցէ քեզ ՚ի միւս ձառին:

ԳԼՈՒԽ ՀԱ

Ցաղթ եպիսկոպոսաց և էշխանաց Հայոց, եթէ ո՞ւր են ջահէրեց և ջոհափըսխ խրբիւռ ՚ի ղեղին Տրդատայ և ՚ի սրբոյն Գրիգորէ և սրբոցն և ՚ի ընտանեաց նորա. և վասն առանձին պատուոյ և առաքինական եպիսկոպոսին Սիւնեաց:

Կորոգեալ նորածին շնորհօք զ՚այս առաքելագործ այրն Աստուծոյ՝ սուրբ քահանայապետն Գրիգորիոս, հրամայէ մեծին Տրդատայ կարգել զեպիսկոպոսութիւն իւր ըստ տահմանի կայսերացն Յունաց և տալ ըստ իւրաքանչիւր պատշա-

---

[1] Այլ որ. վ՚ի նոցա հրամանաւ:

ձի գահ և սրտեմբ իշխանացն յաջմէ և յահեկէ. որ և գեղեցկապէս յօրինեալ՝ ի ժամ ճաշոց նստել բազձս չորիքհարիւր իշխանաց, որոց գահապլուխք՝ բդեաշխն Վուագարաց, իշխանն Աղձնեաց, իշխանն Ընգելտան, իշխանն Արզրունեաց, սպանն Ռաշտաստունի, իշխանն Աբծրունեաց, իշխանն Մոկնեաց և իշխանն Մամիկոնէից. սոքա էին գահապլուխք ամենայն իշխանացն ՚այոց: Իսկ զօրաց և աշխարհին վերայ չորս միայն կացուցանէ, իւրով թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ՚ի վերայ ամենայնի. — արևելեան կողմանն՝ զիշխանն Սիւնեաց քաղնևմի իշխանաւք, հիւսիսային կողմանն՝ զբդեաշխն Վուագարաց քաղնևերկու իշխանաւք, արևմտեան կողմանն՝ զԱրծրունեացն քաղնևմի իշխանաւք, հարաւային կողմանն՝ զիշխանն Ընգելտանն քաղնևերկու իշխանաւք: Զայս այսպէս գտաք [1] ՚ի գահ նստանելի իշխանացն ՚այոց զոր Վ. ետնդ պրեաց, և սակաւ մի ցուցանէ Ագաթանգեղոսին և Ներսիսին:

Իսկ մինչ այս այսպէս կարգեցաւ, ապա կարգէ և սուրբն Գրիգոր զեկեղեցական դասն, զգահ և զպատիւ եպիսկոպոսացն. և հրամայէ բազմել ընդ ինքեան ամենառն և ոսկենկար բազձու երեսունեւվից եպիսկոպոսաց՝ ութեասան յաջմէ և ութեասան յահեկէ. — յաջմէ առաջինն ՚այրեայ եպիսկոպոսն և յահեկէ առաջինն Ռասենոյն, իսկ զՍիւնեին յաջ կողմանն յեօթնևերորդ գահուն նստուցանէ. և ցուցանէ զայս Սահմուել կամքն աձորևցի: Իսկ ՚ի թագաւորելն Ըրշակայ և ՚ի նստուցանելն յաթոռ հայրապետութեան զՍձեն՝ Ներսէս՝ մինչ յուզակիցին զնա ՚ի ձեռնադրութեւն ՚ի Կեսարիա առ Եւսեբի հայրապետն, յայնժամ յուզակիցին ընդ նմա զԸնդոկ՝ իշխանն Սիւնեաց՝ գլուխ այլոց իշխանացն ՚այոց, և զԳրիգորիոս՝ եպիսկոպոս Սիւնեաց՝ գլուխ եպիսկոպոսացն ՚այոց: Եւ հրամայեաց Ըրշակ ոչ միայն ձեռնադրել զՆերսէս եպիս-

[1] Ելլ օր. էի այսպես ՚ի գահ նստանել:

կոպոտապետ ՚ասոյ. այլ և պատրիարքք ինքնագլուխ. «Չի ոչ է պարտ, ասէ, ՚ասոյ ՚ի նվիրեալ լինել եպիսկոպոսապետին Կեսարիոյ. զի թէ առաքեալն մեր Թադէոս անդ միայն եկեղեցի չինեալ և յիւրոց աշակերտացն ձեռնադրեալ եպիսկոպոս և վանն այսր պատճառի առնուլք անտի ձեռնադրութիւն, քանի՞ևս առաւել է նոյն ինքն առաքեալն առ մեզ այլ և երիք առաքելովք, որոց հանգիստ և սիմոն և եկեղեցի և ձեռնադրեալք առ են բովանդակ. ընդէր կարօտիմք յայլմէ կրսերագունէ առնուլ զօրհնութիւն». և սակս այսր պատճառի նստուցանեն զնա պատրիարք ՚ասոյ: Եւ զի հարկ է առնայնմ ՚ի նվիրեալ լինել պատրիարքին՝ արքեպիսկոպոս և մետրապօլիտ, զի լրացեալ լինի հին դաս եկեղեցւոյ որ ըստ վերնոյն, ապա թագաւորն հրամայէ մեծաւ ժողովով սահմանել զբովանդակ կարգս եկեղեցւոյ անթերի: Կացուցանեն պատրիարք զսուրբն Գրիգոր, և ՚ի նվիրեալ նորա արքեպիսկոպոս զԸղուանիցն, որ է կաթողիկոս, և մետրապօլիտս՝ զԱրտեացն և զսիսականն և զԱ_րցախն և զԱրտպետականն, և յետոյ այլ և մետրապօլիտք կացուցանեն՝ զԵլիսինոյն և զԱբաստիոյն:

Իսկ Գրիգորի՝ Արտենայ մետրապօլտի, առնլի պատիւ առնել սուրբն Գրիգոր, վանն երթալոյն ընդ նմա ՚ի Գեղարդ, տայ նմա բազմական ոսկեթել և կարգէ զԱրտնիք նահատակ պատրիարքին որ կոչի ՚ի Հառամ լերան պռոտոմարտիրոսն ՚ասոյ Ստեփաննոսէ: Իսկ յետ ոչ ինչ բազում աւուրց՝ յաւուրս Սահակայ և Մեսրովբայ կրկին պատիւ առեալ է Ընդանիքս եպիսկոպոսն Արտենայ Յովսէփն Թագաւորէն Ընդուանից, զի պարգևէ նմա զիւր թագաւորական դրօշն կարմիր և ոսկեստուն վառիւ՝ ունելով ՚ի գլուխն գունտ ոսկի և ՚ի վերայ խաչ պատուական. և հրամայէ հանապազ առաջի կրել եպիսկոպոսին Արտենայ, զորոյ զպատճառն և զորպէսն յիւրում տեղոջ ասացից: — Ընդ այսպէս կարգեցաւ և պատուեցաւ եպիսկոպոսութիւն Արտենայ. և սկսաւ ՚ի սրբոյն

Գրիգորէ և յորդւոց և ի թոռանց նորա, որք կոչին մեծա-
պօլիտք։ Եւ գործ է սոցա ձեռնադրել զեպիսկոպոսս գաւա-
ռաց. վասն որոյ երկոտասան եպիսկոպոսացդ գլուխ կարգեցաւ.
և առանց սոցա ոչ ձեռնադրի պատրիարքն ՚ի այոց և ոչ լինի
ժողով, այլ գլուխ և հրամանատար ժողովոյ սոքա լինին. և
նախաթոռ վարդապետութեան և հրաման մեկնութեան և
թարգմանութեան սոցա միայն շնորհեցաւ ՚ի մէջ ՚ի այոց ՚ի
սրբոյն Սահակայ և յերանելոյ վարդապետէն Մեսրովբայ։
Եւ յետ ժամանակաց յոլով ևս եղեն վիճմունք յաշխարհին
այոց վասն դահլիճութեան սոցա և վասն գունակ գունակ
բաժանմանց և մեծապանութեան. զորոց յիւրում տեղւոջ
եդից զբաւական և զոյժ պիտանին։

ԳԼՈՒԽ Ե

Վասն վախճանին Գրիգորէ Պարթեւոյ և ֆռխառնորդութեան սրբոյն Մեսրոպայ։

Արդէս գտաք ասա և անդ մանաւանդ ՚ի դիւս հնոց, զնոյնն և ձշդիւ քննեալ կարգեցաք ՚ի սմա, որ այսպէս ցու-
ցաւ. զի ՚ի գալն մեծին Ներսիսի ՚ի Պաարիոյ և յորդորելն
զկարգս գովելի աշխարհիս այոց, յետ սակաւուց վախճանի
Գրիգորիս՝ եպիսկոպոս Սիւնեաց, կացեալ յեպիսկոպոսու-
թեանն սմա քառասունեվեց։ Եւ ինդրէ Ներսիս՝ մեծ նա-
հապետն և նախարարն Սիւնի, ՚ի սրբոյն Ներսիսէ առաջնորդ
և տեսուչ իւրոյ աշխարհին. և նա կատարեալ զհայցուածս
նորա՝ ձեռնադրէ զերանելի այրն Մաշտոց և նստուցանէ յա-
թոռ մեծապօլսութեան Սիւնեաց՝ երկրորդ զկնի Գրիգո-
րիսի։ Որ և եկեալ առաքինացեալն վարուք զարմացուցանէր
զամենեսեան և յոլով կարգս բարեպաշտութեան ուղղէր յաշ-
խարհիս յայս, և ոչ գադարէր զգայդ և զգերեկ յուսուցանե-

լոյ պհատաան [1]. և այնպէս բարի քաղաքավարութեամբ և ճշմարիտ առաքինութեամբ կեցուցեալ յամենայն մեծարանս ան ինչ՝ փոխի ի կարգս հրեշտակաց: Եւ լինի խառնուած ամենայն ան բազում. զի խանդարեցաւ իշխանութիւնն Աիւնենաց ի Պարսից թագաւորացն և միաց երկիրն անիշխան, ապստերկ, առանց յառնեայն շինութեանց, ի մարդոյ և յանասնոյ զան քաանեհինգ. զոյոյ զպատճառն և զորպէսն այժմ կարդացից:

ԳԼՈՒԽ Ը

Վասն Անդուկայ Սիւնեաց էշխանի, ըմե զինչ գործ գործեաց, և ըմե սրպէսի անցն անցին ընդ աշխարհս Սիւնեաց ի Շապհոյ Պարսից արտոյէ, և երբեն նորա առ կայսրն Յունաց առ Հեձն Թէոդոս և անդ վախճանիլ, յառաջաբանից սրբոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի:

Առաւել քննեալ իմացաք զի բան անիծից սրբոյն Գնեսիոսի ի վերայ Երշակայ կատարեցաւ. քանզի կանխաժոդ եղեալ Երշակայ ի թագաւորութենէն Հայոց՝ գնայ առ Շապուհ, և իւրովին մեռանի անդ Անուշն բերդի: Եւ թագաւորութիւն նորա նման Ոսրոյամանայ յերկուս ձեղքեալ՝ կէս աշխարհս լինի ընդ Պարսից իշխանութեամբ և կէսն՝ ընդ Հռոմոց: Յաղագս որոյ և Աիւնենաց տէրութիւնն անկանի ի բաժինն Պարսից: Իսկ այս Անդոկ այլովք նախատարօք Հայոց լինէր Հանատակ ի դրանն արքունի. և սա էր ձոխ և փառաւոր ի մէջ իշխանաց Հայոց և խառնեալ էր խնամութեամբ ընդ Երշակունիսն, զի զդուստր իւր զարմանագեղ զփառանձեմ տուեալ էր ի կնութիւն Վռնելայ՝ եղբօրորդւոյն Երշակայ, զոր յետոյ ինքն էառ և ծնաւ ի նմանէ ժառանգ թագաւորութեան իւրոյ զՊապ, որ թագաւորեաց Հայոց յետ հօր իւրոյ:

---

[1] Եայ օր. յառաջաբանիցն վերոյ:

Եւ ապա լինէր օր մի պարապոյ՝ և Շ ապուհ որդի Ար-
շղդայ արքայից արքայ Պարսից, Երեաց և անթիւ աշխար-
հայ, կամեցեալ խրախանալ, և ճաշ արարեալ ամենայն մե-
ծամեծաց իւրոց, ամենայն տոհմից ազատատոհմին Պարսից
նախարարաց և Երեաց գնդիւն, ըստ նախապատուէիան նա-
խասպասիս արարեալ բաժակօք և ուրուվք առաջի իւր՝ զիւ-
րաքանչիւր ոք նախամեծար ցուցանէ. իսկ զմոպետան մոպ-
պետն՝ ի սեղան արքունի մեծապատիւ մեծարէր: Եւ խոր-
հուրդ բերեալ թագաւորն Պարսից Շ ապուհ՝ խօսիլ սկսաւ
առ նախարարս ՚այոց և ասէ. «զՊարսից և զՊարթեւաց ըզ-
բնական պահլաւիկս և զազատագունդս ազատ արանց Եր-
եացս աշխարհի, և զնախամեծար դասապատիս քաջ գի-
տեմք զորպիսութիւն. բայց զԵրմենու զազատատոհմեն և ըզ-
նոցին նախապատիս նախադաս նախապահութիւնս ոչ կարա-
ցաք գիտել՝ ոչ ի նախնեացն մերոց հարցն հասանել թագա-
ւորաց և ոչ այլուստիք յամենիմաստ մատենագրաց: Եւ արդ
մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացդ ՚այոց ազատ ա-
րանց — կատարել զինդիր մերոց Երեացս աշխարհաժողով
ազատազարմ կուտակալաց՝ ցուցանել ձեզ զնախնականն զիր
ըստ իւրաքանչիւր ըստ տանց ազատազարին եկաց ձերոց զնա-
խասիճանն և զնախանիստ պատիւն, և դարձեալ զմեծա-
գոյնն ունել զշքեղաշուք մեծարանս և քան զևս. իսկ եթէ
ոչ կարէք ակն յայտնի Երեացս գնդի ժողովոց ցուցանել ըզ-
գիր նախապահութեան, զպատիւ և զտուն, զՀող և զՀուր և
զտացուածս ձեր Երեացս աշխարհի ազատ արանցս շնորհս-
ցուք և զձեզ ապաշնորհս և ունայնս արձակեսցուք, և տա-
ցուածք գիւղից և ապարանից ձերոց Երեացս ազատ արանց
՚ի ծառայութիւն լինցին»:

Եւ նոյնժամայն խորհուրդ արարեալ իշխանացն ՚այոց
Մեծաց՝ մատուցին առաջի թագաւորին զյանկալին ամենայն
տոհից՝ զհրաշաբանականն տպաւորումն, զգրաւորական գի-

ըրս սրբոյն Գրիգորի որ Ագաթանգեղն կոչի: Եւ հրամայեալ թագաւորին Պարսից ընթեռնուլ և թարգմանել ՚ի պարսիկ գիր և ՚ի լեզու. և խնացեալ ևթէ սկիզբն «Ընտաշրէ առնու՝ յիւրոյին նախնւոյն, առաւելագոյն զուարճացեալ բերկրեցաւ առաջի աշխարհակեցողով Ընտացն գնդին: Եւ առեալ գիրս սրբոյն Գրիգորի՝ եդ ՚ի վերայ աչաց իւրոց. և զուարճացեալ Պարսից թագաւորն համբուրէր զգիրս սրբոյն Գրիգորի, և սէգապէս պարսկական լեզուաւ գոռանա խանդաղատանաց ՚ի ներբողումն արարեալ, վասն զի գիւրիան ազգայինն զԸնտաշէր գոլ սկիզբն գրոյն գիտէր: Եւ գտեալ ՚ի նմա գիր տան և հօմն բարձի ազատացն Հայոց իշխանաց՝ սկսաւ ըստ այնմ գրոյ նախապատիւ յարգարել յարքունական տաճարին զնիստս իւրաքանչիւրոցն ՚ի սեղանի ուրախութեան: Իսկ տան և չորրորդ բարձն հհաս Ընդոկայ՝ Մամնեաց տեառն: Եւ նա հպարտութեամբ խրոխտացեալ՝ ոչ ինչ ձայնակեաց յայնմ ուրախարար արքունական ընդունելութենէն: Եւ զգացուցեալ ազատաւորացն թագաւորին զարհնրդշտութիւն խոովութեան երեսացն Ընդոկայ՝ Մամնեացն տեառն՝ Հ՚ապհոյ Պարսից արքայի ոչ ինչ փոյթ զայնմանէ լինէր:

Յայնմ ժամանակի փոյթ ընդ փոյթ զգացումն եղև ՚ի դուռն արքունի, թէ Խազիրք բազմամբոխ գնդովք հասին՝ արտաքս եղեալ ընդ դրունս Հողայ յաշխարհս մեր: Եւ ժողովն անթիւ արարեալ Հ՚ապհոյ Պարսից արքայի՝ Ասորւոց, Խորասանի, Խորազմայ, եւս առաւել քաջացն Պարսից Ատրպատականի նահանգին, Հայոց, Վ՚րաց, Ղուանից և երկոտասան լեզուաց խուժադուժ ազգաց լերինն Կովկասու բարձրաբարձր կոհակացն սառնամանեաց, եւ գնաց անհամար բազմութեամբ պատերազմիլ ՚ի դիմի հարկանել նոցա: Իսկ Ընդոկայ հաղալ և հօմն հարիւր արամբք ընտրելովք ժիր և քաջ տաճիկ նժուզօք զինեալ կողման տուեալ, և ապա զգօրսն ասա և անդ նկանախոտ դառաձանութեամբ թաքուցեալ

շուրջ զալիքայանիսա շահաստանատն Տիսբոնիս, որ է ի Սատ-
հըր գաւառի Պարսից աշխարհին, պակաս քինչ վաշտիօք ա-
բամիք ընտրելովք, քաջակորով հինելովք ընդ դրունս ար-
քայաբնակ քաղաքին մտեալ՝ հարցանէր յանդէաս և ի չըք-
մեղս եղեալ, «եթէ ես առ Շ՚ապուհ արքայ եկի»: Եւ քա-
ղաքացիքն ըստ Պարսից խրատուն հրահանգն՝ տեղիս իջև-
նի նմա պատրաստեցին պէսպէս բաժակօք և ընդունելութեան
ոճիկօք՝ բազմախորհուրդ համեղաճաշակս յարդարեալ մեծա-
շուք շքեղութեամբ պատուով: Եւ իբրև գիշեր լինէր՝ Ընդ-
դոկ գաւազանութեամբ ազդ արարեալ զօրուն իւրոյ, և իբ-
րև առաւօտն ելոյն մերկացաւ, և դրունք քաղաքին բացան
և յանդուտնի և յանապատատի զօրքն Ընդոկայ ի ներքս
դիմեցին ընդ դրունս, և առին զդանձս ոսկւոյ և արծաթոյ
անհամարս, և զոհարս ականց և մարգարտաց, զշահատարն
բազմացին ոսկեթել հանդերձիւք, զթագաւորական ծիրանիս
մարգարտայեա պատմուճանաց ի տանէ թագաւորին և յա-
մենայն տանց իշխանացն Պարսից առին, և ոչ կարէին բառ-
նալ: Եւ բերեալ զանթիւ զառն զամենայն հաւաքեցին ի
Ռաղաբերդ: Եւ զամենայն գաւառացն զհամբարս՝ զհացի,
զլուսոյ, զգարդի և զբազմութիւն դիւռոյ, իւղոյ; զենլեաց,
մեղուի և պէսպէս մրգոց համբարս անթիւս ժողովեցին ի
Ռաղաբերդ, և զկազմածս հինելոց և զղինւոց օձառս [1]:

Եւ հրաման առեալ Ընդոկայ Միհնեաց տեառն՝ զամենայն
Միհնեաց վախչել, և զառնս և զհամբարանոցս համբարօք
հանդերձ այրել: Իսկ բազմութիւն զամենայն գաւառացն Մի-
հնեաց՝ ժողով արարեալ եկեղեցեացն պատուիրանաց կատա-
րանաց և սրբոց խաչից ոսկւոյ և արծաթոյ անթիւ, և նշխա-
րաց պատուական և սուրբ մարտիրոսաց, հաւաքեցին զամե-
նայնն ի Շ՚ապատայ եկեղեցին, քարիւղ դումբեթաւոր ոմանք

---

[1] Ն. ՀԼ որ. գինովցան հինելոց, զղինւոց, օճառս:

յորմէ եկեղեցւոյն պատուհանս դործեալ՝ գնէին զերկաքան-
չիւր սուրբս ի ներքս յորմին. և ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն
ընդ բեմնէն դարանս գործեալ քարկոխս լցին. ոմանք ի միջի
եկեղեցւոյն և ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն արկեղովք ի վայր
իջուցեալ, համբուրէին լալով և արտասուելով զերկրպաքան-
չիւրն զեռաչս, զսուրբ վկայից գնչխարս և զկտակարանս սուրբ
աւետարանաց, մարգարէից և առաքելոց՝ յանձն արարեալ
եկեղեցւոյն սուրբ Աստվածնոսի: Եւ ումի օր խնդրուածովք
ցայդապաշտօն արարեալ ի նմին ամենայն Ահնեաց, և կուն-
ձամբ թաղեալ հողարկուր արարին ի վերայ եկեղեցւոյն Հ՚ա-
զատայ որ է ի Ծղուկ գաւառի, և փախուցեալ ցրուեցան
ընդ ամենայն երկիրս. և ոչ ոք իշխեր ասել զանունն Ահնեաց:
Եւ քան և հինգ տարի ապաշրկ աւերակ եկաց աշխարհն
յանկալն Ահնեաց: Եւ եկեալ Հ՚ազուհ Պարսից արքայ ի
վճարմանել պատերազմին Խազրաց՝ մեծաւ ցաւմամբ հրամայէր
ամենայն զօրաց իւրոց երանել յաշխարհն Ահնեաց և գերել
զմարդ և զանասուն ի ծառայութիւն: Եւ հասեալ յաշ-
խարհն՝ ոչ ինչ գտին ամենևին, բայց զպրոթեանց տեղիս՝
զեկեղեցիս, զորս քանդեալ աւերէին և հրակէզ առնէին ընդ
ամենայն աշխարհն Ահնեաց: Եւ հասեալ զօրն պարսկական
ի Ծղուկս գաւառ ի Հ՚ազատ գիւղաքաղաք և անցեալ յե-
կեղեցաբլուրն, ընդ որով սուրբ եկեղեցին թաղեալ էր, իմա-
ցան թէ ընդ բլրովն լինի ինչ ի ներքոյ: Եւ ումանք ի պարս-
կական պայեկացն ի վեր յեկեղեցաբլուրն ելեալ՝ յանկարծօ-
րէն թնդիւն որոտման և շարժուցն եղև և յեկեղեցաբլրէն ար-
տաքս ձգեալ վիրկլականքն [1] Պարսից սատակեցան: Եւ Ա-
թաշխոդա ինքն պարսկական գնդիւն ի փախուստ դառնայր
ի սաստիկ յահի եղանելոյն: Եւ դարձեալ ժողով տուեալ ա-
մենայն բազմութեան գնդին Պարսից և Ընտաց աշխարհին,

[1] Ընդ օր. արտաք յեկեղեցաբլրէն պարսից:

որ է Խորասան՝ Հ՚ասուհ Ումմդեան անդ տալ պատերազմ ընդ Խազաբերդի, և ոչ ինչ կարացեալ առնել ամրութեան տեղոյն, զի վէմն գլեալ ի տեղոյն ընդ զառ ի վայրն [1] զամենեսեան առ հասարակ սատակէին: Եւ հրամայեալ Հ՚ասուհ բազում քան զնոյն կրկնապատիկ զօր դալ ի Պարսից. և վերջապահ թողեալ՝ հրամայեաց սատակացուցանել զպատերազմին ընդդէմ ամրոցին:

Եւ որպէս յառաջնումն, նոյնպէս յերկրորդումն պարսաքարիւք և վիմագլմամբ զանհուն բազմութիւն պարսկական զօրուն դիմեաւսալ կացուցանէին: Եւ զարձեալ երիքկին քան զնոյնն այլ զօր բովանդակեալ Հ՚ասհոյ ասաց, «եթէ ի վերջ ոք զառնայ՝ սպանէք»: Եւ սոքա նոյնպունակ վիճաք և պարսիւք կոշկոճեալ սպառնացան: Եւ զայրացին լի ցասմամբ և գնալ Հ՚ասհոյ ընդ եղմունս իրացն՝ կամ եղև այլ ևս զօրս անթիւս բովանդակիլ առ ի սատակ ևս տալ պատերազմ ընդ Խազաբերդի: Այլ մեծամեծ նախարարացն ի ծունր իջեալ առաջի ալքային Պարսից Հ՚ասհոյ, աղաչեցին մի՛ ևս պատերազմիլ ընդ անպարտելի ամրոցին և մի՛ տալ կոտորել զԸբնացն գունդս: Եւ առացին շուրջ զամրոցատն յաւէր դարձուցանել, նոյնպէս և զամենայն իշխանութիւն գառատացն Ալունաց: Հրաման կալ յալքուն ասա եթէ մնդր և անասուն ձգել Ընբնաց աշխարհի զօրաց ի ծառայութիւն լնգին: Իսկ Ընդոկայ՝ Ալունաց տէառն, օր պարտպորդ գտեալ՝ եկեալ [2] յամրոցին Խազաբերդի մեծաւ աւարաւն անցանել, յաշխարհն Հոռոմոց առ մեծ ինքնակալն Լևոդոս՝ ալքայ Յունաց. և ի նմանէ պատիւ մեծագոյն գտեալ, և պատրիկաց պատրիկ առնել՝ վախճանի անդէն յաշխարհն Հոռոմոց:

---

[1] Այլ օր. զի վէմ գլեալ ի տեղոյն զառ ի վայրն: — [2] Այլ օր. և եկեալ յամրոցին:

ԳԼՈՒԽ ԾԴ.

Վասն գալոյ Բաբելայ ՚ի Հռոմոց առ Շապուհ և փոքրիկանն զոր եցոյց և վերստին դիմելոյն հայրենեաց իւրոց և շինութիւն նորա, և նախճիռ պատուով լինելոյն ընդ Բաբերդոնիան ՚ի նոյն ծառիքն պետառ պետրոսի. և այս եղև ՚ի վերնադրոջ ամի թագաւորութեանն Շապհոյ։

Լսեալ ՚ի վախճանելն պատրիկաց պատրկին Ընդոկայ՝ ծնօղ որդւոյ և միայնակ որդի նորա Լարիկ, որ թէպէտ բազում և մեծամեծ ունէր պատիւ ՚ի թագաւորէն Յազդոսէ մեծէ, այլ ոչ հանդուրժէր արտաքոյ բնիկ տէրութեան իւրոյ՝ վարագեալ սաստիկ կարօտութեամբ յաշխարհն իւր, զոր առացելովն Պաւթի թէ «՚ի հողս իւրեանց զթասցին». և դարձեալ զոր իմաստնոյն բանի, եթէ «չիք ումեք քաղցրագոյն քան զծնողս և ոչ քան զգաւառ իւր»։ Եւ գնացեալ յաշխարհն Հոռոմոց առ արքայն Պարսից, հասանէ ՚ի դուռն արքունի, և առ ումեմն ՚ի զօրականաց արքային վիճակեալ [1] հիշատաշտակութեամբ, և բազում արութիւնս սքանչելս յօրինակիսգան Պարսից ցուցեալ՝ ոչ ումեք զինքն յայտնէր, եթէ ով կամ ուստի ոք էր։ Յայնժամ հրեալ Հոնն ՚ի Հոնաց Հոնանդուր [2] անուն՝ առաջ առեալ զամենայն աշխարհն արքային Պարսից, ասէ «Օ՛ի՛ է հիզումն արեան և վառնուումն զօրաց բազմութեան, ևկ մեծամարտնացուք ես և դու միով միակաւ»։

Եւ վառեալ Հոնին յիմանութեամբ զրահին զանհնարին զարձր և զայն հասակն, և երկաթագամ բևեռապինդ սաղաւարտաւ զահեղակերպն գլուխ, և զճակատն պղնձեայ տախտակամած յօրինուածովն ամրացուցանէր, և զանհեղեղ գե-

---

[1] Ալ. օր. Ե ումեք ՚ի զբօսանաց արուեստի հիւր պատահութեամբ։ — [2] Ալ. օր. Հանոխոր։

զարդան զբաղեալ ի բարձրանալոյն [1] վայրէ, և զառաջին բո-
ցանշան և արիւնահեղ յօրինեալ ի յինքեան՝ ահաբեկեալ զա-
մենայն զօրս Ասորւոց, Պարսից և Ընտաց աշխարհին, որպէս
զի կոչեցեալ մեզ ի ներբողեանն խրատ ևրանելին Պետրոս՝ եպիս-
կոպոս Ալիւնեաց, քերթողահօրն Մովսէսի աշակերտ: Եւ
զկուսականն արքային Պարսից վասն Խաչիկայ, թէ գոյ այր մի
ի դրան քումմէ, որ գործ պատերազմիդ նոսրա վճարի: Եւ
արքայն կոչեցեալ զԽաչիկ և թագաւորութեան պատուոյ վը-
ճիռ կնքեալ վարազգիսն մատանեաւ՝ ասէ «ԱԹԷ վրիժուց
նախանձու քինուս այսորիկ յանդգնեցան արտացս՝ մեծամեծ
խոտանեացս տապալողաց հասցես»: Եւ նորա ձեռս յանձին հա-
րեալ առ արքային առ ի կատարել զհրամանն արքունի, ա-
պաւինեալ ի վիրինն օդնութիւն, և առեալ զնուրջ զօրութեան
զգէնան յօրինեալ յինքեան ձուձանչաւոր և մարգարտահան զրա-
հիւն արքունական զվայելուչ հասակին, և վազրակերպեան
ոտից արտաւն՝ զգիզգիզին գլխին և զառաջն պողպատիկ
գսէգն միջով, զվահանն ոսկիակապ և ականակապ յահեակ
յուսն ընկեցեալ, և զգեղարդն քաջամուխ ի յաջ բազուկն
հաստաբեստեալ աշտանակէր ի սեաւ քաջ երիվարն, ահա-
յեցեալ [2] ընդդէմ թշնամեացն. յարձակէին ի միմեանս. և ի
տուրևառս գեղարդաց ձայնիւն որոտման ելանէր յատաւօտէ
մինչև յիրն ժամն: Ընդ դառնապարտեալ լինէր անհնարին
հակայն Հնանդուր, յաղթողանայլ քաջն Խաչիկ, ածառապա-
րէր ի սուրն միասայրի, որով անդէն սատակէր զմարդահոս-
շոշ և զվիշապազօր գաղանն [3]:

---

[1] Ձայլ օր. ի քաղքրմայր փոյթէ: — [2] Ձայլ օր. ահեայանձայր: — [3] Առաձօր կբրկ-
նաբանութիւն անառանի. յայր սակս և գհետապայ հատուածդ յարմար գառնցաք
գետեղել ի տառև ի ձանօթութիւնս. զօր և այսպէս եգեալ գառանէմք և յեր-
կոսին գրչագիրս մեր և ի Փարիզեան տպագրին. — .. Եւ գաբգեալ, որպես
վէրաքոյնն առացած, յերանելոյն Պետրոսէ՝ Աղեանից եպիսկոպոսէ, ի ներբողեանն ա-
ռաջ, զոր արար ի վեհն Բարխի, զոր և Պարսիկք յերեսանց լուսոյ նորին փա-

Յետ այսց եղմանց սկսեալսց կոչեալց զԿարլիկն Հ՚ապուհ ալքայ ցնծալից ուրախութեամբ՝ ի կատարել զառ նա զնոս-տացեալսն։ Եւ նորա բան խնդրեալ յալքայէ՝ բառնալ զբանակն լի մեխով հնոցի, զոր՝ ի դարտապասին եդեալ՝ կուիւ-լով կոխմամբ և յիշելով՝ ի վերայ մեխոցն ասէին «եթէ Աս-նեաց տէրանցն նահապահութիւն տէրութեան ընդ այս մե-խիս՝ ի վայր լինի, և որպիսութիւն նոցին խորհրդոց և կե-նաց»։ Եւ ալքայի մեծաւ զարմացմամբ եղեալ՝ հրամայեաց բառնալ զանդն՝ ի տեղւոջէն յայնմանէ։ Եւ խնդրեալ Խար-կայ յալքայից ալքայէ, զի միայն զանձկական աշխարհն իւր և զընտիկ նախնական տէրութիւնն իւրոյ ազգին՝ ի նա դար-ձուսցէ։ Եւ շնորհեալ նմա ալքային Հ՚ապհոյ՝ առաքել զնա մեծաւ պատուով յաշխարհն իւր՝ ի Միտիս, առանդէ նմա նահապահ լինել ընդ Խազրաստանեայց, և ընդ Ամիկոնեի համառապահս եղանիլ։

Եւ անցեալ ընդ Երասխ գետ՝ շինեհ գիւղաքաղաք մի՝ կո-չելով զանուն տեղւոյն Նախջուան, որ Թարգմանի նախ ընծ-նորդեալ սա ինչ չէր հայբենեացն։ Եւ որպէս վիրապոյնն առա-ջաք, եթէ՝ ի վաթսուներորդ ութերորդ ամի Հ՚ապհոյ՝ Պար-սից ալքայի՝ որդւոյ Որմզդի, և յիսկերորդ ամին Խոսրովու՝ ±այոց Թագաւորի, Խաբիկ Միհրնեայ տէր լինի և՝ ի նմանէ առնու զտէրութիւն։ Եւ ±ոսմի Թուականն 124 լինելը, զոր առոյգ գիտացաք, և 138 ամք յառաջ էր քան զԹուական ±այոց։

ԳԼՈՒԽ Ժ.

Յայտնութիւն երիվարացն Շաղափոյ, և ջուր անվախ որքան ար՝ ի նմա խուէին և նշխարաց, և հաւատքն գործոյ և գաղանաց և այլ պարծից, և սքանչելիքն Տէրոջ երկնից։

Խաղալի՝ ի կենցաղս ոչ այլ ինչ՝ բայց միայն սնոտիական ժառանգութիւն առն, յորում ծնեալ և սնեալ լինի. և վա-

յիշել խորհի որպէս զառիւս մօր և զդուխ հօր, այնպէս քաղցը թուեցեալ լինի ՚ի միտս ժառանգորդին. վասն որոյ միշտ կարօտի շրջիլ, տեսանել, զբօսնուլ և խնդամտիլ ՚ի վերայ նոցա, որպէս և գովիլն քաջուղեշ մանուկս այս Խարիկ՝ յետ տիրելոյ բնիկ ժառանգութեան իւրոյ, յորս եղեալ խնդալով, խաղալով ՚ի վերայ սովորական թաւերաց և խնջոյից խրախճանաց ՚ի լերինս որատատն և բազմաջրեալ վայրացն Աիւնեաց ՚ի տես որպիսութեան գառատացն՝ յառաջին ամի իւրոյ տէրութեան. զոր և դրեա ոչ աշխարհազբօս ինչ գառատրկութեան գործ, այլ ՚ի ՚ոգւոյն շարժեալ: Եւ միւնչ յայս իսկ յառաջէր՝ տեսանէր ապա ողորմելի տեսակաւ զցանկալն աշխարհս զայս ապականիլ ՚ի մարդոյ և յանասնոյ, և հիմնախիլ արարեալ զդիզեցկայարմար առնս [1] շինից, գիւղից և ագարակաց, վասնեալ զամենայն և յառնէր գարձուցեալ:

Լսէր ՚ի տեսանելն զայս ողբալից և աշխարհիլն տեսակս, ապա անցեալ ՚ի գառատն Ծոփից՝ հասանէ յառանն ՚ի շինատեղիսն Շ՚ապատայ և եղանէ յարեւելից կողմանէ ՚ի հանդիպակաբլուր մի: Եւ նոյնժամայն եղանէ ՚ի բլրոյն եղջերու, և խուճապեալ ՚ի փախուստ գառնայր էրէն՝ զինքն եկեղեցաբլրոյն տուեալ [2]: Եւ Խարկայ տաճիկ երիվարաւն զհետ մտեալ և եղեալ զինի եղջերուին յեկեղեցաբլուրն, անդ երիվարին ոտք խրեցան ՚ի բլրին և եղջերուն անեւևոյթ եղև: Եւ Խարկայ ՚ի վայր իջեալ յերիվարէն ՚ի վերայ եկեղեցաբլրին՝ հրամայեալ բազմութեանն քարշել զերեալ ոտիւք երիվարն. և իբրև քարշեցին [3]՝ սկսան զարմանք յահի կալաւ զամենայն բազմութիւնն. զի ընդ ոտնատակս երիվարին անուշահոտութիւն բուրեալ զանազան գրեթէ զամենայն զիտակ գառատին եղից:

---

[1] Ա՚Յ՚Ը՚Ր. — — ՚ն զինից: — [2] Ա՚Յ՚Ը՚Ր. զինն ինքեանբլրոյն եթող: — [3] Ա՚Յ՚Ը՚Ր. Թուրքն զերեալ ոտն երիվարին ՚ի վերայ բլրոյն: Եւ իբրև թուլացին ոտքինքն ձիոյ՝ Սիոնիոց գեղոն: Եւ գոյնիւ. . .

Եւ հրամայեաց Խարիկ բազմութեանն պահել արտաքս [1] ըզհող բլբին. և տեսին ՚ի նեղքոյ եկեղեցի քարկոփ չքնաղաշէն, որ ոչ ուրեք էր այնպիսի հրաշագործարար շինած գմբէթի և խոբանք չորիքկուսի միայարկ մի տանեաք [2], և ոչ ուրոյն ուրոյն պատկ յայլ գաղատատաշէն եկեղեցիս: Եւ բացեալ ըզդրունս սրբոյ եկեղեցւոյ Նախավկային Ստեփաննոսի՝ տեսին բազմահոյլ բազում խաչս ոսկիս և արծաթիս և բազում դրեանս պատուիրանաց և այլ սպասս ամենայն եկեղեցեացն Միւնեաց իւրաքանչիւր գրով գիւղաքաղաքաց: Եւ նշխարք սուրբ և պատուական մարտիրոսաց անհամար անթիւ, որ յորմն եկեղեցւոյն ծնաց: Եւ յայտնութիւն և գիւտ սրբոյ եկեղեցւոյն Հ՚ազատայ ՚ի հոռի ամոյ, որ օր մի էր: Յայնմ ժամանակի յամենայն ապարոջ ժողով արարեալ Միւնեաց տեառն Հանդերձ եպիսկոպոսիւն՝ զօր երևման սուրբ եկեղեցւոյն տեղախմբէին իրրև զնայր եկեղեցեաց ամենայն աշխարհին Միւնեաց: Եւ յայնմ աւուր ազօթապատրաստ [3] ցայգատապաշտամանէ, զոր ինչ խնդրուածս առնէին յԱստուծոյ, նոյնժամայն կատարումն հրաշիւն եղանէր: Եւ զայն տեսեալ զերեւումն հրաշից ՚ի սուրբ եկեղեցւոյն սրբոյն Ստեփաննոսի, զի բազում բժշկութիւնք պէսպէս ցաւոց լինէին, որք ՚ի ժամուն յայնմիկ հանդիպեցան՝ հաւատացին և մկրտեցան Գոր և Գազան երկու եղբարք հանդերձ բազմութեամբ պարսկական գնդին իւրեանց, որ եկեալ էին ՚ի Պարսից զՀետ Խարկայ՝ Միւնեաց տեառն:

Եւ դարձեալ վիճակ արկեալ Խարկայ Միւնեաց տեառն՝ Գորայ և Գազանայ. Գորայ՝ աւազ եղբօրն, հասանէ աւանն Խոտայ և քաջի [4] արիացելոյն քաջամարտիկն Գազա-

---

[1] Ձայլ օր. պիվիլ գնուգքերին: — [2] Ձայլ օր. և խորանն ըրբէյոսի, գ յորմ, գ պանի. . . և սյնքզպուլեն իմիվիցի: — [3] Ձայլ օր. ազնայարդագին: — [4] Ձայլ օր. և տալբն ուբնայնցն:

նայ հասանել վիճակաւ զխզտպաղպաքն Հ՚ազատայ հանդիպ սուրբ եկեղեցեաւն, զոր յայնմ ժամուընակի մայր եկեղեցեաց անուանէին։ Եւ Բարիկ՝ Աիւնեայց տէր, վանական կացոյց և սպասաւոր զընտրեալն Տիրոա՝ հաւատարիմ, սուրբ և նե- բանձնաւոր քահանայ, որ յայնմ ժամուընակի ոչ ոք գոյր նը- մանն նման վարուք առաքինութեան և աքանչելագործ հաւա- տով, զոր սուղ ինչ յիշեցուք. զի յորժամ գայլ յայծեաց ու կամ գառն յափշտակէր, և ձայնեալ ոմանց առ նա, նո- րա արարեալ սուրբ աջովն խրտով զնշան խաչին ընդդէմ գա- զանին, ասէր. «Պրիտասիս ասեմ չհշխես տանել». և գա- զանի գայլոյն՝ ի վայր եդեալ զուլն կամ զգառն՝ գնայր հան- դարտութեամբ։ — Եւ գարձեալ թաղ մի էր Հ՚ազատայ՝ ի լերինն յեզը ծովակի միոջ և երանելին Տիրոա նաեէր՝ ի միջն ոմանց. և գորտքն՝ ի ծովէն ըստ սովորութեան իւրեանց բառ- ընուին [1] յաւէժ ազաղակելով։ Եւ երանելին Տիրոա զչա- րեալ նոցա ասէ. «Մի՞ հալացուցէք [2] ձեր անհոգեղ բարբա- ռովք». և բայց սուրբ կապեցան [3] գորտքն և ոչ կարա- ցին բարբառել։ Եւ եղև՝ ի միում յաւուրց երանելին Տի- րոա եհաս՝ ի նոյն տեղի. և բնակիչքն տեղոյն զգացուցին վա- սըն գորտոց, և նա ասէ. «Հրամայեալ եմ նոցա լուծանիլ և՝ ի նոյն մտոսի բարբառն վերադայնել»։ Եւ նոյնժամայն գորտ- քըն ազազակ կալեալ իրրև զառաջինն յաւէժ արար ձեծա- ձայն բարբառէին [4]։

Եւ գարձեալ՝ ի միում աւուրց ընդ երեկոյս եառս որոց լուցեալ հրով. ձգեաց զգառ ազանն և ընկէց՝ ի մէջ որայի հր- բոյն։ Եւ ընդ առաւօտն յորժամ զարժանաւոր զաղօթեան՝ ի յանկուածն կառարելութեանն հանէր, հրամայեաց բերել զգա-

---

[1] Ա.յլ օր. զոր սովորութիւն իւրեանց բարբառոյ ընտին յաւէժ ազազակել։ — [2] Ա.յլ օր. մի խլացուք։ — [3] Ա.յլ օր. իւրմէրեան գորտքն։ — [4] Ա.յլ օր. գիշոյնիկին բարբառէլ։

ւազանն իւր. և մարդիկն ազազակ բարձին և ասեն, «Արայն սատկապէս [1] այրեալ է. և արդ զաւազանին ո՞ր խնդիր առնէ նքողեալ տէր այն [2]». և նորա սատեալ նոցա՝ ասաց բերել: Եւ երթեալ մարդկանն՝ տեսին զգաւազան սրբոյն Տիրոտի անվնաս մնալով ի մէջ հրոյն շնորհօքն Աստուծոյ. և բերեալ մեծաւ զարմացմամբ զգաւազանն կարմրագունեալ իբրև ըղհուր առ երանելին, և առեալ առ ինքն՝ նայեցաւ ի գոյն գաւազանին և ասէ. «Ա՛յսպէս արիւնագոյն կակծելով իբրև հրբացեալ այրի սիրտ որպէս տեսանեմ». զարձեալ՝ «յառիանէից առնողրմ և անշէջ հրովն զառակոյց են արարողք արկածից վնասուն այնորիկ»: Եւ երանելւոյն Տիրոտի էր (վարձկան) ոմն որ զժնդակ և չարաչար վնաս գործեաց. և սուրբն զչարեալ ցասմամբ ասէ. «գնա՛, չառամ զվարձն քո». և նորա գազանի խոտրամանկութեամբ փայտառ մի առեալ գնաց. և հՀաս ի խոռն Աղձնեաստս, որ է յարևմտից կոյս եկեղեցւոյն իբրև ձայնելիկ մի. պատառանդեցան ոտքն և ոչ կարաց գնալ. և առ սուրբն Տիրոտ զարձեալ զզՋախոհ մեղայիս՝ եղ զերկաթն առաջի նորա. իսկ հեզն և բարեպաշտն Տիրոտ եւս զվարձն, օրհնեաց և արձակեաց յիւրմէ:

Եւ զարձեալ՝ գետոյ միոյ յայնմ կողմանէ էր ջրաղաց մի. և երանելին Տիրոտ ի գետավարսս հանապազ նշան խաչի արարեալ՝ անցանէր ընդ գետն անեկրկեղաբար: Եւ եղև ի միում յաւուրց եւս ցանկալի և գեղեցկատեսիլ գառնակ էշ մի, և ասաց ի մեծ իւրում. «երթայց անցից իշովն այնոսիկ ընդ գետն»: Եւ երեալ յէշն և մտեալ ի գետն՝ և ի միջի գետոյն զարձեալ էշն առ նա՝ եցոյց վայելատակմամբք զերկաթի գկցոհան [3] իւր և ասէ. «քո այսպէս իշոյ կայսխա տեսանել ես». և նորա հանեալ ի թափուցն զվոքրիկ դանակիկն իւր՝ եցոյց և

---

[1] Ա՛յլ օր. որպէս սատկի այրեալ էր: — [2] Ա՛յլ օր. ո՞ր խնդիր առնէ տալով տէր: — [3] Ա՛յլ օր. զգոյսխան:

ասէ. «և քո այսպէս իշոյ մորակ տեսանել ես. զես ընդ գետս ի բաց անցո [1], եթէ ոչ՝ հարկանեմ և վերաւորեմ զքեզ». և անցուցեալ զտուրն ընդ գետն՝ անելևոյթ եղև չարն սատանայ: Եւ այլ բազում ինչ նշանագործութիւնք յերանելոյն լինէին, և պէսպէս ցաւոց լկտնաց անդորրութիւնք, և այսահարաց նորին աղօթիւք բժշկութիւնք: Եւ վախճանեալ սրբոյն՝ եղաւ ի դիւրս յարևելից կողմանէ եկեղեցւոյն. և բազում այցելութիւնք լինէին ի գերեզմանէ նորա հիւանդաց: Եւ դարձեալ՝ կանանց ոչ հրամայեցաւ ի նմանէ ի տուրբ եկեղեցին մտանել. և այսու կարգաւորութեամբ կրծելիք եկաց տուրբ եկեղեցին Ճ ազատաց մինչև յամն 300. և ոչ դարձեալ կանանցի քահանայի սպասաւորութիւն առնել սրբութեան տեղւոյն:

ԳԼՈՒԽ ԺԸ

Գոբյնել ի նոյն ծառէն պեռան պնդրոսէ՝ յեր բազում ժամանակաց ղրոյցք վան գիւղէն նչխարաց սրբոց ու ի Շալաթայ եկեղեցին, և ու յաւուրս Յովհաննու եպիսկոպոսի վիճակաւոր սուն նախապատրաստութեան պասեացն և գիւղէն Սիւնեաց, ընկ ւ ու նախապատ և գհոգելոյ սահմանեցաւ:

Ընդ յետ բազում ժամանակաց ինչ Յովհաննէս կուսակրօն քահանայ և սպասաւոր եկեղեցւոյն առանձինն աղօթս մատուցանէր ի նմին եկեղեցւոջ ի գիշերին: Եւ յարևելից կուսէ խորանին աղիւսաձև քար վաղեաց յորմոյն՝ և գյատակն եկեղեցւոյն էառ ի վերայ բեմին: Եւ քահանային եղեալ ի բեմն մեծաւ երկիւղիւ՝ տեսանէր պատուհան մի բացեալ. և ի նեղքն բազում նշխարք սրբոց գրով իւրաքանչիւր անուանց՝ եդեալ ի կողոսիս լի անուշահոտ ցանկալի բուրմամբ. և փոքի

[1] Ալ. օր. գիս ի գետս քոյ անց:

ընդ փոյթ ընթացեալ պատմեաց առաւաձտապահ տեառն Խոսրովայ, որ էր ՚ի զարմից Գաղանայ։ Եւ եկեալ տեսեալ զերեւեալ սուրբն՝ գոհարանելով աղօթիւք գոհանայր զԱստուծոյ։ Եւ հրամայեաց նոյն քարիւն աղիւսաքարտարով ծածկել զանգի հանգստարանի սրբոցն։ Եւ դարձեալ՝ Խաբկայ Աիւնեաց տեառն հրամայեալ էր, զի նախաթոռ լինիցին յամենայն Աիւնիս սպասաւոր քահանայք և պաշտօնեայք եկեղեցւոյն Շ՚ազատայ իբրև մայր եկեղեցւոյ և մայրաքաղաքի ամենայն աշխարհին Աիւնեաց։ Եւ դարձեալ՝ յառաւաձտապահ և ՚ի հոգևոր Տեառն Յովակիմայ Աիւնեաց եպիսկոպոսի յիշատակէ պատարագին ներհակ հակառակութիւն սասաիկ եղև վասն նախագահ նախաստութեամբ նախատոհութիւն լինելոյ գիւղաքաղաք աւանացն, թէ ով որ էցէ։

Եւ Խոսրով Շ՚ազատեանց[1] ՚ի զարմից Գաղանին զտպաւորումն դրաւորական տառիցն առաջի եդեալ առաւաձտապահ և բնիկ տանուտեառն «Նիրսեսի[2]» Աիւնեաց տեառն և Հայոց իշխանին, հրամայեցաւ Շ՚ազատեանց իբրև մայրաքաղաքացոյ յառաջանիտ լինել վիհապոյն պատուով։ Նոյնպէս և զվարդապետութեանն Աիւնեաց զնախագահութեանն զնիստս հրամայեցին Գէորգեայ՝ Շ՚ազատոյ վարդապետի։ Ընդ որ յոյժ զբարեալ Փանոսի ոյծնեցւոյ[3] Արծնի վանականի, ակամայ գնաց. և ոչ ումեք ՚ի ժողովկոցն[4] փոյթ զայնմանէ լինէր։ Ապա դարձեալ՝ ընդ Ոյծ և ընդ Աղիատու սաստիկ հակառակութիւն եղև։ Իսկ հնագիտակք Աղիատուացիսց զՈյծնեցիսն հաստատեցին ՚ի Ա՚ղուց աշխարհէն լինել պանդուխտս և նժդեհ յամենայն Աիւնեաց։ Եւ դարձեալ՝ Շ՚աքւոյ և Աղիատուայ հրամայեցաւ զկնի Շ՚ազատոյ զնախագահութեան ունել զվիհապոյնն զերրորդականն զպատիւ։ Եւ զքառորդ

---

[1] Ա՚ՅԼ օր. Ե Խոսրով Շ՚ազատոյ ՚ի զարմից։ — [2] Ա՚ՅԼ օր. Ե քնքի պիտոն Ներսիսիսին։ — [3] Ա՚ՅԼ օր. պծնեցւոյ։ — [4] Ա՚ՅԼ օր. ՚ի խորվկոյն։

նախադասութիւնն Ըստ դիւզաքաղաքին Մրնեոյ ընկալեալ վասն ազատանելոյ [1] զոյց հնոյն։ Եւ ապա զհինգերորդ զգահն հրամայեցաւ Աչծնեցեաց ունել։ Եւ ապա յայտնեցաւ, խրատանչելի զի խրովքն քահանայիւք։ Եւ զայս սուղ ինչ յիշելով ազատանելոյդ սակս վերահասու լինելոյ յայտնեցաք, զի մի՛ ներհակ հակառակութիւն ինչ լինիցի յետնոյն։

ԳԼՈՒԽ ԺԴ

Դարձեալ վասն իշխանաց ոտից ցլին Բաբիկայ։

Աստանաւրաս և սիրասուն պերճապատճոյճ և գեղանիւն այն Բարիկ որդի Ընդոկայ, գործով գովելին և հատատով գիւրազանցն բնաւից, յետ առնլոյ զտէրութիւնն Միհնեայ և շինելոյ զամենայն աւերեալ գաւառան երկնապատիկ քան զառաջինն, առանայ ուստր մի Վասակ անուն. և՛ի զարդանալ հասակին ընծայէ զնա՛ի դուռն արքունի Վռամայ՝ Պարսից արքայի։ Օ՛ի յետ հօրն անատանելն երկու ամաց թագաւորութեան Շապուհ վախճանի և առնու զթագաւորութիւն որդի նորա Ըրտաշիր առն երիք. ապա Վռամ որ է Կրման՝ առն մեռանան։ Ըպա Յազկերտ՝ առն մեռանան, ոչ է առնա, որ պատերազմեցաւ ընդ Հայոց [2]։ Իսկ Բարիկ առեալ զտէրութիւնն Միհնեայ՛ի վախճանելոյդ ումեքէրոյդ առի Շապհոյ՝ Պարսից արքայի, և վարեալ զիշխանութիւնն առն քառնեւմի, փոխի յառաւանցս յանխափոխ իշխանութիւնէ և յանդրդուռ ուրախութիւնն յիւրիկինս։ Իսկ Աստ Գնեմունի՝ անուն կապետան նորին, գնայ՛ի դուռն արքայի և ծանուցանէ զօրէն գործին. սակս որոյ տրամեալ Վռամայ և աղէկիզեալ՛ի վի-

---

[1] Ձգլ օր. վասն ազատանելոյ լինել ինչ հնոյն։ — [2] Ձգլ օր. Ապա կրճատ, որ է ասել, տես էջ. ուր է առնեն, որ պատերազմեցաւ ընդ Հայոց։ Ապա ցուցիչքս տես էջ.

թոյլ մանկանն որ ի գրանն կայր, խորհի ընդ սենեկապետի իւրում տալ զիշխանութիւնն ի ձեռս Վասակայ և առաքել զնա յաշխարհն իւր: Եւ զայս խնդրեալ նորա՝ գայ առ Վասակ և առեալ մատուցանէ նմա զկտրհուրդ ալքային: Իսկ նա ջար և չոր մոգ հոծ և լի գոլով, ոչ կթէ առեալեայ ինչ ընտրէ նմա, այլ ցուրտ և սպաշնորհ պատասխանի արարեալ՝ ասէ, կթէ՝ «Օ՛ինն առնէ տէր միջ բնական իմ հարցըն է ժառանգութիւն Աիւնեաց»: Եւ կրթեալ սենեկապետին ծանոյց զայս ալքայի: Իսկ Վասակ խոժոռեալ ընդ բանն Վասակայ և հրամայեալ զսենեկապետն Խարկայ ի նեղըս ածել զԱամ Գնթունի՝ կացոյց զնա տէր Աիւնեաց: Ա կալեալ զտէրութիւնն ամ մի՝ վախճանեցաւ [1] զմոլխինդն արբուցեալ դաւաճանութեամբ: Իսկ յետ սորա Վաղենակ ի բնիկ ցեղէ իշխանացն Աիւնի՝ ամն իննն: Եւ սորա յետ սորա Վասակ՝ որդի Խարկայ, առնու ի Վռամ Շապհոյ զտէրութիւնն իւր, և վարէ զամն երեսունևինն: Ընդ զգեցեալ և զգործս որ ինչ եղեն առ սոքօք, ոչ է պարտ զանց առնել, այլ ըստ պատշաճի կարգեացուք զպիտանիսն:

ԳԼՈՒԽ ԺԳ

Պատք իշխանացն Սիւնեաց, որ ի Բաբելոյ մինչ ցԳրիգոր:

Ընդ զի պատշաճ համարիցաք առաջ նախ գնալ զկարգ իշխանացն, և առաջ անդրէն դառնալով՝ վերստին ցուցանել զգործս և զբանս որ յիւրաքանչիւր ժամանակս եղեն, վասն ոչ լոյ և ձառելի է: Ընդ Խարիկ առնու զտէրութիւնն Աիւնեաց ի Շապհոյ և կեցեալ ամն 21՝ վախճանի: Սենեկապետ նորա Աամ Գնթունի՝ մի ամ: Վաղենակ 9 ամ: Վասակ 39

[1] Ընդ օր. վախճանեաց:

ամ։ Վ֊ապազ Վ֊ազան՝ փետրուարին Վ֊սահակ 25 ամ։ Ը֊նդմէջ 5 ամ։ Գ֊ղիհան 17 ամ։ — Ե֊յս երկու կէս յառաջադրեալ ուխտէ եկեղեցւոյ՝ յիմարեալք չարութեամբ և պատրեալք ի հրապարակին։ — Վ֊ռամ 7 ամ։ Ը֊նդմէջ 1 ամ։ Մ֊ուա Վ֊սահակ 11 ամ։ Ե֊ղիր 9 ամ։ Ը֊նդմէջ 3 ամ։ Ռաբդին 10 ամ։ Ը֊նդմէջ 11 ամ։ զոր և Շ֊ապուհ միւս կալաւ։ Յովհան 18 ամ։ Վ֊ազուզ [1] մի ամ։ Գ֊րիգոր 10 ամ։ Մ֊իհր Ե֊րասխոր 23 ամ։ Ը֊նդմէջ 3 ամ։ Պիրան մի ամ։ Ը֊նդմէջ 2 ամ։ Սարգիս 2 ամ։ Ը֊նդմէջ 3 ամ։ Սահակ 10 ամ։ Ը֊նդմէջ 13 ամ, զոր Պարսիկք կալան։ Գ֊րիգոր, որ վասն առաքելութեան և առ այդ և ուժեղ հասակին ի֊ջից նուէրս կոչեցաւ, 16 ամ։ ֊Ըրահատ 16 ամ։ Յովհան 27 ամ։ Վռոյդոյ 18 ամ։

Ե֊յտղիկ ի Ռաբկայ հետէ մինչև ցայժմ կալան զիշխանութիւնն որդի ի հօրէ պայազատելով, թուով 20՝ ամն 332։ Նակ զԳ֊րիգորէ [2], որ ի֊ջից նուէրս կոչեցաւ, ցուցից քիչ ըստ, զի զիտացես զսուտ ոչ միայն ֊այկազնից [3], այլ և իսառնեալ ի թագաւորական ցեղս Պահլաւից և Ը֊րշակունեաց. և յայտ հետէ իմացես զսուտ ճիտ Ը֊րշակունի և զաւակ Պահլաւունի. և այնքան բարձր և փառաւոր գոլ, զի հաւասարէին իսնամութեամբ ընդ Պարսից թագաւորութեանն և ընդ ֊այոց։ Ընդ եղև օր մի յաւուրց, և խոտորով ալքայ Պարսից՝ որդի Արմզդայ, զոր ոմանք շահնշահ անուանեն, այսինքն թագաւորաց թագաւոր, նաստ գարարատս արարեալ ազատաժողով Ը֊րեաց գնդին՝ կամեցաւ ի ճաշս խրախանալ։ Նակ թռչնաբաշտ մի մեծամեծ և սեամթոյր սլացաւ ի վերուստ ի վայր, եկն ի սեղան թագաւորին [4] և կամեցաւ յափշտակել ինչ ի սեղանոյն։ Եւ թագաւորն խրոխտացեալ լի եղև

---

[1] Ա֊յլ օր. Վ֊ռոյդ։ — [2] Գ֊րիգորէս։ — [3] Ա֊յլ օր. Հայկազնից։ — [4] Ա֊յլ օր. Եւ զեղ ի խոյրսն։

ցասմամբ, որպէս թէ գուշակութիւն ինչ հատարելով: Եւ յայն ամենայն բազմութենէն ոչ ոք շարժեցաւ զինի նորա: Ապա Գրիգոր առեալ զհաստաբնակ աղեղն իւր՝ և լայնալիճ զրկօք կորովակի փրթուցեալ զնետն՝ ի վեր յօդն յոյժ բարձրագոյն՝ ընկէց՝ զթռչունն՝ ի վայր առաջի թագաւորին առ սեղանոյն: Իսկ թագաւորն լցեալ խնդութեամբ՝ կոչէ յառաջ զԳրիգոր և հրամայէ նմա զձանրագոյնն խնդրել խնդիր. և Գրիգոր Արտենաց տէր ասէ. «տէր իմ արքայ՝ մինչ հրամայեցեր խնդրել՝ տացի գուստր արքայի ինձ՝ ի կնութիւն»: Եւ առ ժամայն կատարեցաւ խնդիրն բազում և մեծամեծ պարգևօք և բարձրագոյն փառօք: Եւ խնդացին ամենայն տունն Արտաշատու:

ԳԼՈՒԽ ԺԳ՝

Վասն ելոյ սուրբ վարդապետին Մեսրովբայ՝ ի Սիւնիս և՝ ի գաղթն և շրջելոյ ընդ գաւառան և զգուշել հոտոյն՝ ի գեղջ գեղ՝ զոր ինչ օգնութեամբ Աղինուկայ իշխանին և Շաբիղայ:

Յուզից և զկրկին լուսաւորութիւն այսր աշխարհի՝ ի ձեռն սուրբ և յոգնեպարանեան առն Մաշտոցի՝ Մեսրոպ կոչեցելոյ: Օ՜ի՝ ի նուազել թագաւորութեանն Հայոց համարձակեցաւ ամենայն որ ըստ իւր բարուց ընթանալ, որպէս և ասաց. զի աղանդն հեթանոսական գնո՛ւս և զօղեալ կայր ուրիք ուրիք — ի գաւառն Աիսական և ի Գողթն, այժմ հանդարձակեալ երևեցուցին: Իսկ երանելին Մեսրոպ էր գայիր դիւանի դրանն արքունի, որ կամեցաւ թաքուցանել զինքն՝ ի խոտորեալ կենցաղոյս. և առեալ զձև միայնակեցութեան՝ փութայր՝ ի նաւահանդիստն: Եւ եկեալ՝ ի Աիսական կողմն՝ համձեցաւ բնակիլ՝ ի գիղեցիկ գաւառն Գողթան, և խըս-

---

[1] Ձ յլ օր. ընկաց:

տումբեր ձգնութեամբ զբազում աւուրս առաքինացեալ՝ ծա-
նեաւ զկրկին երեւել աղանդոյն կռապաշտութեան. և սկսեալ
՚ի քարոզութիւն՝ մեծամեծ և ահագին նշանօք ոչ ինչ ընդ-
հատ քան զբերոյն Գրիգորի, ՚ի հաւատս ածել զաշխարհս
Աիսական հրամանաւ և օգնութեամբ բարեպաշտ իշխանին
Աիւնեաց Վաղինակայ, սրբել զկռապաշտութիւնն և խոր-
տակել զկուռս թագուցեալս: Նմանապէս և զԳողձն սրբեալ
՚ի ձեռն իշխանին նորա [1] Հ՚արիթայի:

Եւ այնքան հալածեալ զբազմութիւն դիւացն, որք մնալմ
նաւոր տեսլեամբ իբր զծուխ ծառացեալ՝ գունդ գունդ բար-
ձրացեալ վայիւ և ապաստան գնային վահատեալ. և անցեալ
ընդ Երասխ՝ անկանէին ՚ի կողմն Աարաց: Իսկ սուրբ այրն
Աստուծոյ՝ թողեալ անդ յաշխարհին Աիւնեաց թարգման և
ուսուցիչ յընտրեալ աշակերտաց իւրոց զՀովհաննէն և զՆա-
նանիա, (որ և ձեռնադրեցաւ յետոյ յեպիսկոպոսութիւն աշ-
խարհին) ինքն գայ առ սուրբն Սահակ:

ԳԼՈՒԽ ԺԻ

Վասն նորոք եպիսկոպոսութեան Սիւնեաց պետառն Անանիայ. և երկն
յԱղբասա. և պատմել ՚ի ընթացս նոցանէ:

Եկն հետս մեզ ձառել զգանկալի և զլաւագոյն իրաց, այս-
ինքն՝ զնորոգութենէ [2] խաւարեալ և խոպանեալ [3] եկեղե-
ցւոյ մերոյ և աթոռոյ մեծապատուութեան Սիւնեաց: Վասնզի
՚ի վաղուց հետէ ոչ գոյր տեսուչ և ուսուցիչ այսմ աշխար-
հի, յաւերմանէն Ընդոկայ մինչև ցտէրութիւնն Վաղինակայ
իշխանին: Իսկ ՚ի հայրապետութեան Հայոց մեծին Սահակայ՝

---

[1] Ա.յլ օր. իչխանին խոնոյ: — [2] Ա.յլ օր. զնոր նորոգութենէ: — [3] Ա.յլ օր. խո-
պանեալ ի ինդկոյս ձեր:

մինչ կրկին նորոգէր զ՚այսահանեայս, և յամենայն տեղիս շրջէր ուզէր և ընդդէմ գիտէր եկեղեցւոյ, ձեռնադրեաց զՆաներսէս՝ զաշակերտ Մեսրոպայ, թարգմանիչ և լի ամենայն առաքինութեամբ՝ յեպիսկոպոսութիւն Աիւնեաց, նստել՝ ի գահ վեհարանութեան և կոչել նախաթոռ ՚այոց սպասբիսկոպոսին, որ եկեալ նորոգեաց զերկոտասան գաւառս մեծաշինեալ գաւազանի իւրոյ։

Իսկ՝ ի բանալ գպրութեանն ՚այոց վերին պարզեաւքն՝ ի ձեռն սրբոցն Սահակայ և Մեսրոպայ՝ ետ գպրատունս յաշխարհին Աիւնեաց, և կարգեաց՝ ի վիրայ զաշակերտակիցն իւր զՎենիամին։ Եւ փութապէս զամենեսեան ուսոյց հայերէն գպրութեամբ, և արար զիտողս աստուածային կտակարանացն։ Եւ յետ զայս յարդարելոյ առնել ընդ ինքեան զՎենիամին՝ գնաց յաշխարհն Ընդունից առ թագաւորն Նոսէղն՝ ի խնդրոյ Մեսրոպայ. և արարին՝ ի միասին գիր ազգին այն ըստ խնդրեկատոյն լեզուի նոցա, զհնացեալ կռապաշտութիւնն սրբոցին [1], և աստուածային վարդապետութեամբն լուսաւորեաց զաշխարհն կրկին անգամ. և եթող զՎենիամին անդ՝ ի վիրայ թարգմանութեան և գպրոցացն մանկտոյն, և ինքն Ընտրեա կամեցաւ անդրէն դառնալ։ Իսկ թագաւորն Ընդունից Նոսէղն, որ էր առաջին Շ՚ապհոյ Երուաշտեան Պարսից թագաւորի թոռն քոռ [2], պատուիրեալ նմա՝ երախտահատոյց լինի և պարգեւէ զերբ նշանակին թագաւորական ոսկեհատուն վառիւ և՝ ի գլուխն գունտ ոսկի և՝ ի վիրայ խաչ պատուական։ Եւ հրամայէ զայն հանապազ շրջեցուցանել ընդ երեսս եպիսկոպոսացն Աիւնեաց՝ ի յիշատակ թագաւորացն Ընդունից։ — Օ՚այս ցուցանէ մեզ սուրբ հինչ Մովսէս քերթողահայրն և զրոմանդաւին ճշգրիտ աշակերտ

---

[1] Ընդ օր. և զճշմարիտ խոստովանութիւնն սրբոցս։ — [2] Ընդ օր. խոռն էոսէբ։ — [3] [2] Ընդ օր. ընդ երս։

նորին՝ պետրոս եպիսկոպոս Ալիւնեաց։ — Ա֊յս Ստեփա֊նէ, ի հասանել նեղութեանն ի Յազկերտէ ի վերայ քահանայից և իշխանացն Հայոց, էր ընդ նոսա։ Սա յետոյ գնաց ի ժողովն Շահապիվանի, ուր էր Յովհան Մանդակունի, և արարին կանոնս եկեղեցւոյ։ Կացեալ սա յաթոռ մետրապոլտութեան Ալիւնեաց, որ է պատասխանատու Հայոց Սիճաց, ամս 44 [1], կատարի ի Վրկիտոս։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Գործ անուն և վաստ էշխանին Սիւնեաց Վասակայ և պատճառ նորա ընդդէմն։

Ազատ բանիս և եղուկ է սկսանել, զի ոչ ինդամուսաբար ինչ կամիմ ձառել վէպս, այլ լի երկամիք և սգով, յոդնահոծ և թանձրատարափ մթացեալ ողբովք. քանզի բարձաւ պահն ոճոյ մերոյ, և պակասեաց թագաւորութիւնն ի ցեղէն Արշակունեաց, և քահանայապետութիւնն ի ցեղէ սրբոյն Գրիգորի. և քայքայեալ խանդարեցան ամենայն կարգք իշխանաւորութեանց. ի փախուստ դարձաւ բարին և տեղի ետ խաղաղութիւն. եկն խռովութիւնն և թագաւորեաց չարն։

Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց, որոյ [2] էր վերջինն Արտաշէս, եկաց մարզպան ի տեղի Արտաշիսի Վ֊ԽԱ ամի Շապհոյ առն ժի։ Իսկ սրբոյն Սահակայ խնդրեալ ի Վ֊ռամ Շապհոյ՝ կացուցանէ զԹոռն իւր Վ֊արդան՝ որպէս Համազասպայ, սպարապետ Հայոց և ինքն վճարեալ յաստեացս փոխի ի կարգս հրեշտակաց։ Իսկ յետ Վ֊ԽԱ ամի Շապհոյ մարզպանութեան կացուցանեն ի տեղի նորա զՎ֊ասակ՝ Սիւնեաց տէր, մարզպան Հայոց։ Եւ էր Վ֊ասակ մարզպան, և

---

[1] Այլ օր. ամ 22։— [2] Այլ օր. որ էր Երջին Արտաշէս։

Վ֊արդան Մամիկոնեան՝ սպարապետ Հայոց։ Իսկ յետ Վ֊ռամ Շ֊ապհոյ Թագաւորէ Պարսից Յազկերտ ամս ժբ[1]։ Եւ էր Յազկերտի հաղարապետ մի յոյժ խորհրդատու Մ֊ին֊ներսեհ անուն, և կայր Հ֊ատրպատական աշխարհի, յոյժ չարահնար և մեքենատու բարուք. և՛ի վաղուց հետէ կամէր հնարս գտանել առ՛ի բառնալ և շիջուցանել զքրիստոսեան աւետարանն։ Եւ Վ֊ասակ էր շքեղ և բարձր՛ի մէջ աշխարհիս Հայոց և յոյժ մեծարգոյ և երևելի՛ի դրան արքունի. և ունէր երկուս որդիս՝ Նարիկ և Աղտ֊ներսեհ անուն, և դուստր մի, որում փեսայացուցեալ էր զՎ֊արազ Վ֊աղան, ի նոյն տոհմէ Արսակունեաց։ Եւ սատանայական արկածիւք անկաւ ատելութիւն՛ի մէջ նոցա, և ատէր Վ֊արազ Վ֊աղան զկին իւր։ Վ֊ան որոյ մեխացեալ Վ֊ասակայ՝ կամէր սպանմամբ խլել զկեանս զվնասէ քինուն. զոր և իմացեալ նորա[2]՝ փախստական անկանի առ Մ֊ին֊ներսեհ. և վասն չար և սատիկ նախանձու առ՛ի հաճել զկամս նորա ելանէ յաստուածապրոշմ ուխտէ քրիստոնէութեան և երկիր պագանէ կրակի և արեգական. և հանապազ գրգռէր զՄ֊ին֊ներսեհ հաղարապետ արքային՛ի վերայ Հայոց, թերևս լցուցեալ զնորհուրդս իւրոյ չար քինոյն, որ ընդ Վ֊ասակայ։

Իսկ Մ֊ին֊ներսեհ մատուցեալ զսա առաջի Յազկերտի՝ ծանուցանէ նմա զնորհուրդ նորին. և նա մեծարեալ զՎ֊արազ Վ֊աղան՝ յաստուածոց իմն համարեցաւ զպատահումն զայն. խորհէ ընդ մովսէսեան մովսէսի և ընդ այլ աւագանոյն դարձուցանել զաշխարհն Հայոց՝ի կրօնս իւրեանց. հաճեցան ամենեքեան։ Եւ հրամայեաց Թագաւորն հրովարտակս գրել առ իշխանսն Հայոց, և ընդ նմին առաքուշանս և փուշտիպանս և քուրմս առաքել՝ի ձեռն մեծամեծաց իւրոց, որք եկեալ հասեալ յաշխարհս Հայոց՝ մատուցին զնամակն

---

[1] Ագ. օր. մս. 19։ — [2] Ագ. օր. որ ի չխմբել ֆոխոխոյ եմ։

մեծամեծ նախապատրաստ, որոց լուեալ՝ սուգ անհնարին պատեաց զամենեսեան: Եւ փութանակի ժողովեալ զեպիսկոպոսունս և զվանականս աշխարհին՝ ի մի վայր և զեպատուհաս և զաւագ տանուտեարս, որոց գլուխ ժողովոյն Յովսէփ, որ եկաց զկնի սրբոյն Սահակայ տեղապահ աթոռոյն, և Ընանիա՝ եպիսկոպոս Աիւնեաց, և Ղևոնդ երէց. և խորհեալ՝ ի միասին՝ գրեն պատասխանի յոյժ բիւրս և սիրտ վառն օրինաց իւրեանց առ Թագաւորն: Եւ գտանեալ անդրէն դեսպանացն՝ մատուցին զպատասխանին ազբայի: Ընդ որ յոյժ ցաւագեալ ահագին եւագմամբ[1] սրտին իրրև օձ թաւալգլոր լինէր. և փութանակի հրամիրակս հանեալ կոչէր զամենեսեան կամոյ[2] և ակամայ զնշխառս ՚ի սոյց և տայր ածել զառաջիսս: Եւ ՚ի մէջ մեծ առնելին սատիս հարցեալ զնոսա՝ ընտրել զմի յերկուց — կամ ապրել և յանձն առնուլ զօրինս մոգութեան, և կամ զարմիւք և զաւակօք մեռանիլ խարտ: Որոց առ ժամայն ոչ ինչ պատասխանեալ՝ նէլեալ արտաքս խորհեցան և ընտրեցին առ ժամ մի վերին երեսաք յանձն առնուլ զհրամանս ազբունի, և երթալ յաշխարհն իւրեանց հնարել պատերազմս և կամ սիրով զերկուքին աշխարհին և զգիւտ անձանց. զոր և արարին իսկ: Եւ մեծաւ պարգեւօք արձակեցան յաշխարհն իւրեանց՝ ածեալ ընդ ինքեանս զառարուշանս և զմարդապետս օրինացն:

Ապա կատարեալ Թագաւորին ՚ի Խոսրովայ, պատանդ էառ զբդեաշխին Վրաց զՆշուշա և զերկու որդիսն Վաստակայ՝ զՆարսէհ և զՆոր Դերսեհ: Իսկ իշխանքն ՚ի սոյց նախ ուխտեալ էին միաձայնս և առհասարակին երդմամբ կինքեալ զգիր ուխտին՝ միով միաբանութեամբ կեալ և մեռանիլ ՚ի վերայ քրիստոնէական հաւատոյն: Որք եկեալ հասեալ յաշխարհն

---

[1] Այլ օր. խառնմամբ: — [2] Այլ օր. ՚ի կամաց և յակամայ: — [3] Այլ օր. ՚ի ինքեանս:

իւրեանց, ի գաւառն Աբարատոյ՝ երևեցուցին զձածուկ ուխտ պայմանին. զոմանս՝ ի մոգուցն ազանին, զայլսն փախուցին և զկրակն ցրուեալ արկին՝ ի ջուրս: Ընդ որ խոժոռեալ Վաասակայ՝ վարանէր՝ ի մեծի արտմութեան, մի՝ զի բոց ծնողութեանն ջեռոյց զիոյոտես նորա վասն որդուցն որ կային անդ՝ ի պատանդի, և խնդացնորեալ ափշեցուցին զնա. մի՝ երկիւղ թշնամոյն Վաղարշ Վաղանայ, որ կայր առ արքայի և սպասէր Վասակայ մահուն և մի՝ զի զկուսին մեծ և երևելի վասուացն և հայրենի տէրութեանն: Յայսց երից անհնարին տարակուսանաց տագնապեալ խուճապէր միշտ և ոչ ունէր քուն՝ ի գիշերի կամ հանգիստ ի տունջիան: Եւ զի սահման է մարմնոյ՝ ի կենցաղումն հանապազ սխալել և զթել, սակս որոյ և սա սխալեաց յերգումն սուրբ աւետարանին. և զայս հանապազ ձակիմ ասել, եթէ միով բանիւ մեղայ էր խոստովանեալ՝ ի վերջոյ՝ ոչ էր թողեալ զնա՝ ի կորուստ անսահման զթութիւնն Աստուծոյ: Այլ այս ծնունդ էր չար յուսահատութեան, զորոյ զորպէսն գաւառատանին [1] Աստուած միայն գիտէ, և ոչ այլ ոք:

Երդ սակս այսր պատճառի խաբեալ՝ ի չար դիւէն՝ ապաշխարութեան յուսով սակաւ ուխտին սա ժամ մի, թերևս զերծուցեալ յիկեալ հասեալ չարէն զորպիսի իւր և զինքն: Եւ յղեալ զվարդան զօրագլուխ՝ այոց՝ ի պատերազմ յԱղուանս սա Պարսիկս որ եկեալ էին անդ՝ և ինքն ծանուցանէ զիսորհուրդ իւրոյ միամտութեան, որպէս թէ հաւատաս պահելով թագաւորին, Մ՚իմր Ներսեհի հազարապետին՝ ի ձեռն նահմանակաց, նաև զօրագլխոցն Պարսից որ յԱղուանս. զայդ և սա օրէն համարելով, որպէս ասէ առաւածային Գիրքն, «հնազանդ լերուք մարմնաւոր տիրանց որպէս Աստուծոյ»: Եւ ապստամբեալ սա՝ ի Վարդանայ և՝ ի համազգականացն և յայլ

---

[1] Այլ օր. զորոյ զորպիսն՝ ի գաւառատանին Աստուած գիտէ ինքն:

ազատացն ողք ընդ նոսա, այլովք իշխանօք Հայոց՝ իշխանաւն Հազրատունի Տիրոցաւ, Խորխոռունի Գագիշոյ, Վահեւունի Գիւտ՝ Պալունի Վարազ Տապուհ, Գաբեղենի Ընաէն, Ուրծայ Ներսհ և այլ բազում ոստիկանք և սեպուհ տանց և առհվից, ողք երկուցեալ յահէ Պարսից՝ կամեցան շնորհուկս առնել Թագաւորին. և զամենայն բերդս և ամրոցս Հայոց ընդ իւրեանց ձեռամբ արարին. և զամենայն մանկունս Ոամիկոնեան առհվին և զՀառնարակեացն և զայլ ազատացն նա աճել Վասակ առ ինքն և ամրացոյց յանառիկ ամուրս աշխարհին Սիւնեաց: Եւ մինչ այս այսպէս եղև, ապա լուեալ Վարդանայ զդառն գոյժ մահարերն՝ բօթին, մեծաւ յաղթութեամբ եկեալ՝ի պատերազմէն որ առ Ղզուանս, այլովք ազատօք խորհեին՝ի միասին զաւուրս բազում հնարս ինչ: Եւ մինչ Թափեցան յամենայն յուսոյ՝ զմահ ընտրեցին լաւ քան զկեանս. և անցեալ Հայրապետ գաւառ յետ ամսօրեայ աւուրց եղև խմբումն մեծ պատերազմին, յորում պատկեցաւ սուրբն Վարդան այլովք ընկերօք. զոր լուեալ զայս Յազկերտի՝ՙի մեծի և յանհնարին սուգ գառնութեան վարանէր:

Իսկ Վասակ՝ հաւատարիմ և մեծամաստակ գինքն հանդրեալ, առեալ զկայսերական մանկունսն և զսուրբ քահանայսն՝ խաղաց գնաց՝ի դուռն արքունի, յորում առեան մեծ լինելը և հարցափորձ կայսերական ընդ Վասակայ: Եւ ամենայնիւ պարտեալ և յիմարեալ լինէր անօրէնն Վասակ. և ըստ արժանաժառանգ իւրոյ թշակին առնոյր զփոխարէնն: Եւ՝ի նմին դրան՝ի դիպահոջ կացեալ լինի մինչև անդէն առնու զվախճան, զողոց և զողպէսն լծով պատմեն մեզ[2] Ագնիկ և Վասակ Փարպեցի: Իսկ գիշխանութիւնն Սիւնեաց առնու անօրէնն[3] Վասակ Վասան, որ էր դիւաբախ, և յետոյ՝ի դիւէն խեղդամահ եղև: Եւ յետ նորա նոյն չարութեամբ անհնդնդ

---

[1] Այլ օր. հհարբ: — [2] Այլ օր. ևեչ: — [3] Այլ օր. ոոբոյոնը:

հակայն Պ-դիհոն, որ անպարտելի էր զօրութեամբ և միշտ պատերազմէր ընդ միայորդս Հայոց. զոր և Պ-ահան՝ եղբօրորդի Պ-արդանայ, վերին օգնութեամբ հարեալ սատակեաց ի պատերազմի զբուրգն ահագին զՊ-դիհոն՝ ի գառառին Շ-իրակայ մերձ՝ ի դիւղն որ Ք-շտէ անուանի: Եւ ծառայից իւրոց թափեալ զիւր նորա՝ պատեցին եղեգամբ և բերեալ եղին ընդ հարս իւր [1] ՝ ի դամբանի:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վէպ-ութիւն սուրբ և փառաւորեալ սնապահին Սիոնոյ երանելւոյն Ցողդոյ՝ ի յետոյ Աբգարեայ՝ ի ձեռ պաբսից հանդիպելոյն:

Լաւագոյն և խրախալի թուի ինձ այժմոյս վիպաբանութիւնս քան զերասացեալսդ. զի թէ միով իւիք պարտեալ ամաչեցաք և կորագլուխ եղաք վասն ամօթալի գործոց իշխանացն Սիւնի. սակայն միւսովս բարձր ի գլուխ պարծիմք և իրը պակ զարմանահիւս ի գագաթի մեր եդեալ՝ բժշկիմք յառաջին խոցուածոցն, և փոխանակ ամօթոյն զգենումք զերկրպալից ցնծութիւն [2] և համարձակ շքեղութեամբ պերճասպաճոյճ պայծառանամք: Վասնզի թէպէտ ցցուեալ ոստոց Աիսականատոհմին՝ երբեմն փուշ և դժնիկ ընծայեցին մեզ, այժմ առհա վարդ և շուշան անուշահոտ և պտուղ գեղեցիկ և քաղցրահամ մատուցին մեզ, յորմէ հոտոտեցաւ Տէր՝ ի հոտ անուշից:

Ընդ թէպէտև տեսքն երևելիք Աիսական պետութեանն պատրեալք՝ ի հին խաբողէն՝ հետևեցան կամաց թագաւորին և սուին ժառանգութիւն պիտոյս աշխարհականս, զառօրեայս և զեղծական. սակայն ոմանք՝ ի նոցանէ եղբարք ըստ մար-

---

[1] Ալ օր. ընդ հարս իւրեանց: — [2] Այս բան — «և փոխանակ մինչև ցնծութիւն պակասի և յերկրորդն գրչագիրս մեր և՝ ի փարիզեան տպագրին:

Ձեոյ և արեանաուռք խնամանացան զվիրին խնամատուԹիւնն և լուսով հաւատոյն ոչ գնացին ընդ մոլար շաւիղն որ հայի ի վիհն կորստեան. այլ հրաժարեալք յամենայն աշխարհական իրաց՝ Թողին զփառս և զմեծուԹիւն և գնացին զհետ երանաւէտ ձայնիւն, որոց անուանքն Խարդին և Խակուբ և Յազդ: Առքա եկեալ՛ի գնդէն Աիւնեաց գնացին զհետ ուխտապահացն ՚այոց, որոց գլուխ և սպարապետ էր երանելին և քաջն Ա՚ահան Ա՚ամիկոնեան՝ եղբօրորդի Ա՚արգանայ, և՛ի բազում պատերազմունս մեծամեծ քաջուԹիւնս ցուցանէին: Ակ՛ի գալն Ա՚իհրանայ բազում զօրօք՛ի Ա՚իրս պատերազմիլ ընդ Ա՚ահան Ա՚ամիկոնեան՝ Թագաւորին Ա՚րաց, գնաց և Ա՚ահան ՚այոց զօրօքն յօգնուԹիւն Ա՚ահմանայ, զի ուխտակիցք էին միմեանց: Եւ իջեալ՛ի դաշտն Ձ՚արմանոյ մերձ Կուբ [1] գետոյն՝ ձակատեցան ընդդէմ [2] Պարսից և զամ մի յաղԹեցին:

Ակ Ա՚րաց երկուցեալ՛ի բազմուԹենէն Պարսից՝ ՛ի վախուստ դարձան: Եւ Ա՚ահան զայս իմացեալ դարձաւ անդրէն իւրով գնդաւն, յորում տեղւոջ էառ զնահատակուԹիւն Ա՚ասակ՝ կրտսեր եղբայր Ա՚ահանայ: Ակ Ա՚իհրան զհետ մրտեալ զօրացն կալաւ զ՚բահտաս Կամսարական՝ զվերայն ՚նկատսեմ Ճ՚իրակայ տեառն, այսու պատճառաւ զի երիվար նորա վազս առեալ սատակս ընկէց զնա. ապա պնդեալ զկնի կալան և զգոմիլն սպուհն Աիւնի զՅազդ [3]. և մեծապէս խրախուցեալ Ա՚իհրանայ՝ դարձաւ անդրէն: Ակ Ա՚ահան գտանէ զԽարդին Աիւնեաց պարապետն կարեվէր խոցեալ և անկեալ՛ի տեղի մի, հեծուցանէ զնա յերիվար և հանեալ անտի ապրեցուցանէ, որ և վասն խոցուածոյն այլ ոչ շրջեցաւ ընդ Ա՚ահանայ, այլ անց գնաց յանքոյթ տեղիս:

Ա՚յլ պիղծն Ա՚իհրան առեալ զերկու սպուհսն շրջեցուցանէր ընդ ինքեան և հետամուտ լինէր Ա՚ահանայ. և զնոսա

---

[1] Ա՚յլ օր. Գուբ ֆխոյն: — [2] Ա՚յլ օր՝ ընդ պարսից: — [3] Ա՚յլ օր. վՅազդ:

օր ըստ օրէ զառաջեաւ ածեալ կտպանօք՝ գառն տանջանօք նախատէր և չարչարէր և հնարէր դարձուցանել յիւր կրօնս, յորմէ անելևոյթ օգնութեամբ ազատեալ լինէր Կամենաւորական ՝ բահատ. վասն որոյ առտուկապէս զչարեալ Մխիթարայ՝ և երկուցեալ՝ մի գուցէ նոյնպունակ և Աիւնին Յաղթ զերծոյն՝ հրամայէ զորոջն անմեղ և զգառն տալեւոր զառաջեաւ ածել, զի լեցի պատարագ անուշահոտ Տեառն իւրում: Եւ զի առաւելապէս դրդռեալ լինէր առ յանօրէնն և՛ի կայենատիպ եղբօրէն Յակոբայ՝ի Գոդիհանէ Աիւնեաց տեառնէ, սակս այնր առտիկ դրդեալ լինէր՝ի ցասումն: Խօսել սկսանի ընդ Յակոբայ մեծամեծ պատուհասիւ և ահարկու խրոխտմամբ, հնարէր զանազան հնձնձանօք խախտել՝ի քրիստոսական հաւատոյն և ընդ պատժոյն խոստանոյր և պարգեւս մեծամեծս, եթէ արասցէ զկամն նորա. իսկ երանելին այն լուռ միայն ունէն դնէր բանից նորա, և ապա հրաշապիտակ տեսակաւն յերկինս հայեցեալ առ անձկալին իւր՝ կոչէր զնա յօդնականութիւն. և պնդեալ զսիրան և զմիջն անձառելի յուսովն՝ պատասխանի տայ Մխիթարայ և ասէ. «Թէ զժամանակիսյ կեանս մատնիցես վաճառէր ոք, և ինձ հնար էր գնել և կեալ յաղագս ցաւոց մարմնոյս և սիրոյ կենցաղոյս տալի արդեօք զամենայն ինչ զոր ունիմ՝ և գնեմ. բայց զյաւիտենից պատուհասն և զանշէջ դհինեին զտալանեալսն գնել ընդ կարասւոյ յոյժ անմտութիւն է, մանաւանդ զի և անչափ է երեւումն վաճառոյն, քանզի ոչ ոք գիտէ, զկեանն իւր զհինն և զմեռանելն. գուցէ գնեալ խնդայցէ, և ի վաղիւ վախճանեալ յուզարկեացի՝ի խաւարն արտաքին: Ել զայգպիսի ազատզի և կորստական վաճառ Թէ սիրեցեալ էր իմ՝ ընդէ՞ր այժմ գնեմ զդա վասն կեղծ, այլ վաղ իսկ առնուի հանդերձ վտառք և մեծամեծ պարգեւք. այլ զայս ընտրեցի յորում համ, և զոյն համարեալ լաւ և պատուական՝ ուրախ եմ և խնդամ մեռանել վասն Քրիստոսի, քան

թէ զհազարս ամաց կեալ մեծամեծ վաստաք յուսացութեան, և անվախճան պատուհասին լինել ժառանգորդ»:

Եւ լուեալ զայսպիսի բանս անօրէնն Պարսկացն՝ի սրբոյն Յազգայ՝ իբր անգառագեղ գազանք յարձակեցան՝ի վերայ, և կամէին կենդանւոյն հաղորդիլ ամենեքեան յարիւն նորա: Եւ առեալ սպանողացն տապան մերձ՝ի մատուռն՝ սուրբ և առաքեալսն Թադէոսի, ՚ի գիւղն որ կոչի Կադաւան՝ի գաւառին Վաղարշակերտու՝ի նահանգին Կադրևանդայ, ՚ի լանջակողմն լերինն Նպատայ, մօտ՝ի սուրբ տեղի մատրանն իրրու երկու քարընկեցօք. և անդէն հատին զսուրբ գլուխն, զոր բարձեալ քրիստոնէից տարեալ հանգուցին՝ի սուրբ մատրանն Վրիդոլի: Կատարեցաւ սուրբ սեպուհն Աիւնի եւ բանելի նահատակն Յազդ յամենայն հոռի, որ օր վիշտասան էր ամսոյն. յորոյ վերայ եղեն նշանք մեծամեծք և լինին բժշկութիւնք առատք ամենայն ախտաժետաց. որ է բարեխօս վասն մեր և աշխարհիս այսմ առ Քրիստոս, որում փառք յաւիտեանս, ամէն:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վասն վիսէցին որ կան՝ի հանգուրխ՝ի վայոց յոր գտաւթէ սուր և անք, և վասն վիսայուրնին որ շինեցաւ՝ի գեղամիջին Եղեգեաց և Արգան:

Յետ առնումն աշխարհիս Վայոց և կառավարածի սրբոյ Վարդանանց՝ զամն քառասներիք ոչ դադարեաց սուրն պարսկական՝ի ձարակելոյ զահս արամեան: Վասնզի յետ Յազկերտի Թագաւորեաց Պերոզ՝ամն քառասներկու և խստացոյց զանողորմ կառավարումն և գերումն, այրումն և քանդումն աշխարհիս Վայոց: Ուստի՝ի սահմանէն նորա՝ի Վեմէ մաղացւոյ Թա-

---

[1] Այլ որ. Սբոյ Հարցանն:

գաւառէն և ՚ի բնաջինջ լինել տամբ և զաւակօք, ապա թա-
գաւորէ Պարսից խաղաղասէրն Ա՛ազարշ, որ և յաւաջին
ամի իւրոյ տէրութեանն սրար հաշտութիւն ընդ Ա՛ահանայ
և այլոց նախարարաց Հայոց. և եղին ինա մնղպան աշխար-
հիս և կնքեցին ուխտ երդմամն և հաստատեցին զխաղաղու-
թիւն ընդ Հայս։

Ապա յետ սրբոյն Ա՛արդանայ շրջէին ընդ ամենայն տեղիս
զօր Պարսից, ոմանք զկին փախստեից և ոմանք ՚ի վերայ բեր-
դից և ամրոցաց, և ջանային ՚ի սպառ ՚ի սպուա ջնջել և ար-
մատախիլ առնել զազգ Հայոց։ Սուրն վաղակատր կայր մեր-
կացեալ ՚ի վերայ ամենայն հայ զինուորի, միայն խնդրէին բա-
նիւ միով ուրանալ զՔրիստոս և գլուխ կորացուցանել արե-
գական, և թէ ոչ՝ մեռանիլ առ ժամայն։ Ա՛ան որոյ լի և-
ղեն վկայիւք ամենայն առապարք և խորաձորք, հովիտք և
բլուրք աշխարհիս Հայոց, իբր զկաճառս առտուզաց, որ ՚ի մէջ
գիշերի փայլեն թանձրախիտ ընդ երեսս երկնից[1]. որպէս և
առաւ է տեսանել յաշխարհիս Վիրական ՚ի գաւառս Ա՛այոց
ձորոյ, ուր եկեալ ՚ի զօրացն Հայոց փախստեայք կամէին ան-
ցանել յամուր աշխարհն Աբցախայ. որոց զկին սպնդեալ զօ-
րացն Ա՛թաշխուդայի[2] և հասեալ ՚ի գաւառամէջն Ա՛այոց
ձորոյ մերձ ՚ի բլուրն որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն
ամրութեան ՚ի գետառիջին Ա՛ղեգեաց և Ա՛ողան՝ մատուցեալ
եղին արեան ճապաղիս. և կոտորեցին զբազումն և գերեցիկս[3]
որ էր յաղատ տոհմէ Հայոց վասն անուանն Քրիստոսի, յորոց
վերայ եղեն նշանք զարմանալիք ՚ի վերուստ և հնչեանք պըղ-
պեցան զկետ այլոց. և հասեալ կիսոցն յատորոտ բերդաքարի
՚ի միոյ ձորակի անդ կատարեցին, որոց գլխատորին անուն
Ա՛արաիր էր, որ և տեղն կոչեցաւ Ա՛նգեղ ձոր։ Եւ անդէն

---

[1] Ա՛յլ օր. ընդ երես երկնից։ — [2] Ա՛յլ օր. որոց զկին պնդեալ սպնդեալ Ա՛թա-
շխուդային ընդհանուր զգրօսն պարսից։ [3] — Ա՛յլ օր. խոստիցին զբազումս գերեցիկ։

առաքառակ հղեալ հասին և երկբհարիւր ապա՝ ի ջրկիցն, որ Ասմինք կոչի և Ագաբոյնք, և անդ զնոսա խոզխոզեցին. յորոց վերայ յետոյ շինեցաւ եկեղեցի՝ ի բնակչաց տեղւոյն:

Եւ անտի առաւ մի անցեալ Պարսկաց՝ ի ձորադուռն, որ՝ ի ձախ կողմանէ հայի՝ ի վեր յուխան սուբր՝ Յախտագբար կոչեցեալ, որ՝ ի վերայ բարձրաւանդակին՝ ի մէջ սահմանաց երկուց գիղջն, զոր՝ ի վերոյ ասացաք[2]. անդ կոտորեալ յոյժ բազմութիւնք սպասուհ ապանց և ընտիր զօրաց՝ և ինքեանք եկեալ՝ ի շինամէջն բնակեցան խորանօք՝ լքեալք և վառեալ կեալք՝ ի կոտորածէ, և կամեցան գիշերօթի առնել: Յակ՝ ի մէջ գիշերին պարսիկ մի, որ էր գուշակ զօրացն, տեսանէր զերկինս բացեալ և լոյս սաստիկ հեղեալ՝ ի վերայ ապանելոցն, և կառք մի ոսկեզէն բարձր յոյժ, յորոց վերայ նստէր կին մի ծիրանագեղս թագաւորակերպ, և ամբոխք սհոգին զօրաց լուսեղենաց շուրջ զնովաւ: Եւ նա հայէր՝ ի վերայ կոտորածին և լայր ողբով, և մի մի զգուէր՝ ի նոցանէ: Յակ պարսիկն այն զարհուրեալ կամեցաւ ազդ առնել զօրացն, և կապեցան առքն և լեզուն: Ապա մերձենայր՝ ի նա մի սրբոցն զօրաց, և նա հարցանէր. «ովք է այդ». ասէ հրեշտակն, «այն մեղսն է, երկնաւոր թագաւորին, և իջեալ է առ վկայս և սրբելիսն որ զոյն իւրոյ[3], և մի մի կամի փառաւորել զնոսա»: Եւ կացեալ տեսանէն մինչև յառաւօտն և աներևոյթ լինէր:

Յակ՝ ի լուանալ առաւօտուն կամեցան զօրքն գնալ՝ ի տեղւոյն, և գտին զայրն թաղացեալ անկեալ. հարցանէին զնա զպատճառն և նա այլ ինչ ոչ կարէր պատասխանել, միայն մատամբն ցուցանէր և լեզուաւ ասէր. «մեղսդ անդ այ, մեղսդ անդ այ[4],» վասն որոյ և անուն տեղւոյն մինչև ցայժմ Ասպանդ կոչի: Եւ գնացեալ պարսիկն այն անկեալ զսրբովքն և բժըշ-

---

[1] Ալլ օր. և էրեւ հարիւր ապանդ: [2] — Ալլ օր. որ վերոյ ասացաք: — [3] Ալլ օր. և ինքեալ եաս զվկայսն և սրբելիսն որդւոյ իւրոյ: — [4] Ալլ օր. մեղսդ անդ ի, մեղսդ անդ ի:

կեալ՝ լինէր քրիստոնեայ և զամենայն առաքս իւր սպասաւորէր սրբոյն. որ և յետոյ երթեալ քրիստոնէից՝ ամիսս վեցին զսուրբն և շինեցին մատուռն ի վերայ: Իսկ զառաջին սուրբսն, որ կառաւելեցան[1] առ բլրառն՝ ի ժամուն ամիսս վեցին քրիստոնեայք: — Եւ էր յայնժամ կաթողիկոս երանելին Գիւտ, որ լուեալ հրամայէր շինել վկայարան մեծ ի վերայ սրբոյն և ժողովել անդ զոսկերս նոցա: Ապա ձեռն ի գործ արկեալ Յովհ և Շ՚ահիրէա[2] և Ազշէն երէց և Աբդիւ՝ հիմն արկին սրբոյ կաթողիկէին յիւնկրոյդ ամին Գիւտայ կաթողիկոսի յամսեան ամառանին, որ օր հինգ էր ամսոյն: Եւ կառաւելեալ զնա մեծաձախ գանձիւք կանգնեցին ճեմարան երիվանման հրաշագործաւ շինուածով երկադմրէթի և եռախորան. և յերկուս կողմանս գաւիթս, սրահակս[3], և վերնատունս սեամբք և աքանչելի յօրինուածովք: Եւ վայրն ամենայն ի մեծ գեղոյն մինչև ի վեր ի լեռնակողմն՝ որ Աղօնք[4] կոչի, ընծայեցաւ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյ պաշտօնէիցն:

Իսկ ի կառաւելման գործոյն գայ երանելի կաթողիկոսն Գիւտ և Ընտանիս Ասիանոց եպիսկոպոս, և բազմամբոխ ժողովով փոխեն ի հանդիստ զսուրբն, և առնեն նաւակատիս սուրբ եկեղեցւոյն ութ օր ի փառս Քրիստոսի: Ասյց այժմ յետ աւերման տեղոյն՝ եղև շինանիստ գեղջկաց, և կոչեցաւ տեղին Խատրալիզ[5]: Զայս ամենայն ճանաչաք յիւրոց արձանագրութենանց, և այլ՝ էր որ ի գրոց, և էր՝ որ ի տեղեաց՝ և ի վկայից և յանուանէն և ի հաւատոյ առանդութենանց հնոցն ճանաչաք. և տեղեկացեալ ամենայն սատուիւ՝ առանձնացաք ձեզ:

---

[1] Ձայլ օր. որ խորբիցան առ բլրառն: — [2] Ձայլ օր. Զաբէնիք: — [3] Ձայլ օր. ճեմարան երիվանման հրաշագործաւ շինուածով երկադմրէթիս և խոսխորան. և յերկուս կողմանս գաւիթս և սրահակս: — [4] Ձայլ օր. Սրիզնէ: — [5] Ձայլ օր. Խոսրալիզ:

ԳԼՈՒԽ ԺԶՕ

Ո՞ւմ էպիսկոպոսացն Սիւնեաց, որ յաջորդեցին Գինդ Ընտիսյէ և մահ նոցա եղելոցն։

Յետ ատենաժամարեալ եպիսկոպոսին Սիւնեաց տեառն Ենանիայի յաջորդէ զթոռն տէր Գուն՝ այր բարի և լաւ՝ ամբիս ութ. և յետ նորա տէր Գաղատա՝ ամն եօթն և տասն։ Եւ յետ սորա տէր Մուշէ՝ ամն երեսուն և վից։ Եւ ապա բրնաբարեալ զսուրբ հայրն Եղիցակ՝ Եղիցուվանից մեծ եգոնոմոս, խաթաղեցագետ և խոտակրօն ճգնաւոր, բերեալ կացուցանեն եպիսկոպոս Սիւնեաց. որ և եկաց ամ մի, զորոյ զորպէսն ասելի է սակաւուք։ Յամն Պաւստոսի արքայի Պարսից՝ ի մարզպանութեանն Ատհանայ Մամիկոնէի, ի հայրապետութեան տեառն Մուշէի կաթողիկոսի վախճանի երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մուշէ՝ կալեալ զաթոռն ամն ևբեսուն և վից։ Եւ զի պակասեալ էր իշխանն Սիւնի, և էր նորա կին մեծահասատ լի ամենայն բարեպաշտութեամբ՝ Սահակիա անուն, և ոչ ունէին տեսուչ հոգւոց՝ յայնժամ բողոք բարձեալ ամենայն ազատաց և տանուտեարց և աւագ քահանայից[1] աշխարհին առ մեծ բարեպաշտուհին Սահակիա՝ խնդրէին իւրեանց առաջնորդ։

Ւսակ նորա պատրաստեալ գնապանս ի մեծ և ի պատուական արանց և յընտիր քահանայից՝ բազում ընծայիւք և պիտանի պատարագօք ուղարկէ առ կաթողիկոսն Մուշէ, և թախանձէ[2] զնա գալ յաշխարհն իւր և ընտրեալ արժանաւոր այր՝ կացուցանել յաթոռ մեծարապօլսութեան Սիւնեաց։ Եւ նորա սիրապար խոնարհեալ գթալով ի հօտն իւր՝ ոչինչ վերջացաւ ի գալոյ. այլ պատրաստել հրամայեաց ըստ

---

[1] Ա.յլ օր. փախստական և քահանայից առաքս ալեւորին։ — [2] Ա.յլ օր. խնդրէ։

հայրապետական ձոխութեան զձանապարհն՝ հնձեալ ՚ի սպի-
տակ ջրի[1] ոսկեզօծ թամբօք, նախկապօսօք և բազմամրոխ
պաշտօնեէիւք, զառաջեաւ ունելով զոսկիափայլ նշանն առ-
տուածընկալ արիգահնակերպ նշողիւք՝ ընթանային զձանա-
պարհսն սաղմոսիւք և քաղցրաձայն եղանակօք: Եւ այնինչ
հասանէին ՚ի տահինան Պունեաց, ՚ի գառառն Ա՚այոց ձորոյ՝
տեսին երաշտացեալ ՚ի բազում աւուրց և ողորմ տեսակաւ
թափշամեալ զամենայն բոյսս: Ընդ որոտաւատոչ պաղա-
տանօք ձեռս ՚ի վեր ամբարձեալ հայրապետին՝ խնդրէր ՚ի
Տեառնէ այցելութիւն, որ և ՚ի ժամուն յօդեաց Տէր զցօղ
քաղցրութեան, և զառուս երես զցայդ և զթերեկ ոչ դադա-
րեաց ՚ի տեղալոյ. և ամենայն երկիրն զարմացեալ փառս ՚ի վեր
առաքէր մեծաւ գոհութեամբ:

Յակ՚ի մերձենալն ՚ի գահն իշխանաց ՚ի Պունիս առեառու-
քըն առաջի ընթանային: Եւ կլ տիկինն որդւով իւրով և ամե-
նայն ազատագունդ հնձելով և բազում ամբոխիւք քահանա-
յիւք և տանուտէրօք ընդառաջ կամէ ոգեկոսին. և մեծաւ խընդ-
դութեամբ պատահեալք՝ իջանէին ամենեքեան ՚ի վերայ ճնղագ
և երկիրպագանէին. կէսք հետևակ և կէսք հնձեալք ընթա-
նային յաջմէ և յահեկէ, մեծաձայն աղաղակաւ երգէին[2] զեր-
դըս օրհնութեան, և այնպէս տարեալ իջուցանէին ՚ի խորա-
նըն և նստուցանէին ՚ի վերայ ոսկեթել բազմականին՝ ՚ի գահ
իշխանացն, ՚ի տեղին՝ որ կոչի Ախց վտակաց: Եւ անդ հան-
դուցեալ զաւուրս երիս՝ հրամայէ հայրապետն ժողովոյն ընտ-
րել իւրեանց առաջնորդ, զի ձեռնադրեսցէ: Ընդ ամենայն
բազմութիւն զաղաղակ բարձին ՚ի մի բերան և ասեն. «Քընդ-
րեսիք մեք տեսուչ հոգւոց մերոց զՀայր Ներսէսակ, և բաց ՚ի

---

[1] Ա՚յլ օր. ՚ի ոսկեթել ջրոյն: — [2] Ա՚յլ օր. հնձեին գովեին զերկիր օրհնութիւն
այնուհետև, զինչ ևս լիներ գովել գեղեցիկ իրիս յորսորմանէ տեղւոյ: Եւ այնպէս գո-
վեստագործութեամբ գոհել իջուցանէին ՚ի խորանն արքունական և նստուցանէին ՚ի
վերոյ ոսկեթել և մարգարտազարդ բազմոցանէն:

նմանել ոչ միսի մեղ այլ ոք»։ — ։բանայի, Հայրապետն պատրաստել երիվարս, զի երթիցեն փութանակի ՚ի վանս նորա, և ցիշխանն ասէ. «Դու գնա պատճառաւ որոյ և պահեա պղծուհս վանիցն, զի մի՛ իմացեալ ելեալ փախիցի, և ընդունայն լեցի աշխատութիւնս մեր»։

Իսկ սիկիմն Յահակիա ընծայէ նմա զվճան արքունի առեւնայն կահիւք[1] և հնձուցանէ գնա յոսկիապատ կառս ապրեսակ ջորւոց, ընդ որում և առնէայն բազմութիւնն զրոհ տուեալ գնացին գիմի։ Եւ այնմիջ հասեալք ՚ի գուռն Երիցուվանայ, որ է ՚ի Խաղք գաւառի որ Խաշունիք կոչի, և այժմ Խարկուշատ, կամեցան Երիցակ իջանել պարանոք ընդ պատիսն և փախչել. և ոչ թողացուցին պահնակքն։ Եւ էր վանքն այն տեղի գեղեցիկ և զարմանատիպ ՚ի վերայ բարձրաւանդակի միոջ շինեալ եկեղեցի յանուն սրբոյ Նահապետին Երիցակայ ձեռամբ և պարսպեալ մեծամեծ քարամբք, և ՚ի ներքուստ պարսպին խցկունք՝ և միանձունք թուով[2] քառասունն՝ միաբնակեալք, խարտեաշագեսք, լուռք, որք իբր ըզկանխեղուն միշտավառս և անշէջս յիւրաքանչիւր խղի հանապազ սքեմութեամբ վառեալք լինէին բոցով շնորհացն Հոգւոյն։

Իսկ Երիցակս այս անեալ էր նախ բազում ամաք ՚ի Խաղք գաւառի, ՚ի տեղի մի քարանձաւ, և ապա գնացեալ ՚ի վանս Գիւտայ և անդ անցուցեալ բազում աւուրս անտանելի ճգնութեամբ. և ապա օժանդակութեամբ և հրամանաւ Գիւտայ եկեալ ՚ի տեղին յայն երկոտասան կրծտաւորաք և բազում ընչիւք, զոր պարգեւեալ էր Հայրն Գիւտ՝ շինեալ զեկեղեցին որ կոչեցաւ Նոր Երուսաղէմ։ Բայց ուրուկքն, որ ՚ի ժամանակին հալածեալ լինէին յանվայր տեղիս և բնակեցուցեալ էր գնոսա հօրն Գիւտայ յայնմ վայրի, հակառակէին շինութեան Երիցակայ. զոր լուեալ սուրբ հօրն՝ եկն և համոզեաց

---

[1] Այլ օր. իշխան և բազմանօքն։ — [2] Այլ օր. իցէ թուով ոմն տասնասան։

պնոտա ՚ի խաղաղութիւն. և սահմանեսցէ զպէտս նոցա ընծայ-
իլ ՚ի վանացն ըստ չափոյ[1]: Եւ ինքն օր ըստ օրէ գործակից
լինէր շինուածոյ և զճաշ շինողացն յղէր: Եւ այսպէս շինեա-
ւան Ընտուածոյ[2]՝ յարդարէ զնա ՚ի բնակութիւն հրեշտակա-
կրօն արանց:

Լսեալ հայրապետին Մուշէ մահալ ՚ի վանս՝ ողջունէ զնկե-
զեցին, և բազմեալ յղէ զառաքեալսն զերդիւ այրոյն ՚ի Յով-
հաննու վանացն Ընտրացածոտանէ, որ էր սարկաւագապետ և
գլխով հայրապետին, նմանապէսև իշխանքն և այլ ժողովք,
և ոչ կարացին հաւանեցուցանել զնա: Ապա կրթեալ կամ-
զնկոսին առ հայրն Ներսիսակ ՚ի սրահ ննջա, լի ցաւմամբ կըն-
քեաց նշանաւ խաչին և ասէ. «ընդէ՞ր այդպէս յամառեալ կաս,
զև գոյ ՚ի քեզ, սատակեալ Ընտուած ՚ի չարն և հալածեալ»:
Յայնժամ ընդ բան սրբոյն ել ծուխ թանձր իբր գխոմոլիկ
հողմոյ և վերացաւ ՚ի տանէն. և ապա ակնեալ երամբ սպիտակ
աղաւնեաց իջին ՚ի քիւս սրահին[3]. և մին ՚ի նոցանէ սլացեալ
ակն էջ ՚ի վերայ կամզոլիկոսին, և վերացեալ ՚ի նմանէ էջ ՚ի
վերայ Ներսիսակայ՝ և շրջէր ՚ի վերայ խաշոյ քուսիմայրին, և
նուազ ձայնիւ խօսէր մնրդկօրէն. «արժան է, արժան է»: Լսեալ
բազմութիւնն տեսանել զայն՝ մեծապէս զոչէին միաբան. —
«արժան է, արժան է»:

Այն տեսեալ հօրն՝ ոչ ինչ իշխեաց ընդդիմանալ. այլ ՚ի գուշս անկեալ առաջի կամզոլիկոսին արտասուաթոր
կականմամբ ասէր. «կամք տեառնդ լինի, և ոչ իմն». ապա
առեալ տեառնն զձեռն անէ՝ տանի յեկեղեցին. և հանեալ ՚ի բե-
մըն օծանէ զնա մեծարուածոյնա Ներսիսայ և բերեալ նստուցանէ
յաթոռն. և ինքն բազում մեծարանօք հրաժարեալ յամենե-
ցունց՝ գնայ ՚ի հայրապետական աթոռն ՚ի Գուխն շահաս-

---

[1] Այլ օր. և սահմանեաց պէտս ընծայել ՚ի վանէն ըստ ժամու: — [2] Այլ օր. Տուն սուրբ և խնդրել զնա ՚ի եպիսկոպոսութիւն: — [3] Այլ օր. իջան ՚ի գլուխն:

ման[1]: Իսկ երանելին Երիցակ կալեալ զաթոռն սմ մի՝ վտ-
խի՝ ի վերին Երուսաղէմ[2]: Ընդ ասի զամանէ, բան աւանդու-
թեամբ, եթէ երթեալ՝ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և յա-
մեալ անդ մինչև ցօր մեծի ձրագալուցի Յայտնութեանն, և
՝ի դրան սուրբ այրին որ՝ ի Յեթզեհէմ՝ ի միտ ածեալ զմե-
նատանն իւր և զեղբարան՝ լայր դառնապէս՝ ի սահմիկ կարօ-
տոյն, և խնդրեր ինքն յայնմ ժամու լինել ընդ եղբարան իւր.
զոր խնացեալ կնոջ միոյ կախարդի՝ գրեա թէ՝ ի Հոգւոյն սըր-
բոյ ազդմանէ հարցուկ լինէր և ասէր ցհայրն. «սատ ինձ վասն
որոյ դառնապէս արտասուես»: Եւ նա յայտնեալ նմա զպատ-
ճառն՝ ասէ հայցէր. «ոմ սուրբդ Ստուծոյ՝ խնդրեա՝ ի Յերիսոսէ զԹողութիւն անչափելի յանցանացս, և ես յայսմ
ժամուս ցուցից քեզ զիարափագիլին քո»:

Զայս լուեալ հօրն և համարձակեալ՝ ի զԹութիւն Ստ-
ուծոյ, նաև յանձկոյն բռնադատեալ՝ յանձն առնու զինդ-
բելին: Եւ նորա կազմեալ անօթի ինչ լի ջրով և նիւթեալ ըստ
իւրոյն սպանդոյ անցուցանէ զուսրբն՝ ի վերայ նորա, որ և հա-
կոյն գտանի՝ ի վանս իւր Երիցու առ դրան եկեղեցւոյն՝ մինչչև
էր կատարեալ վրկական խորհուրդն: Ապա մինչ խնացաւ, ոչ
երևեցաւ եղբարցն մինչ ժողովեցան՝ ի սեղանն մարմնաւոր.
և անդէն ճանաչութիւն տուեալ ողջունէր զամենեսեան, և
զանհատատալն բանան պատմէր նոցա, ցուցանէր և գնշանն
զոր բերեալ էր, այսինքն՝ խաւարտս և կանաչս, նարինջս և
թրունջս, և այնու հատատէր զբանն: Իսկ յետ սեզանոյն յա-
րուցեալ ընթացան՝ ի դուռն եկեղեցւոյն, և զայն գիշեր հըսկ-
մամբ խնդրեցին զԹողութիւն կնոջն. որոց լուեալ մարդա-
սէրն Ստուած՝ շնորհէ նմա զԹողութիւն և յայտնէ տես-
լեամբ սուրբ հօրն:

---

[1] Ընդ օր. ի դոսին լսհատատ բազում ֆոս և ֆսհոսիխն ամիսափոսոն ատա-
ֆելով: — [2] Ընդ օր. սոր գրվի գրեցն են, և ֆազֆոգիտ նոցա Յիսուս Քրիս-
տոս Ստուած բոլորից:

ԳԼՈՒԽ Ի

Պատմութիւն համառօտ հօրն Գիւտոյ և քրիստոսասիրին, և չինութիւն վանացն, որ յեղեր եբուխոյ։

Ոչ վայրապար ինչ վարկցիս [1] զառաջի եղեալն՝ և առ լսելոյդ զիս ծանիցես, այլ պատշաճ և ի դէպ մերում ձեռնարկութեան, զի զԱխաեան աշխարհիս սկսաք ճառել զվերպըս։ Ա՛ան որոյ հարկ է, ամենայնիւ զեղեալս ի սմա գործս և հրաշս յուցանել ձեզ. որ և ոչ այսչափ լաւագոյն իմն էր երևեալ եղեն յայսմ աշխարհի որպէս զայս, զոր ասել սկսաք։

Էր ի գաւառին Գողթան իշխան մի հաւատացեալ, որում անուն էր Շ՛արիթայ. և էին նորա թոռունք երկու՝ որդիք որդւոյ նորա, որոց անուանք Ա՛սակ և Շ՛ապուհ։ Էարկ սատանայ աղմուկ և նախանձ մեծ ի մէջ նոցա վասն բաժնի ժառանգութեան հայրենեաց. և կռուէին ի վերայ գեղեցիկ գեղջն Որդուատայ։ Եւ ի ձակատին զօրօք ընդ միմեանս և՝ հար Ա՛սակ սրով զեղբայրն և խոցխոցեաց մերձ ի մահ. և ապա զղջացեալ եղբայրական զթով՝ գնաց առ եղբայրն և անկաւ ի վերայ նորա և լայր սատկագին, և ազնողորմ ողբով հառաչէր և ուխտադրէր Ս՛ատուծոյ, զի թէ բժշկեացի եղբայրն՝ հրաժարեսցէ ինքն յամենայն աշխարհական իրաց. որ և բժշկեցաւ։ Յայնժամ ողջմեալ Ա՛սակայ հոգւոյ իւրում՝ յեզակարծում ժառս անցեալ եղև ի միջոյ և ծածկեցաւ յընտանեացն, և գնաց ընդ կողմն Խաղաց։ Եւ մինչ ի բարձրաւանդակ լերինն եհաս՝ յանձնեաց զինքն շնորհայ Հոգւոյն և ի բերան առեալ զսաղմոս զայս՝ ասէր անդադար. «զձանապարհս իմ ուղիղ արա ինձ, Տէր՝ ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք»։ Եւ անցեալ ընդ գա-

---

[1] Ուղ. օր. արդեօ՞ զիս տեսանես ինչ վարկցիս։

առաջն յԱզատոյ, անդ վճարեալ զձմեռնայինն նշանակն՝ անց ընդ միւս վտակն ի կողմն բերդոյն ի գառառն Վաշունիք, որ այժմ Խարկաշատ կոչի, և բնակեցաւ յորձ ըլբին զամն երիք և զամիսս վեց ի խղճ միւոմ: Եւ էր երկիրն այն վայր աւերանի, լի անտառախիտ ծառօք, և ի նկրտոյ՝ դաշտ անհուն լայնութեամբ մինչ յԱզատոյ: Խակ ընտանիք նորա ոչ գիտէին, թէ ուր յափշտակեաց հողին՝ գնաց նա ի Հայս և ի Հոռոմն և ի Պարսս հանէին, և անհնարին սգով ողբային. և ոչ էին ծանեան գՀետս նորա:

Ապա օր մի իրրև պարապեր սուրբ Հայրն յերեկոյեան աղօթիցն և կամէր հանգչել՝ լսելի եղեն նմա ձայնք երգոց և խաղուց, յորմէ զայրացեալ ասէ. «ոչ կարացի այնքան փախչել յաշխարհէ, գի զձայնս նորա ոչ լսէի»: Ի նմին ժամու յարուցեալ գնացեր ի տեղւոյն. և անկեալ ի դաշտն՝ առաջնորդութեամբ հրեշտակի գնաց մինչ ի ծագել արեգականն. և հասեալ յԱզատոյ՝ եգիտ ձորակ մի և ի միջի՝ վէմ մի մեծ և ի նկրտոյ՝ քիւ փոքրիկ, անդ արարեալ զնստակութիւն իւր զամն ասան: Եւ էր կերակուր նորա ունդք և պտուղք ծառոց, գի երկիրն նման է Եդիպտոսի զամառն և ըզձմեռն: Ապա ըստ բանին, թէ ոչ լուացանի ճրագ և գնի ընդ դրուանաւ, կամեաց կանք Տեառն յայտ առնել գծառայն իւր սուրբ զՎիւտ, որ յառաջ կոչէր Ա՛ասակ: Եւ ել որդի թագաւորին Պարսից յորս ի մերձակայ լերինն որ գիտեր ի դաշտն Ա՛ուզանոյ: Եւ երևեալ առաջի նորա էրէ մի, և ի մէջ եղջերուացն խաչ լուսեղէն. և ջոկեալ զմանուկն ի զօրացն նման Եւստաթէի՝ եկն երեր մինչ յԱզատոյ ի տեղին որ կոչի Խարտախոզ, որ յերկիս ճղէ գՋուրն: Եւ եղև խաչն ի կերպարանս լուսեղէն մարդոյ և վազեաց ընդ վտակն. զոր տեսեալ մանուկն և թանձրացեալ աչքն [1] ի լուացն՝ անկաւ ի

---

[1] Ելլ օր. Թանձրացեալ աչքն ի լուացն:

գնան [1] երկու ծառայիւք և անց. և առաջնորդեալ եղջերուին յառաջս վիմին՝ անդէն անհետացեալ լինէր:

Ապա ի վեր նայեցեալ՝ տեսին արջ [2] մի ահագին կերպարանաւք նաւեալ. և միոյն թաթն ի ձեռն սրբոյն, զի բժշկէր ի վիրաց: Ընդէն զարհուրեալ մանկանն երկեաւ. և զի ի տես լեան իմացեալ էր սուրբ հայրն զդալն նորա՝ ձայնեաց, «մի՛ երկնչիր [3], ևկ առ իա». և նա ասէ. «զի՞նչ ես դու». և ասէ «մարդ երբև գքեզ». ասէ. «և զի՞նչ են դոքա որ ընդ քեզ». ասէ Գիւտ. «շունք իմ են». ասէ «հրամայեա դոցա ի բաց գնալ». և հրամայեաց: Եւ յարուցեալ ինքն՝ էջ ի վիմին և քարոզեաց զաւետարանն և ուսոյց զՔրիստոսի հաւատն: Եւ նա յոյժ սիրեաց. և խնդրէր կենաք, որ և իսկոյն հրաման առեալ սուրբն ի Տեառնէ՝ մկրտեաց զմանուկն և զերկու ծառայսն. և կոչեաց զանուն նորա Քրիստոսասէր: Եւ բազում աւուրս կացեալ մեծամեծ ճգնութեամբ՝ ասէ Քրիստոսասէրն. «Հայր՝ կարօտ եմ ևկեղեցւոյ և լուսաւոր կարգաց նորա զի տեսից. ոչ է մեզ բարւոք միայն բնակիլ ի վիմիս յայս. այլ հրամայեա զի ևս երթամ և բերեմ արծաթ, և շինեցից ևկեղեցի և հաստատեցից ուխտ և ժողովեցին եղբարք»: Եւ հրամայեաց նմա երթալ. և գնացեալ՝ երեր արծաթ բազում: և կոչեցին զարուեստաւորս և շինեցին ևկեղեցիս և ժողովեցին եղբարս բազումս:

Իսկ թագաւորն Պարսից խնդիր արարեալ որդւոյն իւրոյ բազում դեսպանօք ընդ ծով և ընդ ցամաք. և մինչ ոչ ևրեւէին հետք նորա՝ զցայգ և զկերեկ ողբայր զառնապէս և ոչ մխիթարէր երբեք: Ապա ի գիշերի միում տեսիանէ ծառնեաւ ի հրեշտակէ, եթէ որդին քո յայս նիշ տեղի է՝ քրիստոնեայ ձեռով: Ընդ որ յոյժ խնդացեալ՝ դեսպանս փութաւնակի առաքէր ածել զորդին, զոր ևկեալ գտին ինա. և ոչ

---

[1] Այլ օր. տեղս ի ֆեղին երթա ձառայիւք։—[2] Այլ օր. այր մի։—[3] Այլ օր. մի երկիր։

կարացին քակել՝ դարձան ուեցան և ասեն. «ոչ ևկն, այլ աղաչէ զքեզ Թոյլ տալ նմա. ասէ — է իմ հայր, որ վերատին ծնաւ զնա լուսաւոր և անապական ծննդեամբ. ես ոչ կարիմ Թողուլ զնա, և խոստացեալ է ինձ Թագաւորութիւն որ բիւրապատիկ է քան զքոյդ»: Յարուցեալ այնուհետև Թագաւորն ինքնին ևկն՝ի տեղին, և ոչ զոք գտաւ բայց միայն հիւանդ մի. ևհարց ցնա. «ուր է որդին իմ», և նա ասէ. «Ծանեան՝ի հրեշտակէ զքո գալդ և փախեան»: Ընդ հրամայէ սպանանել զնա, և զտեղին այրել և քանդել:

Եւ ինքն գառնայ անդրէն յաշխարհն իւր. և անկանէր՝ի սաստիկ ախտ հիւանդութեան՝ի կարօտութենէ որդւոյն. և դարձեալ առաքէր գեսպանս, և աղաչէր խնդրել զոր ինչ պիտոյ իցէ: Եւ նա հայցէր զանձս բազումս և արուեստաւորս, զի շինեսցէ զաւերեալ տեղիան: Եւ առաքիցաւ առժամայն հազար այր, հինգ հարիւր քարգործ և հինգ հարիւր փայտագործ. և փոխեցին զտեղին ընդ վէմն՝ի վեր և հարթեցին զվիմաղդեանքն, և շինեցին եկեղեցիս երիս յանուն սուրբ Երրորդութեանն: Եւ կ՚համբաւս այս ընդ ամենայն աշխարհ. և գային բազմութիւնք եղբարց և ընտր առնուծոյ: Եւ ընդ երեկս սկան հակել. և ահա՝ի մէջ զիշերին ևկն այր մի լուսաւոր և՝ի ձեռին խաչ և ասէ. «Հայր՝ Թագաւորն երկնից օծ զքեզ՝ի հայրապետութիւն տանս, որ է երկրորդ Երուսաղէմ. և բարձրաւանդակ տեղին քո Գողգոթայ, և նոյն անուք որ ընդ Երուսաղէմ անցին՝ անցանեցոց են և ընդ տեղիս. և բնակութիւն սորա հանապազ՝ի ջաբիս. և կրծնաւորք սորա առաւել օրհնեսցին քան զայլ աշխարհս, դու կ՚և օրհնեա զեկեղեցիդ»:

Այս ասացեալ՝ ինքն եղև աներևոյթ. և ընդ առաւօտն պծոցեալ հայրն սուրբ՝ կ՚՝ի բնին և օրհնեաց զտեղանն և ըզտաճարն. և ընդ օծանելն դառք հրեշտակաց՝ի խորանին Թեւաւոքօցեալ գոչէին զամէնն. յորմէ զարհուրեալ ժողովոյն՝ և-

լանէին արտաքս: Եւ այնպէս փառաւորեաց Աստուած զանձինն զայն ի ձեռն երանելոյ հօրն Գիւտայ և Եպիսկոպոսարանին: Ապրեցին ի նմա եղբարս հինգ հարիւր՝ երկու հարիւր ի վանքն և երկքհարիւր ընդ քարանձաւս և անտառս անապատս, որք անտանելի ճգնութեամբ և անդադար աղօթիւք իրր սիւն հրեղէն կանգնեալ էին յերկրէ յերկինս: Եւ նախանձոյն սատանայ ոչ կարացեալ տանել այսմ առաքինեաւ՝ զրգռէ զթագաւորն Պարսից ի չարաչար նախանձ: Եւ յարուցեալ 150,000 հեծելովք՝ գայ հասանէ ի տեղին սուրբ և սպանանէ ի նոցանէ տասն կրօնաւոր. և այլքն փախչին: Ընդ բրռնի խրտովն և հայրն Գիւտ, զոր հանեալ ի վէմն ընկեցին, և ոչ ինչ ջնասեցաւ շնորհքն Աստուծոյ. և բուռն հարեալ կամեցան այլ ևս ընկենուլ՝ և կէսքն հարան կուրութեամբ և կէսքն մեռան. զոր և տեսեալ զօրացն ի փախուստ դառնային և գնային անդրէն:

Ապա ժողովեալ սրբոցն յեկեղեցին լալով և համբուրելով զպատեհսն՝ ամփոփեցին յարևելից կուսէ եկեղեցւոյն ուր առաջ գուռն է: Յայնժամ յղէ յեղբարցն սուրբն Գիւտ առ եպիսկոպոսն Գողթան Ընտաստաս և առ ընտանիս իւր, և կոչէ զնոսա ի տես. որք խնդացեալ մեծապէս ընդ անյուսալի իրսն՝ եկին ի վանան Գիւտայ. բայց մայրն նորա զեռևս կայր կուրացեալ, և առեալ զգիր որդւոյն եդ ի վերայ աչացն և լուսաւորեցան. և մեծապէս հոգանային զԱստուծոյ: Եղեալ սուրբ հօրն եղբարքն հանդերձ ընդ յառաջ՝ և աճեալ յեկեղեցին մեծաւ գոհութեամբ յանձնէր նմա զեկեղեցին. և տայր ընծայ առ յամէ ութ օր կէս ի գետոյն Երասխայ: Զայն ընտանութիւն ցուցեալ Գողթան և անդէն դարձուցեալ ի տեղի իւր զեպիսկոպոսն: Դարձեալ յետ աւուրց մկրտեցին և զեղբօրորդի նոյն թագաւորին Պարսից՝ Երկ Երեսս անուն, և փեսայացուցին ս. աչագանայ՝ Ղեւոնդեայ արքայի և շինեցին բերդ յեզը գետոյն, զի անդ բնակեալ պահեսցէ զեղբարսն:

Եւ Աբել Աբրա և Վաչագան խնդրեալ յիշխանէն Աիւնեաց՝ սահման հաստին վանացն և հաստ հինգ գիւղ. սկիզբն արա- բեալ ՚ի Ալուասրէ՝ ածեն ՚ի Ռոթիբոթիր ՚ի վար և յարօր ՚ի ջուր Թզենւոյն և յայգեստան ուրկանոցին. և անտի գնայ հասանել մինչև ՚ի շրջանս գետոյն Ողաւնոյ հանդիպ եկեղե- ցւոյն Նախրզանու, և անտի մինչև յառունն Ստուածոյ, գիտէք հինգ այսու սահմանաւք: Եւ վարժ ամացեալ էր առունն, զի էր նորա արջառ հազար, ոչխար երիւրասան հազար, ուղտ եօ- թընհարիւր, ձի վեցհարիւր, էշ չորսհարիւր և այգեգործս կատարեալս հարիւր եօթանասուն:

Ընդ մեռանի ՚ի Ռարիուշատ թագաւորէն Վաչագան և Աբել Աբրա: Եւ լուեալ Թոռն Վռամ Շապհոյ՝ զայ բա- զում զօրաք և յանկարծ մնանէ ՚ի վանքն յառաւօտուն և կո- տորէ զկրօնաւորսն, զառագաստոյնան կապէն, քանդէն զեկե- ղեցին և յատակէն, և զքարն արկանեն ՚ի գետն: Եւ ՚ի մէջ դիշերի էջ հրեշտակ և արձակեաց զկապեալսն՝ և նորա զար- հուրեալ փախեան: Ընդ առաւօտն ժողովեալ եղբարցն մեծ ողբով լային ՚ի վերայ եկեղեցւոյն և փոխէին զեղբարսն ՚ի հանգիստս. և սկսեալ այլ նոր տուն կանգնեցին Ստուածոյ պայծառ քան զառաջինն. և ժողովեցան եղբարք վիցհարիւր և շինեցին այլուր եկեղեցի և հաստ պարսկապ ՚ի ներս որ կոչի վանք նորա. և սահմանեցին ուրկանոցս և առատ տային զպէտս նոցա ՚ի վանացն: Եւ հայր Յովհաննէս ՚ի Կապանէն եկն այսր և առեալ զեղբարսն գնաց յիւղս գետոյն և խնդրեաց ՚ի Տէառնէ շնորհել ձուկն ՚ի սէտս եղբարցն: Եւ երևեցաւ ՚ի տեղեան այլ մի լուսաւոր, զի գնայր առ գետափամբն, և ըզ- զառագանն կախեալ ունէր ՚ի ջուրն, և ՚ի ծայրից զառագա- նին կանէին ջոլերք ձկանց անթառ բիւրաւորք. և ինքն ու- սուցանէր նմա զպատճառս որոյն: Եւ այնպէս պարզևեցաւ վանացն կէտ ՚ի գետոյն: Իսկ սուրբ հօրն Գրիգոր լցեալ զամն կենաց իւրոց 84՝ առեալ նահ Պրիտոսասէր և յարուցեալ

պատմէր հօրն, եթէ ապուռաք պատուիրեաց զվանս և թողուլ ի գագաթի իմ նստան՝ և յարուցեալ ասաի ի քո գագաթդ իջցին. և ապա ապիտակ ազատնիք իջցին յիմ գագաթս և թըռուեան ի քո գագաթդ: Օ այս լուեալ սուրբ հօրն՝ խնացաւզն հասեալ է ժամ կատարման նոցա: Եւ բազում քաջալերութեամբ պնդէր և յորդորէր զԱրիստոսասէրն ոչ կրկնչել այլ փութալ հասանել ի վիպին ալքայութիւնն: Եւ առեալ կերակուր՝ շրջեցան ընդ անապատատեղն և կերակրեցին, ողջունեցին և օրհնեցան ի նոցանէ և գային սաղմոսելով ընդ Մախալատափան[1] դէպ ի վանքն. և տեսին զբազմութիւն հիծելոց զնոսին, — փութացան յիկնղեցին և մատուցանել յաղբիւրն լուացին զինքեանս. և մտին յիկնղեցին և համբուրէին զսուրբ սեղանն և ողջունելով լային: Եւ ահա պատուոյ զօրն գիկնղեցին, և մատուցանել խնդրէին զԳիւտա և զԱրիստոսասէրն: Եւ նոքա յառաջ կացեալ ցուցին զինքեանս. ապա ըմբռնեալ կապեցին և տարան ի Գողգոթայն և ընկեցին ի վայր. զառաջինն ոչ ինչ ճեռանաց, և յերկրորդին հայր Գիւտայ գագաթն փեղկեցաւ, և կամէր զողին արձակել՝ ձայնէր առ Արիստոսասէրն. «Ջանա, փութա, որդեակ՝ զինի իմ». և նոքա ապանին սրով զԱրիստոսասէրն ի վիրայ քարին:

Եւ այսպէս կատարեցան սուրբքն ի քաղց ամոյ ի տասնևհինգ: Յայնժամ եկեալ ամպ հովանի՝ և պատուոյ ըզվանան վից ժամ. զոր տեսեալ անօրինացն և ի մեծի ահի եղեալ՝ փախուցան գողալով: Ակ ցլուեալ եղբարքն ժողովեալ՝ մեծաւ սգով լային լալեան մեծ և փարեին զսուրբ մարմինովք հօրն և Արիստոսասիրին. և տարեալ հանգուցին զԳիւտա ի գահի եկեղեցւոյն և զԱրիստոսասէրն յիկնղեցին, և անյապաղ սրաբին զտեղին: Ընդ առաջեալ մեզ զայս պատմութիւն Յովհաննէս՝ եկեղեցպան սուրբ ուխտին, որ քսանևհինգ ամ

---

[1] Այլ օր. Մախալափան:

ոչ եկ արտաքոյ եկեղեցւոյն և ոչ խօսեցաւ ընդ ումեք բայ՝ ի պաշտամանէն: Որոց բարեխօսութեամբ հաշտեցի ընդ մեզ Վրիստոս և տացէ խաղաղութիւն և շինութիւն աշխարհի:

ԳԼՈՒԽ ԻԸ

Ցաղթօ Մուխոյ և Պետրոսի, Գիքանոյ և Վրիանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսաց:

Երանելին Երիցակ կալեալ զաթոռ եպիսկոպոսութեան ամ մի՝ փոխի ի վերին քաղաքն [1]: իսկ յետ նորա արժանապատիւ այրն Ստուծոյ Մակար՝ ամն քսանևութ: Եւ ապա բազմերջանիկն Պետրոս՝ աշակերտ քերթողահօրն [2], որ ապար բազում թափումնութիւնս և ճառս ի ծնունդն Վրիստոսի և ընդդէմ Վաղկեդոնականացն և մեկնեալ զերկին բանս հին և նոր Պատկերանաց:

Զհնադրի սա ի Ներսիսէ՝ ՚ոյոց կաթողիկոսէ, ի մտրզպանութեանն Վահանայ Մամիկոնոյ իննևերորդ եպիսկոպոս Սիւնեաց: Սա հարցեալ ի Վաչագանայ՝ Ղազանից թագաւորէ, բանս բազումս, և ընկալեալ զպատասխանին յոյժ ի ձահ և ուղիղ լուծմամբ: Սա գնաց ընդ այլոց վարդապետաց ՚ոյոց՝ Մամբրէի, Եղնկայ, Կորեան, Դաւթի ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս, և հանդիպեալ ի ժողովն Վաղկեդոնի՝ յոյժ մարտուցեալ ընդ չարափառացն, պարտեալ ըմբերանեցին և յամօթ արարեալ զամենեսեան՝ եկին մեծաւ ճոխութեամբ, ողջամիտ վարդապետութեամբ յաշ-

---

[1] Ալ. օր. ՚ի փոքրն, որոյ պարիսպն յոտից ի և խրիխեան և գրուանքն յանդ վանից, և փոքրափոյթ գիւղաքաղաքն, յորում թաղվիլ են ամենայն հայկ սրբոցն: — [2] Ալ. օր. աստիճան վերնագահօրն, զոր հռիփսիմեան և անյաղթ վէրժինեան, ի խմատասիրութեամբ և խոհականութեամբ, նախանձեսցի վարդապետական հոյոց, վերնագ և ընտրեսցի, որ արար . . . — Այսորիկ բանք ի գրչէն երևին մուծեալ, յոյր սակս և ի բաց թողաք զայնս:

խարհս ։ այոց. և հաստատեցին զամենեսեան յուզզախտս հաւատոյ երից սուրբ ժողովոցն՝ յաւանդեալն ի սրբոյն Գրիգորէ։

Սա գնաց ի ժողովն Դունայ յառաջինն, որ եղև հրամանաւ Նախարհի կաթողիկոսի վասն խուժկացն Նեստորականաց, որք ժողովեալ ի վանսն Գրիգորի Մանամէհր Ոամժկի՝ սկսան սերմանել զաղանդն իւրեանց, զոր քակեալ ցան և ցիր ու արարին և մեծ կանոնաւս որոշեցին զմեզ յամենայն հաղորդութենէ նոցին, և սոսկալի նզովիւք փակեցին։ Սա հաս նուագեալ զձմեռոտութիւնն և քայքայեալ զաթոռս սրբոյն Գրիգորի և մերձ ի բաժանումն. քանզի երկու կողմանք՝ Յունացն և Պարսից, զհակառակութեան բերէին զվէճս միմեանց, և կամէին Յոյնք հակառակաթոռ նստուցանել՝ զոր և արարին յետ սակաւուց. զի Մովսէս նստաւ յաթոռն սրբոյն Գրիգորի ի Դուին, և Յովհան ոմն ի Թէոդուպոլիս եղև կաթողիկոս. և եկեալ եպ աթոռ ի Կոտայսն յԱբամճնս գիւղ, զոր յետոյ միապետեաց Աբրահամ կաթողիկոս։ Եւ սակս այսպիսի վիճմանց հրամայեաց տէր Պետրոս յետս կալ յաղմըկէ անտի [1] և յԱղուանից առնուլ զձեռնադրութիւն և զէվէթ, մինչև խաղաղացի խռովութիւնն, զոր և արարին իսկ։

Սա կացեալ [2] յաթոռն սմն տասն՝ վախճանի. և յետ նոցա յաջորդէ տէր Գրիգոր սմն երիք. ապա աշակերտն Պետրոսի՝ Ա[ր]թանէս, որ վասն հրամանաց սրբոյն Պետրոսի ոչ հնազանդեաց խախտեալ աթոռոյն ։ այոց. այլ [3] գնացեալ յԱղուանս հրամանաւ տեառն Մխիր Աբրաշխի՝ Միւնեաց գահերէց իշխանի, առ երջանիկ կաթողիկոսն տէր Օ[ր]բէլ յետ նոցա ի նմանէ առնու ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան։ Եւ սա յամէ անտի առնուին զիւղն օծութեան մինչև միապետեաց Աբրահամ կաթողիկոս ։ այոց, և բարձաւ հակա-

[1] Ա յԼ օր. յաջմէ անտի և ի խանգարմանէ։ — [2] Ա յԼ օր. ի[ր]ենէ։ — [3] Ա յԼ օր. ոգ= ալիրդն պետրոսի Ա[ր]բանէս, որ վասն հրամանաց պետրոսի գնացեալ յԱղուանս հրամանաւ Մխիր Աբրաշխի պահուց իշխանի, եւն։

ռակութիւնն ՚ի միջոյ: Եւ սա գրեաց Թուղթ վասն ուղղափառութեան և սակս զգուշութեան ՚ի Վաղկեդոնականացն ՚ի պիղծ աղանդոյն Նեստորի սուրբ կաթողիկոսն և մեծ պատրիարքն Հայոց տէր Յովհաննէս, որ ունէր օրինակ զայս.

ԳԼՈՒԽ ԻԲ

Թուղթ ընդ Հայոց կաթողիկոսն տէր Յովհաննէս և այլ եպիսկոպոսս արեւմտեան աշխարհացն Ասորեստանեայ եպիսկոպոսէ.

«Պայծառացելոյ և սիրելւոյ եղբօր և աթոռակից մերոյ տեառն Վրթանէսի՝ Միւնեաց եպիսկոպոսի, և մեծամայելուչ փառաւորեալ Տիրն Աբրահամ՝ Միւնեաց տեառն, —՚ի Յովհաննէսէ՝ Հայոց կաթողիկոսէ, յԱբրահամէ Տարոնոյ և Ամիկոնէից եպիսկոպոսէ, ՚ի Ներսէսէ՝ Բասենոյ և Ամարգաւայ եպիսկոպոսէ, ՚ի Մաշտոցէ՝ Խորխոռունեաց եպիսկոպոսէ, ՚ի Գիւտայ՝ Վանանդայ եպիսկոպոսէ, յԱբդիշոյէ՝ Ասորւոց եպիսկոպոսէ, ՚ի Բարայ՝ Ամատունեաց եպիսկոպոսէ, օրհնութեամբ և հոգևոր սիրով ողջոյն[1]:

Վասն ինքնին դիտէք զանհնարին վտանգն, որ այժմ յաշխարհս մեր եհաս, զի յատաջագոյն երանելի հարքն մեր և զկնի նոցա մեք ընկալաք զհաւատս ճշմարտութեան, — զայն՝ զոր քարոզեցին մարգարէք և առաքեալք, ուսուցին հարքն ճշմարիտք՝ սուրբն Գրիգորիոս սրբոյն Թադէոսի յաջորդն և յժը եպիսկոպոսքն ոլք ժողովեցան ՚ի Նիկիա քաղաք, և հարիւր յիսունքն ոլք ժողովեցան ՚ի Կոստանդնուպոլիս, և երկերիւրքն ոլք ժողովեցան յԵփեսոս և սրբոյ Ղուկասի ազգմամբ

---

[1] Ընդօրէս ունի ՚ի Փարիզ տպագրեալն. — «Քրիստոսէ պայծառացելոյ տիրեցելոյ երջանիկ. . . և հեծաւյնելէ և փառաւորելոյ. . . յԱբրահամայ պատրիարքէ և Հայոց Նեստորեան եպիսկոպոսէ, ՚ի Ներսէսէ Բասենոյ և Մարգաւայ եպիսկոպոսէ. . . ՚ի Գիւտայ՝ վանանդայ, յԱբդիշոյէ, ՚ի Բարայ. . .

ուսուցին մեզ, զոր ի սկզբանէ իսկ սէրունեան բարբառն վար-
դապետաց աշակերտացն ասելով. «գնացէք, աշակերտեցէք
զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն ☩օր և Որդ-
ւոյ և ☩ոգւոյն սրբոյ», որ բարձր և հռչակաւոր [1] կնիք եղաւ
ի վերայ ամենայնի: Օ, այս հաւատոյ ճշմարտութեան ստու-
գեալ ունէր միաբանութեամբ աշխարհս ☩այոց. ոչ ինչ ա-
մենևին յումեք ապատութիւն յայտնի երևէր, և բնակեալ
էաք ի սուրբ կաթողիկէ եկեղեցւոջ ընդ հովանեաւ սուրբ խա-
չին Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի խոր խաղաղութեան: Յակ
ի ժամանակիս յայսմիկ Աստուծոյ անիծելոյ, որ կուրացոյց
զաչս հերձուածողին իւրով զկողմանս Յունաստանի, երևեցաւ
խոր չարութեան նորա և յաշխարհիս մերում, որ էջ ծած-
կեալ յանձինս անսուրբս, որք սկսան պղտորել զյստակ հա-
ւատս ճշմարիտ սուրբ Երրորդութեանն և պատրել զանձինս
անհաստատս մարմնասէր ցանկութեամբք, տարածեցաւ երկ-
բայութիւնն և հիւանդացան բազումք զախտս անհնարին: Եւ
ոչ կարացեալ մեր տանել այսպիսի չարաչար և զառն հայ-
հոյութեան՝ փութացաք մեք և այլ աշխարհիս ☩այոց եպիս-
կոպոսունք, ընդ որս էր և երանելին Պետրոս եպիսկոպոսն ձեր,
և քահանայք և ուխտ սրբոյ եկեղեցւոյ վանաց երիցունք, ա-
զատք և համօրէն ժողովրդականք ուղղափառք, ժողովեալ ի
սուրբ եկեղեցին՝ միաբանութեամբ զպիղծն Աստուր և զԿաղ-
կեդոնիտս և զայլ հերձուածողս ի մեր սուրբ եկեղեցւոյս հա-
լածականս արարաք նզովիւք. և սուրբ սեղանոյս և կենսատու
աւետարանիս և փրկական խաչիս առաջի պայմանեցաք ամե-
նևին հեռանալ ի հաղորդութենէ նոցա և չլսել բանից նոցա
մահաբերից. վասն զի ի հաւատարիմ մարդկանէ լաւ, ե-
թէ Աստուածականք բազումք և ի ձեր աշխարհդ են բնակեալ
և դուք զդոսա ի սուրբ եկեղեցիս ընդունիք և ընդ դոսա հա-

[1] Այլ օր. հռչակեալ

զորդիք. յիշելով մեր [1] զպրոյն Վրիպորի զմեծ վաստակ և զբաջանս որ ի մեր և ի ձեր աշխատիդ վերայ հատարակաց, և զսուրբ Ծնունդն, զոր սրբով աւազանաւն վերստին Ծնաք [2], և զձեռնարկս հաւատն զոր մեք և դուք ընկալաք և այժմ ունիմք, և զհոգևոր սէրն զոր ընդ ձեզ ունիմք, առաւել քան զամենայն հոգ յանձին կալաք հետացուցանել ի ձէնջ զչարն որոմանն սերմանս: Վ՚ասն որոյ [3] յուխտ, մերմէ, զհաւատարիմ այր զՄաթէոս քահանայն առաքեցաք առ ձեզ, և ապաչեմք զձեզ Վրիտոսիւ Յառուծով մերով, որպէս ցայժմ լեալ էք ազգ սուրբ և ժողովուրդ սեպհական Տեառն Յառուծոյ, նոյնպէս և այժմ՝ և մինչև ցյաւիտեանս զդուք և զաւակք ձեր զօրացարուք Տերամբ և կարողութեամբ զօրութեան նորա, առէք զպատառազինութիւնն Յառուծոյ, և զսուրբ ձշմարիտ հաւատն, զոր ի սրբոյն Վրիպորէ և յայլ հոգևկիսը հարցն ընկալաք, հաստատուն և անշարժ պահեցէք յանձինս ձեր. լցե՛նևստողականաք [4] և զայլ հիւրձուածոցս որ յաշխարհիդ ձեր՝ ի սրբոց յեկեղեցւոյ և ի ձեր հաղորդութենէ նզովիւք ի բաց մերժեցէք, և ամենայն ուղղափառաց պատուիրեցէք մի լինել հաղորդ անպատշաճութեան գործոց նոցա, և մի լսել հրապուրող և չարաբոյն բանից նոցա [5]: Վասնզի զնոսա ոչ յոշնաց սուրբ առաքեալն մանկունս անիծից, և զնոցին կորըստական վարդապետութիւնն անուանեաց առնգ անջղիս վարթևալ ի մրրկէ, ի կորուստ, ծառս գօսս պտղակորոյս, նմին ի կիզման հրոյն յաւիտենից, որք յիրաւի իսկ նզովեն, զի նոքա են պղտորիչք եկեղեցւոյն Վրիտոսի յայժմու [6] ժամանակիս յամենայն տեղիս. որք և անուանեցան ի սրբոց առաքելոյն եղբարք սուտք, մշակք անօրէնութեան և նմա ինք եղեալ

---

[1] Փարիզեան տպագիրն — և ընդ գոսս հաղորդէ ոչ յիշելով մեր զրբոյն Գրիգորի զինէ վարդապետ. . . — [2] Այլ օր. ինոյն, և զլուսաւոր և զճշմարիտ. . . — [3] Այլ օր. վասն նորին յուխտէ մերմէ. . . — [4] Այլ օր. զինէ նախորհնոյս: — [5] Այլ օր. բանից նոցա մահաբերից: — [6] Այլ օր. յայժմուս ժամանակիս:

յաշխարհս: Եւ հրամայեցաւ մեզ ճշմարիտ հաւատացելոցս ի սրբոյ աւետարանչին Յովհաննէ՝ ոչ ընդունել զնոսա ի տունս և ոչ ողջունել բանիւ, այլ հեռանալ ամենևին ի նոցանէ, որպէս ի թշնամեաց խաչին Քրիստոսի: Եւ մեք առաքեալք, զի նոքա ինքեան սուրբ Հոգւոյն խափանեսցէ և նկուն արասցէ զվշնամիս իւր՝ պհակառակորդս ճշմարիտ հաւատոյ, և զօրացուսցէ զպաշտօնեայս և զկրկրպատուս անուան իւրոյ սրբոյ: Եւ եթէ յումեք ի հերձուածողաց գոյի զղջումն, և ամենայն կամօք իւրովք դառնայցէ ի սուրբ հաւատս մեր և ոչ խարէութեամբ՝ ղեղմեալ գրով զպիղծն Նեստոր և զամենայն հերձուածոցս և զԱէտոդոքիտոս և զԺողովն Քաղկեդոնի, ապա ընդունել զայնպիսիսն ապաշխարութեամբ. վասն զի դուռն ողորմութեան Աստուծոյ խոստովանողաց և ապաշխարողաց հանապազ բաց է»:

ԳԼՈՒԽ ԻԳ

Եթէ յորմէ ատեն եպա՜ հռոմկանն Հայոց, և «սուրբ Աթոռոյն որ ի Վեցերկն» ասհմանեցաւ:

Ի ջորջորդում ամի հայրապետութեան տեառն Մովսէսի՝ Հայոց կաթողիկոսի, ի տասներորդ ամի մանրզպատութեան Հայոց Մժեժայ Գնունեաց, որինչ էր Աննոպարին թուականն 553, ի լման երկու հարիւրեակին Ընդհատաց, յորում ամի էր լուծն զատկին ի մարտի ի 25, և սկիզբն բոլորին յատկելի չորան, ոչ կարացին գնալ ի սկիզբն. քանզի յետ քան և հնգին տան և երիքն էր ապրիլի և ինն լմնունք ի միջոցին պահս գայր. այնր աղագաւ սկան շփոթիլ ամենայն ոճիք տարուցն:

Ապա հարկ եղև թուական Հայոց կարգիլ, զի նոքաւ ուղղեսցեն զտարակոյսն, զոր և ուղղեցին իսկ ի ձեռն Հատակ ի-

մատանոյ [1], որ կարգեաց զանառարակուսելի օրինակն հինգհարիւրիւրկին՝ այլովք իմաստովք ՚ոյոց։ Ելոյ ՚ի կարգել թուականին մեծաւ ժողովով ՚ի Դուին քաղաքի, էր եպիսկոպոս Աիւնեաց տէր Վ֊րթանէս, և իշխան՝ տէր Աիւր Ելրատշէր, որք միաբանեալ ընդ ժողովոյն յուզարկեցին զնիստսուն վարդապետս [2] և զկատարեալ գիտնականս իւրեանց, և ուղղեցին զանառարակուսելի տումարն. յորում ամի նոյն ժողովով հաստատեցին «զսուրբ Ընտուած որ խաչեցարն» ընդդէմ Վաղկեդոնականացն և ՚Նեստորի իմացմանցն [3]։

ԳԼՈՒԽ ԻԳ

Վախճան Վ֊րթանիսի և յաջորդելն Գրիգորի և Բրխոփորի, և որ ինչ ընդոյժ եղեն յաւուրս նոցա։

Յաւուրս տեառն Վ֊րթանիսի՝ Աիւնեաց եպիսկոպոսի, եկին ոմանք ՚նեստորականք և քաղկեդոնիկք, և խարհանոք բնակեցան յաշխարհս Աիրական և յԱղուանս։ Ապա լուեալ տեառն Յովհաննիսի ընդոստոյց թղթով և ծանոյց զվնասն որ ընդ յարդիւ ծածկեալ կայր. յորմէ զարհուրեալ տեառն Վ֊րթանիսի՝ հալածական ապար ՚ի վիճակէ իւրմէ և մեծաւ նեղութիւք փակեաց, զի մի՛ իշխեսցեն թողացուցանել ՚ի սահմանս իւրեանց. և այնպէս ճշմարիտ վարդապետութեամբ և առաքինի վարուք կացեալ յաթոռն մեռաւ պատուականութեան զամն

---

[1] Այլ օր. զոր և առչինեն իսկ ՚ի գան ՚նեստորեանն ՚ի յիւրն էառ խրատեալ։ — [2] Այլ օր. և գիրանեալ ժողովոյն յղեցինեն զնիստսուն վարդապետս։ — [3] Առաջաւոր ՚ի Փարիզեան տպագրին՝ որպէս և ՚ի միւս գրչագիր օրինակի մերում գտեալ բանս տեսանելիք, որ գրչին թուի լինել յաւելուած, որ և է այսպէս. ։։ Յայսմ առաջս խորհեցաք նաև մեք վկայն Բրխոփորի նոր նահատակն և երանելի պարոնին Մախոյ, որ և ՚ի Պերսոնիանն Յիսուսեանց անառանիցս, որ Բարբմանի Ներսեհեան, ՚ի Դվին քաղաքէ։ Ընդ որս և ՚ի սոյն ազգէ Սահակ և Սարահել և Յովհաննէս Հայրիկեան մարտիրոսութեամբ ։։։

ինչ՝ փոխի յաստեացս։ Եւ ապա առնու զաթոռն տէր Գրիգորիս սան ձի՝ յԱղուանս ձեռնադրեալ. և ապա երանելին Գրիգորիս, ընկալեալ և սա զձեռնադրութիւնն յԱղուանից։ Ասէ յետ վախճանին Մովսէսի լինի տեղապահ սան երիք ամ[ի]ս քեզմէ։

Եւ զի ոչ գոյր իշխան Հայոց, այլ յետ Մժեժայ տաճիկ մարզպանք ունէին զՀայս զամս շատ, վասն այն խափան լինէր աթոռոյն. և ապա Մամիկոնեան՝ որդի Վասակայ, ապստամբեալ էր ի Պարսից և նուաճեալ ընդ Յունաց։ Ապա միաբանեալ ամենայն Հայոց երկուց կողմանց՝ որ ի Յունաց բաժնէն և որ ի Պարսից, և ժողովեալ եպիսկոպոսաց և վանականաց ի Դուին՝ կամեցան կաթողիկոս նստուցանել. և ոչ յաջողեցաւ այն անգամ։ Ապա որոց ևկն ի միաբանութիւն ժողովոյն Գրիգորիս՝ Մունեաց մեծապօլիս, և ապարին կանոնս և եղին սահմանս եկեղեցւոյ։ Ասէ ի գալ ամին յառաջս քառասնորդաց[1] պահոցն միաբան ժողովին ի Դուին և նստուցանեն պատրիարք Հայոց յառաջ ոդոգամենի[2] տօնին արտաւենեաց զտէր Ներսէհ՝ Աշտունեաց եպիսկոպոս. և սոա ուրեմն բաժանեալ Մունեաց աթոռն յօդեցաւ վերըստին ի գլուխն պատուական ի սուրբ Գրիգորի աթոռն և ի յաջորդն նորա ի տէր Ներսէհ[3]։ Ապա զի եղեն յայսմ ժամանակի բազում խռովութիւնք և մեծամեծ յուզմունք ի մէջ Հոռոմոց, Պարսից և Հայոց՝ երկպառակութիւնք, բաժանմունք, վէճք, աղմուկք, շփոթմունք, նշկահմունք աստուածային օրինաց երբեմն վասն Քաղկեդոնի ժողովոյն, երբեմն վասն լինն դասուց եկեղեցւոյ, երբեմն Պարսից մեծապատութիւն և թևակոխումն ի վերայ Աղուանից, վասն որոյ և դառնալ Աղուանից ի Հայոց, հպատականալ և մարդպետա-

---

[1] Այլ օր. յառաջս քառասնորդաց։ — [2] Այլ օր. յառաջ ոգեգամենի տնին։ — [3] Այլ օր. և ի յաջորդն ի տէր Ներսէհ։

կան եպիսկոպոսին և անկումն ՚ի պատուոյն. սակս որոյ եղեն բազում ժողովք և ուժեղ քննութիւնք աստուածային կրօնականաց[1]. և հաղիւ ուրեմն եղև հաւանութիւն ՚ի սոյց և խաղաղութիւն եկեղեցւոյ. զորոց զորպիսութիւն անցիկն և զպատճառս բանիւք, որպէս վերագոյն խոստացայ, բացայայտեցից սակաւուք, որպէս հաւատաւ ուսաք ՚ի սրբոյն Ա֊խատանիսէ՝ Սերաստացւոց եպիսկոպոսէ, և ՚ի սրբոյն Ա֊ղաթոնէ՝ Մաքենոցաց առաջնորդի Թղթոյն, որ կարգեալ է յԱղուանից Պատմութեանն ՚ի միջին հատորն, և ՚ի սրբոյն Մ֊աշտոցի Թղթոյն, զոր գրեալ է ՚ի տեառն Գ֊էորգայ կաթողիկոսի խնդրոյն։ Յայսց երից հաւատոյգ առեալ և ճշմարտահաւ վարդապետաց ցուցից քեզ զամենայն, զոր խոստացայ։

ԳԼՈՒԽ ԻԱ՛

Յաղագս դաւանութեան Հայոց և դիպելութեան պետն Աբգահարու. և վասն մեծ ժողովոյն որ ՚ի Դուին, և վասն ինն խոնհոց եկեղեցւոյ. և վասն վէրոց քաժանմանն զորոց յոլով և պիտանի, զոր հատուածս ՚ի հին նահապետաց և յՈ֊խտանէսէ գրոց. և սակս Աղաւանից արքեպիսկոպոսութեան և Սիւնեաց դերապետութեանն. և վասն Սիւնեաց Խուչին ինչ էր ազգս պատճառ։

Յաման Խոսրովու ազգայից ազգայի և Յուստինիանոսի ինքնակալ կայսեր, յիշխանութեանն ՚ի սոյց Ամբատայ Բագրատունւոյ, որ կոչեցաւ Վ֊րկան աշխարհի մարզպան, ՚ի տեղապահութեան աթոռոյն ՚ի սոյց Վ֊րթանիսի քեղթողի, և տէրութեան Մունեաց Սահակայ իշխանի, հրամանաւ Սմբատայ և կամօք այլոց իշխանաց ՚ի սոյց ժողովեցան եպիսկոպոսք ՚ի սոյց ՚ի Դուին. ածան և նոքա որ ՚ի բաժնին Յու֊

---

[1] Ա֊յլ օր. սակս որոյ բազում ժողով և տեղի տուին աստուածային խոհրանաց։

նաց կալին Հակաւակութեամբ, որոց գլուխ Մանասէ՝ եպիս-
կոպոս Կասեցւոյ, և Պրիսաւափոր՝ եպիսկոպոս Ալունեաց, և
եղին ուխտս միաբանութեան. յորոց խնդրեցաք ձեռնարկ Աստ-
ուած՝ ի լրանալ մատչման, և առեալ կնքեցաք մատանեաւ և
եղ ի սուրբ եկեղեցւոջն: Եւ ապա ընտրեալ վերին ազգեամբ
բըն և աւետարանական[1] վճռակաւ զԵրրահամ զԱշտունեաց
եպիսկոպոս, կացուցանեն կաթողիկոս ի տոյց: Յայնմ ժա-
մանակի բորբոքեր .... կրօնն Քաղկեդոնի՝ ի ձեռն բուռն թա-
գաւորաց Յունաց ... և առաւել՝ ի թագաւորելն Մօրկայ:
Եւ գնացեալ և հրաւիրակք ի տոմոյ կրկին ոչ դադարէին
յերթևեկութեանց, բազում անգամ հրաման տային ժո-
ղովոյ, մի անգամ՝ ի Կոստանդնուպոլիս կոչեցին և երիցս ան-
գամ՝ ի Թէոդոսուպոլիս[2] և դէմ յանդիման ուժգին հարցա-
փորձութիւնք լինէին. և էին յայնմ ժամանակի՝ ի տոմա-
ան դպրութիւնք[3] նորոգ և շէն. և գոյին յոյն լեզուին և
դպրութեանն յոյժ հմուտք և տեղեակք: Եւ որպէս հարցա-
նէին նոքա՝ առաւել իմն պատասխանի լսէին. սակս որոյ ո-
մանք զգուշացան զՅովհան մայրագոմէցի, եթէ նա ասաց՝ թէ
տոյք պարտաւորեցան՝ ի հաւատոյ մասին. որ և քաւ և մի
լեցի. այլ ցուցանէ մեզ զտոյդն Սաղոման՝ հարանց հայր սուրբ
ուխտին Մաբէնոցաց, որ և հարցեալ՝ ի տէր Սողոմանէ, նոյն
Մաբէնոցաց առաջնորդէ և՝ ի կաթողիկոսէ[4] տոյց զգաստաձառս
գայս, նա գրով առանդեաց այսպէս, եթէ Յովհան վկայեաց
թէ տոյք՝ ի հաւատոյ մասին անպարտելի ճնային. այլ յայ-
սմ մասին յոյժ պարտեալ և ըմբերանեալ գտան, զի առա-
ցին տոմոք, «եթէ կարդաւորեաց Աստուած զսուրբ եկեղեցի
հինն գաւազք ըստ վերնոց, և չորից աւետարանչաց մեծաւոր-

---

[1] Այլ օր. վերին ազգեամբն աւետարանին վճռակաւ: — [2] Այլ օր. Թէոդոսոպոլիս:
[3] Այլ օր. և էր յայնմ ժամանակի հայոցն գպրութիւնն նորոք և շէն: —
[4] Այլ օր. հարանց հայր սուրբ ուխտին Մաբենոցայ և առաջնորդ՝ ի կաթողիկոսէ
հայոց պարտաւորեցան զայս:

հուրդ դիտուածով զչորս[1] միայն սահմանեալ աթոռս ՚ի վե-
րայ երկրի և պատրիարքունս[2], և ամենայն աշխարհ հնա-
զանդել ևմք այսց աթոռոց. և ՚ի նմանէ սոցա գնդեցիկս կար-
գաւորեալ են ուխտն դասք եկեղեցւոյ: Արդ՝ որ է աթոռն և
պատրիարքն, ընդ որով դասեալ է արքեպիսկոպոսն ձեր: Կամ
ցուցէք զձեզն, և կամ թէ ոչ ունիք՝ հնազանդեցէք միւսմ
՚ի չորից աթոռոցս, ապա թէ ոչ՝ կատարեալ հերձուածող
էք և թերի յամենայն շնորհս աստուածայինս»:

Ընդ այսու բանիւ յոյժ պարտեալ զտան ՚ասլք. և թէ-
պէտ զառաջնոց եղեալ սահմանս յիշատակէին (՚ասլք, սա-
կայն Յոյնք) ոչ ընդունէին[3], զի ցայն վայրն անյայտ և ծա-
ծուկ էր լեալ ՚ի նոցանէ և նուազեալ իսկ էր՝ անփոյթ եղեալ
յամենառակալացն: Ապա գարձեալ այսրէն ՚ասլոց խորհուրդ
՚ի մէջ առին եպիսկոպոսքն իշխանօք և աւագ տանուտիրօք
և հնարէին զկնս անհնարին տարակուսանացն[4]: Եւ հրաման
հանեալ ընդ ամենայն աշխարհ՝ արարին ժողով մեծ ՚ի թա-
գաւորութեան Պարսից Ընդվեղ Խոսրովու, և ՚ասլոմոց՝
Մօրկայ: Եւ էր ընդ նոսա գահերէց ժողովոյն Դաւիթ՝ Ար-
ևնեաց եպիսկոպոս, և Մանասէ՝ Բասենոյ, (զի Վրթանայ որ
յետ տասն ամի եպիսկոպոսութեանն վախճանեալ էր, և նըս-
տեալ ՚ի տեղին տէր Դաւիթ յԱբրահամէ կաթողիկոսէ ձեռ-
նադրեալ):

Աղբա նախ հաստատեցին զուղղափառ հաւատս երից սուրբ
ժողովոցն և միաբան եղովեցին զԱտղկեդոնի և զԼևոնին. և
ամենեքին ձեռագրեցին զնոսմանէն հաւատոյ և կնքեցին մատա-
նեաւ տեառն Աբրահամու և այլոց եպիսկոպոսաց և իշխա-

---

[1] Ա՛յլ օր. ըստ վիճակին և ըստ երից սահմանացն ինքնագլուխ քեզ-
ըս-քեզ տեղի տահմանաց: — [2] Ա՛յլ օր. ցայսմ տեղւոջ զայս բան գտանեմք,
որ ՚ի գրչէն երևի մնացեալ, զոր գնեմք աստանօր ՚ի ծանօթութեանս-
նըս. — [3] յոյոց վիճակ հանդիպ նոյն ինքն բանն Ագաթանգ՚ղոսն անտիճառ: —
[4] Ա՛յլ օր. չէլտոմնին. զի ցայն վայր անյայտ: — [5] Ա՛յլ օր. ոտոք փանտոքրտն
հնարեին իսը հնարէր:

նաց: Ապա համարձակութիւն առեալ յայսմ պատճառէ, ի թագաւորելն Յուստինիանոսի ժողովեալ նորա զմեծամեծ ամբոխակալս և զսուրբ հարս՝ հրաման ինդրէ, և նոքօք հանդերձ փոխէ զաթոռն Յովհաննու աւետարանչի Ա[1]փեսոսէ՝ ի Կոստանդնուպոլիս. և բունեն միաց ի տեղին, և զՆահապետն Աերուսաղէմ: Եւ յայտանեալ համարձակեալ ամենայն իշխանացոզք և մեծամիտք հպարտացան, և ուր առաքեալ վախճանեալ էր՝ զամենեցունն ամբոխս ինքնագլուխս արարին և պատրիարքք խոստովանեցան: Յայտանեալ ուսեալ մերոցս՝ կացուցանեն պատրիարք ՚այոց զԵբրահամ կամողիկոս, և զՂազանիցն՝ արքեպիսկոպոս, և զվ[1]րացն՝ մեծարապելիս: Եւ զի Ալունիք հրամանաւ Պետրոսի ժամանակս ինչ յետս էին կացեալ ի հակառակամբոխն, և այժմ միաբանեալ եղեն նորոգ, ապա վ[1]րացս մեծաբանեալ ի վերայ Ղազանից՝ ոչ կամէին ի ներքոյ լինել դասու նոցա, այլ զվ[1]ս յառաջադասաւս կարգային քան զՂազանս: Եւ էր նոցա առաջնորդ Ալբիսն, որ Նեստորի ազանդոյն էր խմորեալ ի ծածուկ և ոչ կամէր յայտնել, այլ ժամու և պատճառի միայր: Եւ ուներ ընդ ինքեան խուժիկ եպիսկոպոս մի, զոր ինքն ձեռնադրեաց զԱլբրիոն՝ և առ նոցա: Էրև լուան Ղազանք զվ[1]րացս մեծաբանութիւնն՝ երևեցուցին և նոքա զառաքեալ ումն եկեալ՝ կանխագոյն քան ի ՚այս, Ղազանս՝ Եղիշէ անուն շինեալ եկեղեցի և ձեռնադրեալ եպիսկոպոս—զարձան և նոքա առ ժամանակ մի ի ՚այոց: Նոյնպէս ձեղքեցան և վ[1]րք բաղբաղելով զՂազա-

---

[1] Ա[1]ր օր. յետադրեալ զկաթողիկոսն ՚ի Ա[1]փեսոսէ:

նրա. զի ՚ի խնդրելն Պիւբիոնի զարքեպիսկոպոսութիւն ՅԵրբահամէ՝ սա սատակաց նմա[1]: Եւ թէպէտ ՚ի ձեռն Պետրոսի եպիսկոպոսին (Միւնեաց) բազում անգամ մաղթեաց նա շնորհել զինդրելն, սակայն ոչ հաւանեցաւ (Երբահամ). ապա բանադրեալ եղև ՅԵրբահամէ Պիւբիոն: Որոյ առեալ զկընկուզն և զիլխլոնն՝ եւս ՚ի Պետրոս և ասէ—«ձերդ ձեզ լեցի». և յետոյ երկուցեալ յուշարկեաց ՚ի ծածուկ զկնի և եւս ապաշնանել զՊետրոս երկու սարկաւագօք ՚ի լերինն Կանդրաց: Ուստի աղանդ նորա յայտնեցաւ ՚ի Մոմխէ՝ Յուրտաւոյ եպիսկոպոսէ, որ է Գաչհանք, զորոյ զթիւն այժմ ունի ±ազգաս:

Իսկ մինչ այս այսպէս լինէր՝ եւսուն զվարդապետութիւնն Առաքելական եպիսկոպոսին Թէոդորոսի. և սորա հպարտացեալ խնդրէր եպիսկոպոսութիւնս ընդ ձեռամբ ունել. յորմէ երկուցեալ ±այոց ասէին. «մի գուցէ և այլ ինչ գոյնակ բաժանումն լինի», առին ՚ի նմանէ և զայն. և տեսին զտեսարան Միւնեաց քաջութեանն և ուղղախառս և երևելիս յամենայն ±այսմանս, այլև յառաջին հարցն նոյն պատուով կոչեցեալ լեալ. վասն որոյ պատշաճ համարեցան միաբան ժողովով տալ նոցա զվարդապետութիւնն, առնել բարձակից և սեզանակից կաթողիկոսին՝ աթոռով և բարձու ՚ի միասին բազմեալ: Ապա կացուցանեն զԳաւիթ վարդապետ Միւնեաց և տան նմա զնաւասարդ նշանն զառաջեաւ կրել Հանապազ, և ոչ քարոզել զկաթողիկոսն ±այոց յիւր եկեղեցիսն ՚ի վերայ սրբոյ սեզանոյն, այլ միայն զնւրն անուն յիշել: Եւ ՚ի թղթագրութեանն ոչ գրեն Միւնեիք եպիսկոպոսապետ կամ այլ անուամբ զկաթողիկոսն. այլ՝ տէրունիք ՚ի Միւնիք տոռոճատպէ և հոգեւոր տէր գրեն. և նորա՝ ՚ի ձառայէ. բայց վասն Եղիայի կաթողիկոսի խակատրծութեանն յՀրիցու վասն մինչ գնայր

---

[1] Այս օր. Տիգրեցն և Վրոյն բազբազիւ զնդրառս, զի ՚ի խնդրելն արհեստապոսութեան յԱբրահամէ՝ ոտոփոց նմա:

*'ի հետանդիվ զԸղուանս՝ ոչ զրկեցին սպա 'ի ձոյէ և նոքա՝ ընդ-
ոխեալ թէր։*

*Ընդ սակս նախանձուն Հոռոմոց, որ ջանային փոքրկա-
ցուցանել զԱտրպատական վիճակն և շինուցանել զսրբոյն Գրի-
գորի աթոռն, այսպէս զհետևեալ տահմանեցին զնոսա դասս և-
կեղեցւոյ — Հայոցն՝ պատրիարք, Ընդուանից՝ արքեպիսկո-
պոս, Աղուանից՝ մետրապոլիտ։ Բայց Յովհաննէս պատմա-
գիր յիշէ և զԱրևելեանսն և զԱբասեանսն մետրապոլիտս դոլ։
Եսկ զայլ աշխարհս թողուն յատաջին սովորութիւնան, զի մի
ամրոխ ինչ լինիցի։ Ընդ և խնդրեցին 'ի Աղուանից մի ինչ ա-
ւելի իրս ժառանգ, այսինքն՝ եպիսկոպոս ունել ընդ իւրեանսիք և
ձեռնադրել. այլ միայն բազմականաւն և խաչիւն մեծարեցին,
և նախաթոռ կոչեցին պատրիարքին, որ է պետռոմիրոնտէս,
և անուանեցին մետրապոլիտ։ Եւ այսպէս կրկին անգամ եղև
շնորհեալ նոցա այս պատիւ և նշան առաջին՝ յՀռոմայեցն
թագաւորէն Ընդուանից, և երկրորդ՝ 'ի ժողովոյն Հայոց 'ի
տէր Աբրահամէ։*

*Եւ արդ ով ընթերցասէր՝ զայս փոքր 'ի շատէ համառօ-
տիւս ցուցի քեզ զբառականն միայն. և թէ գլուխն և գեր-
կայնն կամիս լսել՝ ընթերցիր զՈւխտանէսն և զԸղուանից Պատ-
մութիւնն և 'ի գիրս թղթոյն տեղեկացիր, ևս և զառաւն
Մաշտոցին որ 'ի խնդրոյ Գրիգորայ՝ Հայոց կաթողիկոսի, գը-
րեալ է։ Եւ յետ բաղում ընթերցման տեսի այլևայլ գրեալ-
սքն և բազում Ջանիւ գտի զտողդն և կարգեցի առա. վասն
այն ոչ գնկարագիրս նոցին բանիցն եղի, այլ զբնութիւն բա-
նին ամրողջ ունելով՝ զկարգն ուղիղ շարայարելի առաէն. և
դու ամենայն ողջմտութեամբ ընկալ և մի ինչ երկբայիր։*

ԳԼՈՒԽ ԻԹ.

Ա՜ստ ինն պատուց եկեղեցւոյ ըստ սրբ են և սրպես վարին։

Ընդ՝ի գալ Նահին Աստուծոյ և անձառ մարդեղութեամբ յազատելն զընութիւնս մարդկային՝ ի գերութենէ նախաչարին, լուսաւորեալ երկնահրաւէր աւետարանաւն և վերստին ծննդեամբ առազանին որդիացոյց Հօրն երկնաւորի. և զանձառելին հրեղենաց և հողեղինաց շնորհս պարգևեաց առատապէս մարդկան զմարմին իւր և զարիւն՝ ի կերակուր, որով միացեալ լինին ընդ Աստուած և աստուածացեալք։ Եւ կոչեաց զազգ մարդկան յերկնաւոր քահանայութիւնն՝ տալով իշխանութիւն աստուածապար կապել և արձակել միանչ յերկինս և միանչ յերկրի. և անտանելի շնորհօք և անպատում փառօք զարդարեաց զընութիւնս մեր։ Ա՜ստ որոյ կառուցեալ Հաստատեաց երկին՝ ի վերայ երկրի՝ զսուրբ եկեղեցի. և զի երկրաբինքս երկնաւոր եղեալք կենդանիք, ապա Հարկ էր երկրաւորիս՝ ի մէջ երկնից կայանալ, ընդ հրաբուն սեռին ձախրել և ճոխապէս ձեմել՝ ի միանչենաւոր փառս աթանութիւնն Աստուծոյ։

Եւ արդ զի այս այսպէս լինէր, երկին՝ ի վերայ երկրի կառուցեալ, ապա պատշաճ էր և երկնաւորացն դասիւ և սահմանաւ կարգաւորիլ՝ ի մէջ եկեղեցւոյ ըստ երից քահանայապետութեանց և ըստ իննն դասուցն, զոր Հոգին Աստուած յօրինեալ անօրինեաց աստուածային տեսչութեամբն՝ ի ձեռն առաքելոց և Հայրապետաց, որ ունի օրինակ զայս.—

Առաջին դասք եկեղեցւոյ՝ որք անընդմիջաբար Հուպ են յաստուածայինս՝ Հայրապետք, որ կոչին պատրիարքք, որք բազմեալ կան՝ ի վերայ չորից աթոռոց աւետարանչաց. և ունին սոքա ձև զառաքելականն՝ բոլոր նախորոտամբ զգեստուրիլ և արկանիլ եմիփորան հինգ կրկին. և գործ է նոցա ձեռ-

նադրել զարքեպիսկոպոսս ընդ չորս բաժինս աշխարհի և հրամանն տալ աշխարհագումար ժողովոյ:

Երկրորդ դասք եկեղեցւոյ՝ արքեպիսկոպոսք, այսինքն եպիսկոպոսապետք, որք կոչին կաթողիկոսք. և պեմ է նոցա պրճդնեալ փիլոն որ է բազմախաչն. և՝ի վերայ եմիփորոն չորեքկին. և գործ է նոցա ձեռնադրել զմեսրապտոլիտս և օրհնել զասուածազործ մեռոնն, իսկ՝ի վախճանիլ պատրիարքին եթե արքեպիսկոպոսք այլով եկեղեցական դասուք ձեռնադրեն զպատրիարքն:

Երրորդ դասք եկեղեցւոյ՝ մեսրապտոլիտք, որ մայրաքաղաքաց և աւազագոյն աթոռոցն լինին տեսուչք: Եւ պեմ է նոցա նախորդ. և որքան եպիսկոպոս ընդ ձեռամբ ունի, նոյն թուով՝ի վերայ խաչ թուխ կատարեալ, և եմիփորոն երեքկին. և գործ է նոցա ձեռնադրել զեպիսկոպոս և օրհնել զձէթն զոր յատելեալ ունի եկեղեցին՝ի պէտս երեխայից և հիւանդաց, և թէ կամին՝ խառնի յատաքելական ձէթն, որ է սուրբ մեռոնն: Եւ եթէ հարկ լինի լինի վասն ոչ գոլոյ պատրիարքի՝ կամ վասն այլ մեծագոյն պատճառի, հրամանատ և կամօք մեծ աթոռոյն ձեռնադրեն երեք մեսրապտոլիտք այլով եկեղեցական դասուք զարքեպիսկոպոսն իւրեանց:

Չորրորդ դասք եկեղեցւոյ՝ եպիսկոպոսք, որ կոչին պյդեղ, և իշխեն՝ի վերայ գաւառաց. պեմ է նոցա նախորդ անխաչ սուկ և եմիփորոն կրկին միայն. և գործ է նոցա ձեռնադրել երիցունս և սարկաւագունս, օրհնել զեկեղեցի և օծանել սեղան և աւազան. բայց զմեռոնն՝ի մեծագոյն աթոռոյն առնու յիւրմէ մեսրապտոլիտէն. և մեսրապտոլիտն՝ յիւրմէ արքեպիսկոպոսէն. զի իբր աստիճանօք՝ի վերուստ իջանէ աստուածեղէն շնորհքն[1] սկսեալ՝ի պատրիարքէն և դայ հասանէ մինչ՝ի բնաւին վերջինսն, որք են ժողովրդականք:

---

[1] Ասյ օր. ՝ի վերուստ ի վեր ասպատակողն ընդրն:

Ի. Ինդկրտրդ դասք եկեղեցւոյ՝ երիցունք, որք են քահանայք. և պետ է նոցա շուրջառ և զերկու ուսովքն ուրար, այսինքն փակեղն, և բաճկոնաւ իշխեն գալ՝ ի վերայ բեմին. և դոյզ է նոցա զկենարար խորհուրդն կատարել՝ և բաշխել արժանաւորաց, առնել մկրտութիւն, օրհնել խաչ և որ այլ ինչ կարդ է քրիստոնէից, առնուլ զխոստովանութիւնն կատարելոց, թողութիւն տալ մեղաց և զնւր հօտն կապել և արձակել. բայց զմեռոնն ոչ իշխեն շարժել, այլ զանկատար ձէթն՝ զոր մեարտապետքն և եպիսկոպոսքն օրհնեն. զի զմեռոն, որ է առաքելական ձէթ, եպիսկոպոսն միայն իշխէ շարժել և՝ ի տասն ամանդամ շրջելով՝ ի գառառն՝ օծանել զձեռնադրեալսն՝ ի քահանայից, և կարէ առնել զմանկունս անոգանոստս և փոաղաս, և տայ կարդ ապաշխարողաց և սարկաւագութեանց:

Վ. Եղկրտրդ դասք եկեղեցւոյ՝ սարկաւագունք, որք են ըսպասաւորք, և յայլ լեզու դիակունք կոչին. զգեստ է նոցա հալաւ ապանիլ, հոլանի կալ և փակեղն միայն զահեակ ուսովն, բացաւ գլխով սպասաւորել սրբոյ բեմին և սեղանոյն և քահանայից. և դոյզ է նոցա առնառարան կարդալ, քարոզել, խունկ արկանել և սպասաւորել սրբոյ խորհրդոյն, կրկլ զակին և ըմպզմայն: Լսակ՝ ի կանանց սարկաւագութիւք լինին, զի՝ ի կանանց վանս քարոզին. զգեստ է նոցա հաւատաւորացն՝ վիթլոն արկանել, ՝ի ձախատն խաչ ունել և փոքրիկ ուրար յաջմէ՝ ՝ի նկրդոյ բազկին զհանդերձէն կամ զգօտոյն՝ ՝ի կախ ունելով՝ նշանէ՝ ՝ի բեմն, քարոզել և ընթերնոյ առնառարան՝ ոչ յամբոխի՝ ՝ի վերայ բեմին, այլ առանձինն կամ յանկեան ուրեք. բայց ՝ի սուրբ խորհրդոյն սպասաւորութիւն բնաւ մի հպեսցի որպէս զարուս սարկաւագունս:

Ն. Օրինեալդ դասք եկեղեցւոյն՝ դպիրք, որք են կէսասարկաւագունք, և ունին զգեստ զսարկաւագացն. բայց ուրար յա-

---

[1] Ալ. որ. և ըստ է նոցա զվինարարն և զբրիոնան խոտորել:

հնակ բազկովին ՚ի վերայ արմկանն[1], և կան հոլանի գօտելոյծ. և գործ է սոցա ընծեռնուլ զառաքելական գրեանս յեկեղեցին, ապատաւորել տաճարին, կրել մոմեղէնս և զնաչադլուխս վարոցս և պահել զդրունս եկեղեցւոյ:

Ութերորդ դասք եկեղեցւոյ՝ անագանոսք, որ կոչին գրագարդագործ. ունին զգեստ գինոյն և աղաբողն, բայց ուրար ոչ. և արտաքոյ եկեղեցւոյ զգենուն մեկնակ կաւախս և կան հոլանի. և գործ է նոցա ընծեռնուլ մատղաւէական և վարդապետական գրեանս:

Իններորդ դասք եկեղեցւոյ՝ վտակք[2], որ են սաղմոսերգուք. զգեստ և աբեմ նոցա է նոյն. և գործ է սաղմոսել և եղանակօք պաշտել յեկեղեցին զձայնաւորս և զարուեստս, ալէլուիա և մեսեղի և որ այլ ինչ են:

Ահա սոքա են ինն դասք եկեղեցւոյ, զորս ՚ի ոգին Սուրբ կարգեալ սահմանեաց ՚ի ձեռն սուրբ առաքելոց և նոցին հետեւող հայրապետաց, զորս պարտ է եկեղեցւոյ լրիւ ունել և անթերի, զի ամենևին ոչ է հնար պակաս գոլ սոցա. ապա թէ ոչ՝ պակաս լինի շնորհքն աստուածեղէն[3] և ոչ հաճի Աստուած. քանզի իմա զեկեղեցի որպէս զբոլոր անդամն մարմնոյ մարդոյ յօդեալ ՚ի գլուխն Քրիստոս: Եթէ պակաս գոյ յանդամոց եկեղեցւոյ, թէև ՚ի յոյժ փոքրագունից, խեղ է մարմին նորա, և խեղ մարմնոյ ոչ հաճի Քրիստոս գլուխ լինել: Եւ դու եղբայր՝ քննեա և տես զոլորանութիւն գլեաստուն: — Բայց այս ամենայն դասք եկեղեցւոյ բովանդակ միաբանեալ՝ ապա կարեն ձեռնադրել զպատրիարքն:

---

[1] Այլ օր. Բայց սարբ յահեակ բազկին ՚ի վերայ արմկանն: — [2] Այլ օր. փսալտոսք: — [3] Այլ օր. ապա թէ պակաս լինի, ոչ հաճի աստուած, և նոյն ինքն պակաս լինի և ընդհատ աստուածեղէն:

ԳԼՈՒԽ ԻԱ

Վասն Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի և վասն ժողովին կոչնոյ որ ի Հերմկեաց, և վասն երկրաց խմբելոյն ի յիշեն քաղկեդոնէ։

Երանելի հայրն մեր Դաւիթ կացեալ յամի ոտ մեռաւ պօղոսեան Սիւնեաց ամն իբ՝ վախճանի։ Եւ ունէր զաթոռն տեղապահութեամբ մեծ քերթողն և անյաղթ փիլիսոփայն Մաթուսաղայ։ Էյս Մաթուսաղայ էր սնեալ ամենայն պարկեշտութեամբ և զարգացեալ ամենայն առաքինութեամբ. ուսեալ զքերթողութիւնն և վարժեալ ճարտասանականն, հմտացեալ փիլիսոփայական արհեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ։ Զի էր մեծարոյ և նախաթոռ ի վարդապետն ՚այոց աթոռն Սիւնեաց և էր ի վաղնջուց հետէ հրամայեալ զնշանակութիւնն և զմեկնութիւնն նոցա ունել ի սրբոյն Սահակայ և ի Մեսրոպայ, զլուխ կալ և հրամանատար ամենայն վարդապետաց ՚այոց։ Ո՞ւստի որով տեսեալ յայնմ ժամանակի պայծառացեալ իմաստասիրդ ճառագայթիւք զՄաթուսաղայ, վարժեալ և սնեալ ի նոյն տան՝ կացուցանեն յաստիճան վարդապետութեան եկեղեցւոյ և նստուցանեն զլուխ ամենայն վարդապետաց ի վերոյ բարձր ամբիոնի բարձունսրանին, յորմէ բղխէր գետօրէն աստուածային իմաստութիւն և փարթամացուցանէր զամենայն աշակերտեալսն։

Յայսմ համբաւոյ հրաշացեալ պատրիարքն Կոմիտաս և զանց ապարեալ զամենայն վարժապետաց կաթողիկոսարանին, նաև զվարդապետարանաւն ՚այոց որ Ա՞ղբշարունիսն էր, յորում ժողովեալ էին մանկունք ճարտարք և գիտունք ՚այոց, այն՝ որ Ա՞ղբատհաճորին է, զոր այժմ Ա՞ղբիկ Հայր կոչեն, յղէ առ Մաթուսաղայ զնւր ձեռնասուն համբաւն, զոր մեծախոհական սիրով սնուցանէր սրբութեամբ զՅովհաննես զնդ

բօրոտին իւր, զոր առեալ նորա՝ մեծաւ զգուշութեամբ ուսոյց և հասոյց ի գլուխ կատարման գիտութեանց զարդարեալ տեսականաւն և գործականաւն:

Ապա վախճանեալ Կոմիտաս պատրիարք գնի ի տապանի յիւրում շինեալ եկեղեցւոջն մերձ ի Հանգստարան սրբոյն Հռիփսիմեայ. և նստի յաթոռն տէր Ներսիսափոր ի յազատ ամէ՝ ամն երիք. ապա յետ սորա Եզր՝ ամն տասն, որ էր ի Նիզ գաւառէ ի Փառաժնակերտ գեղջէ: Ետ յերրորդ ամի կաթողիկոսութեան սորա, մինչ վախճանեալ էր Վաւիթ Սահառունի և առեալ զմարզպանութիւն Յոհոդորոս Ուշառունի, հրամանն եհան Հերակլ ընդ աշխարհս Հայոց և Ասորւոց գնալ ժողովել ի Կարնոյ քաղաք վասն քննութեան հաւատոյ, և ինքն իսկ առեալ ընդ ինքեան զձարտարս Յունաց՝ ելին անդր: Խորհուրդ արարեալ ապա իշխանին Յոհոդորոսի Ուշառունւոյ այլովք նախարարօք Հայոց ընդ կաթողիկոսին Եզբի՝ ասեն. «մեք երթամք փութանակի ի ծառայութիւն արքային, դու ընտրեա զգիտունս ազգիս և եպիսկոպոսաք Հայոց ևկ ի ժողովն. բայց մի՛ լեր քեզ շարժիլ ի տեղւոյս առանց Մաթուսաղայի Սիւնեցւոյ և Յովհաննու մայրագումեցւոյ, մի գուցէ փլուցանէ չարն զգեղեցիկ շինուած հաւատոյն մերոյ. ահա՝ ով տէր կաթողիկոս, օր մարտի և յաղթութեան, ահա օր փրկութեան և ժամանակ ընդունելի. այնժամ զմէջս քո իբրև այլ կատարեալ, սպառազինեա զքեզ ամրութեամբ հաւատոյ, զի մի՛ ի յաւետական հանդիսին թուլացեալ պարտեսցիս ի ձարտար խաբողացն, և կողոպտեալ զրկեսցուք մեք յուղղափառ հաւատոյս»:

Ապա յղեալ կաթողիկոսին հրաւիրակս ի պատուական արանց առ Մաթուսաղայ՝ ծանուցանէ նմա զկեալ հասեալ վտանգն և կոչէ, զի ի միասին հոգացեն զարժանն: Իսկ նորա ոչ կամեցեալ խափան առնել վարժարանին և իւրոց ձգտանացն զգայգ և զգերիկ՝ ոչ գնաց: Ապա կրկին անգամ հարկէ

գնա գնալ, և նորա ոչ առնալ յանձն՝ պատճառելով զհակառակութիւն մարմնոյ՝ արձակէ առ նա զնախասացեալ Թէոդորոս՝ աշակերան իւր և գրէ Թուղթ վասն հաւատոյ որ կայ ի ածեանամակին, զոր և առաէն կարդացաք, Թէ այդու օրինակաւ խօսակցեալ. և ազաչէ անմեղադիր լինել վասն չկրթալոյն. ասէ՝ «դուք ինքնին գիտուն էք և ընդ ձեզ ունիք զվարդապետ Յովհան, և այլ գիտունք և ձարտարք յոլով կան առ ձեզ. և ի մեզնէ, յուզարկեցաւ մեր աշակերտ Թէոդորոս, այդ բառականաւոյն»:

Լսեալ Նեզրի ոչ առնալ ընդ իւր զՅովհան, այլ համարձակեալ ի Թէոդորոս՝ գնայ ի ժողովն առ Հերակլ. ապա հարցեալ ընդ նա Հերակլ, եթէ «ընդէր ոչ միաբանիք ընդ մեզ ի հաւատս», ասէ Նեզր — «բարեբար ազբայ՝ եթէ կամիս, հեշտ է այդ, միայն հրաժարիր ի Քաղկեդոնի ժողովոյն և ի Լեւոնի տոմարոյն, և մեք միաբան եմք»: Ապա առնալ Թադաւորին զնամակն հաւատոյ ժողովոյն Քաղկեդոնի՝ գնէ ի վերայ սուրբ խաչին զոր ընդ ինքեան ունէր և ասէ. «ահա ահր կաթողիկոս՝ առ ընթերցիր և քննեա, եթէ զոյ ի դմա ապատա կամ Թիւրամիւն ինչ՝ ցոյց ինձ, և ես զամենայն Հոռոմն ի քոյդ դարձուցանեմ դաւանութիւն և այրեմ զեռւղթըդ. ապա թէ ոչ՝ հաւանեցէք և դուք մեզ»: Առնալ կաթողիկոսին զԹուղթն ասպատ յիջևանս իւր. քննեցին զաւուրս երիս և չկարացին վերահասու լինել ծածուկ և անյայտ աղանդոյ նորա. գնացին առ Թագաւորն և ասեն. «ազբայ՝ յաւիտեան կեաց, ոչ գտաք ի սմա Թիւր. այլ ամենայնիւ հաւասարեալ է հարցն սրբոց ուղղափառ դաւանութեան». ասէ Թագաւորն. «հաւանեն էք այժմ մեզ». ասէ կաթողիկոսն. «յայտ մնասին հաւան եմք. բայց զայն ոչ ընդունիմք, զի ձեր եկեղեցականք համարձակ են ի պատկութիւն և յայլ պղծութիւն և հաղորդին օրինաց անխտիր». ասէ Թագաւորն—«մեր բանս վասն հաւատոյ է և ոչ վասն գործոց քննութեան. դուք

Սրբոյ ունիք զանբնական պղծութիւնս ընդ արուս և ընդ անասունս և այլս յոլով, բարձէք դուք զայն ի Սրոց, և ես բառնամ զայդ ի Սուրանոց. զբոզանոցն և զմունին Պաղկեդոնի ժողովն չէ կարգեալ, զոր յիշեքդ այժմ, այլ վասն այն ևղին իշխանաք, զի մի այլանդակ չարիք երևեսցին»:

Եւ կաթողիկոսն յերեսաց Թագաւորին անպատասխանի. և խորհի ընդ ասպետս և ընդ այլ իշխանս եթէ զինչ արասցեն. ասէ «ոչ ինչ գոասնեմք պատճառս»: Խոժոռեալ ասպետին ասէ ցասմամբ. «ոչ ասացի քեզ, եթէ առանց Մաթուսաղայի և Յովհաննու մի գալ ի ժողովս. ահա քո տգիտութեամբ կորուսեր զմեզ»: Ասէ Նզը. «Մաթուսաղայ ոչ ևկն, և Յովհան զնկեղեցին և զկաթողիկոսարանն ոչ կամեցաւ թողուլ. և ամենեքեան ասացին մինչ Մաթուսաղայի աշակերտն ի հետ է, ոչ է կարիք մեզ այլ ոք՝ դա բաւական է»: Ակսաւ խօսել Թէոդորոս և ասէ. «ընդէր վհճիք և տրտմեալ էք, ոչ գոյ ի նոսա թիւրութիւն ինչ վասն հաւատոյ՝ մի եմք մեք և նոքա — նոքա բուն արմատք են, և մեք ոստ մի՝ ի նոցանէ բուսեալ և առեալ զհաւատս և զամենայն կարգս քրիստոնէութեան. ոչ է պարտ ապստամբել ի նոցանէ, և խլել յարմատոյն մեր. այլ մեք կրսերագոյնքս հնազանդիմք երիցագոյն հրամանաց նոցին՝ և լեզի մի հօտ և մի հովիւ»:

Ընտու բանիւքս մեկարդեալ ի ժամուն զմիտս իշխանին և եպիսկոպոսացն: Եւ զի Նզը ակն ունէր մարմնաւոր փառացն և ագահութեան յաղթայէն, և միտք իւր թուլացեալ էին ի ճշմարտութենէ, միայն ակն ածէր յիշխանաց և յեպիսկոպոսաց խրոմի հաւանել. իսկ մինչ լուան ի Թէոդորոսէ զայն՝ դնացին միաբան առ Թագաւորն և յանձն առին զՊաղկեդոնին, արարին պատարագ և հաղորդեցան միմեանց, եառն ձեռնարկ միաբանութեան ալքայն և խնդրեցին զՊաղկեդոնին, զոր եառ Թագաւորն ոսկեգիր մագաղաթաւ. և պարգևէ Նզին զերծոյզ մանն դիւզաքաղաքին Պոլսոյ և զգաղտ բովանդ-

դակ: Եւ այնպէս մեծամեծ վաստակք և երևելի պարգևք հրաժարեալք յարքայէն՝ դարձան ի Դուին կապուտք, կողոպուտք ի ձիմալիտ Հաւատոյն: Եւ անդ կամեցան ժողովով հաստատել զնոր օրէնսն զոր առին, որում ոչ հաւանեալ Յովհաննու Մայրագոմեցւոյ՝ անարգեալ և հալածեալ եղև Ներսէսէ. որ և ասէր — «յիրաւի կոչեցար Ներսէս, զի նեղ և վախճան եղեր հաւատոյ ուղղափառութեան»: Նկն և Մամիկոնեաց ի Սիւնեաց և յոյժ տրամեցաւ ընդ եղեալն. բայց ի ժամուն ապիրատն եղև, զի յիւր աշակերտէն էր բռնեալ չարն:

Իսկ ժողովոյն և Ներսէի բազում ողբանոք պատրեալ զմիտս նորա՝ ածին ի հաւանութիւն ձեռնադրիլ եպիսկոպոս Սիւնեաց, և արարին իսկ. և մեծաւ պատուով արձակեցին յամենան իւր և ի վիճակ. որոյ նկատեալ ամենայն ջանիւ զգուշացոյց զվիճակն իւր ոչ խառնիլ ի հրամանս Կաղկեդոնի, այլ զաւանդեալն ի սուրբ հարց զուղղափառ հաւատն պինդ ունել, զոր ունէին ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայն, յոր և ձեռնին շնորհօք սուրբ Հոգւոյն: Օ՞ի Հայք կացին ի նմին ի հրամանս յաւուրս վից կաթողիկոսացն ամն ութսուն և հինգ, մինչ ի Յովհան օձնեցին[1] և ի ձեռն նորա սրբեալ և նորոգեալ և զին Հայք յայնմ հրամանէ. Իսկ երանելին Մամիկոնեայ կացեալ ի մեծապատուութեան Սիւնեաց ամն ժբ՝ վճարի յաստեացս. բազում և մեծամեծ վաստակօք առաքինութեան գնայ առ կոչնառուէրն առնուլ զնաւն ըստ արժանւոյն վաստակոցն զնն, զոր ակն ոչ եհաս և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ:

---

[1] Ե.յէ օր. Գնէ ի Բրիջնկի և Գովելի գրոյն զորդւոյ Յովհան օձնեցի.

ԳԼՈՒԽ ԻԵ.

Թագաւր Արշակունեաց Սիւնեաց եպիսկոպոսէ, զոր ջրեաց հրամանաւ փոխան եդրէ Հայոց կաթուղիկոսէ, և այլ եպիսկոպոսաց Հայոց՝ առ ընտիսուքն Հերակլ վասն հաւատոյ։

«Ընդունարարեալ և բարկայաղթող Աբրիւտոսիւ պայծառացեալ և մեծամեծ բարեգործութեամբք՝ ի պարծանս Աբրիհամոնէից եկեալ Աստուծոյ թագաւորին ՚ոռոմոց ՚երակլեայ՝ Աղբատ նուաստ կաթողիկոսէ ՚այոց, ՚ի Յովհաննու Արարգելեցական եպիսկոպոսէ, ՚ի Արծուաւաղայէ Սիւնեաց եպիսկոպոսէ, և յամենեցունց ՚ի նուաստից ՚ի ծառայական աշխարհիս ձերմէ ՚այոց եպիսկոպոսաց ողջոյն խնդալ»։

«Զիր հաւատոյ խոստովանութեան, զոր մեծանձնութեան ձերոյ արարեալ առ նուաստութիւնս մեր՝ տեսանելով մեր, քննութեամբ գոսաք ըստ ամենայն հարցն ճշմարիտ և ուղիղ խոստովանութեամբ առ սուրբ միաւնական Երրորդութիւնն բարեպաշտեալ, զոր ընկալաք և ընդունիմք։ Այլ զժողովն Քաղկեդոնի խոստովանեալ էր և կարգեալ ընդ երիս ժողովսն՝ ընդ Նիկիոյ 318ից որ յաղագս Արիոսի, որ զՈրդին Աստուծոյ արարած ասէր և ոչ արարչակից. և ընդ 150ից որ ՚ի Կոստանդնուպոլիս վասն Մակեդոնի, որ զ՚ոգին սուրբ ՚ի սպասաւորութեան կարգի ասէր հրեշտակ կամ առաքեալ. և ընդ երկերիւրոցն որ յԵփեսոս, ուր զ՚ի Կուսէ ծննդեանն հայցութիւն Նեստորին նզովեցին, և զկնի նոցա զՔաղկեդոնին։ Եւ պատճառ ժողովոյս Նեստորիքէս եղեալ, որ խոստովանի զԱնին Աստուծոյ զծնունդն ՚ի Կուսէն. բայց յետ միանալոյ Աստուածութեանն ընդ իւրում մարմնոյն ուրանայր զմարդկութիւնն, որ երկուս բնութիւնս բաժանեալ ՚ի ներքս աճէ և սրբոք վարի այսպէս ասելով. «ոչ բառնալով զնութեանցն զանազանութիւնս, այլ ամրոց ջ պահելով առան-

ձեռաւորապէս զերկաքանչիւրոց բնութեան», զոր ոչ ընդունին Աստուածաշունչ գիրք և ոչ վարդապետք հոգևորք և նշանաւորք, որ եղեալ են յիւրաքանչիւր ժամանակս աստուածաբնակք և աստուածախօսք՝ վկայեալք յեկեղեցւոյ Աստուծոյ որ ընդ տիեզերս. քանզի զերկուս բնութիւնս՝ ի մէջ բերելով հաճարէին լուծանել զԱւտիքէսի հայհոյութիւնն: Պարտ էր նոցա զերանելեացն հարանց՝ ի կիր առնուլ զամենապայծառ և զհրաշափառագոյն յաղագս մարմնաւորութեանն առաւել զաստուածս՝ զԱթանասի աղեքսանդրացւոյ, զՎասիլ կեսարացւոյ, զԳրիգորի նազիանզացւոյ, զԳրիգորի Նեոկեսարացւոյ սքանչելագործի, զԳրիգորի Նիւսացւոյ՝ եղբօր Վասիլի, զԱրիկղէ և զայլոց նախնեացդ վարդապետաց. քանզի Աստուած կատարեալ և մարդ կատարեալ յերկուց բնութեանց մի Աստուած խոստովանեցան, որք բաւական են վեր՝ ի վայր տապալել զԱւտիքեայ հայհոյութիւնն: Իսկ եթէ բաժանեալ՝ ի միմեանց երկու բնութեամբ վարեցան՝ ընդդէմ ուրեմն նահատակելոց վարդապետացն են, զի այլ ոմն զԲրխատոս Յիսուս ասելով և այլ ոմն զՎանն Աստուած, և գործ առանձին իւրաքանչիւր, — յերկուց որդւոց հայհոյութիւնս անկան, որ ոչ Երրորդութիւն, այլ մանաւանդ չորրորդութիւն, որք են վատափառ և չարահաւատ ըստ հրէամիտ Նեստորի[1]. քանզի և յառաջնորդն Վաղկեդոնի ժողովոյն լինել ասեն զԹէոդորիտոս և զԻբաս զզուգախոհացողսն Նեստորի:

«Այս զի այս այսպէս է, թէ կամիցիք լսել՝ յայտնի է ձշմարտութեամբ: Վանզի Յովնաղ անուն Երուսաղէմի եպիսկոպոս՝ ի Վաղկեդոնի ժողովումն էր. և նկեալ անտի զԵրուսաղէմացւոց ընթերցուածն կարգեաց, զոր մեր պահեալ է մինչև յայժմ, որք զՎաղկեդոնի ժողովն խոտեն, հերձուածողս կոչեն զնոսա, և այսպէս բամբասանեն, եթէ Աստուած խա-

---

[1] Ա յլ օր. որք ի վատափառ և ըստ չարահաւատ հրէամիտ նեստորի:

ընել ասեն և անմահ խօսիլ ասեն, և ինքեանք այսպէս գրեն առ մեզ, եթէ «Յիսուս է որ չարչարեցաւն, Քրիստոս» ասեն, «խաչեցաւ»։ Եւ զիրք նոցա կան առ մեզ և ոչ կարեն յուրացաւ լինիլ. յորմէ բազումք և յայս կողմանս թիւրեցան և ոչ կամին Աստուած խօսեցեալ և անմահ խօսեցեալ ասել. զի չարչարեցաւ անչարչարելին չարչարելեաւն, և մեռաւ անմահն մահկանացուաւն, այսինքն է՝ անչարչար Բանն Աստուած մեռաւ իւրով մարմնովն. վասն այնորիկ համարձակիմք ասել Աստուած խօսեցեալ որպէս տէրունականն ունի բան, եթէ «այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչև զՄրդին իւր միածին ետուն». և առաքեալն Պօղոս ասէ» եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն փառաց՝ ի խաչ հանէին». զոր Յովհան՝ Կոստանդնուպօլսի եպիսկոպոս, մեկնէ, թէ «զՏէրն փառաց մարդ սոսկ ասել և ոչ գիւք յանդգնին». — որոյ համաձայն և ճշմարիտ հարքն բարբառին՝ Յովհան, որ Ներսեսեմի քաղաքին կացեալ եպիսկոպոս, թէ «Աստուած ի կուսէ ծնեցեալ, և Աստուած խաչեալ». — և Գրիգոր Նազիանզին, թէ «Աստուած խաչեցաւ, և երկիր շարժեցաւ». և գալձեալ յայլում վայրի, թէ «որ զԱյոյն աստուածածին ոչ խոստովանեսցի, հեռի է յաստուածութենէն. եթէ որ Խաչելոյն երկիր ոչ պագանէ՝ ընդ աստուածամարդան կարգեսցի». քանզի որ ոչ ասէ Աստուած խաչեալ՝ ոչ խոստովանի և զԱստուած ի կուսէ ծնեալ, և ոչ զԱյոյն՝ աստուածածին որպէս և Նեստոր. քանզի ոչ այլ ումն Յիսուս Քրիստոս, և այլ ումն՝ Աստուած Բանն. այլ նոյն և մի Աստուած ծնեցեալ ի կուսէն, նոյն անչարչարելի իւրով աստուածութեամբ, նոյն անմահ և նոյն մեռեալ իւրով մարմնովն, որպէս Եթանաս՝ Ղեքսանդրու եպիսկոպոսն ասէ. «յաղագս որոյ մեղրին, որք ասեն, եթէ այլ ումն է որ չարչարեցաւն, և այլ ումն է որ ոչ չարչարեցաւ. բայց ոչ այլ ոք էր քան զԲանն որ չարչարեցաւ և զմահ ընկալաւ. նոյն ինքն անչարչարելի և անմահումն

Ռանն լինելով մարմին մարդկային՝ համարելով զամենայն կլից». — զրիգոր Նէոկեսարացի սքանչելագործն — «որ ոք ասէ՝ այլ ոք ախտակրեալն է և այլ ոչ ախտակրեալն [1] և ոչ խոստովանեցի զնոյն անախտակիր Աստուածն Ռան մարմնովն ախտակրեալ՝ որպէս և գրեալ է, նզովեսցի»:

«Ընդ եթէ ըստ նոցա բանիւ այլ ոմն Քրիստոս Յիսուսն է, և այլ ոմն Ռանն Աստուած, և ոմն ի նոցանէ զախտ և զչարչարանս կրէ՝ ծնեալ ի Կուսէն, և ոմն ի նոցանէ պայծառատնայր նշանօք և արուեստիւք, որ է Ռանն Աստուած, հեռացեալ զնա ի տնօրէնութեան խորհրդոյն, որպէս կայ ի տոմարին Լևոնի, զոր ժողովն Քաղկեդոնի ուղղափառ կոչէ, և որպէս ի վերայ խարխարեալ և շարժուն հիման զևրն շինէ շինուած. — եթէ այդպէս է՝ ո՞րպէս աղքատացաւ մեծատունն վասն մեր, ասացի՞ն մեզ որ բաժանեն զմարդն ՅԱստուծոյ Ռանէն, և զմիացեալն որոշեն որոշութեամբ բնութեանցն. որ զերկուս ոմանս ասեն զՔրիստոս, և զմին իմաստութեամբ միայն, և առատաբանութիւն բերեն: «Քանզի վասն ձեր աղքատացաւ մեծատունն, ասէ առաքեալն, զի դուք նորա աղքատութեամբն մեծասջիք». այսինքն՝ անմահմին Ռանն Աստուած՝ ի ՚օրէ յառաջ քան զյաւիտեանս ծընեալ՝ էակից և բնակից ՚օր և սուրբ ՚ոգւոյն, ի վերջին ժամանակս էջ և մարմնացաւ ի սուրբ Կուսէն Մարիամայ, ըստ առեւտրանչին Յովհաննու, թէ «Ռանն մարմին եղև, և բնակեաց ի մեզ»: Մարդ եղեալ ճշմարտապէս ամենայնիւ բառնալով նութեան մեր առանց մեղաց. ի խանձարուրս պատեալ եղաւ ի մսուր որ ի վերայ քերովբէից շրջեր, ի գիրկս մօր գգուեցաւ, կաթն արբուցաւ, զարդացաւ հասակաւ, ճանապարհորդեցաւ ընդ ամենայն կիրս կենցաղոյս, մանուկացաւ ՚րէից, չարչարեցաւ և խաչեցաւ, թաղեցաւ և յարեաւ անապական-

---

[1] Ընդ օր. որ ոք ասէ, այլ ոք ախտակրեալն է, և ոչ խոստովանեցի զնոյն անախտակիր...

նաբար, զի ոչ թողաւ ոգի նորա ՚ի դժոխս և ոչ մարմին նորա եաես զապականութիւն՝ որպէս առաքեալն Պետրոս ասէ, զոր և Աթանաս աղեքսանդրացի ՚ի հաւատոյ բանին ասէ—«էառ մարմին յապականացուացս, զի զգեցուսցէ զանապականութիւն. էառ մարմին ՚ի մահկանացուացս՝ որպէս զի մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, որպէս և այժմ ՚ի ձեռն մահուան և յարութեան իւրոյ շնորհեաց մեզ զկեանս և զանապականութիւն»:

«Ընդ կէտ ըստ նոցա բանիցն եղանէ՝ ոչ թաւիեաց զինքն էն Աստուած, ոչ զկերպարանս ծառայի էառ և ոչ կերպարանօք գոսա իրրև մարդ, և զհաճդ զանօրէնութեանն խորհուրդ բովանդակ կատարեացէ: Պանդի ոչ աստուածային բնութիւնն առանձինն եղեալ ՚ի կնոջէ և մեռեալ ընդ օրինաց, և աղքատացեալ ՚ի մեծութենէ, և օձումն ընկալեալ՝ որպէս և ոչ մարդկային բնութեանս յատուկ որդի Յարձրեցոյն զոլ և աթոռ ունել յաւիտենական, այլ ըստ անձնաւորութեան երկուց բնութեանցն. քանզի յետ երկուց զմին խոստովանիմն ճշմարիտ քրիստոնեայք, որպէս Պետրոս ասէ, «թէ յորում աստուածապէս դրոշմեալ ՚ի միաւորութեանն պատմեաւն». և Յասիլիոս առ Ապողինար, յորժամ ընդդիմադրէր Ապողինար զվճռումն, թէ «երկու կատարեալ Աստուած և մարդ մի կատարեալ ոչ լինիմն». նա պատասխանի տայ—«առ մարդկան արդեօք անկարելի, բայց Աստուծոյ՝ կարելի (՚ի լուծումն Յարցին), որպէս կուսի ծնանելն, որպէս ՚ի վերայ ծովու գնալն, որպէս դրօքն փակելով մնանելն մարմին Քանձրացեալ ՚ի մարմնոյ և յոտկերաց հատատեալ. զորօրինակ այն կարելիք Աստուծոյ՝ նոյնպէս և այս»: Եւ այսպէս Գիրք վկայեն զատաւածավայելուչն և զմարդկայինսն նովին Տեառն մերոյ Աստուծոյ, զոր եգ ժառանգ ամենայնի ՚ի յայն վասն կատարութեանն և անդրանիկ ՚ի նեղբս աճ յաշխարհս ՚ի բազում եղբարս: Նա վկայի գյաւիտեանս արարող, որ և բացա-

փայլումն փառաց և նկարագիրք էութեան նորա. և նոյն՝ ի կերպարանս ծառայի կրևեալ՝ ի նմանութիւն մարդկան եղեալ. և ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զինեն հաւասար Աստուծոյ Յիսուս Քրիստոս՝ ի վերջինան՝ ի Սուսէն ծնեալ, և՝ի սկզբանն հաստիչ աշխարհի ընդ ±օր, որպէս ասէ Պօղոս. «այլ մի է Աստուած ±այր, յորմէ ամենայն և մեք՝ ի նա, և մի տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն և մեք նովաւ»:

«Ընդ զանօրինականան համբերելով քաղցնոյր, և նայն կենդանիքեր զբազմահազար ժողովուրդն. նա ծարաւեալ՝ և նոյն ինքն արբուցանող ծարաւեացդ. նոյն զմարդկայինան բարբառելով, նոյն զաստուածծանելոյնան առող առ աշակերտան՝ — «±այր իմ մեծ է քան զիս». և նոյն ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զոլ հաւասար Աստուծոյ. Նա՝ ի ժամ խաչին աղաչող զԱստուած ±այր, «Թէ հնար իցէ, անցցէ զինեւ բաժակս». նոյն ինքն կամաւորութեամբ ելեալ՝ ի ժամն յայն՝ ասէ, — «ես անձամբ իմով դնեմ զանձն իմ, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա». առաջի Պիղատոսի դատեցեալ և՝ի հրէշտակաց ապատատրեալ. բևեռեալ՝ի փայտի և ընդաջմէ ±օր յերկինս (բազմեալ). Թագեալ՝ ի գերեզմանի և աւերեալ դժոխս. յարուցեալ՝ ի մեռելոց և՝ի վեր երթեալ յերկինս, ուր էր զառաջինն՝ ըստ նորին Տեառն բարբառոյն, զորմէ և Պօղոս ասէ. «որ էջն նոյն է, և որ ելն՝ի վերոյ քան զամենայն, և գոյ դատել զկենդանիս և զմեռեալս»:

Սա — Աստուած ամենայնի, Թագաւոր յաւիտենական, երկրպագեալ ընդ ±օր և ±ոգւոյն սրբոյ յաւիտեանս, — վասն որոյ և նախանշեալ ճշմարիտ վարդապետացն Դիոնիսիոսի և Պիղատոսի և Յուլիոսի՝ ±առնոյ եպիսկոպոսաց, և Դիոնիսիոսի և Պետրոսի վկայի և Թէոփիլեայ, և յետ նոցա՝ Ընթանասի և Ալբդրի և Գրիգորեանց և այլոց բազմաց յերկուց բնութեանց մի Աստուած խոստովանեալ է: Այլ զի՝ ի Պաղ-

կեդրոնի ժողովին պատճառանօք բաժանմամբ զերկուս բնութիւնս առացին այսպէս— » ապրեցելոյ երկաքանչիւրոյ բնութեանն իւրոյ յատկութիւն» — ոչ ընկալան զնա ոմանք ՚ի ձեռնոյ ձարտարացդ առաջնորդք Աղեքսանդրացւոց, այլ և յայսմարտութեամբ ընդդիմադրութիւնս բազում արարին: Նա ՚ի այսոցարհեստաւորաց, որ Աղեքսանդրիա և յայլ քաղաքս բազում ժամանակօք ՚ի հրամանատս կացին, ոչ է ընկալեալ ըզնոսա և ոչ հաղորդութեամբ միաւորեցան ընդ ձերում աշխարհիդ: Իսկ այժմ աւելագոյն այսպէս ասեն, «թէ անխառիւ հաղորդութիւն առնուն», որ է անհնարին չար. զի Տէրն ասէ » ես եմ հացն իջեալ ՚ի յերկնից և ես եմ հացն կենաց. և մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է. և որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեացի և ես ՚ի նմա, և որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան»: Նա Պօղոս բազում երկիւղիւ զդուշացուցանէ. «զննեսցէ, ասէ, մարդ զանձն իւր և ապա ՚ի հացէ անտի կերիցէ և ՚ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ ՚ի դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ, զի ոչ խարէ զմարմին Տեառն»: Նա և սա սակայն՝ «եթէ անարժանութեամբ հաղորդեալքն պարտական եղիցին մարմնոյ Տեառն», զոր սոսկեաց հաւատոյս կանոնն ընդհանրական, չափ ժամանակաց սահմանելով առ անձինն խրատանչիւր յանցանաց, յորս պնդագոյն ապաշխարութեամբ սրբեալք ՚ի մեղաց՝ արժանաւորին հաղորդութեանն: Իսկ այժմ ընկեցեալ երեւին ՚ի բաց զեկեղեցական հրամանն, և զկանոնս ուղղադոյնս անփոյթ արարեալ առեալ առեալ մեղանչելով, և լուացմամբ մարմնոյ վազվազակի անարժանք ՚ի հաղորդութիւն գան, զորըս Տէրն խոտ յաւետարանի անդ՝ ասելով ցփարիսեցիսն. «զարտաքինն զբաժակին և զկաւառակին լուանայք և ներքինն ձեր լի է պղծութեամբ»: Նա Պօղոս առեալ առեալ զմկրտութիւնն ՚ի բէից մարմնոյ արդարութիւն կոչէ, որ յառաջ քան

զժամանակին ուղղութեանց էին։ Չակարագոյն միտս կապատեն [1] պաշտօնեայքն և այլ ևս հայհոյութեան բանիւք, «ելիէ մարմին և արիւն Տեառն՝ ի քաւութիւն մեղաց է»։ Գիղեցիկ է, թէ այդպէս է՝ և ոչ անարժանութիւն խակ. և սուտ գտաւ նիցի Ընաքեան և կանոնք համաձայն, որ ասեն անարժան զոլ զմեղուցեալս և զոչ ապաշխարեալս. և համարձակ ևս վայելել՝ ի ճաշակմանէ մարմնոյ և արեան Տեառն և՝ ի սեղանոյ դիւաց։ Ընդ մի՛ ոք խարեսցի, զի մարմին և արիւն Տեառն արդարև ստոյգ՝ ի քաւութիւն մեղաց է՝ այլ ապաշխարելոցն և հնազանդելոցն՝ ի մեղաց, և ոչ միշտ թաթաւելոցն՝ ի մեղս. զի սպառնայ այնպիսեացն Տէրն՝ առնելով վրէժ անհնարին տանջանաւք՝ ի դատաստանի մեծի աւուրն։ Եւ ոչ պարծիմք զմեզ սուրբս լինել, այլ սակայն ոչ անխառիր՝ ի հաղորդութիւն (դիմեմք). այլ ահագնալք՝ բազում երկիւղիւ մեկուսանամք։ Ընդ զնաւիքէս և զնմանիս նորա՝ զառաջին և զվերջին հնձուածոցս, նզովեալ եմք և նզովեմք. բայց զժողովն որ զաժանեալ բնութիւնան պահէ, և ոչ տայ ասել Աստուած խաչեցաւ, որպէս և այլք բազումք՝ ի Հռոմոյ, յորոց ոմանք և՝ ի մերմէ կողմանէս թիւրեցան, ոչ կարեմք ընդունել, և ոչ ընդ այնոսիկ, որ փոքրկացուցանեն զմարմին և զարիւն Տեառն՝ հաղորդել, զի ոչ ունիմք այդպիսի սովորութիւն։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց, որ յաջորդեցին զինէ տեառն Մաշտոցայ հերձողի։

Յետ երանելի առն տեառն Մաշտուսաղայի մնաց աթոռն անիշխան ամս ութ վասն հանապազ հինից և խռովութեանց՝ երթեմն՝ ի Պարսից, երթեմն՝ ի Յունաց և երթեմն՝ ի Հռոմոց։

---

[1] Ընդ օր. խոտորին։

Ապա ընտրեն այր մի լաւ և պիտանի ՚ի գործ եկեղեցւոյ, և կացուցանեն զնա եպիսկոպոս Միւնեաց, որոյ անուն էր Աբրահամ կոչէր: Սա կեցեալ յամս բազումս՝ վախճանի: Ապա յաջորդէ ՚ի տեղին տէր Յովսէփ՝ ամս տասն և իննն. ապա տէր Յովհան՝ ամս քսան և երկու. ապա տէր Մովսէս՝ ամս հօթն: — Սա մնուացանէր ամենայն զդուշութեամբ զսուրբն Առաքելոս խնամատարէր և մարտիրոս: — Ապա Ենանիա՝ ամս հօթն: Ապա Յովհան՝ ամս իննն: Ապա բազձալէին բնաւից, արեգակն ջահատրեալ ՚ի տանս Թորգոմեան՝ երանելի և մեծ նահատակն, պարծանաց զաւակն և անդրանիկ որդին սուրբ և երկնահանդէս աթոռոյս Միւնեաց՝ Առաքելոս, ոչինչ ընդհատ քան զառաջինն, որ հանդիսադիրն է ամենայն մարտիրոսաց. զորոյ զհանդէս բանիւք և գերջանիկ բարեբաստութեանցն զհանգամանս ոչ է զանցառնելի, այլ կարգիլ համառօտիւ յայսմ մատենի:

ԳԼՈՒԽ Ի.

Վասն պետան Սիւնեաց Սիւնեցոյ վաթ և վախճան. և որ ինչ պատմի զնմանէ:

Տարփուեալ բազձանաց գործարանի սրտիս ձգտեցուցանէ զմիտս իմ գհամեստականն առնուլ հաղնիցդութիւն յիմումն առաստանութեան՝ ստեղծել[1] տապս քաջոլորակս և հիւսել դրուատս հրաշալուրս առ՝ի սխրացուցանել զնիցրողուին բազձալոյս բնաւից յականջս մտադիւր լսողաց, զանհամեմատն յէից՝ խնամանոյն և սերոբէաստարաս առն Աստուծոյ ասեմ զԱռաքեանոսի խնամատարին և անյաղթ հովուին՝ Միւնեացըս մեծապատուին, զորոյ զերկնահանդէս քաղաքավարութիւն և զյանկալի կատարած կենաց և զսարսափելի գործ պատու-

[1] Ալլ օր. ոտիզքուլ:

հասին, զոր յետ վախճանի նորա ուսաք, կամ՝ ի կարճոյ շա-
բաշրևսցուք[1]։

Սահմանեաց — սիւնն երկնի և խարխեան հաստատ, վէմն անդրդուելի և ախոյեանն անվախ սուրբ եկեղեցւոյ, մարդն երկնային և հրեշտակն երկրային, հանապազ մեռանելն և միշտ կենդանին, հիացուցիչն հրեղինաց և զարմացուցիչն քերովբէից, զորոյ զգովութեանցն հոյլս ոչ է պարտ իմոյ տկաս և թերա-
վարժ մտացս աղաւաղել բանիւք, այլ միայն զզուացայն բու-
ռըն հարկանել, — էր սա որդի աւազ երկոցու մեծ մայրաքա-
զաքին Հայոց Վաղնայ, և սնանէր և զարդանայր ուսմամբ՝ ի կաթողիկոսարանին Հայոց։ Եւ յետ լնլոյ հասակին՝ ոչ կա-
մէր թաքչել ջահն ընդ գրուանաւ մարմնոյն, այլ հրաժա-
րէր՝ ի բազմամբոխ քաղաքէն և գնայր՝ ի համրաւառնչ և մեծասքանչ հանգիստարանն, ՝ի հրեշտակերամ կրօնաւորանն սուրբ և յաստուածարնակ առաքինարանն Մաքենոցաց, առ աստուածապղեաց և սերովբէատիպ հարանց հոյրն Սաղոմեն[2], որ էր էգումենոս մեծի ուխտին և պայծառաւանապր յայնմ ժա-
մանակի մեծամեծ ճգամբք և անտանելի խստամբեր վարուք· որ և յօրինեաց զպայծառացուցիչն ոճնից տէրունականաց և յիշատակաց[3] մարտիրոսաց զՅօհաննէն՝ ի 150 թուին Հա-
յոց։ Ընդ տուեալ զանձն՝ ի մեծամեծ սքեսութիւնս և յան-
ըմբերելի վարս մշտաջան առաքինութեանց՝ յետ ամաց քինչ, մինչ լցաւ հասակ նեղբին մարդոյն գործականաւն, ոչ հա-
մարեցաւ պատշաճ ընդ խաւարաւ անգիտութեան կալ մնալ, այլ և՝ ի գիտութիւն և՝ ի կրթութիւն աստուածային իմաս-
տից ջանայր հասանել· — զի ոչ է անկ միակողմանի լծով ձգել զակօս երկրագործութեան, այլ զերկուսն լծել՝ զտես-
կանն ասեմ և զգործականն, զի առնոյն պատշաճաւոր լե-

---

[1] Այլ օր. որ յետ վախճանին սորայ ասասցուք ի յորժամ յարուցեալ։ —
[2] Այլ օր. Սաղմ։ — [3] Այլ օր. ի պետրոս հարկէրոսաց։

ցի. — սակս որոյ եղեալ ՚ի մեծարանէ, անտի՝ փութայ ձեռն յաղթութիւն իմաստից՝ ՚ի վարդապետարանն Աւետեաց, որ գլուխ էր ամենայն դիտնոց ±այոց, ՚ի պայծառացեալ դպրոցքն որ ՚ի նմա. քանզի որպէս Աթենացիքն ՚ի մէջ ±ոստոց և Յունաց ձոխացեալ էին և մայր իմաստից կոչեցեալ Յունաստանեայց աշխարհին լսեին և հնչէին դպրութիւնքն, այսպէս և սքա ՚ի տանս Թորգոմայ յաշխարհիս ±այոց: Եւ գնացեալ սորա առ երանելի եպիսկոպոսն Աւետեաց Մովսէս՝ աշակերտի նմա. և ըստ առաջս շնորհին զոր ունէր, փոյթ ընդ փոյթ հմտացաւ աստուածային իմաստից և փարթամ ձոխութիւնքն զարդացան և եհաս[1] ՚ի գագաթն տեսական շնորհին՝ լքեալ անհամեմատ հանճարով: Եւ առեալ հրաման յեպիսկոպոսէն նստաւ յամբիոնն բարեշնորհական և մեկնէր զԱստուածային գիրըս աշակերտելոցն ՚ի վարժարանին: Ապա հասեալ վախճան երանելւոյն Մովսիսի՝ յանձնէ նմա զհոգաբարձութիւն աթոռոյն: Իսկ յետ նորա եկեալ Աեւսիանոս ՚ի Պոլին առ կաթողիկոսն՝ տայ ձեռնադրել յեպիսկոպոսութիւն Աւետեաց զՅովհաննէս. և ինքն դադարէ անդէն ՚ի կաթողիկոսարանին: Եւ ոչ դադարէր երբէք ՚ի մեկնելոյ զգրեանսն հին և նոր Աստուածայնոց՝ ապա եղև նմա հակաճառիլ վասն հաւատոյ ընդ երկաբնակ իշխանի միոց, որ էր ասպետն ±այոց՝ Ամբատ Բագրատունի. և զի ոչ էր հմուտ արտաքին փիլիսոփայական արհեստին՝ ոչ հաւանեցաւ իշխանն բանից նորա. այլ անարգեաց զԱեւսիանոս ոգէտ կոչելով և կամէր հալածել զնա: Եղեալ ապա նորա գաղտ ՚ի քաղաքէն և փոխեալ զձեւն՝ գնաց վախճեալ ՚ի Թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս. և բնակեցաւ յանապատի առ ուղղափառ միայնակեցի միոյ որ էր հմուտ արտաքին իմաստից: Եւ ուսեալ անդ զգիր և զբանս հիւղէն և լսեին ազգին՝ վարժէր զցայգ և զցերեկ ՚ի գիրս

[1] Այլ օր. և հասեալ:

և յարհնաւս նոցա ըստ փիլիսոփայական ոճոյն: Լուեալ զայն առաքեալն Ամբառայ՝ ազգ առնէ կայսերն Լևոնի, եթէ չարաբախտ ոմն՝ անարդիչ Թագաւորութեան և հայհոյիչ սուրբ Հաւատոյդ, հալածեալ ի մէնջ բնակի այդր առ այս անուն միայնաւորի. որոյ անունն Մահմանեոս:

Լուեալ կայսերն ցասեաւ յոյժ և հրամայեաց ածել ի դաւռն. զոր և արարին: Ասէ նորա խրատեալ ի միայնակեացէն ասել զինքեանէ, անազգի և օտար և մուրց պատճառաւ եկեալ աստ՝ ի հարցանել կայսերն պատասխանիս զնոյն. յորմէ շնջացաւումն և հրամայեաց Թոդուլ: Ընդ նորա համարձակ բնակեալ ի քաղաքին՝ երթայր ի սուրբն Սոփի և խնդրէր յարկեղէ գրոցն զպիտանին և ընթեռնոյր յարաժամ: Գնացեալ և ՅԸթէնս՝ և անդ վարժեցաւ ամենայն իմաստութ և դարձաւ ի նոյն քաղաք: Եւ ծանօթացեալ մեծ հիւպատոսի միոյ Գաւթի անուն և Թագաւորական սեղանոյն կենաւի՝ նորին ձեռնտուութեամբ Թարգմանէ զգեղեցիկ գիրս սրբոյն Գիոնիսիոսի. և ինքն գնէ զժուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ բան, Թարգմանէ, և զգիրս քաղցրարան Գրիգորի Ախաւացւոյ զբնութեան և զկազմութեան, ծանօթացոյց և պատրիարքին Գերմանեայ. և ի տէրունական ծոման ընթանայր յեկեղեցին և կանգնէր ի ժամ պատարագին. և յաւուր միում հարկեցաւ հաղորդիլ օրինացն և ոչ առ յանձն՝ պատճառելով, եթէ առանց իմոյ պատրիարքին հրամանի ոչ իշխեմ: Ընդ որ զժուարացեալ պատրիարքին՝ բազում հարցևփորձ առնէր ընդ նմա վասն հաւատոյ: Եւ տեսեալ զանպարտելն խմաստութիւնն՝ հիանայր. և գրէր Թուղթ ի ՛ի այս վասն հաւատոյ, որոյ սկիզբն է «Գրիստոս է խաղաղութիւն մեր» և ասէր ցՄահմանեոս կնքեալ իւրով մատանեաւ առնել ի ՛ի այս: Ասէ համբառ խմաստիցն նորա ահաս յականջս կայսեր, որ կոչեալ հարցանէր զնա վասն հաւատոյ. և նորա համարձակեալ ասէ. «ով բարերար ալքայ՝ հրամայեա զի բաց-

ցին արկեղք զրոցն, զի ևս գոանիցեմ անդ դիրս, որ ցուցա-
նեն զորպիսութիւն ուղղափառ հաւատոց». և առ ժամայն
հրամայեցաւ բանալ: Ի նա գտեալ անդ մատեան մի ոսկե-
տուփ սուրբ հարցն վասն ուղղափառ հաւատոց՝ մատոյց ա-
ռաջի թագաւորին. որում յոյժ հաւանեալ խրախացաւ և
ասէ. «դուք ընդ այք զմեզ ունիք հաւատս». և նա ասէ՝ «այո»:
Ասէ կայսրն—«երթ՝ ի ոտն և տես անդ յարկեզս մեծի եկե-
ղեցւոյն եթէ գոանես այլ ևս երիս գիրս որպէս զայդ՝ ապա
զամենայն աշխարհ յայդ կրօնս դարձուցից»: Ի նորա յոյժ
խրախացեալ ընդ իրան՝ առաւաձայնի ի մեծ ուրախութիւն հա-
մարիլով, գնաց՝ ի ոտն և գոանէ անդ այլ ևս երիս մատեա-
նըս համաբանս և միաձայնս ընդ նմին առաջնոցն. որք էին
պաւղոսեանց Ալբրղի և գանձուց, և միւսն Ըթանասի Ըղեքսանդ-
րացւոյ, և միւսն՝ սրբոյ Աթանասիոս ասացեալ: Ընդուել զգանձ-
սըն առաւաձայնի՝ ծանեաւ հոգւովն, զի ոչ լինէր խորհուրդ
թագաւորին, ոչ գառնայր անդրէն. այլ նաւեալ՝ ի ոտն՝
անցանէ ընդ անհուն ասպարէզս լայնածիր գոգոյ աշխարհա-
մած ծովուն ովկիանոսական և հասանէ՝ ի գուբին. տեսանէ
ապա զաշխարհն աւերեալ և ապականեալ՝ ի ցամաքաց, և բար-
ձեալ զամենայն իշխանան ոտից, զորս սպրեալ էին՝ ի նախ-
ճաւանի՝ ոգիք իրրև ութ հարիւր, և ցնծացեալ միայն սին-
լիքորքն: Ի էր կաթողիկոսն ոտից նրանելին Յովհան օձ-
նեցին սրբեալ զաշխարհս յաղանդոյն Աղբայ և ինքն վախճա-
նեալ և գաւիթ նստեալ՝ ի տեղին, այն որ յԱրտաճնա եղ
զաթոռն կաթողիկոսութեան:

Ա՛ատոյց առաջի նորա զգրեանսն և զերկուքին գերմանո-
սի, ընդ որ յոյժ սիրացեալ կաթողիկոսին՝ անտանելի ընդոյր
ինդութեամբ և առաւել քան զառաւել պատուէր և փառաւո-
րեր զսուրբն Սահակնոս: Ի հրամայեաց նմա գրել պատաս-
խանի թղթոյն զոր ինքն երեր. զոր և գրեաց յոյժ զարմացու-
ցիչ բանիւք և արար լուծումն բան առ բան թղթոյն պախա-

բակելով զկրսեր և տպէտ իմնցուածս նոցա. որ ունի օրինակ զայս «զԲրիտաս խաղաղութիւնն բերելով»: Յայնմ ժամանակի վախճանեալ էր եպիսկոպոսն Միւնեաց Յովհան, և էր իշխան Միւնեաց Խարգէն և Ռուդ[1], որք եկեալ առ կաթողիկոսն Դաւիթ՝ խնդրեն ի նմանէ զմեծ իմաստասէրն, զվանականն Առաքաննոս, որ էր սուրբ հրեղէն ի ձեռին ամենասուրբ Հոգւոյն: Եւ ձեռնադրեալ կաթողիկոսին զնա յաթոռ վեհապետութեան Միւնեաց վասն մեծի երախտեացն առաւել պատուէ, զնա և կացուցանէ զլուխ եպիսկոպոսաց, և զաթոռն Միւնեաց՝ զլուխ ամենայն աթոռոց: Եսեն ոմանք եթէ Միւնեացն յեօթներորդ դասուն էր եպիսկոպոսաց Հայոց, այժմ յերրորդ դասուն կարգեցին. բայց մի հաւանիլը, զի Եզուանիցն միայն էր ի վեր քան զՄիւնեացն վասն արքեպիսկոպոսութեան. իսկ Միւնեաց վասն վեհապետութեան զեր ի վերոյ էր քան զամենայն եպիսկոպոսան Հայոց, զի այլ ոք ոչ ունէր զվեհապետութեան պատիւն. և որքան պատրիարքն քան զարքեպիսկոպոսն է զեր ի վերոյ և արքեպիսկոպոսն՝ քան զվեհապետսն, այնքան վեհապետսն քան զեպիսկոպոսն, զի նա ձեռնադրէ զեպիսկոպոսս:

Ընդառնալ Առաքաննոսի զվեհապետութիւնն՝ գնաց ի վիճակն. և առաջացեալ օրինաւք խրատէր և ուսուցանէր, որպէս սուրբ հաստատէր զախտացեալսն, որպէս բժիշկ իմաստուն բժշկէր զվերսւորսն, որպէս աղ ընտիր համեմէր զանհամեսն, որպէս արեգակն պայծառ լուսաւորէր զհեռաւորեսն, ազդոյն ի Բրիտաս կամէն ջամբեցուցանէր որպէս ճնող, կատարելոցն զկատարեալ կերակուրն մատուցանէր որպէս անառակ հաստատիմ: Ունկնեաց և զրեանս բազումս՝ զԸրատաճքն, զՅոբն, զԵզեկիէլն և զայլս բազումս. որոյ բանքն նշանաւոր ի մէջ այլոց

---

[1] Ալ. օր. Բաբգէն և Ռուդ. երկրորդ բառս այս ազճաւակալ է, յորմէ առիս գՆազարէթ յայսմ առիթս Փարիզեան ազգագրին, որ ունի «Բաբգէն և Ռուդ, որ էր եպս. . . .

մեկնացան փայլեն որպէս ջահ պայծառ։ Ելեալ և ճառս յո-
լովս, բաժանեաց և զումն ձայնան, և կարգեաց շարեաց
զՅարութեան օրհնութիւնն. երգեաց կցորդս քաղցրահամս,
յարմարեաց զառաջոդիս յինանց եօթն եղանակօք յոյժ խոր-
հրդաւոր և զպահոցն որ յաղուհացան երգի, և մեկնեաց զխոր-
հուրդ գիշերային պաշտամանն։

Այլ սորա քոյրմի՝ ի մանկութենէ սուացեալ զվարս կուսու-
թեան և առանձնացեալ ի ձորակին Գառնւոյ յայլի միոջ,
և անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին, որոյ անուն Ա-
հակադուխտ։ Ա՛ս յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին,
որ և ի նոքին վարագուրի նստեալ ուսուցանէր զերաղումն։
Եւ սրաբ կցորդս և մեղեդիս քաղցր եղանակաւ[1], յորոց մին՝
«ԱՐԲԱՀԱՆ Ա՛ՐԻՄ», որ իւրով անուամբն է յօրինեալ։ Եւ
անդրէն ի նմին վախճանեալ գնի ի հանգստի, յորմէ բազում
բժշկութիւնք լինէին։ Եակ երանելին Սահմանոս կացեալ ի-
պիսկոպոսութեան ամ մի, զոր ոմանք ութ ամ ասեն, շրջէր
յամենայնի ի մէջ երկոտասան գաւառաց մեծամեծաց գաւա-
զանի իւրոյ և քարոզէր զբանն ճշմարտութեան։ Որ և հան-
դիպեալ սորա սակս հոգևոր հարկին՝ ի գաւառս բարիլից ի
ձորն Եղեգեաց յաւանն Ա՛ոզան, յորում բնակեալ էր կին մի
սեղեխ արբեալ յիմարութեան ախտիւն, զոր յառաջ քան
զայն երից անգամ զգուշացուցեալ էր գնա ըստ Տեառն հրա-
մանի, և ոչ էր զղջացեալ, վասն որոյ յայն անգամին սաստիկ
ցասուցեալ սրբոյն և վճիռ հատեալ մեծ պատուհասի՝ ելանէ
ի գեղջէն, և վասն օրհնաժամուն գնայ յայլն քաղցրահամ
աղբերն, զոր Ե՛ւագ անկն կոչէին, զովանալ ի նմա. և հրամայէ
հարսւոյ զերծանն իւր և ինքն ի վերայ ուռոյ միոյ գնէ գնա-
հիձան հանգստեան։ Եւ ելեալ առանձինն աղօթէ ժամս յո-
լովս և ննջէ ի վերայ նորա։

Եակ կինն հերաւուկ շարժեալ ի կառաղն բոյոց ցանկու-

[1] Ա՛յլ օր. Ա՛ղխէր տայր Եղանակ։

թեանն՝ առնու ընդ իւր զհոմանին իւր և զայ սպանանել ըզսուրբն, զի հանարձակ լեցին՝ ի գործն: Եւ մերձեալ՝ ի ծառն՝ հանէ՝ի վեր զայրն, եդեալ զսուրն՝ ի ձեռն, զի սպանցէ զսուրբըն: Եղեալ առնն տեսանէր զսուրբն նիզեալ, և իբր զլոց ցոլանայր շունչն՝ ի վեր և ձախր առեալ դառնայր անդրէն. և հրեշտակ մի կացեալ՝ ի տեսան հովանի ունէր նմա թևօքն: Տեսեալ զայն առնն կարկեալ թուլանայր, և ամենայն յօդուածքն խաղայր, շարժէր, դողայր մեծաւ սոսկմամբ: Եւ այնչափ ուշաբերէր՝ մինչ անդրէն իջանէր՝ ի ծառոյն և պատմէր կնոջն: Ապա կրկին յորդորէր կինն և սադրէր քաղցր բանիւք պռոնկութեան և քաջալերեալ անդրէն յուղարկէր: Եւ նորա հրաշափառագոյն իմն տեսեալ տեսիլ քան զառաջինն՝ սաստկապէս և թուլանայր և անզգայ մնալով իբր մեռեալ անկանէր՝ ի ծառոյն: Ապա կիրն մինչ հասս յանհնարին պատուհաս ըմբռնեալ զայրն, փոխանակ զղջման առաւել և զբարկանալ, և սրեալ՝ ի բանտարկուէն՝ առեալ զսուրն հոլանեալ եկանէր՝ ի ծառն. և հարեալ զսուրն՝ ի փողն սրբոյն՝ հեղոյր զարիւնն ամբիծ՝ ի վերայ փայտեղէն մահճին, որպէս զԱեառն իւրոյ՝ ի վերայ փայտեղէն դործարանին մահու, սակս սատակիկ նախանձուն սատուածային օրինացն որպէս զ՚Եղեառն և զՅովհաննէսն. յորոց մին քառասուն օր փախստական լինէր՝ ի Յերզարկ կնոջէն Եբսաբու, և միւսն գլխատեալ՝ ի դատերէ՚ի բովղիադայ:

Ապա յառաւօտուն խնդացեալ պաշտօնէիցն՝ բազում ոգբովք բարձին զնշխարս սրբոյն, տանէին՝ ի սուրբ մենաստանն՝ ի լեառնն կոչեցեալ Սիոն, որ պայծառանայր ձգնաւորս արամբք յայնմ ժամանակի քան զՍինայն և զԿիւթայն Աղեքսոս: Զոր լուեալ՝ Երկազան գիւղն տերամբ խրնանց ելին ընդառաջ [1], և հաւանեցուցին զսպասաւորսն հանդուցանել՝ ի սե-

---

[1] Այլ օր. զոր լուեալ Երկազան գիւղն տերամբ խրնանց ելին ընդ առաջ:

նեկին, որ յանուն սրբոյն Գրիգորի՝ անցաղէմ զօրավարին, շինեալ էր. զոր տարեալ անդէն Հանդուցին ի սենեկին: Եւ հրամանեալ ձգնաւորն Աստուծոյ Նու, որ էր բազում ամօք բնակեալ ի սուրբ լեառն Սիոն և հրեշտակացեալ ամենայն վարուք, տեսանէր ի տեսլեան յայնմ առաւօտու զերկինս բացեալ և զհոյլս հրեշտակաց, զի եկանէին դունդ դունդ ընդ առաջ սրբոյն Սահակայ. և փարեալ զմարքս և արիւնաներկ ոգւով նորա՝ գոչէին մեծաձայն. «Ծառայ բարի և հաւատարիմ՝ եկ, մուտ յուրախութիւն Տեառն քո». և այնպէս մեծամեծ գովասանութեամբ տարեալ հասուցանէին առաջի ահեղ աթոռոյ Աստուածութեանն, յորոց վերայ մարմնաւոր տեսլեամբ նստեր Գրիգոր՝ որդին Աստուծոյ:

Ապա երկրպագեալ սրբոյն և ապիտակ նախորդամբն, զոր ունէր ծրարեալ զգոզն լի արեամբ, զոր մատուցեալ առաջի Տեառն ասէր. «քո է վերէժ խնդրութիւն և արդար իրաւունք». և այնպէս համբուրեալ առաքելոցն և հայրապետացն տարեալ հանդուցին ի կայանս իւրեանց մինչև յօրն հատուցման: Ձեսնեալ զայն սրբոյն Նուի և խնացեալ զվեհան՝ ժողովեալ զմիանձանցն հոյլս՝ դիմեաց ի լեռնէն առ սուրբն և մեծամեծ ողբով և կականալիր աղաղակաւ պատմէր զտեսիլն և զդէպ բարկութիւնն Աստուծոյ ի վերայ գաւառին, և հայցէր զգուշանալ և հնարել ապօթիւք զհաշտութիւնն Աստուծոյ: Ապա յանկարծակի եհաս ի վերուստ պատուհաս Տեառն և կալաւ խաւար շօշափելի զգաւառն ամենայն զաւուրս քառասուն՝ և շարժումն և դղրդումն առատիկ. զի եռայր երկիրն ահեղ գոլգամամբ յանդնդոց և բարձրանայր մինչև ի վեր և անդէն իբր զալիս ծովու փլուզանիւր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց քակէին. առուք և ապարանք գետեցիկք լինէին գերեզմանք բնակչաց. աղբիւրք խցէին, գետք կորնչէին, և ամենայն տեղի երերէր տատանմամբ, և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի նեղբուստ յանդնդոց և ի վերուստ յօդոց «վայ ձոր,

վայ ձոր». և կենդանուին ընկղմեցան ոգիք իբրև 10,000, զորս գիտեին և ՚ի թիւ արկին. և զանճանօթիցն ոչ ոք գիտեր ըզհամարն, յաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին Վայոց ձոր:

Յակ յետ քառասուն աւուր պատուհասին գադարեցաւ բարկութիւնն Աստուծոյ ՚ի վերուստ, և ժողովեալ մնացորդք գաւառին կոչեն զկաթողիկոսն և առնեն ժողով վանականաց. և բազում աւուրս ցայգապաշտօն կատարեալ՝ փոխեն զնշխարս սրբոյն ՚ի միաբանակեաց վանէն Թանահատից[1], ոգք էին մշտապաշտօնք՝ հեռացեալք յամենայն փափուկ կեցակերոց, վանն որոյ և Թանահատ կոչեցան: Եւ շինեալ ՚ի վերայ փոքրիկ մատուռն մի, զոր յետոյ յ728 թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբէթայարկ գեղեցիկ յօրինուածովք և եդին զտապան սրբոյն ՚ի հիմն նորա:

Եւ էր կատարումն սրբոյն Մեսրոպայ ՚ի թուականութեան Հայոց 184, ՚ի Հրոտից 15 և ՚ի յունիսի 21, յաւուր յիշատակի սրբոցն Մարգարտայ և Միմոնի աղքատաշէնն: Յակ կին տիրասէր անագան ուրումն եկեալ ՚ի տաւորութիւն՝ մերկացեալ զհանդերձն և առեալ քարինս՝ ծեծէր ըզկուրծսն. և այնքան բաղխէր զի իջանէր վտակ արեանց, և մեծ ողովք և դառն աղաղակաւ ձչէր և խայտառակէր գչար գործսն իւր: Եւ եկեալ հանդէպ վանացն յարևմուտս կոյս, յայնկոյս ձորակին փորեալ զտեղին, և թաղեալ զանձն մինչ յբերանն զամառն և զձմեռն՝ տապակէզ և ցրտահար լինելով վայէր և ողբայր զբայդ և զկերիկ և զմեղս իւր խոստովանէր: Յաղագս որոյ շարժեալ ՚ի գութ Հայրապետին՝ խնդրէր ՚ի Տէառնէ ողորմութիւն նորա: Եւ յաւուր միում ՚ի ժամ պատարագին կանգնէր գոչիւն ահեղ ՚ի տապանէ սրբոյն. «Թողեալ լեցին քեզ մեղք քո, ով կին դու»: Եւ լուեալ ամենեցուն՝ փառս և գոհութիւն Աստուծոյ մեծի մարդասիրութեանն և

---

[1] Ընդօր. ՚ի գաբռանակից վանն Թանահատից վանից:

անչիշատակ բարկութեանն մեռուցանէին: Այլոց կիներէն պէտ էտո զԹողութիւնն, ոչ եւ ի տեղւոյն. այլ կացեալ ի նմին՝ վախճանեցաւ եւ թաղեցաւ յապաշխարութեան դրբին իւր եւ կայ հանդիպ վանացն: Եւ այնպիսի մեծ մարդասիրութեանն գոհութիւն եւ փառք անհատ եւ անվճար յամենայն եղական բնութեանց այժմ եւ յանվախճան յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ Լ

Տեսիլ սրբոյն Մեթոդէ՝ եպիսկոպոսին Պատարայ եւ վկայի, յաղթութեան, նեղիչէն եւ պատռնէացն, ասացուածի յԱստուածաշունչ գրոց, զոր ետրմռնեալ է պետրոս Սիեփաննոսէ՝ սկսնեաց եպիսկոպոսէ:

Ի վերջնում դարի արմատաքի խլեցի թագաւորութիւնն Պարսից: Եղեկ զօրականն Իսմայելի յանապատէն Էթրիբայ, եւ ժողովեցեալ զԴաբաւոն. անդ լեցի ասացեալն ի մարգարէէն Եզեկիէլէ «կոչեաց զգազանս անապատի եւ զԹռչունս երկնից եւ հրաւիրեաց զնոսա՝ ժողովեցարուք եւ եկայք զի զնուագն մեծ զնոցի ձեզ: Կերայք, կերայք զմարմին հզօրաց եւ արբէք զարիւն սպայից»: Զայս Դաբաւոն ի Դաբեթ անկցին զօրաւորք Իսմայելացոց յորդւոց Իսմայելի, զոր օրինակ նոքա ապանէին զզօրաւորսն Էրրայեցւոց եւ Պարսից: Դանդէ սրտմտութեամբ եւ բարկութեամբ առաքեցէ յերկիր ի վերայ մարդկան եւ անասնոց եւ գազանաց անտառի ի մանկոց եւ ամենայն պղծարեր տեսակի. եւ եղիցի գալուստ նոցա խրատ անողորմ: Եւ երթիցեն առաջի նոցա հարուածք չորք՝ կոտծանումն, կոխումն, սպականութիւն եւ աւերումն: Ասաց Տ՛ովսէս ցորդիսն Իսրայելի՝ ոչ զի սիրէ զձեզ Տէր Աստուած առնել յերկիրն աւերակաց ժառանգել զնա, այլ վասն անօրէնութեան բնակչաց նորա:

Ընդպէս և զորդիսն Յովհաննէի ոչ զի սիրէ զնոսա Տէր Աստուած, այլ զօրութիւն առնել զերկիւղս քրիստոնէից. այլ վասն անօրէնութեանն որ լինի. և վասնզ այսպիսի ոչ եղև նոցա և ոչ այլ լինիցի երբէք: Վասնզի զգենուին զրկք հանդերձս շնացողաց և որպէս կանայք պոռնիկք զարդարէին զանձինս իւրեանց. նոյնպէս և կանայք կային՝ ի փողոցս և՝ ի հրապարակս քաղաքաց յանդիման՝ և փոխանակէին զբնական պէտս յանբնականն, որպէս ասէ առաքեալն առ աբիանն: Եւ մնաննէին առ մի կին հայր և որդի համանգամայն և առնէին բայր և ազգային առ հասարակ. վասն վորոյ և իմաստունն Պօղոս նախ քան զժամանակն ազդակեաց առնով. վասն այնորիկ մնաննացս զնոսա յախտ անպատուութեան գործել զանարժանս, զի էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս, նոյնպէս և արուացն թողեալ զբնական պէտս իգութեանն՝ բորբոքեցան ցանկութեամբ՝ ի միմեանս, արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին. որ պարտ էր մոլորութեան նոցա՝ յանձինս նոցա ընդունէին:

Ընդ վասն այսորիկ մնաննացս զնոսա Աստուած՝ ի ձեռս բարբարոսաց, յորոց անկցին՝ ի մեղս և՝ ի ժահահոտութիւն և պղծեացին կանայք նոցա՝ ի պղծոց, և արկցին վիճակս՝ ի վերայ նոցա որդիքն Յակոբայ: Եւ մնաննացին Պարսք յապստամբութիւն և՝ ի սուր անկցի Սապատովկիա[1] և յաւերումն և բնաւին՝ ի գերութիւն. Արկիլեա եղիցի անապատ և բնակիչք նորա (վարեացին) ՝ի գերութիւն և՝ ի սպանումն: Եղիցի Յուդայ յապստամբութիւն և՝ ի գերութիւն, ՚ոռոմք՝ ի փախուստ դարձցին և կղզիք ծովու՝ յաւերումն, և բնակիչք նորա սրով և գերութեամբ կորիցեն: ՚Այք՝ ի փախուստ դարձցին և բնակիչք նորա՝ ի գերութիւն: Եգիպտոս և Լիբիկք և Աւրևաստան ընդ լծով և ընդ նեղութեամբ անկցին, ծա-

[1] Այլ օր. և՝ ի ---- Նոյն Կոպտիա:

ուսեցուսցին անխնայաբար և պահանջեսցին զանձինս նոցա[1] *կշիռ՝ ի վեր քան զզօրութիւն նոցա, և եղեցին յանձկութեան և՝ ի նեղութեան առաւել քան զօրս՝ ի գերութեան: Եւ լցցի երկիրն աւեհաց մարդով՝ ի չորից հողմոց երկնից, որպէս մածրախոյ բազմութեամբ: Եւ եղեցի՝ ի նոսա ապականութիւն և սով և բարձրացի՝ ի սիրտ սատակչաց նոցա և յամբարտաւանութիւն ամբարձցին՝ ի վեր քան զարժանն մինչև ցսահմանեալ իւրեանց ժամանակ: Եւ կացցին մինչ ցելս հիւսիսոյ, մինչև ցարևմուտս, եղեցին ամենեքեան ընդ լծով նոցա՝ մարդ և անասուն և թռչունք, և ջուրք ծովուն լուիցեն նոցա և անապատք գառապկացեալք՝ ի բնակչաց նոցա՝ եղեցին յանձկութեան և՝ ի նեղութեան առաւել քան զօրս՝ ի գերութեան: Եւ իւրեանց զրնացեն զլերինս և զձկունս ծովու և զխայտ անասուն և զհող երկրի. և քարինք անպտուղք և երկք և քրքտունք երկրագործաց և ամենայն շահմարանք նոցա եղեցին. և բարձրացի սիրտ նոցա պահանջել զմեռեալս ըստ հաւատոյ թեան կենդանեաց, որբոց և այրեաց ոչ ողորմեացին, զանանկն և զազքատն անարգեացին և զամենայն ծեր խոովեցուսցին և ոչ գթասցին՝ ի տանկս. և անզգայ այսն արասցին և ծիծաղեսցին զնոքօք, որք խնամատութեամբն են պայծառացեալք. և ամենեքին լռութեամբ ըմբռնեսցին և ոչ կարասցին յանդիմանել կամ շշնջել ինչ. այլ եղեցին ամենեքեան յահէն զարհուրեալ՝ և խրատ նոցա չարաչար. և ոչ ոք իցէ, որ կարիցէ այլայլել կամ պարտաւել զբանս նոցա: Եւ եղեցի ճանապարհ նոցա՝ ի ծովէ մինչև՝ ի ծով, յարևելից մինչև յարեւմուտս, ՝ի հիւսիսոյ մինչև յանապատն. և կոչեսցի ճանապարհ նոցա անձկութիւն:*

Եւ գնասցին ընդ նա ծերք և պառաւունք, տնանկք և մեծամեծք, քաղցեալք և ծարաւեալք և կապեալք՝ երանելով

---

[1] Այլ օր. պահանջեսցին յանձինս նոցա:

զՀեռեալս. քանզի առացեալն յառաքելոյ Խրատս ապստամբութեան՝ այս է: Վասնզի ասէ, Թէ ոչ եկեսցէ նախ ապստամբութիւնն և յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան. արդ ապստամբութիւն խրատ է: Եւ վասն զի էշ վայրի կոչեաց Ասուածծ զԻսմայէլ, վասն այսորիկ և իշամայրիք և այծեմուկք անապատի և ամենայն անասունք գազանաց ձևոնընդդէմ[1] եղեցին և ընտանեացին. սովեցին և ապականեցին և հալածեացին մարդիկ և գազանք աստանկեցին, և կոտորեցին ամենայն փայտք անտառի և գեղեցկութիւն լերանց ապականեցի. և աւերեցին քաղաքք և եղեցին սահմանք նոցա անկոխք, զի պակասեցին մարդիկ. և պղծեացի երկիր արեամբ և արգելցի զպտուղ իւր, քանզի որ բռնապէս ունին զիտոտա՝ չեն մարդիկ, այլ բարբարոսք և որդիք անապատի. և յանապատացուցանել եկեսցեն, ապականեալք և յապականեալ առաքեսցեն և ծայրիւ սրոյ իւրեանց հարցեն զյղիս և՝ ի գրկաց մերոց յափշտակեսցեն զմանկունս և հարցեն զգեանսի՝ և եղեցին՝ ի կերակուր գազանաց:

Եւ զքահանայն՝ ի նեղքս՝ ի սրբութիւնս ապանցեն և նըմնջեսցեն ընդ կանայս նոցա՝ ի տան սրբութեան, ուրանօր ասուածծայինն խորհրդականութիւնն մատչէր. և զպատմուճան սրբութեան ապատու զգեցցեն կանայք նոցա և որդիք նոցա և դաստիք նոցա և դիցեն զայն՝ ի վերայ երիվարաց իւրեանց. և կապեսցեն զդրատս իւրեանց՝ ի հանգստարանս սրբոցն. և և՝ զեցեն ապաեղք և ապականիչք իբրև հուր փորձիչ ազգի քրիստոնէից, քանզի ասէ սրբազան առաքեալն. «ոչ ամենեքեան, որ յԻսրայէլէն են՝ Իսրայէլացիք են»: Ապա ուրեմն ոչ ամենեքեան քրիստոնեայք են, որպէս ասէ գիր, եօթն հազար ապրեցան յորդւոցն Իսրայելի, որք ոչ կրկնեցին ծունր Բահաղու՝ և ամենայն Իսրայէլ ապրեցաւ՝ ի ձեռաց նոցա: Եւ յայսպէս

---

[1] Այլ օր. յհոնգիւք եղեցին:

և ՚ի ժամանակի ապստամբութեան և խրատու որդւոցն Իսմայելի սակաւ գոցին ձշմարիտ քրիստոնեայք, որպէս և ինքն Փրկիչն ասէր ՚ի սուրբ աւետարանին ասէ. «արդեօք և Որդի մարդոյ եկեալ՝ գոցէ՞ հաւատս յերկրի»: Նուազեցին ՚ի ժամանակին յայնմիկ հոգին և բազումք ուրացան զձշմարտութիւն և զկենարար խաչն և զսուրբ խորհուրդն և առանց բրոնութեան չարչարանաց ուրացին զԱրիստոս և երթիցեն զհետ ապստամբացն. քանզի յառաջագոյն աստուածային առաքեալն քարոզեաց ասելով, թէ ՚ի ժամանակս յետինս ապրստամբեսցին մարդիկ ՚ի հաւատոցն առ ունայն հոգի մոլորութեան և ՚ի վարդապետութիւն դիւաց, ՚ի կեղծաւորութիւն սատանայից՝ տեալք խրւեանց խղճի մտաց:

Եւ դարձեալ նոյն ինքն՝ «յառուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք. զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, անմիտք, անագորոյնք, մատնիչք, յանդգնունք, անժոյժք, վէպք, անբարեսէրք, որք ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, և ՚ի զօրութենէ նորա ուրացողք»: Եւ ամենայն սկզբնք հաւատով ՚ի խրատուն յայնմիկ յայտնեացին, և ինքեանք զինքեանս որոշեացին ՚ի սրբոց և կեղեցեաց իւրեանց յօժարութեամբ. նոյն ժամանակին կոչեաց ինոսա ՚ի մոլորութիւն, քանզի խոնարհամիտք և լռինք, ճշմարիտ քրիստոնեայք և ազատք տանն Աստուծոյ՝ և ոչ իմաստունքն և ընտիրքն, ոչ խնդրեցին ՚ի ժամանակին յայնմիկ զճշմարտութիւնն. այլ փոխանակ նորա խնդրեցին ինքնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, յոխշտակողք, սրբիցողք, պոռնիկք, շունք, անողորմք, գողք, ապստամբք, անագորոյնք, բանսարկուք, անժոյժք, վէպք, մատնիչք, հերպարտք, ցանկասէրք, ծաւայաբարբուք, որք ունին զկերպարան բարեպաշտութեան և ՚ի զօրութենէ նորա ուրացողք: Եւյայնմիկ եղեցին ապստամբք աւուրցն այնոցիկ, և զամե-

նայն զոր ինչ և հրամայեաց նոցա՝ խնդութեամբ կատարեցին։ Եւ երկիւղածն ի Տեառնէ յոչինչ համարեցաւ առաջի նոցա։

Եւ եղեցին մարդիկ ի խրատու որդւոցն Ամայելի ի կարիս՝ մինչև անյուսալի մնայ իւրեանց. և բարձին պատիւ քահանայից և պահասեալ պաշտօն ի տան Աստուծոյ և լուեցին ամենայն պատարագք եկեղեցւոյ, և եղեցին քահանայքն որպէս ժողովուրդն։ Եւ եղեցի, յորժամ լցաւ ժամանակ նեղութեան նոցա՝ բաղմացաւ նեղութիւն մարդոյ և անասնոյ, և ապականեացին մարդիկ և անկցին յերկիր։ Եւ յառնէր այլ միւս ևս հարուած մարդկան՝ ննջեացէ այլ յերկորին և յաբուցեալ ընդ առաւօտն զոգէ առ դուրս իւր պահանջող ոսկւոյ և արծաթոյ. և մնաւցի ամենայն տուրեատ ոսկւոյ և արծաթոյ, և վաճառեացին զամենայն սիրառնիս իւրեանց.— յայնմ ժամանակի վաճառեացին մարդիկ զորդիս իւրեանց։ Ընդ ևի աղաղաւ, ասեն, անառես առնիցէ Աստուած զհաւատացեալս՝ կրկ նեղութիւնս.— զի երևեացին հաւատացեալքն և անհաւատքն, և որոշեացի որոմն ի ցորենոյ, վասն զի հուր փորձիչ է ժամանակն այն և երկայնամիտ Աստուած, զի երևեացին ընտրեալքն. ըստ որում ասէ. «երանեի է ձեզ յորժամ նախատիցեն և չարչարիցեն և ատացեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ, ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս»։

Իսկ ի յետին նեղութեան որդւոցն Ամայելի, ի վասն զի մարդկան և ի չունելն յոյս փրկութեան ի ձեռաց որդւոցն Ամայելի, յայնժամ յանկարծակի յարիցէ ի վերայ նորաթափառութեան Յունաց սրտմտութեամբ մեծաւ, և զարթիցէ որպէս այր ի քնոյ, զոր համարէին մարդիկ մեռեալ և յոչ ինչ պէտս։ Սա ելցէ ի վերայ նոցա ի ծովէն Աթոսեպացւոց և արիցէ սուր և աւերումն յաթիրս աշխարհն նոցա, և գերեացէ զկանայս և զմանկունս նոցա։ Եւ ի բնակիչս երկրին իջցեն որդիք

թագաւորին սրով և հարցին զնոսա և ասացին ՚ի վերայ նոցա ահ, քանզի ամենայն բանակք նոցա տացին ՚ի ձեռս թագաւորին Հռոմոց. և եղեցի լուծ թագաւորին ՚ի վերայ նոցա հօթնապատիկ քան զոր էր լուծ նոցա ՚ի վերայ նոցա[1]: Եւ հասցէ ՚ի վերայ նոցա անձկութիւն, քաղց և ծարաւ և նեղութիւն. և եղեցին ծառայք ինքեանք և կանայք և որդիք նոցա ծառայեացին որոց ծառայեցին նոցա. և եղեցին ՚ի ծառայութեան նոցա չարչարոյն և դառնագոյն Հարիւրապատիկ. և խաղաղացի երկիրն աւերեալ ՚ի նոցանէ: Եւ ելլեն իւրաքանչիւր ոք յերկիր իւր և ՚ի ժառանգութիւն իւր՝ Հայք, Վրկիկիա, Խաւրիա[2], Ասփրիկէ, Գաղատ, Աիկիլիա. և ճնացեալքն ՚ի գերութենէ մի՛ ելլեն յաշխարհացն իւրեանց երկիր—բազմացին յերկրին որպէս մարախ: Եւ աւերեցի Բաբիլա և ծովեզերք խաղաղացին և բորբոքեցի բարկութիւն և սրտմտութիւն թագաւորին Հռոմոց ՚ի վերայ ուրացողաց զՏէր մեր Յիսուս Քրիստոս:

Եւ եղեցի խաղաղութիւն մեծ, որպիսի ոչ եղև և ոչ եղիցի. զի ՚ի յեսայիա և ՚ի վախճանի եղեցի ուրախութիւն յերկրի[3], և շինեացին զքաղաքս և ազատեացին զքահանայս ՚ի վտանգէ նոցա. և հանդիցին մարդիկ ՚ի ժամանակին յայնմիկ ՚ի նեղութենէ իւրեանց: Այս է խաղաղութիւնն զոր առաւաձայինն առաքեալն անուանեաց, եթէ յորժամ ասիցեն խաղաղութիւն և շինութիւն և ուրախութիւն, յայնժամ յանկարծակի ՚ի վերայ նոցա սատակումն (եկեսցէ): Եւ զարձեալ Տէրն յաւետարանն ասէ, եթէ որպէս յաւուրսն Նոյի ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, այնպէս եղեցի և յաւուրն յետնում: Եւ յայնմ խաղաղութեան նոս-

---

[1] Այլ օր. և եղեցի լուծ ինքեանց ՚ի վերայ նոցա և հասցէ ՚ի վերայ նոցա անձկութիւն: — [2] Այլ օր. Աւրիա: — [3] Այլ օր. ՚ի վախճանի եղեցին յերկինս ուրախութիւն:

ացին մարդիկ խնդութեամբ յուսալ և յլմտիլ, ՚ի ցնծալ և ուրախ լինել, շինել շինուածս որպէս զի ոչ գոլ նոցա երկիւղ կամ հոգ։

Յայնժամ ըստ մարգարէութեանն Եզեկիելի որ ասէ, եթէ յառնեսցի ՚ի վախճանի աշխարհիս ելցեն Գոգ և Մագոգ յերկիրն Իսրայելի, — բացցին դրունք հիւսիսոյ և ելցէ զօրութիւն ազգացն, զորս արգել Ղևքսանդր ՚ի ծագս հիւսիսոյ՝ Գոգ և Մագոգ, Ենիգ և Ենիգ, Ելբազ, Գվիտոր, Փորինացիք, Ղրենացիք, Հոնք, Փարղևացիք, Վևկղևնացիք, Սարմատք, Թևթղեացիք, Ասմեատացիք, Կաքոնացիք, Ամազարդք, Գասմոդացիքն մարդակերք, Թարսիացիք, Ելանք, Փասկղենկացիք, Երգնեացիք, Աստառէացիք.— այսոքիկ քան և երկու թագաւորութիւն են՝ արգելեալք ընդ դրամբք, զոր կանգնեաց Ղևքսանդր։ Եւ տեսցեն մարդիկ և զարհուրեսցին և փախիցեն և թաքիցեն ՚ի լերինս և յայրս և ՚ի գերեզմանս. և աստակիւցին բազումք, և ոչ ոք իցէ որ կարիցէ թաղել, քանզի ազգքն՝ որ եկանեն ՚ի հիւսիսոյ, ուտեն զմարմինս և ըմպեն զարիւնս գազանաց, ձիոյսպէս և գամէնայն պիղծ և զկարիճս, զողուն և զմեռելոսս, զվիժածս կանանց. զենցեն զմանկունս և տացեն ուտել մարդ իւրեանց։

Եւ ապականեսցեն զերկիր և ոչ ոք իցէ որ կարիցէ կալ առաջի նոցա։ Եւ յետ եօթն և կիսոյ ամաց հասցեն ՚ի քաղաքն Յոպպէ։ Եւ աքեսցէ Տէր զզօրաւոր իւր և հարցէ զնոսա ՚ի վայրկենէջ միում։ Եւ յետ այնպիսիկ իջցէ թագաւորն Յունաց, և բնակեսցէ Երուսաղէմ եօթն և կէս, որք են ամք տասն և կէս։ Եւ ՚ի կատարել ամացն տասանց և կիսոց եւ բևեսցի որպէս կոտառեան։ Ան ծնցի ՚ի Վորազին և անցի ՚ի Ռհեթսայիդայ և թագաւորեսցէ ՚ի Կափառնայում. և ուրախասցի Վորազին, զի ՚ի նմա ծնաւ և Ռհեթսայիդայ՝ զի ՚ի նմա անաւ, և Կափառնայում, զի ՚ի նմա թագաւորեաց։ Ա՛ան այսպիսիկ և յաւետարանն Տէրն երիցս վայ տայ ասելով. «վայ

քեզ Պետրոսին և Պետրոսայիդայ, և դու Կափառնայում մին-
չև յերկինս բարձրացար, մինչև ի դժոխս իջցես»:

Եւ յորժամ երեսուն որդին կորստեան՝ եղեկ Թագաւորն Յունաց ի Գագաթիան տեղին, ուրանօր կանդնեցաւ կենա-
րար փայտ խաչին, յորում բևեռեցաւ Տէրն մեր Աստուած և զկամաւորն վասն մեր կրեաց զմահ: Եւ առեկ Թագաւորն Յունաց զպատկին իւր և դիպեկ ի վերայ խաչին և տապածեսցէ զձեռս իւր յերկիրս՝ և տացէ զԹագաւորութիւն իւր ի ձեռս Աստուծոյ և ՟օր. և հանրարձկի խաչն յերկինս հանդերձ Թա-
գիւն, վասն զի խաչն՝ յորում բևեռեցաւ (Տէր) վասն հա-
ւատացելոց առնելոցն փրկութեան, նա հանդերձեսցի[1] երեք ի գալստեան նորա ի յանդիմանութիւն անհաւատից: Եւ առանդեսցէ Թագաւորն Յունաց զՀոգի իւր, և յայնժամ խափանեսցին իշխանութիւնք և պետութիւնք. և լցի մար-
գարէութիւնն Դաւթի, որ ասէ. «լերինք ցնծացեն առաջի Տեառն, զի գայ և գայ նա ի դատել զերկիր»:

Երդ որդին կորստեան ի ցեղէն Դանայ է՝ ըստ մարգարէ-
ութեան Նահապետին Յակոբայ, օձ դարանակալ ի ճանա-
պարհի նստեալ սպասելով խածանել զդարշապար երիվարի և ընկենուլ զՀեծեալն յետս՝ ճեպով փրկութեան Տեառն: Երդ հեծեալ է ձշմարտութիւն և արքայութիւն սրդարոց. իսկ զբ-
ղեպաբն են սուրբքն ի ժամանակին յայնմիկ հեծեալ յերիվար ճշմարիտ հաւատոյն խածցին յօձէն, յորդւոյն կորստեան ի զարշապարի յաւուրն յետնում՝ ի ցնորս և ի սուտ նշանս ան-
զօրս և ամբարտաւանս, քանզի կոյրք տեսցին և կաղք գնաս-
ցին, խուլք լուիցեն և դիւահարք բժշկեսցին, և փոփոխես-
ցէ զարեգակն ի խաւար և զլուսինն՝ յարիւն: Եւ յորիկ սուտ նշանօքս իւրովք և ցնորիւք մոլորեցուսցէ զհաւատս և զընտ-
րեալս: Որպէս և զայս Հայրապետն Յակոբ մեռոց ակամբն և-
տես զհանդերձեալն նեղութիւն որ լինելոց էր[2] ի վերայ երկրի,

[1] Ե՛տ օր. նախ նա հանդերձի իրեալ ի քալստեան նորա: — [2] Ե՛տ օր. որ և զայս հայրապետին Յակոբայ հոգւոյ ակամբն իսիս զհանդերձեալ լինելոց նեղութիւն ի վերայ երկրի,

և մարդկան անձկութիւն ՚ի սատակիչ օձէն՝ յորդւոյն կորըստեան, ասաց այսպէս ՚ի դէմս մարդկայնոյ ազգի[1] արարեալ զօձն. «փրկութեան քում սպասեցայք՝ Տէր»: Իսկ Տէրն յառաջագոյն ասաց, եթէ հնար ինչ էջէ մոլորեցուցանել և զընտրեալսն: Զանգի մոցէ Աստուածդ և նասցի ՚ի տաճարին Աստուծոյ հաստատ Աստուծոյ տեսակ մարդոյ մարմնաւորի ՚ի սերմանէ առն և յարդանդէ կնոջ ՚ի ցեղէն Դաւթեայ[2]:

Իսկ ՚ի բազմանալ անօրէնութեան որդւոյն կորստեան՝ ոչ կարէ անտես առնել Աստուած զկորուստ ազգի մարդկան, զորս գնեաց իւրով մահուամբ[3]. առաքեաց վարվարակի զմեծերիմ Յառաջս իւր զՆոյ և զԼոթ ՚ի յանդիմանութիւն հակառակորդին. առաջի ամենայն ազգաց յանդիմանեցին զնա սուտ գող և խարերայ, և ասացին, եթէ վասն մոլորութեան և կորստեան բազմաց եկն: Եւ տեսեալ զնա ազգացն յամօթ եղեալ և զմոլորութիւն նորա յանդիմանեալ՝ թողին զնա և փախեցին ՚ի նմանէն, և յարեցան ՚ի սուրբսն յայնժամ: Իսկ (նորա) տեսեալ զինքն չարաչար յամօթ եղեալ և յամենայնում արհամարհեալ՝ զրտմութեամբ և բարկութեամբ բորբոքեալ սպանցէ զսուրբսն Աստուծոյ: Յայնժամ երևեցան նշան փառաւոր դալստեան Որդւոյ մարդոյ Աստուծոյ յերկնից. և եկեսցէ ՚ի վերայ ամպոց երկնից փառօք երկնայնօք և ամենայն հրեշտակապետօք և հրեշտակօք իւրովք և առաքեսցէ զաղաւն հոգւով բերանով իւրով: Եւ առ առաքեալսն յայտնաբարութիւն. յայնժամ ծագեսցին արդարքն որպէս լուսաւորք և ամբարիշտք զարձցին ՚ի դժոխս և ՚ի կորուստն յաւիտենից:

---

[1] Ալ օր. առաց յայսպիսի գիրս հարցման արարեալ զնոյն՝ ասէ . . . — [2] Ալ օր. գինի ,,՚ի տեղին Դանայ զայս բան առաքելոքն և յերկոսին գրչագիրս մեր և ՚ի տպագիրսն փարիզեան. — ,,Յառաջ խոյրեվարսէ, որ հարենացն իմ էջերն, և նա ՚ի տեղին Դանայ եր: — [3] Ալ օր. զսրս ջինաց իւրով արեամբն:

ԳԼՈՒԽ ԼՐ

Վասն ֆալոյ Մրվանայ տօճիկ զջրավաքին ի Սիւնիս, և ֆեռայանալոյ Բաբանայ պարսիկ Սիւնեաց պետառն Վասակայ, և այրելոյ զՄաւինոյն, և կոտորելոյ զԳնդևտունի և զԲաղատուխան։

Ի լրանալ 176 թուականին Հայոց (ամ տեառն 727) կալան անիծեալ և աշխարհաւերն Մրվան բազում զօրօք Տաճկաց ի Հայս, և իբրև հուր սաստիկ սկսեալ հրդիհել զգեղեցկութիւն աշխարհիս, որոյ անուանն իսկ սոսկալի ճանաչիւր։ Եւ բազում առաքս եկեալ ի Մունիս՝ ամրանալ ի բերդատիւն Շ ազատաց և կամէր ապականել զայն ևս զգեղեցիկ աշխարհն Մոկաց, և կուտել զզօրս ի գաւառն Օրդեայ ի նմին տեղեաջ։ Եպա Վասակ՝ Մունեաց տէր և իշխանաց իշխեցող, գնայ փութանակի և ածէ զԲարան սպարիկ բազում զօրօք յԱղուանս։ Եւ եհար զՄրվան սաստկապէս և փախուցանէ արար. բայց ինքն Վասակ ի նմին տեղի վախճանեալ։

Եւ նոյնժամայն առնու Բարան զդուռս նորա ի կնութիւն իւր, և առնէր ընդ ձեռամբ իւրով զգառան։ Ի սոյն ամի և տէր Սիւնեաց՝ որդի Փիլիպպէի, ապստամբեալ վասն ոմն թիւրեան ինչ զՎարազ Տրդատ՝ որդի Սահակայնոսի Աղուանից իշխանի, և զորդին ևս նորա ի գոգ մերն սատակէ և զամենայն ինչս նորա յաւարի առնու։ Եյս Վարազ Տրդատ ի Մհերական տոհմէն էր, որ ունէր զհայկական տէրութիւնն Աղուանից։ Յետ սորա անհնազանդեալ ևս զառան Բաղատրկանաց հրամանին և օրինաց Բարանայ, որոյ եկեալ ձեռնառութեամբ Ար Աղուանից՝ կոտորեաց սաստիկ և անողորմ զգառան Բաղատրկանայ և մնաց մինչ ի կատարած և մատոյց մանկտիս [1]։

---

[1] Ցօրինակս մեր և ի Փարիզեան տպագիրն սոսկաւօր զայս առնէրդ բան տեսանելի. — Որ վասն անդիր խոչխոշմանցն պտուիլոց ին ի Քրիստոսէ։

Լսակ ՚ի գալ սմին գնաց Լարան ՚ի գաւառն Գողաղբունւոց և էարկ ՚ի սուբ սուսերի զբնակիչսն ոգիք իրրև 15000, և զյոգնապայծառ մենաբանն և զհռչակելի ուխտն Մաքենոցաց յատարի առեալ՝ զամենայն ստացուածն այրևաց՝ և քանդեաց զամենայն շէնուածն. բայց կրօնաւորքն նախիմաց եղեալ և յերկուս բաժանեալ՝ կէսքն գնացին ընդ հօրն Սաղոմեի [1], ոչ առաջնոյն որ հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին աշակերտին, ՚ի գաւառն Ճ.իրակայ, ՚ի սուրբ ուխտն Ջվէկ, յորում պայծառանային սոյն այս Սաղոմեն ձգնութեամբ սքանամուտ լեալ. կէսքն գնացին իսկ յԱղուանս առաջնորդ կալեալ գմի ոմն յեղբարցն՝ բնակեցան ՚ի Միհր Ներսեայ [2] վանս որ է Ջվէկ. և տեղին անբնակ մնայր: Ապա յաւուրս Գրիգորի՝ Մուենաց տեառն, որ Սուփան կոչեցաւ, վերստին նորոգեցաւ և շինեցաւ մեծ եկեղեցին և պայծառացաւ [3] առաւել քան զառաւել:

ԳԼՈՒԽՈ ԺԹ

Վասն Թանահատի վանից և հօրն Մխիթարայ:

Յայնմ ժամանակի պայծառանային երկնահռչակ կարգօք հռչակելի ուխտն Թանահատի վանից, որ կայ ՚ի վերոյ Մուենաց ՚ի ստորոտս լերինն ՚ի բարձրաւանդակի միջոց անտառի: Եւ էին սահմանաւորք, միշտապաշտօնք, հեռացեալք յամենայն փառուկ կերակրոց, միայն աշտուձ հացիւ և լոկ ջրով վճարէին զպէտս իւրեանց՝ և զայն յաւուրն միանգամ ընդ երեկս, լուիկք, հեզաշարժք, որք իբր կանխեղուն անշէջս կախեալք լինէին յատօթս զցայգ և զցերեկ. և պաշտօնք իւր-

---

[1] Այլ օր. Սոզոփ: — [2] Այլ օր. ՚ի Մխիր Ներսեհայ վանս: — [3] Այլ օր. և պայծառացոյց:

*նանց երբէք ոչ խափանէին զցայգ և զլուսկ։ Եւ բայց ի սպա-
սաւորացն ընդ դրունս վանացն ոչ ոք ելանէր արտաքս. և թէ-
պէտ բազում անգամ հալածէին յիշեհանացն և յեպիսկոպո-
սաց Սիւնեաց՝ ոչ առին յանձն ի կիւրակէքն ի թան կամ
ի պանիր կամ յիւղ խթիլ, այլ բանջարօք և ընդովք շատա-
նային, վասն որոյ Թանահատ կոչեցան, և ի գլխաւոր ուխտն
ի Տիմոյ ձեռնակէին և սակաւ բաժակօք։ Եւ զայս ծանոյց
մեզ Պատմութիւնն երանելւոյն Մաշտոցի որ ի Սիւնի։ Այլ
գոսաք յիւրոց արձանագրութեանցն, եթէ 400 ամօք յառաջ
քան զհայ թուականն շինեցաւ եկեղեցին յիշեհանացն Սի-
նեաց յանուն սրբոյ նահատակին Սեւխանոսի։

Եւ էր եղեալ հայր վանացն, որոյ անուն Մխիթար, որ
անցեալ էր ճգնութեամբ ընդ բոլոր հոյլս առաքինեաց, և զգա-
զանս վայրենիս, զարջս և զգայլս՝ ածէր ի հնազանդութիւն
սուրբ եկեղեցւոյն և ծառայեցուցանէր վանիցն, զոր և արձանն
հոցոյց, եթէ արար Հարիատաւ Գէորգ, այսինքն՝ եկեղեցւոյս։
Գայլքն զջուլերս հօտիցն պահպանէին զգուշութեամբ և զան-
գեայս արջառոցն, և արջքն քամակօքն բեռնակիրք լինէին։
Եւ հանապազ երթայր յանտառն սուրբ հայրն Մխիթար
և նոսէր հանդէպ վանիցն. և ժողովէին ամենայն գազանք և
վայրիք առաջի նորա, և որպէս զգայուն խնդրէին ի նմանէ
աղօթս և ողորմութիւն ըստ իւրաքանչիւր պիտոյից։ Իսկ
սուրբ հայրն կալզեալ սահմանաւ զվանն՝ յետ բազում ա-
մաց փոխի ի կարգս հրեշտակաց. և դնեին սուրբ նշխարսն նո-
րա փայտեայ արկղօք մերձ յեկեղեցին ի փոքր բլրակի միջ,
ուր շինեալ վիրապ գետնափոր և սրբաշէն՝ հանդուցին զնա
անդ. որ մինչև յայսօր կայ և կատարէ մեծամեծ սքանչելիս ի
հիւանդս և յախտաժէտս [1]։

---

[1] Փարիզեան տարագիրն և միւս օր. մեր զայս բան յաւելուն. «որոյ քարեխոս-
նիսմբ ինքն գիտեմք քրիստոս յաչխարհս այս և ի հետ նորին նշխարսիցը.» — որ և
պրչին երեւի լինել յաւելուած։

ԳԼՈՒԽ ԼԴ

Վասն եպիսկոպոսացն Սբ–նեաց, որ չէին արբոյն Սահմանուի յաջորդեպետան՝ ի թեղին։

Պատճառ յամօրս եպիսկոպոսութեան սուրբն Սահմանեաս՝ քառներորդ երկրորդ եպիսկոպոս Միւնեաց, վախճանի վկայական մահուամբ։ Ապա գնի նորա յաջորդէ՝ ի տեղին տէր Յովսէփ՝ այր ճշմարիտ և լաւ վկայեալ յամենեցունց, ամն ժէ. ապա տէր Յովակիմ՝ ամն ժէ. տէր Սողովմ՝ ամն չը. տէր Յովհաննէս՝ ամն ը. տէր Սողոմեն՝ ամն է. տէր Նշխա՝ ամն ը. տէր Թէոդորոս՝ ամն ժը. տէր Գէորգ՝ ամն ը. տէր Գաւիթ՝ ամն ժէ։—Սա էր յաւուրս Փիլիպպէի՝ իշխանի Միւնեաց՝ և Գրիգորի Սուփանայ՝ մեծի նահապետին Միւնեաց, որպէս Սահակայ, որ հաստատեաց զաթոռ եպիսկոպոսութեանն՝ ի Տաթեւոյ վանս և ընդարձակեաց զտահմանս նորուն, զոր յիւրում տեղոջ ասացից կարգաւ։—Յետ սորա ունի զաթոռն տէր Յովհաննէս՝ ամն ժ. ապա տէր Սաղոմեն առաքինեին, որ էր զարդարեալ ամենայն ներանձնական առաքինութեամբ և պայծառ անապր իբրև արեգակն՝ ի կամարն երկնից, և բազում իսկ ձոխացոյց փարթամութեամբ դեպիսկոպոսարանն։—Սա կեցեալ յեպիսկոպոսութեանն ամն ժէ՝ վախճանի։—Ապա և բանեղէն և բազմաշխատ արքայակերպն տէր Յովհաննէս՝ ցանկալին հրեշտակաց և մարդկան, ամն չը, որ կանգնեաց զկիսկնակառոյց քառարանն՝ ի Տաթեւ, զորոյ զհանդամանս գովելի գործոցն ձոխագոյնս կամիմ ձառել։ Այլ այժմ յետ բերելոյ զկարգ եպիսկոպոսացն և բազում բանից ձառելոյ զգանազան գործս նոցին՝ պարտ վարկանիմ անդրէն դառնալ և զերիշատնացն յուշանալ հանդամանս և զգործոցս ըստ կարի իմում, զպատուիրացոյց, զշինութեանց, զհոգաբարձութեանց և զպարսպացուցիչ գործս և շինուածս տանց Ասուածոյ, որ՝ ի տեղիս տեղիս

սեպհական աշխարհիս իւրեանց կանգնեցին արձան անջնջելի և յիշատակ անմահ։

ԳԼՈՒԽ ԼՀ

Վասն Շահանդխտոյ արքայութեանն, և հրաչից նորա, որ եղեն յաշ-
խարհս Սիւնեաց։

*Ասացից պատմել ձեզ՝ ով եղբարք, հրաշս զարմանալիս, որ եղեն յայնմ ժամանակի աստուածային իմն տեսչութեամբ։ — Էր դուստր մի Վաչագ Տրդատայ՝ Ընդուանից գահերէց իշ-
խանի, որոյ անուն Շահանդուխտ. և ունէր պատկեր նոր և օտար, և զեղ նորա յոյժ չքնաղ զարմացուցիչ տեսողաց, որ և ոչ ումեք նմին թեղէն կարծիւր, այլ իբր՝ ի լուսատարը օդոյ և յանօսր շողից կերպացեալ, զոր խնդրեցին հարան՝ ի տանէ Թոդրոմեան։ Եւ եղեալ նորա յաշխարհէն իւրմէ՝ ի հայրենի տանէ՝ գնացեալ՝ ի կնութիւն հայկազուն իշխանի[1]։ Եւ մնեալ՝ ի Խաղաց սահմանն՝ երթացեալ՝ ի ձմեռնապարհն յանդրոյթ տեղիս յատուպարի[2] մի, յորում էր փրթուած քարի միոյ ահագին խորութեամբ, որ իբր յանդունդս հայէր հանդէպ մեծի հայ-
բապետանոցին Տամէևոյ։ Եւ ահա անդ զօղեալ, ծուարեալ կային բազմութիւնք լեգէոնաթումբ սուսերամերկ զօրաց[3], որք վասն սիրոյն գեղոյ նորա նկեալ էին՝ ի Պարսից և պահէին զանցս և զկիրճս ձմեռնապարհացն, զի յափշտակեցին զաղջկունն։ Եւ նորա անիւրացեալ էին բանիւն. և յանկարծակի յարուցեալ զօրացն[4] սուր՝ ի վեր կալեալ սկսան յանխնայ կոտորել զքրիս-
տոնեայսն։ Օ՜յն անտես մեծահաւատ օրիորդին՝ գիտաց զպատճառն, և կնքեալ զինքն առ Աստուած նշանաւն, մնա-
կեաց զկերպիսին և թռեալ ընդ փրթուածս քարին։

---

[1] Այլ օր. հայկազուն իշխանաց։ — [2] Այլ օր. յատրի փ։ — [3] Այլ օր. զօրաց սահմանապահաց։ — [4] Այլ օր. յանկարծակի յարեան՝ ի վերայ նորա և սուր՝ ի վեր [illegible]։

Ո՞այս գտաք՝ի հնացեալ նամակի գրեալ նորին՝ իսկ ձեռ ամբն, որ էր այսպէս. «Եւ մեղուցեալ ազախինս Աբիատառի Շահանդուխտ՝ գուստր Վարազ Տրդատայ, երթայի հարսն՝ի տունն Օտրոմեան. և եկեալ՝ի սահմանս Աղաց՝ի գլուխ քարիս, ընդ որ անցանէ ճանապարհն՝ յանկարծակի պատահեցան ինձ Խանչելացիք, որք վասն համբաւոյ գեղոյ իմոյ կամէին յափշտակել զիս, և սուր՝ի վերայ եդեալ կոտորէին զհնծկազունդն որ ընդ իս. ապա լուռ համարեցայ քան՝ի ձեռն այլազգեացն գայլապատառ կորնչել, վասն Աբիատառին իմոյ գահավէժ մեռ անել: Եւ յիշելով զսուրբ Աստուածածնին և զսուրբն Ջոխիմ՝ յանձնեցի զիս սուրբ Երրորդութեանն և կնքեցի զողորմելի անձն իմ սուրբ խաչիւն և գարձուցեալ զերեսաւնակ երիվարին՝ թռեալ ընդ քարս: Եւ յահագին շընչմանէ հողմոյ և աներևոյթ զօրութեամբ իջի՝ իբր կառաջ՝ի խոտութիւն ձորոյս ևս և երիվարն իմ անվնաս: Եւ դադարեալ անդէն՝ մեծաւ հիացմամբ զոհութիւն մեծ վերառաքեցի այնպիսի փրկողին զիս. և իջեալ՝ի հիշատակարն՝ նուիրեցի զանձն իմ Աբիատառի, և ուխտեցի այլ ոչ երանել առաւ մինչ ցվախճանն իմ: Իսկ Խանչելացւոցն տեսեալ զայն՝ մեծաւ զարմացմամբ թողին անվնաս զզօրս իմ և գնացին. և ես առեալ՝ի տեղւոջս շինեցի մատուռն մի և խցիկ մի և կրօնաւորեցայ՝ի տեղւոջս զամենայն ժամանակս իմ: Ոչ պէտ թախանձեցայ՝ի ծնողացն իմ և՝ի հարսնացու իշխանացն՝ ոչ շարժեցայ՝ի տեղւոյս: Եւ կոչեալ զերանելի եպիսկոպոսն Սիւնեաց՝ յանձնեցի նմա զիս՝ և զամենայն ինչս իմ ետու՝ի ձեռս նորա՝ զկէս մասն բաշխել՝ի կաթուածեալս և զկէսն տալ՝ի սուրբ եկեղեցին Տաթեւոյ: Նաև զտեղիս զայս աւանդեցի սուրբ եկեղեցւոյն ամենայն ձորոյս, որ՝ի Ը Նհէրոյ սահմանէն՝ի վեր մինչ՝ի Գինական գետն»:

---

[1] Այլ օր. երեւել իւրով իսկ տեառնէն: — Այլ օր. ինչ երբ ետուս:

Ընդ այսս իւրով իսկ ձեռամբն էր գրեալ Շ. ահանդխաւոյ։ Եւ կացեալ ինքն անդէն՝ այլ եւս կուսանս ժողովեաց առ ինքն. և մեծամեծ ձգնութեամբ կեցեալ ամս ի՛ վախճանի։ Եւ երթեալ եպիսկոպոսին՝ գնէ ի՛ հանգստի ի՛ նմին տեղւոջ զերանելի նշխարս սրբոյն [1]։

ԳԼՈՒԽ ԼՕ.

Ցաղագս իշխանացն Սիւնեաց Սահակայ և այլոց, քրջից և վախճանից նոցին որ յերկնեցուք և յօշականաւոն ինաւոխանին և այլոց։

Ի հայրապետութեան ՚այոց տեառն Գաւթի կաթողիկոսին [2], և յոստանապետութեան Ամբատայ Բագրատունւոյ էր իշխան Սիւնեաց մեծ նահապետն Սահակ, որ արքունական ճոխութեամբ վարէր զտէրութիւն իւր. և յոյժ միաբան և միախորհուրդ գնային ընդ Ամբատայ՝ ազգակակից ՚այոց, յամենայն գործս պատերազմաց և յօգտակարութիւն աշխարհիս ՚այոց։ Եաւուրեան յայնոսիկ ունէր ի ծառայութեան զաշխարհս ՚այոց մեծ ամիրապետն Աւսմուն, որ առաքեաց ոստիկան ի ՚այս փոքր գնդաւ՝ ՚ոչ անուն ոմն։ Եւկեալ առ բա յաշխարհս՝ հասանէ ի գուռն Գաւթի քաղաքի և կամէր մտանել և բնակիլ ի նմա։ Էր անդ այր ոմն ի կայսերական տոհմէ՝ Անաստաս անուն, որ առեալ էր իւր կին ի Բագրատունեաց տանէ զԱբասեակ [3]. և սակս այնր բռնացեալ ունէր զյորով մտանն աշխարհիս ՚այոց։

Այս ընդվզեալ և խանդագնեալ ընդ ՚ոչն՝ միաբանութեամբ Ամբատայ Բագրատունւոյ և Սահակայ Սիւնեաց տեառն գու-

---

[1] Աղբ. որպէս և տպագիրն Փարիզեան գայս ունին բան. — „որոյ քարիւղոտութեամբ խնայութեամբ քրիստոս ի գառն յայս և ի վիճակել ուղղեան հաւատ ոչխ“. — գրչին է այս յաւելուած։ — [2] Փարիզեան տպ. ունի „Աղուանից“։ — [3] Աղբ. զԱբասուխ։

մնալոյ պատերազմի խմբեալ՝ կամէր կռուիլ: Եւ թէպէտ Հայրապետն Դաւիթ բազում միջնորդեաց՝ ոչ կարաց հաւանցուցանել: Ապա յարուցեալ ի՛ն իւր երկու հազարաւ խմբեցաւ[1] ի պատերազմ ահագին յարձակմամբ յերդ ի՛ուրազդան գեաղն Հանդէպ Կաւակերտի և վախոյց զնոսա. և անդ հարեալ զգեղեցկադիտակ իշխանն Աբեղի Սահակ՝ զիաթաւալ յերկիր ընկենոյր. իսկ Ալադայն և Ամրամ հազիւ մազապուրծ[2] եղեն: Իսկ երանելի Հայրապետն Դաւիթ լուեալ՝ անհնարին ողբով հեծեծէր. և ընթացեալ բազմամբոխ պաշտօնէիւք կազմէր զդագաղն ալքայակերպ և բարձեալ զմարմինն մեծահանդէս պաշտամամբք, սաղմոսիւք և օրհնութեամբ բերեալ ի կաթողիկոսարանն ի Դուին՝ դնէ ի քնարանի մերձ ի սուրբ քառասան կաթողիկոսարանին[3]: Իսկ զկնի սորա պայազատէ զիշխանութիւնն որդի նորա Գրիգոր, որ փաղաքշական անուամբ Սուփան յորջորջիւր, այր մեծանձնեալ և բազմախել և հնազանդ յամենայն իրս կենցաղոյս. որ առաւել քան զնախնիս իւր կարգէր զգահ իշխանութեան իւրոյ և անօրինէր զիշխութիւն աշխարհիս:

Նայց յետ Դաւթի յաջորդէ ի հայրապետութիւն ա՛այոց տէր Յովհաննէս ի Դոտայից, ի գեղջէ Ովայից. և վասն խստամբեր վարուցն և ահարկու սաստից ի վիրոյ անզգամոց քրիստոնէից ունէր ի նոյն տանէ երևեալ սաստկագոյն բանիւք պատրեցին զԱղաղարսա իշխանն ա՛այոց և զայլս՝ և հրապուրեցին զնոսա յաքսորութիւն կաթողիկոսին: Զոր խնդացեալ նորա՝ կամեցող լինի աքսորացն և բնակէ միայնիկ ի վանս Ելբից: Զոր լուեալ մեծին Սուփանայ Աբեղոյ՝ ոչ ժուժեաց մեծի ձեռաւորէն և զրպարտութեանն, այլ դնացեալ առ ազգարարսն Ամրամ խորհի ընդ նմա՝ և լինին վրէժխնդիր սրբոյ առն

---

[1] Այլ օր. խմբեաց: — [2] Այլ օր. հազիւ մազապուրծ ձեռնպրեալ եղեն: — [3] Այլ օր. և անդ դնեն ի գնացման մերձ սուրբ քառասնին:

նըն Աստուծոյ։ Եւ անդրէն ածեալ վերատին Հառաւաւն յա-
թոռն պաէր Յովհաննէս։ Եւ չարալեզուքն առնային ՚ի վե-
րուստ մեծամեծ պատուհասիւք սառակիցան։ Յետ այսր գոր-
ծոյ մինչ վարէր զեկեղեցւոյն Թիւնն ճոխաբար Գրիգոր, ոչ ժա-
ժացեալ չարին՝ այլ նախանձ ՚ի սիրտ Նարգենի՝ եղբօր Փի-
լիպպէի, որդւոյ Վ֊առակայ, միւս նահապետին Պիւնեաց, որ
և ՚ի նոյն ցեղէ, և խանդագոյնք և զրգռութիւն չար ՚ի մէջ նո-
ցա զարթոյց զօրէն Սայենի և ֊աբելի։ Ոլք գումարեալ ՚ի
վերայ իրերաց կարգեալ պատերազմեցան. և սպան Նարգէն
զԳրիգոր. և ինքն յետս կոչնանեցաւ չարաչար գայթակղու-
թեամբ ՚ի սիրտս անդր օրինաց սիրոյն։ Ապա մինչ այս այս-
պէս լինէր՝ բարձեալ բնաւանեաց նորա մեծաւարան ողբով՝
տարեալ հանգուցին ընդ հարս իւրեանց։ Եւ պայազատաւ ըղ-
ձերութիւն նորա Վ֊առակ՝ որդի նորա, որ ըստ գրչութեանց
փաղաքշականին, Վահրուս կոչիւր։ Սա փեսայացաւ Աշոտոյ
Նաղրատունոյ՝ որդւոյ Սմբատայ, որ թագաւորեաց ֊այոց,
և էառ զդուստրն նորա Մարիամ իւր ՚ի կնութիւն։ Եւ ՚ի
սիրելն Աշոտոյ յոյժ հպատակ էր սա գործոց և կամաց իւ-
րոց անկրոյն, և նա յոյժ մտերմաբար հոգայր վասն Վ֊առա-
կայ. սակս որոյ և անցեալ եղև փառօք և իշխանութեամբ ընդ
նախնիս իւր խառնեալ ՚ի թագաւորեալ ցեղն Նաղրատունի։
Յայսմ ժամանակի էր ամիրապետ Պարսից, զոր սուլտան կո-
չեն այժմ՝ անիծեալն Ջ֊աֆար, որ առաքեալ էր ՚ի ֊այս
ասիկան մի Ընուսէճ անուն, որոյ եկեալ ՚ի Տարոն կալաւ
զՆազարաս իշխանն և եղ ՚ի կապանս։ Վ֊առն որոյ յարու-
ցեալ ՚ի վերայ բնակիչք Տոլոս լերինն՝ սպանին զՆուսէճ և
փախստական արարին (զջօրս նորա)։ Լ֊ուեալ զայն ամիրա-
պետին և յոյժ զբարեալ՝ առաքէ զմին չարագոյն, Ռուզայ ա-
նուն՝ ծանր զօրու, և հրամայէ զամենայն իշխանս և զզինա-
ւորս ֊այոց ածել կապանօք առ ինքն, և զայլս ՚ի սուր սու-
սերի մատնել։ Որոյ եկեալ կալաւ զիշխանն ֊այոց զԱշոտ և

զՈսաւիթ՝ զորդիս Ռագաբատայ ի Տարսն, և զԱշոտ՝ մեծ իշխանն Աբծրունեաց ի կապանս եդեալ. իսկ Ամբատ ապարապետն իւրովք գնաց առ Ռուզայ: Եւ զայլս ի սուր սուսերի մահեղ յանխնայ, իսկ զգեղեցիկան ընտրէր և պահէր զաղատութենեայն յանօրէն օրէնս իւրեանց դարձուցանել, որք մեծապէս վկայեցին վասն Քրիստոսի՝ Աստ՝ եօթն ընկերաք, կոնն Աեփրանոս և այլ ձ՚ն այլք, որոց ոճն կարդէր սուրբ հայրապետն Յովհաննէս ի իւ՚ն մեհենի: Եւ լինէր այս յ302 Թուականին ՚ի այոց:

Ապա մինչ զայս ամենայն տեսեալ Ռուզայի յաջողուած իւրոց չարութեանն՝ խնդիր առնէր բազում հրոսակօք մեծ իշխանին Աիւնեաց Վ՚ասակայ՝ Իշխանիկ կոչեցեալ, և եղբարց նորա, որք էին որդիք Փիլիպպէի՝ որդւոյ Վ՚ասակայ, Աիւնեաց տերանց, որոց պակուցեալ՝ ոմանք ամրացան յանառիկ ամուրսն Ռաղաց. այլ Վ՚ասակ ոչ հաւատացեալ յամրութիւն բերդիցն՝ խոյս տուեալ անց գնաց զկողմանքն Կոտայք գաւառի: Զոր իմացեալ Ռուզայի՝ զօրս զՀետ արձակէր, որոց հասեալ կամեցան ըմբռնել. ապա նորա դարձեալ՝ զվաղակաւորն ի գործ սկսաւ ածել և զամենեսեան թաւալգլոր առնէր. և ինքն գնայր ընդ արևելս ի գաւառն Վարպմանայ առ իշխանն նոցա Կոլիճ՝ [1], զի թերևս օգնութիւն գոցի ի նմանէ, որ և ոչ ինչ եգիտ ըստ յուսոյն: Եւ իշխանն այն խաբեալ ի դիւէն գաւազանեաց նմա և կալեալ կապանօք առաքէ առ Ռուզայ, զի թերևս վասն այնորիկ զերծեալ լինի ի ցասմանէ նորա: Նայր ըստ ուղղակշիռ իրաւանցն Ասաուծոյ ինքն ևս ըմբռնեցաւ յետոյ ի նմանէ և չարի մեծագունի պատահեցաւ: Իսկ չարն այն և անիծեալն Ռուզայ ընկալեալ խնդութեամբ զՎ՚ասակ՝ ետ ածել աստիճանաւ հինից և զեղբայրն նորա զԱշոտ և զմեծ տիկինն՝ զմայրն նոցա ի Պարսն,

---

[1] Եւ՚ր. կ՚ուիճ:

զորս երկաթի կապանօք գնէ ՚ի դիպահոջ: Այսպէս ածեալ զբռամբ զամենայն իշխանս Հայոց և Վրաց՝ չուս արարեալ գնայ ՚ի գուռն արքունի և յանդիման առնէ մեծ ամիրապետին: Իսկ չարագլխին Ջաճարի տեսեալ զնոսա և սաստիկ ցաւմամբ հարցևփորձ եդեալ վասն հաւատոյ՝ մեծամեծ և ազգի ազգի տանջանօք և պէսպէս նեղութեամբք տայր չարչարել զնոսա զառուրս բազումս. և խախտեալ զոմանս ՚ի հաւատոց տայր թիւրեցուցանել:

Իսկ մեծահաւատն Վ. սրբակ և եղբայրն նորա Աշոտ ոչ ինչ հաւանեալ բանիցն և ոչ թուլացեալ ՚ի հաւատոցն Քրիստոսի՝ առ ժամ մի վերին երեսօք յանձն առնուն կատարել զկամն ամիրային. բայց արին և քաջն Ամբատ նովին խոստովանութեամբ ՚ի մէջ կապանաց և արգելանոցի կատարէր բարուք մահուամբ. և դի նորա տարեալ Հանդուցաւ ՚ի վիայարանի մեծ մարգարէին Դանիէլի: Եւ սրայազատէ զառքութիւն նորա որդին, որ և Թագաւորեացն իսկ: Այս զերծեալ մեծին Վ. սրբակայ Մհէնոյ մոլորն իւրով և եղբարքն և այլով իշխանօք ՚ի գերութենէն Ռուզայի ՚ի գառն կապանացն՝ գայ մտանէ ՚ի սեպհական աշխարհ իւր ՚ի Սիսական.— և ընդոյր անհուն ուրախութեամբ ամենայն աշխարհս: Եւ ՚ի բաց մերկացեալ նորա զառաւեր մահաճին խոստմանն, որ վասն անօրինին Մահմետայ՝ զգենոյր զհայրենի զգեստն մեքրութեան մեծամեծ զղջմամբ և ապաշաւանօք, խոստովանութեամբ և առատաձիր սրտիւք անանկաց՝ միջնորդ ունելով առ Աստուած զերջանիկ եպիսկոպոսն Սիւնեաց զտէր Սաղոմոն: Եւ այսպէս ձեռնացեալ երևելի փառօք՝ բազում ցուցանէր գործս արութեան յայսմ ժամանակի ՚ի ձեռնտուութենէ նոյն Աշոտոյ իշխանին, որ և Թագաւորեացն: Իսկ մեծ սպասու իշխանն Սիւնեաց Վ. սրբակ Գաբուռ՝ տալոյ հաւանական յերիտասարդութեան տիս վախճանի. և Թողու երիս որդիս,

որոց եղեցն՝ Գրիգոր, որ և սա Սուփան կոչեցաւ, և Սահակ և Պ. սասակ։

Ապա առեալ եղանելի սիկնոջն նորա Մարիամայ զդի նո-
րա զարդարեալ թագաւորական զարդուք, անհուն ամբոխիւ
և անչափ ազատակաւ և ողբերգական պարուք փողոց և քնա-
բահարաց հանդերձ կաթողիկոսին Հայոց արքայիւրս տարեալ
հանդուցանեն՝ ի քնարանի ընդ հարս նորա։ Եւ պայազատեկ
զեղբարքն որդի նորա Գրիգոր Սուփան։ Սա զհզկիկս
յարդարեր զկարգ իշխանութեան իւրոյ՝ ճախէր զամենայն
փարթամութիւնս իւր և զկանս՝ ի զոյծ ատտուածպաշտու-
թեան և՝ ի շինութիւն պայծառ ակերս քաւարանաց, որ զեռ
և կան և վկայեն իրքն։

Յայսմ ժամանակի պայծառացեալ եղանելին Մաշտոց՝ ի
Սևան կղզին մեծահանդէս առաքինութեամբ, որ էր որդի աշ-
խարհիկ երիցու միոյ՝ Գրիգոր անուն Դզնեվարդեցի. և սկսեալ
էր՝ ի Սոթք գալ և պանդխտանոյր անդ, և ետ զՄաշտոց
յաշակերտութիւն սուրբ Հօրն Մաքենոցաց Առաքիանոսի,
յորում զարգացեալ նկարքին հասակաւն՝ ձեռնադրի՝ ի քա-
հանայութիւն՝ ի տէր Գաւթայ՝ Արշնեաց եպիսկոպոսէ։ Եւ
անտի երթեալ յանապատն Ըռոտաւոզի Պարանք. և անտի
դնայ մնանել՝ ի Սևան կղզին։ Եւ յետ բազում ճգանց հրա-
ման առնու՝ ի տեղեան շինել սկզբնի յանուն երկոտասան
առաքելոց և սահմանել միաբանակեացս. յաղագս որոյ գա-
յին առ նա երկոտասանքն՝ ի վիրայ ծովուն յանուրջս և նշա-
նէին զտեղի սկզբնացոյն։

Ընդ այն երևմամբ վերին ապրելութեամբ շարժեալ մեծ
Թագուհին Մարիամ՝ առնուն Պ. սասակայ Արշռայ, գայ
առ սուրբն Մաշտոց և բազում թախանձանօք՝ ի հաւան ա-
ծեալ զնա՝ ձեռն՝ ի գործ արկեալ շինեն զքնդաւազանձոյն սկզ-
բնին յանուն սուրբ առաքելոց, և զմիւսն յանուն սիրուհ-
ւոյ Ըստուածածնին։ Եւ զարդարեալ մեծամեծ սպասուք

կանգնեն զնա առն Աստուծոյ և բնակարան աստուածպղծաց սրանց յ323 թուականին ՚այոց: Բայց Մաշտոց եպ՝ սահմանն վանացն և պայծառացոյց երկնաբաստակ կարգօք. յորմէ համբաւոյ միաբանեալ Աշտոյ՝ իշխանաց իշխանի, սուրբ ուխտին՝ գայ ՚ի տեսութիւն սուրբ հօրն և ընծայէ զվրկական նշանն աստուածընկալ խաչին, և տայ ՚ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն զիւրս՝ զԱրսեր, զՅամպաբերդ, զԳոմձոր, զԿիրզք, զԱւհաց տափ և զորան կռակցին [1], և այլխ ՚ի Գառնի և յԱրևան և յայլ տեղիս. և բազում նզովիւք հաստատեցին:

Գտանեալ՝ ոմն Մարիամ շինէ զմեծապայծառ եկեղեցին ՚ի Հ՚ողուպայ յանուն սրբոյ առաքելոյն Պետրոսի և կարգէ ՚ի նմա կրօնաւորանոց և դասս բազմահոգի քահանայից վասն հոգւոց տեառն իւրոյ Վ՚ասակայ՝ իշխանին ԱԻւնեաց: Եւ գնեալ ՚ի հազարացի մարդկանէ զգիւղն Հ՚ողուպայ ընդ 60,000 դրամի ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ՚ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. ոյնպէս և զիւղ մի ՚ի Մաղազ գաւառի ընդ երիք հազար դահեկանի գնէ, և տայ ՚ի սուրբ եկեղեցին. որոյ անուն գեղջն Գոբնէր: Եւ հաստատէ արձան անջինջ յիշատակի առաջի Գէորգայ կաթողիկոսի և Յովհաննու ԱԻւնեաց եպիսկոպոսի, և Գագկայ ԱԻւնեաց տեառն և ՚իւրոցն եղբօր Վ՚ասակայ, և Աբուսաղլայ Հ՚ազռանեցւոյ և այլ բազում ազատաց և իշխանաց:

Յայնմ ժամանակի խորհուրդ ՚ի մէջ առեալ աստուածասիրին Քրիստոսի Գրիգորի Առփառայ և Վ՚ասակայ Իշխանիկ կոչեցելոյ՝ տերանցն ԱԻւնեաց, ընդ Գրիգորի Գոբնեցիկայ, որ էր իշխան տանն Հրծրունեաց, և ընդ այլ իշխանաց ՚այոց, խնդրեն յամիրապետէն Եմիր Ենհմատայ և

---

[1] Ա՚Հ՚ս ր. Խէր տահան: — [2] Ա՚Հ՚ս որ. գրեն Խոնին:

կացուցանեն զԵշոա Ռագրատունի թագաւոր ՚այոց. որ և նորոգապէս զարդարեցաւ աշխարհս ՚այոց ՚ի շինութիւնս և ՚ի խոր խաղաղութիւն. զոր էօծ տէր Գէորգ ՚այոց կաթողիկոս, և տէր Յովհաննէս Պիւնեաց եպիսկոպոս այլովք եպիսկոպոսօք յ334 թուականին ՚այոց: Ռայց յետ այսր մեծ իշխանն Վ՚ասակ, որ և Իշխանիկ կոչիւր, փոխի յաստեացս և դնի ընդ հարս իւր: Եւ եղբայր նորին Եշոա պայազատէ զտէրութիւն նորա, այր հեզահամբոյր և խաղաղասէր և բարեպաշտն և երկիւղած Ա՚ստուծոյ. և ամենայնիւ յամենայնի շինութեան պարապեալ հայրենի տէրութեան իւրոյ:

Ռակ թագաւորն Եշոա յետ հինգ ամի թագաւորութեան իւրոյ վախճանի. և պայազատէ զթագաւորութիւն որդի իւր Սմբատ, զոր հրամանաւ Աբիշնի օծանեն թագաւոր ՚այոց կաթողիկոսն Գէորգ և եպիսկոպոսն Պիւնեաց Յովհաննէս, բդեշխն Վ՚րաց Աորներսեհ, և իշխանն Պիւնեաց Եշոա և իշխանն Էրծրունի Գագիկ այլովք իշխանօք: Ետպա յետ բազում անցից ընդ աշխարհս ՚այոց գնաց Աբիշնին ՚ի գուռն արքունի և անդ զօր բազում գումարեալ [1] կամէր դալ ՚ի ՚այս և բնաջինջ առնել. բայց կամքն վերին առ ժամայն ստուգեցաց զնա և խափան եղե չար առաջարկութեանն: Եւ փոխանակէ զտեղի նորա եղբայր իւր Յուսուփ, յորոյ ձեռն կրբեաց յետոյ ՚այք զահագին կործանուածն և զանպատմելի չարիս: Գայ այնուհետև Յուսուփ յամիրապետէ անտի ոստիկան ՚ի ՚այս. և զառաջինն յոյժ մեծարդոյ մեծարեալ ըզԱմբատ թագաւորն և զամենայն իշխանս մեծամեծ պարգևօք՝ ինքն ևս մեծարեալ ՚ի նոցանէ կրկնապատիկ ընդունի պատիւս: Եւ այն ինչ ժամանակս յոլովս զհաղաղութիւն բերէր ընդ բոլոր ՚այաստանեայս, սակս որոյ ամենեքեան շինութեան ակնկիցեաց պարապէին, ևս առաւել որդիքն Վ՚ա-

---

[1] Ուր օր. գնաց Աբիշնին անդ և զօր բազում...

սակայ Մինեայց անառն՝ Գրիգոր Աւետան և Սահակ [1] և Վ֊ասակ, և մնացը նոցա Աարիամ ի գաւառին Գոզպերքուն֊ւոյ. զի այն իսկ գաւառ շուրջ զծովակաւն [2] նոցա էր հասեալ ի բաժին ժառանգութեան: Իսկ բուն գահք իշխանացն Մի֊նեայց (այսինքն) Խաղք, Վ֊այոց ձոր և այլ շրջակայքն (ի֊ձակեալ էր) Վ֊ասակայ և Եշուոյ և որդւոցն Եշուոյ՝ Աբա֊բայ, Սահակայ և Խաթգենի և Վ֊ասակայ, և որդւոյն Վ֊ասակայ՝ Փիլիպպէի:

Եւ արդ՝ որպէս վերագոյն ասացաք, շինէ Աարիամ ըզ֊Անանեայ եկեղեցիսն և յետոյ զՀ֊ողուագայիսն. շինէ և Աւե֊փան զպարսնանակիսս փայտեան բանուոր հօսի ի գիւղաքա֊զաքին Կոմայ յանուն սուրբ առաքածաճնէին և զարդա֊րեալ մեծամեծ սպասուք կարգէ ի նմա դասս պաշտօնէից և պատրաստէ մեծամեծ վիճակ. և մեծաւ ժողովով արարեալ նա֊ւակատիք՝ խնդրէ ի կաթողիկոսէն և յեպիսկոպոսացն և յիւր եպիսկոպոսէն տէր Յովհաննիսէ յիշատակ իւր յաճենայն ե֊կեղեցիս զերիք քաւասուն՝ զնեղութեան կանոնն խոզաղա֊կան ժամուն և զաւաւօսուն սաղմոսն, զոր և սահմանեցին իսկ վասն մեծամեծ և բազում երախտեաց նորա: Եւ կարգէ յիշատակարգիր արձանի ի վերայ սուրբ եկեղեցւոյն, որ ունի օրինակ զայս. «Ինձ Աւետանայ յիշատակարան հաստատեալ հոգւոյ ի Քրիստոս ի քաղաքագիւղս Կոմայ՝ ի կացուա֊ծի իմոց նախնեացն, զոր նախ քան զայս պարտապահակ շրջա֊պատեալ էին ի բազմածախ գանձուց յոլով աշխատութեամբ: Յետ այսր ապա իմոց նախնեացն խորհրդակցեալ՝ կամեցան Ա֊ստուծոյ շինելի տուն Տեառն և յարկ Աստուծոյն Յակոբայ անուանակոչութեամբ Արքեհոյ Տիրամօր Աստուածած֊նին, վիճակաւոր, կոմածոյ քարամբք. և ի սմա անենակս ու֊ի ի վերոյ և ի նեղքոյ: Եւ ապա ի սմին սուրբ քաւարանիս

[1] Այլ օր. Ի Գրիգորի Աւետանայ՝ Աահակ և Վ֊ասակ: — [2] Այլ օր. ըստ ծովակին:

կարգեցի քահանայս և զարդարեցի. զԱստուածածնի քահանայքն նախնեաց իմոց և այլ բազում ապաստարս ազատ արարի յաղքատական ծանրութենէ և ի բնկալէ. և սահմանեցի հոգս և ջուրս՝ և հատ միոյ միոյ քահանայի յիսուն դրամ ի տարեկոչն, որ լինի Հնգեցիկս. և սահմանեցի չորիցս քառատունս և սաղմոս գնեղութեան կանոնն և զառաւօտուն սաղմոսն, զի որչափ եմ հա ի մարմնի՝ յաղագս կենացս յաջողման լինի, և յետ վախճանի կենացս մեզուցեալ հոգւոյ իմոյ կատարեն։ Եւ յամենայն ամի խրատեցի զի ի քահանայիցս չորիցս քառատունս առնիցեն վասն իմ։ Եւ արդ եթէ ոք ձեռնարկէ յայս և յամենայն ջանայ զիմ հոգեցառուր հոգւոյ և զայլ ընծայող ի քահանայիցդ, և կամ զքահանայ ի չար ընկենու, զոր ազատեցի ես յամենայն ուրեք, կամ ի զարմից իմոց կամ ի ժառանգաւորաց կամ յայլ աւազաց գինի մեր, այնպիսւոյն բարձցի անուն յերկրէ և յիշատակն, և դատապարտեալ և առեթ ալից եղիցի յահեղ հրաշարակին Քրիստոսի, և մասն ընկալցի ընդ Կայենի և ընդ Յուդայի և ընդ ուրացողն Քրիստոսի և մեղաց իմոց համարս տացեն յաւուրն դատաստանի և ժառանգեսցեն զհուրբն անշէջ և զտանջանսն յաւիտենական։ Եւ եթէ քահանայքդ երբեք առնդանիցէք և մոռացումն առնիցէք կարգեալ շարադրութեացդ և կամ ծուլանայք յիգեալ քառատներոյդ, Տէր Աստուած դատապարտեսցէ զձեզ զաւակօք և զարմիւք և բաժին ձեր ընդ սիրտապան քահանայիցն լինի»։

Վարձեալ շինէ և զերկնաձիմ խմբարանն ի հրաշազան մեծարանին ի փառաբեակ ուխտն Աթենոցաց զգմբէթ այարկ և կեղեցին յանուն սրբոյ Աստուածածնին, և պարապ վիմօք. և այլ բազում շինուածս յօրինեալ զարդարէ զնա անխնայ գանձիւք և փարթամացուցանէ բազում ընչիւք, նա և գեղօք և ագարակօք և այգեստանօք ի Վատնի և Այրևան և յայլ տեղիս։ Եւ կարգէ ի նմա արձան յիշատակի հարտասյոյս սր-

գհանոյն իւրոց, որ ունի օրինակ զայս. «Կամաւն Աստուծոյ
ես Աստան՝ Ահնեաց իշխան, շինեցի զԱրքնոցաց եկեղեցիս
և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և առատա-
ձայիւն կառակարանօք. և եառ զսեփական տեղն մեր ՚ի սա,
որ բառանուան եկեղեցւոյս Աստուածածնին, ամենայն սահ-
մանօք, լերամբ և դաշտիւ, և եառ որս ձկանց զԱղաշէն սե-
պանոյն, և եօթն հարիւր դրամ ՚ի Գնեղձանայ գեաղ զապա-
լէն, երկու հարիւր դրամ ՚ի Կամիկայ, երիք հարիւր յիսուն
Ամեաւէն, որ լինի 1250 դրամ. եառ և հինգ կուզակ ՚ի
Ամնի և հինգ այգի Ալրևան և հինգ հարիւր[1] առու այգի ՚ի
գիւղաքաղաքն Գառնի, և երկու այգի Ալղեկիս, և զամե-
նայն պէտս սուրբ եղբայրութեանն լքի առատապէս և փար-
թամանօւցի նեկրոյ և արտաքոյ. եառ և Ջոլէրս եզանց և Ջոկս
զուարակաց և անպետս և հօտս ոչխարաց: Եւ արդ՝ մեղ-
թիւք զամենայն առատաձագիզոյ սուրբ ուխտիդ պաշտօնեայ-
սըդ, որում Աստուած է միջնորդ, կատարել վասն մեզուցեալ
հոգւոյս զերկու քառասնեան ապրումն պատարագ ինձ. և ան-
խափան երգել զերեկոյին սաղմոսն՝ գնեղութեան կանոնն և
զառաւօտուն սաղմոսն, զոր կարգեալ եմ յամենայն եկեղեցիք:
Եւ ասէր Յովհաննէս Հայոց կաթողիկոսն ՚ի տանէս մի՛ իշ-
խեսցէ դատ կամ փայքարք հանել, և մի՛ յիմ որդւոց կամ ՚ի
ժառանգաւորաց. այլ որ ընծայիս հակառակէ կամ հանել
ջանայ և որ հակառակ անուանեսցի՝ նզովս հարսյարդ ընկալցի
յԱստուծոյ և յամենայն սրբոյն Գրիգորէ, և մասն ընդ Յուդայի մասնեսցին եղելոյն: Եւ դարձեալ խօսեմ ընդ
ձեզ՝ առաքելոցդ և կրօնաւորք վանացս, հաստատուն կալ
միմիչ ՚ի գալուստն Քրիստոսի, և վարդապետին և սաղմոսին
վասն իմ՝ անխափան եղելոյ. և եթէ ոք ծուլացի ՚ի քառա-
նեակ աւուրդ ամ յամի կատարել զվերպաքաւիչ սուրբ խոր-

---

[1] Բայլ որ. և ՚ի ՚ի առաս այլեւ:

հուրդն յետ ելից իմոց ՚ի կենցաղոյս, ՚ի Տրխատոսէ որոշեալ եղէցի, և մնան ընդ Աիմոնի կախարդի ընկալցի և ՚ի սուրբ ժողովոյն նզովեալ եղէցի: Ո՞խնեցի և զևկեղեցին ՚ի գիւղաքաղաքին Կոթայ և ՚ի նմա՝ եօթն սենեակ. և արարի պատիւ ՚ի տան Տեառն, զոր շինեցաք: Եւ զԱստուածածնին քահանայքն ազատ արարաք յամենայն պղծունէ չարէ, ընդ նոսին և զայլ պաշտօնեայս եկեղեցւոյ, որք ՚ի քահանայական կարգէ»:

Ահա այս իսկ էր արձան Մաբինոցւոց, բայց վասն հնութեանն և խախտելոյ քարանցն ոչ կարացաք զբովանդակն իմանալ. այլ բազում բանք և տուրք իշխանացն պակասին: Այս փոքր ՚ի շատէ եդաք, զի մի՛ բնաւին ջնջեալ կորիցէ յիշատակ նոցա: Եւ այս ամենայն գործեալ եղև յերիք Հարիւր թուականին մինչև ՚ի յերիք Հարիւր յիսունն: Իսկ եղբայրն Գրիգորի Սահակ, շինէ զպանծալն յարին մեծաձախ յօրինուածովք ՚ի Նորատուս գիւղ և կարգէ ՚ի նմա բազմութիւն քահանայից, յորոց զրան և ինքն հանդուցեալ կայ ՚ի տապանի:

Նախանձեալ ընդ այս բարւոք մոլութեամբ Հ՚ապուհ Նապրատունի՝ եղբայր Մարիամայ, ՚ի ձեռն քեռն իւրոյ շինէ զփառաւոր տունն Աստուծոյ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ՚ի Ձորակին Վանանդայ որ այժմ Աթաղոց կոչի, և պայծառապէս զարդարէ զնա. և բազում տուրս ընձեռէ ՚ի սէտս եղբարցն և հաստատէ տուն կրօնաւորաց. ոյոյ յիշատակութիւն արձանին ունի օրինակ զայս. «Յանուն Աստուծոյ հՀ՚ապուհ Նապրատունի՝ ±այոց ասպետապահ, տէրանց տէր, որպի Աշոտոյ ±այոց թագաւորի, ՚ի ժամանակս ±այոց թագաւորի մեծին Ամբատայ՝ հայրազատ եղբօր իմոյ, և վերագիտողի ±այոց հայրապետի տեառն Յովհաննիսի, իմոցայ և ծանեալ թէ ամենայն փառք և մեծութիւն սպառելոց են և վաղիւ կորնչելոց. և մեծախտիպ տենչանօք վերակացու և տեսուչ առնելով գբոյր իմ Մարիամ՝ Աիմնեաց տիկին, յիմումն իշխանութեան ՚ի Վանանդա տուն Աստու-

ծոյ կանգնեալ վիմաւոյ կոփածովք, շաւաղախ գանձիւք և մեծաջան վաստակովք կատարեալ. թէպէս լիցի ինձ ողորմութիւն յայնմ աւուր, յորժամ բանքն ապառն ինն և գործքն թաղարին: Եւ տուաք ՚ի քէզ Վ֊անեվանուց վանական՝ հայր Աբրահամ, աղօթել և վայելել, և որ այլք յետ քո յաջորդին. և պաշտօնեայք խորանին՝ յորժամ ժողովիք միաբան յաղօթս, և կերակրիք յանմահական կերակրոյն, յիշեսջիք զիս և զնոսա, զի արասցէ ողորմութիւն ողորմածն Աստուած: Եւ նաւ հինգ զեղոյ սահման՝ Կոմ ագարն, Ընդարոյ վանայն, Շ֊աւառնահոյն՝, Գետամէջն, Կմանոյն, Գետավանայ ծովն, երկու հարիւր վաթսուն դրամ ՚ի Կոմ ագարէն, հինգ հարիւր երեսուն ՚ի Քրտանենացն, վեց հարիւր վաթսուն Ընդարոյ վանացն ծովէ, ինն հարիւր ինսուն ՚ի Կարբին գետերէն և ՚ի նաւերէն. որում մի՛ ոք իշխեսցէ հակառակել: Եւ թէ յանդգնի ոք՝ յերիք հարիւր ութեւտասն հայրապետացն նզովեալ եղիցի, և մնասն և բաժին ղՅուդայինն առցէ: ՚Ի թուին Ա֊այոց 352»: Ասա կան ՚ի շերմի աստուածազգեաց տէր Սողոմոն և տէր Եղիանաս և Ամբաս Քաղբատունիք:

Գտաւեալ և յետ առնոյ ինչ նորոգ և Գագիկ՝ որդի Աշոտոյ շահնշահի, զհրաշակերտ եկեղեցին Վ֊անեվանայ՝ ըզսուրբ կաթողիկէն, և տայ զՀոգեառնագետ ՚ի նա. և պարսպէ շուրջ զեկեղեցեաւն և զրէ արձան անփծից՝ ոչ յափշտակել զայն ՚ի սուրբ եկեղեցւոյն:

Եւ՝ այս այսքան տեղեկութիւն քեզ գովելի գործոց իշխանացս և շինութեանն եկեղեցեաց և ժառանգութեանն նոցին. որ ոչ միայն այս, այլ և բազում էին շինեալ եկեղեցիք ՚ի Վասական աշխարհի և յԱբարատեան գաւառի: Այլ մեծ իշխանքն գահակալութիւք Վիրնեաց տէրութեան Աշոտ և որդի նորա՝ Ամբատ և այլք յոլով և մեծամեծ երեւեցուցին գործս ՚ի

---

[1] Այլ օր. Շ֊աւառնահոյն:

շինուածս եկեղեցւոյ՝ զարմացուցիչ ամենայն տեսողաց, զորոց պՀանդամանս յետոյ պատմեցից կարգաւ: Ա.ԺՄ անդրէն դարձեալ ձառեցից զկարգ իշխանացն և զմեծամեծ անցս աղետից, որ ընդ մեր աշխարհս յանիծեալ ձեռնէն Յուսիայ:

ԳԼՈՒԽ ԼԼ

Գալ Ց---ֆոյ ի Սխուան աշխարհս, և բերդ---ն և կոտրո---ն քա---տոցս, փախուստ էշխանացն, պինդքրամբ պոքնալ և հրամիզ հըրպեհո---ն երինաբէրոց բարկո---ն. վէրսկան հոն սմբատայ ըռֆո---րէն, և կրկին գաբչ բերելոցն և փախոտէցն. ղրկեցէ որ 358 ըռո---կանէն հայոց ընդ այս աշխարհ յիւր:

Յայնմ ժամանակի ապստամբեալ Յուսիայ յիւրմէ ամիրապետէն՝ կամէր ի դիմի հարուլ նմա. վասն որոյ յղէ ամիրապետն առ Ամբատ թագաւորն՝ զօրս ծանուս գնալ ի վերայ Յուսիայ Աղտրպատականի. զոր և կամեցաւ կատարել իսկ Ամբատ և գումարեաց: Եւ ի ծածուկ ծանոյց զկրան Յուսիայ. բայց նա ոչ հաւատաց մանրմտութեանն, այլ ծածուկ ի սրտին նուիթէր, նօթձէր զդառն ոխութիւն. և սկիզբն առեալ ապստէր զիսպող ժամու: Ապա հնարեալ հնարս և հաշտեալ ընդ ամիրապետին՝ առնու ընդ ձեռամբ և զ---այս. և զօր գումարէր, պատրաստութիւն կազմէր՝ ի գալ գարնանն կռուել յաշխարհս ---այոց. յորում աւուրս մեծ նախարարն Սիւնեաց և գահերէց իշխանն Աշոտ յետ բազում քաջութեանց և մեծամեծ կրկնելի գործոց, այնչափ բարեպաշտութեանց, շինութեանց աշխարհին և եկեղեցեաց և վանորէից՝ փոխի յաստեացս:

Իսկ մեծ բարեպաշտուհին և անհամեմատն ի կանայս Շուշան՝ կին նորա, զարդարեալ զդի նորա ազգանական ձեւով և աշխարհաժողով ամբոխիւ, դամբանական փողովք և ողբերգական քնարահարիւք տարեալ հանդոյց՝ յեպիսկոպոսա-

[1] Ա.ՀԼ օր. տուեալ հանգոյն:

բանին Տաթևայ[1] ի դրան սուրբ նկեղեցւոյն, զոր իւր հրամանաւ շինեալ էր առ Յովհաննէս· յորոյ ի սուգ եկն Ամբատ թագաւոր առաջին իշխանաւոք ՚այոց: Եւ լացեալ զլալիւն մեծ՝ մխիթարեցին զինքինն և զորդիս նորա՝ զԱմբատ, զԱհաղ, զԿարգէն և զՎասակ: Եւ կացուցանեն զԱմբատ գահակալութիւն իշխանաց Սիւնեաց և առեր ի վերայ աներևոյթ Փառական աշխատելոյն: Իսկ ի բանալ դրանն գարնանոյ շնչեաց հովմ գառնութեան և ցոլացաւ բոցն հարաւային յաշխարհս մեր — և յորջոյ իւրոյ[2] գազանն անգաւառագիղ և շունն կատաղի՝ Յուսուփ և կամէր կլանել զամենայն ՚այսաւառնեայս: Եւ հասեալ ի Նախիջեւան քաղաք յաւուրս սուրբ պասեքին և ասպատակ սփռեալ՝ կամեցաւ ջնջել զգաւառն Սիւնեաց և զբռամբ առնել զիշխանան: Իսկ գահերէց իշխանն Սիւնեաց Ամբատ ժողովեալ զեղբարս, զազգայինս իւր և զազատագունդ զօրս առնէին իշխանութեանն իւրոյ՝ և ընդ առաջ Խանայելակառնայն և կալեալ զանցս և զկիրճս ձանապարհացն՝ զբազումս սատակեցին:

Նայր ոչ խնամք վերնոյն հեռացեալ էր և կամէր մնանել զմեզ, ոչ ինչ օգտեցան և ոչ կարացին զդէմ ունել· այլ զմայրըն իւր ՚ի ՚ուշան և զկինն իւր Սոփի, որ էր դուստր Գնեւնկին և քոյր Գագկայ Թագաւորելոյն ՚ի Վ՚ասպուրական, փոքրիկ առեղեակ տղայիւ միով, և զկինն Սահակայ՝ եղբօր իւրոյ, որ էր դուստր բդեշխին Գուգարաց, տարեալ ամրացուցանեն յանառիկ առնուն Երնջակայ և ինքեանք փախստեայ լինին: Ամբատ գնայ առ անեղն իւր Գագիկ ՚ի Վ՚ասպուրական, և Սահակ առ իւր անեղն ՚ի Գուգարս· բայց Կարգէն և Վ՚ասակ ՚ի նոսա չկացին անդէն, և Գրիգոր Սուփան և եղբարք իւր ՚ի նոսա չկրեցին անդրէն ամրացեալք ՚ի կատարս լերանց և ՚ի ծորձորս ձերպից վիմաց: Իսկ անիծեալն Յուսուփ անհնար

---

[1] Ա՛յլ օր. չեխ[ո]վ[ո]ր[ո]ւ[ն]ն Տաթև ՚ի գրած . . . . — [2] Ա՛յլ օր. յորէն էրոյ:

զայն և ասպատակ սիրեալ ընդ գաւառն ամենայն՝ ժողովէր զառ և զաւար և զապահովութիւն գերեաց, զոր միանգամ եգիտ՝ և՝ ի նոցանէ ընտրեալ զպիտանիսն և զդեղեցկագոյնսն՝ ի գերութիւն վարեաց և զայլն սրոյ ձարակ առեալ կոտորեաց։ Եւ ահա լինէր այս յաւուրս ոծոյն սուրբ զաւակին։ Եւ խառնեցաւ անբաւ սպանելոցն արիւն յարիւնն փրկական Փրկչին մերոյ Յիսուսի, որ յայնմ աւուր հեղաւ՝ ի վերայ խաչին. ոչ լոց պահի պահին մարտիրոսաց։ Եւ եղև այս յ358 թուականին՝ այսոց (ամ առաւն 909)։

Իսկ անիծեալն Յուսուփ՝ ի գոլ ածեալ զայս ամենայն ոճիս, երկոտասան օր երևեցաւ արարեալ՝ անց գնաց՝ ի Վուին քաղաք և նստաւ անդրին բանակօք առ եղերբ գետոյն Երասխայ։ Ապա այն ինչ ամենայն հնազանդ փրկութեան վճարեալ լինէր և ոչ գոյր ուստեք ամենևաւին, Վրիզոր Սուփան՝ Ամենայց իշխան, գայր հասանէր առ Յուսուփ անձնատուր լինելով, թերևս այնու հնար լինի գերծանիլ յինկնալ հասեալ չարէն. զոր և տեսեալ Յուսուփայ՝ խնդաց մեծապէս և առ ժամայն ընդունի զնա պատուով վերին դիմօք։ Տեսեալ զայն և համազգուհին նորա՝ մանկանն Ա՝ասակայ, և լուեալ թէ պատուեցաւ Վրիզոր և ոչ ինչ վնասեցաւ, նմ և նա յամրոցէն իւրմէ և գնաց առ Յուսուփ անձնատուր լինելով. զոր առ ժամայն ընկալեալ և յիւր սակաւուց դնէ՝ ի դիսպահոջ՝ ի Վուին քաղաքի· որ եկաց անդէն առ մի։ Իսկ անիծեալն Յուսուփ բազում մարտս ընդ Թագաւորին Ամրատայ յարուցանէր զամի ողջոյն առ՝ ի զրոյց գնա, և ոչ կարէր։ Եւ այս եղև յապրեստամբութենէ իշխանացն, զոր ձեղքեցան՝ ի միաբանութենէ անտի յուսով, և ածին խառնեցան մեծ ինքեանց և աշխարհիս ՝այսոց, (մանաւանդ) զՎաղկայ ասեմ Ընծրունեայ, որ Թագաւորեաց Ա՝ասպուրականի և միաբանեցան՝ խորհրդեամբ ընդ

՝ Այլ օր. Ե գրեցաւ։

Յուսեփ զոյգն ինչ պատճառաւ, զի խնդրէր ի Սմբատայ թա-
գաւորէն առնուլ զԱխիջևան յիշխանէն Վրաց Սմբատայ և
տալ նմա, զոր ոչ կամեցաւ (թագաւորն) վասն բնական հայ-
բինեայ նոցա. սակս որոյ ապստամբեալ գնաց առ Յուսեփ
և թագ կապեալ ինքեան՝ կամէր թագաւորել ի վերայ Հայոց:
Գայ ապա և առ Յուսեփ Աշոտ՝ եղբայր Սմբատայ արքայի,
և հնազանդի նմա. ընդունէ նա ի պատերազմի և զՈւշիզ՝
զորդին Սմբատայ:

Եւ այսպէս խորհրդացեալ հպարտացեալ մեծամեծ վիճա-
նոք գայր ի Դուին՝ ընդ իւր ունելով զԳրիգոր Սուփանեն:
Եպա վասն կռակածանաց ինչ յայտնի ոչ կարէր (Յուսուփ)
նենգել մեծ իշխանին Վրաստանեայ և հանապազ զմահ խոկայր,
վասն որոյ զեղ մահու զանխլաբար մատուցանել նմա. և ողո-
զեալ որովայնի նորա՝ մեծաւ տագնապաւ արձակէր զոգին:
Զոր սգացեալ Գադիկայ թագաւորի և Աշոտոյ Նազրատու-
նեայ ընդ մեր նորա Ամարիանայ և ընդ եղբարցն Սահակայ և
Վասակայ՝ բարձեալ տապան և եդին ի տապանի յիւրումն
ձեռակերտ արբանեակին ի սուրբն Շ[իմեոնիա][1]: Ապէս Ա՛ու-
շեղայ արբոյց զնոյն զեղ մահու. զոր տարան ի Դարձոն[2] և
եդին ընդ նախնիս նորա: Զմանուկն և զՍմբատ՝ եղբօրորդի
զի թագաւորին Սմբատայ, ապանին: Իսկ գեղաղէշ[3] պատա-
նին մանուկն Վասակ՝ եղբայր Սմբատայ Վրաստանեայ տեառն, որ
վասն ոչ հպատակելոյ չար կամաց անիծելոյն Յուսեփայ եղեալ
էր ի բանտի աւելի քան զամ մի, յաւուր միում ի նահան-
գալ երեկոյին կոչեալ յօգնութիւն զվերին կամն և կնքեալ զին-
քըն ասէ. «օգնեցէք ինձ՝ Վրաստանեայ եկեղեցիք», և առեալ բռ-
նութիւն պողովատիկ և ի գործ ածեալ՝ զպահապանսն դիւա-
թաւալ կացոյց. և ինքն վազեալ հարուստ մի գնաց և կա-
խեալ ընդ պարիսպն էջ[4]: Եւ զի ունէին ծառայք նորա ձի

[1] ԵՀԼ օր. ի սուրբն Շիմէոնէ: — [2] ԵՀԼ օր. ի Տարօն: — [3] ԵՀԼ օր. գե-
ղեցիկ: — [4] ԵՀԼ օր. էջ—:

պատրաստական՝ եկ յերիվարն և փախեաւ։ Եպա մինչ ձիւ պահապանացն և ձայն հրոսակացն զկնի զօրացեալ լինէր, մինչ այս մինչ այն՝ նա ի փողոցս այգեստանեացն անկեալ՝ ընդ այլ և այլ ճանապարհս անց գնաց յամուրս աշխարհին Խրոյ։ Յայսմ վայրի ապա և հայկազուն իշխանքն Աիւնեաց՝ եղբարք Գրիգորի, որ Սուփան յորջորջէր, Սահակ և Վասակ հանդերձ մարդն իւրեանց երանելի տիկնոջն Մարիամու, զկնոջն անձանց հետևեալ և փոյթ պնդութեան յանձինս բերեալ՝ կամեցան եղանել ի ձեռաց անօրինին և փախչել անկանիլ յամուրս աշխարհին Խրոյ և ոչ տարաշխարհիկ լինել մինչև անցցէ բարկութիւն Ցեառն։ Եպա գնացեալ արագաթռիչ նաւակօք ամրացան ի Աևան կղզի։ Զոր լուեալ Յուսիայ՝ զօրս զկնի արձակէ, որք եկեալ նաւան ընդդէմ կղզւոյն. իսկ նոցա երկուցեալ՝ մի գուցէ և ի հետիոտ չարացն ի մէջ անդնդապատոյտ զբնաւանին ըմբռնիցին, ելեալ անտի ի գիշերի բազում նաւակօք անցին յայն կողմն և գնացին յամուր գաւառն Միափորոյ։ Խնացեալ և զայն զօրացն՝ զկնի սկսեին. բայց նախ մեռեալ ի կղզին կողոպուտս առնէին զամենայն։ Ցեսեալ ապա իշխանացն զեկեալ հասեալ հրոսակին՝ դարձան և մեծագէս քաջութեամբ զրազմամատակէին և զայլսն փախստական առնէին. և ինքեանք անցեալ գնացին յամուր աշխարհն Գարդմանայ և Ըղեցեաց՝ և միացին անդէն վերին այցելութեանն աւետեալ։ Ընդ ի թափառական պանդխտութեանն հասանէր վախճան երանելի տիկնոջն Մարիամայ՝ մօրն իւրեանց, զոր խնկեալ և զմռսեալ եդին ի փայտեայ տապանի և պահեցին մինչև յօրն այցելութեան և դարձի իւրեանց ի հայրենի իշխանութիւնն, հանդոյն ոսկերացն Յովսեփայ որ յԱեգիպտոս ընդ Խարայելացիան, զոր բերին յերկիրն Ա՛ահառայ։ Եպա ի ժամ դարձին բերեալ շքեղագոյն պատուով զմայրն իւրեանց, աշխարհաժողով հանդիսիւ եդին ի հանգստի մերձ առ ձեռակերտ եկեղեցի նորա, որ ի Շողուագահ։

Յակ անիծեաւն Յուսուփ երեալ ՚ի Դուբին՝ յետ սակաւ մի աւուրց կրկին անգամ սկսաւ որսալ զարքայն Ամբատ, որ ամբացեալ էր ՚ի ձորն Աշոտենից յամուրն Կապոյտ կոչեցեալ. Հնարի՝ և երդմամբ հանել զնա Յուսուփ. և առեալ զայ ՚ի Դուբին և արկանել ՚ի չար կապանս երկաթիս՝ բարձեալ բնաւին զքօղ պատուականի չարութեան իւրոյ: Եւ առեալ զնա զայ ՚ի մարտ ընդ անառիկ ամրոցին Էրնջակայ[2], յորում կային պատուական ախիւռայքն Վիրնեաց՝ Հ՚ուշան և Սոփի և այլ բազում ազատ կանայք և ազատ որեարս: Եւ մարտս առաւիկ յօրինէ ընդդէմ բերդին բազում աւուրս. և օր աւուր զանազան հնարիւք խառնացուցանէր զմարտն և ոչ ինչ օգտէր: Յորմէ զարեալ տայր բերել զթագաւորն հանդէպ բերդին և զանազան կառամաւոք չարչարէր, և հրամայէր. «առաջին ՚ի դուրս զբերդն»: Եւ նորա խնդրեալ զանդերձանելի ըզչարն՝ ոչ ինչ խօսէր. զոր և անդէն առաւոտիւն չարչարանօք ՚ի վեր քան զընութիւն մարդկան կառարեցին զառնըր թագաւորն Ամբատ և հրամայեցին տանել ՚ի Դուբին և զփայտ կախել զվեռնալ մարմինն. որ ձանձանչաւոր նշուլիւք վկայեցաւ ՚ի բարձանց և բժշկութիւնք մեծ լինէին. և բազումք հաւատացին ՚ի Քրիստոս: Եւ եղև այս ՚ի թուականին [1]այոց 362:

Ընդ զայսպիսի մեծ և զյանդուգն ոճիրս գործեալ անիծելոյն՝ ոչ յագեցաւ չարութեն. այլ և անդէն կամէր թիւնաթափ լինել[3] ՚ի գաղթականան որ ՚ի բերդին, վասն որոյ ոչ հնազանդ ՚ի տեղոյն՝ մինչ ՚ի դիշերի գողութեամբ էառ զբերդն անձաւամուտ և քարաձնոյց արամբք, ոլք երկաթի ձանկօք ընդ ժայռս գժուար վախից ապառնատակեալ ընթանան: Այլ թէպէտև էառ՝ ոչ ՚ի մարդկան հնարից, այլ Տէր եղծանելով եղծանել կամէր և մատնեաց: Ապա բացեալ զդուրս բեր-

---

[1] Այլ օր. հնարէ և երդմամբ: — [2] Այլ օր. երնջակայ: — [3] Այլ օր. բիւրեղ լինել:

դին՝ հանին զփառաւորեալ սիւնապան բազում մեծութեամբ զանձուքն և զընակիչս բնդդին՝ ի սուբ սուսերի մնաշեցին։ Իսկ զմեծ բարեպաշտուհի տիկինն Շ֊ուշան՝ կին Աշոտոյ և մայր Աբմբատայ և այլոց, և զՍոփի՝ կինն Ամբատայ՝ քոյր Գագկայ թագաւորի, միով աղայիւ, և զկինն Սահակայ այլովք ազատ կանամբք հաւ խաղացոյց գնդութեամբ և գնաց՝ ի Գուին, և եղ՝ ի նեղ յերջ[1] խառաչմին բանտի։ Եւ անդ էր տեսանել զաղեղոցմ տեսակ փափուկ և ալքայազուն կանանցն, որք ջուր անգամ և աշտուձ հաց ոչ գտանէին ցյապ[2], նա և ոչ խոտաւղէն անկողնոց խշոի փոխանակ փետրալի հիշատացն և ոսկեթել գահոյիցն։

Լուեալ զանհնարին գոյժս զայս Ամբատայ որ՝ ի Վասպուրական, և Սահակայ որ՝ ի Գուգարս, թէպէտ գուն գոծեալ բազում ջանացին գերեթափ լինել՝ ոչ կարացին։ Ապա անդամօր աննեարարեպաշտ և մեծահաւատ իմաստուն տիկինն Շ֊ուշան բազում գոհութեամբ վախճանի ողորմատեսակ մահուամբ՝ ի բանտի անդ, ընդ նմին և փոքրիկ դիեցիկ մանկիկն Սոփիոյ և Ամբատայ, զոր հանեալ՝ ի բանտէն պահապանացն ընկենցին արտաքս. և առեալ քահանայից և ժողովրդականաց իրր զպանդխտի ուրուք (դի) տարեալ հանգուցին՝ ի դրան սուրբ նկեղեցւոյն, զոր՝ ի քաղաքին յանուն Սերգեայ վկային կանգնեալ էր՝ Ներսեսի շինողի։ Իսկ զերկու կանայսն Աբմբատայ և Սահակայ առեալ տարան՝ ի Պարսս յԱտրպատական և եղին՝ ի դիպահոջ յամուրս իւրեանց։ Յետ այսպիսի անցից՝ էր՝ ի սպարապետութեան Աշոտ՝ հզօրագործի Ամբատայ. և որդին Ամբատայ Աշոտ կոյր՝ ի փախստի առ կայսրն Յունաց, որում թագ կապեալ Յոհաննեսի կայսեր՝ յուզարկէ՝ ի Հայս։ Ընդ որ զջարեալ սպարապետն Աշոտ կամէին պատերազմել ընդ միմեանս սաստիւ, զոր համոզեալ մեծ կաթողիկոսն Յովհան-

---

[1] Աշխ. օր. Ա եք՝ ի նեղ յորջի խառաչմին բանտի։ — [2] Աշխ. օր. ոչ ցկտանին յոք։

նէս և խաղաղացոյց. և սակաւ մի կազդուրեր աշխարհս ի հինոյն Յուսիայ:

Յայնմ ժամանակի եկն ի վ. ասպուրականէ մեծ իշխանն Ամնի Ամբատ առ արքայորդին Աշոտ Թագաւոր, որ մեծաւ պատուով ընդունէր զնա և ազգի ազգի փառօք շքեղացուցանէր: Եկին և վ. սուակ՝ եղբայր Գրիգորի Աուփանայ. զնա ևս ընկալաւ խնդութեամբ Աշոտ և վճռակեցոյց իւրոց աերութեանն: Յետ սակաւուց եկին և փախստականքն Սահակ՝ Ամնեանց աէր, և Խարգէն և վ. սուակ՝ եղբարք Ամբատայ՝ ի բնիկ աշխարհս իւրեանց ի Ամնիս: Առեալ զայն Ամբատայ՝ հրամանն առնու յարքայէ և գառնայ Անբատած լինի, և գայ գառնէ զեղբարս իւր. և խնդութիւն ոչ փոքր լինէր ի մէջ նոցա: Տեսանէին նոքա քաղաք զարքունական ապարանսն իւրեանց, աւերեալ զեկեղեցիս և անբնակ անմարտաց զեալ զմեծամեծ առանս և զգեղեցիկ գաստակերտս, ունայնացեալ զամբարս ցորենոյ և խորտակեալ զգուբս գինւոյ: Ոչ փոքր լինէր սուգ և տրտմութիւն և թորումն արտասուաց լինէր ի մէջ նոցա՝ ևս առաւել վասն գերեալ տիկնացն: Եպա միչ յայս վարանեալ կային՝ զան և կանայք նոցա ազատեալք աստուածային խնամոքն ի գառն գերութենէն Յուսիայ: Վ. ասպն որոյ մեծապէս խրախացեալք գոհութիւն մատուցանէին Աստուծոյ պարգեւողին զնոսա. և այնուհետև փոխանակ ողբոց և աշխարանաց ցնծութիւն մեծ լինէր ի մէջ նոցա: Եւ աւելն առնէին փութապէս յառաջին լրութիւն շինութեան հասեալ լինէր յորպարանս նոցա: Եկին և Սահակ՝ եղբայր Գրիգորի և վ. սուակայ, ի հայրենի ժառանգութիւն իւր ի Վհղամ. և սակաւ ինչ կեցեալ՝ վախճանի և գնի ի քնարանի յիւրում ձեռակերտին առ դրան մեծ եկեղեցւոյն, որ ի Տորառուս:

Յոկ վ. սուակ՝ եղբայր սորին, յետ աւուրց ինչ երկնաւորիկ թագաւորութենէն Հայոց, զոր երկու Աշոտքն ու-

նէին և միշտ զրպռէին ընդ միմեանս ՚ի պատերազմ. և կատկածեալ յարքայորդւոյն Աշոտոյ՝ ոչ գնային առ նա. մի՝ զի սիրէր զա միւս Աշոտն՝ որդին Շ֊ապհոյ, և մի՝ զի փեսայ էր Գ֊ուրգենայ՝ վ֊րաց բդեշխի. և Գ֊ուրգէն ընդ հակառակըս բերէր Աշոտոյ: Ապա ՚ի մէջ ձգեալ զկաթողիկոսն Յովհաննէս՝ հայցէր կռակ ուխտի և երդմանն, զի հանդարձակ լինցի առաջի նորա և անկասկած. զոր և առեալ Աշոտոյ թագաւորի՝ հաստատէ զկամն նորա առ ինքն: Առեալ զայն յետկար վ֊ասակ ՚ի ձեռաց կաթողիկոսին՝ գնայ առ Աշոտ. և միամիտ մանրմաքրաբար ընդունի ՚ի նմանէ որպէս համամիտ սիրելի: Իսկ ապա հրապուրեալ յոմանց Աշոտ, որք ասէին, եթէ թուղթ առ նա գրեալ գտեալ եղև ՚ի միւս թագաւորէն Աշոտոյ և ՚ի Գ֊ուրգենայ՝ յանելոյ իւրմէ ՚ի ձեռն սուրհանդակի միոյմ, յի ամենայն չար խորհրդոյ թեամբ վասն քո: Ասկըս այսր կալեալ զվ֊ասակ երկաթի կապանաւք գնել յամուր բերդն Այենոյ. և թէպէտ կաթողիկոսն յոլով հնարիւք ջանայր առ թագաւորն ազատել զնա, ոչ լսէր՝ պատճառ եղով պատճառս ինչ: Ապա յետ աւուրց ինչ ազատեալ եղև բռնութեամբ յիշխանէն Զորոյգեայ և Գ֊արգմանայ ՚ի Սահակայ, և առաքեալ ՚ի տուն իւր ՚ի Գ֊ողաղքունի գառաւ, զի այն իսկ էր մանն ժառանգութեան սոցա ՚ի Փառական աշխարհին:

Յետ այսց բանից ապա և մեծ իշխանին Փառակայ Սմբատայ երիւք եղբարբքն հանդերձ յաւագեանն իւրն սրտիւ զրժդրգինեալ ընդ ամիրային Գ֊ողթան, զի յայնժամ զգառաւն Գ֊ողթան բռնակալեալ ունէր, խնդրէին ՚ի բաց զանհնարն հայրենեաց իւրեանց՝ զամուրն Նշլնջակայ և զշրջակայ գառաւսն, զոր Յուսուփ ՚ի նա հառատացեալ էր և ամիրայն Գ֊ողթան ոչ կամէր տալ, այլ ասէր. «յարքունուստ ինձ իսկ պարգեւեալ է»: Առեալ ապա զայն Սմբատայ՝ զոր գումարէ ՚ի պատերազմ ահագին ինն աստակութեամբ, ընդ իւր բերեալ

և պԱկիւթացի Թուլքան, որք խորանօք բնակեալ էին յաշխարհի նորա: Եյանէ ընդ առաջ և ամիրային, և ի խառնիլն ընդ միմեանս՝ յայլեայլ լեռնէր ի ապարացին: Ընդ առաջ զօրքն Թուլքաց, որ ի ձախ կողմանն յետուստ թիկանցն Ա՛ասակայ կային, խորհուրդ իմն դիւաբախ ի միջ առեալ և միաբան ի վերայ Ա՛ասակայ յարուցեալ՝ դիմեալ յերկիւղ ընկենուին և ինքեանք դէմ եդեալ փախչէին զկողմամբք Նախջաւանու: Իսկ զդիակ գեղեցիկ երիտասարդին (Արմբասայ) բարձեալ եղբարցն ի տեղւոջ ձնակառոյն անբաւ ողբովք և բարձրակառաչ ազաղակաւ՝ տարեալ եդին ընդ հօրն իւրում Աշոտայ, արարեալ կոծ մեծ ի վերայ նորա:

Նայր առացից այժմ և վասն Յուսիկայ: Յետ զայս ամենայն ոճիրս անցուցանելոյ նորա ընդ աշխարհս ի այոց, գնաց Ա՛ստպատական և սկսաւ առպատմիլ յամիրապետէն: Եւ նորա խնդացեալ վերստանելութիւնն Յուսիկայ՝ զօր բազում զումարէ ի ձեռն հաւատարմի ուրումն և առաքէ առ Յուսուփ. զոր ընդունեալ՝ չարաչար կապանօք ածին առաջի ամիրապետին. և նորա բազում գանեալ՝ կապանօք եւս արկանել ի մէջին, ընդ նուրբ և աղմուտ բանտ: Եւ անդ կացեալ ամս ինչ՝ ապա ի սաղրելոյ ուրումն յիւրեանց չար օրինացն զբռնասուրն արձակեալ եղև ի կապանաց. և վերստին ի նոյն գահ իշխանութեան յուզարկեալ՝ յանձնեալ նմա և զհարկս այոց. որ և եկեալ ի Ա՛ստպատական՝ գնաց Ա՛ստպատականն և կացոյց ի վերայ այոց ոստիկան մի յիւրոց ծառայիցն Նար անուն որ և Արբքի[1] կոչէին: Եկեալ անիծեալն և կրկին չարն և շնաբարոյն քան զՅուսուփ՝ բնակ առաբս ինչ ի Նախջաւան. և զի հարթ և հաւասար վայելչութեամբ կային իշխանքն Աիւնեաց Ամբատ և Սահակ և բաժանեալ էին պհայրենի ժառանգութիւնս աշխարհին, առաջն Ամբատ զա-

---

[1] Ալ. որ. Արբէփ:

ազգապոյն մնան Աբենայց ընդ արևմուտս կողմն և զբոլոր Վ_այոցձորն ունէր ի բաժնի. իսկ Սահակ՝ ընդ արևելս մինչ ի Ձակաբի. բայց փոքրիկն Նարգէն տակաւ ինչ ունէր մնան ի բաժնի: Սակս որոյ խանդացեալ ի չարին՝ զկուԹիւն իւր համարի ի Սահակայ զմեծ ակռուԹիւնն՝ կարծիք իմն ունոտի յուսոյ ի միտս իւր բերեալ և ի չար մտադիտել յորդոբեալ՝ եկեալ և գնայ ի Նախջաւան առ Նարն այն, և ուխտ ընդ գժոխոց կռնալ՝ դաշինս դնէ նմա և ցուցանէ զկուԹիւն իւր ի Սահակայ:

Իսկ նա չար և խորամանկ մտօք առ ժամայն ընկալեալ ըզնա՝ խոստանայր կատարել զինդիրն, առն ունէր և եղբօրն գայլոյ. ապա խնդրակս հանեալ կոչէ զՍահակ սիրոյ ապատաս: Ա_ուեալ զայն Սահակայ և ցնորեալ ի խելացյ՝ հաւատալով նմա խնդուԹեամբ գնայ ի կոչն, որպէս յայրքունեաս բազում և մեծամեծ ընծայիւք: Եւ հանդիպեալ նմա ի Նախջևան՝ խնդուԹեամբ զնա ևս ընդունի, հիշատացեալ խորհրդովքն ընդ դիւրատաս գիւտ մեծի որոյն. և առ ժամայն Սահակայ ևս դաշինս կռնալ ընդ նմա վասն հաւատարմուԹեան՝ առ Նրսբրն. «երԹիցուք մեք ի Դուին և անդ ապահով լեալ խորհիցուք զմիմեանց օգուտ». և առեալ զՍահակ և զՆարգէն՝ գնացեր ի Դուին: Եւ իբրև եմուտ ի քաղաքն և հանդեաւ յուպատանան որ ի բանտին, եբաց զբօղ չարուԹեանն. և կալեալ զՍահակ և զՆարգէն երկաԹի կապանօք եդ ի բանտի զԹմբևալան ի խելացյ և զանդգայացեալսն ի մտաց, որք իւրովի կամօք անձնատուր և անձնառնան եղեն:

Օ_այս արարեալ շնաբարոյն Նար՝ ինքն յետ սակաւ աւուրց եկեալ և սիրեալ զբօլսն ընդ ամենայն երկիր՝ առապատակ եդեալ իսպառ. Ընդկաց զամենայն աշխարհս Վ_այոց ևս և զԱղուանեան երկիր գտաւան. և լցեալ առաջօք և գերեօք բնակէր ի Դուին: Ապա հրամանն հասանէր ի Յունաց առ Նարն գնալ յԱղուանս: Եւ առ ժամայն կացուցեալ

զմի ոք ի հատատարիմ ծառայիցն՝ Խշը անուն, ի վերայ կապելոց ի Դուին Ասաւական իշխանացն՝ ինքն անդ գնաց ի Պարսս Աղտրպատական։ Եւ անդ հոգացեալ զամենայն հոգս ազգին ուրումն յետ բազում աւուրց դառնայ այսրէն մեծ սպասեալ զօրու և խորհի ի միտս իւր գնալ զԱսական կողմանքն և յառաջի առնուլ զաշխարհն. և թէ հնար գտցէ՝ ընդունելոյ և զմեծ գահիրէց իշխանին Աբունեաց զԱմբատ կամ յանկարծօրէն առ ազակաբար և կամ մեղսօրէն առ թշուառ հարեալ գերել և առեալ գտանել նորա և զինքն տանել առ եղբայրն ի Դուին։ Եւ մեծ և ամենիմաստն Ամբատ ի սեպհական գաւառին իւրում գարնանալ գտգարեալ նաեղբ ի Վայոցձոր։ Լուեալ սպա զհամբաւ գալոյ նորա և ամրացուցեալ զտուն իւր և զամենայն գաւառն յամուրն Վայոցձորոյ, և ինքն հոլովան տուեալ զօրացն ամրոխս բազումս սպասեալ զօրու շուրջ զերկրեալ կացուցանէր յիւրում սրբուհական յատպարանն, որ ի գիւղաքաղաքն Աղիզիս։ Եկեալ սպա Նարն և տեսեալ զնա այնպէս պատրաստութեամբ և անվանելի զօրութեամբ զգուշացեալ՝ ոչ ինչ կարաց յայտնել յիւրոյոց անտի, այլ ի խաղաղութիւն խօսեցեալ ընդ նմա՝ բազում պատգամաւորօք ուխտ հաշտութեան և խաղաղութեան ընդ նմա հաստատէր. խնդրէր և Ամբատ զերկարան իւր որք կային ի Դուին ի կապանս, և նա զայնս ևս խոստանայր արձակել։ Եւ սպա եկեալ առ միմեանս՝ խնդութիւն մեծ առնէին և բազում օժիտս և պարգևս ընկալեալ Նարն ի Ամբատայ՝ չուէ և երթայ մեռանել ի Դուին. և իսկ և իսկ առեալ զաւարտարար սակ [1] գնոյ անձինն ի Խարգենէ՝ արձակէ զնա. բայց զԱհակ արգել անդէն, զի ոչ ունէր զծանր սակ դահեկանին, զոր գերեզմին խնդրէին։ Ընդ այս ամենայն ինչ և նա զերն վճարեալ առագանս բազում կշռոյ ոսկւոյ՝ և ա-

[1] Ա յլ օր. պարտարար։

զառեալ եւ՝ ի կապանացն և ելեն՝ ի սեպհական տէրութիւն իւր, և խնդութիւն բազում լինէր՝ ի մէջ եղբարցն և աշխարհին: Եւ կայսին միաբան խաղաղութեամբ պարապեալ շինութեանց և գովելի գործոց: Պայծառանային և յայն աւուրս համարզի սոցին իշխանացս՝ ի Պհատան տոհմէ Զագիկ մեծ իշխանն ամենայն բարեպաշտութեամբ, որ ունէր՝ ի բաժնի զԱղստև գաւառն և զկապան քաղաք. որ և յետ բազում բարեկարգութեանց վախճանի և դնի ընդ հարս իւր, և թողու ժառանգ զքաջազօրն Ջ՛ևանշէր և զՎ՛ահան: Եւ սակայազատէր զտէրութիւն նորա Ջ՛ևանշէր բազում ժամանակք. իսկ եղբայր նորին Վ՛ահան յանկարծակի՝ ի չար պիւռ բախեալ եղև և լկեալ. և վասն այնր հրաժարեցաւ յաշխարհական կարգէ և զգեցաւ զձև կրօնաւորական. և բազում ժամանակք ձգնեալ՝ ի սուրբ առաքելարանին Ցանձաւիարախաւ, և՝ ի խառակրծն մեծահռչակ մշանջենաւորանոցին՝ ի Հ՛առաւնեայ վանքն և սրբեալ՝ ի պիղծ ոգւոյն՝ կամեցաւ շինել վանս միւք անուն և կացուցանել՝ ի նմա բազմութիւն կրօնաւորաց, զոր յետոյ ասացից: Իսկ եղբանիկ և փառաւորեալ իշխանն Ամբատ յետ բազում առատաձեռնութեանց բարեպաշտութեանց փոխի յառտեացս և դնի ընդ հօր իւրոյ Աշոտոյ, և թողու զաւակ ժառանգութեան իւրոյ զարի և զհանճարեղ իշխանն Վ՛ասակ:

ԳԼՈՒԽ ԼՂ՛

Վ՛ասակ նախնիսպասարանին Ցունաց, և վասն սուրբ խաչին և այլ սրբոց, և վասն Ժառանգաւորանին հայրապետացն:

Եւ արդ յետ զկարգ իշխանացդ բերելոյ և երկայն բանիս պեռցանէ [1] ձառելոյ դարձցուք անդրէն և զոր ինչ վասն եպիսկոպոսացն են բանք և գործ, և շինութիւն սրբոյ եպիսկոպոսա-

[1] Ընդ օր. պեռցա ճառելոյ:

բանին Տաթևոյ և հոգեցատուրք իշխանացն՝ ձառնացուք, սակաւուք:

Զոր նախ առաջին էր սահման եպիսկոպոսաց բնակիլ՝ ի քաղաքս և՝ ի շինամէջս, զի հովուին պարտ է՝ ի մէջ հօտին լինել և ոչ յանկեան ուրիք կայանել, և հանապազ ներքին ակամբն վերահսկիկ լինել՝ ի վերայ հօտին, զի մի՛ խորամանկ խաբողն մտանել անդր՝ գողացի զոգի անմեղաց և՝ ի բաց տարեալ օձանացէ՝ ի հօտէն: Ակ յետոյ ըստ նպերտ բարուց ոմանց, որպէս թէ ձգնազգեաց և անապատասէր գոլով, կուսութիւն աչաց և ականջաց խոկացեալ՝ պատշաճ համարեցան բնակիլ՝ ի վանս, և՝ ի պատշաճաւոր ժամու ելանել առ հօտն և խրատել, որպէս և մերոյ աշխարհիս եպիսկոպոսք Սիսականս գրոհի, որք յառաջ ժամանակաւք շրջէին՝ ի մէջ գաւառաց և՝ ի տունս իշխանաց՝ միշտ և անդադար ուսուցանելով զբանն կենաց. և գահ արկեալ էր նոցա՝ ի Սիւնիս: Ակ յետոյ ըստ առաքինի և պարկեշտ բարուց իւրեանց ոչ ժուժեցին վանն ամրոխի և հրապարակաց հանապազ կալ և դեգերիլ՝ ի թէատրոնս, այլ գտեալ զայս տեղի յոյժ պատշաճաւոր և՝ ի ձահ և գրեա թէ վերին աղդմանէն առաջնորդեալք՝ եկին և բնակեցան առաքն՝ ի գեղեցկավայր տեղւոջս, որ իբր բարձր դիտանոց հայի ընդ արևելս՝ ի բաղում գաւառս ընդ հանդէպ լերանցն Վիշապասար, ուր բազմութիւնք սուրբ վկայիցն հանգուցեալ կան, յոյժ առողջառուն, և վայրն հարթատափաստակ՝ շրջապատեալ բարձր և սուր լերամբք իբր կարակոնակերտ կիսաբոլոր:

Առաջոյ վանացն ձորք և խոխոմք խորագոյն, յոյժ ընդարձակագոյն և գեղեցիկ, ընդ որ անցանէ ահագին դղնչմամբ գետն Ախուան, և ձորն այն լի այգեստանեօք և դրախտացեալ զանազան բուրաստանօք: Նոյն էր՝ ի տեղին՝ ՝ի վերայ բարձ-

---

[1] Այլ օր. Տաթևեայ տեղատուք:

լագոյն քարի եկեղեցի խրթին անտաշ վիմօք կրաշաղախ ձուլեալ՝ յոյժ ի հին ժամանակաց յատուցից անտի սրբոցն Ներսեհի և Սահակայ. և սակաւ կրծնաւորք մշտաջան ձգտութեամբ բնակէին ի նմա: Եւ էր տեղին հեռի յամենայն հինից թշնամեաց, զի միջոց էր աշխարհին յանքոյթի և ի զառանց տեղի և ամրացեալ ի մէջ երկուց ալքունական գահոյիցն Աւնենաց և Ռադոց: Եւ արդ խնդրեալ յիշեհանաց եպիսկոպոսացն Աւնենաց զտեղիս զայս՝ եկին և բնակեցան ի սմա. բերին և զաստուածամուխս սուրբ նշանն որ էր ի կենաբար փայտէն, բերեալ ի յունական աշխարհէն և ընձեռեալ եպիսկոպոսացն Աւնենաց ի պահպանութիւն վիճակիցոցս առացն առաջին իշխանաց և հանդուցին ի սուրբ եկեղեցւոջս. եդին աստ և զաստուածընկալ խաչն Ռաբգինեան որ ի Վասակայ՝ որդւոյ Ռաբդայ, որդւոյ Ընդոկայ, կազմեալ էր յարծաթոյ ի չափ հասակի առն միոյ և ունէր յինքեան մասն ի փրկական փայտէն: Ռևբին զնշխարս առաքելականս և հայրապետականս և մարտիրոսականս ի գլխաւոր և յերևելի սրբոցն, զորս հաւաքեալ էին անթիւ բազմութեամբ իշխանքն Աւնենաց, որք ընդ սրբոյն Գրիգորի և ընդ սրբոյն Ներսեհի գնացին ի Կեսարիա և ի մեծն Բասիլ, և յայլ և այլ ժամանակս բազում փոխադանօք ժողովեալ էին: Ընդ որս էր և նշխար մեծին Յովհաննու և Եսեխիանոսի նախավկային և մեռսեան առաքելոցն և սրբոյն Գրիգորի և աջ սրբոյն Բարխափեմեայ նոյն մարմնոյն, և գերազանցն մարգկային բնութեանս հերք սրբուհւոյ Աստուածածնին, և այլ բազումք, որոց ոչ գոյ թիւ: Զայս ամենայն բերեալ հանդուցին ի սուրբ եկեղեցւոջս և կազմեցին զսա փարթամ գանձարան աստուածութեանն: Այլ զերբն և զառաջին եպիսկոպոսն, որ աստ եկն՝ ոչ ծանեայ, միայն ի տէր Գէորգայ և այսր՝ գտի [1] նշան և

---

[1] Այլ օր. ֆոյ:

կայի Ծանօթ առենայն որպիսութեանց նոցա. այլ զառաջինսն ոչ գիտեմ, զի ոչ գոյր հիշատակ ինչ, բայց գիտեմ զի բազում ժամանակաք բնակեալ էին անդ:

Եւ արդ եկաց զինի տեառն Գէորգայ եպիսկոպոսին Միւնեաց երանելի այրն Ստեփաննոս տէր Գաւիթ. և էր սա յաւուրս Գրիգորի Միւնեաց գահերէց իշխանի, և միւս Գրիգորի որդւոյ Սահակայ, որ Սուփան յորջորջիւր, որ զԳողարքունի ունէր, առաջին Սուփանն, և աստուածապահ տեառն Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ՝ նահապետի բոլոր ազգին Միսականաց: Եւ էր հայր մեծ իշխանացն Վասակայ որ Իշխանիկ կոչիւր, և Ըշոտայ՝ հօր Սմբատայ Միւնեաց մեծ և գահակալ իշխանացն:

Եւ վասն զի յոյժ նեղ և անձուկ էր տահման վանացն Տաթեւոյ և ոչ էր բաւական պիտոյից սքանչացն՝ ապա հայցեալ տեառն Գաւթի յաստուածապահ տեառնէ Փիլիպպէէ՝ իշխանէն Միւնեաց ընդ գնոյ տալ զմերձակայ ագարակն, զոր և լուեալ կատարէ զինդիրն: Եւ առեալ 10,000 դրամ որ լինի մէն մի վեց դանկ՝ տայ ի ձեռս նորա զԸրծիւ գիւղ և զԱրդկանեաւրիչ որ ի վերոյ վանացն, բոլոր ընդ ջրթափուին առաջա յառնէայն աշխարհական հարկաց և ի նեպակաց: Եւ գրեցին կտակ յաւիտենական և կնքեցին իւրեանց մատանեաւ, որ ունէր օրինակ զայս.—«Ես տէր Գաւիթ՝ շնորհօքն Աստուծոյ Միւնեաց եպիսկոպոս, ի 288 թուականիս՝ սոյնպէս գրեցի զԸրծիւ ի տէր Փիլիպպէէ՝ Վասակայ որդւոյ, Միւնեաց տեառնէ, իւր տահմանօք, լերամբ և դաշտիւ, ջուրսն և ըմբջրեցն և զարօտ երկիրս, զարտ և զմնարդ: Եւ այս են տահմանք՝ յարևելից կողմանէ ուղիկիցքդ, որ ի Սարժեաց և ի Արդկանեաւրիչոյ ի գետոյ հատանի, և անտի ի բլուրդ որ ի շինապլխիդ, և անտի ջրթափուն Մոտրջաց գառակ և բնաստոիւդ ի Վարդանայ մարդի խոռն, և անտի Ընծիւակատար.—և յարևմտից կողմանէ Վրաձորդ բնաստարուդ.—և

'ի հարաւոյ կողմանէ ՚արժիք, որ 'ի ձմեռապարհէդ 'ի խոտդ՝ եկանէ ձորովդ 'ի վայր 'ի Աւազուրդ և 'ի վեր 'ի տար Վ՚անայց ձորոյ սեռիւդ։ Եւ տէր Փիլիպպէ առի զդանձս 'ի տէր Վահրամայ Պահլաւունեաց եպիսկոպոսէ 10,000 դրամ և սպասաւորեցի զիւրդ 'ի սուրբ խաչդ այդ սահմանովդ, որ 'ի վճիռս գրեալ է. վկայութեամբ Ընտիրսահի Պահլաւոյ տեառն՝ Վ՚ասակայ որդւոյ, և տեառն ՚բահատայ՝ տեառն Սահակայ որդւոյ, և տեառն Ընտիրսահի՝ տեառն Վ՚արդանայ որդւոյ, Ընշակայ՝ Վ՚ահանայ որդւոյ, Ռաբրէի՝ Սարգսի որդւոյ, Հօր Սարգսի և Հօր Վահրդայ և Մարկոսի՝ աւագ եղբարցս։ Եւտու ես տէր Փիլիպպէ զՎրդկանեբրիչոյ զկէտ Սառնաքարին փոխան և զկէտ սուրբ եկեղեցւոյդ. և չիշխէ ոք հեռացնել՝ ոչ եղբայր և ոչ որդի և ոչ յիմ խոստակդարաց։ Եւ թէ ոք պայքարի այդ սահմանացդ՝ դատապարտեալ լեցի Աստուծոյ և զիմ մեղս Աստուած 'ի նմանէ խնդրեսցէ, և դատին մի յաղթեսցէ։ Եւ այս է սահմանն—Ծիրանահողովդ 'ի վայր 'ի գետդ, և 'ի վերի կառոյն գետոյդ 'ի սենեակդ, սենեկաւդ 'ի ձոր, և ասոի 'ի Վաւակ։ Եւ կնքեցաք զվճիռս տէր Վահրէի և տէր Փիլիպպէ մեր մատանեօք»։ Եւ այս է ձեռագիր նորին. «Ես Փիլիպպէ՝ որդի Վ՚ասակայ, Պահլաւոյ տեառն, կամեցաք իմ ձեռագրովս հաստատել զայս վճիռս»։

Վարձեալ յետ հինգ ամաց այս Փիլիպպէ ըստ իւրում մեծահաւասս և մեծախորհուրդ բարեպաշտութեանն կամէր փարթամացուցանել զվանս Տաթեւոյ, և կենսացուցանէր զամենայն արտաքին գոյս իւր յիմանալին և յանեղծն. միաբանեալ սուրբ եկեղեցւոյն և յանձնեալ զոգի իւր 'ի սուրբ խաչն և 'ի տէր Վահրէ՝ ընծայէ զմեծագոյնն պարգև՝ զսեպհական գիւղն իւր զՏաթեւ 'ի սուրբ եկեղեցին հաստատուն և անխախտ պայմանաւ մինչ 'ի գալուստն Քրիստոսի։ Եւ է այսպէս գիր

---

[1] Այլ օր. 'ի Իւրմոյդ եղեալ։

վճռեին. — «Յերկիւղիւ և ի հնազանդութեան ընդ այսոցս որպէս կամ եղև ինձ Փիլիպպէի՝ որդւոյ Ա՛ստակայ՝ Աբգենաց տեառն, եւս զՏաթև վասն իմ հոգեւոցս՝ ի ձեզ՝ ի տէր Գաւիթ Աբգենաց եպիսկոպոս, (որ) յիմ հօրէն յիս հրամայեալ էր. անխուէշքարև, ամենայն սահմանօք, լիւթամբ և դաշտիւ, այգօք և ընկուզիւք, մարգագետնովք և ջաղացատով և որ ինչ համօրէն սահմանք են։ Եւ մի որ իշխեսցի յիս իմ անցման՝ իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակիցք հնազանդացնել զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ և՝ ի սուրբ խաչէդ, եթէ ոչ՝ նզովեալ լիցի յԱստուծոյ և՝ ի սուրբ եկեղեցւոյդ և՝ ի սուրբ խաչէդ, և՝ ի հոգևոր տեառնէդ անէծս կրեսցէ։ Եւս եւս ամենայն սրտի մտօք՝ ի ձեզ՝ տէր Գաւիթ Աբգենաց եպիսկոպոս, վայելել խաղաղական կենդանութեամբ, և որ յիս ձեր այլք նահին յաթոռդ վայելեցէք միշտ ցգալոստան Քրիստոսի. եթէ կան՝ այդպէս եղիցին, ապա թէ գնան, գիւղդ սահմանաւդ յեկեղեցւոյդ մի իշխեսցին հնազանդացնել՝ մի վաճառել, մի փոխել, մի պրատական դնել. այլ որ եկեղեցւոյ սպասաւորք լինեին՝ իշխան լիցին ամենայն սահմանացն։ Եւ վկայք լիցին տառուածասահ տէր Գրիգոր Աբգենաց տէր, տէր Աբրահամ որդի Ա՛ստակայ Աբգենաց տեառն, տէր Գրիգոր Ահակայ որդի, տէր Բահատ և տէր Ադաման Ահակայ որդիք, տէր Բահատ և տէր Գաւիթ Գրիգորի Աբգենաց տեառն որդիք, տէր Ա՛հան Ա՛րզանայ որդի. նոյնպէս և յիմ ազատացս Ծուռ, Քոչդոյ, Խոսրով՝ Հապուհոյ որդիք, Յանիշէր Թէոդորոսի որդի, Աշնակ՝ Ա՛հանայ որդի, Զաքիկ Ա՛հանայ որդի, Ա՛րզան Յաճապայ որդի, Ահակ Ա՛ստակայ որդի, Մխիթար Թորքայ որդի, Յովհան Նիքսհի որդի, Մուշեղ տէր Տիրոցի որդի, Բաան Հապուհոյ որդի, Ա՛հան Մխիթարայ որդի, տէր

---

[1] Ա՛ՀԱՐ. Ա՛Հ։

Մուշեղ Սիրատայ որդի, տէր Վահան Խաթգինի որդի, տէր Խաթգէն և տէր Վասակ և տէր Եղուա՝ իմ Փիլիպպէի որդիք. և ի կրօնաւորսդ Եհարն Երիցու վանական, Գրիգոր քահանայ, Սահմանեցոս Մաքենոցայ վանական, Յակոբ Ուշճայ աւագերէց, Մանկիկ Ծղկայ քորեպիսկոպոս, Սահմանեցոս Ծիծառնայ վանական, Գրիգոր գրան երէց, Ամէնն Շաղատայ վանական, Գրիգոր Ամենայ վարդապետ: Եւ վասն առաւել հաստատութեան զիմ սովորական մատանիս՝ ի վերայ եղի և զիմ որդեաց և զայլ ազատաց»:

Եւ ահա գրեալ զայս և կնքեալ իւրեանց մատանեաւ՝ և դին՝ ի տուրբ եկեղեցւոջն. և մատանեացն, որ կայր՝ ի վերայ մագաղաթի, ունէր վից կնիք զմեծամեծ իշխանացն վասն առաւել հաստատութեան: Ապա տեսեալ և զայս մեծ իշխանին ՚ բահատոյ Սահակայ որդւոյ, և Գրիգորի Երուսանայ եղբօր հայկազնի՝ ի նոյն Ամասիան տոհմէ, որ ունէր՝ ի բաժնի ժառանգութեան զՈվասական գաւառ և զԲաշունիք, մնալեալ զբարիոք մոլութիւն և եկեալ առ տէր Դաւիթ և յիւրոց սեպհական հայրենեացն ընծայէ զդիւրն Նորաշէնիկ՝ի Ովասական գաւառի և գրէ նամակ վճռի անխափան պայմանաւ, որ է այսպէս. «Յերկնչելի՝ ի ներքս թուականիս ՚ աւյոց, ՚ի ժամանակս աստուածապատիւ և հոգևոր տեառն Դաւթի Ամենայ եպիսկոպոսի, ես ՚ բահատ բազմաւեղ՝ երանելի տեառն Սահակայ որդի, վասն իմ՝ չար և անիրաւ գնացից, որ որսացեալ էի՝ ի սատանայէ բազմագղի՝ յանցանաւք, և լցեալ իրրև զծով անթիւ չարիւք, ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան յահէզ աւուրն դատաստանի, զինաւ ածեալ զանզգաւակութիւնս իմ, և զի ոչ գոյր յոյս ապաւինի հոգալոյ ըզփրկութիւն հոգւոյս իմոյ, և գիտելով զի մահկանացու է ազգ մարդկան, գաստուածընկալ տուրբ խաչդ ապաւէն ինձ արա-

---

[1] Ալ. որ. Բաղատ և ապէն ապէն յանցանաւք:

ըմբ փոխանակ որդեաց։ Եւ գեօղ մի՛ ի Կոմսական գաւառի՝ Նորաշէնիկ անուն, որ ոչ՛ ի յատկութենէ և ոչ՛ ի զբօսկանաց ուրուք և ոչ յայլ ինչ անիրաւութենանց, այլ միայն յորդոր վաստակոց առացեալ գնոց արծաթոյ, զան իմ հոգեացս՛ ի սուրբ խաչդ ապազուարճի իւր բոլոր սահմանաք, լերամբ և դաշտաւ, ջերմեւ և ցրտով, ծառով և անկով, որոյ սահմանքն են այսոքիկ.— յարեւելից կողմանէ Տրուանտա սահման, և՛ ի հիւսիսոյ՝ Ծորբ, և յարեւմտից՝ Տրի և Ընտաւազուց. ՛ի հարաւոյ՝ Աիրեն և Ռևրքնի։ Եւ յայսմհետէ իշխան ես դու՝ տէր Պաւիթ Աիւնեաց եպիսկոպոս, և որք յետ քո այլ հայրապետաք յայդ յաթոռդ յաջորդին մի ըստ միոջէ, զայդ շէնդ ուտել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և դրաւական դնել և զնոյ կամք են՝ առնել մինչև յարեւնաց ժամանակաց։ Եւ այսուհետև ոչ ես՝ ՚Քահատ և ոչ իմ եղբարք կամ իւրեանց որդիք, չունիմք իշխանութիւն բանս և պայքար առնել. և եթէ, որ յանդգնիցի և զսուրբ խաչիդ պաշտօնեայդ ընդ աշխատս ոք առնէ՝ ՀԱստուծոյ նզովեալ եղիցի և՛ ի խաչիդ դատապարտեալ. և հողն օրհնութեան նմա մի բառնայէ, և ինքն դատին մի՛ յաղթեսցէ։ Եւ եառ զայս հաստատուն նամակս ես՝ տէր ՚Քահատ տեառն Սահակայ որդի, քեզ՝ տեառն Պաւթի Աիւնեաց եպիսկոպոսի, վկայութեամբ հօր Յակոբայ Վ՚ասիոյ վանականի, և Յովհաննայ և Ամբատայ՝ Նկրահի որդեաց, և Յովհաննայ՝ Խարկայ որդւոյ, և Աահփանոսի և Մուշեղի տեառն Տիրոցի որդեաց, և Վ՚իժանայ Վ՚արազտիրոցի որդւոյ, և Ը՚ռանձարայ Գրիգորի որդւոյ, և Խուդախայ Յովհաննայ որդւոյ, և ՚Ամազասպայ Սահակայ որդւոյ, և Խարտղի Մատաքատայ երիցու, և Սապոկայ Մխիթարայ որդւոյ Ը՚զուերծոյ երիցու, ՚Մայեկի Վ՚անանդայ երիցու, և Յահակայ և Ըհարոնի՝ Նորնոց քահանայից, և Մաթուսաղայի Յակոբայ որդւոյ՝ Եւյծոյ աւագ երիցու։ Եւ կնքիցի զայս վճիռս ես՝ տէր ՚Քահատ իմ սովո-

բանական մատանեաւս. և վասն առաւել հաստատութեան զրոյս զառաքեալսդ տեառն Գրիգորիոյ՝ Ալբիանոց տեառն, մատանիւն ի վերայ եղի։ — Տայէ Ընտրեալ վայելել յաւիտեանս ժամանակաց»։

Ասացեալ եպանելի և փառաւոր իշխանն Փիլիպպէ շինէ եկեղեցի մի գեղեցկաշէն մերձ հին եկեղեցւոյն ի հարաւոյ կողմանէ յանուն սուրբ Լուսաւորչին Գրիգորիոսի. և ինքն վախճանեալ դնի անդէն ի դրան. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի և անուն նորա գրեալ ի դպրութեան կենաց։ — Եւ այս լինէր յ297 թուականին Հայոց։

Իսկ եպիսկոպոսն Գաւիթ կամեցաւ մեծագոյն կարգել յիշատակ մեծի երախտեաց նորա առ յաւէտ և արձանացոյց գրով, զոր և մեք հարկ ի վերայ առնումք զնոյն գրել։ Թէպէտ և բազում ժամանակք քայքայեալ և այլայլեալ են և ապականեալ ամենայն սուրբ նոցա և կարգ և որպիսութիւնք եպիսկոպոսարանիս, միայն զի մի ջնջեսցի մեծ յիշատակ նոցա՝ այժմ և նորոգապէս ըստ կարգի յիշեսցուք։ Եւ է գրեալն այս ինչ.—

«Ընդոծիւղ ինչ կամ եղև ինձ Գաւթի՝ Ալբիանոց եպիսկոպոսի յաղագս առաւելածագոյն տեառն Փիլիպպէի հոգեւոցն փրկութեան և լուսաւորութեան և մշանջենաւոր և անմահական կենացն արժանի լինելոյ. վասն զի նա մեզ զնոյն կատարեալ մնաք ապաւէն՝ և օգնական իւր արար առ Ընտրեալ վասն հանդերձեալ կենդանութեանն։ Եւ թէպէտ առաջին ազգ մարդկան ընդ մեղաք փակեալ է ի կամն իւր, ըստ իմաստնոյն բանի, թէ չէք մարդ որ ոչ մեղանչէ. քանզի ոչ որ ի հոգածնեցելոցս կարաց հասանել ճշմարտապէս սրբութեան և կատարեալ արդարութեան, թէպէտ և բազումն գործեցին զառաքինութիւնս՝ թողութ առել զայնոսիկ, որք ի կամեսցեն տալ հիշատութիւնն են հանապազորդեալ վայելչութեամբ. սակայն նորա մնան ինչ հրամանատարեալ եղեալ իմում բանի՝

բազում ինչ բարեպաշտութիւնս գործեաց. յաղագս որոյ ակն ունէի կատարեալ իսկ թողութեան հասանել ի Տեառնէ: Իսկ հասարակացն ժամանեալ վախճան կենացս այսորիկ՝ ոչ եւս ժամանել բոլորովիմբ՝ մաքրութիւնս գործել ի ձեռն զղջմամբ ապաշաւանաց և այլ ինչ պէսպէս հոգևոր շինողութեան, այլ ամենայնից խափանումն գործեցաւ սկսմանցն բարեաց: Եւ մեծապէս տարակուսանք նեղասրտութեան շրջապատեաց զիս յաղագս այսորիկ: Իսկ ապա առաւածայինն ինձ ազդեցութեամբ, մանաւանդ զի արժանի իսկ էր, ըստ իւրում կատարելապէս երախտագործութեանց առ սուրբ եկեղեցիս, սահմանօք և ընչիւք և այլ բազում պայծառութեամբք հաստատեցի ի սուրբ տեղիս յայսորիկ բարւոյ յիշատակ զինի նորին հաստուցումն փոխարինի բարեացն, զի յամենայն տարուոջ դուք որ ի սուրբ եկեղեցւոջս էք բնակեալ ի Տաթևոյ վանս, զմին քառատունեան հարկաւորաբար կատարիցէք վանս նորա հոգեւոր փրկութեան, և «զԵրանի ում թողութիւն եղև մեզաց» սաղմոս, յորում՝ տեղւոջ կարգեալդ եմ՝ յամենայն աւուր անխափան առաջիկ, և «տէր ողորմեա վախճուն» ի վերայ: Եւ զօր մահուան նորա հանդուցելոց պաշտամամբք յիշատակ առնելով՝ որ է ի քաղց հնգետասանեին, թևրևս տպրեսցի յահագին պատուհասին: Եւ որք կատարիչք լինիցին հրամանիս մերում և մտերմաբար սիրով հաստուցանիցեն զհոգևոր վաստակսն՝ ի ձեռն նոցունց սուրբ և աստուածահաճոյական աղօթիցն զաստուածապահ տեառնէն զհոգին արժանի արասցէ Երկրիստոս միանձնեաւոր և անեմախանձ ուրախութեանցն՝ թողութիւն գտանելով յահեղ առենին: Եւ զկատարողսն ապացելոցս առ ի միջնէ Երկրիստոս օրհնեսցէ և ածիցուսցէ զամենայն վաստակս առաքինութեան ի հոգևոր անդաստանի ձեռոց. և ամենայն կատարեալ բարեպաշտութեամբ յայսմ աշխարհիս կեցեալ՝ անձառ և անասելական հանդերձեալ բարութեանցն Աստուած արասցէ հաղորդս ընդ ամենայն սիրելեալ

կամակատարս իւր Հանդերձ անթառամ պսակօքն ՚ի լուսեղէն խորանան բնակելով: Իսկ ոչք հակառակող լինին բարեպատ-ճառ հրամանիս մերում, և իբրև զոչ լինչ իմն ՚ի թևթևս բեւ-բելով՝ առ ոտն հարկանեն քամահելով, և ոչ հատուցանեն զպարտս ատացելոցս առ ՚ի մէնջ՝ ամենայն ծանրութիւնք բե-ռանց նորա, զոր ունէր ՚ի մեղանչականութենէ մարմնակա-նացս, ՚ի նոցանէ խնդրեսցէ Աբրահամ և զաղօթս նոցա ՚ի մեզս համարեսցէ ըստ գրեցելոցն. և փոխանակ բարի հատուցման ակն ունելոյ յահաւոր և յանդգնատաղաց գալստեան Քրիստոս Ես-տուծոյ՝ հակառակ նորին, զանելանելի և զանվախճան պա-տուհասն ընկալցի: Եւ կնքեցի զայս գիր յիշատակի առ ձեզ՝ սրբասէր քահանայք և ճգնազգեաց կրօնաւորք, վասն առ յա-պագայիցն հաստատութեան իմով սովորական մատանեաւ յ297 թուականին ՚ոյց»:

Ընդ յետ այսպէս փարթամացուցանելոյ զաթոռս և գե-ղեցիկ կարգաւ սահմանելոյ՝ վախճանի տէր Գրիգորիս, և նստի ՚ի տեղին տէր Յովհաննէս, և յետ նորա տէր Սաղոմոն:

ԳԼՈՒԽ ԼԹ.

Վասն պետրոս Սալմոնիկ, և որ ինչ նովքս եղեւ ՚ի սուրբ Էջմիածին:

Եւ արդ կրանելիս այս Սաղոմոն անցեալ էր առաքինու-թեամբ ընդ ամենայն հոյլս ճգնաւորաց, և հալածիչ դիւաց և ողջացուցիչ ամենայն ախտաժետաց: Վասն որոյ կացու-ցանեն զնա յաթոռ եպիսկոպոսութեան Աիւնեաց ձեռնադրե-լեալ ՚ի տէր Օրբարիայէ՝ ՚ոյց կաթողիկոսէ, որ և մեծա-ջան ճգնութեամբ զարդարեաց զսուրբ աթոռս զանազան կար-գօք: Եւ էր հանդիպակաց սմա մանն ինչ յաստուածարարձ հասչէն, որ ունէր յինքն[1] նիշ նեղկուածի արհամբն Յիսուսի,

[1] Ալ օր. որ առնէր ընդ-

յորմէ ահագին և մեծամեծ նշանք լինէին։ (Ա՛սեն որոյ) ասայ կազմել խաչ յոսկւոյ ի մեծարհիստ ձարտարաց, և զարդարել մեծագին ակամբք և մարգարտով և դնել ի նմա զփայտն, զրէ ի վերայ զնւբն անուն և ընծայէ ի սուրբ եկեղեցին։ Եւ դնէ այլ ևս սատուած և տայ ի սուրբ խաչն. և զրէ ինքեան յիշատակ կտակաւ այսպէս.—

«Ե՛ս Տորհիւն Ընտուծոյ այս իմ ձեռին գիր է տեառն Սահղոմոնի՝ Ամենայ եպիսկոպոսի, որ յառաջ ժամանակաց ըզԽովտոյ[1] կոտավարն տեառն Գէորգայ սուրբ նշանին հոգեցառուբ էր արարեալ, զինչ պատճառաւք և էր՝ այլ յարիշատակեալ էին։ Յորժամ յաջորդեցայ ի սուրբ յաթոռս՝ տատացայ ինձ զառաուածընկալ սուրբ նշանս յաղագս տառապեալ հոգւոյս իմոյ փրկութեան. և առի զԳաբատատի ի Ա՛բահատայ՝ Ամենայ տեառնէ[2], ի Գրիգորոյ որդւոյն՝ յիշեանայց իշխանէ, ի հալալ վաստակոց իմոց՝ ոչ հոգեցառուբ և ոչ յերախայրեաց[3], այլ գնեցի ընդ հազար և երկերիւր դրամի և սուրբ նշանիս հայրենիք արարի։ Ընդ որք յաջորդիք ի սուրբ մայրաքաղաքս՝ զիս Աաղոմոն ի սուրբ յաղօթս յիշեցէք և Ընտուած վայելել տացէ։ Սահմանք Գաբատատիոյ այս են, որ յիւր ձեռնագրիդ գրած են. և Ըզնոյն շինեին առաջև էր և՝ րիք գուր երկիր. և արդ Խովտոյ ակրքս՝ Գրիգոր Ա՛տապայ որդի վկայ եմ. ես Ա՛րդիկ՝ Թագոսի որդի վկայ եմ. ես Ընտաս՝ Ե՛րանկին որդի վկայ եմ. ես Գրիգոր երէց ի Տաշուայ և Ա՛րդ դեհմէթար վկայ եմք. Ընիսողոմ ի Ռէրդկանեցիչց և Սարգիս Ընիսայ և Պետրոս երէց վկայ եմք. Ա՛ազար ի Տաթևայ և Մ՛իջմինիկ ի Գաբատանեայց վկայ եմք. Ամէն բան ի Յուրայ գեաղ, Տէրունականին Պօղոս երէց, Ընտրան երէց Ընտուծոյ միջնորդութեամբ—վերոգրեալ անուանս

---

[1] Ուր օր. գԽոտոյ։ — [2] Ուր օր. Սէրհոյ տէառն։ — [3] Ուր որ. Ե՛ւ յերախայրեաց։

քըս վիպայ են այս վճռիս: Երդ որ այս հաստատուն վճռիս Կա-
թուղիկոս և Եղբեոյն հակառակ ելանէ՝ ի ՅԱստուծոյ և ի
սուրբ Նշանէդ զատապարտեալ եղիցի. զեւր կեանքն և ջժա-
ռանգութիւնն մի վայելեսցէ և երդ Յուդայի աստուածավա-
ճառին եղիցի. իսկ հաստատիչքն օրհնեալ են ՅԱստուծոյ և ի
մէնջ: — յ330 թուիս է»:

Յայսմ ժամանակի իշխան մի Պահլաւ ջ՚Լանշէրը անուն՝
որդի Սահակայ՝ Միւնեաց տեառն, գայ առ տէր Սաղոմոն և
խնդրէ ի նմանէ զդիւղն Ռէխ որ ի Կոմսական գաւառի, որ
էր սեպհական ժառանգութիւն սուրբ խաչին և եպիսկոպո-
սացն ի հին ժամանակաց, և փոխանակէ զեւր սեպհական գիւ-
ղըն Երուքս որ ի Կաղք գաւառի: Հաւանեալ եպիսկոպոսին՝
տայ զՌէխ և առնու զԵրուքս գիւղ. և գրեն զմճիռս պայմա-
նին այսպէս.—«յ320 թուականութեանս Հայոց, ի ժամա-
նակս աստուածապատիւ և հոգևոր տեառն Սաղոմոնի՝ Մի-
ւնեաց եպիսկոպոսի, կամ եղև ինձ ջ՚Լանշէրի՝ աստուածա-
պահ տեառն Սահակայ Միւնեաց տեառն որդւոյ, զիմ գշէն մի
որ ի Կաղք գաւառի՝ Երուքս անուն, որ յիմ հօրէն և յեղ-
բարց յիս հրեռակ հասեալ և իմ հայրենի ժառանգութիւն
էր անհամիմատ տեղի[1], փոխանակիլ ընդ Ռէխոյ շինոյն որ ի
Կոմսական գաւառի էր. և շինեն բնակարան սուրբ խաչին և
հոգևոր տերանցն Միւնեաց եպիսկոպոսացն ժառանգութիւն
էր լինել. միաբանից կամաւ և յօժարութեամբ փոխանակեցաք
ես և տէր Սաղոմոն: Ո՚ոան զի մեր երկոցունս գՔ---ը էր[2] փո-
խանակեցաք. և զայս հաստատութեան գիր կանդնեցաք: Երդ
իշխանէդ դուք, տէր Սաղոմոն՝ ուտել և ժառանգել զայդ շէնդ
զԵրուքդ իւր սահմանօքն բոլորովիմբ, ծառօք և այգեօք, գե-
տով և ցամաքով, արտաւարօք[3] և մարդօք, ջրաղացով և

---

[1] Ձայլ օր. ահաւոր իմ պարիզ: — [2] Ձայլ օր. յԻՔ---ը էր: — [3] Ձայլ օր. ար-
տաւրօք:

պարտիզով, եկեղեցիս և այլ շինուածովք, զոր հոգևոր տէր Սաղոմոն՝ և ով որ յաջորդի ի տեղիդ ձեր ի յանժոտ և սուրբ խաչիդ պաշտօնեայքդ մինչև յաւիտեան ժամանակաց: Եւ յայտմհետէ մի որ իշխեսցէ հակառակել այսմ անխախտ վճռիս կամ ի մէնջ և կամ յօտարաց. ապա թէ որ յանդգնի՝ դասին մի՛ յաղթեսցէ և յերից սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի, մանն զՅուդայինն առցէ և մեր մեղացն պարտական եղիցի: Եւ թէ տաճիկ աւազ լինի և յափշտակել զանոյ՝ յիւր Մահմետէն ապէշ և յիւր օրինացն հաղար հազար նալն նորա վերայ եղիցի, և ինքն դիւահարոյս և սև երես լեցի յիւր Աստուծոյն»:

«Եւ սահմանքն այս է Ընտքայ. — յարևելից կողմանէ Աշմաւուկ է սահմանակից, և յարևմտից կողմանէ հնձն դրախտ է նոյն սուրբ խաչիդ սահման, և ի հարաւոյ կողմանէ հին ջրագնացովդ է մինչև ի Ռևեթոյ սահմանն, և ընդ հիւսիսոյ կողմանէ Պաւարոյ սահմանովն է: Եւ զաք զՌևեթ իւր սահմանովն և արքունի նեպակովն և տուաք զԸտքս իւր սահմանովն և արքունի նեպակովն, որ էր երկոտասան դրամ: Եւ է վկայք վճռիս Վ՚ասակ Ամենեաց տէր և իմ եղբայրն Ընտուման, և իմ որդի Տիգրան, և այլ Ռաղաց տանուտէրք և սուրբ խաչին պաշտօնեայք: Ինքեցաք մերով մատանեաւ»:

Գայ և Ռուպինէ ուխտ առ տէր Սաղոմոն, որ անտրտի գոլով՝ դուստր Վ՚ասակայ Ամենեաց տեառն և քոյր Փիլիպպէի և կին Հրահատայ իշխանի, զեւր հոգևնան բաժինն ընծայէ ի սուրբ խաչն և ի տէր Սաղոմոն. և գրէ պայման վրճռի զայս օրինակ. —

«Ես Ռուպինէ ուխտ՝ դուստր Վ՚ասակայ Ամենեաց տեառն, մերձեցայ ի ժամանակս Ծերութեան, զմնաւ ածելով զերկրային կենաց ոչնչութիւնն, ցանկացայ յաւիտենական կենացն. և վասն զի ի մարմնաւոր կենացս զրկեալ էի ի զաւակէ մնասնոց՝ զսուրբ խաչդ և զաստուածապատիւ և զհոգևոր

տէր Սաղոման՝ Ախունեաց եպիսկոպոս, ինձ հոգեաց զաւակ լաւացեալ և յոյս և ապաւէն մեղուցեալ ոգւոյս իմոյ. և շէն մի Մաճ անուն՝ ի Խաղաց գաւառի, որ նախ տեառն Աթենասեհի՝ Ախունեաց տեառն և իմ եղբօր ինձ էր տուեալ, և յետ այնորիկ Տէրտատայ իմ տեառնն գնեալ էր յիմ եղբօրէն՝ և ինձ վաճառեալ և հոգեցաւոյր արարեալ, եաւս ես Պետրոսդիդուխս զայդ շէնդ լերամբք և դաշտով, մարգով և արտով, դետով, ջրով և ցամաքով, ծառովք և անկովք՝ ի սուրբ խաչդ և ի տէր Սաղոման Ախունեաց եպիսկոպոս: Եւ զիմ հոգիս ի քեզ յանձն արարի. ապդ իշխան ես դու՝ տէր Սաղոման, և որ յետ քո այլ յաջորդի ոք ի սրբութեանց յաթոռդ Ախունեաց եպիսկոպոսունք, ուստի և վայելել զայդ շէնդ բոլորովիմբ իւր սահմանօքդ մինչև յարխեանս ժամանակաց: Եւ մի ես և մի իմ եղբօրորդիքն և այլ խոստակիցքն պայքարել և համիմատ կալ մի իշխանացեն. ապա եթէ յանդգնի ոք բանս առնել յիմ արարածիդ և կամեսցի խախտել զիմ զաւրդ՝ Աստուծոյ և ի սուրբ խաչդ դատապարտեալ եղեցի և ի հոգեւոր սերանցն նզովեալ, և զիմ և զիմ ծնողաց և զտեառն Տէրտատայ, որ իմ կենաց կցորդն էր, զամենայն զերեզս և պանեցանս Աստուած ի նմանէ առժեսցէ. և ընդ սատանայի և ընդ հրեշտակաց նորա յանշէջ հուրն տանջեսցի: Եւ գրեցի յ316 թուականութեանս Տէրոյ վկայութեամբ իմ եղբօրորդեացս՝ տեառն Պետրոսի և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ և իւրեանց ազատաց և ամենայն Շնհերիցեաց: Եւ վասն առաւել հաստատութեան գրոյս զաստուածապատիս և գհոգեւոր տեառն Սաղոմանի Ախունեաց եպիսկոպոսի զվաւերական մատանեին ի վերայ եդի: Եւ եթէ տաճիկ աւազութիւն փոխի և յափշտակել ջանայ, հազարիւն հազար դալըն ի վերայ նորա դոյ և յիւր ֆեոդ-ըն ողնաւ լինի»:

Եւ ապա յետ բազում և մեծամեծ վաստակոց ընտ գիւտ

կենաց իւրոց տուրբ և երանելի եպիսկոպոսն տէր Սաղոմոն փոխեալ յաստուածս. և յաջորդէ՝ ի տեղին հոգևոր և աստուածապատիւ, արքայաշնորհ եպիսկոպոսն տէր Յովհաննէս, զորոյ զգովութիւն և զանհամեմատ գործս յուշիցէ ձեզ։

ԳԼՈՒԽ ԼԶ՝

Վասն գնոսա Ցովհաննէսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և շինութեան հեթխորվիի եկեղեցւոյն որ յեպիսկոպոսութենէն նորա ի Ցուխ և վասն այլ շինուածոց։

Նորիցս երանելոյ և բազմերջանիկ հայրապետիս այս տէր Յովհաննէս, որ երկրորդ գնի տեառն Սաղոմոնի կարգեցաւ յաթոռ մեծապօլսութեան տանս Սիւնեաց — ասի զմանէ որդի գոլ առն միոյ այրոյ և մուրացիկ աղքատի՝ ի Նորենց շինոյն. և առեալ էր յետոյ կին մի անղգամ, որ պահէր զերաման ընտանեաց թոռնոյց տեառն գեղջն, և վարէր խորթութեամբ՝ ոխաբար ընդ խորթորդին [1] իւրոյ՝ փոքր պատանեկին Յովհաննու, և հանապազ դանակից և սովամահ առնէր զնա։ Յաւուր միում կոչեաց մանկանն բազում՝ ձագս՝ ի թոռնոյն՝ ոչ իշխեաց մնանել՝ ի տուն անդր, այլ փախստական գայ ՚ի գեղոյն առաջնորդութեամբ՝ ի վանս Տաթևոյ. և բնակեալ առ կրօնաւորի միոյ՝ զարգանայ ուսմամբ և հասակաւ, քանզի էր լի աստուածեղէն շնորհիւ, հարուստ խոհականաւն և փարթամ յիշողականաւն։ Եւ արժանաւորեալ աստուածային օծմանն՝ առնու ձեռնադրութիւն քահանայութեան՝ ի տէր Դաւթէ՝ եպիսկոպոսէ Սիւնեաց. և վարժեալ աստուածային գրոց՝ հասանէ՝ ի կատարեալ չափ գիտնականին և գործնականին։ Եւ յաւուրս տեառն Սաղոմոնի առնու զփակա-

[1] Ուր. ընդ որդոյն խորոյ։

կոչումն եկեղեցւոյն և լինի զլուխ ամենայն կղերիկոսաց տանն և առաջ եկեղեցապետացն։

Ապա հասեալ վախճան առաքելուն Յաղոմեի և ժողովեալ տեղացն Միւնեաց և ամենայն ազատաց նոցա, և վասնոց երիցունք աշխարհիս, նաև առաջ տանուտեարք բոլոր գաւառաց գաւառաց, և ամփոփեալ զաւրք մարմինն եպիսկոպոսին՝ առնեն ընտրութիւն նորոգ հայրապետի։ Եւ ամենայն ժողովոյն զաղաղակ հարեալ՝ զՅովհաննէս փակակաչն խնդրէին ինքեանց առաջնորդ. ընդ որ հաճեալ ամենայն բազմութեանն յուզարկին զնա մեծապատիւ փառաք առ կաթողիկոսն Հայոց տէր Գէորգ. և ձեռնադրեալ գառնոյ մեծաշուք պատուով և նստի յաթոռ մեծարգելութեան տանս Միսականայ։ Տեսանէր ապա երանելին այս զեկեղեցին նոր և խրթին և հնացեալ ի բազում ժամանակաց, նա և ի շարժմանէ, իսկ խարխլեալ. և զի անպատշաճ էր այնպիսի մեծի մայրաքաղաքի և աշխարհագունդ ժողովարանի տալ հայրապետանոցին առանց մեծ կաթողիկէ եկեղեցւոյ լինել, վասն որոյ հանապազ մտախոհ լինէր ի սրտին և ոչ ինչ գտանէր հնարս. մի՝ զի ոչ իշխէր քակել զառաջին սրբոյն Հրիփսիմեայ տաճարն, և մի՝ զի անձեռնհաս թուէր յանհուն ծախսս պիտոյիցն։ Ապա ի տեսլեան հրամայեն առնու ի հրեշտակէ զհինն ի բաց դնել և նոր առնել սկիզբն շինուածոյ եկեղեցւոյն. և այն ինչ երկրորդէր և երրորդէր տեսիլն, միանչ բնաւին հաստատացուցանէր հրեշտակն զերն, զի մի երևոյթ և բազական ինչ կարծիցի, իւրով մտահաստ ծրագրէր զտեղին և հրամայէր շինել յանուն եռաւրն և զլուսաւոր առաքելոցն՝ Պետրոսի և Պօղոսի, և քաջալերէր ի գործն ասելով՝ «ոչ ի մարդոյ կատարի դա, այլ Տէր կամի կանգնել զդա առն փառաւոր իւրոց»։

Օրհնութեամբ եպիսկոպոսին, ապա և զարթուցեալ ի քնոյն՝ յոլով ժամն տիշեալ լինէր։ Յարուցեալ եկն ի տե-

գին և ցուցանէր եղբայրութեանն զծրեալն ի հրեշտակէն. ազգ զայս և մեծի գահիրէից իշխանին Աբունեաց Եշոայ՝ եղբօր Ալաահակայ, որդւոյ Փիլիպպէի և հօր Սմբատայ և Աահակայ և Խարգնէի, և ամուսնոյ նորա Արանելի և մեծահասուսո տիկնոջն Շուշանայ, և միւս իշխանին որ ի Գնեղամ գաւառի լինէր՝ Գրիգորի, Յովհաննայ որդւոյ՝ Գաբուռայ և Աահակայ, և միւս իշխանին որ ի Խաղ՝ Զաքիկ կոչեցեալ՝ հօր Ղևանշերի. որք մեծապէս խրախացեալ՝ ստուգացայնին ինն տեսչութեամբ անդր փութապէս բերեալք լինէին. և հիացեալք ընդ սքանչելի տեսիլն՝ միաբան, միախորհուրդ ձեռն ի գործ արկանէին և չանայլին փութապէս կատարել: Խաչեալ լինէին այնուհետև գանձարանք նոցա և առատապէս ծախեալ ի գործօնեայս շինուածոյն. բայց գլխովին խակ մեծ իշխանն Եշոա և եպիսկոպոսն տէր Յովհաննէս մեծամեծ ծախիւք և աշխատութեամբ կային ի վերայ գործոյն. և առաւածային կամակցութեամբն սկիզբն առնեն շինուածոյն և արկանեն հինն յ344 թուականին ՚այոց ի թագաւորութեան Սմբատայ Խագբատունեայ խոստովանողի՝ որդւոյ Եշոայ թագաւորի, յիշխանութեան Աբունեաց Եշոայ՝ որդւոյ Փիլիպպէի, ի կաթողիկոսութեան ՚այոց տեառն Գէորգայ Գառնեցւոյ՝ հրամանաւ և կամօք Եշոայ, ձեռամբ տեառն Յովհաննիսի, զոր և իւր խակ զրեալ էր ի վերայ եկեղեցոյն այսպէս. «Յամին, յորում թուականն ՚այոց 344 էր, և զաւիկն ի նաւասարդի ի չորս, ես՝ տէր Յովհաննէս, որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս Աբունեաց զկնի տեառն Աաղաճնի, արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս»:

Եւ այսպէս կատարեալ զեկեղեցին կամար երկնանման գըմբէթայարկ, ձեմարան ինն հրեշտակաց և քառասուն մատրկան, ի տաշաձոյ վիմանց և ի քերածոյ քարանց, գաղաւառասչէն ինն յատմարեալ ակնախառիզ տեսողաց, ի հարիւր կանգնոյ բարձրութիւն նորա և ի քառասունեւութ կանգնոյ եր-

կայնութիւն նորա և՝ ի քանևչորս կանգնոյ լայնութիւն նո-
րա՝ ունելով յիւրեան չորս խորանս բաց յառագ խորանէն։
Եւ ըստ Աստուածեան յարկին և կամ Օրէնսդրութեանն կա-
ռուցեալ՝ ի մէջ տանն երկուս սիւնս հրաշակերտս՝ զոյգս և
զյաջորս, ոյք հաստատեղոյս խարսխօք և գեղեցկագիրս և բարձ-
րաբերձ թաւկաղաղօք պարարտարձեալ ունին զհաստին թանձ-
րութիւն երիտասեղուն քարակարկառ յարկին. և այս՝ ի խոր-
հուրդ երկուց գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, յո-
րոց նշխարացն եղան՝ ի ներքոյ սեանցս, և բազմութիւնք սրբո-
ցոց նշխարաց անդ դնեալոցդ առաքելոց, հայրապետաց,
մարտիրոսաց եղան՝ ի հիմունս և յանկիւնս եկեղեցւոյն։ Ե-
հա զայս իսկ առարեալ զամն մետասան՝ կանգնէ, և մերձ ե-
կեղեցւոյն հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յա-
նուն սրբոյ Երրորդութեանն՝ ի մանր քարանց պատուածեալ
՝ի չափ երեսուն կանգնոյ. պարսպէ և զեկեղեցին սրբաբարով
և ապա զվանան կոփածոյ քարամբք։ Եւ զի էր նիստ տեղւոյն
անյարմար՝ հարթէ զվանձրութիւն գետնոյն և զխորութեան
վայրն բարձրացուցանէ կրաշաղախ որմովք. շինէ և գաղտա-
նոցս գետնափորս՝ ի ներքոյ վանիցն ծածուկ ընդ երկիրս՝ բա-
զում տունս և գարանս՝ ի պէտս եկեղեցւոյն. և հարթեալ հա-
ւասարեալ զվայրն՝ շինէ, և սրբաշէն տրապէզս և գործատո-
նեարս, համբարանոցս սրբատունս և դրատունս, և՝ ի դրան ե-
կեղեցւոյն տուն աղօթից և տեղի դատաստանի իշխանաց և եպիս-
կոպոսաց Աիւնեաց։

Ընդ զայս ամենայն կազմուած յօրինուածի մեծի տանն հայրապետութեան հոգացեալ և առարեալ՝ արար յանկալի հեռաւորաց և մերձաւորաց բոլոր [1]այաստան աշխարհիս. և ջահաւորեալ իբրև զարեգակն՝ ի մէջ աստեղաց՝ երևելի էր՝ ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք, այլ և պայծառ անապ

---

[1] Ա.Հ. օր. ՝ի Ներսէս վանից Տաճատ Իւրեաց Բագրեւանդ...

քահանայական և կրօնաւորական դասուք ՚ի չափ հինգհարիւր եղբարց. լի էր և ծովամնաց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ձոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն, նաև արհեստաւորք նկարչացն և գրոշաց անհամեմատք: Ա՛ստն որոյ յայսպիսի համբաւոյ հրաշացեալ թագաւորք և իշխանք և եպիսկոպոսունք գային ՚ի տեսութիւն և ընծայարերք լինէին սուրբ և երկնահանգէտ ամենայնի: Ժայր յորժամ աւարտէր զշինուածն եկեղեցւոյն և այլ ձեռակերտացն եպիսկոպոսն տէր Յովհաննէս, ապա ՚ի խնդիր լինէր աշխարհախուզմբ հանդիսի առ ՚ի կատարել զնաւակատիս մեծի և աստուածահրաշ տաճարին: Ոչնչն զվիճակաւորն Սրմբատ ՚ի այոց այլովք իշխանօքն և զկաթողիկոսն տէր Յովհաննէս, որ զկնի Մաշտոցի ՚ի Սիւնեաց կողմանն յաջորդեցաւ՝ այլովք եպիսկոպոսօք ՚ի այոց. գայ և Գագիկ Ա՛ստպուրակացնի, որ և թագաւորեացն իսկ՝ իւրովք եպիսկոպոսօք և իշխանօք և ազատօք: Գայ և Ընդանիից կաթողիկոսն տէր Սիմէոն իւրոյ աշխարհին եպիսկոպոսօք և մեծամեծ իշխանօք. ժողովին և Տամղդի հայկազուն իշխանքն Մրնենաց, զորս յիշեցաք, և այլ վանականք և աշխարհականք Սիսական աշխարհիս, յորոց միջի արդարև էր տեսանել ըստ իւրաքանչինն սուտ հրամանին զՔրիստոս ՚ի արր և առնետուրր ՚ի ոչուէն և առնայն երկնային զօրօքն. նաև առաքելական և մարգարէական գնդիւք, և հայրապետախուզմբ և մարգարէական և և մարտիրոսաջոկ երամօքն, զորս և տեսանէր ՚ի ցայգապաշտամանն սուրբ եպիսկոպոսն Յովհաննէս՝ զՊետրոս և ՚ի ձեռին բանալի երկաթի, և զՊօղոս և ՚ի գիրկն իւր առաքելական գիրքն, որ մեռեալ յեկեղեցին պատրաստէին ամենայն երկնաւոր թագաւորին: Եւ ասացին զբանալին և զգիրքն ցնախակոպոսն և ասեն. «Հաճեցար Տէր բնակել ՚ի սմա և մեք պատրաստեմք տեղի հանդստեան նմա, և մեզ իսկ հրամայեցար առանձին ՚ինչ ՚ի միւսանգամ գալուստն թագաւորին մեր:

Ա՛յդ բանալի արքայութեանն է՝ կացցէ յեկեղեցւոջս, զի ասա բանալոց է դուռն դրախտին ամենայն մեղուցելոց՝ հաւատով դիմելոցն ՚ի սա. և այս զերիք կացցէ ՚ի սմին, զի ասուի բըղխելոց է շնորհ վարդապետական և ողջամիտ քարոզութիւն սուրբ գրելեացս, ասա միալոց է անապակ և անխառնուրդ»:

Այս տեսեալ և զարմացեալ՝ մեծաւ գոհութեամբ փառս ՚ի վեր առաքէր և ոչ ինչ յայտնէր ումեք: Ապա ընդ լուանալ առաւօտուն զգեստաւորեալ սուրբ հայրապետացն և ամենայն եպիսկոպոսացն եկեն ՚ի բնին, և կատարեալ զհոգեւորական օրհնութիւնն օծանելին աստուածազգած իւղովն. և ՚ի յասելն «օրհնեսցի, օծցի՝» ամենայն բազմութիւնն այնքան հնչեցուցանէին զամէնն՝ մինչ թուէր լողացն ահագին որոտմունք և ձայնմունք յամպոց հրեղինաց եկեալ, և դղրդէր երկիրն և շարժէր վայրն. և այսպէս կարծեցեալ թուի ինձ, եթէ անմարմին ձայնք խառն լինէին նոցա, որ այնպէս ահագոչ թուէր, և ոչ միայն սոսկ մարդոց: Եւ այսպէս կատարեալ զօրհնութիւնն՝ ուրախ օր նաւակատիս առնեն ՚ի փառս Աստուծոյ. և իւրաքանչիւր զգառնայ ՚ի տեղի իւր: Այլ թագաւորն և իշխանքն Արենեաց տեսեալ զայնպիսի հանդէս և զայնքան չքնաղագոյն յօրինուած՝ առաւելապէս սիրեն և պատուեն զտեղին և մեծ արօք փարթամացուցանեն և յոյժ ընդարձակեն զսահման տեղւոյն, զոր և ասելի իսկ է:

ԳԼՈՒԽ ԽԸ

վասն հաստատութեան եկեղեցւոյն և հայրապետութեան, զոր նորա ընտրեաւ և իշխանքն, և առհասն վանացն, զոր փոխ իրեանց ՚ի վերայ մնացելոցն և ընծեալ արժանաւոր մատանեաւ:

Ընծայէ թագաւորն ՚ի սուրբ եկեղեցին զմեծ առանն Կարճաւան Աբրևիք գաւառի ՚ի Արեղաձորի ընդ գնոյ առացեալ,

գնել և զ÷արժիս ի սերանցն Աիւնեաց, և զայն ևս ընծայէ առ զառս յամենայն հարկաց· ապա ևս ի Գողարքունի, ի Աօղից գաւառէ զԽորասանկի բակ, և ի Գառնի ձորէն զԳառոզ[1] վանս. ապա և Ընշոտ՝ գահերէց իշխանին Աիւնեաց, զՅօղունի գիւղ ի ÷ամբանդ[2] գաւառէ և զԿնունիք ի Աիւնիս ի Ծղնդուկք գաւառէ, շնորհէ և զՅուբ բերդովն և ագարակօք և զգեան Յուբայ և զվանքն, զՏանձաւատի և զԳողձակոքն[3]. ապա և Խաղացիքն զՏաշռ՝ փոխեալ ընդ այլ գիւղս յԸնշոտէ. ապա և զԵղեգն գիւղ ի Խաղք գաւառէ. ապա և Առափանեաք զԸրիա գիւղ սահմանակից ÷արժկից և Տամալեկաց. ապա և յետոյ ի Գողարքունի զԱակոյս գիւղ ազատ յամենայն հարկաց. շնորհէ և մեծ բարեպաշտուհի տիկինն Աիւնեաց զԾատպղ և զԲագաւանիս: Եւ զբեն այսմ ամենայնի կատակ առաջի մեծ ժողովոյն և կաթողիկոսին, և սահմանին նզովիւք փակեն սոսկալի և սարսափելի գաշամբք. և կընքեն զԹուղԹն վարագայիւր մատանեաւ Թագաւորին և կաթողիկոսին և իշխանացն: Եւ առանդնցին ի ձեռն տէառն Յովհաննիսի՝ Աիւնեաց եպիսկոպոսի: Ծ.որ և տեսեալ մեր զայս ամենայն նամակ վճռի ձեռագիր իւրեանց իսկ շնորհազան հնացեալ և ծայրատեալ, զոր ի բազմացն զտակատն կապացաք ընթեռնուլ. և վասն երկարութեանն տագնապութեան համարձեցաք լռազագդ և ոչ եդաք ի մատենիս: Բայց զմեծագոյն սիգելն, որ գշրջակայ սահմանն ցուցանէ՝ զրեցից առաջ:

Գարձեալ և կին մի բարեպաշտն ÷ամասպրուհի՝ անուն՝ դուստր Բարգենի իշխանի, ապա նախ զայգին մեծ որ ի ÷ալեից[5] գետաւին՝ և յետոյ զգիւղն իսկ զ÷ալիս իւր ամենայն սահմանօքն. և զրէ կատակ հաստատութեան մեծամեծ գա-

---

[1] Ա.յլ օր· զԳողոզ վանս: — [2] Ա.յլ օր· ի հաբանդ գաւառէ: — [3] Ա.յլ օր· և զԴիզայնոն: — [4] Ա.յլ օր· համազասպուհի անուն: — [5] Ա.յլ օր· որ ի հալիձոր գետաւին:

շամբք, զի մի իշխեսցին խափանել։ Այլ Թէոփէտ զայս ամենայն առաքս արարին, զբնակիչս բերդին Յուրայ ոչ կարացին հանել ի տեղւոյն. զի հին հայրենասէրք[1] էին և բարբարոսք և պիղծ մարդիկ. այսպէս և ոչ գՅամալէկն, որ մերձ վանիցն էր ի հանդէսն՝ կարացին սեպհականել, զի և նոքա նոյնպիսիք էին։ Էր և առաքելանուն մի Լևերդ անուն հանդէսս վանիցն, յայնկոյս մեծի գետոյն յամին քարին[2], որ Ալեքսանդրացոյն[3] կոչեն, ի ներքին Ասորիին՝ և զայն ևս ոչ հալածեցին. յորոց վտանգ ոչ սակաւ հասանէր եղբայրութեանն։ Եհաս Թէոփէտ յայլ և այլ ժամանակս և զայնս ևս սեպհականեցին հայրապետքն, բայց յետոյ ի խանգարել հայրապետանոցին և յաւերիլ տանն՝ քակեցան այս հոգեցաւուր ժառանգութիւնք. և ի բառնալ հակառակութեանն՝ դարձեալ մի մի վերստին անդրէն հաստատեցին։

ԳԼՈՒԽ ԽԶ՝

Գէղ վանք ընծայի առհանին Տրեայ,

«Ի ժամանակս առաքելածաղօր Թադէոսոյ մերոյ Ամբատայ և աստուածազգեաց կաթողիկոսին մերոյ տեառն Յովհաննիսի, և աստուածապատիւ և հոգևոր տեառն Յովհաննիսի՝ եպիսկոպոսի Սիւնեաց, մեք նուաստս ծառայքս Աստուծոյ հայկազնի իշխանքս Սիւնեաց՝ տէր Աշոտ որդի Փիլիպպէի և որդիք իմ Սմբատ, Սահակ և Վաթէն, և տէր Գրիգոր Սուփան և եղբարք իւր Սահակ և Վասակ, և տէր Զագիկ և որդի իւր Յովհաննէս, և այլ ազատք և համազգիք մեր, առաջի աստուածապահ Թադէոսոյ և սուրբ կաթողիկոսիս և Աղուանից հայրապետիս և իշխանացս, և տեառն Վահակայ և Գուրգ-

---

[1] Այլ որ. զի հին հայրենի տէրք էին։ — [2] Այլ որ. յամին քարին։ — [3] Այլ որ. որ Ալեքսանդրացոյ կոչին։

գենայ՝ Վ. առաքելականի իշխանացս, և այլ եպիսկոպոսաց և քահանայից և ազատաց և տանուտերաց արարաք զայս գիր պայմանի հաստատուն և անխախտ վճռի վասն շրջակայ սահմանի մեծի սուրբ և առաքելական աթոռոյն Վիրենաց՝ մայրաքաղաքին Տաթևոյ, յաւուր՝ յորում ժողովեցաք ի նաւտակատիս սուրբ եկեղեցւոյս. և առատաձեռն պարգևօք փառաժամացուցաք զառնս, զոր մեք յայսմ աւուր և զոր ի հին ժամանակաց նախնիքն մեր՝ առաջին իշխանքն Վիրենաց։

«Այս ընդ երկուցաք գՀին նամանին, զոր մեր Հարցն և հաւուց պրեալ էին և ծանեալ զժառանգութիւն սուրբ խաչիս և հոգևոր տերանցս որ ի մերում իշխանութեան և զսահման տեղւոյս. զոր և մեք վերստին հաստատեցաք և ընդարձակեցաք առատաձրնկալ սուրբ խաչիս, և ամեն ժողովով գնացաք ոտիւք մերովք, կարիցաք զսահմանս շրջակայ, որք են այսպէս.— յարևմտից կողմանէդ սկսեալ ի մեծ դիտաւոր սարէդ Գաղբոյլայ ջրամբափոսին[1] մինչ ի խոռին ձանապարհն, որ Արտաձորին սահմանն է։ Այս ի հիւսիսոյ գհոյց բնաւեռոյն ի վայր ի գետն Հանդէպ Խոտոյ, և գետովն ի Խոտաւանեան և անցեալ ընդ գետն՝ փոքր ձորակովն որ գալնէ Աւազեայ խոռ ի խոզայ բլուրկովն նորին բարակ ձանապարհովն ի բացահորիւն, նոյնպէս, անջուր ձորակովն ի վայր ի Վեղնաձորն և ի կարմրաջրէն, և ի կարմրաջրէն ի Վարաձորն, և Վարաձորին մեծ բնաւեռոյն ի սարն և ի բուն ձանապարհն որ գայ սարովն ի Հարնավայր, և Հարնավայրէն ձորակովն գառ ի կողմն յեկեղեցին որ ի պառակով ձանապարհին, և սալքարովն[2] հատեալ զմեծ ձորովն ի միաւոր քարն, որ կայ Հանդէպ ի յայն կողմն մեծ ձորոյն. և Հասանելով ի մեծ տափն ի յերկայն խաչն և ջրամբափովն ի մեծ խոռն և ի ձանապարհն որ գայ ի Վաղաց ձորոյ, և անտի ի նոյն լեառնն Գաղբոյլ»։

---

[1] Այլ օր. Գ-ջ-յ-ր-փ-ն։ — [2] Այլ օր. Ս ա-լ-ք-ր-վ-ն։

«Ընդ այս իսկ են սահմանք, զոր մեք ոտիւք մերովք կոխեալ և աչօք մերովք տեսեալ և ձեռօք մերովք նշանեալ՝ առանց զկուռթեան և յափշտակելոյ դրեցաք և կնքեցաք մատանեաւ մերոյ արքային և կաթողիկոսին և մեր իսկ: Եւ յայսմհետէ մինչև յաւիտեան այս լեցի սահման Տաթևոյ սուրբ ուխտին. և մի ոք իշխեսցէ այսմ հակառակել՝ մի Նաղացիք և մի Արտանեցիք և մի Վաղանդացիք[1], մի Շնհերացիք և մի Գորնեցիք: Եթէ ոք ընդ հակառակս ելանէ՝ ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակրօնաց կամ ի տանուտէրաց, ի սուրբ Էջմիածնէն որոշեալ լեցի, և յերից սուրբ ժողովոցն նզովեալ եղեցի: Ընդ Յուդայի և խաչահանուացն և այլ չարագործացն պատժեալ դատեսցի: Եւ թէ՝ ի Տաճկաց աւազութիւն փոխի, և կալեն լինել իշխեցող, և յափշտակել Քանան՝ յիւրեանց հաւատոյն ապիրատ և դիւահարոյս լեցին, և՝ ի ֆեոդոբեն հիվքեալ եղիցին, զին[2] աւետն և մալայի աւհատն ուրացեալ եղիցին, և ընտրիճանն անարգեալ լեցին, հալածն հարամ եղեցի և մինչ՝ ի հազար ամին նահանջեսցեն՝ ի վերայ նորա ճնասցէ. երկինք նորա մի ցօղեսցէ, և երկիրս նորա մի դալարեսցէ»: — Եւ Յովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ կաթողիկոս Հայոց, վկայ եմ այսմ անխախտ և անխափան վճռոյս, որ առանդեցաւ ի մեծ իշխանացս Սիւնեաց, և կնքեցի իմով սովորական մատանեաւս: — Եւ Ամբատ Նախարարունի՝ թագաւոր Հայոց, հաստատեցի իմով ձեռամբս զայս վճիռս և եդի ի վերայ զիմ թագաւորական մատանին ի տորև: — Եւ Գագիկ՝ Վասպուրականին և Երծրունեաց տէր, որդի Գրիգորայ Վռվենիի, վկայ եմ այս ընծայից և սահմանադրութեանց աթոռոյս Սիւնեաց: — Եւ Նահապետ Աստուծոյ Եղուանից արքեպիսկոպոս՝ տէր Սիմէոն, վկայ եմ այսմ վճռիս, և իմով մատանեաւ կնքեցի զը-

---

[1] Ընդ օր. և մ Վաղանդացիք: — [2] Ընդ օր. յին ուրն:

սա։ — Եւս Գրիգոր Սուքիաս Աիւնեայց իշխան, վկայ եմ և հաստատիչ այսմ վճռի, զոր մեր եղև սահմանեալ ։ — Մեք Գրիգոր և Եսայի և Ամրնեբանէ՝ Ընդունից իշխանք, վկայ եմք այսմ վճռի։ — Մեք Զաքիկ և Բահատ Աիւնի վկայ եմք այսմ վճռի։ — Մեք Սահակ Գարդմանայ տէր, և Ընշոտ և Վասակ Գնթունի՝ վկայ եմք այսմ։ — Եւս Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, հաստատեցի զվճիռս իմով ձեռամբ և կնքեցի իմով մատանեաւս. — Ստուած շնորհաւոր արասցէ սուրբ խաչիս և սուրբ երկնելոցս և աստուածարեալ հայրապետացս, որ աստ նստին։ — Եղև այս՝ ի թուականութեան Հայոց 355»։

ԳԼՈՒԽ ԽԳ

Վասն խոտորելոցն վանէն, որ կոչեցաւ Քարկոփ, հրձանմանն ի շրթի, և վերստին շինելոյն ի Շուշանայ պիղծոջէ և ի տէր Յովհաննէս։

Յառաջ քան զայս ի բաղում ժամանակաց բնակեալ էին խոտաձարակ և խարտեաղգեաս մարդիկ ի սահմանս Վայոց ձորոյ ի սահմանին Հրաեկայ բերդոյ մերձ Ամբաստամուղ գիւղ, որ իբր դիտանոց բարձր հայեր ի վերայ դաշտին Շարբոյ։ Եւ էին յոյժ բազմահնչունք՝ հեռացեալք ի հանդերձից և ի մարմնաւոր կերակրոց, և ցրուեալք ընդ քարաժայռս և ընդ խորաձորս վայրիցն՝ միանձնաւոր ազօթիւ պարապէին. և ի կիւրակէսն[1] առ միմեանս ժողովէին և երկնաւոր զինանն (հաղորդէին). և այն լինէր նոցա վայելուչն ի հաց և ի գինի։ Այլ աւուրսն բնակէին ոմանք ի ծերպս, ոմանք ի նեղասդոյն խուղս[2], ոմանք բացօթեայք լուռ և անմռունչք, և սակաւ ոգեպահովն ի յընդոյ[3] կամ ի բանջարոյ շատանային. ոմանք շինէին մատուռն ի նեղ ձորակի մի առ քազցրահամ

---

[1] Այլ օր. Ե ի Կիւրակէն։ — [2] Այլ օր. ի Նեղասդոյն խուղ։ — [3] Այլ օր. ի հնդոյ։

աղբեր և անդ բնակէին, որ այժմ Աւտոյ քալ անուանի, յո-
րում կան գերեզմանք նոցին և մեծամեծ բժշկութիւնք լինին.
ոմանք՝ ի միւս արձակ ձորին շինեցին խորան և անդ բնակէին,
զոր Հին Վանս կոչեն. և այլքն ատա և անդ ցան և ցիր: Եւ բուն
տուն իւրեանց և եկեղեցին էր մերձ Աբրահամաղ գիւղ՝ ի
պատշաճաւոր տեղի, յորում բնակեցուցեալ էին զահարկու
և զաստուածահրաշ սուրբ նշանն, զոր Խոտակերաց խաչ կո-
չեն: Եւ յաւերմանէ աշխարհիս ցրուեցան կրօնաւորքն այն,
և տեղին աւերակ և անբնակ մնաց մինչև յաւուրս տեառն Աշո-
տոյ՝ Միւնեաց իշխանի: Ապա զգացուցանէ նմա զերին մեծ և-
պիսկոպոսն Միւնեաց տէր Յովհաննէս. և նա հրամայէ վերըս-
տին շինել զեկեղեցին և զվանքն և ժողովել զկրօնաւորսն և տայ
զգիւղն Աբրահամաղ՝ ի ժառանգութիւն եկեղեցւոյն, որ և
եղեն իսկ:

Եւ ապա վախճանի բարեպաշտ և ազգասիրաշուք իշխանն այն
Աշոտ: Եւ՝ի սաստիկ շարժմանէ տապալին եկեղեցիքն և ամե-
նայն շինուածք վանիցն, զոր և վերստին ծանուցանէ եպիս-
կոպոսն երանելի տիեզերջն Շ՚ուշանայ. և նա առաւել աստուա-
ծասէր գոլով և բարեպաշտօն՝ հայցէ յեպիսկոպոսէն վարձա-
պէս ձեռն՝ ի գործ ածել և շինել զեկեղեցին և զտեղին պայ-
ծառ քան զառաջինն, «զի մի՛ կորիցէ, ասէ, յիշատակ տեառն
իմոյ Աշոտոյ». զոր և անյապաղ փութով կատարեաց երջա-
նիկ եպիսկոպոսն տէր Յովհաննէս: Եւ կոչեն՝ ի նաւակատիս
զմեծ կաթողիկոսն՝ այսոյ զտէր Յովհաննէս. և պայծառա-
պէս զարդարեցին զվանքն առաւել քան զառաւել և գրեն պա-
ճան յիշատակի՝ ի վերայ եկեղեցւոյն Աշոտոյ և Շ՚ուշանայ,
որ ունէր[1] օրինակ զայս. «Նախ և առաջին իսկ լեալ էր վան-
քըն Խոտակերաց. և վանն զի աւերեալ էր կրօնաւորաց ուխտս
և քաւարանս որ՝ի սմա՝ի վաղնջուց հետէ իսկ, ապա տէրն

---

[1] Ընդ օր. որում էր օրինակ զայս:

իմ երանելին Աշոտ աշխատութեամբ շինեալ էր զսուրբ եկեղեցիքն՝ միանգամայն իսկ նորոգապէս զարդարեալ զամենայն շինուածսն կրօնաւորական դասուք։ Իսկ և իսկ եղև տեառն իմոյ Աշոտի երանել ի մարմնոյ աստի՝ փոխելով առ Տարսն իւր։ Սահմանեցին որդիակքն մեր զդիւղս Ընտառամուխ ի սուրբ ուխտս սահմանաքն իւրեանց (զոր) Հարքն կերեալ էին, վասն երանելի իշխանին Աշոտի և ինձ Շ. ուշանայ՝ Սիւնեաց տիկնոջ, հոգեաց արձան և յիշատակ մեզ և յաթևշատութիւն որդեկաց մերոց։ Եւ եղև զի հիմնաշարժ լինելով աւերեցան եկեղեցիքս. և իմ տեառն իմոյ Աշոտի կենաց հաղորդ կամելով լինել (առ ի) նորոգել զդիշատակ նորա փոխելոյն առ Քրիստոս՝ նոր շինեցի զսուրբ եկեղեցիս կրօնաւորաց շինուածովք յանուն սրբուհւոյ և միշտ կուսին Մարիամու Աստուածածնին. և վասն փրկութեան երանելի տեառն իմոյ Աշոտի՝ Սիւնեաց իշխանի և իմոյ մեղուցեալ ոգւոյ և որդւոց մերոց Սբմբատայ և այլոցն երկարաձիգ կենաց[1] և յաջողման իրրև զնոյն զիւղն Ընտառամուխ ամենայն սահմանաքն նորա զոր կերեալ էին մինչև ցայսօր ժամանակի, ի ձեռս վանացս առաջնորդիս հաստատեցի անխախուտ պայմանաւ ի սուրբ Աստուածածնին ի վանս Խոտակերպաց մինչև յաւիտեանս ժամանակաց՝ կամակցութեամբ որդեկաց իմոց։ — Եւ զայս պայման հաստատեցի ի սուրբ կրօնաւորանոցի աստ ի հինգ եկեղեցիսդ այդ, զոր ես շինեցի՝ — մին եկեղեցիդ որ է Աստուածածնին՝ տեառն իմոյ Աշոտի և յիմ անուն լինի, ի տարին երիք քառասունք կառարեն մեղուցեալ հոգւոց մերոց, թերևս գոցուք ողորմութիւն յահեղ առնելին Քրիստոսէ. այլ և չորս եկեղեցիդ լինին որդեկաց մերոց յաթևշատութիւն և հոգեացն փրկութիւն և ի պէտս վանացս։ Եւդ մի ոք իշխեսցէ այսմ անառատ վճռիս և պայմանիս ընդդիմակաց լինել և խափանող.

---

[1] Ը. ՀԼ որ. Ե տալոյ յերկրորդէ ձեռագ.։

տալա թէ ոչ՝ այնպիսին Յուդայի մատնչին մնասակից լինի և մեղաց մերոց համարս տացէ յաւուր ահեղ առնելն Քրիստոսի։ — Եւ մեք տէր Յովհաննէս՝ Հայոց կաթողիկոս, մերովք եպիսկոպոսօք և կղերիկոսօք, և տէր Յովհաննէս՝ Ասնեայ եպիսկոպոս, վկայ եմք այսմ գրոյ և վճռի։ Գրեցաւ յիշատակ կտակիս այս յ359 թուականիս Հայոց՝ ի կամն ամենակալին Աստուծոյ, որ է օհնեալ յաւիտեան ամէն»։

ԳԼՈՒԽ ԽԳ

ՇԻՆՈՒԻՆ ՅՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ։

Արդէս՝ ի վերագոյնն ասացաք, Վահան անն՝ որդի Զաքարիկ իշխանի, եղբայր Զ Հասանշերի, վասն դիւաբախս մոլեգնելոյն եղև կրծնաւոր, և կամեցաւ շինել վանս և հաստատակ կրօնաւորական դասս մշտապաշտօն քահանայիւք։ Եւ յետ բազում և մեծամեծ ձգնութեանց եկեալ՝ ի ստորոտս բարձր լերինն, յորում անառիկ ամրոցն կայ Խաղաբերդու հանդէպ Ընձանենոյ[1], և գտեալ տեղի մի հարթ և յոյժ՝ ի ձահ՝ նախ խնդրէ աղօթիւք՝ ի Տեառնէ յաջողել զգործս ձեռաց իւրոց և ապա հրաւիրէ զեղբարսն իւր՝ ի նոյն գործ։ Եւ սկիզբն առնէ շինուածոյ եկեղեցւոյն և կանգնէ տուն փառացն Աստուծոյ յոյժ գեղեցիկ յօրինուածովք, դմբեթայարկ և հռափտան, հաստահեղոյս և տաշածոյ վիմօք. և կարդէ զնա տուն կրօնաւորաց։

Եւ մեծամեծ և թագաւորական ապառաւք զարդարէ զնա և ժողովէ, եղբարս արբակրծնս առնել քան զհարիւր։ Եւ հաստատէն մնան ժառանգութեան եկեղեցւոյն, որ յանուն սուրբ Լուսաւորչին Գրիգորի, զձորն գետոյն յայս դիմս և յայն յանդաստանս և յայգիստանս վանիցն, և զերծակողմն մինչ

---

[1] Այլ օր. հանդէպ Ընձանոյ։

'ի վեր 'ի ծայր բարձրաւանդակին, ուր հօրանք հօտին լինէին և բնակեալ խաշանց. և 'ի քաղաքի կողմանն[1] մինչ 'ի պատուար պարսպին արտաքին որոյն որ 'ի լեռնէն սկսանի. և 'ի Տանձվարախոյ կողմանէն մեծ բուռնոյն որ 'ի լեռնէն սկսանի և իջանէ 'ի դեան, և զգիղանն որ 'ի հանդիպ վանացն՝ զԱշտիշատ և զԱրամայր և զՀ֊կք[2] և այլ բազում տուրս և ժառանգութիւնս եկեղեցւոյն Հառատաւեն անխախտ վճռաւ։ Այլ և՝ահան զվանան յիւր անուն և՝ահանու վանք, որ այնուհետև օր ըստ օրէ հանդիսանայր իբրև քաղաք բազմաժողով։ Եւ ինքն իսկ և՝ահան յետ բազում ճգանց և աշխատութեանց վախճանի և դնի 'ի դրան տուրը քառապանին։ Եղև շինութիւն տուրը ութից յ360 թուականին ։ այոց, 'ի թագաւորութեան Ամբատայ Բագրատունւոյ, յիշխանութեանն Աիւնեաց գահիրէց իշխանին Ամբատայ՝ որդւոյ Աշոտոյ, և Խաղպայ Ջ֊ևանշերի, յեպիսկոպոսութեան Աիւնեաց տեառն Յովհաննիսի։

Այլ յետոյ միւս և՝ահան՝ եղբօրորդի տուրս, այսինքն Ջ֊ևանշերի որդի, անեալ և ուսեալ 'ի մանկութենէ, վարժեալ աստուածային խնամոխքն 'ի սոյն տան, քահանայացաւ և եղև առաջնորդ տուրը ութից։ Սա յաւել բազում շինութիւնս և զարդարեաց զվանան հանդիսական կարգօք, շինէ զմեծ ագօթարանն 'ի դրան եկեղեցւոյն վիմապեան մանհատ ձանաք, յորում հանդուցեալ կան 'ի շերմի բազում թագաւորք և թագուհիք Ընդաւնից և Խաղպայ, և բազում իշխանք փառաւորք Աիսական աշխարհին։ Շ֊լինէ և գեղեցիկ յօրինուածով զգաւիթ եկեղեցւոյն մեծամեծ քիւրածոյ վիմօք և բնաւն կանգնոյց չափ, կանգնէ, կառոյ 'ի դրան վանիցն և 'ի վերայ (նորա) երկու խորան յանուն Պետրոսի և Պօղոսի սուրբ

---

[1] Այլ օր. և 'ի հարաւ կողմանէ։ — [2] Այլ օր. զԱշտիշատ և զԱրամայր, զԻրիսաբաւայր և զՇիրիւ....

առաքելոցն։ Ե՛ւ ինէ և՛ ի ձուլեալ կրաշաղախ քարանց տրա-
պէզ մի մեծ և բերէ փողովք ղՋուրն՝ ի դուռն նորա. այսպէս
գեղեցկացուցեալ զնա զանազան յօրինուածօք։ Եւ ինքն յե-
տոյ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն Ախունեաց որ զկնի տեառն
Յակոբոյ. և անտի գնաց՝ ի Ծայրագոյն փառս՝ ի կաթողիկո-
սութիւն Հայոց, որ զկնի տեառն Ներսիսի Մոկացւոյն։ Եւ
կացեալ՝ ի կաթողիկոսութեան ամն հինգ վախճանի՝ ի վա-
պտրական աշխարհի՝ ի Տոսպ գաւառի՝ ի Զորոյվանքն, որ է
մերձ Ռերկրոյ և դնի՝ ի գրան քաւարանին։ Այլ գիտ բա-
զում ժամանակաց յաւուրս Վրիդորի՝ թագաւորի Հայոց,
՝ի Հ՚ահանդխտոյ թագուհւոյն և՛ ի Պայտայէ և՛ ի Անենքե-
բինոյ թագաւորէ, բազում և գեղեցիկ շինուածովք առաւել
գեղեցկացուցին զվանան վ՚ահանու՝ կանգնեալ կամարս մե-
ծամեծս, և՛ ի վերայ՝ եկեղեցիս և սրահս բազմասիւնս բարձ-
րարկս, հովանի և խրախաբան իշխանացն. յորոց աւուրս
եկն երջանիկ կաթողիկոսն Ղազարիոյ տէր Առաքիանոս և անդ-
դէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգեաւ՝ ի տեղւոջն, և եղաւ՝ ի
նմին սրբարանի։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Վ՚ասն Տէրտէր Գէորգեայ տհասնայէ, որ էր սրբէ իշխանացն Սիւնեաց։

Յաւուրս իշխանին Սիւնեաց վ՚ասակայ տեառն՝ որդւոյ
Փիլիպպէի, մանուկ մի՝ ի Սիսական տոհմէ, Գէորգ անուն՝
յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ, առեալ էր իւր
կին՝ հասեալ՝ ի չափ երիտասարդութեան։ Ապա ըստ աստ-
ուածային երկիւղին նեղեր զնա բան աւետարանին՝ այն որ ա-
սէր. «Եթէ ոչ թողէ այր զհայր իւր և զմայր կամ զկին կամ
զորդի և առնու զխաչն և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի»։
Եւ երբէք ոչ հանդչէր և ոչ հեշտանայր՝ ի մարմնական փառս
և՛ ի ցանկութիւնս։ Եւ զի կուսութեամբ և սրբութեամբ

հասեալ էր նա յարդար ամենատեսութիւն, ապա օր ի յեղա-
կարծումն ժամու անյայտ լինիլ յիւր ապարանիցն և յընտա-
նեացն և գնալ ի ծածուկ ի վանս ուրիք և փոխել զհանդերձս
իւր ի մաշկեղէնս և յայծեայս՝ և անծանօթ կալը անհան-
դիստ աքսորութեամբ: Ապա ձիչ բարձեալ մօր նորա [1]ամա-
մուհեայ [1] մեծահասակ ոխկնոջն, և կնոջ նորա և եղբարց և
ծառայից՝ շրջելին խնդրել զԱնդրէաս և ոչ գտանելին:

Եւ յետ սակաւուց ծանեան զանցիցն: Գնացեալ բռնու-
թեամբ ածին յապարանան իւր, և պատառեալ զգեստ հան-
դերձն այծեայ և զխոշոր ցփոխն՝ զգեցուցին զհայրենի հան-
դերձն յալքուեանական մեռաքսէից: Եւ թէպէտ բռնութեամբ
պահէին, այլ նա ոչ խառնէր ընդ նոսա. այլ իբր արբեալ և
թմրեալ ի սիրոյն Քրիստոսի՝ կայր անդրադարձ և լուռ՝ միշտ
աղօթից և ընթերցմանց պարապեալ: Յաւուր միում գար-
ձեալ անտիւղոյթ լինէր. և զգեցեալ մաշկեղէն խոշոր և զըլ-
խիկնա պատառատուն՝ գնայր ի մեծ առաքինարանն Եղիցու-
վանից առ աստուածապզեալս և սրբափայլ ճգնաւորն՝ մեծ
Եզոնոման Թէոդորոս քահանայ. և նա յոյժ ուրախութեամբ
ընկալաւ զնա: Իսկ իմացեալ մօր նորա և կնոջն և առեալ զը-
համագլի իշխանան Սիւնեաց՝ գիմեցին ի վանսն Եղիցու և բա-
զում և զանազան մաղթանօք ջանացին և ոչ ինչ կարացին
զնա շարժել յայնմ կամաց. ապա իմացեալ զանխախտելի սէրն
որ առ Քրիստոս՝ թողին զնա ի կամս իւր և գնացին: Իսկ
նա յետ բազում ճգնութեանց և խստամբեր կրօնից փափա-
գեր քահանայական շնորհին [2]: Եւ յայնմ ժամանակի փայ-
լեր ճգնութեամբ մեծ եպիսկոպոսն Սիւնեաց տէր Սաղոմեն և
երանելին Մաշտոց՝ ի Սևան. և զի ոմանք խանդային ընդ Գէ-
որգայ և մեծաւոք գիճեցուցանէին զնա խիստ բանիւք՝ ի վար-
գապետաց և յաշխարհականաց, ապա առեալ զնա Թէոդո-

---

[1] Այլ օր. Հոմոմբհայ: — [2] Այլ օր. ի փափաքեր տահանայական լրծից շնորհին:

բոսի տարաւ առ տէր Սաղոմն, որ յոյժ սիրով ընդունէր և յորդորական խրատու հաստատէր զնա և հրամայէր հետա-նալ անտի և գնալ առ Մաշտոց և ի նմանէ ուսանիլ և կրօ-թիլ յամենայն վարս առաքինութեան, զոր և արարն իսկ:

Եւ յուղի անկեալ Ովսեպոսիս հանդերձ գնաց ի Աևան. և բազում աւուրըք կեցեալ ընդ նմա՝ վարժեալ և խրատեալ ի նմանէ, ամենայն բարեձևութեամբ՝ դառնայ անդրէն ի տեղի իւր և գտանէ վախճանեալ զեպիսկոպոսն: Եւ յաջորդէ ի տեղին տէր Յովհաննէս. գնայ յողջոյն նմա և բազում ևս գտանէ յորդորուածն մխիթարական խրատուց ի նմանէ: Եւ բնակեալ Այրիցու վանս՝ հանդիսանայր ի մեծամեծ ձգունս հանդերձ Ովսեպոսիս: Ապա յետ աւուրց լինէ դարձեալ գնայ առ Մաշտոց ի Աևան հրամանաւ տեառն Յովհաննիսի և թախանձեցուցանէ գնա վասն իւր քահանայանալոյ. զոր և յուզարկէ մանրեթոզական թղթով առ կաթողիկոսն՝ այսոց Վէրոյ և ծանուցանէ նմա զամենայն որպիսութիւն նորա և հայրապիր եղեալ Վէրոյայ՝ երաշխաւոր լինի նմա: Ցեսեալ առաւ կաթողիկոսին զՎէրոյ և ընթերցեալ զթուղթն՝ ընդունի զնա յոյժ պատուով և հրամայէ ձեռնադրել զնա քա-հանայ, և յուղարկէն անդրէն ի տեղի իւր. և լինէր խնդու-թիւն բազմաց: Ապայ Մաշտոց վասն երաշխաւորութեան անդադար յորդորական թղթով և հոգևոր խրատու զգու-շացուցանէր զնա: Ապա ի կաթողիկոսութեանն Մաշտոցի հանապազ ընդ նմա լինէր Վէրոյ մինչ ի վախճան նորա: Եւ յետ վախճանին Մաշտոցի զայր և բերէր զշուրջառն և զկնկուղն խոյրակերպ և զպարեգօտ երանելոյն նշան յանուն Աիւնեաց, և ինքն բնակէր Այրիցու վանս ընդ Ովսեպոսիս հրեշտակակրօն վարուք: Եւ անդէն վախճանեալ՝ եղաւ սրբա-բանեալ մարմին նորա ընդ երիցս երանեալ սուրբ հօրն Այրի-ցակայ ի նմին սրբարանի. որոց բարեխօսութեամբ խնայեսցէ Քրիստոս ի տունս յայս և յաթոռս և ի հաստատեալ հօտ սորին:

ԳԼՈՒԽ ԽՕ.

Վասն չինութեան նորավանից, որ ի ֆառաոնին Բղէնոյ։

Եղեանելի սուրբ հօրն Գէորգայ էր հարազատ մանկիկ մի ի նոյն Ախաեան տոհմէ՝ Աեփաննոս անուն, զոր հատեալ ի տանէ ծնողացն՝ նուիրեցին Աստուծոյ և եառն յուսումն մանկութեան առ ոտս աստուածարեալ ծերոց. որ մնալ զարգացաւ ամենայն կատարելութեամբ ներքին և արտաքին մարդովն, գիտնականաւն և գործնականաւն, և կոչեցաւ յասպիճան քահանայութեան ի տէր Յովհաննիսէ՝ Աիւնեաց եպիսկոպոսէ։ Ապա ցանկացեալ այնուհետև աստուածային իմն գործոյ՝ կամեցաւ շինել եկեղեցի և հաստատել ի նմա տուն կրօնաւորաց և դասս պաշտօնէից. զի որ զառաջնորդութիւն ստացի՝ գնացէ նա ի զօրութենէ ի զօրութիւն և երևեսցի Աստուծոյ և հրեշտակաց ի Սիոն։ Գնացեալ ապա ի Թիֆլիզ կուսէ Կառարոյ վանից և գտեալ տեղի մի յոյժ գեղեցիկ և վայելուչ՝ ի մէջ երկու ձորոց ի վերայ հարթ ոստոյ միոյ, սկսանի շինել եկեղեցի օժանդակութեամբ ՚ի բահատայ իշխանէ և կատարէ զնա, և (յաւելու) այլ ևս գաւիթս և սրահս եկեղեցւոյն և զբնակութիւն կրօնաւորաց։

Եւ կոչեալ ի նաւակատիսն զտէր Յակոբ՝ Աիւնեաց եպիսկոպոս, սահմանեն զնա հոգևպետող, և զվայրն ամենայն շրջակայ՝ ի ժառանգութիւն եկեղեցւոյն, և դնեն գոդաստունս[1] հանդէպ վանիցն, և ժողովեալ ուրուք բազումն անդ զարմանեին։ Եւ այսպէս պայծառացուցեալ ամենայն սպասուք և կարգաւք զվանան յ385 թուականին ՚ այոց՝ ինքն երանելին և անհամեմատն ի մարդկանէ Աեփաննոս կեցեալ բազում ամս առաքինաջան վարուք և հրեշտակակրօն առաքի-

[1] Ա.յլ օր. և գնին ֆոքեռոնս։

նոքօքամբ զանմարմնոցն ի մարմնի բերելով զկեանս՝ մեռեալ մարմնով և կենդանի հոգւով, փոխի յիմանալի կայանս ի կարգս հրեշտակաց—այլն երկնաքաղաքացի գնայ առ քաղաքապետան իւր Քրիստոս ի 419 թուականին ՚այոց, ի նահատարդի ամսոյ ի ԺԷ յաւուր հինգշաբաթիոջ ի սուրբ պենտեկոստէին, և գնի ի քնարանի առ սուրբ եկեղեցւոյն: Եւ յաջորդէ զառաջնորդութիւն ուխտին Նորավանից հայր ՚Եբրահատ, և յետ նորա եղբօրորդի նորին Սահմանոսի Վրիհատափոր՝ աշակերտ սուրբ հօրն, յամենայնի նմանեալ վարդապետին իւրոյ:

Նայց յետ սակաւուց շինեցաւ եկեղեցին յոյժ գեղեցիկ յօբինուածովք, և ի գրանն կամարք զարմանալիք ի սքանչելի ճարտարապետ յարմարեալք մեծամեծ վիմօք և խարխափուր սեամբք ի հայր Գէորգայ և ի Յովհաննիսէ քահանայէ:

ԳԼՈՒԽ ԽԱ

Վասն Յուրաց բերդի՝ եւ եղբարցն, որ այլ ուղիղ:

Ի ժամանակս Ամբատայ՝ որդւոյ Աշոտոյ Սիւնեաց գահակեց իշխանի, և յեպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսէի շինողի սուրբ եկեղեցւոյն, բազում և մեծամեծ վիշտս հասուցանէին սուրբ ուխտին Տաթեւոյ բնակիչք Յուրաց բերդին, որք էին անաստուածք, ժպիրհք և նզուզակք: Եւ յաւուր միում եկեալ ՚ի գիշերի յեղակարծ ժամու՝ սկսան կողոպտել զեկեղեցին և զգործառնեսն՝ և զյարկան կրօնաւորաց և խլեցին զեպիսկոպոսն, զի սպանցեն՝ և ոչ գտին: Ապա զմնացս ՚ի ծերոցն սրով հարին և զայլսն փախստական արարին. զոր ինչ գտին իւրեանք՝ առեալ գնացին ՚ի բերդն (Յուրաց). տա-

---

[1] Այլ որ. չերթային:

բան և արծաթի սափորով զմեռոնն և վայթեցին ընդ քարն։ Իսկ ընդ լուսանալն եկեալ եպիսկոպոսին և տեսեալ զայն ա-մենայն ՚ի վեր առին զսուրբ խաչն և զայլ սրբութիւնսն և նղովեցին ահագին նղովիւք զերդն և զընակիչս նորա.— և առ ժամայն շարժեալ գետնոյն՝ քարն յերկուս ճեղքեալ և ամենայն շինուածքն փլեալ և բազումք ՚ի բնակչացն անյայտ կորեան։ Իսկ եպիսկոպոսն ոչ իշխեաց բնակիլ ՚ի տեղւոջն, այլ առեալ զնաւն՝ ամենայն պաշտօնէիւքն և գնաց յօտար աշխարհ։

Ընդ լինել ապա այս փառաւորեալ իշխանին Ամբատայ. և յարուցեալ այլով ազատաքն գնաց զկնի եպիսկոպոսին և սուրբ խաչին, և բազում թախանձանաք էած անդրէն ՚ի տեղի իւր՝ ՚ի մեծ հայրապետարանն Տարօն. և հալածական առեալ զանիծեալ բնակիչս Յուրայ քարին՝ զոմանս ՚ի մեծամեծ պատիժս և պատուհասս արկանէր, և առ հասարակ ջնջեալ հետացոյց յաշխարհէս. և զտեղին իւր առհմանումն եւս ՚ի սահման ժառանգութիւն եկեղեցւոյն և աւանդեաց ՚ի ձեռս տէր Յովհաննէսի։ Եւ հրամայեաց գրել վճիռ առհաղին նղովիւք և կնքել և դնել ՚ի սուրբ եկեղեցւոջն, զի մի ոք յանդգնեսցի շինել զնա, զոր և գրեացն իսկ. և է այսպէս.—

«Ես Յովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոս Աւանեաց, գրեցի զայս վճիռ իմով ձեռամբս հրամանաւ առաքեալ իշխանին Ամբատայ, զի եհաս մեզ վըտանդ տագնապի ՚ի չար և յանառատուած ելուզակացն, որ բնակեալ էին ՚ի Յուրաբերդ անուն քարին, որք յանկարծակի յարուցեալ ՚ի վերայ յոգնաժողով եղբարցն ՚ի գիշերի՝ կողոպտեցին զյարկս ամենայն, և զոմանս սպանին ՚ի ծերոցն։ Իսկ մեք տեսեալ զայնպիսի աղէտս՝ առեալ զսուրբ խաչն՝ հալածական եղաք յայլ աշխարհ և կրծտաւորքս ամէն ցան և ցիր եղեն։ Եպա ազդ եղեալ առաքեալ տեառն Ամբատայ և եկեալ գարձոյց զմեզ այսրէն. և բան քաջ սրտին և մեծայոյս

հաւատոյն՝ իբրև զառիւծ մրմռեալ ՚ի վերայ չարացն, ցան և ցիր կացոյց զամենեսեան, զիտելով ըստ մեծի իմաստութեան իւրոյ զանօգուտ քարն, զի չէ ումեք շահ ինչ և ոչ նեղէ զոք՝ ոչ ՚ի Նազացեաց, և ոչ յայլ կողմանց, բայց միայն զսուրբ եկեղեցիս և զիւր իշխանութիւնս տագնապաւ վշտացուցանէ, զորս իւր և իւր հարանցն բազմաստ և անչափելի ծախիւք և աշխատութեամբ պայծառահրաշ վայելչացուցեալ էր և ցանկալի յօրինեալ, — զկերծուցեալ հանդոյց ըզսուրբ նշանս և զեկեղեցիքս, և զմեզ եհան յանդորր ՚ի դառն նեղութենէ, և աւանդեաց ՚ի ձեռս մեր զտեղին. զոր հաստատեալ ամն նախ ՚ի մարմնի Տէր Աստուած ձիդ ժամանակօք և խաղաղական թագաւորութեամբ, զաւակօք և զարմիւք վայելել, և յաւիտենական կենացն և արքայութեանն լինել արժանի ընդ սուրբ թագաւորացն»:

«Այլ հրամանաւ նորին Ամբաստայ՝ Սիւնեաց իշխանի, զրեցի իմով ձեռամբս կռակ յաւիտենական և կենդանի իմով սովորական մատանեաւս և եղի յեկեղեցւոջս, զի յետ ժամանակաց մի ոք յանդգնեսցի զնոյն ոճիրս գործել: Արդ եթէ ոք հրամանիս մերոյ հակառակի և առնու զՅուր ՚ի սուրբ և կեղեցւոյս և կամ կամի զառաւ քարդ բերդ անուանել և շինութիւն խորհիլ և կրկին հալածումն յարուցանել սուրբ եկեղեցւոյս՝ այնպիսին նզովեալ եղեցի Աստուծոյ ամենակալէ և յամենայն սրբոց և ՚ի մէնջ՝ և մի հասցէ ողորմութիւն. այլ եկեսցեն ՚ի վերայ նորա անէծք ցաւագինք, և եղեցին որդիք նորա ՚ի սատակումն և յազգէ ջնջեսցի անուն նորա, և յետ այսր ինքն ջնջեալ լեցի ՚ի դպրութենէն կենաց և մնան ընդ սատանայի առաջ յանշէջ հուրն: Յակ ժամանակին աւգն, որ հաստատուն կայ այս պայմանիս՝ որպէս Ամբաստ առաջնասէր իշխանս, զնորին օրհնութիւն և զվարձս ժառանգեսցէ, ապա թէ մոռացեալ անփոյթ արասցէ՝ զնորն մի վայելեսցէ և ամենայն նզովից, որ ՚ի գրիս է՝ պարտապան եղիցի: — Նզև այս ՚ի Թուականիս Հայոց 364»:

Ասյց յետ բազում ժամանակաց մինչ խանգարեալ էր հայրապետութեան և ցրուեալ ժառանգութիւնք եկեղեցւոյն, զայս սեղեա առին ամենք և վիրատին շինեցին և յարուցին մեծամեծ հալածումն եկեղեցւոյն յառաջս Վ. սահակայ Թագաւորեցելոյն և Վաղայի և Շ. Ահանդխատոյ՝ մերոց նոցա, և կրկին աւերեցին զվանն։ Եւ եպիսկոպոսն տէր Յակոբ երթեալ էր ի Ռաղս և գտաձեալ գայր անտի. իսկ շնաբարոյքն այն գաղտ պահեալ զձանապարհն, որ անցանէ ընդ խոռն Յուրայ՝ յառնան ի վիրայ և սպանին զեպիսկոպոսն, որ և Թագեցաւ ի յիշատակ չար գործոյն և մինչև ցայսօր բժշկութիւնք լինին ի տեղւոջն ի բորոտս, ի պիտակս և յայլ ախտաժէտս։ Ապա յետ նորա յաջորդի ի տեղին տէր Գրիգոր, որ և հայցեալ ի Թագաւորէն Վ. սահակայ զտեղին՝ դուցանէ, և զառաջին Թուղթ անիծիցն, որ գրեալ էր ձեռամբ տէր Յովհաննիսի. և նորա հրամայեալ նմա՝ սպայ պատուէր քակել և յառակել և բնաւին ի բաց ջնջել զտեղի բերդոյն, զոր արար իսկ անյայտ զտեղին. և գրէ կաւակ կրկին այսպէս.—

«Շ. նորհիւն Ա. ստուածոյ կամ եղև Վ. սահակայ՝ ստուածասէր և բարեպաշտ Թագաւորի և Վաղայի իշխանաց իշխանի և մօրն իւրեանց Շ. Ահանդխատոյ ըստ քաջահաւատ յուսոյն և երկիւղած բարուցն հաստատել զվերոյդրեալ վճիռդ երանեալ տեառն Յովհաննիսի՝ շինողի սուրբ եկեղեցւոյս, և չարաչար նեղվելոք վաղիւ յայժմուս և ի հանդերձեալ կեանսն վասն Յուրայ քարիդ շինողի։ Ընդ անփոյթ եղեալ անյուսից և աներկիւղից՝ սկսան և շինեցին բերդ վասն առժամանակեան օգտի, և ոչ ինչ շահեալ՝ որդնալից սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան։ Իսկ ի ժամանակի մերում հրամայեցին աւերեալ յատակել։ Որ այլ յանդգնի շինել՝ նեղվեալ լինի ի Հօրէ և ի Որդւոյ և ի սուրբ Հոգւոյն. որդիք նորա մեռցուք եղիցին և կրցեն ի բնակութենէ իւրեանց և մի հասանիցեն զաւուրս իւրեանց։ Եւ թէ ի

տամիկ աւագութիւն փոխի և յափշտակել Ջանայ զՅուր և կամ շինել զերդաքարշ՝ Աստուծոյ անիծեալ լինի, և յիւր Ա՛ահմեռէն ոչնչէ եղիցի, հալչի նման հրոմ, և յիւր ը-ռնէն յամօթ և սևևրևս լինի։— Գրեցաւ այս կոտակ իմով ձեռամ բըս տեառն Գրիգորի. և կնքեցի իմով սովորական մատա-նեաւս ՚ի կամն Աստուծոյ»։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Վախճան պետն Յովհաննէսի, և յաջորդելն պետն Յակոբոյ. և որ յա-ռաջ նորին եղեն յաթոռն Հռոմկլայ և Եկեղեցւոյն։

Արանելի և ատուածազգեաց հայրապետն մեծ ոտր Յով-հաննէս յետ բազում բարեկարգութեանց և մեծամեծ և ե-րևելի գործոց վախճանի՝ և դնի առ սուրբ եկեղեցւոյն ՚ի հան-գըստի յ367 թուականին ՚ատյոց։ Նայց բազում ինչ ՚ի բա-նից նորա և ՚ի ժառանգութեանց, որով փարթամացոյց ըզ-սուրբ ուխտն՝ ոչ գրեցաք, մի՝ զի ՚ի հնացեալ նամակացն ոչ կարացաք ճշդիւ վերծանել, և մի՝ զի տաղտկութիւն հասա-րելոցաք լսողացդ։ Նակ յետ սորա գահերէց իշխանն Ա՛ահնեաց Ամբատ խնդրէ ՚ի մեծ և յաշխարհակալ կաթողիկոսէն ՚ատ-յոց ՚ի տէր Յովհաննիսէ եպիսկոպոս և առաջնորդ Ա՛ահնեաց։ Նա էր ՚ի տան կաթողիկոսարանին սենեկապետ և գործակալ կաթողիկոսին և առաջ առենայն կղերիկոսաց՝ Յակոբ ա-նուն, որ էր ՚ի Գունայ՝ որդի եղբօր նորին տեառն Յովհան-նիսի կաթողիկոսին, այր բարձրահասակ և գեղեցկատեսիլ, հանճարեղ և իմաստուն, քաղցրաբարոյ և հեզամիտ, լի ա-նապատ առաքինութեամբ — զնա պատշաճ համարեալ այնմ մեծի և առաքելական աթոռոյն՝ վկայութեամբ և ընտրու-թեամբ բազմաց ձեռնադրէ։ Նա առաքէ զՅակոբ եպիսկոպոս Ա՛ահնեաց, որ եկեալ բազում և երևելի կայուք պայծառացոյց

զսուրբ նկեղեցին և փարթամացոյց առաւել քան զառաւել. և ամենաքաղցր [1] վարդապետութեամբ միշտ ուսուցանէր ըղվիճակեալսն և հոգեպէս վասն հօտին։

Սա անսկզբնաւոր իմն զօրացեալ ի բանէն Աստուծոյ՝ գանձագին առնէ զՋուրն Ջագիձորոյ, որ ի արարածն կոչի՝ ի տեառն Փիլիպպէ՝ որդւոյ Վասակայ Մունեաց իշխանի, ընդ երկոտասան հազար դրամի և մի լուսաւոր ջահարի [2], որում դիւն և հանգամանքն բազմաց անգիտելի էր։ Եւ բազում աշխատութեամբ և մեծամեծ ծախիւք ածեալ էր (Ջուր) ի լեռնէն Ջագիձորոյ և բերեալ ի Ցաքուան, որ հանդէպ վանիցն յայնկոյս գետոյն. և արար զամենայն առատապար և փշալից վայրն վարդուտ և անկալից։ Ընկեաց բազում այգիս և որթս սորեկըս, էարկ առնկս զանազան պտղաբերաց՝ ձիթենիս և թզենիս և նռնենիս և յամենայն մրգաբերաց արար դրախտս զարմանալիս, և զարդարեալ զբոլոր վայրն ընդարձակապտղին թանձրաթախիծ ծառովք և քաջուղեշ որթովք՝ ի փայլուձն եղբայրութեանն և՝ ի պէտս ամենայն կարօտելոց և աղքատաց։ Եւ ապա տեսեալ բլուր մի գեղեցիկ ի մէջ դաշտատանաց, և հարթեալ զգլուխ նորա՝ արար պարտզափակ և ելից զմէջն իբրև քաղցր դիտանոց, որ հայէր ի վերայ ամենայն այգեստանացն։ Եւ շինէ ի վերայ նորա զմրէթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, և զարմ և զձեղունն նորա եւս զարդարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամենայն տնօրինականն և տէրունականն պատկերս և զառաքելոց և զՀայրապետացս, և բոլոր շուրջ զեկեղեցեաւն սրահակս գաւթաց. և զրե ինքեան արձան յիշատակի այսպէս.—

«Ես Յակոբ՝ շնորհիւն Աստուծոյ Մունեաց եպիսկոպոս, գնեցի զՎարագ Ջուրն յաստուածատուէ Փիլիպպէէ՝ Մունեաց տեառնէ, ընդ երկոտասան հազար դրամի և մի պատուա-

---

[1] Այլ օր. և սիրուն տալոյ Երզնկայեցւոյ։ — [2] Այլ օր. Ջահարի։

կան գոհարի, և բազում ծախիւք և մեծամեծ աշխատու-
թեամբ վերին օգնականութեամբ ածի զջուրն ի լեռնէն Զադէ-
ձորոյ և բերի ի վարդուտս, և անկեցի որթս սոսկս և այգիս
վայելուչս և դրախտս բազմածաղկս և պտղալից ի վայելումն
սուրբ հայրապետացն, որ ի սուրբ աթոռս հաստատեին և սուրբ
ժողովոյս և ամենայն հաւատացելոց Քրիստոսի: Եւ արդ Ա-
ստուած ի վայելումն արասցէ ամենեցուն: Եւ ազերս մատու-
ցանեմ հաւատացեալս անմոռաց յիշման արժանի առնել ի սբ-
բամատոյց յաղօթս ձեր զառաւակեալ հոգիս իմ: Եւ չկայ
յայս ջրոյս հաշիւ ոչ Նորեցեաց, ոչ Խոտանեցեաց, ոչ Շ ընե-
հիրացեաց կամ Ալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կոչել
և ոչ ի մարդ և ոչ պարտիզն ջուր տալ՝ զատ ի մատակէդ ըմ-
պելոյ մարդոյ և անասնոյ[1]: Եւ թէ ոք յանդգնի և զայս ջուրս
կոչէ՝ այնպիսին նզովեալ լիցի յԱստուծոյ և ի սուրբ նշանէս
և յ318 հայրապետացն, որ ի Նիկիայն գումարեցան՝ և յա-
մենայն սրբոց և ի միջ. և բաժին նորա ընդ ուրացողս և կա-
խարդս լիցի յաւուր ահեղ առնելոյ Քրիստոսի. և ընդ սա-
տանայի և հրեշտակաց նորա ձարակ լիցի անշէջ հրոյն տան-
ջանաց, ուր հուր նոցա ոչ շիջանի և որդն նոցա ոչ վախճա-
նի: Յ381 թուականին գրեցաւ վճիռս այս խնով ձեռամբս
և կնքեցաւ մեր սովորական մատանեաւս ի կամ Աստուծոյ»:

Զտապաք զայս իւրով ձեռամբն գծագրեալ ի մագաղաթի,
ընդ ամին և զմիւս վճիռ գրի ու ծախ վաճառելոյ գրեալ ձե-
ռամբ նոյն իշխանին Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, որ Իշ-
խանիկ կոչեր, որդւոյ մեծ Փիլիպպէին, որ էր այսպէս.—
«Վահան Աստուծոյ ես Փիլիպպէ՝ որդի տեառն Վասակայ,
Սիւնեաց տեառն, իմ կամաւորութեամբ վաճառեցի զՎա-
րսաւակն ջուր սուրբ Գրիգորին, որ իմ պապուն տէր Փիլիպ-
պէին շինեալ էր ի սուրբ եպիսկոպոսարանն Տաթեւոյ. և գնեցաք

---

[1] Ըստ օր. պարտ ի Հարկանն ըմբռնել մարդոյ և անասնոյ:

Յակոբ՝ Ամենեցուն եպիսկոպոս, ընդ երկոտասան հազար դրամի եւ մին մեծագին գոհարի, եւ վճարեաց զամենայն գինն ողջամբ։ Եւ ես առեալ եմ զդանձս եւ զմին գոհարն ի Յակոբայ՝ Ամենեցուն եպիսկոպոսէ։ Եւ ապիզար եմ ես եւ իմ զաւակք եւ այլ աղգայինք յայդ ջրոյդ յայսմհետէ մինչեւ յաւիտեան ժամանակաց։ Եւ չկայ Նորեցուց կամ Խոտաւեցուց կամ Շնհերայ եւ Հալեցուց յայդ ջրոյդ հաշիւ՝ ոչ շատ եւ ոչ սակաւ, ոչ յատա հատանել եւ ոչ ի մտրդ զառել, որ մտրդ եւ անասուն ջուր ըմպեն ի մատակէդ[1]։ Եւ թէ ես կամ զաւակք այս պայմանիս առեալք եւ կամ յայդ ջրէդ կտրել խորհիմք յատա, կամ ի մտրդ կամ յայլ ինչ՝ «Աստուծոյ եւ ի սուրբ նշանէդ նզովեալ եղեցիմք, եւ զվերոյգրեալ անէծսդ տեառն Յակոբայ անմահ կենաց ժառանգեսցուք։ — Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ ուխտիդ եւ սուրբ եւ աստուածազգեաց հայրապետացդ»։

Այս Յակոբ եւս ածել նկարիչս եւ զաւառախոս, որ է պատկերագործ, ի հետաւոր աշխարհէ Ֆռանգ ազգաւ, եւ զլուսաձեմ յարկս աստուածարուեստ տաճարիս բազում եւ անհուն ծախիւք եւս նկարել զբովանդակն ի վերուստ մինչեւ ի վայր, եւ եւ զփրկչական պատկերն յոյժ ահաւոր տեսլեամբ եւս նկարել հանդիսակիցս աստուածազործ սեղանոյն ի վերոյ՝ զբոլոր երկինն աւազ կամարին. եւ ի նկուքսդ նորա շուրջ զսեղանոյն՝ զմարդարէական եւ զառաքելական եւ զհայրապետական կենդանագրութիւնս յոյժ խորհրդաբար, նմանապէս եւ զբոլորն համակ զարդարեաց այնքան, զի տեսողաց տեսարանքն շլանային ի նայելն. եւ կրկէք ոչ թուէր ի դեղոյ եւ յերանգոյ յօրինեալ, այլ համայն կենդանիք, յորոց զարհուրելք խոստափէին տեսողքն։ Եւ ապար զայս ի թուականին ՌՀԹ։ Եւ ապա մեծաժողով հանդիսիս կոչեաց զկաթողիկոսն ՃՀԹ բազում եպիսկոպոսօք եւ զիշխանսն ի նաւակատիս օրհնու-

---

[1] Ա.յլ օր. ի հաւեր։

թեան և սրբագործութեան պատկերացն ոչ ինչ ընդհատ քան զառաջինն հանդէսն, որ վասն օրհնութեան տաճարին:

Դարձեալ յայնմ ժամանակի աւազականոցն, որ հանդէպ վանիցն կայր՝ ի վերայ ուսոյն, որ Ահեղադաշտն կոչեն, զոր վիրապոյն ասացաք՝ լի էր եղբայրակ մարդովք, զոր բազում ոճիրս գործէին և յոյժ նեղութիւնս հասուցանէին եղբարցն և այլ շրջակայ տահմանացն: Յայնժամ խնդրէ եպիսկոպոսն յիշեխանացն Աիւնեաց և հրաման առեալ՝ հալածական արար զարսն, քանզեալ աւերեաց զապստամբանոց նոցին և հիմնախիլ արար, և զտեղին տահմանովն սեպհականեաց եկեղեցւոյն, և մեծամեծ և ահագին նզովիւք փակեաց, զի մի ոք այլ իշխեսցէ անդ բնակիլ կամ շինութիւն առնել:

ԳԼՈՒԽ ԽԹ.

Շինութիւն եկեղեցւոյ և վանացն ի յետն պատրաստ ճոխութեան և սքանչացմանէն որ ի վայոց յոյժ փոփոխէ, և վասն սրբոյն Մովսէսի:

Ի ժամանակս թագաւորութեանն Հայոց Արշ Աբասայ՝ որդւոյ Սմբատայ թագաւորի և ի տէրութեանն Աիւնեաց Սմբատայ և եղբարց իւրոց և որդւոց, ի թուականութեանն Հայոց 378, երանելի եպիսկոպոսն Աիւնեաց պատահեալ ի տեղի մի Հաղեգեաց ձորի ի վերոյ[1] ասացին գեղջն և յոյժ հիացեալ ընդ նա վասն առաւել գեղեցկութեան վայրացն և յոյժ զառանց և ապահով գոլոյն, և շարժեալ ի տեսչութենէն՝ սկիզբն առնէ շինուածոց հրամանաւ Սմբատայ իշխանին և Սոփիոյ կնոջ նորա և Սահակայ՝ եղբօր նորին: Եւ կանգնէ ի նմա տուն Աստուծոյ ի քերածոյ վիմաց՝ և զանազան եղանգօք զարդարէ զնա ի նկարս գեղեցիկս, և կոչէ զՍմբատ և

[1] Այլ օր. ի վերոյ ասացին գեղջն:

զԱահակ ՚ի նաւակատիս տաճարին։ Եւ սահմանեն ժառանգութիւն նմա զամենայն լեռնակողմն և զառ ՚ի նեղջոյն նորա ՚ի գետ անդր՝ բուրաստանս բազումս և արտորայս. և հատատեն զնա տուն կրօնաւորաց ՚ի փառս Աստուծոյ։

Ապա՝ յամի 385 թուականին տասներորդ իշխանն Արմաբատ եղեալ յաւուր միում յայրուհանայ իւր, որ էր Անղեղիս գիւղաքաղաքի՝ երթայր ՚ի զբօսանս որոց. և պատահեալ խոտակերաց և աստուածազգեաց ձգնաւորաց զօղեալ ՚ի ծերպս արձանագանդ վիմացն որ ՚ի վերոյ Անղեղեաց ՚ի ձորն, բարձրահայեցիկ ՚ի վերայ գետոյն, որոց տեղիքն Պարէվանս կոչիւր։ Եւ զարմացեալ ընդ նեղքևեալ և ընդ անշքացեալ տեսիլս նոցա՝ հարցանէր ՚ի նոցանէ զկեանս նոցա. և նոքա հեզիկ պատասխանեալ ասեն. «Ո՛ արքայ փախստական եղեալ յաշխարհէ, թերևս կարասցուք ապրել ՚ի դառն ալէկոծութենէ սորա»։ Ապա այնուհետև խնդիր առնէ իշխանն եպիսկոպոսին իւր տէր Յակորայ և հրամայէ ձեռն ՚ի գործ ածել և փութապէս շինել եկեղեցի ՚ի պատշաճաւոր տեղի, զի անդ բնակեցուսցէ զսուրբ ձգնաւորսն։

Եւ նորա եկեալ առ սուրբ հարսն՝ հարցանէ զկաման նոցա և նոքա ցուցանեն տեղի մի տափարակ ՚ի նեղջոյ քարոյն ուղղորդ ՚ի վայր, յորում տեղւոջ սկիզբն առնէ և շինէ կոթաճոյ քարամբք եկեղեցի գմբէթայարկ յանուն սրբոյն Գրիգորի։ Եւ բերէ զաւազագոյն ծերն, որում անուն Էհիմեն՝ և զաշակերտ նորա զԱզարիա այլովք եղբարբքն և բնակեցուցանէ անդէն։ Եւ եկեալ իշխանին օրհնէ զեկեղեցին, և բարեպաշտ սիկինն Սոփիա գնէ գղիւղն Ո՛ւռու, որ հանդէպ վանիցն կայ իւր սահմանովն՝ և տայ ՚ի ժառանգութիւն եկեղեցւոյն, և այլ ևս այդիս և ծաղկոցս Անղեղիս։ Եւ զարդարէ զնա բազում ապառաւք և փարթամացուցանէ ամենայն սիրտս յիւք, և մեծամեծ նզովիւք հատուատէ զՈ՛ւռու գիւղն, որ ոչ հանէն ՚ի նմանէ։ Եւ կատարեն ինքեանց յիշատակ գոծն սրբո-

բոյն Պրիսկոսի և քառասուն մի պատարագ զՆ. արդասաւոր-
և կոչեն զանունն յանուն Ծերոյն Ս. Հերմոնի վանք:

Դարձեալ յետ ամաց հինգ երանելի և բարեպաշտ սիկինն Սոփիա գնայ ի խորաձոր վայրն, որ Պենդէվանա կոչի՝ ուխտի պատճառաւ առ միայնաւորսն, որ կային անդ բնակեալ: Յոր-
բում տեղւոջ էին բազմութիւնք նշխարաց սրբոց վկայից ի վաղ ժամանակաց — զորս ոչ ծանեալք, եթէ ոյք էին և կամ ուստի — և մեծամեծ բժշկութիւնք լինէին: Տեսեալ սիկինոջն և յոյժ հաճեալ ընդ տեղին՝ մտասխոհ լինէր շինել նկեղեցի և բնակեցուցանել ի նմա դասս կրօնաւորաց. վասն որոյ և ի դիշերին երևեալ վկայիցն՝ խնդրէին կատարել զնոյն խորհուրդ: Ապա յարուցեալ սիկինոջն՝ եւս առաջի վաղվաղակի արուեստաւորս ի ձարտար քարատաշաց և սկիզբն առնէ շինուածոյն՝ կացուցեալ ի վերայ վանացն երէց զՀայր Սարգիս, և գործակալ զՆ. ղէշա երէց և նկարիչ. և յանձնէ զնա տեառն Յակոբայ մեծաւ հոգաբարձութեամբ ի կատարումն ածել: Փայլէր և անդ մեծամեծ ձգնութեամբն հայրն՝ Սուփան Պենդունի կոչեցեալ: Ապանդնէ զտունն Ըստուծոյ և նկարակերտ յօրինուածովք զարդարեն զառաստաղս և զպատնեշս նորա. և ապարելով նաւակատիս՝ մեծահանդէս ժողովով օրհնեն զնա և անուանեն անուանակոչութեամբ սուրբ վկայիցն. և կացուցանեն ի նմա դասս պաշտօնէից և բազմութիւն կրօնաւորաց:

Եւս զձորն զամենայն ի պատշաճաւոր տեղիս լնուն ապառաժօք և կացուցանեն ի նոսա արս ճգնաւորս և խստակրօնս, յորոց առաւել փառաւորեալ լինէր Ըստուած քան ի Սինեական հարսն: Եւ երանելի սիկինն անուանէ զվանսն Պենդեվանք. և շինէ զդիւղն ի վերայ վանիցն ի գլուխ քարին և տայ ի ժառանգութիւն նկեղեցւոյն ազատ յամենայն հարկաց՝ նմանապէս և ի միւս կողմանէն զԸղբար գիւղ և մեծամեծ նզովիւք փակէ յետ ժամանակաց ոչ հանել ի տեղւոյն: — Եւ այս լինէր ի թուականին Հայոց 385: — Իսկ զձորն ամե-

նայն ի վեր և ի վայր մինչ ի Գողշաին քարն հրամայէ առնել անվախիտս ի մշտաբերաց ծառոց և յանուշաճաշակ պտղոց. և անկեալ այգիս վայելուչս յոյժ բազմութեամբ ի վայելումն առատապէս սուրբ եղբայրութեանն և ամենայն կարօտելոց: Գրէ արձան յիշատակի սահմանման այսպէս. «Ես Սոփիա սիկին՝ կին Ամբատայ աստուածապահ տեառն Աբուհետց և դուստր Գրիգոր Գաբենկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոց իմոց և յարեւշատութիւն իշխանութեան իշխանին Ամբատայ և որդեկաց մերոց, և զարդարեցի զսա մեծաճախ ապասիւք և ետու զերկու գիւղս ի ժառանգութիւն սմա, զոր մի ոք իշխեսցի խափանել կամ հանել ի սուրբ եկեղեցւոյս, ապա թէ ոչ՝ անպտուճանելի նզովիւք անիծեալ լիցին Աստուծոյ և աստուածապատմաւ սրբոցս: Ստացի էր անակն Այոյ ձո-ւոյ[1], — շինեցի զսա և եդի անդն ի վերայ»:

Գտանեալ յետ ամաց հինգ, ի 448 թուականի՝ այոյ՝ սուրբ հայրն Գրիգորիս շինէ զգաւիթն եկեղեցւոյն: Ունի բազում յիշատակ ի տանն յայն և երանելի սուրբ հայրն Գուրգէն: Այլ յետ բազում ամաց, ի կաթողիկոսութեան Տաւոյ տեառն Սարգսի և ի թագաւորութեան Գագկայ՝ որդւոյ Աշոտոյ, իսկ ի Սիւնեաց և Աղուանց Նորոգ թագաւորութեանն Վասակայ, կացեալ յառաջնորդութեան տանն այն հայր Սարգիս միւսն և արարեալ բազում ապրիւնս, և ածեալ պջուրն ի լեռնէն ի մեծ պիտաւոր սարէն, ուր ակունքն են քաղցրահամ գետոյն, զոր Ձկնարած կոչեն, անսպառիկ հրաշատակի առաջնորդութեամբ, բազում ջանիւ և մեծամեծ ծախիւք բերեալ յանդաստան վանիցն՝ զանհուն առատապարն անջրդի ապար ջրապրի և զամենայն լեռնակողմն, յորում ոչ գոյ ումեք հաշիւ՝ ոչ Պրակեցեաց և Անչուաեցեաց և ոչ այլ տահ-

---

[1] Ուշ. որ. հոգոյն էր անուն Այոյ յոր շինէ զս...

մանակից գիւղօրէից եւ ոչ այլ ումեք: — Եւ այս՝ ի թուականին 457, յեպիսկոպոսութեան Աբէնեայ տէր Յովհաննէսի:

Եւ զրկ ինքեան արձան՝ ի վերայ նկուղացոյն սեաղեղով. եւ ահագին եւ մեծամեծ նզովիւք փակէ վասն ջրոյն, զի մի՛ ոք իշխեսցէ կտրել զնա եւ կամ հատակաշ գոլ եւ բաժին առնուլ, բայց միայն թէ ըմպէն՝ ի ժառանգէն մնոցդ եւ անուանն: Եւ կալցեալ միշտաւոր զօր միշտաւորին մեծ զօրավարին Սարգսի՝ առ յամէ կատարել ումէն քառասունս միանգամ, եւ թէ ծուլացին՝ գառասուանս մեծամեծս ընկալցին:

Դարձեալ պատմեցից առաւելոր սակաւուք եւ վասն մեծ եւ յոյներանման նահատակին սրբոյն Աստուածոյ, զոր հին եւ նոր բուռա ժամանակօք բերեալ էին յաշխարհս յայս եւ հանգուցեալ՝ ի գառաւխ[1] այոց ձորոյ՝ ի սահմանս անառիկ գիւղին Սուլիմայ: Ի ժամանակս թագաւորութեանն Հայոց Լիպարտայ, մինչ շէն էր աշխարհս այս եւ խրոխտ իշխանութեամբ ձեռն, եւ եռային՝ ի սէրն Աստուծոյ վասն նորահաւատ գոլոյն, եւ ջերմ բոցով վառեալ լինէին՝ ի զանազան բարեգործութիւնս՝ եւս առաւել՝ ի սէր վկային Աստուծոյ. եւ ամենայն որ՝ ի խնդիր լինէին անչափ աշխատութեամբ եւ անհուն ծախիւք թերեւս կարացին գառանել՝ ի նշխարաց սրբոց եւ բերել[2] յիւրաքանչիւր գառաս եւ յիշատուիթիւնս, զի նովաւ պարապեալ ամրացին յամենայն հնութիւն թշնամեաց եւ պահպանեալ չարաց. եւ լիցին միանձնաւոր բարեխօս առ Քրիստոս:

Արդէս եւ իշխանքն Սիսական, որք գնացեալ էին յայնժամ[3] ի Կեսարացւոց քաղաքն ընդ սրբոյն Գրիգորի եւ ընդ սրբոյն Գերմանէ, եւ յայլ ժամանակս՝ ի խնդիր — մեծամեծս գանձիւք եւ անհուն աշխատութեամբ՝ եւս առաւել բաղմաժամանակեայ սքանչութեամբ ապօթից եւ պահոց պինդութեամբ — առ սրբ

[1] Այլ օր. ի Քերջեն։ — [2] Այլ օր. յարեաք։ — [3] Այլ օր. ի յայլ ժամանակս ի խնդիր լեալ մեծամեծ գանձիւ...

և աստուածազգեաց նշխարաց երանելի և մեծ ճգնաւորին Մատաթայ, որ բնակեալ էր ի լերինն մերձ Աճաբիոյ՝ զորոյ զմեծամեծ հանդէս ճգնութեանցն և վկայական մատան ուսուցանէ մեզ գրեալ ճառն ի մատենիս ողջոյն անդ, և զգովութիւնն հրապարակագոյժ գրուատէ Գրիգոր աստուածաբանն որ ի նոր կիւրակէի ներբողեանն: Եւ ըստ մեծահաւատ յուսոյն իւրեանց արժանի գտան աստուածային պարգեւացն, և վերին տեսչութեամբ առեալ զանկշռելի գանձն գիէս նշխարաց սրբոյն Մատաթայ ի միջոյն ի վեր գլխոցին և բազկօքն հանդերձ, և զայլն թողին յիւրում աւրր նկեղեցւոջն ի նմին տապանի: Եւ կազմեցին կառս ի սպիտակ ջորւոց, և կողբս արծաթիս արարեալ՝ եդին ի նմա զնշխարս սրբոյն և բարձին սաղմոսիւք և օրհնութեամբ, տաճիկ նժոյգք՝ սրաւվար երիվարօք իրր օդապարիկ թեւօք թռուցեալ անցին ընդ լայնածիր տապարէզ երկայն ուահին և հասին ի բնիկ տահմանս իւրեանց տէրութեանն ի Մազազ գաւառս: Եւ անցեալ ընդ Գնդամ մտին ի Վայոց ձոր, զի դէմ եգեալ էր տանել ի Միւնիս յարքունական գահոյս իւրեանց:

Եհղ կամքն վերին ոչ թողացուցին ի կամս նոցա, այլ ակնարկմամբ ջոջոյն՝ ուր ինքն կամեցաւ կապեաց զոտս ջորւոցն և զտեղն առին կառքն ի հարթ տեղւոջ մի ի ձորին Աւշնայ, որ Գնդպանատա կոչի: Իսկ նոցա լքեալ տրտմութեամբ ժողովեցին զգաւառն և մեծաջան աղօթիւք ցայգապաշտօն կատարեալ՝ խնդրեցին երթալ ի տեղւոյն: Եւ հալն ուրեմն յարուցեալ գկառն վարեցին իրր ձայնընկէցն երկու և անդէն դարձեալ՝ զտեղն առին ջորիքն ի պատշաճաւոր տեղի մի ի սահմանս գիւղին, որ Խարաշկօնք կոչի՝ և այլ ոչ երթին անտի: Ապա կոչեալ զեպիսկոպոսն Միւնեաց և ժողովեալ բազմութիւն հարց վանականաց՝ փոխեցին ի հանգիստ՝ եդեալ ի քարեայ տապանի: Եւ շինեցին մերձ նմին վկայարան կրաշաղախ քարամբք և հաստ զվայրն շրջակայ ի

սահման անդառնանի վանիցն և բնակեցուցին ՚ի նմա այս կրօնաւորս սպասաւորել սրբոյն։

Լսեալ ՚ի ժամանակս յետին յաւուրս անիշխանութեան աշխարհիս, ՚ի բռնակալութեան Ընթարակ Լատնէի՝ երկու եղբարքն ձգնաւորք և քաջակրօնք, առաջնորդք սուրբ ուխտին, Անէթ և Պօղոս կոչեցեալք, բազում ազօթիւք և խնդրուածօք հանեն զառապան սրբոյն, շինեն խորան ՚ի փոքր և հանգուցանեն յայտ երևակի տեառըայ զկամարիչն ՚ի Թուականին ՟ա յոց[1]։։։։։ Լայց ՚ի շարժելն ՚ի տեղւոյն բանան զառապանն և առնուն ՚ի նշխարացն զաչն և մեծամեծ բժշկութիւնք լինին յայնմ աւուր. և ՚ի ումն յեղբարցն ՚ի ծածուկ առնու աստանի մի, և առ ժամայն հարեալ ՚ի դիւէ՝ փրփրէր և գոչէր զծածուկ գողնան, և հազիւ ուրեմն բժշկեցաւ։ Լսեալ զաչն եառն ՚ի սուրբ ուխտն Ընդրմանից։ Լայց զառաջին բերողացն ոչ գիտացաք զանուանս և ոչ զթիւս ժամանակին։ Եւ արդ կայ և ՚ի մեզ սա ՚ի պարծանս և ՚ի բարեխօսութիւն այսմ աշխարհի՝ մեծամեծ հրաշս գործելով օր ըստ օրէ յամենայն նեղեալս և յախտաժէտս և ՚ի գիւահարս։ Որոյ բարեխօսութեամբ Քրիստոս Ընտուած խնայեսցէ յաշխարհս յայս և յեկեղեցիս և յիս յոգնամեղ սպասաւորս. և Քրիստոսի փառք յաւիտեանս. Ամէն։

ԳԼՈՒԽ ՃԾ

Վասն քահանգամբնեանցն որ գոհեցան և յետքն ՚ի սուրբ նիւելացւոյ Ծամնաւոյ ՚ի յեռան պետառ Ցուքայ եպիսկոպոսի։

Ընդ այս ժամանակի լինէր հանդիսման հասին աստուածապահ և բարեպաշտօն իշխանն Ամրատ՝ որդի Աշոտոյ, Թոռն Վասակայ, ՚ի սուրբ աթոռն. և աղօթեալ առաջի սուրբ խաչին՝

[1] Թուականն պակասի և յերկոսին գրչադիրսն մեր և ՚ի Փարիզեան տպագիրն։

կամեցան յիշատակ անմահ և անջինջ հաստատել իւրեանց հոգեաց։ Եւ նոյն ի սուրբ եկեղեցին հոգեցատուր ժառանգութիւն զևրեանց հայրենի և սեպհական գիւղն՝ զՊակոյս, որ ի Գեղաքունեաց գաւառին, և անխախտ վճռաւաստանեցին ի ձեռն Յակորայ, որ ունէր օրինակ զայս.—

«Յանուն Աստուծոյ՝ կամ եղև ինձ Ամբատայ իշխանի՝ որդւոյ Աշոտի, թոռին Վ[ասակայ, աստուածապահ տէրանց Սիւնեաց՝ տալ զՊակոյս գիւղ ի Գեղամայ գաւառին, զեմ հայրենի բաժինն իւր ամէն սահմանօքն շրջակայ, ի Սիւնեաց եպիսկոպոսն ի տէր Յակոբ, ի մեր սուրբ խաչն և ի լուսաճեմ և յաստուածարնակ սուրբ եկեղեցիսն վասն հոգւոց մերոց։ Արդ՝ չկայ այլ ուրուք իշխանութիւն, ոչ մեր և ոչ զաւակաց մերոց և այլ ումեք իշխել ի վերայ գեղոյս այս, և կամ հանել զտեղիս զայս ի սուրբ խաչէս և ի սուրբ աթոռոյս։ Եպա թէ որ ընդ հակառակն ելանիցէ՝ այնպիսին դատապարտեալ լինի Աստուծոյ ամենակալէն, և բաժին նորա ընդ Յուդայի և ընդ խաչահանուացն. և դատին մի յաղթեսցէ, զերբն մի ժառանգեսցէ, այլ որդւովք իւրովք ելցէ ի խաւարն արտաքին։ Եւ արդ դուք էք իշխան՝ տէր Յակոբ Սիւնեաց եպիսկոպոս և այլ հայրապետք, որ գինեի ձեր յաջորդին ի սուրբ յաթոռդ յայսմհետէ մինչև յաւիտեան ժամանակաց։ Եւ մեր մեղուցեալ հոգւոյք ձեզ յանձն եղեցին և սուրբ խաչիդ։ Հաստատ է կտիճն Աստուծոյ։

«Գրեցի զայս վճիռ ես Ամբատ իմով ձեռամբ, և կնքեցի իմով սովորական մատանեաւս, եդի ի վերայ և զտիրական մատանիս տէառն Յակորայ ի թուականիս ՀԽԸ 369։

«Եւ տէր Յակոբ հաստատեցի իմով ձեռամբս զվճիռս զայս. և վկայ եմ հոգեցատուր պարգևացս տէառն Ամբատայ՝ որդւոյ Աշոտի Սիւնեաց տէառն, որ երեսս զերբ սեպհական գիւղն զՊակոյս ի սուրբ եկեղեցիս։ Եւ մի ոք իշխեսցէ հակառակ կալ այսմ՝ այժմ և կամ յետ ժամանակաց. ապա թէ

յանդգնի՝ նզովեալ լինի Աստուծոյ և յամենայն սրբոց և՛ ի սուրբ Հայրապետացն և՛ ի մէնջ, և դատապարտեալ գոյի առաջի ահիւղ առնին Քրիստոսի և բաժին նորա ընդ անհաւատս լինի յանշէջ դահնեին։ Եւ որ զկնի մեր կարգիք յաթոռ՝ պարտական էք անմոռաց կատարել զիշատակ տեառն Ամբառայ և հայցել թողութիւն մեզաց նորա. և ամ յամէ մին քառասունք առնել նմա։ Գրեցաւ այս վճիռ իմով ձեռամբս և կնքեցաւ իմով սովորական մատանեաւ՝ ի կամն Աստուծոյ»։

Գարձեալ յետ ժամանակաց էնչ եկն Փիլիպէ իշխանն՝ ի սուրբ յաթոռն առ տէր Յակոբ։ Եյս Փիլիպէ որդի էր Վաասակայ՝ թոռն մեծ Փիլիպէի, որ զջուրն վաճառեաց տեառն Յակոբայ։ Եւ յիշեալ սորա զանազանութիւն վայրկենի կնոցա՝ կարգէ կնքեան յիշատակ և քառասունս, և ընծայէ երկու գիւղ՝ ի սուրբ Գրիգորն, զոր մեծ Փիլիպէին էր շինեալ՝ ի Հանրանդ գաւառի, զՆղուկրծ և զՅուբականեսոս. և զրէ կնքեան արձան անջինջ և անմահ յիշատակի յ392 թուականին. և էր այսպէս.—

«Ընդամէն Աստուծոյ, ի ժամանակս աստուածապատիս և հոգևոր տեառն Յակոբայ՝ Աւետեաց եպիսկոպոսի, ես տէր Փիլիպէ՝ որդի Վաասակայ, որդւոյ աստուածապահ տեառն Փիլիպէի՝ Աւետեաց տեառն, խնացայ և ծանեայ զի վաղն թառամելոց է ամենայն մարդ իբրև զխոտ, և թօթափելոց է ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. և ապրատեմամբ առանեալ դողայ անձն իմ, եթէ ինքն փրկեցայց։ Ապա յոյս եդեալ յայս աստուածաբնակ ուխտս՝ առացայ զսուրբ խաչս յիշատակ հոգւոյ իմոյ, և ընձայեցի լեառնտուզ Հաւատով յիմ հաւտս հայրենեացն զՅուբականեսոս, զոր գնեալ էի՝ ի Աբրատաղբայ՝ Սակւի որդւոյ, և զմիւս շէնն զՆղուկրծ զոր գնեալ էի՝ ի Խոտանեցեացն՝ ի Աբրշաբայ որդեացն և՛ ի Վահանայ որդւոյն և յեղբօրորդւոյն — յաղագս իմ՝ սուրբ եկե-

զնցուղդ առպատրեցի՛ի տէր Յակոբ՝ Միւնեաց եպիսկոպոս, և՛ի սուրբ մայրաքաղաք եկեղեցիդ Տաթեւոյ, ՛ի սուրբ Գրիգորդ զոր իմ պատուն տէր Փիլիպէի շինեալդ է, և՛ի մեր սուրբ նշանդ՛ի փրկութիւն հոգւոյ իմոյ և՛ի թողութիւն մեղաց իմոց։ Եւ նոյն իւր սահմանօքդ բոլոր լերամբ և դաշտովք, հողով և ջրով, այգօք և ընկուզօք, ջրաղացովք և ամենայն մնիւք։ Եւ արդ յայսմհետէ իշխանութիւն ունիք դուք ուտել և վայելել զայդ տեղիդ [1], վաճառել և գլուխ կան տալ մինչև յաւիտեան ժամանակաց. և ազատ են դրքս յամենայն պղծունէ հարկաց։ Եւ եթէ այլ ոք հակառակի այսմ և կամ խանգարել և խափանել ջանայ՝ եթէ՛ի մերոց և կամ յայլ աւագաց, ՛ի սուրբ Էջմիածնէն և յամենայն սրբոց նզովեալ եղիցի, ընդ Յուդայի և Ընիոսի դատեցի, և յիւրից անուրբ ժողովոյն ընդ կապանօք լիցի. և թէ՛ի տաճիկ աւազդութիւն հասանի և յափշտակել ջանայ՝ Աստուծոյ և յիւր ֆեղամբարն ոտիշար եղիցի, և բիւր հազար նզովք եղիցի, և՛ի վիրջին աւուր դատաստանին յիւր դատողէն սևերես լինի։ Եւ արդ հայցեմ՛ի ձէնջ սուրբ հարք՝ զիմ փիլիպէի զյիշատակս կատարել ամ յամէ, և յիմ եկեղեցիդ՛ի սուրբ Գրիգորդ՛ի Վաղդեվառի աւուրն մի քառատունք առնեն անխափան։ Գրեցաք և կնքեցաք մերով մատանեաւս՛ի կամն Աստուծոյ ՌՅՅՀ թուականիս [2] սկզբ»։

Այլ և հանդէպ վանիցն տեղւ մի ապատամբանոց, որ Տաճաճալքս կոչէին. և բազում և մեծամեծ վիշաս և նեղութիւնս հասուցեալ էին վանիցն, զոր տէր Յովհաննէս, թէև բազում անգամ Ջանայց, ոչ կարաց հաղածել զնոսա և սակաւնել զնոսին։ Ապա՛ի ժամանակս աստուածապատիւ և հոգեւոր տեառն Յակոբայ եկին մեծ տիկինն Սոփիա՝ կին Սմբատայ, յիշխանութիւն սուրբ խաչին։ Եւ լուեալ զվշտա-

---

[1] Ընդ օր. տեղւոյդ։

[2] Ընդ օր. տեղւոյդ։

լից գառնութիւն եղբարցն ի նոցանէ՝ գուն գործեալ ի վի-
րոյ և հազիւ ուրեմն ածեալ ընդ բռամբ զտեղին ընդ գնոյ հա-
զար գահիկանի և տայ ի ձեռն տեառն Յակոբայ և բառնայ
զայն խաչ ի նոցանէ, և այնուհետև լինելիւն ապահով։ Եւ
հրամայէ եպիսկոպոսին շինել ի նմա եկեղեցի և բնակեցու-
նել անապատաւորս և դրել արձան անհծից, զի մի ևս բնա-
կեցուցեն ի նմա աշխարհական ոք, զոր և փոյթ ընդ փոյթ
կատարեալ հրջանիկ եպիսկոպոսին, գրէ արձան վճռի զայս
օրինակ. «Ես իմ ձեռն գիր է տէր Յակոբայ՝ Աիւնեաց
եպիսկոպոսի. բազում ջանիւ և աշխատութեամբ թափեցի
զՅամալէքս, որ բազում նեղութիւն էին հասուցեալ տանս,
և տեառն Յովհաննիսի ջանացեալ էր և չէր կարացեալ թա-
փել։ Ընդ հնազանդեալ մեր հրամանացս՝ տէր Ամբատ և Սո-
փիա տիկին առին ընդ գնոյ հազար գահիկանի և տուն ի
սուրբ նշանս. և հոգւով և մարմնով զինքեանս մեզ յանձնե-
ցին։ Եւ մեք առաք և եկեղեցի շինեցաք և միաբնաւան հաս-
տատեցաք։ Ընդ որ զայս տեղս[1], որ մեր մեծ ջանիւ թափե-
եալս եմք և զհայրենատէրն հանեալ և անապատ հաստա-
տեալ, և մտածէ ոք զսա ի հայրենատէրն տալ, կամ կա-
նամբի մտցէ ի սմա բնակեցուցանել, կամ մին ծառայ և մին
թափոյ տէր առնել՝ նզովեալ եղիցի ի միաբանական սուրբ Էր-
րորդութենէն և ի սրբոց հրեշտակաց և յ318 հայրապետացն,
ի սուրբ նշանէս և ի մէնջ — ի մահ և ի կեանս. և բաժին
նորա ընդ Յուդայի եղիցի և չարաչար ցաւօք զերս աւուրսն
մի հատարակեսցէ, ճարակ լերկի անշէջ հրոյ գեհենոյն և մի
գոյէ ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ»։

Դարձեալ՝ էր գիւղ մի ի Գեղամ գաւառի ի Սոփից
սահմանին, ո՞ աղաւիւր անուն, զոր տուեալ էր վաղ ժամա-
նակօք Տիգրան՝ մեծ նահապետ ի Պատական տոհմէ, ի սուրբ

---

[1] Այլ օր. Ընդ զոր տես գիրս։

եկեղեցին Տաթևոյ. առաւնօր վաճառէ և փոխանակէ տէր Յակոբ տեառն Զագկայ՝ իշխանի Սիւնեաց՝ որդւոյն Ջ֊ևանշերի վասն հեռաւորութեան, և առնու զՏաշտակերտ գիւղ հաստատուն և անխախտ վճռաւ որ ունէր օրինակ զայս.— «Պատուն Աստուծոյ ես տէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, արարի փոխանակս ընդ աստուածապահ տեառն Զագկայ՝ Սիւնեաց իշխանի.— տուաք զվ֊աղաւնի գիւղ, զոր յիշեալ տեառն Տիգրանայ իւր հոգւոյն ընձայեալ էր ի սուրբ նշանս, և առաք զՏաշտակերտ գիւղ իւր ամենայն սահմանօքն բոլորովին: Եւ հաստատեցաք յամէն տարի քսան օր պատարագ անխափան մինչ ի գալուստն Քրիստոսի և չերթալ ի ղ---ր ընդ առլմոն երգել ի նմին աւուրսն: Եւ թէ ոք յետ մեր՝ յիշխանաց կամ յառաջնորդաց հակառակ կայ այսմ և զայս տեղիս յափշտակել խորհի՝ նզովս չարաչար ընկալցի յԱստուծոյ և յամենայն սրբոց և յայսմ աթոռոյս և յամենայն առաքելական եկեղեցւոյ և ի սուրբ հայրապետաց որոշեալ և անիծեալ լեցի, և Տիգրանայ մեղացն պարտապան եղիցի:— Ի թուիս ☨ այոց 374: ☨ աստուած է կամաւն Աստուծոյ»:

«Եւ ես՝ Զագիկ իշխան, իմ կամօք զայս վաճառս, և փոխեցի զՏաշտակերտ ընդ վ֊աղաւնւոյ, և իմ ձեռօքս հաստատեցի զվերադրեալ վճիռդ: Եթէ ոք խափանէ՝ վնասն նզովսդ ժառանգեսցէ որ կայ ի դմա:— Եւ մեք Ջ֊ևանշիր և վ֊ասակ՝ որդիք տեառն Զագկայ, վկայ եմք այս արարուածիս:— Եւ ես Պարիճ իշխան վկայ եմ այս վերադրելոյս: Գրեցաւ գիրս և կնքեցաւ հայրապետական մատանեաւ տեառն Յակոբայ,— եղաք և մեք ի վերայ զմեր կնիքս»:

Ահա զայս ամենայն հոգացեալ և պայծառապէս շքեղացուցեալ զանազան գոյիւք և ստացուածովք՝ այլ ևս յոլովս առնոյ ընդ գնոյ արծաթոյ ազատակս և անդս, հողս և մարգըս և այգիս, նա և բազում տուրս յիշխանաց և յազատաց՝ զոր թէ ընդ գրով էաք արկեալ՝ բազում տաղտկութիւն լե-

ներ լսողաց և ծախուձին անհուն հիւթոց: Բայց մեք ընթերակալ փոքր ի շատէ՝ կարգեցաք աստ զյոյժ սիրատուին: Բայց ա-ւաղ խոտ բանիւ, որ այժմ ոչ կարեմ բարերոյս բանիւք բովանդակել զլրուձին կենաց այսպիսւոյ անհամեմատ և ստորաճծամասիկս, քաղցր և արբոյաշուք առնս երջանկի և բարերաստի. այլ հարկիմ զգանազան և զվայրենագործոց բանից բոլոն հարկանել:

ԳԼՈՒԽ ՅՕԸ

Ապստամբութիւն Ճախքայ և խստութիւն կենաց նորա, և քանի Անանիայ Հայոց իշխանիկոսի երեց անգամ ի Սիւնիս և յետոյ փոխադրել զնա ի Վիրս և հնազանդել զԱղուանս,

Էր կաթողիկոս յԱղուանս Սահակ անուն, որ հոգևորականաց սիրոյ կապակցութեամբ յարակցեալ էր տեառն Յակոբայ. և էին միմեանց համախոհ և յոյժ մերձաւոր: Եւ յետ Սահակայ յաջորդեր Գագիկ [1] եղբայր նորին. և սա առաւել ևս համարձակեալ էր ի սէր միաբանութեան ընդ Յակոբայ՝ Միջնեաց եպիսկոպոսի: Եւ զի կաթողիկոսքն Հայոց հնուցեալ էին յայնմ ժամանակի և վաղ հանապազորդեան հինահարութեանց Լամպրէացւոց թողեալ զամբոխն որ ի Վրկան՝ և շրջէին այսր և անդր ընդ թագաւորացն Հայոց [2]. երբեմն բնակէին առ Գագկայ թագաւորին ի Վաղարշապատ՝ և երբեմն ի Վանայ Ծովէ [3], ուր կայր սեզանն և ամբոխն և գաւազանն սրբոյն Գրիգորի, երբեմն բնակէին ի Շիրակ գաւառի առ Շիրակաւանին ի վանս Երգինայի. և այսպէս տա-

---

1 Ա՛Հ օր. Ե՛ յետ Սահակայ առաջնորդեր Գագիկ: — 2 Ա՛Հ օր. Ե՛ զի խնդրէին հայոց հետապնդել երեսս յայնմ ժամանակի զի վասն հանապազորդեան հինահարութեանն Լամբրէացւոց ընդել երեսս որ ի Դուին և չրջէին այսր անդր: — 3 Ա՛Հ օր. ի Վանայ ծովէ ի վեռս Ջուղայ:

բարերեալ լինէին։ Եւ զի վախճանեալ էր կաթողիկոսն ՚ի Հայոց Թէոդոտոս, և յաջորդեալ ՚ի տեղին Ընտիրա մոկացին յ390 թուականին — այս Յակոբ վասն հետաւորութեան ոչ կարէր առ յաւէտ երթալ առ կաթողիկոսն ՚ի Հայոց և առնուլ մեռոն։ ապա հարկ եղև խնդրել զմեռոն ՚ի կաթողիկոսէն Ընտիրայ։ Եւ այս լինէր նմա մեծ դիւրաւորութիւն և անկանդրկնելի գլուխն, զի սիրելոյ ըստ դիւրսխոսիւ բնութեանն մարդկային, ըստ ասելոյ Սողոմոնի, թէ «գոյ քոյն և իմաստնոյ»։

Եւ զայս արար անձնահաճ կամօք, քանզի էր այր անձնեայ և սէգ, բարձրայօն և մեծաբարոյ, բնութեամբ ազատ և բարձր ձոխ, հանճարով պայծառ և շրթամբք յոյժ քաղցր։ ասա կըս որոյ ինքեան հաւանեալ հպարտացաւ սակաւիկ մի։ Իսկ կաթողիկոսն Ընտիրա կոչէր նուիրակօք զՅակոբ և զՍահակ։ և նոքա յիւրաքանչիւր աթոռոց ոչ շարժեցան, այլ բաղձալիցին զգնալն։ Եւ զի լուեալ էր կաթողիկոսն զընտանի մերձաւորութիւն նոցա առ միմեանս և զինդիր մեռոնին յԸղբատանից և զայն էս, թէ բաղում ամք են Յակոբայ, զի ոչ ելն ՚ի առլբ Վրկիզոլի աթոռն, ապա այնու հետև ՚ի նախանձ առ հազին դիզուեալ և առաւելիկ ցասմամբ շարժեալ՝ ելն ՚ի խորնդիր Յակոբայ, զի կամ հնազանդեսցէ և ըստ կամի սրտացէ, և կամ մեծագոյն պատիժս ընկալցի և անտի զէմ եղեալ երթիցէ յԸղբատանս ՚ի զայն էս հնազանդել, քանզի արքեպիսկոպոսքն Ըղբատանից ՚ի ՚ստոյգ կաթողիկոսէն առնուին ձեռնադրութիւն, և սահման մի ամօք յառաջ քան զայս յետս էին կացեալ ՚ի վախճանէն Վրկիզոյ կաթողիկոսին մինչ ՚ի ժամանակս յայս Ընտիրայի, յառուրս հինգ կաթողիկոսաց՝ Մաշտոցի, Յովհաննիսի, Սահմանոսի, Ղևոնդի՝ և Թէոդորոսի։

Ընդ եկեալ հասեալ յաշխարհս Միսականն՝ ընդ առաջ հանեան նմա իշխանքն Աղուանից առատաձեռնապահ սէր Աստուա և

ՁՀ՚ր ՈՒԻՒՏՈՒՐՔ ԵՎԻՒՐ.

Ջ. Լանջէր որ ի Բաղս՝ և բերեալ յեպիսկոպոսութեան Տաթեւոյ հանդուցիւն մեծաշուք պատուով։ Իսկ ապա եպիսկոպոսն Յակոբ և անկաւ առաջի նորա և զերեզայ խոստովանէր. «ով մեծապատիւ տէր կաթողիկոս՝ որովհետև տատուածարար՝ ի մեզ խռնարհեցար և զմեր յանդգնութիւնս անտես արարեր, հնազանդիմք ձեզ և սուրբ աթոռոյն Վրիթորի լուսաւորչին իբրև Աստուծոյ. մեզաք յերկինս և առաջի քո, և դու նե՛ր կով թող մեզ զյանցանս մեր»։ Տեսեալ զայն կաթողիկոսին՝ մեծապէս օրհնէր զնա և շնորհակալէր և կամէր երթալ յԱղուանս։ Ապա դուժիան հասանէր ի թագաւորին Աբասայ վասն փոխման թագուհւոյն և դարձուցանէր զնա յայնմ յաւաջարկութենէ։ Վասն որոյ մեծամեծ պարգեւօք և առատաձեռն ընծայիւք յուղարկեցաւ յաթոռն իւր ի Սիրաս իշխանէ և ի Յակոբայ եպիսկոպոսէ։

Իսկ առենաչափն, որ հանապազ խանդագին ընդ բարին և զրգռէ զմարդիկ ի խոռվարար չարութիւն, ոչ ետ թոյլ այսմ արարուածոյ. այլ մտեալ ի սիրտ չար և նախանձոտ ազանց՝ սկսան քակել վիրսաին զՅակոբ առ կաթողիկոսն, եթէ կրկին ապստամբեաց ի ձէնջ, և նա չտայ թոյլ հնազանդել Աղուանից ընդ ձեռամբ քով, և զիոսրով՝ Ընձեւացեաց եպիսկոպոսն նա շիղեաց թղթով ի ձէնջ, նաև հերձուածս ևս յօդեին եթէ քօղարօրհնել ունի զԲագիկեդոնին։ Եւ այնպէս խռովութիւն և պատերազմ մեծ պարզուցին ի մէջ եկեղեցւոյ, զոր և ես իսկ զրպարտանաք համարիմ զայսպիսի բանս, և ոչ ճշմարտութիւն, զրուցատս եպիսկոպոսին Յակոբայ. զի զինչ փոյթ էր և պարծանք նմա թողուլ զմեծ աթոռն սրբոյն Վրիթորի լուսաւորչին և ծառայել իւրում ծառայակցին, որք և անկատար և թերի ունէին զօծումն շնորհին։ Այլ թողցուք զայս քննել արդարադատին Աստուծոյ։

Ապա կաթողիկոսն Աղուանից Սահակ մեռանի, և յաջորդէ ի տեղին հայրապետ նորին Գագիկ նոսին անկատար օծմամբ.

զոր լուեալ տեառն Ենանիայի՝ գրէ թուղթ առ իշխանս Աղուանից ըստ իւրում իմաստասիրաց բանից, և հրամայէ՝ ի բաց կալ յանուանեալ և՝ ի նանրատիաս կաթողիկոսէն Գադիայ. ոչք և ապարին իսկ, և ոչ ոք հաւանեցաւ նմա, բայց միայն մի յիշխանացն՝ Անենքերիմ անուն: Իսկ այլքն միաբան առաքեն զմի Յովհան անուն առ կաթողիկոսն Հայոց, զի ձեռնադրեսցէ նոցա արքեպիսկոպոս, զոր և ընկալեալ սիրով և պատուով տեառն Ենանիայի՝ ձեռնադրեալ առաքէ յԱղուանս: Իսկ ապա մինչ այս լինէր, ըստ նախանձու հակառակութեան ոմանց՝ սկսան բարդել բանս բամբասանաց՝ ի վերայ Յովհաննու ունայն. և ոչ սակաւ լինէր խռովութիւն՝ ի մէջ երկոցունց՝ Գադիայ և Յովհաննու, և երկոքին խռտեալ լինէին:

Լուեալ զայս ամենայն Ենանիայի՝ վարանեալ առաքակուսէր՝ ի մեծ իւրում վսեմ գունակ գունակ բաժանմանց և առաքելական հանդիսից. և ժողովեալ զքաղմութիւն եպիսկոպոսաց և գլխաւոր հարց՝ խաչ ընդ ուսն ահաւասիկ թեամբ գայ՝ ի խնդիր օգտակալ և պատասխանալ անդամոց եկեղեցւոյ: Եւ գէմ եղեալ երթայր յԱղուանս. և հասեալ՝ ի գաւառն Խաչենոյ՝ ընդ առաջ ելանէ նմա իշխանն Գրիգոր և տարեալ իջուցանէ՝ ի տան իւրում: Եւ ժողովէ զամենայն իշխանս աշխարհին և զեպիսկոպոսունս և զվանականս՝ ի տեղին, որ Ողախն կոչի[1]. գան և Գադիկ և Յովհան: Ապա խնդրէր կաթողիկոսն Ենանիա զՊատմութիւնն Աղուանից, զի գիտասցին զօրպիսութիւնն Աղուանից աթոռակալացն. և նոքա թաքուցեալ սմինեւին ոչ ցուցանէին: Ապա ըստ վերին խնամոցն՝ ի գիշերի պաշտամանն գնէ եկեղեցապանն Գանձասարու գիրք մի՝ որպէս թէ Յովհաննու Ոսկիբերանի, և մեծարեն զկաթողիկոսն յրնթեռնուլ. զոր և բացեալ եգիտ զոր խնդրէրն, զի էր Պատմութիւնն Աղուանից: Եւ էր՝ ի նմա գր-

[1] Ալ օր. ու Արքուին Խէ:

թեալ առնեցին ձշդիւ, զի առաջին եպիսկոպոսն Ղուկաս՝ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն լինէր ձեռնադրեալ՝ ի խնդրոյ Արտայրի՝ ալբայիս Ղուկասից, և կացեալ՝ ի հնազանդութեան Տեառն ամս տասնևչորս, ի Տեառնէ առեալ զամն 440, ի Տեառն առին ձեռնադրութիւն Ղուկասից կաթողիկոսքն, զի Տեառնէն՝ պատրիարք էր և Ղուկասիցն՝ արքեպիսկոպոս։ — և այս ի ժամանակս քան և հինգ կաթողիկոսաց Տեառնէ մինչ ի տէր Եբրահամ։ Ապա մինչ աղմուկ լինէր ի մէջ աշխարհիս, և Յովհան ոմն ի բաժնէն Յունաց հակառակութեամբ էր նստեալ և վասն ինն դասուցն ի Յունաց խնդիր լինէր առ Տեառնէ, և Պիւրինն՝ Վրաց կաթողիկոս, վասն վաստակել ախոռի ի բաց եկաց ի Տեառնէ և քաղկեդոնիկ եղև, այնուհետև բաժանեալ ի բաց եկաց և Ղուկասիցն՝ պատճառելով և նա պատճառս ինչ։ Իսկ ի վախճանելն Եբրահամու և Յովհաննու նստի պատրիարք Տեառնէ Սմիթասս, վախճանի և Ղուկասիցն։ Ապա դարձեալ հնազանդին Ղուկաք Տեառնէ և խնդրեն կաթողիկոս ի Սմիթասայ, որ և ձեռնադրեացն իսկ Յիերկրորդ ամի հայրապետութեան իւրոյ։ Եւ այսպէս կացին ի հնազանդութեան ամս 85, ի ժամանակս հօմն կաթողիկոսաց Տեառնէ մինչ ի տէր Նղիա։

Ապա յաւուրս սորա էր կին մի ի տիկնութենէ Ղուկասից՝ Սպրամ անուն, որ առնէր իւր մերձաւոր և սիրող եպիսկոպոս մի՝ Կատրէ անուն [1], և խոստանայ նմա տալ պատիւ կաթողիկոսութեան, և ոչ իշխանայ առաքել ի Տեառնէ, զի մի խոտանեցին, այլ առնէ ժողով ի Պարսս [2] և տայ ձեռնադրել զնա կաթողիկոս, որ և անուանեցաւ Նիրսէս և ունէր ի ծաղծուկ զԿատողիկոսն։ Վասն որոյ երթեալ Նղիայի կաթողիկոսի Ղուկասու ազգութեն Հրամանաս, և կալեալ զանիկին

[1] Ձայլ օր. Սպրամ անուն, որոնէր իւր մերձաւոր և սիրող՝ Բոխոր անուն։ — [2] Ձայլ օր. վն ի Խոխոյին, որոնէ խոսով ի Պարսս։

և զՅակոբն՝ մերկացուցանէ և կապէ ընդ միմեանս, և հե-
ծուցեալ յէշ՝ շրջեցուցանէ ընդ փողոցս Պարսաւայ. վասն
որոյ անուանաւ լեալ Յակոբ առուբս ուխտ՝ մեռանիւ:

Իսկ կաթողիկոսն Յղկեա ձեռնադրէ նոցա արքեպիսկոպա,
առնու երդումն և դաշինս և ձեռնարկ զրոյ մեծամեծ նզովիւք
յիշեհանաց և յեպիսկոպոսաց և ի գլխաւոր վանականաց և
յառաջ տանուտիրաց աշխարհին Ընդունից, զի մի այլ ևս
հետեսցեն և յետս կացցեն յաթոռակալաց սրբոյն Գրիգո-
րի. և ինքն գնաց յաշխարհն ՚այոց: Եւ այսպէս եկաց միա-
բանութեամբ զամն 137 յառաջս չորիքտասան կաթողիկոսաց
՚այոց մինչ ՚ի տէր Գէորգ Գառնեցին:

Ապա ՚ի գալն Ռուզայի ամիրայի ՚ի ՚այս և ՚ի գերելն զտէր Գէորգ կաթողիկոս՝ եղև գառն և ազգի ազգի պղտորումն աշխարհիս ՚այոց և Ընդունից. և փախեաւ գրան եպիսկոպոսն տեառն Գէորգայ Ճոճեան անուն և եկն յԸղունս: Եւ եղև վախճանել արքեպիսկոպոսին Ընդունից, և կաթողիկոսն էր ՚ի գերութեան: Ապա միաժամուտ իւն հանարկով նմա՝ ժողովեալ ձեռնադրեն զդրան եպիսկոպոսն զՃոճեան կաթողիկոս Ընդունից: Իսկ ՚ի գարձն Գէորգայ ՚ի գերութենէ ՚ի ձեռն ՚ամանայ՝ թագաւորի Ընդունից՝ տեսանէ զՃոճեան նոցին արքեպիսկոպոս և հրամայէ կողոպտել ՚ի բաց զդրհատ և զձև կաթողիկոսութեանն. վասն որոյ առաջի անկեալ ՚ամանայ՝ հայցէր զներումն: Եւ լուեալ նմա վասն մեծի երախտեացն, կրկին ձեռնադրէ զՃոճեան արքեպիսկոպոս Ընդունից, և թո-
ղեալ անդէն գնայ յիւր սեպհական աթոռն: Իսկ ՚ի վախճա-
նելն Գէորգայ՝ վասն գառն և ազգի ազգի անցից աշխարհիս յԱրմայէլականացն, ոչ կարացին հասանել առ հայրապետան ՚այոց, նմանապէս և Ընդունիցն անփոյթ լինէր ՚ի ՚այոց կաթողիկոսացն [1]. զի ամենայն ոք միայն զանձին հնարս հայ-

[1] Այլ օր. հասանել առ հայրապետն հայոց յԱրարատից. նմանապէս և անփոյթ լինէր:

թայթէր զերծման յիսմայէլական սլոյն: Ապա ձեռնադրեն կաթողիկոս Աղուանից յետ Յովհաննայ զնորին հարազատն Ա-մէոն անուն, ապա զԴաւիթ, ապա զԱհարոն, ապա զԴա-դիկ զայս, որ լինէր առք 69 ինքնաձեռն և անձնիշխան թե-րեպատառ օծման նոցա: Եհա զայս ամենայն ընթերցեալ և իմացեալ կաթողիկոսին Ընանէայի, և այսու բանիւք գլեցու-ցեալ զլսեան բերանս խոտորեալսս ապանց [1] և պապանձեցու-ցեալ գլեզու փառատակ և անձնահաճ մարդկան՝ յամօթ ա-րար զամենեսեան: Եւ Յովհան իշխանքն զհաստատութիւն իրին, և ամենայնիւ հաւանեալ հնազանդեցան նմա: Իսկ նո-ցա կինքեալ զարժանն [2]՝ նախ ելոյծ՝ի պատուոյն զՅովհան իւր ձեռնադրեալն վասն բամբասանացն զոր յօդեալ էին, և ապա զԴաւիթն: Ապայ Գրիգոր իշխանն մեծատ մաղթանօք հայ-ցեր՝ զԴաւիթ կրկին ձեռնադրել, զոր ոչ պատշաճ համարէր [3] ուղղադատ և ճշմարտաքնին հայրապետն. զի կրկին ծնեալն վիժեալ լինի և կրկին պատկեալն՝ անվաւեր կոչեցի:

Ապա հայցեցին դառնալ անդրէն՝ի Տայս, «և մեք ընտ-րեսցուք պատշաճագոյն այր և առաքինագոյն առ ձեզ, զի՝ի քէն ձեռնադրեսցի առաջնորդ մեզ»: Եւ առաքեցեալ ապա հայրա-պետին՝ եկ՝ի տաճէն Աղուանից և եկն՝ի տունս Աթոռական՝ի բնակութիւնս տալոյ հայրապետանոցին՝ի Տաթև. զոր լուեալ եպիսկոպոսին Յակոբայ՝ գնաց յամուրն Ռաղայ՝ թագուցա-նելով զերկնաս իւր, ըստ այնմ թէ «փախիր և թաքիր առ ժա-մանակ մի՝ մինչև անցանէ բարկութիւն տեառն»: Ռանդի դի-տէր զանիրաւաւարտ բարդութիւն պէսպէս բռնարանացն զոր զո-դեալ էին՝ի վերայ ինքեան՝ իբր զերկաթ ընդ փայտի, կամ զընդիկ ընդ ոսկւոյ: Իսկ իրրև եառս զայն տէր Ընանէա՝ բա-

---

[1] Այլ օր. և իմացեալ և խոնարհեալ լինուլին Ընանէայի, և այսու բանիւ առ լսե-ցուցեալ զպատճառն: — [2] Այլ օր. և նորա փոխեալ զարժանն: — [3] Այլ օր. զոր ոչ պատշաճ համարեալ:

զնա տուրս օթեալ անդ՝ յոլով թղթովք[1] և պատգամաւորօք Հայոցն՝ ի դուրս զՅակոբ՝ ի ձեռացն Ջ֊Լանշխեից. և ոչ տայր ի դուրս։ Ապա ոչ կարացեալ տեսել՝ ի տեղւոջն, զի ձմեռնային էր ժամանակն՝ առաքիկ ցառաքեալսն բարկացեալ սուրբ կաթողիկոսին աւետեաց զտեղին և քանդեաց և չարաչար նեղութիւք կապեալ կաշկանդեալ խառնեաց՝ ի տուռնա կապանաց զիշխանն և զեպիսկոպոսն, և անց գնաց յիւր աթոռն։

Ապա անդէն կալով՝ միշտ թղթագնացութեամբ ոչ կարաց հաւանեցուցանել զայլ ի ծառայութիւն ինքեան Վռազկայ Ընդանեցւոյ կամ Յակոբայ Մամիկոնէից[2]. վասն որոյ միայն աղօթիւք ինդրէր յԱստուծոյ զկնի իրին.— և այս լինէր՝ ի թուականին Հայոց 398։ Իսկ՝ ի 407 թուականին Հայոց, իբր վերին ակնարկմամբն, վախճանեալ լինին երկոքին[3]՝ Յակոբ՝ Մամիկոնէից մեծատոհմի և գլուխ ամենայն եպիսկոպոսաց Հայոց, և Վռազիկ՝ Ընդանէից արքեպիսկոպոս, որ յիւր գահակալին Ընանէից և սա ապստամբեաց անդադարմանալ և առեալ իւր ուխտին։ Վասն որոյ գուժկան հասեալ առ կաթողիկոսն՝ ազգէր նմա. զոր և համարեալ նորա զայն՝ ի սպրդելոյ աղօթիցն իւրոյ լեալ՝ գոհանայր մեծապէս զՏեառնէ։ Եւ ոչ պատուաձ համարեցաւ զսա՝ ի յիւրմէ աւետեալ աթոռոյն առաքելական խոսիանել՝ ի Հայրապետական գլխոյն. այլ յոյզն անկեալ գայր՝ ի Միտկան աշխարհս յանբնակ տեղի եպիսկոպոսարանին Միւնեաց և Հրաման տայր ժողովել կրօնաւորաց և շինել զտեղին, և ինքն գնայր՝ ի Կապան քաղաք։ Ուրեմն լինէր առաջ եղեալ՝ բանագրեալ իշխանն Ջ֊Լանշխեր՝ մեծաւ զղջմամբ մեղայ խոստովանեալ. նմանապէս եկեալ և զահիւղ իշխանն Միւնեաց Վ֊ասակ՝ որդի Սմբատայ՝ որդւոյ Աշոտայ, զեղեցիկ խոստովանութեամբ մեղայ կարդացեալ՝

---

[1] Ա֊յլ օր. Բազում առաքս օթեալ անդր և յոլով թղթովք։— [2] Ա֊յլ օր. գոհից Ընդանից, վասն որոյ գնայ ազօթիւք խնդրէր։— [3] Ա֊յլ օր. էին երկոքեան։— [4] Ա֊յլ օր. ընդ սրտի առեալ եւթէ։

(առնուն) ՚ի միասին զԹողուԹիւն յանցանացն [1]. և առեալ մեծապէս շքով հանդուցին յարքունական գահոյս ՚ի Կապան քաղաքի:

Եւ ժողովեալ զամենայն սպա խուժակրօն և ձգնաղգաց վանականաց՝ խնդրեին վերստին առաջնորդ ինքեանց. որոց լուեալ կացոյց յեպիսկոպոսուԹիւն Սիւնեաց զՍահան՝ որպէս զԼևոնէսէի, որ էր առաջնորդ մեծի ուխտին Սահանու վանից: Եւ առնու ձեռնարկ և վճիռ պայմանի ՚ի Սահակայ և ՚ի հիշեալոց, զի այլ ոչ ևս շեղեալ հետեսցին ՚ի սուրբ Գրիգորէի աԹոռոյն, և ոչ արասցին ընտանուԹիւն ընդ Ընդունից արքեպիսկոպոսացն, զի մի ծնանիցի սոյնպունակ գայԹակղուԹիւն: Եւ զեւեակսի մեծապայման վճռին փակեցին ահագին և սոսկալի նզովիւք, «զի մի ոք իշխեսցէ յեպիսկոպոսաց զՀայոց գործել կամ խօսել կամ խորհել ոճիրս. և զի մի ոք յիշեալոց իշխեսցէ այնուհետև ՚ի Թիկն ածել և օգնական կամ ջատագով լինել. և եԹէ յանդգնի ոք յեպիսկոպոսաց՝ փուԹապէս ՚ի ձեռս տացին կաԹողիկոսին ՚այոց և մի լիցին դարան և տապալական նմա»: Եւ ինքեալ զայս վճիռս իւրեանց մատանեաւ՝ եռուն ՚ի ձեռս կաԹողիկոսին, զոր առեալորգ համարեցաք գրել. զի կան լեալ գրեալքն ՚ի գիրս ԹղԹեցոյն, զոր ժողովեալ է սոյն Ընտանիս, որ ՚աստոյ նամակ անուանի: Այսոյ էառ առաջանայն պատուիրն ՚ի տանէն Սիւնեաց, այսմիկքն՝ զիսաչն որ զառաջև տանէին, և զգաւազանն բազմաճաճ և մեծագին, և զբազմականն ոսկեԹել գոյս ընդ ինքեանց շրջեցուցանէին, զսահմանեալն յառաջին Թագաւորացս և ՚ի հայրապետաց ՚այոց: Եւ բարձեալ լինէր այս և պատասխան մինչ ՚ի տէր Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, և ՚ի տէր Սարգիս՝ ՚այոց կաԹողիկոսն:

---

[1] Ձայլ օր. տրեալ Ընտոյ. և նա ֆեմինի իսոսվանութիւնը զիւոյ խոյսոյել ՚ի գոսն զերազութիւն յանցանացն, և տարել:

Լսեք ի ձեռնադրութեանն տէր Յովհաննիսի վիրաւին եղև նորոգեալ առաւելոյն պատիւ և իշխանութիւն Միւնեաց աթոռակալացն ի տէր Ապզսէ՝ ՚ասոյց կաթողիկոսէ, զոր յիւրում տեղոջ ասացից։ Ապա յետ այսր իրագործութեան զբնայ կաթողիկոսն յԱղուանս ի հաստատել զնոցայն աթոռակալութիւն. զկնի որոյ և գումիսն հասանէ ի թագաւորէն Պ՚ասպուրականի և Ըրծրունի՝ Գրիգոր կոչեցեալ, «եթէ վախճանեալ՝ ինոյ դին նորա քեզ». և գարձուցանեն անդրէն։

Լուեալ ապա զայն տերունէն Ղեւոնդեայ՝ Իշխանիկայ և Սենեքերիմայ և միւս Սենեքերիմայ՝ որդւոյ Գրիգորայ, զոր կանխաւ յիշեցաք, և Լ՚ևոնդեան և Գոգպենայ, մեծաւ զղջմամբ մեզայ կարդացեալ՝ առաքին առ նա զԱւետիք կրօնաւոր որ ի Խոտակերաց վանից, հետնագրել ինքեանց առաջնորդ. զոր և ընկալեալ տեսանն Ընձայիլ մեծաշուք պատուով ձեռնադրէ, և փարթամ ընծայիւք և առատաստուր պարգեւօք յուղարկէ անդրէն յաշխարհն Ղեւոնդեայ։ Պ՚ասն որոյ գոհութիւն և փառք վերառաքեցաւ յամենայն լեզուաց բարերարին Աստուծոյ, որ այսպէս խափանեաց զմեծ պատերազմն եկեղեցւոյ, և արար խաղաղութիւն կեղեքեալ և տառապեալ ազգիս ՚ասոյց և զպատուական անդամն եկեղեցւոյ որ օձտեալ էին՝ վիրաւին միացոյց ի գլուխն գումիսի ի մեծ պատրիարգն ՚ասոյց, որ սրբոյն Գրիգորի են աթոռակալք։

Եւ արդ յետ այսց պատերազմանց, եթէ որ խորհի կամ մըտաբերէ ընդ այն կորստական շաւիղս ընթանալ և ի բաց կալ ի ՚ասոյց կաթողիկոսացն՝ կամ Միւնեաց եպիսկոպոս, կամ Ղեւոնդեայ արքեպիսկոպոս՝ զինչ և իցէ պատճառս բաց ի հոգևոր ՚ևեսաց, եթէ հերձուած ինչ կամ անպատշաճ նորաձեւութիւն երևեսցի, այնպիսին ի սուրբ Երրորդութենէն նզովեալ լիցի, մնան և բաժին նորա ընդ հերձուածողսն և ընդ ուրացողս եղիցի և ընդ սատանայի դատապարտեսցի։ Ապա եթէ ՚ևեսս ինչ իմացան ի հաւատս կամ յեկեղեցի՝ և ճշմարը-

տիւ սատգեսցին՝ ի վերայ կաթողիկոսացն ՚ այոց և կամ այլ արատ ինչ մեծագոյն և ձևատակարութիւն, որ բազմաց խըտմտման և կորստեան պատճառ լինիւն, ինքեանք գիտասցին զաջժանն՝ մինչև ուղղեսցի թիւրութիւնն և մաքրեսցի ամենեքին։

ԳԼՈՒԽ ՃՀ՝

վասն պետն Վահանայ և կոտորածի կենաց նորա։

Ձեռնադրեալ տեառն Ընտանեայի զՎահան ի վանսն Յովհաննու եպիսկոպոս Միւնեաց, էր և ի հրամանի նորա մեծ եպիսկոպոսապետն Տաթեւ, որ սակաւ մի անդ բնակեր և զայլ աւուրս յիւր սեպհական տանն։ Ոչ ի վան աւերման տեղոյն բազում պայծառութիւնք շինեալ էին և բազում բարեկարգութիւնք խոհանեալ ի բազում աւուրս, և յոլով ժառանգութիւնք պակասեալ և յափշտակեալ յեկեղեցւոյն՝ ի մեծ մայրաքաղաքէն Տաթեւոյ, զորս առ սակաւ սակաւ անդրէն դարձուցանէին իշխանքն ի ժամանակս (ժամանակս)։ Որպէս և առաւածասէր տէր Սմբատ՝ Միւնեաց իշխանն, որդի Սահակայ՝ որդւոյ Աշոտոյ և եղբօր մեծ Սմբատայ [1], զարձոյց անդրէն զգիւղսն Ծաղարդ և զ՚ամիս ի տուրս եկեղեցիան ի ձեռն տեառն Վահանայ. և զրէ զվճիռ պայմանին իւրով ձեռամբն այսպէս.—

«Յանուն Աստուծոյ՝ վասն արարեալ հաստատութեան առաւել առաջին գրոյն, որ մեր հարցն առեալ էին առաքաւածապատիւ և հոգևոր եպիսկոպոսացս Միւնեաց, ես Սմբատ՝ որդի տեառն Սահակայ, եառ զ՚ամիս և զԾաղարդ որ առաջին մի յափշտակեալ էին ի տանէս, յաստուածապատիւ և ի հոգևոր տէրս Վահան, և յաստուածաբնակ ի լուսաճեմ եկ-

[1] Այլ օր. և եղբայր մեծ Սմբատայ։

կեղեցիս Տաթեւոյ յայս պայմանիս, որ զառաջնոցն յիշատակն նորոգեն և զիս ևս յիշեն ի սուրբ և ի մաքրափայլ յաղօթս իւրեանց և մեր մեղացն թողութիւն խնդրեն։ Եւ յետ մեր մի ոք այլ յանդգնեսցի [1] յափշտակել զտուս ի տանէն, մի ի մերոց և մի յօտարաց. և թէ յանդգնին՝ Աստուծոյ ամենակալ բերանէն ընդ սատանայի և ընդ օձին նզովեալ եղիցին, և մասն և բաժին ընդ Յուդայի և Պիղատոսի և Երիսոսի եղիցի։ Գրիցաք և կնքեցաք մերով մատանեաւս ի թուականիս 412»։

Իսկ ոմանք կեցեալ յեպիսկոպոսութեանն ամս վեց՝ ապա հասանէ վախճան կաթողիկոսին ։ այոց տեառն Ընա-նիայի և փոխեն զնա ի հանգիստ ի վանսն Երզինայ։ Եւ թագաւորն Աշոտ՝ որդի Սմբատայ, առնէ ժողով եպիսկոպոսաց և հարց սրբոց ի թագաւորանիստն Շիրակաւան. կոչէ և զոմանս ի Սիւնեաց և հրամայէ ընտրել զմի ոք յեպիսկոպոսացն և կացուցանել յաթոռ հայրապետութեան ։ այոց։

Ընտ ամենայն ժողովոյն ընտրեալ զոմանս վանս առաւել սրբութեանն և իմաստութեանն՝ գնեն ձեռն ի վերայ բազմութիւն եպիսկոպոսացն և օծանեն զնա կաթողիկոս ։ այոց. որ կեցեալ ամս մի՝ սկսաւ պատկերս բերել ի Սրսից և գնել ի վերայ սեղանոյն. և հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առնել՝ ըստ ։ ոմոյ տահմանին և զսեղանան կաւնիք զարդարել և առանց կաւնի ոչ մատուցանել պատարագ [2]։ Սա-սըն որոյ կարծիս ինն առեալ ամենեցուն, եթէ դաշնադիր է ընդ Յոյնս և կամի ապրդել եկեղեցի զաղանդ նոցին, բողոք բարձին առ թագաւորն. և նա հրաման տայր ժողովոյ Սինի քաղաքի, զի քննեսցին զարժանն։ Խնացեալ զայն Սահակայ ոչ եկաց ի ժողովն. այլ և գնաց յաշխարհն Սասպուրական առ ։ ամազասպ՝ որդի Գագկայ թագաւորի և հա-

---

[1] Ձյլ ար. յանգգնեսցի։ — [2] Ձյլ ար. ըստ հաւատոյ սահմանին խաչիւ վարդիւ և առանց խաչի ոչ առնել պատարագ։

ւանեցոյց զնա ինքեան, և զպատրեալ առեր զինքն ի նախանձաւոր արանց։ և բնակեցաւ ի վանսն, որ կոչի Զորոյ վանք։

Լսեալ նոքա որ յԱնի ժողովեցան՝ իբրև գիտացին զերթն նորա, հրամանաւ Աշոտոյ թագաւորի կարգեցին ի տեղի նորա զայլ ոմն կաթողիկոս և լուծին զվ. ահան։ Եւ այսպէս կեցեալ քաւրեշ ի տեղի քաւրեշի Սահմանեաց յԱնի և վ. ահան ի վ. առաքելական զամս երկու, լքին նեղվելով զմիջոց աշխարհիս, մինչև վերին ակնարկմամբն ի միում առաւօտի երկուքեան բարձան ի միասին։ Եւ վ. ահան եղեւ անդէն ի վանսն Զորոյ առ դրան եկեղեցւոյն ընդ այլ կաթողիկոսունքն որ կային անդ։ Եւ յաթոռն Հայոց զարժանաժառանգ այրն զաէր Յովհէ՝ հարազատ արեան տեառն Ներսիսի, նաւուցին Հայրապետի։

ԳԼՈՒԽ ՀԱԳ.

Եպիսկոպոսութիւն Սիւնեաց, որ կոչեցաւ ընդ Բաբոն վահանայ։

Յետ վ. ահանայ նստուցանեն ի տեղին եպիսկոպոս զայրի երէց մի՝ Աշոտ անուն, վասն առատ ճգնութեան և խոհեմութեանն. զի էր սիրեցեալ յայնմ իշխանաց և երևելի յամենայն գաւառին, զոր և ձեռնադրեաց նոյն վ. ահան կաթողիկոս։ Եւ ունէր այս Աշոտ եպիսկոպոս որդի մի՝ Յովհաննէս անուն, զոր անուցանէր մեծաւ զգուշութեամբ։ Եւ հասուցեալ յարբունս այրութեան հասակին, պարկեշտ և սրբակրօն, պատշաճագիտ և հանճարեղ, զոր և եառն ձեռնադրել եպիսկոպոս Սիւնեաց։ Եւ հայր նորին առեր Աշոտ կալեալ զաթոռն ամս 17՝ յանձն արար որդւոյ իւրոյ տեառն Յովհաննիսի, և ինքն աղօթից պարապեաց։ Իսկ Յովհաննիսի կացեալ ամս վեց և կէս՝ վախճանի, և բռնադատեալ զհայրն նորին զԱշոտ կացուցանեն ի նոյն աթոռ, որ կեցեալ ամս հինգ և կէս՝

վախճանի։ Չկնի սորա զաէր Սամուէլ՝ այլ հիզ և բարի, որ և եկաց ամն երիք[1] և փոխեցաւ մահուամբ։

Ապա ընտրեն զայր մի լաւ և յոյժ պիտանի՝ անեալ սրբութեամբ և կուսութեամբ, Յակոբ անուն՝ և կացուցանեն զնա յաթոռն եպիսկոպոսութեան Ալունեաց։ Յաւուրս սորա վախճանի Ամբատ՝ Ալունեաց տէր, որդի Սահակայ, և զնի ի հանդիսա յեպիսկոպոսարանին Տաթեւոյ։ Ընդ Ամբատ թագ կապիալ ինքեան՝ Թագաւորեաց, և բարեպաշտ կին սորա Թագուհին Ջահանդուխտ և որդիք իւր Վասակ և Աւագայ հասան ի սուրբ եկեղեցին 6000 դրամ և զդիւզն Տիզ որ ի Հանրանդ գաւառի, զոր իւր իսկ Ջահանդխտոյ ի կորդոյ շինեալ էր վասն հոգեաց բարեպաշտ և աստուածասէր Թագաւորին Ամբատայ։ Եւ մեծամեծ նզովիւք դրեցին զվճիռն, զի մի իշխեսցէ ոք խախտել, որ է այսպէս.—

«Յանուն Աստուծոյ կամ եղե ինձ Ջահանդխտոյ՝ դրաւաբեր Աւագայի, տալ ի Հանրանդ գաւառի զանուանեալ շէնդ զՏիզ՝ իւր ամենայն բոլոր ահմանովքն, վերամբ և դաշտիւ և այլ մասիւք, զոր իմ Թագաւորին Ամբատայ ինձ տուեալ էր, և իմ ի կորդոյ շէն դրեալ. և ես յետ եղեալ եղանելի Թագաւորին իմոյ յատաճացս՝ իւր հոգւոյն ի Տաթեւ ի սուրբ մայրաքաղաքն և ի սուրբ նշանն Քառ ի ձեռն տեառն Յակոբայ՝ Ալունեաց եպիսկոպոսի. և յայսմհետէ անխլեան եմք ես և իմ որդիքս Վասակ և Աւագայ, զի ի ձեռն Աստուծոյ եմ առեալ և ի սուրբ նշանս. և պարտական են յամենայն տարի իմ Թագաւորի հոգւոյն զվարդավառին քառատունքն պատարագ առնել և յամենայն օր չեչռնէ մոմ Խաղ-Խաղի տալմամն տալ ի նոյն քառատունն։ Արդ սուրբ հայրապետք՝ որ յաթոռ յաջորդիք, պարտական էք զայդ անխափան կատարել, և զշէնդ պատառ յամենայն հարկաց առնել։—Աստուած ընդ-

---

[1] Այլ օր. որ և Հետ. հին։

նելի արասցէ։ — Արդ թէ որ ի մեր զաւակաց կամ յայլ օտարաց կամ յաւազաց, ինչ և իցէ պատճառաւ, զկնի մեր անցման զայդ չէնդ գՅեղ հանել խորհի ի Տաթեւոյ և կամ հակառակ կալ մեր հոգւոյս և կամ չար և կամ այլ ինչ արքունեի հարկ ի վերայ դնել, այնպիսին զնւբն մի վայելեսցէ, և ամենայն չարագործաց մեղացն պարտական եղիցի, ընդ Յուդայի և ընդ Պիղատոսի դատեսցի, ընդ նեռին անիծեսցի, յանշէջ հուրն տանջեսցի, և յ318 հայրապետացն նզովեալ եղիցի։ Եւ թէ տաճիկ աւազութիւն լինի և յափշտակել ջանայ՝ յիւր հաւատէն և յիւր ֆէլ-ֆըրն որոշեալ լեցի, և յաւիտենից փիղտահրապարացն [1], որ յառաջին մարդէն մինչ ի յետինն լեալ են և լինին, նաւել եղիցին. երկինքն նմա հուր ցօղեսցէ, և երկիրս նմա փուշ և տատասկ բուսուսցէ, և անուն նորա և որդւոց և սերոզաց իւրոց կորիցէ և ջնջեսցի յերկրէ, և յիշատակ նորա այլ մի ևս երևեսցի։

«Եւ վասն առաւել հաստատութեան գրեցի իմ ձեռօքս զայս վճիռս ես Վ[ասակ՝ որդի Սմբատայ թագաւորի, հրամմանաւ իմ մօրս։ Ստուած շնորհատու արասցէ։ Ի թուիս Հայոց 447. և կնքեցաւ մերով մատանեաւս»։

«Ընդ սպառուէր հրամանի է իմ՝ Յակոբայ ի տունդ Աիւնեաց առ նախագահ աթոռոդ և լուսաճեմ տաճարդ Տաթեւոյ, յոր յոյս եդ երանելի թագաւորն մեր՝ զի պարտիք անխափան կատարել զեղեալ յիշատակս և քառատունս նորա որ վասն շինոյն Տեղոյ. որում և մեք վկայեալ մերով ձեռագրովս՝ կապեցաք անլուծանելի կապանօք զհակառակողն այսմ, և կնքեցաք մերով մատանեաւ ի կամն Ստուծոյ։—Ը նորհիւն Ստուծոյ և ես Գրիգոր՝ Աիւնեաց եպիսկոպոս, հաստատեցի զայս վճիռս որ վասն Տեղոյ շինոյն էր տուեալ սուրբ Թագուհւոյն Ը ահանդխտոյ ի սուրբ եկեղեցիս և որդւոց իւ-

---

[1] Ընդ օր. և յետ ֆէլ-ֆըրն, որ յառաջին հարցն գինի ի յետինն։

բոց յաղագս խաղաղարար և վայելուչ թագաւորին իւրեանց Ամբատայ, զի մի՛ ոք իշխեսցէ խախտել ՚ի սուրբ աթոռոյս։ և որ հակառակի՝ ընդ Աիմոնի կախարդին գիշատակեսցի և Ընտուծոյ և յաւիտեան սրբոց նզովեալ եղիցի։ Եւ զիշատակ նորա, որ կարգեալ են ՚ի տօնս՝ անխափան կատարեսցեն»։

Եւ արդ այս Յակոբ կեցեալ ամն սակաւ վախճանի. զոր կարծեմ սպանեալ դաւաճանութեամբ Յուրացեաց ՚ի վերայ խոռոյն Յուրայ, ուր կայ գերեզման նորին, յորում բժշկութիւնք լինին։ Յետ Յակորայ յաջորդէ ՚ի տեղին Գրիգոր, որ էր ամենայնիւ պայծառացեալ ըստ նեղբին մարդոյն և ըստ արտաքին, և արար բազում գործս երևելիս ՚ի տան հայրապետութեանն[1], քակեաց զանիծաբնակ քարն Յուրայ և բնաջինջ յատակեաց. էառ հոգեցատուր ՚ի փարաջոյ՝ Զագիկ իշխանի որդւոյ Գողթնաքարն իւր ամէն սահմանաւն բաց ՚ի Նոթեաց վանից բաժնոյն, զոր յետոյ էառ միւս տէր Գրիգորն ՚ի Գնենէ՝ Խաղբակայ որդւոյն։ Եւ է վճիռն փարաջոյ այսպէս.

«Յանուն Ընտուծոյ այս իմ ձեռին գիր է փարաջոյ՝ որդւոյ Զագկայ իշխանի, որ կարդացաք զառաջնոց գիրն և վերըստին հաստատեցաք զԳողթնաքարն իւր սահմանաւքն, որ էր իմ սեպհական ժառանգութիւն՝ ՚ի Տաթևոյ սուրբ եկեղեցիքս և ՚ի տէր Գրիգոր. զի յառաջնոցս հաստատած հայրենիք էր՝ և սակաւ ժամանակօք հեռացեալ էր վասն խանգարման եպիսկոպոսացն. — մեք վերստին հաստատեցաք զնոյն այգւով և ծառով և անկով, հողով և ջրով ՚ի Տաթևոյ սուրբ մայրաքաղաքս, ՚ի սուրբ նշանս և ՚ի սուրբ առաքեալս՝ ՚ի ձեռն տեառն Գրիգորի՝ Աիւնեաց եպիսկոպոսի։ Եւ եառ զայս իմ կամաւորութեամբ, ոչ ՚ի հարկէ, ոչ յաւազակաց բռնութենէ, ոչ յարբկութենէ. այլ երկուցեալ յառաջին հայրապետացն և

[1] Այլ օր. սա և քանի՞ սրբ ֆորթ երևելի ՚ի տան հայրապետանոցին։

իշխանացն՝ ի սոսկալի նզովիցն՝ եւս իմ սրտի սիրով վասն իմ հոգւոյս փրկութեան։ Եւ զդուք՝ աստուածարեալ տեարք եւ սուրբ ժողովք՝ զիմ անաեր և զմեղուցեալ ոգիս մի՛ մոռանայք, այլ յիշման և աղօթից արժանի արարէք։ Եւ թէ ոք այս տրոցս՝ խոտիանեան կամ խանդարման պատճառ լինի և զիմ հոգիս զրկէ, և ոչ պատկառի յառաջնոցն նզովից և՛ ի մեր՝ նզովեալ լեցի նա յամենասուրբ Երրորդութենէն և ա-մօթալից եղեց յիւրում դատաստանէն և մնան զՅուդայիւն առեալ։ — Եւ վասն հաստատութեան տուրս եդաք՝ ի վերայ ըզ-մատանի աստուածապսակ թագաւորին Ս. աստակայ և զսուրբ հայրապետիս մերոյ զտէր Գրիգորի»։

Յետ այսորիկ կնքեալ[2] տեառն Գրիգորոյ սակաւ ժամա-նակ՝ փոխի յաստուածս. և յաջորդէ՝ ի տեղին բազմերջանիկ և յոգեներանեան այրն Աստուծոյ, կրկին լուսաւորիչն և երկ-րորդ նորզօրեղն նոաւսեալ տանն այնմ և բոլոր աշխարհիս Ա-նյականն՝ տէր Յովհաննէս, որ եկաց բազում աշխատութեամբ և երեսելի փառօք՝ ի սուրբ աթոռն առնլի քան զ50 ամ, յա-բեհանատուն ազգակցութենէ[3] անտի տեառն Սարգսի՝ Հայոց կաթողիկոսի. զորոյ զգործս և զբանս յիւրում տեղւոջ առա-ջիկայ։ Ասացեալ այժմ պարտ վարկանիմ դառնալ անդրէն և սա-կաւ մի ցուցանել և զիշխանացն հանդամանս։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Համառօտ զրոյց և կարճ իշխանացն Սիւնեաց և ընտանեաց նոցին՝ ի վեր-ջին ժամանակս։

Առաջին սկիզբն Սիւնեաց իշխանացն, զորս ըստ կարգի ծանեալ և եդաք՝ ի մատենիս, յՆեղոկայ սկսաք մինչ՝ ի վեր-

[1] Այլ օր. և ինք ոչ այս ցրոցս խոտիանեան։ — [2] Այլ օր. յետ այսր և իւրեալ փեսան Գրիգորոյ։ — [3] Այլ օր. յորինատոհս ազգակցութենէ։

ջինն Վռուրդոյ, և ապա անճանօթ միտցաք երկուց կամ եւ
րից իշխանաց: Իսկ զարձեալ նղին զահակալ իշխանք Միւնի,
առաջինն Ա՛ատակ որ էր մեծ նահապետ Միւնեաց. և ապա
երկու որդիք նորա՝ Փիլիպէ և Սահակ և միւս իշխանն Գրի-
գոր ի նոյն ցեղէ, որ ունէր մանուկ ժառանգութիւն ի
սեպհական հայրենեացն: Եւ զի ի ցեղէն հայկական յոլով
էին զարմք և ազինք, մեզ փոյթ զգլխաւոր զահակալ իշխա-
նացն միայն էր. վասն որոյ սակաւ՝ գոսաք և կարգեցաք
առաջն:

Յետ Ա՛ատակայ բաժանեն զհայրենի ժառանգութիւն
իւրեանց երկու որդիքն՝ Փիլիպէ և Սահակ. և յինի Փիլիպէ
գահերէց իշխան Միւնեաց, և Սահակ առնու բաժին զգաւա-
ռըն Գուղանից բոլոր: Ունայնի Փիլիպէ և Թոռոս երիս որ-
դիս՝ զԿարպէն, զԱ՛ատակ և զԸշոտ: Յետ սակաւուց մեռա-
նի և Սահակ ի պատերազմի Հաւղ ամիրային յետ Հաւրազ-
դան գնացն մերձ Նաւակերտաց աւանին և Թոռոս ժառանգ
ինքեան զԳրիգոր՝ որդի իւր, Սուփան կոչեցեալ: Իսկ յետ ա-
ւուրց վասն գոյնն զգաստանալ ի վերայ հայրենեաց զգաստերաց-
մին ընդ իրեարս Կարպէն՝ երէց որդի Փիլիպէի, և Գրիգոր՝
որդին Սահակայ. և հարստահալ Կարպէնի զԳրիգոր դիմեաց-
ւալ կացուցանէ, վասն որոյ զԱյրենին ժառանգելով զբաժին՝
և նա փութապէս ջնջի ի կենաց՝ Թոռոլով որդի մի Ա՛ահան
անուն: Եւ Փիլիպէ պայազատաէ զտէրութիւնն. իսկ Գրիգոր
Թոռոս երկուս որդիս զԱ՛ատակ, որ Կարուս կոչէր, և զՀա-
՛բահատ: Ապայ էին նորա և երկու եղբարք՝ Հ՛բահատ և
Գագիկ: Ընդ պայազատաէ զտէրութիւն նորա Ա՛ատակ Գա-
բուռն, որ փեսայացաւ Ընշոտոյ Կապրատունւոյ, որ Թագա-
ւորեաց Հ՛այոց [1]. և առ կին զդուստր նորա զՄ՛արիամ: Իսկ
Փիլիպէի վախճանեալ՝ Թոռոս ժառանգ զԿարպէն որ մեռաւ,

[1] Այլ օր. որ առաջ ևս թագաւորեաց Հայոց:

զՎ֊ասակ որ Իշխանիկ կոչիւր, և զԱշոտ։ Մեռանի և Վ֊ասակ, և պայազատէ զտէրութիւն նորա Աշոտ՝ եղբայր իւր։ Ա֊ա կեցեալ բազում աւուրս՝ մեռանի և Թողու զորս որդիս՝ զՄիրատ, զԱհհակ, զԿարգէն և զՎ֊ասակ։ Եւ բաժանեալ զժառանգութիւնս իւրեանց՝ առնու Միրատ զՎ֊այոց ձոր բո֊ լոր և զՔ֊ահապատնեան, որ է Ք֊ահուկ գաւառ. իսկ Ահհակ և այլքն՝ զԱխնիս և զԿ֊աղս և զայլսն։ Եւ էր մեծին Վ֊ասակայ որդի մի Փիլիպէ անուն, որ ունէր զՔ֊ուին և զՔ֊անբանդ։ Մեռանի և Վ֊ասակ Գաբուռ՝ որդի Գրիգորի Սուփանայ և Թողու զերիս որդիս՝ զԳրիգոր որ և Սուփան կոչեցաւ, զՊ֊ահհակ և զՎ֊ասակ. և պայազատէ զտէրութիւն նորա Գրի֊ գոր Սուփանն, որ առաւածայրն իւրն տեսչութեամբ պարա֊ պէր շինութեան եկեղեցեացն և հոգևոր գործոց։ Իսկ Միրատայ եղբայրն կրտսեր Վ֊ասակ մեռանի՝ ի պատերազմին Գողթան ամիրային առ ամրոցին Երնջակայ. և ինքն Միրատ առեալ զՊ֊ զահերէց իշխանութիւնն՝ և բազում ցուցեալ գործս գովե֊ լիս հոգևորս և մարդկայնականս [1] վախճանի և Թողու ժառանգ իւրոյ պայազատ տէրութեան զորդի իւր Վ֊ասակ։ Իսկ Ա֊ հհակայ՝ եղբօր Միրատայ, էր որդի մի Միրատ անուն [2]. մեռա֊ նի Ահհակ և առնու զիշխանութիւնն Միրատ՝ որդի նորա [3]։ Էր և՛ի Կ֊աղս իշխան մի՛ ի տոհմէ Զ֊ևանշէր անուն՝ որ֊ դի Զաքկայ իշխանի։ Իսկ Գրիգոր Սուփան չետ բազում քա֊ ջութեանց և հրաշից գործոց մեռանի զեղակուր՛ ի Նպռայ. և պայազատէ զտէրութիւն նորա Վ֊ասակ՝ եղբայր իւր։ Մե֊ ռանէր և Ահհակն և գնէր՝ ի գրան Նորաւուայ եկեղեցւոյն [4]։ Իսկ Վ֊ասակ՝ որդի Միրատայ, չետ բազում գովելի գործոց մեռանի [5]. և տիրէ Համազասպ Մամիկոնեան աշխարհիս Միրատ՝ որդի Ահհակայ, զահիրէց իշխանութեամբ։

[1] Ձայլ օր. բազո՛ց ցուցեալ գործս գովելի հոգևոր և հրաշագործ։ — [2] Ձայլ օր. եր որդի Միրատ անուն։ — [3] Ձայլ օր. և առնու զիշխանութիւնն իւր Միրատ՝ որդի իւր։ — [4] Ձայլ օր. ի գրան Նորաւուայ եկեղեցւոյն։ — [5] Ձայլ օր. և չետ բազո՛ց իշխա֊ նութեանց և գովելի գործոց մեռանի։

Այժմ լուր ինձ և սրատեսիցդ քեզ՝ ով պատուական ընթերցող, զպանծալի բանից լուր. զի սուտ Պետական որ ի Հայկայ, երբեմն խառնեալ էր ընդ Թագաւորական ցեղն Եղշայկունի և Պահլաւկայ, և երբեմն ընդ Խազրաց Թագաւորութեանն, և հուսկ յետոյ՝ ընդ Նագրատունիսն, բայց երբեք ոչ ըմբռնուցան ի հայրենի սէրս Թեանցն։ Իսկ յետ յոլով ժամանակաց՝ մինչ դուն բացին նախ Ընծրունիքն և Թագ կապեցին ընդդէմ Սմբատայ՝ Հայոց Թագաւորի, Թագ կապեցան և Բագրեւանդ ևս բայ բդեշխն, Թագ կապեցաւ և Ընկանդեան Հայոց Տանն Մամիկոնէից, մեծարէր Սենեքերիմ զՎասակ Պետի Թագ կապել՝ և նա ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել։ Ապա ի նուաղել տէրութեանն Նագրատունեաց և ի զօրանալ ձեռինն իսմայէլականի՝ հատեալ բաժանեալ եղեն ամենայն գահք գլխաւոր նախարարացն՝ Վասպուրականին և Վայոց և Եղեանից և Զորոյգեւտացիքն որ Կիւրիկեանքն կոչին, և Կարուց և Վանանդայն որ Բասենիք կոչի. ապա Սմբատ՝ որդի Սահակայ որդւոյ Եշոայ, որ ունէր կին զդուստր Սենեքայ մեծ և փառաւորեալ իշխանին Եղուանից, Շահնդուխտ անուն, և տուեալ էր զԹոռն իւր՝ զդուստր Վասակայ որդւոյ իւրոյ որ զինի Թագաւորեաց՝ զԿատրամիդէ, կին Գագկայ Թագաւորի որդւոյ Եշոայ, որ շինեաց զսքանչելի և զհրաշաձև նկեղեցին Հռիփսիմեայ զմեծ կաթողիկէն, — յարեալ ի մեծ ամրապէնն որ էր ի Վաղարշ Հռաւորական աշխարհի, նաև Հայոց ամիրայն [1], որ իշխեալ և դրանն Վարդանդոյ, և և Եղուանից տէրանցն, զոր վասն առաւել սիրոյ Ծանուցանէին մեծի սուլտանին Խորասանու, և հրամայ առեալ ի նմանէ Թագ կապեն գնոցկահասակ և վեհյեղափուռակ առնն Հայկազնոյ Սմբատայ Պետենաց տեառն։ Եւ զի յայնմ ժամանակի Նագրատունեքն իշխեին միայն Ո իրա-

[1] Այլ օր. Նաև յԱնոյ ոստոյն։

կայ և Ընդարտառու մինչ՝ ի Գնեղամ և մինչ՝ ի Ամբասին և մինչ՝ ի Կարին և մինչ՝ ի Ա՛ստղունեան սահմանն և մինչ՝ ի Ձորոյ գետն և մինչ՝ ի Վարդման, և Աբուհիք կոթեալ էր՝ ի նոցանէ. վասն որոյ ոչ ինչ քրէական մեզ հատուցեցաւ Արմ բատ։ Օ՛ի ևթէ Խազրատունիքն, զերութեամբ իմն ածեալ էին՝ ի ՚բաչէէ՝ այնմ արժանի գոյն, ապա քանի՛ ևս առաւել սոցա անկ էր ոյ՝ ի ՚այկայ երևելի հարազատութեամբ որդիք զՀարս փոխանակելով և աներութեամբ ևկեալ հասեալ էին մինչև ցայժմ։ Ընդ ետ կապեալ Աբրաամայ՝ Ձոխ և երեքելի փառօք յարդարէր զարքայութիւնն ըստ օրինի ինքնակալ թագաւորաց։ Ե՛ւ յետ բազում երևելի արքունական գործոց վախճանի, և գնի՝ ի մեծ սրբատաներն Տաթևոյ բազում և աշխատհատուածոյ հանդիսիւ [1]։

Ե՛ւ պայազատ, զտէրութիւն նորա մանուկ օրիցն նորա Ա՛ստակ, որ մեծահանդէս ժողովով և ազատակոյտ բազմութեամբ օծանի թագաւոր Աբուհաց և Խաղաց ձեռամբ տեառն Գրիգորի Աբուհաց եպիսկոպոսի։ Ե՛ւ զեղբայր իւր զԱշոտայ կացուցանէ իշխան իշխանաց ազատակոյտ զօրաց իւրոյ։ Խոյզ մայր սոցին երանելի թագուհին Շ՛ահանդուխտ կոյր կենդանի, որ շարժեալ աստուածային իմն ակնարկմամբ շինէ զդեղեցկայարմար վանսն Ա՛ղանձոյ [2], որ էր՝ ի վազուց հետէ տեղի ուխտական ապանց. զի եկեղեցի մի էր անդ՝ ի հին ժամանակաց յանուն սրբոյն Գրիգորի լուսաւորչին, զոր կարծեմք նորին իսկ հիմնարկեալ [3], և յետոյ շինեալ՝ ի Աստիանոսէ հօրէ և՝ ի սուրբ Ճգնաւորէ. և տունէր բժշկութիւն խածելոց՝ ի թիւնաւոր օձից՝ որպէս Փաւստոսն, որ զկատաղի ցաւն անբուժելի բուժէ՝ ի մարդոց և յանասնոց։ Օ՛ւրայս և այժմ

---

[1] Ա՛յլ օր. Եւ յետ բազում ճախճախանաց և երկարել արիւնահոսի փորձոց վախճանի, և գնի գին նորա՝ ի մեծ սրբատունն և յատուկ տեղին Տաթևայ։ — [2] Ա՛յլ օր. շինի զքիպիսկոպոսարան և զվանքն գիտուն ի Ա՛ղանձոյ։ — [3] Ա՛յլ օր. զոր և հարթիւ նորին հիմնարկեալ։

իսկ անանկանէ անպատմելի հրաշս. զի գՀայկազեան՝ ի թիւնա-
ւորաց և զանացեալն և զուռուկիան մերձ՝ ի պայթիկ՝ հա-
նեն՝ ի բարձրաւանդակ լերինս և ցուցանեն զվանան, և կամ
սակաւ մի հող չկեղեցոյն հատուցանեն, առ ժամանայն լու-
ծուին առնէ մնակալդևակ թիւնոյն և փութապէս բժշկէ:

Ա՛սան որոյ շինեալ բարեպաշտին Ը՛ահանդխտոյ[1] կոփա-
ծոյ քարամբք զեկեղեցի յանուն սրբոյ նախավկային Աստե-
ծնոմի՝ ի 449 թուականին՝ այոյ՝ կարդէ՝ ի նմա առն կրօնաւ-
որաց և բազմամբոխ պաշտօնէից: Ը՛յինէ և առն աղօթից
կրաշաղախ վիմօք՝ ի գրան եկեղեցւոյն, և համբարանոցս և
գործատունս, շուրջ զարտոյն զվանքն և որոշէ նմա անդաս-
տանս՝ ի Ա՛ղանդոյ, և տայ զԱ՛ռաքել ագարակ՝ ի վանուն.
պայծառատպէս զարդարէ զեկեղեցին զանազան զարդուք, և
ինքն վախճանեալ՝ դնի՝ ի գրան այնր սրբատանի: Ընդ յետ
ամաց ինչ՝ ի 455 թուականին Աեւադայ որդի Նորին Ը՛ահան-
դխտոյ նզբայր Ա՛նանկայ թագաւորի, շինէ մեծամեծ աշ-
խատութեամբ եկեղեցի մի յոյժ պայծառ գեղեցկայարմար և
գմբէթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զտաճի՝ ի գրան
Նորին. որք և կան հանդուցեալ՝ ի գրան Նորին.—որոց յի-
շատակն օրհնութեամբ եղիցի և վարձս բիւրապատիկ՝ ի Քրիս-
տոսէ Ընտրեալ Ծոյն մերոյ:

ԳԼՈՒԽ ԽԶ.

Վասն էպիսկոպոսութեան գեղամայ Ցովհաննէսի և քրիստոս նորին:

Ցետ վախճանին առնուն Գրիգորի՝ Ա՛ռնեաց եպիսկոպո-
սի, ընտրեն զերջանիկ և գփառաւորեալ այրն Ընտրեալ Ցով-
հաննէս, զոր կարծեմք՝ ի զաւմից գոլ տեառն Սարգսի՝ ա-

[1] Ա՛յլ օր. չինեալ ՚ի բարեպաշտոնեից Շահանդխտոյ.

յոց կաթողիկոսի։ Եւ բարեպաշտ և աստուածասէր թագաւորն Մխիթար և Հաղբաց աշխարհիս՝ Վասակ, առաքէ զնա ազատ արամբք և մեծամեծ պատուիրագօք յԱնի առ սուրբ Հայրապետն Յովհաննէս Սարգիս, զի ձեռնադրեսցէ եպիսկոպոս Մխիթարայ, և հայցէ ի նմանէ շնորհել վերադիր զաստիճան մեծապատուութեան և զպատուն զոր ունէին — զևսէբն որ առաջի ընթանայր և զգաւազանն և զբազմականն, զոր բարձեալ էր տէր Ընանիա վասն գայթակղիչին Յակոբայ։ Եւ թագաւորն Գագիկ փնտռացեալ էր սմին Վասակայ թագաւորի. և էր թագուհին Կատրամիդէ դուստր սորա, որ հանդիսանայր շնութեամբ երկնաձեմ առագաստին սրբոյ կաթողիկէին։ Յուզակեալ էր և նոցա ալքունի ընծայս, և գրով ծանուցեալ զինդիրն ի կաթողիկոսէն. վասն որոյ թախանձեալ Գագկայ և թագուհւոյն Կատրամիդէ զհայրապետն[1] տան ձեռնադրեալ մեծահանդէս շքեղութեամբ զՅովհաննէս մեծապատիւ Մխիթարայ։ Եւ ընձեռէ նմա հայրապետն զսեպհական խաչն Մխիթարայ և զսկիպտուան վառն[2] և զմեծագին գաւազանն և զպատուական գահոյս բազմականին, զոր պահեալ էին ի սենեկին սրբարանի հայրապետանոցին։ Ետրոգին զգաստիճան և զպատիւ մեծի և առաքելական աթոռոյն Մխիթարայ ըստ առաջնոյն օրինի և արձակին զնա մեծապատիւ ճոխութեամբ և երևելի փառօք յիւր աթոռն. — ընկալեալ և բազում պարգեւս ի թագաւորէն և ի թագուհւոյն, նաև մնան ի փրկական փայտէն պնդեալ յոսկւոյ, զոր առաքեալ էր նոցա ինքնակալ կայսրն Յունաց Վասիլ Ծոփանածին, որ ունէր յինքն նիշ ներկուածի արեանն Քիստոսի, յորմէ ահագին զօրութիւնք և մեծամեծ հրաշք երևէին։ Եւ այնպէս եկեալ անկշիռ պարգեւօքն ի սեպհական աթոռն

[1] Այլ օր. վասն որոյ և խնդրեալ Գագիկ և տարեր խնդրին կատրամիդէ զհայրապետն։ — [2] Այլ օր. և զսկիպտուան վառն։

Ամենեցուն, որում ընդ առաջ եկեալ [1] Թագաւորն Վ֊ասակ իշխանակոյտ բազմութեամբ և մեծապետի շքեղութեամբ ընդունէր և ոչ սակաւ լինէր խնդութիւն ի մէջ նոցա։ Իսկ սուրբ Մեսրոպայ առաւ վարդապետութեամբ և քաղցր բանիւ լուսաւորէր և մխիթարէր զհուր հաւատացեալ հօտն։ Ապա այնու հետև սկսաւ փարթամանալ և պայծառանալ տունն այն (առաւել) քան զառաջինն և զամենայն յարիշատակեալ ժառանգութիւնն անդրէն դարձուցանէր. քանզի Մաբինոցայցիքն զԳեղարքունի էին յարիշատակեալ, և ոմն մի զՎայոց ձոր, և եպիսկոպոս նստեալ. և ոմն մի՝ զԱրտնջակայ գաւառն, և անդ նստեալ եպիսկոպոս Արտնջակայ վանս. և Գողթնացիքն՝ զԱահեձորն [2] և զՈւստ և զՎրդուստ. նմանապէս և իշխանքն զգիղանն էին բաշխեալ ազատաց իւրեանց, զորս շրջաբերական թղթովք տեառն Սարգսի (կաթողիկոսի), որ ահագին նզովիւք փակեալ էր, զի մի՛ ոք իշխեսցէ յանդգնիլ՝ի հիզքուճն յայսմ վիճակիս, այլ զբովանդակն՝ի սեպհական աթոռն դարձուցին՝ի սուրբ նշանն և՝ի տէր Յովհաննէս, — զարձոյց անդրէն և հնազանդեցոյց ինքեան և հիքեալ հալածեաց զօտար և զպայլացեալ հովիւն։ Որում ա֊ջակցեալ բուռն զօրութեամբ բարեպաշտ Թագաւորն Վ֊ասակ՝ զարձուցանէր անդրէն [3] զյարիշատակեալ հոգեցատուրան զգեօղն Յօղունի և զԳողթանան [4], նաև զբոլոր վիճակն իւրոց տէրութեանն։ Եւ զրե իւրով ձեռամբ նամակ վիճակիս այսպէս. — «Յանուն Աստուծոյ՝ այս իմ հրամանք է Վ֊ասակայ Թագաւորիս որ գրեցի՝ի 468 Թուականին և ետու իմ Աստուծոյ փոխանակ տեառն Յովհաննիսի, զի յորժամ ընտրեցաք Աստուած զսա յօրովայնէ որպէս զմեծ Կարապետն և շնորհեաց մեզ այցելու, որ և լուսաւորեաց զամենեսեան այն-

---

[1] Ա֊յլ օր. Ընդ որում ընդառաջ եկեալ։ — [2] Ա֊յլ օր. Վրուխայն։ — [3] Ա֊յլ օր. Քան յառաջինն անդրէն։ — [4] Ա֊յլ օր. Գողթնան։

քան, զի երանելագոյ ամենայն վիճակիւքս սորա յամենայն աշխարհս. ապա դարձուցեալ զՅօղունի գիւղն և զԳոգնվան ի սուրբ մայրապաղատին Տաթև [1], զոր յառաջ չեա էապ առնել վասն խանգարմանն և խափանման հայրապետանոցին՝ և այժմ վերստին հաստատեցեալ, ընդ նմին և զբոլոր վիճակս որ ըստ երկուստեան դաւանողացն անդրէն դարձուցեալ և հաստատեցեալ զՎայոց ձոր, զԳողթնիքն [2], զՓորակն, զՀանբանդ, զՋուղայ, զԵրինջակ։ — Յայսմհետէ մինչև յաւիտեան չունի ոք հրաման յԱստուծոյ ամենակալէն և յամենայն սրբոց հակառակ կալ այսմ սահմանի կամ յափշտակել զայս շէնսն [3] և զգաւառս։ Եւ թէ յանդգնին՝ յԱստուծոյ և ի սուրբ հայրապետացն հոգւով և մարմնով նզովեալ և ղեցին։ — Գրեցաք և կնքեցաք մերով ալքունական հրամանատու և մատանեաւ ի կամս Աստուծոյ»։ — Եւ Ամբաս իշխան վկայ եմ իմ քեռւոյս առաքեալ թագաւորիս հրամանացս, զոր չկարէ ոք խափանել։ — Եւ ես Գրիգոր որդի Հաշոի իշխանաց իշխանի վկայ եմ իմ քեռւոյս առաքեալ թագաւորիս հրամանացս։ Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ սահմանդ։

Վարձեալ տայ թագաւորն Վասակ զգիւղն Գրուակս։ և գրէ վճիռ այսպէս. — «Կամեաւն Աստուծոյ ես Վասակ՝ որդի Ամբասայ թագաւորի, զԳրուակ գիւղ որ յառաջ տուեալ տերանցն ի սուրբ նշանն, ես վերստին հաստատեցի իւր բոլոր սահմանովքն ի Տաթև ի ձեռն առաքելաշնորհ հայրապետին Մխիթարայ տեառն Յովհաննիսի՝ ազատ յամենայն չարէ և հարկաց, զի կատարեսցին զաւաչքն յիշատակ և զմեղս։ Եւ արդ թէ ոք խափանել ջանայ՝ յամենակալէն յԱստուծոյ և յամենայն սրբոց նզովեալ եղիցի, և մանն զԱյսին

---

[1] ԵՀԼ օր. ի սուրբ Տաթև։ — [2] ԵՀԼ օր. զԳնդթնիքն։ — [3] ԵՀԼ օր. զայդ շինսդ։

նին առցէ. և թէ տաճիկ իշխանութիւն փոխի և յափշտակել ջանայ՝ Աստուծոյ և յիւր ֆեղերքեն ողբալ լինի, և հազար հազար նուր եղիցի. ի Թուխս 465: ։ասատատ է կամեան Աստուծոյ»:

Տեսեալ զայս ամենայն՝ նախանձին և իշխանք ոմանք զնախանձ բարի, և տան զդիւրն Շ՚ոռոմն ի Տաթև և գրեն կըտակ պայմանի այսպէս.—«Յանուն Աստուծոյ այս գիր վըճռի է մեր՝ Խարբի, Ըրտաւազայ, Սուփանայ, Աակի որգեաց, որ կամ եղև մեզ տալ զմեր հօր արեան գին գիւղն Շ՚ոռոմն ի Տաթևոյ սուրբ մայրաքաղաքս ի ձեռն տեառն Յովհաննիսի Միւնեայ եպիսկոպոսի, ի ժամանակս Թագաւորիս մերոյ Վ՚ասակայ. մեր հօրն հոգւոյն կարգեցին մեզ յիշատակ զսուրբ Աստգսին օրն ամէն եկեղեցիք վանիցս պատարագ Աակի. ի Թուականիս ։այոց 475: Ըրդ թէ ոք խափանել և խախտել ջանայ զայս սուրս՝ Աստուծոյ ամենակալէ եղիցի որոշեալ, և ի սուրբ առաքելոցն և մարգարէիցն և յ318 հայրապետացն և յամենայն սրբոց նզովեալ լինի և մեր մեղացն պարտական եղիցի. ամէն:—Ես ես Վ՚ասակ Թագաւոր իմով ձեռամբս հաստատեցի և եդի զիմ կնիքս ապրուն նա կան:—Ես ես Յովհաննէս եպիսկոպոս հաստատեցի իմ ձեռին գրով և կնքեցի իմ սովորական մատանեաւս: Ա՚ի ոք իշխեսցէ խախտել զայս վճիռս. և թէ տաճիկ աւազակ լինի և յափշտակէ՝ Աստուծոյ և յիւր ֆեղերքեն որոշած լինի և յամենայն սրբոց նզովեալ և 100,000 նուր»:

ԳԼՈՒԽ ՃՕՀ

Շրջաբերական նամակ պետական ս-բժ-ի հայց խմբագիրների անունից քաղաքներին։

«Ի նորհօք ամենակալին Աստուծոյ ±օր, և զթութեամբ միածնի Որդւոյ նորա, և նախանձառութեամբ ազատիչ սուրբ ±ոգւոյն, այս գիր հրամանի և օրհնութեան է իմ՝ նուաստ ծառայի Աստուծոյ տէր Ասրգսի, և ողջմութեամբ նորին կաթողիկոսի ամենայն ±այոց, զոր գրեցաք նամակ շրջագայական առ նախագահ և յաստուածամեծար տունդ Աւետեաց, յաստուածասիրական թագաւորդ Վ՚ասակ և յաստուածապահ իշխանդ Աւագայ և Ընշոտ և առ այլ ազատսդ և յընդհանուր ժողովրդականդ ըստ եկեղեցական կարգեալ դասուցանացդ։ — որոց նախ օրհնութիւն և պահպանութիւն ժամանեսցէ՛ի տուրը Գրիգորի ամենայն, և յաստուածանելիկ սուրբ նշանէս և յայլ աստուածապատիւս սրբոցս և՛ի միջի[1], որովք փրկեալք լինիք յամենայն պատահարաց և՛ի տարաժամ դիպուածոց։

«Գիտութիւն ձեզ՝ հոգեւոր որդիք մեր, որ թէպէտ յառաջ քան զմեզ՛ի կաթողիկոսացն՝ ՛ի տէր Ներսէսէ և՛ի տէր Ընանիայէ, վասն իրիք ինչ պատճառի խախտեալ էր առաքելադիր աթոռդ Աւետեաց, և օձտեալ և բաժանեալ վիճակ դասուցանիլ այդորիկ. այլ մեք՛ի գալ ընտրեալ առնս Աստուծոյ Յովհաննէսի՝ ձեռնադրեցաք զսա ըստ առաջին աթոռակալացն մեծապատիւս Աւետեաց և հաստատեցաք վերըստին զնոյն վիճակ եկեղեցական դասուցանիլն յաթոռդ նախագահ և՛ի տունդ Աիսական՛ի Տաթև՛ի ձեռն աստուածարեալ

---

[1] Այլ օր. և յաստուածունել և յայլ աստուածփառս սրբոց և՛ի միջի։

և բազմերջանիկ սուրբ եպիսկոպոսիս և ընտրեալ մեծապատիւ ձեր՝ տէր Յովհաննէսի: և վերստին աւանդեցաք զմեզ ըզնախնական պատուին իւրեանց՝ զնաչն և զպաշտպանութեան: Եւ այս ոչ եթէ մերով ձեռներէց իշխանութեամբ, այլ զի երբեմն մեզ զմեծապատիւ նամակս և զվճիռս պայմանի՝ գրեալ ձեռամբ նախնի հայրապետացն ՚ասոյց, սկսեալ ՚ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և յորդւոց և ՚ի թոռանց իւրոց, որոց նամանկն մինչ ՚ի սուրբն Սահակ յուշարձն գրով էր գրեալ՝ և իւրաքանչիւր մեռանի կապարեայ կնքով եդեալ ՚ի վերայ, և անտի հայելէն գրով մինչ յԱնանիա, և յետ Անանիայի գրեալ մինչև ՚ի մեզ՝ բայց միայն յԱնանիայէ:

«Եւ սա էր գրեալ վասն Ա՛ահաւոյ եպիսկոպոսի, բայց ոչ բառ առ բառ կարգի: Եւ էր բովանդակն 55 նամանակ շքեղապայման թղթի իւրաքանչիւր հայրապետի կնքով, և այն երկար բանիւք և հրահասան նպովիւք գրեալ, զի մի ոք իշխեսցէ պակասեցուցանել ՚ի սահմանադրեալ վիճակէ սոցա և կամ նորաստացուցանել և բառնալ ՚ի պատուոյ և յաստիճանէ սոցա: Ա՛ասն որոյ և մեք երկուցեալ յայնպիսի առաքելական հարցն հրամանէ և պատկառեալ ՚ի ծերացեալ, բազմաժամանակեայ աթոռոյն Միհենից՝ անդրէն դարձուցաք զբոլոր սահմանն վիճակի նոցա, և վերստին հաստատեցաք զնգեալ պատիւ նոցա՝ զնաչն, զբազմականն և զգաւազանն: Եւ այս իսկ են գաւազք վիճակեալք հօտի նոցա.—Միւնիք, Ռաղք, Ըրեւեայց տունն, Ալդուաս, Ըլդուլիք, Ա՛անանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջ՛ուղայ՝ որքան Երասխայ գետն հասանէ, Ձ՛աշհօւկ, Ա՛այոց ձոր Խաչերոյ խառնէն, Գեղարքունի Գուղայ բակոմէն, Երիշաս, Ջ՛ապատաձորն և Փորակն իսկ բոլորովին. յորում բազում հակառակութիւնք լեալ էին և մեծամեծ նզովիւք ամրացուցեալ էին կաթողիկոսքն ՚ասոյց»:

«՚ասանէ և զահման Ըղուանից Ը՛ումբի խառն, Ծաղկոտ գաւառ, Ըղահէձ, ընդ որ Ըղբնոյ գետն հասանէ մինչ ՚ի

քարավաղին կամուրջն, և Հանրանդ գաւառ [1], և Հնձնջա-
կայ սահմանին Կասեձոր [2], զոր Գողթնացիքն էին առեալ,
նաև Ալանանդ և Գողթն բոլորովին. որոց թէպէտ եպիսկո-
պոս լեալ էր և կայր առաւել վայրացն, այլ ի ներքոյ Աւ-
նեանց նուաճեալ էր: Եւ արդ զուք՝ զաւառքդ Վասեան,
ամենայն մտերմութեամբ հնազանդ լերուք Աւնեանց աթո-
ռոյն և ընկալարուք զառաքեալդ ի մէնջ զեպիսկոպոսդ ձեր
զտէր Յովհաննէս՝ որպէս զհրեշտակ Աստուծոյ և զառաքեա-
կան այր և ամենայն հպատակութեամբ ծառայիցէք դմա՝ որ-
պէս Աստուծոյ: Եւ թէ որ հակառակել կամի այդմ աթո-
ռոյ և կամ խանգարման պատճառ լինի այդմ հայրապետա-
դիր սահմանի պատուոյ և վիճակի և ժառանգութեանց եկե-
ղեցւոյն՝ զանբաւ հրահրոմն անէծն ժառանգեսցէ, որ յառա-
ջին սուրբ հայրապետացն կարգեալ էր և կրկնապատիկ ի մէնջ
խակ: Եւ կատարիչք հրամանիս օրհնին յԱստուծոյ ամենա-
կալէ և ի սուրբ հայրապետացն և ի մէնջ և ի սրբոյն Գրի-
գորոյ աթոռոյս: Եւ արդ գրեցաւ գիր հրամանիս մերոյ մե-
րով ձեռամբ ի թուականիս Հայոց 455. և վասն առաւել
հաստատութեան կնքեցաք մերով սովորական մատանեաւս ի
փառս Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն»:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Գալ Խոսրէացւոց և խրճանել զիվիշխէս և այրել զվանն Ցռնեայ, և
նորոք չինութիւն եկեղեցւոյ և վանացն ի տէր Յովհաննէս:

Ընդ բազմերջանիկ եպիսկոպոսս զարդարեաց զեպիսկոպո-
սարանն՝ զմեծ նախագահ տունն Աւնեանց զՅաթիւ զանազան

---

[1] Այլ օր. և Հնձոյք գաւառ: — [2] Այլ օր. Բոդի յոր:

զարդուք և մեծամեծ սպասուք և գեղեցիկ կարգօք աստուածայնօք, և ելից բազմութեամբ կրօնատրօք, անչափ փիլիսոփայիւք և անմահն երաժշտօք և բանիբուն վարդապետօք և աստուածազգեաց ձիրնատրօք, նաև յոգնապատիկ արհեստատրօք: Եւ էր այնուհետև տեսանել զաւուրն զայն իրր զմեյրաքաղաք բազմաժողով. քանզի և շինեալ կայր բազմութիւն երդոց և ամբոխութիւն իրրև հաղար արանց, որոց միջաբեան ազօթքն բարձրացեալ էր առաջի Աստուծոյ և կայր կանգուն յիրկրէ յերկինս իրրև սիւն հրեղէն: Որոց ազօթից խաղաղացեալ էր աշխարհս Պարսկաստան յամենայն հինից թշնամեաց զամս յիսուն. և՛ ի վերուստ անպատուհաս լինէր յամենայն պատժոց և՛ ի պատահարաց և՛ ի տարաժամ դիպուածոց:

Այսպա խանդացեալ ընդ այս չարին՝ ոչ կարաց տանել, այլ մտեալ՛ ի սիրտ իմանչելական զօրագլխացն, որ՛ ի Մոկան և՛ ի Թաղիշ, ՅԱՀր և ՅԱբրաւիլ և ՅԱտրպատական՝ և գրգռեալ շարժեաց վասն հանրաւոյ երևելի տանն. որք ձայն առեալ միմեանց՝ ժողովեցան՛ ի միասին բազում զօրօք, և խորհուրդ արարին գալ գաղտագողի՛ ի վերայ վանացն, և յաւարի առնուլ զանհուն կարասիս նորա, այսինքն՝ զկահ սպասուց և սրբոբութեանց եկեղեցւոյն: Եւ յարուցեալ անցին ընդ Աղբասիա, և զանխլաբար եկեալ հասին յանկարծակի՛ ի վերայ սրբոյ ուխտին, և իրր զհուր սաստիկ հեղան՛ ի մէջ վանիցն. որք կապացին՝ Թաւիեցան՛ ի վայր՛ ի խրամն և զերծեալ փախեան. և եպիսկոպոսն տէր Յովհաննէս ոչ պատահէր՛ ի տեղին: Իսկ զայլսն ամենայն սրով ճարակ տային, և զեկեղեցին, որ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին էր՝ լցին փայտիւ և հուր հանեալ հրդեհեցին զգեղեցկայարտնար շինուածն և քանդեալ կործանեցին. կամեցան և զքանչելի սիւնն կործանել զմեծ տէր Յովհաննիսին, որ երկու ամաւ յառաջ քան զմեծ եկեղեցին էր կանգնեալ: Եւ տեսեալ հրաշս ինչ՝ ոչ իշխեցին հպիլ՝ նմանապէս և ոչ՛ ի մեծ եկեղեցին. այլ զամենայն շինուած վանացն

այրեցին և քակեալ յատակեցին զգործատեղին և զտրապէզն մարմնաւոր սեղանոյն և զամենայն յարկս կրօնատրացն և այլ բնակչացն. և զոր ինչ գտին՝ յաւարի առեալ գնացին, ուստի եկին:

Ապա լուեալ զայն եպիսկոպոսին՝ եկն ի տեղին, և տեսանէր զայնպիսի մեծամեծ ջնաս և զանհնարին ապէտան՝ անտանելի ոգով և անչափելի ողբովք լայր և կոծէր զառնապէս, և առաւել վասն կործանման եկեղեցւոյն և յանմխիթար սրբոտմութեան վարանէր. ապա Հրամանն և զպանեակն խնկել և պատուել մարտիրոսական օրինօք և փոխել ի Հանգիստ: Ձողովեալ ժամանեցին և ամենայն ազատք և զաւառականք Աիսական աշխարհին, և տէր Սմբատ և տէր Գրիգոր՝ և բազմ մխիթարանօք սփոփեցին զեպիսկոպոսն և յորդորեցին ի վերահաս շինուԹիւն տաճն՝ ինքեանք օժանդակ լինելով առ ամենայն պիտոյիւք [1]: Ոսկ ապա երանելի եպիսկոպոսն ըստ խոհեմ իմաստասիրեանն խրոյ պնդեալ իրրև այր զմիջ իւր՝ ձեռն ի գործ ածեալ սկսանի ի շինուԹիւն կործանեալ տաճարին սրբոյն Գրիգորի, զոր յառաջ Փիլեպէ իշխանն էր շինեալ՝ և կանգնէ զնա գեղեցկայարմար շինուածով. և գնէ ի նմա զգանձն հոգևոր զանհամեմատն ի յեփրս՝ զսուրբ Աստուածորչին զպատուական և զերջանիկ նշխարն միաւորելին զբնական և զմիւս բազումն յաջակողմեան առագ կամարին ի գլուխ սեանն ամփոփեալ անյայտ ի մարդկանէ, զոր յետ ժամանակաց գտեալ եղև ի նմին տեղւոջ մերոյ Տեառնասիրեանս Նոբրին կապարեայ կնքովն:

Կանգնէ և զսա կամարս ի վերոյ առագ դրան վանացն, որ հայելը ընդ արևմուտս, և շինէ ի վերոյ նորա երկու խորան յանուն սրբոյ Կարապետին ի քերեալ քուաբատակեայ քարանց. շինէ և զամենայն տունս Հաւաքակաց և զյարկս կրօնատրաց

---

[1] Ընդ օր. Խոյեան օրհնալիւք սիրելոյն պիտոյից.

յոյժ վայելուչ քան զառաջինն՝ գայլեանն և գքանդեանն յայլազգեացն. շինէ և յետոյ գաւիթս սրբատաշով ՚ի հարաւոյ դրան մեծ եկեղեցւոյն սրահս յոյժ յարմարս ՚ի հանգիստ եղբայրութեանն, և ժողովեալ զգլուխս եղբարան պայծառաւոյց քան զառաջինն. շինէ և խորան մի ՚ի վերայ փոքր դրանն, ընդ որ մտանեն ՚ի գաւիթ եկեղեցւոյն: Իշխան մի՝ Վչին անուն, որդի Խաղբակայ, տայ յիւր հայրենի ժառանգութեանց գԽոտա գիւղն և գԽոտապետոյ մեծ այգին, և ՚ի Վ_ ժանիս ըզՆօտակիկ, որ է տեղն բազում անդաստանաց՝ վասն իւր հոգւոյն ՚ի տէր Յովհաննէս և ՚ի սուրբ նշանն: Վրէ ինքեան կրատակ վճռի և խնդրէ առ յաջմէ հինգ օր պատարագ յՀղեսական պահոց շաբաթի օրն, և չարաչար և մեծամեծ նզովիւք փակէ՝ ոչ ումեք յարիշատակել զայն հոգեցատուր ՚ի սուրբ եկեղեցւոյն: Եւ գնէ զտէր Յովհաննիսի կնիքն վաւերական ՚ի վերայ: — Եւ ապա մի՝ որ իշխեսցէ այսմ հակառակել և կամ զնորա յիշատակն խափանել. ապա թէ ոչ՝ նզովս առցէ յԱստուծոյ և ՚ի սուրբ հայրապետացդ՝ ՚ի թուիս ՌՀայոց 495:

Վարձեալ և եղջանիկ հպիսկոպոսն տէր Յովհաննէս կազմէ ՚ի համակ ոսկւոյ զսկաւառնն բնաւից զահարկու և զմեծատաքանչ սուրբ նշանն՝ զտիեզերահռչակ և զաստուածանկարիկ սուրբ խաչն, որ էր իրր արեգակն ջահատուրեալ յաշխարհիս Աիսական և հրահոսան ճառագայթիւքն հիացուցանէր զամենայն մարդիկ: Խորհրդապէս յօրինուածովք՝ զարդարեալ զնա եղեալ ՚ի վերայ ՚ի պատուական քարանց թուով 24՝ ընդելուզեալ մարգարտացեա գեղեցկութեամբ եղեալ ՚ի նմա զկենսաբաշխն արարածոց՝ զքրիստոս և զաստուածընկալ սուրբ փայան, յոյոյ վերայ պնդեալ էր բեհեզ Ղանն Ընտուած. և ունէր յինքըն յայտնի տեսողաց զկաթուած արեանն Յիսուսի Քրիստոսի, յորմէ կանէին զօրութիւնք և նշանք ահաւորք: Եւ

---

[1] Ա՛չ օր. և խորհրդապէս յօրինուածովք:

էր այս փայտ խաչանիշ ձևիսալ. և կայր ի նկարդ միջի ականն որ էր ի սպիտակափայլ բիւրեղանման յակինդայ, ընդ որով Թափանց երևէր փրկաւէտ սուրբ նշանն: Եւ նա գրել փորձառածով ի Թիկանց կուսէ յիշատակ բանի զայս.—«Տնառն Յովհաննիսի Աիւնեաց եպիսկոպոսի է սուրբ նշանս.ի Թուականին 476. կազմեալ զսա կանգնէ ի տանն Աիսական առ ի յոյս հառատացելոց և ի փրկութիւն բոլոր վիճակելոցս»:

Եւ արդ այսպիսի մեծահանդէս բանիւք և երևելի գործով պայծառացուցեալ զառնն զայն բազմերջանիկ և յոգևոր նեան եպիսկոպոսս այս տէր Յովհաննէս՝ յետ 50 ամի մեռ բարձրութեան իւրոյ, ի Թուականին 507 գնայ զկնի կոչ զնն ի քաղաքն անդրանկաց Հերուսաղէմի վերին, ուր ժողովք սրբոցն են և քաղաքապետ Պրիստոս, զի ըստ մեծամատակ իւրոց արժանացն և ձգանցն առնու զվարձն հատարատոս և բիւրապատիկս: Եւ դուք՝ աստուածարեալ հայրապետք և սրբազան եղբարք, որք յաջորդիք ի սուրբ յաթոռս և լինիք ժառանգաւորք տանս, անմոռանալի և անխափան պարտիք կատարել զյիշատակ բազմերախտ սուրբ հօրս հանապազ աղօթիւք և կենդանարար խորհրդեամբն: Եւ աղօթիւք և խընդրուածովք սորա և ամենայն սուրբ հայրապետացս դուք և մեք ի միասին փրկեալ լինջուք յամենայն վտանգաւոր կրից հոգւոյ և մարմնոյ: Եւ անխափանելի ճեռագէ սուրբ տունս և ամենայն վիճակեալք սորա, զորոյ զամէնն սուրբքն և սիրելիքն Աստուծոյ առասցեն:

ԳԼՈՒԽ ՀՐ.

Վասն բռնաւորացն Սելենեցւոց:

Արդ առաջին թագաւորեաց ի Աիսական աշխարհիս սա բին և քաջն, հզօր և բարեպաշտ արքայն Սմբատ՝ որդի Աա

հակայ եղբօր Ամբատայ, որք էին որդիք բարեպաշտին Աշոտայ եղբօր մեծին Վ֊ասակայ՝ որ Իշխանիկ կոչէր. և սոքա որդիք երանելոյն Փիլիպէի՝ եղբօր Սահակայ, որ ի Դուբին սպանաւ ի պատերազմին Հաւղայ ամիրային, որդիք Վ֊ասակայ մեծ նահապետին Աբունեաց: Իսկ յետ Ամբատայ թագաւորէ որդի նորին Վ֊ասակ [1] այր քաղցր և առատաձեռն և յաջողած յաւէնայն գործս, որ առեալ էր զքոյր իւր կին Աշոտայ [2] ի նոյն Աբասեան տոհմէ, որ էր իշխանաց իշխան ամենայն Թագաւորութեանս. և ունէր երկուս որդիս՝ զԱմբատ և զԳրիգոր: Ապա վախճանի Վ֊ասակ թագաւոր և դնի ընդ հօր իւրում Ամբատայ: Եւ զի ոչ ունէր ժառանգ տէրութեանն՝ թագաւորեցուցանեն զԱմբատ որդի Աշոտայ և կարգեն ի տեղի հօր նորա [3] զԳրիգոր եղբայր սորա՝ իշխան իշխանաց Աբասեան աշխարհին: Այլ Ամբատ առաւել էր քաղցր և հեզահամբոյր և ահարկու յաւէնայն շրջակայ ազգաց, որ և կալեալ զթագաւորութիւնն ամն ինչ՝ վախճանի և դնի ի Յովհաննու վանս առ դրան առաքելին: Եւ առնու զթագաւորութիւնն եղբայր նորա Գրիգոր [4], — և սոքա երկոքեան որդիք մեծին Աշոտայ, որ առաջ Աշոտեանք կոչեն:

Իսկ Գրիգոր առեալ էր իւր կին զաւէնօրհնեալ և զմեծահաւատ բարեպաշտուհին Ո֊ահանդուխտ ի տանէն Ընձուանից՝ դուստր նոցին Թագաւորացն մեծին Աւագայի: Եւ էին անզաւակ, և կամէր ունել Թագաւորութիւն նոցա անժառանգ. ապա խորհեալ ի միասին ընդ եղեռնան՝ ածեն յԸնձուանից զԱնկեղիրիմ՝ եղբայր նորին Ո֊ահանդխտոյ Թագաւորացն մնեալ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ՝ հանճարեղ և խնամառուն, նաև երկիւղած յԱստուծոյ: Եւ

---

[1] ԱյԼ օր. արքն Նարսեն Վ֊ասակ: — [2] ԱյԼ օր. որ գտեալ էր զքոյրն Ին Ընձոյ: — [3] ԱյԼ օր. և ոչ առնէր խոտանէ ինքեանն, վասն որոյ ինքեանցն զՄ֊բատ՝ արքն Ընձոյ և խորէն ի տեղի հօր նորա: — [4] ԱյԼ օր. և առնու զինքեանն նորա եղբայր նոր Գրիգոր:

սահման զսա ժառանգ իւրեանց թագաւորութեանն ամն ինչ. և վախճանի և սա (Գրիգոր)։

Յայնմ ժամանակի էր բարձրացեալ և զօրացեալ տէրութիւնն Տաճկաց և ամենայն աշխարհ ի նկարագ հարկի նոցա նուաճեալ կայր. վասն որոյ և յոլով գաւառս շորթեալ հանին ի Պատական աշխարհէս ի ձեռաց բնիկ տէրանցն։ Եւ էր յաթոռ սուլթանութեանն Մելիք շահն՝ այր բարեբարոյ և խաղաղասէր, յորմէ մեծարեալ լինէր Անդրկովիմ ի պատուս թագաւորութեան, և յոյժ հրաւիրէ փառաւք թագաւորեաց ի տանս Լատից, ընդարձակեաց զամենայն տահմանս տէրութեան իւրոյ, և բազում ամաց վարեաց զթագաւորութիւնն քաղցր և խաղաղական կենաւք մինչև ի մահ Մելիք սուլթանին, որ մեռաւ ի 541 թուականին։ Այսպէս սկսաւ քայքայիլ խաղաղութիւնն և ապրականիլ ամենայն շինութիւնք աշխարհին, զոր յիւրում տեղոջ ասացից։ Եւ էին Անդրկովկասեայ երկիք որդիք՝ Գրիգոր, Ամբատ և Աւագայ, և դուստր մի։ Բայց մահ Անդրկովկասեայ եղև այսպիսի պատճառաւ. զի յետ Մելիք շահին ամենայն որ գլուխ ի վիր առնել՝ եղև անձնիշխան և զինուառքք եղեալ՝ ո որ որ կարողանայր, առնէր զերկիր զինուխմամբ և յափշտակութեամբ։ Սակս որոյ խանդացեալ անիծեալ Խամայէլականացն ընդ զեղեցիկ և ամուր թագաւորութիւնս Լատից, զոր խոչ մեծ համարէին ինքեանց, եկեալ ամիրայն Պարտաւայ և Ոստանայ և Գանձակայ՝ բազում զօրօք գայ ի պատերազմ ընդ Անդրկովկասեայ, ընդ որում էր Հայոց իշխանն Գրիգոր Պալիրատեան։ Խմացեալ զայն Անդրկովկասեայ՝ ամրացոյց զամենայն աշխարհն յանառիկ ամուրս. և եկեալ ոտպս անիծեալ ամիրային և տեսեալ, զի անհնարին էր ի մտրդկանէ՝ յուզարկէ զԳրիգոր իշխանն Ընեցի [1] — որ

[1] Ընդ օր. և ամրացուցեալ զամենայն աշխարհն յանառիկ ամուրս. եկեալ ոտպս անիծեալ ամիրային և տեսեալ, զի անհնարին էր ի մտրդկանէ՝ յուզարկէ զԳրիգոր իշխանն Ընեցի։

պատճառաւ ինչ կայր առ նմա — առ Անկղկրիմ ալբայն և ասէ. «երդմամբ հաւանեցո զնա զալ առ իս և առնելիք ընդ միմեանս սէր և մեծամեծ պարգեւաք արձակեմ զնա. ապա թէ ոչ հաւանեցուցանես՝ և զքոյդ գլուխ ասեն հատանեմ»: Գնաց գնաց ապա Գրիգորին այն զչար ճանապարհն և մտեալ առ Անկղկրիմ՝ մեծամեծ երդմամբ հաւանեցուցանէ զնա գալ առ ամիրային, որք և եկին՝ ի միասին: Իսկ տեսեալ զնա քաթոյն գազանին՝ առեաց ուխտին, և յարձակեալ մեռուցանեաք՝ ի վերայ՝ հասան զթագաւորն. և ինքն անց գնաց յաշխարհն իւր:

Ընդ այսպէս շինչաւ ճրագն քրիստոնէից, որ կայր մնացեալ յամուրն Կաղաց: Եւ եկեալ մեծամեծացն և որդւոցն [1] կոծ մեծ արարին՝ ի վերայ և բարձեալ տապան՝ ի տուրբ ուխտն Վ. ահանու և անդ եդին՝ ի շիրմի ընդ այլ թագաւորան: Եւ յետ նորա էառ զաէրութիւն նորա որդի իւր Գրիգոր՝ որ լաւ և ընդ աղօտ թագաւորեալ: Կայր այս Անկղկրիմ և քոյրն իւր Ե. ահանդուխտ բազում արարին ազդիւնս և շինուածս երևելիս՝ ի վանսն Յովհաննու, նաև բազում պարգեւս և ժառանգութիւնս ընծայեցին՝ ի տուրբ մայրաքաղաք աթոռն՝ ի Տաթև, զոր և կարգեցիկ ասեմ:

ԳԼՈՒԽ ԽԹ.

Վասն եպիսկոպոսին Սիւնեաց պետուն Գրիգորի, որ էին պետուն Ցովհաննէ-ի և գործոց նորին:

Իրրև կատարեցաւ երանելի մեծապատիւ Սիւնեաց տէր Յովհաննէս՝ ապա աստուածապատակ թագաւորն Ամբատ ընտ-

---

[1] Այլ օր. զոր և նիւթ գեղեցկեցն և արքունի խոր:

լէ այլ մի պատշաճաւոր՝ վիպասել յամենեցունց, զարդարեալ ամենայն առաքինութեամբ և լի գիտութեամբ՝ Գրիգոր անուն, յուզարկէ առ կաթողիկոսն Հայոց ԱՇնի և տայ ձեռնադրել զնա եպիսկոպոս Աիւնեաց. որ եկեալ՝ բազում ջանիւ, մեծաւատակ առաքինութեամբ քաղաքավարէր ի մարմնի, տուեալ զանձն օրինակ ամենայն բարեաց, ասեալ ձիգ ժամանակաք յամս 58 [1]: Սա արարեալ զարմանալի շինուածս եպիսկոպոսարանին Տաթև, զի կանգնեաց կամարս ի վերայ դրան վանացն, որ հայէր ընդ արևելս, և մերձ նմին տուն սրբոյ բաշէն. և ի վերայ սոցա եկեղեցի մի գմբէթաւոր գեղեցկայարմար յանուն սրբոյ Աստուածածնին: Եւ էր նա իբր դիտանոց բարձր որ հայէր ի վերայ վանիցն, և ի չորեսին կողմանցն յօրինեալ գաւիթս. բայց յառաջն կողմն բարձրարկեալ սեամբք շինէր սրահս վայելուչս իբր քաղցր հովանոց և զրկ հնչեան արձան յիշատակի ի վերայ եկեղեցւոյն և հաստատէ քառատունք մի [2] առ յամէ կատարել անխափան ի յիշատակ իւր:

Սա առնոյր և զՈղորթաքարն Դորեաց բաժինն ի Գվինէ՝ որդւոյ Խաղբակայ և հաստատէր նզովիւք ի սուրբ եկեղեցին: Ի ձեռն սորա աւանդեաց երանելի և սուրբ Թադեւսին Հ՚ա հանդուխտ և բարեպաշտ Թագաւորն Աենեքերիմ եղբայր Նորին զԱրիան, առն որ է մերձ և սահմանակից սրբոյ և մեծի առաքելոյն Տաթևեայ. և գրեն զվճիռ պայմանին ահագին և սքանչելի նզովիւք՝ ինքն իսկ Թագաւորն իւրով ձեռամբ, որ էր այսպէս. — «Յամս կալոյ հզօրին Հիսուսի՝ ես Աենեքերիմ Թագաւոր ԱՇնոյ կացեալ ի Վրաստան և Տաղաց աշխարհիս, ընթերցեալ զառաջին հայրապետացն և զիշխանացն հաստատագիծ նամակ՝ կամեցաք վերստին նորոգել և անդրէն գարձուցանել. և գրեցաք զայս վճիռ պայմանի իմ սրտի յօժարու-

---

[1] Այլ օր. գնե սա 58: — [2] Այլ օր. տասան 4:

թեամբ և հրամանատ բարեպաշտ և քրիստոսապզեաց քերցս իմոց՝ Թադեւսի՛ոյս Ը՛ահանդխտոյ և սրբատուն օրիորդիս Աատայիս, որք յբին զերկրատոր փառս աշխարհիս և զհետ եւ բանաւէտ ձայնին Աբրահամի ընթացան ձգնազգեստ առաքինութեամբ։ Եւ նոտ զԱբիա իւր ամենայն սահմանօքն շուրջանակի՝ հողով և ջրով և արտավարօք և զամենայն որ ինչ իւրն էր, ի Տաթեւոյ սուրբ եկեղեցիքն՝ ի հայրապետանիստ մայրաքաղաքն, ի սուրբ Ասաքեալքն և ի սուրբ Գրիգորն, ի հայրապետութեան տեառն Գրիգորիոյ՝ Աիւնեաց եպիսկոպոսի և իւրեանն որդիացելոյ տեառն Ստեփաննոսի։ Եւտու անհաշիւ, անհամրիւղ, առանց զրաց զրկելոյ, առանց զուրուք յափշտակելոյ, առանց ումեք տրտնջելոյ, քանզի մեր սեփհական էր և ոչ այլ ումեք, զոր ընծայեցի սուրբ ուխտիդ Տաթեւոյ յաղագս փրկութեան հոգւոյ իմոյ և քաւութեան մեղաց իմոց և հարազատաց իմոց քերց և որդեկաց իմոց կենաց և փրկութեան՝ Գրիգորիոյ, Ամբառայ և Ակադայի և մօր իւրեանց և քեռն։ Եւ կարգեցի քառատունք մի, որ ամ յամէ կատարեն ի սուրբ եկեղեցիքն ի տէրունի քառատունքն՝ զքան օրն թադաւորին Գրիգորիոյ՝ որդւոյ Աշոտոյ, և զքան օրն իմ մօրն Ասխիայ՝ որչափ մեք կենդանի եմք. և յետ եւ լեցին մերոց՝ զքան օրն իմ քեռն Ը՛ահանդխտոյ առնեն, և զքան օրն՝ ինձ Անեկերիմայ։— Ընդ եթէ որ ընդ հակառակս եղանէ, կամ խանգարել մտածէ, կամ յափշտակել յանդգնի կամ քսէ ումեք, կամ ի բանսարկութիւն մտաբերէ շորթել զմեր որդիսնոդ ի սուրբ եկեղեցեացդ, այնպիսին մի գայէ ողորմութիւն Աստուծոյ՝ մի յայսմ աշխարհի և մի ի հանդերձելումն. այլ անէծք յափշտակողացն եկեսցէ ի վերայ նորա, և մեղք մեզսապարտիցն և նզովք չարագործացն, որպէս Պայենին և Յուդային և Երիսային և Հոգևնարտին Ա՛ակեդոնին և Ալատոբի երկաբնակին և Լ՛ևոնի հոռմայեցւոյն և որ այլ նմանիք նոցա. և հաստատիչքն օրհնեալ եղիցին Աս-

տուծոյ ամենակալէն և յամենայն սրբոց։ Գրեցաւ իմով ձե-
ռամբս Աւետիկ Վենկիերիմայ՝ որդւոյ Աւագայի՝ ի կամս Աստուծոյ»։ —
Եւս Շահանդուխտ վկայ եմ իմ եղբօրս Աւետիկ Վենկիերիմայ հաս-
տատուն ալարաճիս և վճռիս, որ հաստն՝ ի Տաթեւոյ սուրբ
առաքեալքն. Աստուած շնորհատուր ալարացէ սուրբ եկեղեցիա-
ցըն. որ խանգարել մտածէ՝ զգրեալ անէծքն Ժառանգիացէ և
հատաստիչքն օրհնեալ եղիցին։ — Եւս Գրիգոր Աւետիկ Վենկիերիմայ
որդիս ու իմ եղբարքս վկայ եմք այս անտուտ և հաստատուն
արոյս և հրամանացս՝ ի թուիս 534՝ ի կամն ողորմութեան բա-
րերարին Հոգի Աստուծոյ և օձելոյ նորա Յիսուսի բանին բարձ-
րելոյ և կենդանարար սուրբ Հոգւոյն։ — Եւս Գրիգոր ամենա-
նուաստ ծառայ Քրիստոսի և ողորմութեամբ նորին եպիսկո-
պոս Աիւնեաց և որդիացեալս իմ՝ Ստեփաննոս, ընկալաք զըն-
ծայս յԱստուծոյ օծեալ և պսակեալ թագաւորէս Վենկիերի-
մայ՝ և զհոգեցատուրս, զորս արարին անխախտելի և հաստա-
տուն վճռաւ՝ ի ժայռաքաղաքս Տաթեւ՝ ի սուրբ Գրիգորս և
՝ի կենտակիր սուրբ նշանս, յիւրմանոյ արիան զինք զաւատացս
՝ի Ծողուկ նահանգի Քրիստոս աւան. և կարգեցին յիշատակ
իւրեանց, զոր կատարեն՝ ի սուրբ եկեղեցիքդ ամ յամէ անխա-
փան ըստ գրելոցդ իւրեանց՝ ՝ի կեանս իւրեանց և զկնի հան-
գըստեան իւրեանց ՝ի Քրիստոս։ Եւ արդ եթէ մեք և եթէ
որ զկնի մեր յաջորդիւն՝ ի սուրբ յաթոռս հայրապետք, և կամ
ասանս այլ աւագնորդք վանական, աւագ երէց, եկեղեցական
և այլ կարգաւորք՝ յիշեսջ քառանոցդ Ծուքանան, և զինչ
իցէ պատճառս ա՝ միով աւուրբ պակասուցին առնեն՝ Թող Թէ
այլ աւելորդ խափանեն, անիծեալ լիցին ՝ի Քրիստոսէ Աս-
տուծոյ և ջնջեսցին անուանք նոցա ՝ի դպրութենէ կենաց, և
մի կատարեսցի յիշատակ նոցա աւագին սուրբ սեղանոյ զինանա-
նէն Քրիստոսի և անէծողութիւն լիցի յաղագս դատաւորին

---

[1] Աշխ. օր. և գրչ.-լիակատար՝ Սիրուհեյ։

յանկարծառ առնելին։ Եւ որ զԱստուծոյ պատկեալ թագաւորին արարածդ և զհոգեցատուրդ խափանել ջանայ և յափըշտակել ՚ի սուրբ առաքելոցդ և ՚ի սուրբ նշանէդ, եթէ ՚ի մեծամեծաց և եթէ ՚ի փոքունց, եթէ յառագաց, եթէ յաղտաց, եթէ յօտարաց, եթէ ՚ի ծանօթիւ՝ զինչ և իցէ պատճառաւ ընդ հակառակս եղանել և խափանման և յափշտակելոյ պատճառ կամի ինչ և յափշտակէ՝ անիծեալ լիցի անձն այն ՚ի բերանոյն՝ յորմէ օձն անիծաւ. եկեսցեն ՚ի վերայ նորա անէծք ցառագիւք և օրհնութիւնքն յանէծք դարձցին [1]. և յամենայն երկնայինն և յիրկրաւոր դասակարգութեանց սիրոյ զայ Երրորդութեանն անիծեալ լիցին հոգիք նոցա, զերբ կեանքն և զժառանգութիւնն մի՛ վայելեսցէ, զարդի կեանքս ցառագին կառարեսցէ և յիւր վախճանի իւրոյ հոգն օրհնութեան մի՛ բառնայի նմա. իսկ հաստատիչքն օրհնին յԱստուծոյ և յամենայն սրբոց իւրոց»։

Տեսեալ զայս բարեպաշտ և մեծ իշխանին Հայոց Գրիգորոյ յաղագսայն Անձևացւոյն, շնորհէ և նա զգիրսն Նորաշէնիկ և զՀուտաի վանս, որ ՚ի Կոմսական գաւառի ՚ի սուրբ եկեղեցին, որք և վաղ ժամանակաք առեալ էին ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն Տարեւոյ. — զՆորաշէնիկ առեալ էր Հրահատ իշխան ՚ի տէր Գառնիէ, և զՀուտաի վանս առեալ էին յաւուրս Յակոբայ վերապատմողի. վասն ոյոյ և սա գործեցանէ անդրէն ՚ի ձեռն տեառն Գրիգորի։ Եւ գրէ կտակ հաստատուն վճռի առաջի թագաւորին, որ էր այսպէս. — «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանայ՝ Գրիգորկայ որդւոյ, այս օրս որ Աստուած ինձ յաջողութիւն եղեւ և ես զիմ բերդն ՚ի Աշտաբանեն ետի և զԱղուանական գաւառ իմ արեւմտից յամիրայ Փառվնոյ Թաւիսցի, զՆորաշէնիկ և զՀուտաի վանս այլ ՚ի Տարեւոյ սուրբ նշանս գործեցի իմ

---

[1] Այլ օր. և օրհնութիւնն անէծք դարձցին։

թագաւորիս Անգլիոյ հրամանաւ՝ ի ժամանակս առաջաւորդութեան եւ հոգեւոր տեառն Գրիգորիոսի՝ Արշեւոց եպիսկոպոսի, եւ ամէն ազատացս առաջի տուի զայս՝ սոցա ամենեցուն վկայութեամբ ազատ յոլքունէ հարկաց. որ չկայ՝ ի հետ այս գիւղօրէիցս ումեք հաշիւ կամ շահ եւ կամ տակուբեր. եւ մի՛ ոք իշխեսցէ այլ կալ անա հակառակ, կամ հանիտալ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան՝ կամ՝ ի մերոց, կամ յօտարաց, կամ յաւազաց, կամ՝ ի ձեռնաւորաց: Ապա թէ յանդգնին՝ անէծք և հայհոյութիւնք և մեղք և հերձուածք առնեսցին չարագործացն՝ ի վերայ նորա եկեսցեն և զուր կեանքն մի վայելեսցէ և՝ ի սուրբ Երրորդութենէն որոշեալ եղիցի: Լակ հաստատիչքն օրհնեալ լիցին: — Երթէ տաճիկ աւազութիւն փախի և յափշտակիլ խորհի՝ յիւր հաւատէն պէտք եղիցի և յիւրմէ ֆեոդբուրն թողեալ [1] և անարգեալ լիցի, 1000 դահեկան՝ ի վերայ նորա ճնասցէ: — Էս Անգլիոյս թագաւոր իմ ձեռամս հաստատեցի զ՚անանայ վճիռս, որ զայս չենարկես որ՝ ի Տաճկաց թափեալ էր իւր արեամբն, այլ՝ ի Տաճիկ երեւ իմ հրամանաւ. և ես իմ որդւովքս և ազատովքս վկայ եմ, որ որչափ այս եկեղեցիքս՝ ի հաստատութեան կան՝ մի՛ իշխեսցէ յանդգնիլ և ձեռնարկիլ ոք վասն յափշտակելոյ զայս տուրս. և ես ետու ընդ ամին և զկոշտատայ տասին: Եղիզ թէ ոք հակառակի այլ՝ զվերոյգրեալ անէծսդ ժառանգեսցէ: — Էս ես Ոահիքս վկայ եմ այս արտարուածիս, զոր մի՛ ոք իշխեսցէ հակառակ կալ: — ՚ի Թուականիս ՆՀԴ 535»:

Յետ այսր գարձեալ զայ թագաւորն ՚ի տուրբ ուխտն առ հոգեւոր տէրն Գրիգոր՝ ի տես և յաղօթս: Էր էր գիւղն Նարաժիս և Ըռէրդկանէրնէչն և Յուրայ գետ յափշտակած ՚ի տուրբ եկեղեցւոյն և առ ազատացն Անգլիոյ մեծ իշխանին Ոահիւանայ և միւս ազատին Գէորգեայ. վասն որոյ ծանուցա-

---

[1] Ընդ օր. և վիր ֆեոդբուրն Խոփ.

նէ եպիսկոպան թագաւորին զգրկանքն եկեղեցւոյն, և առաջի արկանէ գՀին Նամականին որ առեալ էր առաջին թագաւորացն անխախտ պայմանաւ. զոր ընթերցեալ նորին՝ զարհուրեցաւ ի սոսկալի նզովից։ Օ՜ի երիք անգամ հաստատած էին այս գիւղօրայքս ի սուրբ աթոռն.— առաջին՝ ի Գրմ բառայ թագաւորէ ՚այոց, և յԱշոտոյ մեծ իշխանէն Միւնեաց և Ռշտունեաց գահակին էր տէր Գաւթի.— երկրորդ՝ ի Սմբատայ թագաւորէ Միւնեաց որդւոյ Սահակայ, հաստատեցաւ ի ձեռն տեառն Վահանայ Քաղցրոյ և ի Վասակայ որդւոյ նորին.— երրորդ՝ ՚ասան ոմն իշխան որդի Կորայ քրդին՝ յազատաց ՚այոց և Վրաց, որդւոյ մեծին Սմբատայ՝ Միւնեաց գահերէց իշխանի, գնոյ առեալ էր զգիւղն ՚արժիս և ի հայրենեաց իւրոց փոխան առեալ։ Սա հրամանաւ մեծին Վասակայ և որդւոց իւրոց՝ Սմբատայ և Գագկայ, տայ զայս գիւղս ազատ յամենայն հարկաց ի վանսն Տաթեւոյ։ Եւ զրեն կտակ մեծամեծ դաշամբք և հաստատեն նմա մի քառասունք ամ յամէ ՚ի Տայտնութեանն։

Ընդ այս ամենայն ընթերցեալ և ծանուցեալ բարեպաշտ թագաւորին Աննիքերիմայ՝ ըստ հաւատոյ երկիւղին հրամայէ զարձուցանել անդրէն իւրոց իշխանացն. և զրեն կտակ յաւիտենական անխախտ պայմանաւ ինքն և իշխանք իւր այսպէս.— «Ընդ այս ձեռագիր է իմ Աննիքերիմայ թագաւորի որդւոյ Աւագայի, որ մինչ Ընտուած անյիշաչար եղև առ իս և ողորմեցաւ ինձ և կրկին հաստատեաց ի յիս գՀայրենիք տէրութիւն իշխանութեան իմոյ, որ խախտեալ էր ՚ի ձեռն Խամայէլականացն՝ ես ընթերցայ զառաջնոցն զգրեալսն և զայսիրշտակեալ ժառանգութիւնսն սուրբ եկեղեցւոյս և երկնահրաշ աթոռոյս Աւետեաց, զարձուցի անդրէն ՚ի մայրաքաղաքս Տաթեւ և կրկին հաստատեցի իմով ձեռամբս անխախտ Հայրենիք տանս զ՚արժիս, զԵրդկաներիչն, զՁուրայ գետ. և էր այս չորրորդ անգամ հաստատութիւն։ Եւ առանձին ըզ-

տոսա իմ ձեռագրովս յաստուածարեալ և՛ի սուրբ հայրապետս մեր տէր Գրիգոր։ Եւ արդ չէ ոք կարող զնմ դիմդ և զհաստատեալ պայմանդ՝ ի սուրբ առաքելոցդ խախտել կամ յափշտակել յայսմհետ, մինչև յաւիտեան և կամ խանգարմանն պատճառ լինել։ Եւ թէ յանդգնի ոք և մտածէ զայդ՝ Աստուծոյ և՛ի սուրբ առաքելոցն նզովեալ եղիցի, և Յուդայի և Արիոսի մանակից լինի և ընդ աստանայի դատեսցի և զնա կեանքն մի վայելեսցէ։ Եւ թէ տաճիկ իշխանութիւն խոփի և խլել և խեռալ և ապականել խորհի՝ նա Աստուծոյն, որ արար զերկինս և զերկիր, նզովեալ եղիցի և յամենայն ընտրեալ սրբոց նորա. և՛ի մարգարէէ, զոր ՚ԵՀՓՒ կոչեն՝ ՚ԻՀՀ և անիծեալ լեսցի և յիւր օրէնադիր Մահմետէն որոշած և ՚ՆՒՒ եղիցի յապգս։ Գրեցաւ՝ ի թուականիս ՆԼՈ յոյ 540։ — Յանուն Աստուծոյ եւ ես Մահման և ես Գէորգ հրամանաւ աստուածապահ թագաւորիս մերոյ Աենեքերիմայ դարձուցաք զՆարժիս, զԱրդկաներիչն, զՅուրայ գետ՝ ի Տաթևոյ սուրբ առաքելոցն որ զրկեալ էին յաւերման և՛ի նեղ ժամանակի, և այժմ կայր առ մեզ։ Եւ արդ ոչ մեծոց և ոչ ումեք չկայ իշխանութիւն և հաշիւ հետ այս շինուրէիցս՝ ոչ չարի, ոչ Տաճկաց հարկի, ոչ բերդաշարի, ոչ գունդգահի և ոչ այլ իրաց. այլ միայն սուրբ խաչիս և հոգևոր տեառնս է իշխանութիւն։ Եւ թէ ոք յանդգնի՝ զմեզ բոյզրեալ նզովիչ ժառանգեսցէ։ — Եւ Մահիքս վկայ եմ Թագաւորիս անաւատ հրամանացս և հաստատութեանս, և չմոռանայ ոք խանգարման պատճառ լինել, այլ հաստատ է կամեցն Աստուծոյ»։

Դարձեալ և այլ բազում ժառանգութիւնս եառն՝ի սուրբ ուխտս, զոր աւելորդ համարիցաք գրել առաս։ Եւտուն և այդի մի ևս՝ ի Մեղրոյ ձորի՝ զերդ Աւագանց այգին, Ընտահալ տուն տէր Մեղրոյ բերդին՝ ի թուականին 532։ Եւտուն և գեղ՝ ի Խարկուշատի, եառն և գՅոզմանի գիւղ՝ ի Գ՚ա-

նանդայ ձորին։ Նա և իշխանն Ըշտա զԱմբրատաբար ի սուրբ նշանն, և գրէ կտակ այսպէս.—«Յանուն Աստուծոյ ես Ըշտա իշխան՝ որդի Վարազնայ, եառ զիմ հայրենի ժառանգութիւնն զԱմբրատաբար ի սուրբ նշանն ի Տաթև ի ձեռն տեառն Գրիգորոյ Սիւնեաց եպիսկոպոսի՝ հրամանաւ աստուածատապակ թագաւորին Աւնեքերիմայ, և կարգեցին մեզ պատարագ անխափան զօր Համբարձման Տեառն։ Եւ արդ չունի ոք հրաման խափանել զայս, եթէ հակառակի և կամ չար և հարկ ի վիպայ դնէ՝ ի սուրբ Երրորդութենէն նզովեալ լիցի և յաւիտեան սրբոց նզովս, և մնան ընդ Յուդայի առցէ։ Եւ թէ տաճիկ աւազ փոխի և հանել ջանայ՝ հարիւր հազար դահեկան լինի և յիւր հաւատէն ապիշաւ եղիցի։ Ի թուին ՆԼԸ։ Ստուած ընդհանուր արասցէ։—Եւ Աւնեքերիմ թագաւոր և իմ որդիքս՝ Գրիգոր և Ամբատ, հաստատեցաք»։

Զմանատիկս և այլ բազումս, որոց տրիտուր փոխարինին հաղարապատիկ և բիւրապատիկ լիցի յաւիտեանս Տեառնէն յանանցական վայելմանն և յանզրաւական յուրախութեան։

ԳԼՈՒԽ ԿԱ

Պարծանս առքման կապանին և առման քերդիցն, և քնարկինգ ապառաժին Խաչաւորութեանն Քրիստոսի, և վանիցն կոտորածի Սիւնեաց աշխարհի։

Յամին, յորում էր Թուականն ՆԽԲ՝ եղև սկիզբն աւերածոյ Կապան գաւառի և ամուր աշխարհին Խաղաց և ապաւէնոյ տէրութեան նոցա թագաւորաց և իշխանաց, զոր լուաք և ընթերցաք ի Թղթոյն տեառն Սահմանեոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, զոր դրեալ էր ի հոյակապ քաղաքն Ընի ի ննդրոյ սուրբ քահանային Մխիթարայ՝ առաջ երեցու քաղաքին և փոխակալ սուրբ կաթողիկէին։ Եւ էր պատճառ

մեծի կատարածին այսպէս։ Գնայ Անաքերիմ թագաւորն ՚ի տեսութիւն Արկիքշահ սուլթանին ՚ի մայրաքաղաքն Պարսից Ասպահան. և հանդիպեալ նմա՝ մեծարեալ լինէր բարձրագոյն փառաք և նստուցեալ ՚ի գլուխ բազմականին։ Եւ էր ծառայ մի սուլթանին յոյժ սիրելեալ, որ առաջի իւր բաժակ մատուցանէր՝ Զորթմանն անուն։ Սա յոյժ նեղէր զինեաւ ՚ի ժամ ձաշոյն զթագաւորն. և թէպէտ բազում պարգեւս խոստանայր՝ ոչ անապայր. ապա խոստանայր տալ Զորթմանին զդուստր իւր, վասն որոյ ըստ իւրեանց սովորութեանն հանգոյց գնէ ՚ի վերայ գօտւոյն Անաքերիմայ որպէս թէ նշան լինի այնմ բանի և ասրեալ ցուցանէր սուլթանին։ Եւ այնուհետև զկատակեալ բանսն պահէր ՚ի սրտին խորամանկութեամբ ՚ի ծնունդս ապականութեան։ Իսկ յորժամ եհաս ՚ի պատիւ և ՚ի կարգ իշխանութեան՝ խնդրէր ՚ի Անաքերիմայ զնստուցեալ աղջիկն. և նորա խիստ բանիւք պատասխանեալ՝ անարգէր զնա ծաղր առնելով զինդիրն։ Յայնժամ իրրև գիտաց Զորթմանն զկամս թագաւորին, զի անհնարին էր այնմ բանի՝ սկսաւ դառն տառապանօք և ազգի ազգի նեղութեամբք կեղեքել և աւարել զամենայն իշխանութիւն նորա։ Այլց ՚ի 525 թուականին շէն էին զաւառք Պապանին և պայծառացեալ վանորայքն ՚ի պաշտամանն և ՚ի լուսաւորութեան. իսկ ՚ի 541 թուին մինչ մեռաւ Արկիքշահ սուլթանն՝ ամ մի ողջոյն սատանեցան առ Տաճարակ։ Եւ սակաւ մի խաղաղացեալ ամն հօթն ՚ի տէրութեան Ռէկիարուխի՝ որդւոյ Արկիքշահին։ Ապա ՚ի 548 թուին մինչ մեռաւ Ռէկիարուխն՝ դարձեալ վերստին սատանեցան դառնապէս։ Իսկ ՚ի ընդ մեռանն յորելինին և երկուց թուոց, որ է ՚ի 552 թուին՝ օր մի յանկարծակի մինչ կային յանհոգութեան քաղաքացիքն, մատնեաց Տէր զանառիկն ՚ի մարդկանէ զԱպահան քաղաք, և առնիճաւն Զորթման վասն քինուն իւր յեղակարծում ժամու հեզաւ ՚ի վերայ քաղաքին։ Եւ բազում հետևակազօր

մարդիկ սպառամուք և քարադնացք եղեն ի գլուխ ապառաժուտ լերինն և իջեն ընդ Մեծաւարի հեղեղատն ի քաղաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ վասն անհնարին գոլոյ մտից մարդկան, և սկսան կոտորել ի Ջ. հազարաղոյն։ Ասացին ըզդուռն քաղաքին որ ի Կնձոլոյց գլուխ հայէր, և մտին զօրքն ամենայն և հարեալ սատակեցին զամենեսեան առ հասարակ. բայց ի բերդն ոչ էին կարացին ձեռնադրկել, այլ գնացին անդրէն ի տեղի իւրեանց։

Ընդ այս խակ եղև սկիզբն աւերման աշխարհին. և օր ըստ օրէ սկսաւ նուազել և պակասել իշխանութիւնն այն որ ունէր ընդ ձեռամբ բերդս 43, և անուանիքն ի նոցանէ 12. և վանորայս 48, և գիւղս 1400, և մայրաքաղաք զԿապանն.— այս Ասղոյ իշխանութիւնն է։

Դարձեալ յետ միոյ ամի՝ ի 553 թուականին, առաւ Ուրոտն, և ի 554 էին առաւ Ուղին և գերեցաւ Խոսրովիկ իշխանն և ի սուր սուսերի մաշեցան բազմութիւնք քրիստոնէից, և բնաւին չաւեր անցաւ տունն Ասղոյ։ Եւ լսեցին ամենայն ուխտք վանորէիցն ի պաշտամանէ, և խառաբ թանձրամած կալաւ զաղգս ՚այաստանեայց և սուգ անհնարին ըզգիւղան ամենայն քրիստոնեայք և ակնդիցիք ՚այոց։ Այլ մնացին Ասղաբերդ, Գանձ, Ապաւարերդ, Ճ լռուտ, Կարճուան, Միղրի և Գրհամ առ Գրիգորոյ Թագաւորի և Սրմապատայ՝ Թոռանց Ընշոյոյ, որք էին անզաւակ. բայց միայն մի դուստր ունէր Գրիգոր՝ Կատայ անուն։

Յակ ի 565 թուին կատարեցաւ մեծաւ ձգնութեամբ սուրբ Թագուհին Ճ. ահանդուխտ՝ քոյրն Անդրկերիմոյ Թագաւորին։ Ի սոյն ամի և վախճանի յոգներանեան այրն Ընտուճոյ և սուրբ եպիսկոպոսն՝ տէր Գրիգոր։

Ի 575 թուականին նկն ամիր ՚ատրնն և բնաջինջ արար զտուն Կապանին և զԸրևիք գաւառ. էառ և զբերդն Կաբաւու և զքարն Ասղակու որ էր վանք, յորում մխիթեալ կայր

բազում սրբութիւնք, խաչ և վկայարանք ոսկի և արծաթի և կառկարանք, որ գաղթեալ էին ի դաւառացն—և ամենայն ի գերութիւն մատնեցան։

Ապա ի լնուլ 600 թուականին և ի սկսանել զառաջին ամին՝ զՀրուան բերդ գողացան Հնդաւաղ ազգն Թուրքաց, և ի 606 թուին զԱրճեղի գողացան. և ի 619 թուին կրկին բարկացաւ Աստուած Խաղայ աշխարհիս և Ալունեաց նահանգիս և զապաւէնն ամենեցուն և զտեղի ապաստանի զանուանիկ ամուրն զԽաղաբերդ մատնեաց ի ձեռս Իսմայէլի անիծեալ և դիշախանձ առն, որ բազում զօրօք եկն և ոչ կարացաւ հնարել ինչ։ Ապա պատրող բանիւք խաբեաց զպարտպահ միտս արս քրիստոնեայս Աչաղուացիս՝ և նոքօք նախ առ ըզքարն Ակոց և ապա ի գիշերի այնու արարքը գողացաւ ըզԽաղաբերդ և առեալ՝ կոտորեաց սաստիկ։ Եւ զի վասն անուանիկ ամրութեանն յամենայն վանորէիցն անդ էին կուտեալ զպրութիւնս և զգրեանս և զպատս եկեղեցւոյ, և առեալ զանհամար և զանմատն սրբութիւնս և պատս եկեղեցւոյն Տաթեւոյ փարթամ և հարուստ աթոռոյն, խաչ և վկայարանք յոսկւոյ և յարծաթոյ՝ անդին ակամբք և անհուն մարգարտով զարդարեալ, և կառկարանք յոլովք որք թուով աւելի քան զ10,000 զորս ամբարեալ էին անդ, որք առ հասարակ գերի վարեցան, և ցան և ցիր եղեն ընդ երեսս աշխարհի։ Եւ ասաղ և եղուկ է մեզ, զի առաւել եղև մերս կորուստս և ապականութիւն քան զՅերուսաղէմին ի Նաբուզոդոնոսորայ արքայէ. քանզի նմա երբեմն եղև գարձ և նորոգութիւն որ ի Պաբելոն, իսկ մեզ վերջինն սիրելոց Քրիստոսի անդարձ և յաւիտենական։

Ապա մինչ մատնեաց զմեզ Տէր և օր ըստ օրէ եղծանելով կամէր եղծանել՝ զայլ բերդերն և զամուրս իւրեանց կառնաւն Աղլաթուղ ամբարէին, և ընդ հանդարան սիրելոց Տաճկին։ Եւ ժամանակ գառն և դժնդակ հատաւ.—առ հա-

սպրակ ամենայն երկիր և շինանիստք յաւեր դարձան և անմարդաբնակ եղեն։ Ասյց Գրիգորն, որ իշխեր Ռաշտց, ետ ածել ՚ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի՝ ՚ասան անուն, ՚ի Գռեռաբարեցեացն և ետ դպրատոր իւր Պատայն նմա ՚ի կիրթ թիւն և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ. և ինքն և եղբայր իւր Ամբատ յառաջ քան զառնուլ բերդին Մեռաւնին ՚ի 615 թուին։ Իսկ մինչ զերդն կամէին առնուլ՝ ՚ասան կացոյց բերդապահս, և ինքն առեալ զկին իւր և զընտանիս ՚ի դիշերի ել ՚ի բերդէն՝ և անց գնաց ՚ի գաւառ իւր և ՚ի տուն՝ ՚ի Խաչէնք։

Իսկ մնացեալ ազատքն Ջուլջն և Խոսրովիկն տղայ հասակաւ մեռան ՚ի Նախջաւանի և թաղեցան ՚ի Ա՛ահուկ. և եղբօրորդի մի Ջուլջին գնաց փախստական ՚ի քաղաքն Ընի՝ Ա՛ահևան անուն. և միւս իշխանն ՚ասուն, որ էր որդի մեծ իշխանին Ռաշտց ՚ասանայ և Թոռն աւագ ՚ասուռնայ՝ զբնաց ՚ի Պարսս ձոր առ փառաւորեալ եղբայրն իւր առ Յովհաննէս, որ բնակէր ՚ի խորձոր անապատին որ Նորավանս կոչի, մերձ ՚բաշկարիրդոյն. և անդ կրօնաւորեալ՝ վախճանի ՚ի 680 թուականին։

Ընդ զայսօրինակ բարձաւ տէրութիւն Սիւնեաց և Ռաշտց և եղև վախճան տոհմին Սիսակայ և նախարարութեան Սիւնեաց. քանզի ամենեքեան որ կային յառաջագոյն յաւուրս Ամբատայ և Սահակայ, իբրև բանչիւրքն՝ էր որ անզաւակ մնացին, էր որ կիսօրեայ փոխեցան, և էր որ սպանան և գերեցան. և մնացեալ էին միայն այս Գրիգոր և Ամբատ, որք այսու օրինակաւ բարձան։

ԳԼՈՒԽ ԿԸ

Վանորայք և ոմանք եկեղեցիք, ըստ հնի եւ յայժմ աշխարհի.

Առաջին դլուխն ամենեցունց վանորէից և աղբիւր չնորհաբաշխութեան տանն Միսակեան՝ Տաթեւ. — ապա մեծ առաքելնարանն Օհանաւանկվանս. — ապա Միւնեի վանք, որոյ եկեղեցին չքնաղ և նորակերտ ձեւով կանդնեալ գմբէթ այարկ խորան երկնանման ի մեծ բարեպաշտուհւոյն Վարազդխտոյ Միւնեաց տիկնոջէ. յառաջ քան զհայ թուականն յանուն սրբոյ Լուսաւորչին: Եւ յառաջև վանացն ի մէջ քաղցրահայեաց մեծ դանին դնեն իշխանքն տուն արքունի և ապարանք իշխանանիստ, և յամենայն աւուր՝ ասեն, գային ի ժամ պատարագին. — ապա Կնէվանք, զորմէ ասեն մանկունք անդէորդք արածէին ջոլիկս եզանց, և սկսան խաղալ. և կտրեալ կնիւն մի և արարին խաղ և եդին ի վերայ քարի մի և սկսան երկրպագել և ասել. «զոր ինչ երէցն ասէ և ընթեռնու՝ այն ի վերայ քո եղիցի, և յայսց եզանցս այս երկաբս քեզ մատաղ եղիցի»: Եւ զոր նոքա ընդ խաղս արկին՝ ՚ոդին Աստուած իջեալ տնօրինէր նոյնպէս: Ապա ի ժամ երեկոյին սկսան գրնալ. և Թէպէտ ջանացին՝ զայն նուիրեալ մատաղն ոչ կարացին յարուցանել ի տեղւոյն: Գնացին և աղդ արարին տեառնն, և նոքա եկեալ՝ ոչ կարացին շարժել. և հարցեալ ըզպատճառն ի մանկանցն՝ խոստովանեցին զանդիղն: Աչեալ այնու հետև քահանայս օրհնեցին զեաչն և զինին զեղինան և պատուեցին զտեղի կնիւնոյն: Ընդ լինելն այս իշխանացն Միւնեաց՝ և գային ի տեսութիւն. և հրամայեցին շինել եկեղեցի ի տեղւոջն և սահմանեցին զնա տուն կրօնաւորաց. բայց զտեղի կնիւնոյն Թողին ի մէջ եկեղեցւոյն փոս մի դուշնաքաչ: Եւ մինչ յաւեր տեղւոյն ձէթ բղխէր ի փոսոյն այնքան, զի օ-

տար ձիթոյ ոչ կարօտանային, այլ եկեղեցւոյն կանթեղունքն նուաւ կերակրէր. և դեռ ևս կայ եկեղեցին և տեղի հնխնոյն և խաչ ևս, որք վկայեն անտուա գոլ: Ապա Վ. աղանդնի վանքըն, Նորավանք, Երիցու վանք, որք էին միաստպաշտօնք. Հ. ա. տանեայ վանք՝ և տքա միանջինաւորք. Գողրնայ վանք. Վ. ա. հանու վանք. Տանձիտարախ՝ և տքա խարտաղնագղիստք և տահմանաւորք. Լ. ուսկէվանք. Լ. ըհէվանք. Վրծնից վանք. Գառդէի վանք. Աւուտափառոյց վանք. Ծիծառնոյ վանք. Խաչատրոյ վանք. Ձիւնատարու վանք: Ի Վ. այոյ ձորոյ կողմանն Խոտակերից վանք, որ Վարիսի կոչի՝ և տքա միաստպաշտօնք. Նորավանք որ յհայոց եղև եպիսկոպոսարան. միւս Նորավանք. Յաղաց քար՝ բարձրահոչակ և տուրբ առաքինարան, յորում ի 406 թուականին ի թագաւորութեանն Գագկայ Հայոց ոմն վանիցն՝ Վ. արդիկ անուն, շինէ պայծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին տուրբ Հարցն, զմին գմբէթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զմիւսն սազաշէն՝ հրաշալի յօրինուածով: Ապա Երամեոսվանք. Ըրատինից վանք. Թառնատէի վանք, յորում կան նշխարք սրբոյն Յովհաննոսի. Գրնդայի վանք: Եակ ի Գուգաւն մեծ մենարանն Մաքենոց և Վ. անոյ վան և միւս Վ. անեվան. Հ. ողուագայ վանք: Ահա այս ամենայն վանորայք յսկանէ յանուանէ ի գլխաւորագունից են, յորոց բազումք ամայի և թափուր են ի շինութեանց, և տակաւք ի լուտաւորութեան այժմ, որք են թուով 30. բայց այլ ևս բազումք կային, զորս ոչ թուեցաք:

ԳԼՈՒԽ ԿԲ.

Եպէ-ի-գոյտ, որ ի-բէնդան չինէ տեսան գրէբէբ:

Վ. ահմանի տէր Գրիգոր կեցեալ ամս 58, և յաջորդէ ըզնեղին տէր Յովհաննես ամս 27: Ի տարս աւուրս եղև շար-

ժըն Գանձակայ՝ ի 587 թուականին և դողաց երկիր՝ ի հիմանէ։ և դմբէթն մեծ եկեղեցւոյն՝ ի 8 աթեև բոլորապոյր շրջեալեան թռաւ և անկաւ՝ ի վերայ սուրբ Գրիգորոյն և գաւթին որ՝ ի դրանն կայր և փլոյց առ հասարակ։ Իսկ՝ ի 592 թուին կառարեցաւ սուրբ եպիսկոպոսս այս և ժամանակ զբաղնիսդակի հետս, զոր լեզու ոչ կարէ պատմել. և ամենևիմբ ջրանջեցան մարդ և անասուն և անբնակ եղև բոլոր աշխարհս Աղասական՝ միայն թէ՝ ի ծերպս քարանց միացեալ էին ուրիք ուրիք երկու կամ երիք արք։

Յետ սեառն Աեսիանենոսի առնու զաթոռն աեր Ղազարոս. և սակաւ ինչ կեցեալ անկանի պատահմամբ ինչ՝ ի գետն Երասխ մօտ յԱզատապատ գիղ Ջրուռին հանդերձ, յոր հիճեալ կայր։ Եւ մեռեալ լեզուովաց հանրին յայնժամին և լցաւ մեծ ձայնապատմեալ՝ ի վերայ ջրոյն, և տարեալ թաղեցին՝ ի Մաղարթոյ վանք՝ որ՝ ի սրբոյն Գարդողիմէ շինեցաւ։ Եւ պատհեցաւ յոմն եկեղեցւոյն՝ ի մանանայէն Խորհէլացւոց երիք հատ, զոր հասուսաւ Միհայէլ պատմագրին։ Ընդ ամայացեալ էր աթոռն՝ ի բնակչաց և ոչ գոյր տէր և կամ իշխեցող, զի հոգւոյր վասն եկեղեցւոյս կամ վասն սուտ միաբանութեան հօտին և՝ ի գնդիր լինել առաջնորդին։

Էր աւագ երէց մի՝ ի մեծ աւանին Ամերոյ՝ Գրիգոր անուն, այր ճշմարիտ և լաւ, որ էր եղբայր սեառն Գարդմէ։ սա յերիւրեալ՝ ի սրբասէր և՝ ի մեծահաւատ սիրուհւոյ իւրմէ՝ Տամամ կոչեցիալոյ, որ ասէր. «ոմ երէց՝ առնացաւ աթոռն Աիւնեաց, փութա և լեր քահանայապետ, զի և որդեակս մեր լեցի որպէս քահանայապետի. տես զսուրբն Գրիգորդ և զորդիս և զթոռունս իւր, զի էին և նոքա կանանմբիք»։ Յորմէ համաձակեալ գնաց առ տէր Գրիգորիս՝ եղբայր Սերսեհի Հայոց կաթողիկոսի, և անդ ձեռնադրեալ եպիսկոպոս՝ գայ՝ ի վիճակս Աիւնեաց։ Եւ տեսեալ զան 20 մեռանի՝ ի Վահոյ ձոր՝ ի Խարձաղիղն, զի շրջէր ընդ վիճակեալն՝ ի թը-

ականին 617, զոր տարեալ ի սուրբ ուխտն Եորտանան՝ և դին ի հանգիստս ընդ երանելի և սուրբ եպիսկոպոսին ակր Յովհաննիսի Կապադեցւոյ: Եւ յաջորդէ զանդին որդի նորին Աահփանոս մնռակ ամօք՝ լի ամենապատիկ շնորհօք, սիրելիչխալ և մեծարեալ յամենայն աստիճանս, որք ի ժամանակին իշխեցողք՝ Եղտիոզ ամենարէկին և որդւոյ նորա Փալհատանին և Խոզիլ Ասլանին և Ռուբաք ամենարէկին, որք և զգուական անուամբ Ցախոր էլ Ասհ կոչէին, որ թարգմանի «սիրող Քրիստոսի» և պատուէին զնա ամենայն զրոյ և փափաքանաւ և մանշուրաւ, զոր մեք սիգիլ կոչեմք:

Ի նորա աւուրս էին Թամանր և Լաշա Գորգի՝ թագաւորք Վրաց, և մեծ ամիր սպասալարն Օրաքարէ և եղբայր իւր Խանէ ամենարէկին, որք և մեծապէս սիրէին և պատուէին զնա: Եւ նոքա ի Պայեն տեղի հանգստեան նման զդերասիրաչափ ուխտս Հաղարծին և զիւղն զԵրասաձորն: Եւ նորոգեալ զեկեղեցիսն եկեղեցին ի Տամէ զսուրբ Առաքեալքն, և նա դնել զդմբեթն ի ձեռն Հօրն Յակորայ Ճահկեցւոյ: Նա ձեռնադրեաց եպիսկոպոս ի Հաղբատ զտէր Գրիգորիս՝ քեռորդի Օրաքարէի և Խանէի, և տեւեալ յիշխիսկոպոսութեանն ան 46՝ վախճանի ի Վայոց ձոր յԱռփագէն: և տարեալ դնի ընդ հօր իւրում ի նոյն Եորտանան ի 665 թուականին: Եւ կենաց տրին էր ձեռնադրեալ եպիսկոպոս տէր Սարգիս՝ քեռորդի տուա Հրամանաւ քեռոյն իւրոյ յԱղուանից կաթողիկոսէն: Եւ յետ մահուան տեառն Սահփանոսի միւս այլ հօրեղբօրորդի նորին՝ Յովհաննէս անուն, գնացեալ յԱղթամար ձեռնադրի եպիսկոպոս և նստի ի Տամէ: Իսկ տէր Սարգիս բնակէր ի Վայոց ձոր՝ ի Եորտանան վանսատանի: Եւ բռնանալ զնմէմ վիճակին՝ զՎայոց ձոր բռնագրաւ առնոյր սա, և զգալն թողոյր ի տէր Յովհաննէս: Եւ յայսմհետէ և սա յետս հառաջացաւ և այն ուխտ և աթոռ եպիսկոպոսութեան, զի էր առն և տեղի ապաստանի յաւերման ժա-

մանակին տանն Ափնեաց, տեղի Հանգստեան և շերմիք գերեզմանաց բազում եպիսկոպոսաց, ղորոյ ղորդիսութիւն շինութեան և զգաստաձառ Հանդիսաւորելոյն յիտոյ ասացիք։

Տէր Յովհաննէս կեցեալ տան 38՝ վախճանի ի Նորավանս մեծահռչակ ուխտի, և դնի ի գաւթի Նորակերտ եկեղեցւոյն յ700 թուականին։ Եւ առնու զաթոռն եղբօրորդի Նորին տէր Ներսէս եպիսկոպոս և միւս ազգականն տէր Սողոմոն։ Եւկ տէր Սարգիս հիմնարկեալ գեղապատմեայ եկեղեցի ի Նորավանս հրամանաւ և օժանդակութեամբ մեծ իշխանաց իշխանին Հասանայ՝ որդւոյ Զաքարէի ի ցեղէ մեծի Նահապետութեանն Օրբէլեանց որ ի Վրաց աշխարհէն, ի թուականին 665, կառավարէ հրաշազան յօրինուածովք յանուն սրբոյ Նախավկային՝ և ի նմին խորանս խորհրդաւորս ուխտ՝ զանս եօթին։ Եւ ինքն յետ բազում արդեանց և երկայն ապաշխարանաց դնայ ի Կիլիկիա առ բարեպաշտ արքայն Հայոց Հեթում, և պատիւ յօրով ընկալեալ ի նմանէ և տեղի Հանգստեան՝ զաւագ Ս. Էջմիծին. և բազում ձգնեալ անդ՝ գնայ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ի գերեզման Ընտուծոյն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ և երկրպագեալ աստուածահաճոյ տեղեացն, զբաստանէ զանկշեռ պարգեւն՝ զաջն սրբոյ Նախավկային Ստեփաննոսի, և առնու ի Փոանդէն—զի յայնժամ Փոանդք տիրէին սուրբ քաղաքին — յորոյ վիրայ գրեալ կայր փոանդ և Հոռոմ և ասորի գրով, եթէ սրբոյն Ստեփաննոսի է Նախավկային, և առաքէ ի սուրբ ուխտն Նորավանից, որ և կայ անդէն ի սուրբ եկեղեցւոջն։ Եւ ապա առեալ Խորազմին գԵրուսաղէմ ի Փոանդէն՝ կոտորեաց ոստահապէտս և եղից զոսկեայ Տեառն աբեամբ. և գտեալ զերանելի եպիսկոպոսն զաէր Սարգիս ի վիրայ գերեզմանին Տեառն ի սաղմոսերգութեան այլ և երկաք ընկերօք՝ հատին զղլուխն և հեղին զարիւնն ի վիրայ գերեզմանի Տեառն կախարդեին։ Եւ այսպէս մարտիրոսական արեամբ պսակեցաւ ի Քրիստոսէ Ընտուծոյն մերոյ։ Եւ յաջորդեցաւ

'ի տեղի նորա քեռորդի իւր տէր Ստեփաննոս ամն 20. և ապա յետ նորա տէր Ալոիզիս՝ եղբօրորդի տեառն Ստեփաննոսի և որդի Վ՚ահրամայ ձգնաւորի, այր իմաստուն և արդիւնաւոր և վարդապետ ընտիր և բազմաշխատ, որ և բազում արար արդիւնս՝ ի տանս՝ ի գործս երևելիս, և զարդարեաց զեկեղեցիքն պատուական ապաստաք և առատ հանդիսացոյց ըզպերատիսս սուրբ մենաստանն քան զնախնիսն իւր: Յակ Տաթեւացիքն շինեցին զվանքն, որ՝ ի բազում (ամաց հետէ) աւեր և ամայի մնացեալ էր և փարթամացուցին ամենայն պիտոյիք մեծ և փառաւորեալ իշխանաց իշխանքն Սմբատ և Տարսայիճ՝ որդիք Լ՚իպարտի. և ինքեանք կեցեալ՝ ի միասին՝ նախ վահճանի տէր Սողոմոն անդէն, և ապա տէր Հ՚այրապետ կեցեալ ամն 40: Եւ զի առ կենօք սորին էր ձեռնադրեալ եղբօրորդի նորա՝ Յովհաննէս անուն, յետ սորա կեցեալ բազում հակառակութեամբ ամն երիք՝ վահճանի և դնի ընդ հօրեղբօր իւրում՝ տէր Հ՚այրապետի:

Յետ որոյ մեր ապիկար և թարմնատար անձին յաջորդեալ՝ ի կրինաւորոց գահ մեծապատուութեան տանս Պետական, և զերկու գահիցդ աթոռքս և աշխարհահռչակ հանդիսարանքըս միապետեալ՝ զՏաթեւն և զ՚Որոտանքս հանդերձ բոլոր վիճակիւքովք, այժմ կամք կանգնեալ՝ ի կամար երկնահանգէտ լերինս մինչ՝ ի սահմանեալ կէտս իմ, ուր Տէր սպասեսցէ:

ԳԼՈՒԽ ԿԳ՝

Սկիզբն և պատճառ շինուածոյն և նախապատրաստութեան սուրբ և բերկրալի և փառաւոր տաճարին և աշխատասէր խմբապետին Գրիգորիսի:

Յառաջ քան զայս բազում ժամանակաւք՝ վաղ առաւօտք և հնագոյն ամք, ի նիզ և անձուկ ձորակին այնմ, ի պատշաճաւոր տեղւոջ էր շինեալ եկեղեցի մի կրաշաղախ վիմօք յա-

նուն սրբոյ Կարապետին՝ յոյժ սքանչելագործ և ահարկու և անուանի մերձակայ սահմանացն։ Եւ բղխեր մերձ նմին ազբիւր քաղցրահամ. և ձորն ամենայն գեղեցկացեալ էր այդեօք և թանձրախիտ ծառօք մշտաբերօք։ Եւ ի թանձրամած կաշկառուտին ի նոյն ձորին կայր եկեղեցի մի յանուն սրբոյ հայրապետին Փոկասու շինեալ՝ և ի մէջ եկեղեցւոյն բղխեր ջուր սակաւ ի նկրքոյ բլրին. և ընդ ջրոյն եղանէր և ձէթ բժշկարար, զորմէ լուսոյ ի հնագոյն աւանդութենանց, եթէ բնաբեալ եղեւ ի նշխարաց սրբոյ հայրապետին Փոկասու և անդ հանգուցեալ, յորոյ անուն և տեղին Փոկաս կոչեցաւ։ Եւ առ նէր հրաշս զարմանալիս, զի ամենայն անբուժելի ցաւք և անհնարինք ի մարդկանէ՝ դողութիւնք և բորոտութիւնք և վէրք բազմաժամանակեայ նեխեալք և ապականեալք, ի ժամանելն ի տեղին յայն հառաւոյք և ի լուանալ ի ջուրն և յօծանելն ձէթով՝ բժշկեալ լինէին, և թէ մնհաւատ լինէր՝ առժամայն վախճանէր։ Եւ վասն այսր մեծապէս լինէր հրնչեալ համբաւ տեղւոյն ընդ ամենայն աշխարհ։

Ընդ ի նոսա ժամանակաց՝ մինչ եհաս աւուր ամենայն աշխարհի և բարձաւ թագաւորութիւնն Պարսից և ապստամբ թագաւորն Աւնկիրիմ, և բնաջինջ եղև տէրութիւնն Պարսից, և խափանեալ լուծին ամենայն ուխտ պաշտօնէից՝ ի 554 թուականին էր եպիսկոպոս ոմն ի վանս Յովհաննու՝ Յովհաննէս անուն, լցեալ ամենայն առաքինութեամբ և բազմօվին զգեցեալ զԱրիստոս՝ յայզի ազնուական, որդի մեծատուր իշխանին Պարսից ⁺ասանայ, որ ունէր ընդ ձեռամբ զամենայն ազատս թագաւորութեանն այնմ և էր որդի մեծին ⁺ասմունայ։ Ընդ Յովհաննէս լեալ աւերման իւրոյ աշխարհին՝ բազում ալէկոծեալ այսր անդր, եկն ի Ա_այոց ձոր զաւառ և կամեցաւ բնակել ի խորաձոր անապատին Նորավանից մերձ անառիկ դղեկին ⁺բաւակայ բերդոյն առ հիսոզօր և մեծապանծ եկեղեցւոյն սրբոյ Կարապետին։ Եւ երթեալ յանձ

դիման լինի մեծի արքային Պարսից Մահմետ սուլտանին, Ծանօթ անայ նմա և առնու ի նմանէ ֆարման և մանչուկ վաղն տեղոյն այնմ: ֊ամենձակ բնակի ի նմա՝ ժողովեալ արս կրծեաւորս և ձիաւորեցաս, և հետացուցանէ ի վայրկին զաքմենայն արս աշխարհականս, և շրջապատիւ տահմանէ զվայրն ամենայն՝ կանդնելով գիշանն ակռուխի, զի մի անցանիցեն ընդ այն կանայք և լիսի մարդիկ: Եւ առնու ի տահմանակցացն հօտս և անդաստանս ի ժառանգութիւն եկեղեցւոյն՝ ի Գանձակեցւոց և ի Տխաորեցւոց:

Սա նեղեալ յանիծեալ և ի պիղծ բերդապահէն ֊բասեկայ, որ էր խազրիկ Խորասանի, և որպէս ապաստանել զսուրբ եպիսկոպոսն և առեալ զկրծեաւորանոց առնէն սուրբ ուխտին, փոխէ զձևն ըստ պարսկական օրինի, զի հմուտ իսկ էր նոցին լեզուի և գնայ փախստեայ առ սուլտանն Ազատհան քաղաք: Եւ էր նորա որդի միամօր, որ հիւանդացեալ էր անհնարին ցաւօք և էր մերձ ի վախճան՝ և ամենայն հնարք բժշկայ հատեալ էր. և էին ծնողք մանկանն և մայր սուլտանին ի մեծ սգի և արտմութեան: Ընդ տեսանել, ի տեսլեան մայր սուլտանին եթէ այրն օտար, որ եմուտ ի քաղաքս՝ եպիսկոպոս է, և անուանն՝ Յովհաննէս, նա բժշկեսցէ զմանուկդ. վասն ո֊րոյ վաղվաղակի ի խնդիր լինէին նմա և գտեալ՝ ածին առաջի մեծ սուլտանին: Իսկ նորա լուեալ գնաննէ և ծանեաւ. ընդ առաջ եղև նմա և երկիր եպագ հայցելով, զի թէ հնար ինչ իցէ՝ բաժեսցէ զդաւ մանկանն: Եւ մտեալ սուրբ եպիսկոպո֊սին՝ ըստ մեծայոյս հաւատոյն, առ կիսաւեռ մանուկն և ա֊ռաքելական զօրութեամբ ի բաց հերքեալ զդաւն՝ առաւա֊ծարար հրամանն տայր կանդնել ի մեհճայն մահացեալ մարմ֊նոյն: Յաղագս որոյ հիացեալ մեծաւ զարմանօքմէր սուլտա֊նին՝ հարցանէր ի նմանէ զպատճառս գնացոյն. նորա ծանու֊ցեալ զդառն աղէտս ամիրային ֊բասեկայ բերդոյ և զվիւս խուլամին որ Ազնաւատ բերդի: Ընդ որ յոյժ ցաւուցեալ՝

երախտահատոյց լինի նմա և տայ զ՚բասիկայ բերդ մանշուր գրով՝ ի ձեռն եպիսկոպոսին և առաքէ ընդ նմա պատ հատատարիմ առտակել զբերդապահն իւրովք ընտանեօք և տալ զտեղին յեպիսկոպոսն։ Ընդ նմին և շնորհէ մայր սուրբ եկեղեցին զԸնտպատ բերդն երկոտասան ագարակօք նմին տեառն Յովհաննիսի, և անառատ սիգելաւ և անանցական մանշուրաւ շնորհէ ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն Նորավանից. զբոլոց արքունական նամակս և մեք իսկ ընթերցեալ ճշդութեցաք։ Եւ ըստ տաճիկ օրինին էր անհուն երդմամբք հաստատեալ զդիրն՝ նալաթք և ապիզարք բազում կարգեալ ի նմա։ Պայց ապա մեծաւ խնդութեամբ եպիսկոպոսն ի տեղի իւր հանդերձ հրոսակօքն, և ըմբռնեալ զամիրայն ընտանեօք իւր ի ՚բասիկայ բերդ՝ քարավէժ առտակէ և զտեղին քանդեալ աւերէ։ Եւ զիւսն, որ Ընտպատի՝ հալածեալ, զբերդն ագարակօքն հանդերձ սեպհականէ եկեղեցւոյն։

Պայց յետոյ ՚բասիկայ բերդն շինեցաւ և բնակեցան ի նմա Պարսիկք, զոր և վերառին առին յաւուրս սմբ տարէկ Լանէին ի ձեռն Ըռփայեցի Ըմիր ամնրին՝ և զ՚առակայ իշխանի Խաչենեցւոյ որ էր հայր Պռոշայ՝ բարեպաշտ և մեծարգի իշխանի, հրամանաւ և ուժով Լանէի. իսկ Ընտպատն ճնաց առ սուրբ եկեղեցեցւոյն մինչև ցայսօր։ Պայց ինքն իսկ եպիսկոպոսն էր լքեալ ամենայն առաքինութեամբ և կայր մեծամեծ ձրգամբք և բազում պանդխտիս երևեցուցանէր այնքան՝ զի գոտանց հրամայէր լուծ՝ և լուցին մինչև ցայժմ։ Եւ կին մի և մանուկ առնդեայ անկեալ պատահմամբ ընդ մեծ քարն, որ հանդէպ վանիցն՝ ի Տիարբայ շինոյն[2], տեսեալ սրբոյն և կընքեալ նշանաւ խաչին հանդէպ՝ անվնասք ճնացին և ամբողջ դարձան անդրէն ի տուն իւրեանց և ասէին. «տէր Յովհաննէս կայր ի յառակ քարիս և երկու ձեռամբ ըմբռնեալ ապ-

---

[1] Այլ օր. Ախթրմակն։ — [2] Այլ օր. ի Տիարբայ վինոյն։

բեցոյց զմեզ»: Եւ այսպէս կեցեալ բազում ամս՝ վախճանի ի Թուին Հայոց 663 [1] և դնի յիւրում աղօթարանին ի մէջ երկուց վիմացն ի նմին ուխտի: Եւ զօրութիւնք մեծամեծք ելանեն ի գերեզմանէ նորա, զի սատակէ զմուկն և զԹրթռուա և բժշկէ զամենայն պատահարս ի մարդ և յանասուն և յանդաստան:

Եւ ապա յետ նորա՝ մինչ էառ Եղիակում զմայր սուրբ նին և տիրեաց արքայական գահոյիցն, եկն տէր Սահմանեոս Հնորհազարդն, որ և Գախբը էլ Մահ [2] կոչեցաւ յաթաբէկն՝ և բնակեցաւ ի սուրբ ուխտն Նորավանից, զի հին աթոռն աւերեալ էր և ապականեալ և հայր սորին տէր Գրիգոր անդէն կայր ի շէրմի: Եւ հաստատեալ զնա տուն աթոռոյ եպիսկոպոսութեան՝ առնու փարման և սիգէլ ի մեծ աթաբէկէն վասն վիճակիս այսր, զի ի նմա ժառանգեացին ժառանգորդք սուրբ եկեղեցւոյն: Նմանապէս և խնդրէ Թուղթ շրջաբերական [3] ի կաթողիկոսէն Հայոց ի տէր Գրիգորէ, զի լեցի սեպհական վիճակ ժառանգութեան այս գաւառք սուրբ ուխտին Նորավանից: Եւ ապա գնացեալ առ աթաբէկին Եղիակում՝ ցուցանէ զնամակ սուլտանացն և ի նմանէ ևս առնոյր մանշուր հաստատուն զրոյ ամենայն ժառանգութեանց եկեղեցւոյն Նորավանից և խնդրէ ևս զԱգարակի ձոր գիւղ, զոր և քաղքր կամաք և զայն ևս ընծայէ հաստատուն և անսուտ մանշուրաւ սուրբ եկեղեցւոյն, և զամենայն զոր ինչ էր վանիցն արար ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ զհող և զջուր, զայգի, զգիւղ և զադարակ և զբերդն իսկ Ընատատայ: Ապա կեցեալ բազում ամս՝ վախճանի անդէն և դնի ընդ հօր իւրում ի 665 Թուականին: Եւ յաջորդէ զեղբն տէր Սարգիս, որ մարտիրոսացաւն յԵրուսաղէմ: Սա առ կե-

---

[1] Այլ օր. ի Թուին հայոց 603: — [2] Այլ օր. որ և Խոխբէրնահ: — [3] Այլ օր. և Թուղթ շրջաբերական:

նոք սորին եղև եպիսկոպոս և բնակէր ՚ի Սոլսաւանս։ Եւ էր տեառն Սահակայ եղեալ ղրաւական զաստուածամուխ սուրբ նշանն, զոր Յովհաննէսի զաւազ խաչն և զԹիթեղնակապն, որ ունէր Թիթեղունս [1] ոսկի ՚ի վերայ երեսացն, և կամարակապն զկամար ակնառև թևէ ՚ի թև, առ եպիսկոպոսի մի Ա՛ծոպոյ վանս ՚ի Շ՛ահապնս՝ Պետրոս անուն։ Զ՚որ և իմացեալ կողմնակալն այսմ կողմանց՝ Ա՛ատակայ իշխանի հօր Պռոշայ, առնու բռնաբար զերիս զայս աստուածացեալ սուրբ նշանքս և տարեալ զաւազ խաչն ընծայէ աթաբէկին Լանէի, և զերկուան՝ զԹիթեղնակապն և զկամարակապն տարեալ դնէ յիւրում վանսն ՚ի Անչատուս ուխտի։ Ապա ՚ի 665 թուականին մինչ կայր աթաբէկն Լանէ ՚ի խասալ ՚ի վերայ բերդոյն, որ Ձարէքն կոչի՝ գնայ տէր Սարգիս Հրամանատ և գրով քեռ-ւոյն իւրոյ տէր Սահմանոսի առաջի աթաբէկին ՚ի խնդիր աստուածընկալ սուրբ խաչին։ Եւ զի էր նորա գործակալ և հրամանատար ՚ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց և առաւագ հիջապաց մեծ և բարեպաշտ իշխանն Ռուսաց [2] կոչեցեալ, որ էր անուն [3] Ա՛խլարխի՝ որդւոյ Ալեկսուվին, և Ա՛խլարխին յոյժ սիրեցեալ էր յաչս Լանէի, և խաչն կայր ՚ի պահեստի ՚ի Պղնձահանքն — յանդիման առնեն զեպիսկոպոսն աթաբէկին և մատուցանեն զդիրսն։ Եւ ինքեանք մեծապէս հոգ յանձին կալեալ՝ ջանային թարիլ զդերեալն, և բազում դանձս ծախեալ ՚ի մեծամեծան և ՚ի նեղքին խորհրդականան [4] — բանեպաշան Ա՛խլարխա 500 դահեկանի չափ, ընծայէ և աղերս աթաբէկին 500 դահեկան կարմիր յաղնուական ոսկւոյ, և այնպէս իրր գնոյ առնելով հաճեցաւ զմիտս նորա դարձուցանել անդրէն։ Ապա հրաման կոչել զեպիսկոպոսն և դնել պայման նմա և ասէ. «եթէ որ կամի զսրբոյ նշանին անդրէն դառ-

---

[1] Ա՛յլ օր. զԹիթեղնակապն և զկամարակապն, Թիթեղնակապն առնէր Թիթեղսեան։ — [2] Ա՛յլ օր. Ռոսաց իշխանէ։ — [3] Ա՛յլ օր. և էր ա՛ռ անուն Ախլարխ։ — [4] Ա՛յլ օր. ՚ի նեղսին խորհրդականան. բանեպաշան Ախլարխ 500 դահեկանի չափ ընծայէ։

նային՝ տացէ վաղիւն զբերդս զայս ՚ի ձեռս իմ, և ես տամ զնա ՚ի ձեռս քո. ապա թէ ոչ՝ զառնաս ունայն»:

Իսկ ընդ լուսանալ առաւօտուն զօրութեամբ սուրբ խաչին բերեն բերդացիքն ինքնայօժար կամօք զբանալի բերդին և դնեն առաջի աթաբէկին: Ելեւն ընդ նմին այլ և երիս բանալիս բերդից և դնեն առաջի: Ընդ որ յոյժ խնդացեալ և զարմացեալ ընդ աքանչելիսն՝ հրամայէ առագ ծիկնաւարին իւրոյ դիւանին՝ Ընտաճիրէ անուն, գնալ ընդ տեառն Սարգսի և տալ զխաչն ՚ի նա ՚ի Պղնձահանքն ուխտի. որ և առ ժամայն կատարեցաւ: Եւ նորա գնացեալ առնու զխաչն խնդութեամբ, և անցեալ փութանակի գայ հասանէ ՚ի Նորավանս ուխտ և բնակեցուցանէ անդէն զսուրբ նշանն. որ և եգիտ վախճանեալ զքեռին իւր տէր Սահմանոս, բայց տուաւ ՚ի գինս գերեալ խաչին ՚ի Լիպարտէ 1000 դահեկան կարմիր՝ որպէս ասացաքն: Իսկ Թիթեղնակապն և կամարակապն ճնացին անդէն ՚ի Նախճաւան:

ԳԼՈՒԽ ԿԴ.

Վասն շինուածոյն Եկեղեցւոյն Նորավանից և հռիփսիմեանց նորա, և այլ շինուածոց և արքեանց որ եղեն ՚ի Լիպարտէն և յԵրասխաձոն Օրբէլեանց:

Ընդ բազմերջանիկ եպիսկոպոսս տէր Սարգիս յետ վախճանին տեառն Սահմանոսի կամեցաւ շինել եկեղեցի և հանդիսացուցանել զսուրբ ուխտն: Եւ էր այլ ոմն Թեկն ածեալ սմա՝ և կամէր լինել աթոռակալ Սիւնեաց՝ Յովհաննէս անուն, հօրեղբօրորդի տեառն Սահմանոսի, և երթեալ յԱխթամար ձեռնադրի անդ: Վասն ոչ սիրելոյ զհակառակութիւն և զօձտումն եկեղեցւոյ երջանիկն ՚ի հայրապետս տէր Սարգիս թողու զամենայն վիճակն ՚ի տէր Յովհաննէս և առ-

նու զԱ՝այոց ձոր գաւառ, զՆ՛ահուկ և զՆախջաւան սեպհական ժառանգութիւն սրբոյ ուխտին իւրոյ Նորավանից՝ և զայլն Թողու՝ի նա։ Եւ գնացեալ ինքն առ կաթողիկոսն Հայոց տէր Մովսէսդին՝ առնու՝ի նմանէ վիճակ Հաստատուն անխախտելի գաշամբ և Թուղթ շրջաբերական վասն այսց գաւառացս, զի լիցի Հաստատուն վիճակ ժառանգութեան սուրբ եկեղեցւոյն Նորավանից, և անբաւ հրահրան նզովիւք վաւկեալ ամբացուցանէ, զի մի ոք՝ի կաթողիկոսաց կամ յիշխանաց կամ յեպիսկոպոսաց իշխեսցէ հակառակել կամ խանգարել զայս սահմանադրեալ վճիռս։ Նաև լինի աղմուկ վասն սուրբ խաչին, և գնան երկոքին եպիսկոպոսքն և Ա՝խպարիսն և որդի իւր Աելիկումն՝ի դատաստան առ աթաբէկին Լանէ՝ի Պարսին։ Եւ նորա նաստուցեալ զմեծամեծս իւր՝ հրամայէր քննել զՊատարսն և զմարծուան, զԼան դպէին և զմեծաշաղեին, զմեծ ճղաւնդիտէին՝ որ եկեալ էր՝ի թագաւորութենէն, զճիրամ ծղօրն Ա՝արձէոյ և զճիրամ ծղօրն Պղնձահանիցն և զմեծ մամիաւարն Պարշաէուցն, զՊադեցին և զՊաճնաբերդեցին և այլ բազում դեղեպուէք ևս և զզաւառն Տփղեաց և զզաւառն Ընեոյ և զզաւառն Պունեայ և զանեւանի շենն Աուրմարուոյ, ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Ընեոյ և զեպիսկոպոսն Ա՝ջնեոյ և զեպիսկոպոսն՝ ախբարտայ. ոլք և քննեալ իրաւունք գտանէցան այսպէս «եթէ մեռանէր և գերեանէր զմի ունին օրինակ. որ ոք զմեռանէր յարուցանէ՝ ոչ է ծնողացն ծնունդ, այլ նորոգողին զնա. և որ ոք զգերեալ թաւիշ՝ ոչ է սուացողին յայնմհետէ, այլ գերեթափին։ Արդ որպէս աշխարհս այս առմամբ սրոյ և ձեռնին սեպհական կոչի ժառանգութիւն Ա՝ռաքելոց թագաւորութեան, այնպէս և այն խաչ սեպհական էր լանէի, և՝ի տալն գնա՝ի Ա՝խպարիս և՝ի տէր Սարգիս բազում ծախիւք մինչ՝ի 1000 դահեկան, Ա՝խպարի և իւր եկեղեցւոյն է պարտ լինել յաւիտենական ժառանգութիւն»։ Ապա այսմ դատաստանի յոյժ հաճութեամբ հաւանեալ ա-

թաբէկին և ամենայն բազմութեան ազատակոյտ իշխանացն՝ հրամայեցին ունել զնաչն անդային և անհամիմատ Լ֊իպարտի և իւրոցն։

Յոկ եպիսկոպոսն տէր Սարգիս խորհեալ ընդ մեծ իշխանսն Լ֊իպարտի [1] սկսանէին միաբան մեծամաստակ աշխատանօք և անչափ ծախուք շինել զգեղեցկայարմար եկեղեցին ի Նորավանս, և աւարտեն զնա ամն 7՝ ութ խորանօք, ի թուականին ՚այոց 672. և մեծահանդէս ժողովով՝ եպիսկոպոսօք, վարդապետօք, գահակալուխ իշխանօք, ազատօք և տանուտերօք, առնեն նաւակատիս սրբոյ տաճարին. ընդ որում էր և մեծ իշխանն Խուպա, որ և ընծայէ սուրբ և նորակերտ քառատանին յիւրոց հալալ արդեանց և հայրենեաց պտուղ բոլորահաւասար զադարակն Ընդերիս իւրով սահմանօքն, ջրարբի և անջրդի վայրօք, մեծ ձորովն որ Թամձոր կոչի, և Գընջեանց սահմանովն մինչ ի Գանձակայն, որ ՚այրեանցն տափ կոչի։ Եւ հրամայէ գրել վճիռ արձանի անխախտ պայմանաւ և հաստատել ինքեան յիշատակ յաւէն տարի առնել տանն պատարագ մօր իւրոյ. և աւանդէ զայս ի ձեռն տէառն Սարգսի։ Եւ էր օրինակ վճռին այսպէս.—

«Ի ժամանակի թագաւորութեան որդւոյ Թամարին Լ֊աշային, յաւիրսպատասպարութեանն [2] ՚այոց և Վրաց Շահանշահի և յամի արէկութեան Խունէի հօրեղբօր նորին, ես մեղուցեալ Ծառայ Վրիստոսի Խուպա՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս Նորավանից առ երջանիկ հայրապետս մեր տէր Սարգիս և ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց, զոր իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց և իմ արեամբս թափեալ և իմ պարտեպքն մեծ սիրելով այն ինձ էին որոշեալ՝ զԸնդերիս գիւղ իւր ամէն սահմանաւն, ի սուրբ եկեղեցիս Նորավանից ի սուրբ Կարապետն և ի սուրբ Նա֊

---

[1] Այլ օր. ընդ գեղ Լիպարտի։ — [2] Այլ օր. յամի պատուհասութեան։

խավկաց տուի՝ ազատ յամէն հարկաց։ Եւ չունի ոք հրամանն յայսմ հետէ մինչև յաւիտեան հակառակիլ այսմ ոչ յաւագաց, ոչ յիմոց, ոչ յօտարաց։ Եւ տէր Սարգիս և այլ միաբանքս հաստատեցին՝ ի տարումն տան պատարագ՝ ի Ա֊արդաւառի տօնին իմ մօրն հոգւոյն։ Ընդ թէ ոք յանդգնի և հակառակել ջանայ այսմ տրիցս՝ մանն և բաժին ընդ Յուդայիւն և ընդ հետաքանուացն առել և ընդ ամենայն չարագործացն՝ ի Պայենէ սկսեալ մինչև ի նեռն, դատապարտեալ պատժեսցի, և ի սուրբ Երրորդութենէն և յամենայն սրբոց ևս և յերից սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի ի մահ և ի կեանք։ Եւ իմ ազգք և զաւակք չունին ոչ ձեռն, ոչ իշխանութիւն ի վերայ այսմ տեղեաց։ Բայց թէ տաճիկ աւազ փոխի և հակառակել ջանայ՝ յիւր Աստուծոյն ապիրատ լինի և յիւր փեղամբարէն որոշած և անհամար հազար նալաթ ի վերայ նորա և յորդւոց և յազգի նորա եղեցի յայսմհետէ մինչև յաւիտեան։ Ի Թուին ՃՀՈՒ ամին 672»։

Եւ զի յառաջ քան զայս յափշտակեալ էին զդիւղն Եգտակի ձոր, վասն որոյ խնդրէ Ա֊իսպարեան բազում թախանձանօք յամիր սպասալարէն Օ֊աքարէէ և տարեալ ցուցանէ զնամիշուրն աթաբէկ Ալեկուզեն և Թաւիէ զդիւղն. և հրամայէ գրել ինքեան յիշատակ ի վանան Նորավանս և նզովիւք հաստատել, զի մի՛ ոք իշխեսցէ հետացուցանել զնա ի տուրբ եկեղեցւոյն։ Եւ ինքն գրէ իւրով ձեռամբն այսպէս.— «Ես Մեղուցեալ ծառայս Ա֊ստուծոյ Օ֊աքարէ, ամիր սպասալար՝ որդի մեծին Սարգսի՝ Հայոց և Ա֊րաց աստիճանի, դարձուցի զԵգտակի ձոր գիւղն ի Նորավանս սուրբ Խաչին Հարկաց և խնդրեցի ի տէր Սարգսէ՝ առաջնորդէ սուրբ ուխտին, ի տարումն ինձ տան օր պատարագ, զոր պարտին անխափան կատարել։ Եւ յետ մեր մի՛ ոք իշխեսցէ ի մերոց կամ յօտարաց յափշտակել զայս գիւղս ի սուրբ եկեղեցւոյն. ապա թէ յանդգնին՝ նզովեալ լինին Աստուծոյ ամենակալին

և յամենայն սրբոցն, և մասն և բաժին նորա ընդ Յուդայի և այլ խաչահանուացն և ուրացողացն եղիցի և մեր մեղացն պարտական լիցի. հաստատ է կամաւն Ընտուծոյ: Ի թուականիս ՚այոց 660»:

Յետ այսր բազում արդիւնս ցուցեալ մեծին և բարեպաշտին Լ՚իպարտի ՚ի սուրբ ուխտն, զի նմա շնորհեալ էր զգաւառն և զվանքն հայրենագիր սիգելաւ աթաբէկին Իւանէի՝ Լ՚աշա Վէորգոյն [1], և եղեալ՚ի վերայ գինիք թագաւորին ազնուական մատանեաւ: Ա՚ան որոյ ՚ի ձեռն եպիսկոպոսին տէր Սարգսի շինէ զպայծառակերտ քաւարանն և զարդարէ սպասուք և փարթամացուցանէ ամենայն գոյիւք և ժառանգութեամբ՝ ինքն և որդիք իւր, զորս ըստ կարգի յիշեացուք՝ և գրէ ինքեան արձան յիշատակի ՚ի վերայ սուրբ եկեղեցւոյն այսպէս. «՚ի 672 թուականութեանս ՚այոց, կամաւն Ընտուծոյ ես Լ՚իպարիտ՝ որդի Դլխկուսին, թոռն մեծի Օրբէլեանց, որ և հայրն իմ վասն մեծի քինոյն ել ՚ի հայրենի աշխարհէն իւրմէ և ՚ի թագաւորէն Ըփխազաց և գնաց ՚ի տունն Պարսից առ աթաբէկին Դլտկուզ, և նա մեծաւ փառօք և գոյովագութ սիրով ընկալաւ զնա և պարգևեաց նմա զմեծ քաղաքն ՚ամիան և յետ ժամանակաց եթող զնա որբ: Դու մեք անգիտութեամբ խաբեալք ՚ի նոցանէ՝ ծանեալ ապա զհաւատն իմ հայրենի, և ՚ի մանկական հասակի զարձայ վկրատին ՚ի լուսաւոր հաւատս սրբոյն Գրիգորի և ելի առ մեծ աթաբէկին Իւանէ: Դու նորա բազում սիրով ընկալեալ զմեզ՝ ետ փոխան հայրենեաց իմոց զ՚բաշկաբերդ իւր կերովս և այլ բազում գիւղս ՚ի Ա՚այոց ձոր, ՚ի Գնդաքունի, ՚ի Կոտայան և ՚ի Կայեն: Դու ես մեծ յուսով շինեցի զվանքս, որ կոչի Կոթաւանս, յաուաջնորդութեան տեառն Սարգսի՝ Սիւնեաց վե-

---

[1] Ա՚ՀԼ օր. հայրենագիր սիգելաւ աթաբէկին Իւանէի, հրամանաւ թագաւորին և Լ՚աշա Գնդաքունի:

բադիտողն, և կանդնեցի զսուրբ եկեղեցիս բազմաճախ գանձիւք, և դարձուցի զաւազ սուրբ նշանս բազում ճախիւք՝ի տանէ աթաբէկ Լասնէի և բնակեցուցի՝ի սմա: Թագեցի և զԱգաւակի ձոր իւր սահմանովն, ետու և զՏխաորը գիւղն իւր ամէն սահմանովք և թաղք մի՝ի *ամառոյ գիւղ*:

«Լակ տէր Սարգիս և միաբանքս հաստատեցին մեզ պատարագ յամէն շաբաթուամ յաւագ խորանն երկք օր՝ գկիրակէն և զշաբաթն՝ իմ մեղապարտ հոգւոյս Լիպարտի և գհինգշաբաթն՝ իմ կենակցին Ամբային: Երդ ոք լինիք ժառանգաւորք սուրբ եկեղեցւոյս խնդրեցէք մեզ մեղաց թողութիւն և որդիկաց մերոց՝ Նելիկումին և Սմբատայ և այլոցն, արեւշատութիւն, և զմեր յիշատակս կատարէք անխափան: Եւ թէ ոք հակառակի այս հոգեշատուր գիւղիս և կամ այլ արարքս ածիս և յափշտակել ջանայ՝ի սուրբ եկեղեցւոյս՝՝ի սուրբ Նշխարդութենէն նզովեալ եղիցի հոգւով և մարմնով, և յերից սուրբ ժողովոցն և յամենայն սրբոց անիծեալ լինի, ընդ սատանայի և ընդ Յուդայի և ընդ նեռին և ընդ ամենայն ուրացողաց դատապարտեսցի յահաւոր աւուրն Քրիստոսի. իսկ կատարիչքն օրհնեալ եղիցին: Եւ թէ տաճիկ աւազ փոխի և շորթել ջանայ՝ յիւր հաւատէն ապիրատ եղիցի և յԱստուծոյ և յիւր փեղամբարձէն հազար հազար նզովս լինի. երկինքըն նորա մի ցօղեսցէ և երկիրս նորա մի պտղաբերեսցէ»:

Եւ ահա մինչ այս այսպէս լինէր յաջողեալ յամենայն կողմանց՝ ապա և ինքն տէր Սարգիս յետ բազում արդեանց գընայ՝ի սուրբ քաղաքն Երուսաղէմ՝՝ որպէս վերագոյն ասացաք, և անդ մարտիրոսական մահուամբ կատարի: Եւ յաջորդէ՝ի տեղին տէր Մանուէլ Սանահնեցոյ, որ և սա գնացեալ առ մեծ կաթողիկոսն *այոց տէր Պօղոսն՝՝ վերատին հաստատէ

---

* Փարիզեան տպագիրն աղճատեալ և խառնափնդոր յաւաջ բերէ ասառնօր զբանըս մատենագրիս, զոր տեսանել կարէ ընթերցողն՝ի հե գլ. յեր. 99—113:

զայն ուխտ յաթոռ եպիսկոպոսաց և զթէիճն զոր ունէր՝ զգ-
ա՛յոց ձոր բոլոր և զ'Ախջաւան և զՔահուկ գաւառովքն.
և առնու շրջաբերական թուղթ, յորում՝ և էր ահագին նը-
զովիւք փակեալ և ամրացուցեալ, զի զկնի ժամանակաց մի՛ ոք
իշխեսցէ խախտել: Եւ ունէր օրինակ զայս *...

Ապա և՝ ի սորա ժամանակս մեծ և ալքայաշուք իշխանն
Ամբատ՝ որդի Լիպարտի, շինէ ժամատուն մի հրաշակերտ
յօրինուածովք՝ տեղի աղօթարանի՝ ի դրան սրբոյ Նախավը-
կային՝ ի տաշածոյ վիմաց և՝ ի կոփածոյ քարանց: Եւ յա-
ւուրս տեառն Սարգսի, որ զկնի սորա անունան սպասուք զար-
դարէ զեկեղեցին մեծաճախ զանձուք յոսկւոյ և յարծաթոյ և
՝ի պատուական մետաքսէից, և շնորհէ հայրենական ժառան-
գութիւն սուրբ ուխտին գիւղս երիս և այգիս յԱկոռի և՝ ի
Ջողոցիմ [1], յԱռափա և՝ ի Զուա և յԱմաղվաձորի: Եւ գրէ
արձան յիշատակի իւրոց եղբարցն և ծնողացն այսպէս.—«՝Ի
թուականիս Ջայոց 710: Ես զիր յիշատակի և արձան ան-
ջնջելի իմ Ամբատայ է՝ իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Լի-
պարտի, որ զաղօթարանս շինեցի և զեկեղեցիքս նորոգեցի վեր-
ստին և զաստուածամատիս սուրբ նշանքս և զսուրբ նշխարքս,
որ հաւաքեցաք ասա, զարդարեցի ոսկի պահարանօք և ետու
նախ յիմ հալալ հայրենեացն երկու գիւղ՝ զԱրէշ և զՆա-
պատ որ յատիշատակած էր՝ ի տեղւոյս, և յԱկոռի զնորատունկ
մեծ այգին իւր կիւրակաջրովն: Եւ տէր Սարգիս և միաբան-
քըս սահմանեցին յիշատակ մեղ զաւագ բնծին՝ զբովանդակ տա-
րին անխափան պատարագօք՝ զկիրակին և զշաբաթն Լիպար-
տի, զհինգշաբաթին՝ Ստեփանի, զերկուշաբաթին և զերեքշա-
բաթին՝ Յովանէի, զուրբաթն Փախրադաւլային: — Դարձեալ
ետու և զՋողոցմոյ այգին և զՁուայ այգին՝ և հաստատեցաք

---

* Որպէս՝ ի մերում օրինակի, նոյն և՝ ի Փարիզեան տպագրին, չէք տեսանել պատ-
ճէն շրջաբերական թղթոյն, զորմէ առաւնօր են խօսք:

[1] Ա՛ՀԼ օր. Ե՝ ի Հոզոցմոց:

յամէն եկեղեցիքդ միւն օր պատարագ անեն [1] մերոյ խաթունեին: Յետ այսմ տուաք և զԸղատ գիւղն իւր ամէն սահմանովն, շրջակայ լերամբ և դաշտով՝ սկսեալ ի բարձր դիտաւոր սարէն, որ Ռուռականատաց կոչի՝ մինչ ի Հերևան, Հողցմանց և Ձաւաձոր և ի գլուխն Ակուռայ: Ընդ սմա և զեմ ձեռատունկ այգին ի Ծաղկաձոր [2] վասն հոգևաց եղբօրորդւոյն իմոյ Ռուբէնէլին [3], որ տղայ հասակաւ սպանաւ ի պատերազմի յաշխարհն Խալանդրայ ի դաշտին Խազրայ, զոր այժմ Խիչախ կոչեն: Եւ սահմանեցաք նմա պատարագ ժէ օր, որամ յամէ անխափան կատարեն՝ զժ օրն յառաջ տօներին Պաւթի և Յակորայ և այլոցն, և զհինգ օրն ի նոր կիւրակէին: Ընդ կթէ ոք ի մերոց կամ յօտարաց, յառաջաց կամ ի ձեռնաւորաց զմեր յիշատակս խափանել ջանայ և ինչ և ի ցէ պատճառաւ հակառակել կամ յափշտակել խորհի՝ յամենատեղծ հրամանացն Ընտուծոյ անլուծանելի անիծիւք ընդ Ռևիաթայ և իւրոցն և ընդ օձին նզովեալ եղիցի, և յառաքելոց և ի մարգարէից և ի հայրապետաց և ի մարտիրոսաց և ի սրբոց հրնշատակաց ոչնշեալ և անիծեալ լիցի, ընդ Կայինի և Ռամայ, Կորխայ և Պատանայ և Ընիրոնի, Նզաբելի և Գևնզի, Յուդայի և Ընիոսի և ուրացեալ Վասակայ դատապարտեալ անշէջ հրովն պատժոցի ինքն և որդիք իւր, անուն և յիշատակ նորա ջնջեալ եղիցի յաշխարհէ և մեր վերացն պարտական եղիցի. իսկ կատարիչքն օրհնեալ եղիցին: Եւ թէ տաճիկ աւազութիւն փոխի և խափանել ջանայ՝ Ընտուծոյ և յիւր փեղամբարձն ապիրատ լիցի և իւր հալածն նմա հարամ լիցի, երկինքն նորա հուր ցօղեսցէ և երկիր նորա փուշ բերցէ, և որդւովք և ազգով իւրով ջնջեալ եղիցի ի կենաց իւրոց, ամէն»:

Դարձեալ և յետ աւուրց ինչ այր մի մեծազգի ի տոհմէ

---

[1] Ձյլ օր. պատարագ հանին մերոյ Խաթունին: — [2] Ձյլ օր. Ծաղկայոր: — [3] Ձյլ օր. Բնուբինելին:

իշխանացն Խաղաց՝ Թոռն Ջուրջանոյ, Մահևան անուն՝ զոր
րոյ զնախնիսն յաւերման ժամանակին բերեալ էր աթաբէկին
Լանէ և բնակեցուցեալ ՚ի Վայոց ձոր և տուեալ հայրենեաք
զԸրբոյն բերդ պլղովք ագարակօք: Եւ այս Մահևան անզա-
ւակ գոլով՝ բաժանէ զհայրենիս իւր ընդ եղբօրորդւոյ իւրում
Ամիրային և առնու զկէս բերդին և որչափ ջուրն հատանէ զան-
դաստանն որ ՚ի Վարդենեաց կողմանն. և եկեալ ՚ի սուրբ ու-
ռքն առ տէր Մարգիս՝ ստանայ հնչեան զաւակ զսուրբ նշանն,
և ընծայէ զեւր հայրենաբաժին զԸրբոյն և զտուն և զայգիս
որ Ա՚ռփայ և զամէն ստացուածս իւր ՚ի սուրբ նշանն: Եւ գրէ
հնչեան արձան յիշատակի և ահագին և մեծամեծ նզովիւք
փակէ և ամրացուցանէ, զի յետ ժամանակաց մի ոք իշխեսցէ
խախտել զայն հոգևցատուր ՚ի սուրբ եկեղեցւոյն. և սահմանէ
հնչեան քսան օր պատարագ առ յամէ անխափան կատարել[1]:
«Եւ արդ եթէ ոք ՚ի մեծամեծաց կամ ՚ի փոքունց, յաւա-
գաց կամ ՚ի ձեռնաւորաց այս որոցս հակառակ կայ և զԸրբ-
բոյն ՚ի սուրբ եկեղեցւոյն Աղուաւանից հանել խորհի զինչ և
իցէ պատճառաւ, և կամ յառաջնորդաց տեղւոյն և ՚ի ժա-
ռանգաւորաց զպատարագն Ծուլանան կատարել և անհոգս
առնել՝ այնպիսիքն ջնջեալ եղիցին ՚ի դպրութենէն կենաց, և
մասն և բաժին զատանային և զՅուդային և զամենայն չա-
րագործացն առցեն և Ա՚ստուծոյ և յամենայն սրբոց նզովեալ
եղիցին:

Հայց այլ ևս բաղում արդիւնս առնեն ՚ի սուրբ եկեղեցին
՚ի բնիկ ազատաց և յընտիր տանուտերաց, որպէս Ախթամա-
րեան զաւակն, որ ՚ի հին ժամանակաց բնակեալ էին Ա՚ղուփայ
գիւղն՝ տան յիւրեանց Հայրենեացն զԱյեկի քարոյ այգւոյ[2]
գվերին բաժինն, և այլ յոլով երախտիս ցուցանեն Ախթամարն
և Երիսաբեան և գրեն հնչեանց յիշատակ և պատարագ: Ընդ-

---

[1] Այլ օր. տ՚յամէ անխափան: — [2] Այլ օր. այեին:

մանապէս և քահանայ ոմն Ը՛նորհաւոր անուն. սա բազում հայրենիս ի նոյն գիւղ (ընծայէ) և հաղար դրամ, և սահմանէ ինքեան պատարագ:

Յայնմ ժամանակի զարմացոյց չարն պատերազմ ի մէջ և կեղեցւոյ. և յարեան ոմանք, զԱիմէին և զԸկիտուիկլէն խորհելով ի վերայ սուրբ և առաքելական աթոռոյս՝ սկսան օձել և խաբեել զսահման մեծամիճակ գաւազանիս Միւնեաց, որ հին և հարուստ ժամանակօք առաքելական և հայրապետական կանոնիւ հաստատեալ կայր: Իշխան ոմն Պաղշ անուն՝ որդի Վասակայ, զեր գաւառն և զգեղեան որ ի Վայոց ձոր, կամէր յափշտակել և այլում նկեղեցւոյ ժառանգեցուցանել: Եւ աներկիւղ ոմն անզգայարար մոլեգնեալ ի չար ախտէ[1] մնափառութեան և ագահութեան ի գաւառին Երընջակայ՝ Յովհաննէս անուն, որդի Երիցու մի, Սեդրաք անուն՝ ՀԸպրակունիս գեղջէ, գնայ առ երջանիկ կաթողիկոսն ՝այոց տէր Կոստանդին և պատրեալ զնա խաբող բանիւք՝ ձեռնադրէ զի եպիսկոպոս և դայ Երընջակու վանս՝ յօդելով պատճառս այսպիսի. եթէ և այս աթոռ է եպիսկոպոսաց, զի գոն առաջ գերեզմանք հայրապետաց, որք էին պատահմամբ նկեալ վասն ամրութեան բերդին ի ժամանակս եպիսկոպոսացն Միւնեաց և անդ վախճանեալ: Եւ թիկունս արարեալ յայսպիսեացն հաղագ բանիս մի՝ բռնաբար յափշտակեալ զԵրընջակ գաւառ. վասն որոյ եկեալ եպիսկոպոսացն տէր Յարդսի ի Կորտաւանից և տէր Յովհաննու ի Տաթևոյ՝ հրամանաւ և օժանդակութեամբ մեծի և բարեպաշտ իշխանացն իշխանին Տարսայիճին՝ եղբօր Սմբատայ, զնացին առ մեծ կաթողիկոսն ՝այոց տէր Յակոբ, որ զինի տեառն Կոստանդեայ՝ և ծանուցին նմա զպղծ տապրակութեանացն և զպատառումն առաքելական վիճակին: Իսկ նորա լուեալ և ընդոստացեալ՝ հրամայէ զրիլ թուղթ և ա-

---

[1] Ա՛ղ օր. ի չար ախտէ:

հաղին նզովիւք, կարէ ի կենաց զեղկելին Յովհաննէս որ Այրընջակի. և հրահրան անլծիւք փակէ մի և սա հանարձակիլ ումեք ի հերքումն այնր վճռակին։ Զմանուսպէս և սա իշխանն Պռոշ գրէ թուղթ մեղադրանաց [1] և հրամայէ ի բաց կալ յայնմ մուտս թեհանց, ապա թէ ոչ՝ անէծս ցաւագինս ժառանգեսցէ։ Ընդ այսս հոգացեալ եպիսկոպոսացն՝ դարձան այսրէն, և եկեալ ի տեղիս իւրեանց՝ նախ մատուցին զնամականն Պռոշայ, և նա ըստ հանձարեալ մտացն և մեծայոյս հաւատոյն մեծաւ ղղջմամբ զմեղսս խոստովանելով՝ եթող զհաւկատակութիւնն և ձեռագիրս պայմանաւ հաստատեաց ուխտ երդման, զի այլ ոչ ևս մատծեսցէ ինքն կամ իւրքն [2] զայնպիսի բանսարկութիւն, և դարձոյց անդրէն զթէմին և օրհնեաց յեպիսկոպոսացն։ Իսկ զմիւսն՝ որ Այրընջակ որջացեալ, ըմբռնեալ՝ ցուցին (նմա) զնզովաբիր նամակն և հանեալ կոդոպտեցին ի նմանէ զձևն եպիսկոպոսութեան և քահանայութեան և անդրէն հաստատեցին զգաւառն ամենայն։ Այսպէս օրինակ շրջաբերական թղթոյն տեառն Յակոբայ զոր բերին, այս իսկ էր *։

ԳԼՈՒԽ ԿԱ.

Վասն ձեռնադրութեանն Օրբէլեանց, երիս սահակ էին և արդէս, և վասն գալոյ նոցա յաշխարհս յայս, և վասն բազմաբանիցն և գործոց չբոյոց յոլովս։

Յիսկզբան նահապետութեան աշխարհիս Հայոց և վասն ցեղապետութեան մերոյինս սեռի նախնւոյն Թորգոմայ էին նորա որդիք ութ արուապոյնք և հակայականըզք, յորոց

---

[1] Այլ օր. գրէ ինազի գեղագրելով գինգն և ղբդէս նոր, և հրամայե ի բաց կալ։ — [2] Այլ օր. կամ ընդն կամ նրդն։

Ցերկոսին օր. մեր և ի Փարիզեան տպագրին յիշեալ շրջաբերական թուղթդ ոչ երևի ի միջի։

երիցագոյնն Հայկ, երկրորդն՝ Արթոս, երրորդն՝ Արտաւս, չորրորդն՝ Մովկան, հինգերորդն՝ Լեկան, վեցերորդըն՝ Հերաւս, եօթներորդն՝ Մովկաս, ութերորդն՝ Եգրէս: Եպա բաժանեալ Թորգոմայ զժառանգութիւնս որդւոց իւրոց՝ տայ զհայաստան աշխարհս բոլոր սահմանօքն Հայկայ, և զծմակայինն աշխարհն հիւսիսային՝ Արթոսայ և այլոց եղբարցն:

Եւս Արթոս գնաց ի լեառն, որ կոչի Երմաղ՝ և անդ շինեաց իւր տուն և ամրոց մի անառիկ ի պատշաճաւոր տեղւոջ, և կոչեաց զերկրն Օրբէթ և անուանեցաւ աշխարհն այն ի Եուանաց մինչև ի ծովն Պոնտոս յանուն նորա Արթէ: Եպա յետ բազում ժամանակաց որդիքն գՀարս փոխանակեցուի՝ եկեն նահապետութիւնն Արթէայ մինչ ի ժամանակս թագաւորութեանն Պարսից մեծին Խոսրովու, որ Ներքաւուս կոչեցաւ: Եւ սահման էր ազգացն կոչել զգլխաւորն իւրեանց տանուտէր, զի ոչ ունէին թագաւոր: Եւ նահէր տանուտէրն ի Արթէ ի մեծ քաղաքին Մցխիթայի, որ շինեցաւ ի Մցխիթայէ՝ յաւագ որդւոյն Արթոսայ. որք և նեղեալ յայնմ ժամանակի ի բռնաւոր թագաւորէն Պարսից՝ կամէին զմահ ընդ կենաց փոխանակել: Եւ էր կացեալ[1] յայնմ ժամանակի պետ աշխարհին ազգացն Երդարմոս պարսիկ հրամանատար Երրիտոնայ, որ տիրեալ էր Պարսից և ազգացն և Ընդանից: Եայս այն Երդարմոս է, որ շինեաց վերստին զՄցխիթայ և և պարսպեաց կրաշաղախ վիմօք և եղ պարիսպ յԵրմաղ լեռնէ մինչ ցգետն Կուր: Ցետ վախճանելոյն սորա[2] ազգք ջոջք տիրէին ազգացն, և խռովութիւն և ապականութիւն տիրէր առնեցունց առ հասարակ, էր որ ի Ներքաւուս Խոսրովոյն և էր որ զկնի նորա ի Վռուէ Խոսրովոյն: Եւ էին ազգքն ի մեծ վշտի և կայրն յուսահատեալք յամենայն կողմանց:

---

[1] Ասէ օր. և էր կացեալ յայնմ ժամանակի: — [2] Ասէ օր. որ և յետ վախճանելոյն սորա:

Ահա ընդ ժամանակս ընդ այնոսիկ անկանէր աղմուկ շփոթի և խռովութիւն մեծ ի մէջ թագաւորութեանն Հնդկաստան աշխարհի, որ յարևելից կոյս անդր քան զաշխարհն Խալանդրայ՝ սահմանակից Խազրայ և Հոնաց, որ և ձգի երկայնութեամբ մինչև յԱրևմուտս լեառն։ Վասնզի ի մեռանել թագաւորին՝ Հներակուր կոչեցելոյ, թագաւորազունքն ընկրան պատերազմել ընդ միմեանս. և զօրացեալ մի կողմն՝ փախստական լինի միւսն, որ էր այր յաջողակ և պատշաճագնդ, ուժգին և անձնեայ՝ երիտասարդ հասակաւ. որոյ առեալ զընտանիս իւր և զդուներն թագաւորական գանձուցն՝ օդապարիկ երիվարօք սրաթռիչ լեալ անցանէին ընդ բազում աշխարհս այնքան ահագին կերպարանօք, զի ոչ ոք համարձակէր ընդ առաջ լինել նոցա։ Եւ անցեալք ընդ դուռն Պարիսպայ՝ իբր վերին ակնարկմամբն նկուն յաշխարհն Վարթլայ առ տանուտէրն Պզնիթայ՝ և տեսին զնոսա նեղեալ և ի մեծ վտանգի տարակուսեալ ի Պարսկացն։

Ապա խօսին ընդ տանուտէրն և ընդ առագաստն արան և ասեն. «մեք ի թագաւորացն Հնդկաց եմք և հատուածեալ յեղբարց մերոց՝ նկաք աստ և համձիցաք ընդ ամուր աշխարհըս ձեր, և աստուածք ձեր վասն վշտիդ ձերոյ ածին զմեզ յօգնութիւն ձեզ։ Արդ մեր կամք է կամ դադարել առ Պարսից թագաւորութիւնն և կամ անցանել առ ինքնակալսն Հնդկաց. բայց թէ ձեզ հաճոյ թուիմք՝ պատրաստեցէք մեզ տեղի հանգստեան և կամք ասէն և թափեմք զձեզ ի նեղչաց ձերոց, և թէ ոչ՝ երթամք զճանապարհ մեր ուր և աստուածն մեր հոգասցէ»։ Իսկ տեսեալ առագ տանուտերաց աշխարհին զայնպիսի արս քաջակորով և ուժգին՝ և լուեալ զհաճոյական բանս նոցա՝ մեծապէս խնդացին ի վերայ նկելոցն. և առ բարին խրախութիւն մեծ և բարձր փառօք և մեծաշուք պատուով ընկալան զնոսա և սիրեցին յոյժ յոյժ։ Եւ զանազիկ ամուրն Օրբէթ, որ շինեալ էր ձեռամբն Վարթլոսայ՝ նստուն

նոցա տուն բնակութեան և տեղի ամրութեան, և գաւառս բազում և աւանս մեծամեծս և բերդեսրս հաստն ի ժառանգութիւն նոցա։

Ապա միամտեալ նոցա ի տեղւոջն՝ բնակեցան Օրբէլեան. և վասն անուան բերդոյն յետ յոլով ժամանակաց Օրբուլք կոչեցան, այսինքն՝ Օրբէլեցիք. զի սովորութիւն է ազգին այնմ անուամբ տեղւոյն կոչել զիշխանսն, որպէս Ա՛նթէուլքն և Ա՛եփէուլք և Ա՛բաջուլքն, և ի Հ՛երնեթոյ Հ՛երնեթաւքն, և ի Ջ՛աւախեթոյ՝ Ջ՛աւախուլքն, և ի Կախեթոյ՝ Կախեցիքն, և ի Լ՛ևխեթայ՝ Լ՛ևխեմնայքն և այլ բազումք. և մինչև ցայսօր սակս այսր պատճառի Օրբէլք կոչի ազգն այն, որք յառաջն Ա՛ռնեուլք կոչէին, այսինքն՝ Ա՛ռնացիք։ Եւ արդ մինչ այս այսպէս լինէր՝ ապա ինքեանք ժողովեցին զառնն Լ՛բաց և զօրս գումարեալ յարևան ի վերայ ամենայն նեղչացն և կոտորեալ Հալածական արարին՝ ընդդիմանալով Պարսից։ Եւ եղև խաղաղութիւն յաշխարհին յայնմ, վասն որոյ կարգեցին գնոսա սպասպարապետ և զօրագլուխ ամենայն տանն Լ՛բաց։ Եւ ի թագաւորելն Լ՛բաց առաջին թագաւորին Փառնավազայ առաւել պատուեցան Օրբէլքն ի նմանէ. և ի Լ՛բաց աշխարհին ոչ գոյր որ նման նոցա կամ հաւասար բայց միայն ի թագաւորէն։

Եւ ահա զայս ծանեալք ընդ աղօտ ինչ ի Լ՛բաց Պատմութենէն։ Բայց վասն նախանձուն Վէոլորդի թագաւորին, որ ազգաւ Ջնջեաց գնոսա ի Լ՛բաց աշխարհէն, Ջնջեցին զանուն նոցա ի պատմութենէն իւրեանց և յամենայն գրեանց և յեկեղեցեաց։ Լ՛աւն որոյ և մեք քննեալ և տեղեկացեալ՝ ծանեաք զսակաւն ի բազմից ի գիտող արանց և ի մեացեալ յիշատակարանաց ուրիք ուրիք, ևս և յաւանդութեանց նախնեացն իւրեանց, զոր ծանուցին հարք որդւոց մինչև ցմեզ։ Այլ զի ժտեալ էր յիշատակ նախնական զրուցաբանութեանց նոցա, նա և ամենայն ստութիւնք և գործք երևելիք ի տանն

Վ֊րայ ազգին Օրբէլեանց ՚ի նոցին ժամանակագրոցն, զոր Վարթևս Ջխորեցի կոչեն, վասն այն մեք ոչ գիտացաք զորպէսն և զկարգ բանիցն, զի ըստ կարգի շարայարեալ էաք ՚ի մտաւնիս. բայց զոր գտաք ՚ի հայալեզու գիրս սակաւ ինչ յիշատակ՝ գիցուք, և և զվախճան կատարածի նոցա զոր հաւատեաւ ծանոյց մեզ գեղեցիկ Պատմութիւնն Մխիթարայ Ընկերոյ:

Ելդ ՚ի Թուականութենէն ֊այոց 498 ՚ի թագաւորութենէն Վ֊րայ Վաւթի և ֊այոց՝ Վաղկայ շահանշահի որ ՚ի Վ֊անանդ, և ՚ի կայսերակալութենէն Յունաց Մաւնաւմախին՝ տեսին նուաղեալ զազգս քրիստոնէից հագարացիքն Իսմայէլացիքն: Եւ ձայն տուեալ միմեանց ՚ի Խորասան, ՚ի Խորազմաստան, ՚ի Փարս և ՚ի Պրսման, ՚ի Ռուխաբ և ՚ի Մազանդարան, ՀԸրաղ, ՚ի Ռադդաս և ՚ի Ռասբ, ՀԸռան և ՀԸտրպատական՝ ժողովեցան բազմութիւնք Պարսկաց և Խազրաց, Խորազմաց և Ըրաբկաց, և և սկիւթացի Թուրքաստանեայց՝ և եկեալ բանակեցան ՚ի դաշտին Կարնոյ անթիւ և անհամար բանակօք. և խոր հնձան զկոտրտուրդ զոր ոչ կարացին հաստատակ, այսինքն՝ բառնալ և ջնջել զկրծնս և զանուն քրիստոնէից ՚ի ֊այոց, ՚ի Վ֊րայ և ՚ի Յունաց աշխարհին:

Ընդ համբաւ զառնալոյն և սիւզերակործան հռչակին հասանէր յառաջագոյն առ կայսր Յունաց, և զողուճի սարսռալն հասեալ՝ կալաւ զերիկամունս ամենայն մարդոյ: Վ֊ասին որոյ յղեն այսր զՎոմնենոան Տրապիզոնոյ զօրօք և խնդրեն միաբան օգնականութիւն ՚ի ֊այոց և ՚ի Վ֊րայ՝ թերևս կարացեն զերծանիլ յայնմ անդնդապատոյտ և անգնեռանդ բարկութենացն հարաւայնոց: Զոր լուեալ Թագաւորին Վաւթի և Վաղկայ՝ ոչ համարձակեցան ընդ առաջ կալանել իմայէլեան զօրուն, այլ մեծապատառս Թախանձանօք հաւանեցուցեալ զքաջն անպարտելի՝ զ֊իպարիան Օրբէլեանց գնալ և խառնիլ ՚ի զօրն Յունաց և ընդդիմանալ մարտին եկելոյ, և

ինքեանք զօղեալ որջացան յամուրս աշխարհին։ Ապա յանձն առեալ Լիպարիտն անվախ սրտիւ ասէ. «Ես երթամ ընդ առաջ այլազգեացն և դնեմ զանձն իմ ի վերայ քրիստոսական հաւատոյս, և զօրութեամբն Աստուծոյ կամ գարձուցանեմ անդրէն և կամ մեռանիմ վասն Քրիստոսի. բայց՝ ով թագաւոր՝ յանձն առնեմ զխնդրուքս իմ քեզ, զի մի վասն նահանձոտ և չարաբարոյ ազատացդ վնաս նենգեսցես ինչ սոցա և զրկեսցես ի պատուոյ և ի հայրենեացս մեր»։

Այս ասացեալ՝ ինքն Լիպարիտ հանդէս արար ազատաց և զօրաց իւրոց, որ ունէր զկէս թագաւորութեանն, և անցին ի Հանդիսին 700 ազատք մեծամեծք, որք էին սեպհական ծառայք նորին՝ և 16,000 այլք պատերազմողք։ Խակ ի զօրացն այլոցն էառ տասն հազար այր, և գնացեալ ի Վանանդ ի դաշտն Կարուց՝ խառնեցան ի նա զօրքն Հոռոմոց 15 հազար այր. և եղեն միանգամայն 41 հազար հեծեալ։ Եւ զի այլազգիքն կոտորեալ էին ի նախ զվերջոյ գիւղ և աստպատակեալ զամենայն շրջակայ գաւառսն և բանակէին ի նոյն դաշտի [1], ձակատեցան ընդդէմ իրերաց ընդ լուսանալն այգուն և յօրինեցին զառաջին հանդիսին երկբակարգեան գնդովք՝ նախահարտիկս և միջնահարտիկս և վերջապահս։ Եւ զի առանձին բազմութեան խանդակաւթացուցն Լիպարեանն զօրն ոչ ինչ երևէին՝ այլ իբր ջրառուս կամ զինաքաղս թուէին առնոցա, տեսեալ զայն՝ անպարտելի ախոյեանն քաջն Լիպարիտ զօրացոյց զգունդն իւր և ասէ. «Մի երկնչիք, այլ միայն զօրացիք անուամբն Քրիստոսի և կինքեցէք զձեզ նշանաւ խաչին՝ և մեր է յաղթութիւնն»։ Եւ ինքն իջեալ յերիվարէն ծունր դնէր և կինքէր զինքն նշանաւ սուրբ խաչին և յանձն առնէր Քրիստոսի, և կապէր ի պարանոցն զմանեան որ ի փրկական խաչէն, և այնպէս զինեալ զինքն՝ հեծեալ ի տաճիկ

[1] Այլ օր. և զի այլազգիքն խորհէին նախ։ — [2] Այլ օր. և բնակէին ի նոյն գաշտի։

երիվարն՝ ընկենոյր զոսկենկար վահանն ի թիկունան, և բռ-
ձաւճ նիզակիին յահեակ բազուկն, և զայն պողպատիկ շրմ-
շիքն երկբերանի ի յաջ ձեռին, և զվաղն ահագին ի ներքոյ
բարձիցն իրր զուռն դարբնաց և կամ զսակր կոցաւոր քարա-
հատուց՝ անցեալ ի մէջ ռազմաւոր հանդիսին արշաւէր սի-
գալով յայսկոյս և յայնկոյս։ Եւ յոսկեկուռ զրահէն և ի սա-
զաւարտէն նշոյլք հատանէին իրր յարեգականէ։

Ասէր [1], գոռայր իրր զառիւծ, խնդրէր ի նոցանէ մենա-
մարտիկս և ասէր. «Ես եմ Լիպարիտն Ափխազաց, եկայք՝
քաջքդ Պարսից և Ասրեաց, և նախամարտեսցուք ընդ մի-
մեանս»։ Եւ թէպէտ բազում անգամ խնդրեաց՝ ոչ ոք իշ-
խեաց ելանել ընդ առաջ նմա. և յոր տեղ սլանայր Լիպա-
րիտն՝ իրր զարծիւ խոյանայր ի վերայ նոցա [2]. յետս յետս
մնաւէին՝ զմիմեանս առաքուր կոխելով։ Ապա զիտաց Լի-
պարիտն, զի բեկան սիրտք նոցա և թուլացաւ զօրութիւն նո-
ցա՝ դարձաւ յիւր ռազմն և քաջաբերեալ՝ յառաջ շարժեաց։
Եւ գոչեցին ահեղ աղաղակաւ և խառնեցան ընդ միմեանս.
և խմբեցաւ պատերազմն ահագին իմն դղրդմամբ, որ թուէր
իրր որոտումն ամպոց և ձայնմռունք փայլատականց [3]։ Եւ հն-
քըն Լիպարիտ իրր զամպ հրախառն մռնէր և ելանէր և կայ-
ծակնահալ առնէր զբազումս. և զօրէն հրոյ ընդ եղէգն փո-
թորկեալ՝ ձեղքէր զառաջ նոցա և անցանէր յայն կողմնև յաջ
և յահեակ հոսէր գետս արեանց. և դնէր կոյտս դիականց և
հատանէր յայլազգեացն գունդս գունդս և զայն իրրև զերա-
մըս նապաստակաց տապատս արկանէր ի դաշտին [4]։ Եւ այս-
պէս կոտորեալ՝ յաղթեաց Լամայէլացւոցն և փախստական ա-
րար զառաջս ձնացեալն քաջն Լիպարիտ զօրութեամբն Յի-
սուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ։

---

[1] Այլ օր. էէր։ — [2] Այլ օր. խոնարհ ի ճիրս նոցա։ — [3] Այլ օր. երկրա-
շունչ։ — [4] Այլ օր. տապատ արկանէր գետին։

Եւ ապա ՚ի հասարակել աւուրն զարձան ՚ի մեծաջան աշխատութենացդ և վաստակոց մեծաւ գոհութեամբ և բազում ուրախութեամբ։ Իսկ անդիծեալ և սիրասպան ազատքն Վ֊ըրացդ՝ երկուցեալ յահագին զօրութենէ Նորա և խորհուրդ առեալ ընդ դէպ֊ս֊ուլ զօրագլուխն Վ֊իպարտի՝ և յանկարծակի հասին գՋել երիվարին Նորա և ընկեցին յերկիր գՎ֊իպարտիան։ Եւ ՚ի մէջ առեալ բազմութեանն սպանին զնա ՚ի տեղւոջն՝ և ածին խաւար և սուգ քրիստոնէից։ Օ֊որ և իմացեալ Խամչէլացուցն՝ մեծաւ խնդութեամբ զարձան անդրէն և սուր ՚ի վեր առեալ կոտորեցին զզօրսն Վ֊րաց, և ոմանք փախստական եղեալ ցլուեցան ընդ երկիր։ Եւ այն էր կառարած կոտորած աշխարհիս Հայոց և Վ֊րաց, զի տիրեաց Տաճիկն ընդհանուր գաւառաց։ Ընդ սակաւ մի յետոյ գԸնի ՚ի 513 (Ընդհանրական տարեգրութեան), առին և զՎարս, առին զբոլոր գաւառն Շ֊իրակայ և Վ֊անանդայ և Ընշարունեաց [1] և զԸրտահանեան և զՎիսական աշխարհս և զԽաղացն և զամենայն երկիրս մինչ ՚ի գուռն Տփղեաց։

Եւ այդ պայպախի գուռն [2] մեծի կոտրեան և աշխարհագումար կոտծանմանն քրիստոնէից յայնմ աւուր բացին անիծեալ և սիրասպան զօրքն Վ֊րաց։ Ոչայց ևս զազանութեն Վ֊իպարտի համարիմ ոչ կորուստ անձին, այլ գիւտ մեծի փըրկութեան՝ զի եղեալ զանձն ՚ի վերայ հօտին Քրիստոսի՝ մեծապէս հանդիսացաւ և անպարտ սպանմամբ յիւրոցն՝ մարտիրոսական արեամբ պսակեցաւ և գնաց առ ամենաթագաւորն Քրիստոս, զի ՚ի նմանել ընկալցի զվարձս և զպարգեւս մեծամասակ աշխատութեան իւրոյ։ Իսկ ապա հաւատարիմ ծառայք Նորա բարձին զդիակ գեղեցիկ կրիտասարդին և անպարտելի քաջին մեծաւ ոգւով և տարեալ ՚ի Կարս՝ կազմեցին զագաղս և զարդարեցին ոսկեհուռ հանդերձիւ և ալքա-

---

[1] Այլ օր. Ընշա֊ունեաց։ — [2] Այլ օր. Պայպախի գուռն։

յական ձոխութեամբ, և առեալ տարան ի մեծ հանդիսաւոր վանան իւրեանց ի Ռհեթանիա, որ էր շինեալ նախնեացն նո-
րա տուն գերեզմանի ինքեանց։

Նա եկեալ թագաւորն Պատիմ ամենայն մեծամեծաք և ա-
բարեալ կոճ մեծ ի վերայ նորա՝ եդին ի տապանի ընդ հարս
իւր։ Ակ պատիւ և բարձ ցեղին Օրբելեանց ի տան թագա-
ւորին էր այսպէս.—լինել սպասաւոր ամենայն զօրացն և հր-
բամնատարած ամենայն աշխարհին Վրաց և ամենայն գոր-
կալք տանն արքունի ընդ ձեռամբ նոցին. ունել սեպհական
երկոտասան դրօշս և յամէն դրօշ՝ հազար այր։ Նա զի սահ-
մանն էր թագաւորին սպիտակ լինել վառն և կարմիր նշան ու-
նել, հրամայեցին սոցա կարմիր ունել զվառ դրօշին և սպի-
տակ նշան ի վերայ՝ և ի շրջնէն առաջի թագաւորին և ի
կանգնելն ունել ի ձեռին գաւազան առիւծագլուխ, և ի ժամ
ճաշոյն առանձին նստել ի բազմականացն ի վերոյ քան զամե-
նայն դէդէպուլ նախարարան և ուտել հաց արծաթի սեղա-
նով. և սոքա էին թագադիրք թագաւորին։

Նա արդ յետ բազում ժամանակաց ի թագաւորութեանն
Պատիի հզօրի՝ որդւոյ Պէռոզէ, մեծ սպասալարն Օրբե-
լեան Լատնէ յոյժ արիացեալ ընդարձակեցոյց զսահմանն Վր-
բաց՝ պատերազմեալ ընդ Տաճկաստան. զի առին զՏփղիս ի
Տաճկէն և զՏաւուշ, զՊապ, զՏէրունականն, զԼաւէ և
զԸնի ի 572 թուականին։ Վասն որոյ առաւել սիրեցաւ և
պատուեցաւ ի թագաւորէն, և ի վերայ հայրենեաց իւրեանց
տուաւ նմա ի թագաւորէն Լաւէ իւր գաւառովն, և Ըգա-
բանէն՝ տեղի գարապապի, և Շամշոյլէ, որ էր հայրենիք նո-
ցին՝ վերստին տուաւ գաւառովն։ Նա այս մեծ սիգելաւ և
թագաւորական մեծանալա հայրենիք հաստատեցաւ սոցա։
Ակ ի մեռանելն Պատիի հզօրի առնու զթագաւորութիւնն
որդին նորա քաջն Պեմեարէ, որ էանց գովութեամբ ընդ նախ-
նիս իւր և թագաւորեաց ամն 33։ Նա առաւել սիրեաց և

պատուհաց զԻսանէ և զորդին նորա Ամբատ: Ի սորա աւուրս առին Իսանէ և Ամբատ զԼոռնան, որ ի բազում ամաց էր առ Տաճկին. և այն ևս հաստատեցաւ հայրենիք նոցա ի Թուականին 577: Յետ այսմ մեռանի Իսանէ ծերացեալ աւուրբք և առնու զտէրութիւն նորա որդին իւր Ամբատ: Եւ ծանիր, զի սոքա խնամութեամբ խառնեալ էին ընդ Թագաւորին Վ֊րաց և ընդ Թագաւորին Հայոց Ախբիկեանց, որք էին Բագրատունիք. վասն այնր պատճառի առին ի նոցանէ զԲագրատունի անուանն, այսինքն՝ զԱմբատն և զԻսանէն, որ է Յովհաննէս՝ և զ֊Իպարիտն և զԶլիկուճն և զԼուրթէլն ունին ի հին նախնեացն, որ ի Հնոց ակին, և զայլ անուանն ի Վ֊րաց առին:

Վարձեալ առնու և միւս Իսանէ՝ Էբուլէթի որդին, ըզՎռանիս: Եւ յետ բազում յաջողուածոց և մեծամեծ քաջութեանց մեռանի Վեմեւոլէ Թագաւոր ի 607 Թուականին: Եւ առնու զԹագաւորութիւնն որդի նորա Վասիլ՝ նման հօրն, այր հզօր և իմաստուն. և կեցեալ ամս երկու՝ և սա մեռանի: Եւ ի ժամ վախճանին կոչէ զկաթողիկոսն և զմեծամեծ դէդէպուլն, կոչէ և զեղբայր իւր զԳէորգի և զփոքրիկ տղայն իւր զԱմիրան՝ և դնէ առաջի իւր զաւագ խաւտն և զիրկական խաչն և զսուրբ աւետարանն և ասէ. «ո՛վ մեծամեծք Վ֊րաց՝ դուք ինքնին քաջ գիտէք, եթէ որպէս ջանաց հայրն իմ ի վերայ ձեր և կրկին նորոգեաց զԹագաւորութիւնս զայս, և ի ժամ մահուն մեծամեծ ուխտիւ և գրով ինձ շնորհեաց զԹագաւորութիւնս. և ես այժմ մերձ եմ ի վախճան: Իմ եղբօրդ Գէորգի հաշիւ և բան ինչ ոչ գոյ ընդ այսմ աթոռոյ. արդ՝ որպէս հայրն իմ ինձ շնորհեաց սեպհական զայս Թախտ ալքայութեան, նմանապէս և ես իմում զաւակիս Վեմիայիս շնորհեմ ձեր ամենեցուն վկայութեամբ: Եւ դու Գէորգի՝ եղբայր իմ, կաց ի տեղի իմ և արա զգօրապետութիւն աշխարհիս, և կեր զքո բաժին ժա-

*ո անգութիւնն, զոր հայր իմ ետ քեզ՝ մինչև զարդասցի մա-
նուկս իմ»: Եւ յառաջ կոչեալ զՅովանէ՝ որդի Ամբառայ Օր-
բէլեան, երդմնեցուցանէ զնա վասն մանկանն պահել զուխտ
անդարձին: Եւ առեալ զձեռն մանկանն եղ ՚ի ձեռն Յով-
նէի և ապրպարեաց նմա. և զայլ գէղէպուլն զամենեսեան
երդմնեցոյց ոչ նենգել ազգին, այլ ՚ի լնուլ հաւակին՝ օծցեն
զնա թագաւոր:*

*Օ՚այս արարեալ վախճանի հնգն և գնի ընդ հարս իւր ՚ի
Գելաթ: Եւ յայնմ օրէ և յառաջ լինէր մանուկն ՚ի տան
Յովնէի, և սնանէր և զարգանայր: Իսկ Գէորգի չինքն յան-
կուցեալ զսիրտ մեծամեծ իշխանացն, և ա և գկաթողիկոսին՝
կամէր թագաւորել. և ոչ իշխէին յայտնել զնորհուրդն մե-
ծին Ամբառայ Օրբէլեան և որդւոց նորին Յովնէի և Ի՚խպար-
սի: Եպա յետ ամենան մի ժողովեցին զամենայն գէղէպուլս
և զազատս առ Գէորգի, ընդ որս և գնաց Յովնէ իւրայովքն.
որում և յայտնեալ Գէորգի զնորհուրդն՝ բազում ողջա-
նոք հաւանեցոյց զնա առնլով թէ՝ ՚ի լնուլ հաւակի եղբօրորդ-
դւոյն իմոյ ոչ զրկեցից զնա, այլ ըստ անգարձի եղբօրն իմ դը-
նեմ զնա ՚ի թախտ թագաւորութեանս: Ո՚ստն որոյ ամենե-
ցուն միաբանեալ օծանեն զնա թագաւոր, որ և էր յաջողակ
յամենայն գործս արութեան և յոյժ հանճարեղ:*

*Եւ յետ նորա եղև բազում ընդարձակութիւն թա-
գաւորութեան նորա[1]. և բազում պատերազմունս մղեաց իւ-
րով անձամբն. և ՚ի ձեռն արի և քաջ սպասալարին Յովնէի
դողացոյց զամենայն տունն Պարսից և Տաճկաց և Խուզաց[2]:
Եյս Գէորգի էառ զԱնի քաղաք ՚ի 610 թուականին և զա-
մենայն տունն Շ իրակայ և շնորհեաց մեծին Յովնէի՝ ամիր
սպասալարին Ո՚ստից, որդւոյն Ամբառայ Օրբէլեան՝ և սեպ-
հականեցաւ նմա հայրենիք: Եյս Յովնէ մի անգամ եհար զգ-*

---

[1] Եյլ օր. ՚ի Խաչատրութիւն նորա: — [2] Եյլ օր. ՚ի տանն Պարսից և Թուրքաց:

Շահի Երմէնն ի դուռն Ընդոյ, որ եկեալ էր 40,000 առ ի վերայ քաղաքին, զի թէպէտ զայր Թագաւորն Վէորգի յօգնութիւն, այլ սա իսկ էր մղող մարտին. և մի անգամ փախոյց զմեծ սպարէկն Ալկուզ ի դաշտին Վագայ, որ եկեալ էր 100,000 առ ի վերայ Վէորգի և կամէր կոտորել զամենայն ոչ իրս և ըմբռնել զԹագաւորն. զոր մեծաւ հնարիւք և արհեստական քաջութեամբ այնքան ի նեղ էարկ Ասանէ, զի ի գիշերի թողեն զվրանս և զգենս և զանհուն կարասիս իւրեանց և զբեռնակիրս և փախեան մազապուր: Այլ թէպէտ առնէր զայս ամենայն և այլ բազում երախտիս և գործս մեծամեծս առ Թագաւորն՝ սակայն նա վերին երևոքն ի մեծամեծ փառս և ի պատիւ բարձրացուցանէր զնա, և ի սրտին միշտ կասկածէր ի նմանէ վասն տղային որ նմա յանձնեցաւ. և խնդրէր ժամ դիպող դաւել նմա ծածուկ հնարիւք և ոչ գտանէր: Եւ գիտէր ի սրտին զայն ևս Ասանէ:

Ապա հայրն Ամբատ ծերացեալ աւուրբք մեռանի և դնի ընդ հարս իւր. և ժառանգեն զիշխանութիւն նորա որդիքն իւր՝ Ասանէ և Լիպարիտ: Իսկ ի Թուականին Հայոց 626 եղև սպանումն շիտեի ի մէջ Թագաւորութեանն Վրաց և ըստնաջինջ կոծանեցաւ առուն Օրբէլեանց, զի ի Թագաւորելն Վէորգի ամն 21 և ի ընդ հասակի երիտասարդութեան Դաւիթայնն, մինչ նստեր Ասանէ եղբարբքն և որդովք իւրովք Աբգարեան կոչեցեալ դարապահ և խրախանային ի միասին՝ գայթն առ նա ի մեծամեծ դէզէպուլացն, գայր և Դաւիթայն. և ասէին ընդ նմա. «Յիշեա՝ Ասանէ, զի ասան քո և զերդումն զոր երդուար Թագաւորին Դաւթի և մի՛ ուխտազանց լինիր. ահա հասեալ է ժամանակ Թագաւորեցուցանելոյ զմանուկս Դաւիթայ: Եւ Վէորգի կայ նստեալ ի Ախտատ սակաւ առաքամբք, և մեք ամենեքեան հաստատուն եմք յայն երդմանն, զոր երդուաք հօր սորա»: Ապա ասէ Ասանէ. «Վաւաւ լեցի մեզ այդ, զի խորհեացուք սպանանել զօձեալ Թագաւոր. այլ վա-

սըն երդմանն մեր և ուխտին ըմբռնեսցուք զԳէորգի միշև թագաւորեցուցանելոյ զԱնիայն. և ապա առնուք ի նմանէ ուխտ երդման և ձեռագիր, զի հնազանդ կացցէ և նաց֊ի յիւրում բաժնի ժառանգութեանն, զոր Հայր իւր նա նմա»:

Եւ զայս ասացեալ Հաւանեցան ամենեքեան և սկան զօրըն գումարիլ փութանակի: Լուեալ զայս խորհուրդ անաթագոյն մանկան միոց և երթեալ ի գիշերի՝ ազդէր թագաւորին, և նորա հնձեալ յիրիկուր փութանակի փախչի և անկանի ի Տփղիս և ամրանայ անդ: Օր և անգիտացեալ Լուանէի հնձեալս գումարէր և զօրս կազմէր: Եւ էին միաբան ամենայն գլխաւորք և ազատք Վրաց ընդ Լուանէի, և ամենեքեան հաւանգունդ դիմեալ եկեալ էին առ նա Ակաբաւն գաբաոս՝ Վարթիլս Էրիսթաւքն և Վաւրայքն [1] և Ջաւախուլքն, Պախայն և որդիք իւր և Կամրագէյն մեծ և Ջաղելմեծնայն և Տաշրացիքն և Կայենեցին Սասան և Ընեցին Գրիգոր Եպիրատանց, որոց զօրքն էին թուով աւելի քան զՅ0,000: Իսկ թագաւորն Գէորգի միայն առանց զօրաց կայր ի Տփղիս, և կոչէր առ ինքն զհոփշախս ոճն՝ Խուզասար առնուն, և եգիտ սրա իբր հինգ հազարս՝ և այլ ոչ ունէր օգնական զօր:

Ապա իբրև լուան զմեռան արքային ի Տփղիս և զամրանալն նորա անդ՝ ոչ գնացին ի վերայ նորա, այլ սպասէին ելանել նմա անտի: Եւ մինչ յիրկարէր գործն, որպէս օրէն է մարդկային անհաստատ բարուց, և մեծն Կամրագէլ ի միաբանութենէ նոցա և գնաց ի ծածուկ առ Գէորգի: Օգայն տեսեալ և Գրիգորի Մաժխատրատանց՝ և նա ևս գնաց առ Գէորգի, նմանապէս և այլքն մի մի սկսան քամիլ և գաղտագողի գնալ առ թագաւորն: Եւ այնուհետև սկսաւ զօրանալ կողմն Գէորգի և նուազիլ կողմն Գաճայիկ: Վանգի որք եր֊

---

[1] Եայլ օր. Վաւրբաւրայն:

թային առ Գէորգի՝ մեծաւ պատուով ընդունէր և անչափ պարգեւօք խրախացուցանէր և զամենայն Հայրենիս և փարթամութիւնս Օրբէլեանց խոստանայր տալ նոցա։

Յայնժամ իբրև բազմանայր և զօրանայր Գէորգի և զիւրսն, զի նուազեալ էր կողմն եղբօրորդւոյն և Լաւանէի՝ գնաց մեծաւ պատրաստութեամբ ի վերայ նոցա. զոր և լուեալ Լաւանէի՝ հօրդեաց զամենայն ստացուածս իւր ի բերդն Շամշոյլաէ, յորում և կայր տուն գանձուց նոցա ի հին նախնեացն՝ լի անբաւ կարասեաւ և կացոյց անդէն բերդապահս ի գլխաւոր արանց՝ և ինքն առեալ զզօրսն և զմեծ իշխանսն, որ առ նմին՝ և զՎաճեայն՝ գնաց ի Լօռէ և ամրացաւ յոյժ։ Եւ զեղբայր իւր զԼիպարիան երկու որդւովքն առաքեաց առ աթաբէկին Զաքարէ ածել ի նահանջ զօրս յօգնութիւն։ Իսկ թագաւորն Գէորգի եկեալ և ոչ գտաւ զնոսա Ախալգաբակին. ապա նստեալ ի վերայ բերդին խիտար [1] զաւուրս 25՝ էառ զնա և կոտորեաց զպահակսն, էառ յաւարի զբազմութիւն գանձուց նոցա և զամենայն ստացուածս՝ և եկեալ բանակեցաւ շուրջ զԼօռէին։ Եւ զի յիերիքառասանն հրոտից ամսոյ հանուտ Լաւանէ ի Լօռէ և եկաց մինչև ի հինգն մեհեկի, վասն որոյ նեղեալ բերդացեացն՝ սկսան ազաչել մի մի կախաղանօք ի գիշերի իջանել ընդ պարիսն և անկանիլ առ թագաւորն։

Ապա ի մեծամեծ դէպէպուլացն, որք էին սիրելիք և համախոհք Լաւանէի՝ սկսան ի ծածուկ գրել գիրս պատգամի և ընկենուլ նետիւք ի բերդն առ Լաւանէ, վասն հաւանութեան և հնազանդութեան, զի երկնչէին ի գալստենէ Զաքարէ աթաբեկին։ Եւ էր գիրն այսպէս.—

---

[1] Այլ օր. Նոտիւլ ի վերայ բերդին հեռու վտակս էք։

«Մեծ Յովան Օրբէլեան՝
ՊաշՁ և հզօր անպարտելի,
Որ աշխարհաւ ես Ձ՛ենացի՝
Ցոհմ ինքնակալ թագաւորի.
Եկեալ յաշխարհս յայս վ֊րացի [1]՝
Գտեալ պատիւ անկշռելի,
Պետ և գլուխ տանս արքունի՝
Եւ սպասալար Գէորգեի [2].
Ծո՛ւխ քո հարկիքդ քեզ պիտի՝
Կեանքդ և պատիւդ ցանկալի,
Եւ հայրենիքդ անչափելի՝
Որ կէս վ֊րաց տանս է աւելի,
Ծողք դու զերդուճն զառաջի՝
Օ֊ուխտն և զանդարձն զայն Գաւթի,
Եկ հնազանդեա Գէորգեի՝
Վ֊րաց հզօր թագաւորի։
Ուր և մատոյ ընծայ բարի՝
Օ֊մանուկ Վեհիապդ՝ որդի Գաւթի,
Որ քեզ պատճառ եղև չարի,
Դառն բազմաց յայսմ աշխարհի»։

Տեսեալ զայս թուղթն Յովանէի գրէ և նա պատասխանի և կապէ ՚ի նետն յայն՝ և ընկենու արտաքս. —

«Ո՛վ դէդեպուկք իմ սիրելի՝
Մեծ և հզօր իշխանք բարի,
Ես Յովան Օրբէլեցի՝
Ընդ երցայ զգիրս ձեր խրատի,
Բայց չեմ հաւան այս խորհրդի՝
Օ֊որ գրեցիք յայսմ թղթի։

---

[1] Այլ օր. Վէր֊յ։ — [2] Այլ օր. Գեօրգիի։

Մարդ, որ կենաքս այս զբաղի՝
Թողու զաւանդն տէրունի,
Ուխտադրուժ ինքն լինի,
Առնու զբաժինն ուրացողի,
Յանանց գեհենն պատակի
Եւ ի դիւաց գունդն դասի։
Ես՝ անցաւոր մարդ ցնդելի,
Վ՚ասն առօրեայ կենաց պատուի
Ձկարեմ կոխել զուխտն որ եդի՝
Ասել զերդումն սոսկալի.
Եմ մեռանիմ յայսմ բանի՝
Երթամ առ Տէրն ցանկալի,
Առնում ստացուած անճառելի,
Որ յումեքէ ոչ կողոպտի»։

Եւ զայս Թէպէտ վրացի լեզուաւ գրէին, սակայն մեք յեզափոխեալ ի հայ բան յարմարեցաք [1]։ Ապա իբրև իմացան զանխոնարհելի կամն նորա՝ սատակացուցանէին զպատկառելին։ Եւ Գեղինայն անմոռաբար երկուցեալ՝ եկ ի գիշերին և կախեալ ընդ պարիսպն ինքաւ և գնաց առ հօրեղբայրն իւր. և անկեալ առ ոտս նորա՝ հայցէր շնորհել նմա միայն զկեանս։ Զոր և տեսեալ Թագաւորին՝ խրախանայր մեծապէս. և յղէր պատգամաւորս առ Իւանէ և ասէր. «Վ՚ասն որոյ մոլորեալ էիր դու և վրէժխնդիր լինէիր՝ եկն առ իս. արդ դու վասն ո՞ւմ ապստամբիս [2]՝ եկ առ իս»։ Եւ նորա ասացեալ. «Ճիւրաւի է՝ զոր գտանայէ. բայց երդնուցու ինձ, զի ոչ վնասես ցէ և ոչ յափշտակեսցէ ի հայրենեաց իմոց, և ես եկից առ նա»։ Եւ երդուեալ Գէորգի և կապեալ ուխտ մեծամեծ դաշամբ ընդ նմա, վասն որոյ համարձակեալ եկն առ Թագաւորն։

---

[1] Այլ օր. առնայ յեղափոխել բան յարմարեցաք։ — [2] Այլ օր. վասն ոյր ապստամբիս։

Իսկ Թագաւորն խնդացեալ մեծապէս՝ զառաջինն ընկալաւ զնա յոյժ սիրով և փառաւորեաց մեծաշուք պատուով՝ մինչև էած ընդ բոլոր զամենայն ոգիս և զազգատոհմն նորա. և ապա առեաց Գէորգի իւրում ուխտին և սոսկալի երդմանն—կալաւ զնա և փորեաց զաչս նորա. և զԻճիճայն, որ էր փեսայացեալ Իւանէի՝ ըմբռնեաց և զաչսն եհան փորել և և յերանացն յապաւել՝ զի մի լեցի՝ ասէ, ժառանգ ի նմանէ. իսկ զկրսեր եղբայրն Իւանէի զԲաւթարն և զորդին Ամբատ և զեղբօրորդին զՆոյն եհան սպանանել, և զամենայն ազգատոհմ նոցին և զարու մանուկ, նաև զկանայսն եհան առ հասարակ ջընջել և կորուսանել՝ զոմանս խեղդամահ, զոմանս ջրասոյզ, զոմանս քարաւէժ [1]՝ և այնպէս եթարձ ի տանէն Վրաց զանուն նոցա. և հրամայեաց ջնջել զմիշատակ ազգին Օրբէլեանց ի պատմագրենաց իւրեանց [2], նաև յեկեղեցեացս: Եւ եհան գրել ըզզոյգ այսր ապստամբութեան [3], ոչ որպէս եղեալն էր՝ զերաւացի պատճառն, այլ բան իւրում բարուցն մեծամեծ զրպարտութիւնս յօգեալ և պատուաստեալ ի վերայ նոցա: Եւ կարգեաց ի նզովս, զի մի ևս յիշեսցին զանուն նոցա և մի թողցեն ի նոցանէ զոք ի Վրաց աշխարհին. և եղ զայն կըտակ չար ի յիւրում գանձարանին [4]: Եւ այս եղև ի 626 թուականին:

Ընդ այսպէս եղև զրպարտանացն և սպանումն և հալածումն Օրբէլեանց ի բնիկ հայրենեաց իւրեանց. որ ի գալըստենէ նոցա ի Վիրս աշխարհէն մինչև ցայն վայր թուի առնել քան զ1000 ամ [5]: Ամենք զբարեացն զնոսա, եթէ անձանց խոկալով փառս՝ կամեցան ինքեանց առնուլ զԹագաւորութիւնն, որ և ամենևիմբ սուտ են և որպէս զշուն հա-

---

[1] Ընդ օր. Ե խրոխտանալ զմեռանլ, զմեռանս տրուիցէ: — [2] Ընդ օր. ի գործս հայրենաց իւրեանց: — [3] Ընդ օր. զպատճառս այսր ապստամբութեան: — [4] Ընդ օր. Ե եդ զայն իսկ զմեծ չարութիւնն ի գանձարանին: — [5] Ընդ օր. թուի թե առնել տուն զ1000 ամ:

ջեն, այլ վասն ուխտին և երդմանն Դաւթի թագաւորի՝ ի վերայ որդւոյ նորա զկնասս իւրեանց՝ ի մահ եղին՝ որպէս օրէն է ուխտապահ և ակրասէր արանց, զորոց զղջկողաց և զզղկելոց դատաստանն Աստուած տեսցէ յիւրում անաչառ դատաստանին:

Ասյց Ադիսաբիան՝ եղբայր Խանէի, որ գնացեալ էր առաքաբէկն Ելակում երկու որդւովք՝ Ելիկումաւն և Խանէիւ, շարժեալ էր զառնն Պարսից և բազում հնձելովք գայր յօգնութիւն եղբօրն իւրոյ 60,000աւ: Ապա լուեալ զգոյժ չար պատահմանն՝ ասէ. «Ընդեղ քրիստոնեայքն զինչ մեզան, զի երթեալ կորուսից զնոսա. և արեան պարտքն մեր յոյր երևսին [1], զի զնոսա ընդ բռամբ ածից». դարձաւ անդրէն և դադարեաց առ Ելակումն, և՝ ի դառն կսկծոյն և՝ ի չարաչար սգոյն սակաւ առուրս կեցեալ՝ մեռանի յօտար աշխարհի:

Եւ որդիք նորա Ելիկումն դադարէ անդէն. և եղբայրն իւր Խանէ գնաց առ ամիրայ Գանձակայ և անդ բազում փառս և պատիւ գտեալ՝ դադարէ, զոր և յետոյ բազում ողբանօք և երդմամբ յաւուրս Թամարին դարձուցին անդրէն և ետուն՝ ի հայրենեաց իւրեաց զՕրբէթ միայն: Յորմէ ծնան որդիք և այժմ նորա են Օրբէլք: Այլ՝ ի հալածելն զՕրբէլքն բաժանեալ զՀայրենիս նոցա Գէորգի, զոմանս ետ Թշնամեացն և մահաւղացն՝ և զայլսն ետ Խփչախին, որ Խուպատաղ կոչիւր՝ զոր վերագոյն ասացաք, և մատոյց գնա՝ ի գահ իշխանութեան նոցա և եղ սպասալար ամենայն Վրաց: Ասյց ինքն Գէորգի ոչ ունէր ժառանգ թագաւորութեան՝ բայց միայն դուստրն մի՝ Թամար անուն. և վախճանեցաւ՝ ի 633 թուականին: Եւ կալաւ զթագաւորութիւնն դուստրն, որում ածին այր զորդի Լոզոց թագաւորին [2], որում անուն էր Գէորգի:

Սա էառ զԳուրին քաղաք՝ և սակաւակեաց եղեալ մեռա-

---

[1] Այլ օր. ընդ երեսն: — [2] Այլ օր. Լ------ թոփ------ին:

նի: Եւ առնու Թաւրեան միւս ևս այլ այր՝ Սաւլան անուն, և լինի նմա որդի մի՝ Լաշայ Գէորգի անուն: Այսչափ վախճանին Գէորգի Թագաւորին Թաւրեան մեծարեալ զորդիսն Սարգսի՝ որդւոյ Օ֊աբարէի իշխանի, հայ ազգաւ և ուղղափառ հաւատով, զՕ֊աբարէ և զԼուանէ, և բարձրացուցանէ ի պատիւ. — զՕ֊աբարէ կացուցանէ ի տեղի Օլբէլեանց աժիրապատալար Վ֊րաց և տայ նմա զհայրենիսն նոցա զԼ֊օռէ, և զեղբայրն Լուանէ կացուցանէ աթաբէկ ի վերայ աշխարհիս Հայոց և Վ֊րաց, որք բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից և առին յԱռանայ մինչև ցնեղբի Կասեն [1] և ի Կարկուշատայ մինչ ի Մժնկերտ. առին զԿարս, զՎ֊աղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԸնի, զԸնթերդ, զԿջնի և զԳառնի, զԿուին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զՀարեք, զՀ֊երթ [2], շՀ֊ամքոր, զՀ֊ապի, զՊարատաւ, զՀաւարթերդ. առին ի 660 Թուին զԱխնիս, զԿուան, զԿորոգան [3], զԿղեն, զԿարկուշատ: Եւ թէպէտ յայլ և յայլ Թուականս առան [4], սակայն զհաստատակն սոքա առին և որդիքն իւրեանց՝ և ազատեցին զաշխարհս ի դառն ծառայութենէ Տաճկաց:

Իսկ Աղխուսին, որ միաց ի տան աթաբէկին՝ գտեալ գոթ և սէր յոլով ի նմանէ [5] և յորդւոց իւր ի Փահլաւանէն և ի Խզիլ Ալանէն, և պատիւ և փառս բարձրագոյն ի վեր քան զամենայն մեծամեծ աւագանին Արեաց և Պարսից աշխարհին: Եւ ետ նմա աթաբէկն զմեծ քաղաքն Հ֊ամիան և կոչեաց զնա որդի իւր՝ և հաստատեաց նմա հայրենիք տուղայիւ գրոյ և մանշուրաւ. և կացուցանէ զնա ամիրայ և քաղաքապետ մեծ մայրաքաղաքացն Պարսից Ռէյոյ, Ասպահանայ և Խազվինի առն երիւռատան: Եւ նեղէր զնա տուրանն փեսայանալ ին-

---

[1] Այլ օր. ցՆերգին Բասեն: — [2] Այլ օր. զՀերթ: — [3] Այլ օր. զԿորոգան: — [4] Այլ օր. յայլ և յայլ Թուականս առան: — [5] Այլ օր. գտեալ և սէր ի նմանէ:

քան և առնուլ զմեծ մասն աշխարհին և թողուլ զՀաւատն Քրիստոսի։ Եւ Եղիկումն, թէպէտ տղայ էր հասակաւ, այլ լի էր հանճարով, ոչ տայր տեղի բանիցն և ոչ թուլանայր ի հաւատոցն. վասն որոյ նեղեալ ի Պարսկացն և երկուցեալ ի հաւատոցն, զի մի բռնադատեսցեն՝ խնդրէ պատճառանօք տեղի ի Նախջաւանու գառնալ. «Հայն երկիր մեռազոյն է ի ձմեռն, և յանգից հիշատ է ինձ՝ և դիւրաւ առնուլ զվրէժ արեան հարց և եղբարց իմոց». ընդ որ համեալ ամենայնին՝ տայ նմա զբերդն Եղինջակայ և զՀաւուին առան և զՔաղաքրահն ի Նախջաւան և այլ բազում տուրս և կացուցանէ գործակալ և զօրագլուխ այնմ կողմանն։ Եւ զի բաժանեալ էր զաշխարհն իւր երկու որդւոցն, և տուեալ էր զՆոտրատան և զԸրազ և զնեղբին բաժինն Պարսից Խզիլ Ըսլանին, որ Թարգմանի «կարմիր առիւծ»՝ և զվերին կողմն Պարսից և զՏարպատական և զԸռան և զՆախջաւան՝ Փահլաւանին, վասն որոյ զձեռն նորա դնէ ի ձեռն Եղիկումին և ապստպարէ նըմա[1] ասելով. «Դու դմա հայր լեր և դա՝ քո որդի» և յորդորէ զնա բազում փարթամութեամբ և երեւելի փառօք ի քաղաքն Նախջաւան։

Եկեալ ապա Եղիկումին և տիրեալ այնմ Նահանգի՝ կոչէ առ ինքն զեպիսկոպոսն Միւնեաց զտէր Սահմանոս՝ որդի տեառն Գրիգորի, և մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնա՝ անկանէր առաջի նորա և խոստովանէր զյանցանս իւր մեծաւ զղջմամբ և խնդրէր ի նմանէ օրէնս. և նորա հաղորդեցուցեալ զնա օրինացն՝ եդ ձեռս ի վերայ և օրհնէր զնա։ Ապա յետ այնորիկ խնդիր լինէր Եղիկումին ամուսնութեան՝ և ոչ գտանէր ի քրիստոնէից զոք պատշաճ իւրոյ խնամութեան, զի աշխարհս այս դեռ ևս ի նեղբոյ իշխանութեան Պարսից էր։

---

[1] Փարիզեան ապագիրն առնէ. և անդէ հիւր ե ինձ։ — [2] Այլ օր. ընդ որոյ զինեաւ եղիւ-ժն գնէ ի յետն նորա և ապստպրէ նմա.

Վ՚ասն որոյ հաւանեալ խնամութեան Սիւնեաց եպիսկոպոսի՝ տեառն Սահփանոսի, զի հոգևոր աստիճանաւ բարձր էր քան զնա՝ խնդրեր ի նմանէ զդուստր քոյր նորա ի Ա՛ահուկ, զի էր քոյր նորա կին ազատազգի և փարթամ առն միոյ Ա՛ահկեցւոյ, որում Ընթա ասէին։ Զոր մեծաւ խնդութեամբ յանձն առեալ եպիսկոպոսին՝ փութայացուցանէ զնա ինքեան՝ տալով զդրիոդն գեղեցիկ և մեծահասատ Նշլիկումին, որում անուն Խսաթուն ձանաչիւր։ Եւ լինի ի նմանէ որդի մի գեղազեղ պատանի [1], զոր անուանէ յանուն հօր իւրոյ Ի՛սպարիտ։

Եւ այսպէս կեցեալ [2] բազում աւուրս՝ եղև օր մի հիւանդանալ նմա հիւանդութիւն մեծ. զոր լուեալ մեծի աթաբէկին՝ եկն ի տեսութիւն ի Ա՛ահուկն առան, և նստեալ մերձ նմին նեղէր զհիւանդն ասելով. «Ես վասն այն եկի, զի ինձ մեծ տուբս արասցես». և նա ասէ. «Ով արքայ՝ հրամայեա եթէ զինչ է խնդիրդ քո և կամ ինչ հաճոյ թուի քեզ՝ զի ընծայեցից քեզ»։ Եւ նա ասէ. «Ոչ դանձ և ոչ այլ ինչք պատուականք պիտոյ են ինձ, բայց եթէ զհաւատդ շնորհեսցես ինձ և առցես զդինս իմ»։ Եւ մինչ կարի տախտակաց՝ ապա ողորմելին այն նեղեալ և ցնորեալ՝ ի ցաւոցն և խուճապեալ՝ ի յաթաբէկէն՝ իբր խելագար իմն ցնդեալ ընդ բանն ասէ. «Ես ելից ըստ բանի քումմ». որ և խրախացեալ մեծապէս աթաբէկին կրկնեաց նմա ծուներ և յարուցեալ գնաց. և մեծ սիգելով և անանցական գրով եառ զԱ՛ահուկ և զԲալասրահն և՝ ի Նախջաւան յաւագ փողոցին 30 կուզպակ ազատ և թարխան յամենայն հարկաց փոքրիկ մանկանն Ի՛սպարտի լինել նորա յաղգէ յազգ հայրենիք։ Այլ Նշլիկումին ողջացաւ՝ ի ցաւոցն ըստ խնամոցն Ընտուծոյ և յոյժ զղջացեալ՝ գնաց առաջի սուլտանին և աթաբէկին և ուրացաւ զտաճկութիւնն և վիրտին խոստովանեցաւ զՔրիստոսի և ասէ. «Ով

[1] Այլ օր. ֆելսուֆ գոպանի։ — [2] Այլ օր. խոթել։

տեարք իմ՝ եթէ կամ է ձեզ, ես կացից իմ հաւատովս և միամիտ սրտիւ ծառայեցից ձեզ, թէ ոչ՝ ես պատրաստ եմ՝ ի մեռանել վասն հաւատոյս իմոյ»: Եւ նոքա վասն յոյժ պիտանութեան առնն ոչ ինչ նեղեցին, այլ Թողին զնա՝ ի կամս իւր:

Ար և կեցեալ սակաւ մի՝ գնաց՝ ի պատերազմ ընդ որդւոյ աթաբէկին՝ ի Վանձակ և անդ սպանաւ. և ինաց փոքրիկ մանկիկին Լ՚իպարիտ որք առ մօր իւրում, զոր երբև իմացան զկառուցք քաղաքին՝ ածին զմայրն և զմանուկն՝ ի Նախջաւան և պահէին՝ ի պատանդի, զի մի՛ առեալ մօրն փախիցէ: Եւ տաճիկ մի բռնաբարեալ զնաթուն՝ ածէ՝ ի տունն իւր և առնու զնա կին: Եւ մնանի մանուկն՝ ի տանն յայն՝ անծանօթ լեալ քրիստոնէութեան աւելի քան զ10 ամ: Ապա միոջ տիրեցին այսմ աշխարհի Օ՚աքարէ և Լուանէ և տակաւրացաւ տունն Պարսից՝ սկսան յոյզ առնել, եթէ գոյ ոք յորդւոցն Լ՚իպարտի՝ ի Պարսկաստան. որոց ծանուցանէ մեծ եպիսկոպոսն Աբէնեաց տէր Յովհաննես՝ անուն նշխկումին, և թէ կայ մանուկ մի՝ ի քուերէն իմն՝ Լ՚իպարիտ անուն, և է՝ ի պահեստի՝ ի Նախջաւան: Ընդ որ յոյժ խնդացեալ Օ՚աքարէ և Լուանէ՝ թախանձեցուցանեն զեպիսկոպոսն հանել հնարիւք զմանուկն անտի: Եւ զի էր եպիսկոպոսն յոյժ ծանօթ և սիրող տան աթաբէկին և ամենայն մեծամեծացն նոցա ևս առաւել որք՝ ի Նախջաւան էին, վասն որոյ եկեալ եպիսկոպոսին՝ ի մօտաւոր վայրն և՝ ի բանի արարեալ զբարեկամս իւր՝ բաղում հնարիւք ետ գողանալ զմանուկն Լ՚իպարիտ և զմայրն նորա, զոր՝ ի գիշերի կախաղանօք իջուցին ընդ պարիսպն. և առեալ տարան՝ ի Ա՚ղոց ձոր՝ և զմայրն առ բացուցեալ՝ ի տեղի մի, զաղջայն տարան առաջի Լուանէի, որ՝ ի տիսանելն զնա անտանելի խնդութեամբ ընդոր և առաժանայն ծանուցանէր Թաւմարին և Լ՚աշային, և նոքա յոյժ խրախայնային, քանզի միշտ՝ ի կասկածի էին՝ ի նոցանէ:

Ընդ մեծապէս խիլայէ զնա աթաբէկն և բազում շուք և պատիւ գնէ նմա. և կամէր փեսայացուցանել ինքեան՝ տալով նմա զքոյր իւր Թամթի: Իսկ ի մեծ դէդէպուլացն ոմն՝ Ռուբա անուն, որ էր գործակալ ամենայն տանն աթաբէկին, խարեալ պատրող բանիւք՝ ի ծածուկ փեսայացոյց ինքեան տալով նմա զամենօրհնեալ և զգեղեցիկ օրիորդն զԸսփայն, ընդ որ առ ժամ մի ցասուցեալ [1] աթաբէկ Լասանէի՝ յետ ոչ լոյ հրամանաւ թագաւորին տայ փոխան հայրենեացն Լ՚իպարտի անանցական գրով զ՚բաշխարերդ [2] իւր գաւառովն և այլ բազում գեղօրէս՝ ի Վայոց ձոր, ի Կոտայն զՂշլաուն և այլ գիւղս յոլով, ի Գեղաքունի զ՚ամասրի և այլ գեղօրէս բազում, ի Կային զԸզտաև իւր կերոնէն: Եւ զի նա եղև առաջնորդ առման Սիւնեաց և այլ բերդերոյն՝ տայ և ի ձեռս նորա զՍիւնիս, զՎոտն, զԿարկուշատ և զայլ բերդորէսն:

Եւ կացուցանեն թագաւորն Լ՚աշայ և աթաբէկն Լասանէ զԼ՚իպարիտն կողմնակալ յայսմ աշխարհի, նմանապէս և զըզմիւս իշխանն զամենօրհնեալն զՎասակ Խաչենեցի, զհայրն քրիստոսասէր և բարեպաշտ պարոնէրն Պռոշայ, կացուցանեն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս. որ և մեծաջան վաստակօք բազում նահատակեալ ի վերայ քրիստոնէից և ակնղեցեաց՝ օրհնեցաւ և գովեցաւ յամենայն աշխարհաց, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի յայսմհետէ մինչև յաւիտեան: Իսկ ամենօրհնեալն Լ՚իպարիտ մեծաւ բարեպաշտութեամբ քաղաքավարէր. շինեաց եկեղեցի ի Նորավանս և զարդարեաց և փարթամացոյց զնա՝ որպէս վերագոյն ասացաք: Եւ մայրն սորա մեծաւ ճգնութեամբ ապաշխարեալ բազում ամս ի նեղ սապոյն խրճթի՝ վախճանեցաւ և եդաւ ի Նորավանս ի դըբան սուրբ Կարապետին: Եւ եղեն Լ՚իպարտի հինգ որդիք՝ Եղիկումն, Ամբատ, Լասանէ, Փախրադաւլային, Տարսայիճն:

---

[1] Այլ օր. ընդ որ առիթմամբ ցասուցեալ — [2] Այլ օր. գերաշխարերդ:

Եւ ինքն յետ ամաց ինչ՝ ի միջօրեայ հասակի առնու հարը-
ւածս ի ձախասարկի յանկարծադէպ նետից՝ ի գլուխ լերինն
որ հանդէպ բերդոյն Խորոնայ [1]. և եկեալ անկանի ի բերդն
Գողշաի վանից և կոչէ առ ինքն զեպիսկոպոսն իւր զտէր Սար-
գիս և հաղորդեալ՝ անդէն վախճանի. և բերեալ դնի ի Եռա-
բուսաւս ի դրան սուրբ Կարապետին առ մօր իւրում: Եւ կին
նորա և որդիք նորա մնան որբք և անտէրունչք: Բայց գեղե-
ցիկն Ագնկում փեսայացեալ էր Գրիգորոյ Մարծանեանց, որ
յազգէ Մամիկոնէից համբաւի՝ և վարէր զտէրութիւն հօրն:
Իսկ մեծ սպասաւորն Օ՛աքարէ մեռանի ի 661 թուին. և
աթաբէկն Լաւանէ յերկարեալ այլ եւս ամս հնգետասան՝ մե-
ռանի ի 676 թուին: Եւ զսպասալարութիւնն Օ՛աքարէի
առեալ էր որդին իւր Շ՛ահնշահ. էառ և զաթաբէկութիւ-
նըն որդին Լաւանէի Ըւազն, որ և էառ իւր կին զԳոնցայն՝
կեցեալ յիշխանութեանն ամս 23:

Բայց պատմեցին ձեզ աստանօր զոյցս զարհուրելացուցիչս.
զի նախ քան զայս հալածական եղեալ ի թաթարէն սուլտա-
նըն Խորազմայ Ջ՛ալալադինն՝ որդի Խորազմ շահին՝ գայ
ընդ Պարսկաստան և անցեալ ընդ Աղրպատական՝ մտանէ
յաշխարհս Հայոց. յոր տեղ և հասանէր՝ աւերէր, գերփէր,
ապականէր ոչ խնայելով ի մարդ կամ յանասուն: Ապա եկեալ
ի Նախճաւան գաւառ՝ բանակ հարկանէր անդ. վասն որոյ
ժողովեալ Լաւանէ աթաբէկին զամենայն ոյժ և զօրութիւն
Հայոց և Վ՛րաց՝ կամէր մարտիւ պատահել նմա: Եւ կա-
ցուցանեն զոմանս դէտ և ազդարար ինքեանց՝ զԶ՛ալուէ ոմն
և զԳրիգոր կանչող. որք տեսեալ յոյժ նուազ զգօրն Խոր-
ասանի կանչեն և ազդեն մերոց զօրացս, եթէ եկայք: Իսկ նա որ
Տէրն է յաղթութեանց՝ կամելով կամէր եղծանել զանօրի-
նեալ և զամբարշտեալ ժողովուրդն, փոխարկեաց զձայն ազ-

---

[1] Այլ օր. որ հանդէպ Բերդոյն Բոլորոյ:

դարարացն յականջս սոցա՝ եթէ փախիք։ Որք և թողեալ անդէն զկարասիս իւրեանց և զբանս, աճապարեալք յերիվարսն՝ փախեան և իրր խնդացնորեալք առանց սրոյ և զօրութեան նաև պատերազմի, վերհեալք ընդ փրթուածս մեծ քարին, որ ի խրամին Գառնւոյ՝ առհասարակ հոսեալ կործանեցան. և աթաբէկին Լանէ 10 արամբք զերծեալ՝ անկանի յամուրն Վնեղէ [1]։

Եւ Լիպարիան իւրայովքն գտեալ կածան մի՝ գնայ. և եկեալ ամբողջ ի տուն իւր՝ զոհանայր զՅեսունէ։ Եւ էր այս ի 647 թուականին։ Իսկ զկնի այսր անհնարին պատուհասիւք և զանազան դիպուածովք ապականեալ եղև աշխարհս ամենայն. զի գտեալ Խոլաղիքն զաշխարհս անտերունչ՝ անխնայ կոտորեցին և գերեցին և հրդհեցին զամենայն շինուածս տանց և յարկաց քաղաքաց, գիւղից և վանորէից. այրեցին և զվաստակս ամենայն և հարին զայգիս և զծառս. վասն որոյ սով սաստիկ տիրեաց առ հասարակ։ Եկին և օձ թանձրագին, որ եւս այր յամենս և յանկողինս ի տուէ և ի գիշերի։ Եկեր և մարախն մեծ միանչ ի ծովէն Ովկիանոս և էած սով առ հասարակ մարդոյ և անասնոյ։ Եւ ամենեքեան առ հասարակ տապաստ անկեալ լինէին լերանց և դաշտից և ձորոց. սակս որոյ և անկաւ գայլ մարդակեր՝ և զճեռացեալն ի սրոյն, յօձէն, ի սովոյն և ի մահուանէն նոքա գիշատեալ սատակէին։ Եւ այս երկու պատճառաւ, մի՝ զի սովորեալ էին յուտել զմեռեալս, և մի՝ զի մարդիկն նեղվեալ և նքծղեալ էին ի սովոյն։ Եւ ահա այս պատուհաս տիրէ աշխարհիս ամ 7։

Իսկ յետ մեռանան ամի զարթոյց Տէր յարևելից զազգն Նետողաց որ Ա՛ուղալք կոչէին, և բառ գեղչկացն Թամիմալք, որ ի Չին և ի Ա՛աչին աշխարհէ անդր քան զԽոսթաստան [2]՝

[1] Ասլ օր. և սիրեին Խառնէ գառն սրտմբէ պերձնալ առնուն ի յոտսն Գնեղէ։ —
[2] Ասլ օր. Խոսրոան։

անաստուածք և անօրէնք. բայց բնութեամբ օրինացն զարդարեալք՝ ատելոցդ աղտեղի գիջութեանց և ամենայն ձկնաակալ գործոց, արդարամիտք առ միմեանս, միամիտք և հնազանդք առաջնորդի իւրեանց, իրաւարարք և իրաւադատք, իսկ բարուք սիրաւք և ընչաքաղցք, նեղիչք և կեղեքիչք մարդկան. պատկերով յոյժ գեղեցիկք և լերկք ըստ կանացի դիմաց. ծանօթք քրիստոսեան հաւատոյ և յոյժ սիրողք քրիստոնէից, յաղեղունս կորովիք և յամենայն պատերազմունս յոյժ հնարարուածք:

Բայց յետոյ թողին զբնական բարս իւրեանց և կլին ՚ի հայբենի սահմանէն զոր ունէին, մտին ընդ Մահմետի օրինաւքն և ուսան զամենայն պղծութիւնս և անկարգութիւնս և յանդուգն կեանս վարէին: Ընդ այգաբա բաժանեալ յերից առաջս՝ գնաց միոյն ընդ արեւելից հիւսիսով յաշխարհն Խազրաց և Աւստաղաց, Ղոզաց և Զարքազաց և Ռուղդարաց. և սիրելոցին նոցա մինչ ՚ի սահմանն Ըլամանաց և Ընկուաց որք են Փռանգ, որոց գլխաւորին անունն Ռաթու զան: Իսկ միւս կողմն գնաց առ Նգկաստանաւք, որք սիրեցին մեծ մասին Նգկաց և հնազանդեցին զՈւղուրս և զՈւղուզս և զԽորազմիկս և զՈւղիմիկս և առին զԸլամանեմս և զԽշպալեմս և զամենայն կողմանան զայն, որոց գլխաւոր Աւքամայ զան: Իսկ միւս կողմն եկին ընդ մէջ աշխարհիս անցեալ ընդ մեծ գետն Ջահան և ընդ Ջուբն զոր ինքեանք Ամու մատրան կոչեն: Եւ պատուհասեալ, փոթորկեալ հասին յաշխարհս մեր՝ և առ հասարակ սիրեալ հնազանդեցին զամենայն տիեզերս. կոխեցին, կործանեցին զամենայն թագաւորութիւնս, առին զԽորասան և կործանեցին զմայրաքաղաքսն նոցա զՌայս և Նբէ, զՄաւր և զՆշաւուրն, զՋուան և զՈւամղանն. առին զԽուժաստան, զՌուռաստան, զՊարսկաստան, զՎրդստան, զԸրաբստան [1]. առին զԻրաքն [2] որ է Ասորեստան, զՇու-

[1] Ա.յլ օր. Վբոքիսդոն: — [2] Ա.յլ օր. Դիրբէք:

շեթար և զԲրման, զԿաղդաղ և զԿասր մինչ ՚ի Լոմզ քա-
ղաք և ՚ի Ծովն Հնդկաց։ Եւ ին և զԸտրպատական, զԸռան
և զՀայաստան, զՎիրս և զՀոռոմն մինչ ՚ի ԱՆկիւբիա և
և ՚ի Գանգրա [1] և ՚ի Օմիւռնիա Եփեսացւոց, և զԿիլիկիա
մինչ ՚ի Ծովն Ովկիանոս և ՚ի Ծովն Պոնտոսի ՚ի Տրապիզոն
քաղաք [2]։ Եւ ին և զտունն Ղամայ, զՈւահայ և զԼուսան
մինչ ՚ի Հ՚ամն և ՚ի Հ՚ամայ։ Եւայց զառաջինն եկն յաշխարհս
Ձաւրմանն և Ձազատայն, Ըզանն և Ըսուսուն և Գ՚աստա
զանն. և սոքին զաշխարհս ՚ի 685 Թուականին։ Եւ յետոյ
եկն Հ՚ուլաւու զանն՝ Թոռն մեծի Ղանգղ զանին և զնա-
ցեալն յառաջնոյն էառ՝ զԿաղդաղ քաղաք, յորում և նս-
տան զհաւկիսայն ՚ի 707 Թուին. և զՄուսթարղինն էառ յ708
Թուին՝ զամ մի պաշարեալ և գնաց մինչ ԱՀրուսաղէմ։
էառ զՀալպ որ է Լևբիա, և զԻրմիշս, որ է Դամասկոս, և
զՊալպաք որ է Ըրհդ. էառ և զմեծն Ընտիոք, որք կամա
Հնազանդեցան. էառ և զԵրուսաղէմ ՚ի Մսրացւոյն, և այն-
պէս բազում և ան Հուն քաջութիւնս ևցոյց։ Եւ զի յոյժ
սիրող էր քրիստոնէից, վասն որոյ ամենայն ազգք Հաւատա-
ցեալոց կամաւ Հնազանդէին նմա և յոյժ ձեռնտու և օգնական
լինէին։ Եւ արդ այսքան առ այս. մեք դարձցուք անդրէն ՚ի
կարգ բանիս։

Օ՚առաջինն մինչ եկն Թամթարն յաշխարհս յայս՝ մեր զա-
ւառքս անկեալ էր ՚ի բաժին Ըզան նոյինին. և էր Ներկուացի
ամրացեալ իւրայովքն յանառիկ ամուրն Հ՚արկաբերդի։ Ետկն
Ըզանն այն և շրջեցաւ ընդ բերդովն և ծանեաւ, զի անՀնա-
րին էր ՚ի մարդկանէ. ապա իջանէ Հանդէպ բերդոյն և յղէ
պատգամաւորս առ նա և ասէ. «Ըրա ընդ մեզ սէր և եկ առ
մեզ և բազում բարութիւնս գտցես ՚ի մէնջ. ապա թէ ոչ՝
մինչ յերբ նստցիս ՚ի քարիդ յայդ [3], մեք չեմք գնալոց յայսմ

[1] Ըայլ օր. Ա ՚ի Գանգրաւոյ։ — [2] Ըայլ օր. Ա զԿիլիկիոյ գՆչ ՚ի Ծո-
ցի պոնտոսի ՚ի Ցրա-
պիզոն քաղաք։ — [3] Ըայլ օր. գՆչ երբ նստիս ՚ի բերդդ յայդ։

աշխարհէ, այլ Աստուած հայրենեաց ետ զսա մեզ. երբ և ելա-
նես ի դմանէ և կորուսա լինի քեզ և տան քոյ»:

Լուեալ զայս Եղիկումին՝ ոչ ընդդիմացաւ բանիցն, այլ քաղցրութեամբ պատասխանեալ խնդրեաց երդուիլ, և ել ընդ առաջ նորա բազում ընծայիւք: Եւ տեսեալ զնա Աբ-
գարին՝ յոյժ սիրեաց և ընկալաւ զնա և արար խոշաղութիւն: Եւ կալեալ զնա առաջնորդ՝ գնաց մինչև Այնի և հնազան-
դէր զամենայնն. էառ նա զվայոց ձոր և զՆզղեգիս մինչև Հերիթան [1] գիւղ, որ է հանդէպ Գառնւոյ և ետ զամենայնն Եղիկումին և ասէ. «Թրով առաջն և ոսկւով գնաջն միա-
պէս հայրենիք են մարդոյ. արդ զոր ես սրով խնով առի զա-
ւառք՝ քեզ լեցին ի հայրենիս և ազգի քո. և դու միամիտ սրտիւ տես զմեզ և Ծառայիս զանէին մեծի որ առաքեաց զմեզ առա»: Եւ նորա բազումն շնորհակալեալ՝ յամենայն սրտէ Ծա-
ռայէ նոցա: Եւ յայնմ օրէ և ապա հաստատեցաւ այս լի-
նել հայրենիք տանն և ազգին Օրբէլեանց: Իսկ այլ զօրաղը-
լուխք հնազանդեցին զայլ աշխարհս և բերին զԱւազն ի գուբս ի բերգէն Այենոյ, զբառամբ ածին և զթագաւորու-
թիւնն վրաց և եղեն միահնծան ամենեքեան:

Ապա յետ առնոյ լինել գնաց Թաթիարն և տարաւ ընդ իւր զզօրան վրաց և զԱւազն և զՀահանշահ, ընդ որոց գնաց Եղիկումն ի վերայ քաղաքին Մարտիրոսաց, որ Մարտկերտ կոչի. և պատնէշ ածեալ շուրջանակի նստան ի վերայ բոլոր բանակօք՝ ամօք և ամսօք և ոչ կարացին առնուլ զնա: Ընդ-
դէն հիւանդանայ Եղիկումն խստագոյն ցաւօք և որպէս ասեն, դեղակուր լինի ի բժշկաց ի հրամանէ Աւազին: Զոր և բար-
ձեալ բերին ի Նորաւանն և եղեն ի դրան սրբոյ Նախավկա-
յին. Թողով որդի մի Լուրթիել անուն [2]՝ յոյժ գեղեցիկ տես-
լեամբ և առոյգ հասակաւ: Ապա տիրէ իշխանութեան նորին

---

[1] Այլ օր. Գնել յերևանս ֆլուչ: — [2] Այլ օր. Ռխուրթիել անուն:

եղբայրն իւր աներևոյթ հնարեալն և գովելին բնաւից Ամբատ՝ որ էր հանճարով մեծ, խորհրդով ուժեղ, խելօք աննման, հնարիւք բազմագէտ, բանիւ առատ և քաղցր, լեզուաց հմուտ և ճարտար, ի դատաստանի դիւանին անպարտելի. զի խօսէր լեզուս հինգ՝ հայ և վրացի, ուղղակ և փարսի և զմուղալն իսկ: Սա վարժեալ ի մանկութենէ աստուածային պատուիրանաւն՝ էր մեծահաւատ և բարեպաշտօն, սիրող սրբոց և եկեղեցեաց, շինող վանօրէից, սփոփիչ և մխիթարիչ քահանայից, ողորմած աղքատաց, կանոնիչ և զօրացուցիչ վշտապնեալ ազգիս Հայոց, գերեթափ և ազատարար ամենեցուն:

Ոայց յետ Աղեկսիոսին բազում նախանձու և թշնամութեամբ վարեր տուն Աւագին ընդ Օրբէլեան՝ եւս առաւել Գոնցայն՝ կին Աւագին. և կամէին վարաւել և հալածել, կամ կորուսանել զորք Ճնացեալ մանկունն՝ զԱմբատ և զեղբարս նորա, և յարիշատակէին զՀայրենիս նոցա: Եւ նոքա շրջէին թաքստեամբ աստ և անդ, ընդ որ խանդաղատեալ արարչական սիրոյն կամեցաւ կանգնել և զօրացուցանել զտունն Օրբէլեան ի ձեռն Ամբատայ: Ոանգիր ընդ այն ժամանակս էր զօրագլուխ Աստղացն, որպէս թագաւոր ի վերայ ամենեցուն՝ Ոաչու նոյինն. և նառէր ի գաւառին Սաբանդայ՝ ի գլուխ Ձագէձորոյ. և էր ածեալ զբոամբ զփոքր թագաւորն Սոնաց զԱսաւիթ և կայր նա ի մէջ բանակի նոցա ի կալանս: Ապա ըստ վերին խնամոյն զերծեալ հնարիւք ի գիշերի՝ անց գնաց փախստեայ երիք ասամբք: Եւ ունէր առ ինքն զոհար մի պատուական յոյժ լուսաւոր, և տեսիլ նորա կարմիր, յորմէ հառանէին նշոյլք իբր ի հրոյ և ի գիշերի լուսաւորէր զտունն որպէս ջահ. ունէր և մասն մի ի փրկական փայտէն, զոր ի կշիռ եդեալ էր իւրում թագաւորութենանն բովանդակ: Եդև սմա անցանել ընդ գլուխ գետոյն որ Գուանիի կոչի. ազդ լինի և տեառն գեղջն, զոր Թանկրէղուլ կոչէին, այսինքն՝ Աստուծոյ ծառայ. և էր առ յազատացն Ամբատա՝ և

հիճեալ յերիվար՝ ձիարձակ լինի գինի և հասեալ՝ կամէր արգելուլ զնա։ Եակ նորա ՚ի մեծ ահի եղեալ արձակէ ՚ի կրծիցն զփոքրիկ քսակ պայուսակին, և տայ ցԱնանկրէդուէն և ասէ. «Ո՞ւմ ես դու». և նա ասէ. «Ես Ամբատայ եմ Օրբէլեան. ասէ». տար զայդ և տուր ցԱմբատ և ասա,—Թէ այդ գին է թագաւորութեան իմոյ. առ և պահեա զդա։ Եթէ ես ՚ի դուրս գամ և թագաւորեմ իմոյ աշխարհիս, առ իս բերցես և տամ քեզ երկիր և քաղաք զոր դու խնդրես, ապա թէ ոչ ելանեմ ՚ի Վռնաց աշխարհէն՝ այդ քեզ լեցի»։ Եւ ինքն անցեալ գնաց և հմուտ յամուր և յանձուկ աշխարհն Վռնաց և այլ ոչ ել անտի՝ մինչև մեռաւ անդէն։

Եակ Անանկրէ զուէն բերեալ զայն մեծաւ խնդութեամբ ՚ի տուն իւր և պահեալ աւուրս հինչ՝ ետ Ամբատայ, զոր և առեալ նորա գոհանայր զԱստուծոյ՝ և խորհէր ՚ի միտս իւր և ասէր. «եթէ պահեմ զսա՝ ինձ է ինձ, զի ոչ ծածկի և ոչ դադարի առ մեզ. այլ տանիմ զսա առ մեծ զանն, որ թագաւորաց թագաւոր է և տիրեալ է ծովու և ցամաքի, որ կոչի Մանկու զան, այսինքն՝ «Սպիտակ թագաւոր», որ էր թոռն Չանգզ խանին, և խնդրեմ ՚ի նմանէ ողորմութիւն վասն աշխարհիս այս։ «Եւ յարուցեալ գնաց առ Եաչու Նոյինն և ցուցեալ նմա զլուսատու գոհարն ասէ. «Եամ առ դու և պարգևեա ինձ զոր խնդրեմն, և կամ յուղարկեա զիս առ մեծ զանն, զի տարայց նմա զսա»։ Տեսեալ նորա և զարմացեալ՝ ասէ. «Ընդ անգիւտ և անգին ջաւհար է, ես ոչ իշխեմ առնուլ զդա. այլ յուղարկեմ զքեզ առ մեծ և աշխարհակալ զանն»։ Եւ ապա ածեալ պատրաստութիւն ճանապարհին ըստ պիտոյիցն՝ տայ և յիւրոցն օգնական նմա և յուղարկէ զԱմբատ ՚ի Չին և ՚ի Մաչին աշխարհն Նեստողաց, որ աւազ թաւան է [1] արքայութեան նոցա, առ Մանկու զանն՝ որդի

[1] Ձյլ գր. աւազ ասէ ի արքայութեան նոցա։

գայուկ [1] ղանին, որդւոյ Զանգի ղանին՝ առաջին թագաւորի նոցա։

Լսեալ Ամբատ շրջեալ ի վանորայս մեր, որք կային ի գառն հարկապահանջութեան՝ տայր աղօթս առնել գիշերապաշտամամբ և յանձնէր զինքն սրբոցն. և ուխտէր ուխտ, զի թէ դարձցի յաջողմամբ՝ զամենայն քահանայս ազատեսցէ ի հարկէ և ամենայն եկեղեցեաց ընծայատուլեցի և զամենայն յարիշատակեալ հայրենիս դարձուսցէ անդրէն։ Եւ այսպէս պաշար առեալ զաղօթս բազմաց՝ գնայր զճանապարհն, և անցեալ ընդ անհուն ասպարէզս երկայն ճանապարհին՝ հասանէր յաշխարհն արևելեան՝ ի գահն աշխարհակալ ղանութեանն, զոր Կարաղուրում կոչէին. և զի քրիստոնեայ էր օրինաւոր Մանկու ղանն՝ ունէր ի դրան մեծի պալատանն եկեղեցի և քահանայս, յորում միշտ պաշտէն և պատարագ անխափան լինէր և ինքն յոյժ սիրէր զքրիստոնեայս, զորս և ալքայուն կոչէին. և աշխարհն ամենայն կային ի քրիստոնէութեան։

Ընդ տեսանել նմա Ամբատ զամենայն մեծամեծան և զդրան աւագանին և ծանուցանել նոցա զպատճառ գնալոյն, որք տարբեալ յանդիման առնեն մեծի ալքային և ընծայեն զգոհարն պատուական։ Ընդ որ յոյժ հաճեալ գովեաց. և հարցանէր, եթէ «Ո՞րինչ ազգ ես». և ասէ. «Հաւատով քրիստոնեայ եմ և ազգաւ՝ հայ». վասն որոյ առաւել սիրեաց զնա։ Եւ զպատճառ գալոյն հարցանէր՝ և նա զամենայնն բովանդակ ցուցանէր նմա՝ զնեղութիւն եկեղեցեաց և զզրկութիւն իւր և զհաւատարմութիւն եղբօրն որ առ Ընդան նոյին, և զամենայն որպիսութիւն աշխարհիս ծանուցանէր. որոմ յոյժ հաւանեալ և մտադրութեամբ ընկալեալ զբանն՝ ասպա տայ ըզՀամբատ մօրն իւրոյ և յանձնէ նմա, որոմ անուն Սուրախթամբէկ կոչիւր [2] և ասէ. «Ո՞այս մի ալքայունս մեզ պահես-

---

[1] Ըստ օր. որդի Գույի ղանին։ — [2] Ըստ օր. Սուրխթամբէկ։

ցուք և ոչ տացուք այլ ումեք իշխել ՚ի վերայ դորա»: Եւ ա-
նուանեցին զնա Ենչու, այսինքն՝ ԹԷՐՈՒԻ: Եւ հրամայեցին կալ
՚ի դրանն աւուրս ինչ և յանձնեցին դործակալացն տալ օր ըստ
օրէ յալքուընուստ զառաձիկն, որ և յամեաց զամս երիք. և ըզ-
ցայդ և զերեկ յաղօթելոյ ոչ դադարէր:

Եւ զի ունէր ընդ ինքեան Ամբատ մանն մի փոքրագոյն յոյժ
նշանագործ, զոր եղեալ առաջի իւր ՚ի զիշերի միւսմ յիւ-
րում խորանին և յերեկօրեայ մինչև ցառաւօտն կայր բազում
տարածն առաջի նորա, և յորդարուղիս արտասուօք հայւոյէր
և պաղատէր. ապա նշան ահիզ երևեալ լինէր յերկնից ՚ի վե-
րայ խորանին, զի կամար լուսեղէն կայր ՚ի վերայ նորա և խաչ
՚ի վերայ կամարին, յորմէ ցոլմունք և նշոյլք բոցեղէնք հառա-
նէին: Եւ ՚ի սաստիկ ձառագայթիցն լայնութիւն անհուն,
համառօտաւած բանակին լուսաւորեալ լինէր. և ամենեքեան առ
հասարակ զբոհ առեալ ՚ի դուռն արքունի՝ դումարէին զալ-
հուրեայք ՚ի տեսլենէն: Եւ ազդ արարեալ արքայի՝ գոյ ար-
տաքս և տեսանէ. և ՚ի մեծի զարմացմանն եղեալ՝ գոհու-
թիւն և փառս տայր Աստուծոյ. և կոչեալ զմի ՚ի խորհրդա-
կանացն իւր քրիստոնեայ՝ ասորի ազգաւ և ասէ. «Աղէի և
նշանեա զվրանն զայն, զի վաղիւն ծանիցուք՝ թէ ուր իցէ»:
Եւ ինքն Ամբատ անդիսանայր այսմ առնելոյն:

Իսկ ընդ լուսանալն կոչէն զնա առ արքայ: Եւ տեսեալ ա-
սէ. «Պոռ ա՞ստ է սա». և ասէն. — «Ե՛յ»: Ապա հարցանէ
զԱմբատ. «Օ՞վ ինչ էր այն զոր տեսաք յայսմ զիշերի ՚ի վերայ
վրանին քո». և նա երկուցեալ ասէ. «Ո՛չ զիտեմ զինչ»: Ըն-
դդայնից արքայ ասէ. «Այն առնոյն ձառագայթն և զահիզ
երևումն ոչ իմացար յայնքան ժամանակս երկարեալ». ասէ
Ամբատ. — զիտէ Աստուածն իմ՝ ոչ եմ հասու: Ասէ զանն.
«Եւ զի՞նչ ունիս ընդ քեզ ՚ի սրբոց ձերոց». Ասէ Ամբատ. —
ոչ ինչ՝ բայց միայն փոքրիկ նշանիկ մի: Ասէ. «Բեր առ իս,
զի տեսից». և երեր փութանակի: Հայեցեալ արքայն ՚ի

'ի գահոյիցն և ծունր կրկնեալ բացաւ զկնով համբուրեաց զըզնա և ասէ. «Հայր չարիս և յայս ձևս էր խաչն լուսեղէն, զոր տեսաք. սա է նա ճշմարտիւ»: Եւ յայնմհետէ և յառաջ այնքան սիրեաց և պատուեաց զՍմբատ և հաւատաց նմա, զի բարձրացաւ քան զամենայն զրան աւազանին: Եւ հրամայեաց տալ Սմբատայ, զոր ինչ և խնդրեսցէ:

Եւ եառն նմա փայլուզայ ոսկի, որ էր տախտակ՝ ունելով զանուն Աստուծոյ և զալքայլի գրեալ յինքեան. և այս էր մեծագոյն պատիւ նոցա. և գրեն եառլեխ, որ էր հրամանն, զոր մեք սիգել կոչեմք, և տան նմա զամենայն առաջն թրով Աղանին՝ և զկրան իւր երկրաւն որ էր առ Խաչուին և իւր մեծամեծացն, և զերդն Խորանայ՝ իւր կերոնէն, վասն սպանման հօր նորա անդէն Ալխարտի, որպէս գին արեան լեալ: Եւ եհան զՍմբատ 'ի գուբս յամենայն դատաստանաց 'ի Վրաց և յայլոց: Եւ ահա այս կրկին հաստատութիւն եղև հայրենեաց նոցա. զի առաջինն թրով առած էր՝ որպէս ծառայ, որ 'ի ձեռն Աղան նոյնիսկ. և երկրորդս՝ ալքայատուր և որպէս գնոյ մեծապունճ առեալ ընդ լուսատու գոհարին: Եւ հրաման էառ ազատել զամենայն եկեղեցիս ՚ այոց և զքահանայս: Եւ այնպէս մեծաշուք ձոխութեամբ դարձաւ այսրէն՝ բերեալ և ընդ իւրեան այր 'ի դրանէ ալքունի: Եւ եկեալ փութանակի հասաւ յաշխարհս հայոց, և ծագեաց խաղաղութիւն՝ որպէս արեգակն 'ի մէջ դիշերի: Եւ նախ յանդիման լինի Խաչուին և այլ դլխաւորացն. և 'ի նոցանէ ևս առեալ օգնութիւն՝ էառ և թագուհեայ զերկիրն Արտահան բովանդակ մինչ 'ի սահմանն Խորանայ և Կղենայ, յորում և կայր ընդ աւեր աթոռն Սիւնեաց Տաթև:

Էառ և զեղեգիս և զամենայն գաւառն Վայոց ձորոյ, ըզփոզահանան, զԱրծ և զՎեդի իւր ձորովն մինչև Այերիատան,

---

[1] Այլ օր. Բուդոյ:

և ի Կոտայն և ի Գեղաքունի բաղում շէնս և աւանս։ Եւ ազատեաց զեկեղեցիս և զքահանայս զիւրոյ իշխանութեանն և ամենայն աշխարհիս ։այոց։ Ո՛չ ինեաց զվանորայս և զամենայն աւերեալ եկեղեցիս և արար բազում խնդութիւն քրիստոնէից։ Եւ զի աթոռն Սիւնեաց կայր աւեր ի բազում ժամանակաց և ծերացեալ էր եպիսկոպոսն տէր Յովհաննէս, և հղբօրորդի նորա տէր ։այրապետ հրամանաւ կնոջ Լաչուին սկսեալ էր շինել զվանքն, և կայր ի նմին ադքատութեամբ. զի յայնքան ժառանգութեանցն որ լեալ էր, ոչ տուն մի անգամ ոչ կայր եկեղեցւոյն։ Զ՛որ և սեպհականեալ Ամբատայ ինքեան՝ սկսաւ ամենայն ջանիւ հոգ տանել շինութեան և փարթամութեան եկեղեցւոյն, և զյատիշտակեալ ժառանգութիւնս մի մի դարձուցանել անդրէն։

Իսկ մինչ այս այսպէս լինէր, ապա բարիատեացն առաջնոյ սկսաւ նախանձ արկանել և զրգռել զտուն Բագրի և զմեծամեծան Ա՛րաց։ Եւ զի Բագրն վախճանեալ էր ի 699 թուին և կին նորա Գոհացոյն ունէր զտուստր մի Խոշաք անուն և իշխէր ամենայն իշխանութեան նորա, վասն որոյ ժողովեցան ի Տփղիս առ Բրդունն, որ էր վաղեր և պասխաղ կարգեալ ի մեծ զանէն ի վերայ ամենայն աշխարհիս, այսինքն՝ հրամանատար ամենեցուն և իշխեցող ալրունի հարկացն և մեծ դիւանին, որ արար աշխարհագիր զաշխարհս ամենայն յ703 թուականին, — և բազում կաշառօք խնդրէին կորուսանել զԱմբատ և ոչ ժառանգեցուցանել զերկիր նորա, զոր և ոչ համարձակեր Բրդունն։ Եկն առին ի Ամբատայ բազում տեղիս և զմնացեալսն կեղեքէին առատապէս, վասն որոյ հարկ եղև նմա վերստին գնալ առ Մանկու զանն։ Եւ առեալ ի տանէն Բագրատունեաց իւր օգնականս՝ գնաց յաջողմամբն Աստուծոյ։ Այլ զի նախ քան զերթալն սորա կոչեալ էին զԲրդունն ի դուռն վասն մատնութեան ինչ, և ի հասանել սորա անդ՝ կայր նա ի կապանս. ԵՒհինձ բէկ ոմն և Հ՛ապա-

փադին՝ դիւան այսր աշխարհի [1], կամէին սպանանել զԱբգարն և ինքեանք գալ ի տեղի նորա: Եւ Աւիտճ բէկին թըշնամի էր Ամբատայ և կամէր սպանմամբ դաւել զնա:

Լսեալ այն ինչ ի հասանել նորա ի պալատն՝ յանդիման լինէր Մանկու զանին, և նորա տեսեալ ծանեաւ զնա. և զի յոյժ սիրէր զԱմբատ և հաւատայր նմա՝ կոչէ առ ինքն և ասէ. «Եկ ալքայուն՝ և ծանո ինձ զամենայն որպիսութիւն այնր աշխարհի և զօրաց իմոց»: Եւ նա կարգաւ պատմէր նմա. ապա վասն Աբգարին հարցանէ, «Եթէ որպէս աւելութեաց զաշխարհն զայն և կախէ զքահանայս և զմին սպանեալ է»: Պատասխանեալ Ամբատայ արդարացուցանէ զԱբգարն և ամենևիմբ ատէ զմանուղն: Ընդ որ ցաւուցեալ ալքայի մեծամեծացն իւր, եթէ ընդէր ոչ ուղիղ քննեն, հրամայէ վաղվաղակի առեան դնել և քննել Ամբատաւ հանդերձ. զոր և ի վաղիւն արարին իսկ: Եւ առեալ Ամբատայ զնոսա՝ առ ժամայն սատակեցին զԱւիտճ բէկին և զՇ արտախոդինն. և զԱբգարն հանեալ ի կապանաց ածին առաջի ալքայի, և մեծապատիւ ալքայ զնա և եդ յառաջին գործն: Եւ կալեալ զձեռանէ Ամբատայ յանձնեաց նմա և հրամայեաց գրել նորանոր հրամանս և առաւել պնդութեամբ հաստատեաց քան զառաջինն զժառանգութիւնն Ամբատայ: Եւ այնպէս մեծամեծ յաջողմամբ եղեալ անտի Աբգարն հանդերձ՝ եկին վաղվաղակի յաշխարհս: Եւ վասն մեծի երախտացն ոչ գիտէր Աբգարն, եթէ որով պատուեցէ զԱմբատ:

Լսեալ ի գալն Ամբատայ՝ յամօթ եղեն ամենայն թշնամիք և հակառակորդք նորա: Ոմն և տիրեաց ամենայն գաւառաց և գիւղից իւրոց. բայց յետոյ իւր կամաւ վասն սիրոյ և միաբանութեան՝ ամանց գարձոյց և եթող յետս աստ և անդ ի գիւղից և յագարակաց և զայլն հաստատեաց սեպհական հայրե-

---

[1] Այլ օր. Սեբեոս բիւրեռ և Շարբեթոբին:

նիք իւրոյ ազգի և զաւակաց: Բայց եղև առաջին գնալն Արմ բատայ ի Մանկու զանն յ700 Թուականին. և երկրորդն յ705 Թուականին [1]: Սա մեծաւ փառաք պատուհալ և սիրեցեալ լինէր յայն Ուլաւու զանին և կացուցեալ ի վերայ բազում գործոց իւրոց: Սա շինեաց պհրաշակերտ ժամատունն ի Նոբատանս ի վերայ գերեզմանաց իւրոց, և արար բազում արգիւնս և փարթամացոյց զնա և զարդարեաց զեկեղեցին և եա գեղանս և այգեստանս, որպէս վերագոյն ասացաք: Սա գնաց ի Բասէն հրամանաւ Ուլաւուին վասն մնոլար [2] մայրաքաղաքին, զի չինէին զմեծ արքունիքն որ ի Գառն գաշտի, զոր Ելա գաղ կոչեն: Եւ եկեալ յԱշորնիս՝ գնաց ի վանսն Թաթիղոյ և բազում ծախիւք և մեծաւ ջանիւ էառ մասն ինչ ի գլխոյ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, զի կայր անդ մի կողին գլխոյն. էառ և զգաւաթ սրբոյն Գրիգորի Աքանչելագործի, զոր բերեալ և ժողովեալ էր անդ վերջին Գագիկ Թագաւորն Բագրատունի և եդեալ ի պահեստի ի կործանման ժամանակի: Եւ բերեալ զանապատմելի գանձն աստուածային՝ զարդարեաց ոսկւով և արծաթով եդեալ յաղեւսաձև պահարանի և բնակեցոյց ի գերահռչակ ուխտին Նորավանից, եա և կազմել պահարան աւագ սուրբ Նշանին յոսկւոյ ի կերպ աղեւսակի՝ ունելով դրունս երկբացիկս. և գրեաց ի Թիւականց կուսէ չիշատակ ինքեան:

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ վախճանի եղբայրն սորա գեղեցկածաղկին Լասնէ և գնի ընդ Եղիկումին, Թողու զաւակ մի բարերոյս՝ Լիպարիտ անուն: Եւ յետ սակաւուց մեռանի և միւս եղբայրն՝ քաջ սպասաւորէն Փահլաւաւելոյն և գնի ընդ նոսա: Յոկ եղբօրորդին սոցա Ռուբինէն գնաց ընդ զօրս Ուլաւուին ի պատերազմ ընդ Ներքայ ղանին ի դաշտն Խոզ-

---

[1] Այլ օր. բայց եթէ առաջին գնալն Մխիթարայ ի Մանկա ղանն ի 600 թուականին և երկրորդն ի 605 թուականին: — [2] Այլ օր. մնոպար հայրաքաղաքին:

բաց, որ այժմ Խփչախք կոչին, և առ մեծ գետովն, զոր Թերք կոչեն՝ սպանանի ՚ի պատերազմին 710 Թուին: Եւ յետ այսր փոխի ամենօրհնեալ մայր սոցին՝ Ընփայն, 712 Թուին և դնի ընդ որդւոց իւր: Եւ մնայր Ամբատայ օգնական միայն կրսեր եղբայրն իւր՝ Տարսայիճն, որ էր այր զօրեղ և պատերազմող և յաջողակ յամենայն գործս, նաև բարեպաշտ և աստուածասէր յոյժ. որ առեալ իւր կին յԱսմայէլացւոցն՝ զդուստր տեառն Միւնեաց՝ զԸրուզ խաթունն, որ եղև քրիստոնեայ և երեխի հաւատով և երկիւղած յԱստուծոյ, յորմէ ծնան որդիք երիք՝ Եղիկումն, Ստեփաննոս, որ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն, և Փախրադալայն: Եւ տիրեր Տարսայիճն կողմանն Որոտան:

Սա զարդարեաց զմեծ եկեղեցին Տաթևոյ ՚ի սպաս և ՚ի զգեստս գեղեցիկս, և ետ ՚ի սուրբ եկեղեցին զվաղնջուց յափրշտակեալ ժառանգութիւնն՝ զ՚արժիս իւր տահմանովն, զՁուր իւր տահմանովն և զեւր ձեռատունկ այգին ՚ի Խոտաձետ և զՐէթիվանս իւր տահմանովն. և գրէ ինքեան արձան յիշատակի ՚ի վերայ սեանն հարաւային, որ ունէր օրինակ զայս.— «Ես զոր յիշատակի և արձան անջնջելի է իմ Տարսայիճիս՝ իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Լ՚իպարտի՝ եղբօր Ամբատայ մեծ իշխանի, կողմնակալի յայսմ նահանգի, որ իշխեցող էր այսմ գաւառաց ՚ի դրանէն Խարկուշատայ մինչեւ ցտահմանն Ռշնւոյ, միաբանեցայ Տաթևոյ սուրբ առաքելոցս և տուի զիմ հոգւոյ մասն ՚ի յիմ սեփական ուխտս ՚ի սուրբ եկեղեցիս՝ գիւղս 6, զոր լուեալ էաք ՚ի հին ժամանակաց ժառանգութիւն լեալ սմին՝ զՂնհէր, զԽոտան աւան [1] տահմանօք իւրովք, լերամբ և դաշտիւ, և ՚ի Խոտաձետ և ՚ի Խոտ զմեր ձեռատունկ այգին, և զՁուր և զ՚արժիս իւր տահմանովն, զորոյ զկէսն գանձագին էի արարեալ, և զԽորտի, զը-

[1] Այլ օր. վ՚ոտան աւան:

փեթիխանս իւր սահմանումն։ Եւ եպիսկոպոսք տեղւոյս տէր Սողոմոն հաստատեցին մեզ յիշատակ և կարգեցին պատարագ յամենայն ամի մին քառասունք՝ զ10՝ Յայտնութեանն, զ10՝ Օգոստոսին, զ10՝ Աստուածածնին, զ10՝ Լուսաւորչին, զ20 օրն ինձ Տարսայիճիս և զ20 օրն իմ եղբօրն Ամբառայ։ Եւ՝ որ յետ մեր ի մերոց կամ յօտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռնասուրաց այս հաստատ պայմանս և անքակ վճիռս խափանել ջանայ, կամ զայն գիւղօրէքն կամ զայդին յայս եկեղեցւոյս հանել խորհի՝ բաժին ընդ Յուդայի և ընդ այլ խաչահանուացն եղիցի, և գԱյնինին և զամենայն չարագործացն առցէ պատիժս, և յերից սուրբ ժողովոցն նզովեալ լիցի։ Եւ թէ տաճիկ աւազ փոխի և յափշտակել ջանայ՝ Աստուծոյ և յիւր փեսամբարձն սպիզակ եղիցի և ընդ սատանայի ի դժոխս իջցէ, և տաճիկք և զաւակօք ջնջեալ և բարձեալ եղիցի. իւր հալալն լինի հարամ և հաղար, հազարնաւլաթ լիցի։ Ի թուին 723, յամենայնա՛ Նոյեմբերի 13։ Եւ ես վկայ այսմ վճռիս տէր Սարգիս՝ Նորավանից եպիսկոպոս, և Սարգիս՝ փակակալ սուրբ եկեղեցւոյս, և յիմ աղաչանաց Հ՛ասան Կարասպետի որդի։ Հ՛աստատ է կամաւն Աստուծոյ. Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ ուխտիս։ Յուսովն Աստուծոյ ես Տարսայիճս իմ ձեռագրովս հաստատեցի զընծայքս։ Եւ՝ որ յետ իմ յիմ զաւակացն՝ և թոռանց կամ յայլ իշխանացդագ զմեր հոգիս զրկել խորհի և զմեր յոյսն խափանել և զմեր սահմանեալս քակել ջանայ՝ յ318 հայրապետացն նզովեալ եղիցի ի մահ և ի կեանս, կտրեալ և ջնջեալ լիցի յայս կենացս և ի հանդերձելոյն. ամէն»։

Իսկ Ամբառայ հայրապիտ լեալ տանն Լուսոյն՝ խորհի ընդ այլ իշխանացն, տան սպանանել ի ծուխիջն զՈհանեցոյն հրամանաւ Հ՛ուլաւու զանին. և ինքն իշխեալ ամենայն իշխանութենէն Լուսոյն։ Եւ տայ զդուստր նորա՝ զԽոշաքն, ի կնութիւն մեծ Խոջային սահիպ գիւանին, որ ունէր ի բո-

զամենայն աշխարհս տէրութեան Ասպաղայ զանէին, որ ասի լինել ըստ մեծի դաւթարի դիւանին համարս 150 դումանի, և մի դումանն մի բիւր է. և նա էր դիւանի դլուխ և վերակացու ամենայնին. — և էր այս յ718 թուին: Այլոց մեծ և բազմաշատ ազգայն աշխարհակալ՝ յոյն և ակնակալութիւն քրիստոնէից, Հուլատու զանն մեռանի յ713 թուին. ընդ նմին և ամենօրհնեալն Տծնողուզ խաթունն՝ կին նորա, ազգ դեղացուբ եղեն՝ ի բազմահնար Խոջայէն սահիպէն: Եւ դիտէ Տէր՝ ոչ ինչ էին ընդհատ բարեպաշտութեամբ քան զՎոստանդիանոս և զմայր իւր Հեղինէ. ազգ թագաւորացին սան 8:

Եւ ապա նստաւ՝ ի տեղի նորա որդի նորին Ասպաղայն՝ այլ հիզ և բարի և խաղաղասէր, և սա սիրող քրիստոնէից: Վ՚ա-բեալ զզանութիւնն բարեյաղթ յաջողմամբ սան 18՝ մեռաւ նա՝ ի դաւելոյ ոմանց՝ ի Համիան յ731 թուականին:

Այլոց Ամբատ անզաւակ գոլով՝ առեալ զմի յորդուց եղբօրն Տարսայիճին և որդիացուցեալ ինքեան՝ տայ յաւուրս զրոց և՝ ի հրահանգս քահանայութեան: Եւ ինքն յետ բազում շինութեանց աշխարհաց և վանորէից և եկեղեցեաց և մեծամեծ և երևելի գործոց, որ անց ընդ ամենայն նախնիս իւր, գնաց՝ ի մեծ դիւանն արքունի առ Ըղըլէն և Սահիպն՝ ի Կաւրբէժ շահաստան: Եւ անդ հիւանդացաւ հիւանդութիւն մեծ, ուր և մեռաւ խակ: Եւ առեալ զամենայն իշխանութիւն իւր յեղբայր իւր Տարսայիճն՝ յանձնէ զնա Ըղըլէնին և Սահիպին և ինքն փոխի՝ ի կարգս հրեշտակաց, մերձ գոլով նմին երանելին և սուրբ բարեխնդի Շ՚ալուէ, վարեալ զիշխանութիւնն մեծաշուք պատուով և երևելի վաղաք սան 20: Եւ եկեալ ամենայն մեծամեծացն լացին զնա, և մեծապէս պատուով զարդարեցին զդագաղս նորա արքայակերպ ձոխութեամբ. և այնպէս բարձրացուցեալ բազմականաւք, խաչիւք վառելովք, ջահիւք և մոմեղինաք, պաշտամամբք մեծաձայն բազմութեամբ քահանայից՝ զարմացուցանելով զաշխարհա-

գումար մայրաքաղաքն, հանին հանդիսիս ընդ դուռն նորա, և բերեալ ի հայրենի դամբարանն սուրբ ուխտին Նորավանից՝ աշխարհախումբ հանդիսիս եղին ի տապանի ընդ հարս իւր ի թուականին 722։ Ոյժան որոյ և շինէ եղբայր իւր՝ Տարսայիճն, նմա տուն տապանի և եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի, և անդ փոխէ ի հանդիստ զեղբայր իւր՝ Ամբատ, որում Պրիտաս Ընտուած՝ յոյն հասարակաց, շնորհեցէ հանդիստ և ողորմութիւն և մաքրեցէ զամենայն աղտեղութիւն հոգւոյ նորա և կարգեցէ ընդ սուրբ և փառաւորեալ իշխանացն ՚այոց. և յիշատակ նորա օրհնութեամբ եղեցի։ Այլ լուր, թէ զորպիսի երախտիս գործեաց սա առ ազգս իւր։

Էր թագաւորութիւնն Ոյժաց առ հնով մի՝ Ուսուգան անուն. և էր որդի մի Աշայինն՝ Գաւիթ անուն, զոր բազում հնարիւք ջանայր Ուսուգանն այն կորուսանել զնա. երբեմն դնէր ի թաւրուա և ծովասոյզ առնէր, երբեմն տայր յիշխանան սպանանել, և նոքա ի գեհենափոր յարկի պահէին, երբեմն վաներ ի հեռաւոր աշխարհ, զի անդ կորուսցին՝ և յամենայնէ զերծեալ լինէր խնամոքն Ընտուծոյ։ Եւ երթեալ փախստեայ առ մեծ արքայն Ո՛անգու զանն՝ գառնայր ի նըմանէ. և եկեալ թագաւորէր յիւրում աշխարհին՝ և գտանէր սատակեալ զՈւսուգանն։ Նա առնոյր իւր կին զԽաւանդըն Նախջաւանու զՆսուգանն [1]. առեալ էր և միւս կին ըզԳոնցայն և ունէր ի նմանէ զաւակ մի՝ Գեմեարէ անուն։ Եւ Ամբատ ամենայն հաւատարմութեամբ հպատակէր նմա. և բազում և մեծ երախտիս ցուցանէր նմա առաջի ՚ուլաւու զանձին և առաջի մեծամեծացն, և առաւել ի մեծ դիւանին [2]։ Եւ այնքան սիրեաց զնա Գաւիթ թագաւոր, զի հաւասար գլխոյ իւրոյ տեսանէր, և զիոքրիկ տղայն Գեմեարէ

---

[1] Այլ օր. նա առնոյր իւր կին զԽաւանդն և զՆախջաւանա զԸսուգանն։ — [2] Այլ օր. եւ առաւել ի մեծ դիւանին։

գնէր ՚ի ձեռս նորա և տայր նմա որդի։ Եւ Ամբատ զբազում Թշնամիս Թագաւորութեան նորա ՚ի մեծամեծ գոռոզանուցն տայր սպանանել ՚ի դրան ալքունի։ Օ՜ի այնքան լսող էր ՚ուլաւուն նմա, զի ում կամէր՝ մահ տայր ածել, և ում կամէր՝ կեանս շնորհէր. վասն որոյ ամենայն ոք դողայր ՚ի նմանէ և ամենեցուն աչք ՚ի նա հայէին։

Ապա կոչէ Թագաւորն զԱմբատ ՚ի Տփղիս և կամէր մեծամեծ պարգեւօք երախտահատոյց լինել նմա. հարց ցնա և ասէ. «Ո՞րպիսի կաք են քո, զի պարգեւեցից քեզ պարգեւս մեծամեծս. զի զոր կամիս և հաճոյ Թուի քեզ՝ իմ Թագաւորութեանէս՝ անխնայ ՚ի քեզ». յոտն կացեալ Ամբատայ և երկիր պագեալ նմա՝ ասէ. «Ով Թագաւոր՝ զոր ունիմք՝ ամենայնն քո է և նախնեացն քոց, և այս մեզ բաւական է. այլ խնդիր է իմ ՚ի քէն բան մի, Թէ կամիս»։ Եւ ասէ Թագաւորն. «Ներողեալ եմ, զի զոր ինչ խնդրես՝ տաց քեզ»։ Ասէ Ամբատ. «Խարձ զլաւ յիշատակն մեր, զոր զբպարտեաց նախնին քո՝ Վէոդոդի, զնախնիսն իմ և ետ գրել և նզովք կարգել, զի մի Թողցեն զմեզ ՚ի հայրենիս մեր և պահեաց ՚ի տան գանձու իւրում, տուր զայն ՚ի ձեռս իմ»։ Եւ զարմացեալ Թագաւորն՝ նախատէր զհասն իւր, Թէ ընդէր զայսպիսի արք զօրեղք և յաջողակք եհան ՚ի տանէս մերմէ։ Եւ հրամայեաց սպասաւորացն յոյզ առնել և գտանել զգիրքն. որք երթեալ գտին և վաղվաղակի բերին։ Առեալ Թագաւորն ՚ի ձեռն՝ յոտն եկաց և ասէ. «Ընդ Ամբատ՝ առ զգիրքս, զոր խնդրէիր»։ Յարուցեալ Ամբատայ՝ երկիր պագանէր և ասէր. «Ով արքայ՝ մինչ այդչափ ողորմեցար, զկատարեալն ցոյց առ իս բարիս. այդ գիրք գրեալ է ձեռամբ Թագաւորի. պատառ է և ջընջել ձեռամբ Թագաւորի. հրամայեա լուցանել առաջի քո կրակ և քո ձեռամբ ընկեա ՚ի նա զգիրքդ»։ Եւ առ ժամայն հրամայեաց Թագաւորն և լուցին կրակ։ Եւ հանեալ զսուրն կոտորեաց զԹուղԹան և ընկեաց ՚ի կրակն և այրեաց, ընդ որ

յոյժ խնդացեալ Ամբատ՝ մեծապէս շնորհակալէր նմա։ Յետ որոյ և այլ բազում և մեծամեծ պարգեւօք և թագաւորական զգեստուք պատուէր և խրկեալէր զնա թագաւորն, և այնպէս դարձուցանէր ի տուն իւր։

Ընդ այսու օրինակաւ երարձ Ամբատ զնաւակատիսն նախնեաց իւրոց և ազատ զկնի եկեղցին յիշատակ բարւոյ։ Իսկ զկնի սորա տիրեալ ամենայն իշխանութեանց նորա եղբայրն իւր՝ Տարսայիճ՝ն, որ պատուեալ և սիրեցեալ յաչս աշխարհակալացն և ամենայն մեծամեծաց՝ վարէր զնշխանութիւնն իւր բարձր և շքեղ փառօք, ահարկու ի վերայ ամենայն թշնամեաց և այնքան յարգեալ լինէր առաջի Ապաղայ զանին, որ բազում անգամ զալքայական հանդերձն իւր մերկացեալ յանձնէ՝ հագուցանէր Տարսայիճ՝ին յոտից մինչև գլուխն, և ըզկամսն ի համակ ոսկւոյ բազմագին ակամբք և մարգարտօք լցեալ՝ տայր ածել ընդ մէջ նորա։ Եւ զի այր ուժգին և սրբատեաց և պատերազմող էր և հաստակաւ ահարկու՝ յամենայն պատերազմունս, յոր և երթայր՝ մեծամեծ քաջութիւնս և անպարտելի զօրութիւնս ցուցանէր՝ ի Խորասան, ի Շ՚ամ [1], ի Հոռոմն, ի Հանն և ի Հունս, ընդ Ասպատն և ի Վարբանդ, ինն անգամ վանեալ անձամբ զպատերազմ և մղեալ մնասոս. վասն որոյ մեծամեծ պարգեւօք պատուեալ լինէր յարքայից ազգայն՝ և առեալ զոսկի բազիշն, որ էր տափարակաձև ի չափ թզոյ մի և կշռեալ լտեր միոյ, զի այն իսկ էր յայնժամեան պատիւն։

Սա առեալ զթագաւորն Վրաց Վաւիլէ՝ գնայր ի տունն Խաչենոյ առ որդի մեծ իշխանին ամենաբեկ Ջալալին և առնոյր զքոյր նորա ի կնութիւն՝ զՈ՚ինա խաթունն [2], առ կինօք առաջին ամուսնոյն. ընդ որ ոչ հաճեցան օրէնք և վարդապետք եկեղեցւոյ։ Եւ բերեալ ի տուն իւր՝ առացաւ ի նը-

---

[1] Ընդ օր. Շ՚ամին։ — [2] Ընդ օր. վիրն-խաթուն։

մանէ որդի մի գնդեցկուդէշ և անուանեաց զնա Տ֊ապալ և զբա֊ տեսս երկու, յորոց զաւագն եա՛ի կնութիւն մեծի և փառա֊ ւորեալ իշխանին Խաչենոյ՝ Գրիգորայ որդւոյ ±ասանայ, որ֊ դւոյ մեծի Գրիգորին, որ էր քեռորդի աթաբէկ Լանէի. և գամիան յետ հօրն եռուն եղբարքն հարան՛ի տուն Վ֊րաց թա֊ գաւորին՝ կին եղբօրն Դաւթի թագաւորի՝ Անուէլին որ֊ դւոյ Դաւիթ թագաւորին, որ էր որդի թագաւորին. որ պակասեաց յ719 թուականին:

Ա֊ շինեաց եկեղեցիս և արար բազում ալդիւնս՛ի վանու֊ բայս. եա և՛ի վանան Յաղացքարայ գիւղ՛ի Գեղաքունի ըզ֊ Գառնակերն և այգի մի՛ի Ա֊ճռակայ ձորի. և զրէ ինքեան արձան՛ի վերայ սրբոյ Կարապետին և կարդէ պատարագս և֊ բիս ամ յամէ, վասկ ահակին նղովիւք, զի մի խախտեսցեն ըզ֊ հոգեցատուրն զայն: Գորոգ և բազում եկեղեցիս խախտեալս և հնացեալս: Վ֊ախճանի և յաւուրսն յայնոսիկ բարեպաշ֊ տուհի կին նորա՝ Ընուզ խաթունն [1] և դնի՛ի տապանի՛ի պրան սուրբ առաքելոյն՛ի Տարև: Գայց յետ թագաւորու֊ թեան Դաւթի զորդի նորա՝ Գիւորէ, բնակալ Տարայիճի՛ի տուն իւր՝ մնացանէր ըստ պատուիրելոյ հօրն: Գյս ազգ բազում ջանիւ և օժանդակութեամբ նատուցանէ յաթոռ հօր իւրոյ թագաւոր Վ֊րաց յ721 թուականին: Յակ յետ Ըպա֊ զային, որ մեռաւ յ731 թուին՝ նստի Թագուհատն՝ եղբօրորդի նորին, զան ամենայն աշխարհի, որ և Ընդազ անուանեաց զինքն. և խորհեցաւ քակել զօրէնս քրիստոնէից և առնել մերսման զամենայն ազգ: Յերկրորդում՝ ամի տէրութեան իւ֊ րոյ եապան՛ի Ա֊ուզան զմիւս եղբայրն զՎ֊ատնզաթայն և ըզ֊ սուբատն ±ոռմոց զԽոսրովադինն և զերկուս որդիսն Յագա֊ նին: Գյս՛ի դարնանայնն ժամանակին գնաց անհուն զօրօք՛ի Խորասան՛ի վերայ Ընդունին՝ որդւոյ Ըպազայ զանին, զի ըս֊

---

[1] Այլ օր. Աբշախոյն:

պանցէ զժառանգ թագաւորութեանն. և կալեալ զնա՝ դարձաւ այսրէն:

Իսկ Ստուածն քրիստոնէից յայնմ գիշերի դարձոյց ըզսիրտ մեծամեծացն առ Երղունն, զոր հանեալ ի բանտէ կապանացն՝ թագաւորեցուցին, և սուր ի վերայ եդեալ՝ կոտորեցին զամենայն թշնամիս նորա: Հասեալ գինի՝ սատակեցին զԸհմադն և զհամախոհս իւր՝ զՀասան Մանկլի շեհին [1], զՍահիպ դիւանն, զԸլճնահն և զայլս բազումս: Եւ էր ընդ նոսա թագաւորն Դամեարէ, զոր սիրեաց Երղունն՝ և առնէր զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն Ռագեան և զտունն Շահանշահեան և զԴադեցին և զորդիսն Սադուն աթաբէկին: Եւ ինքն էր յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցեաց: Էր ընդ նոսա և Տարսայիճն, զոր յոյժ մեծարեաց և սիրեաց Երղունն: Ապա դարձաւ Դամեարէ մեծաւ խնդութեամբ և ամենայն ազատօք՝ և մեծամեծք Պ[ր]ոց և Հայոց ընդ նմա: Եւ եկեալ ի Շ[ա]րուր՝ գնաց նմա ընդ առաջ Տարսայիճն մեծամեծ պատուով և արքունական ընծայիւք մեծարեաց զթագաւորն: Եւ նա առեալ տարաւ ընդ իւր զնա յիւրկիրն Ռագեան՝ յԱյրարատ, և բազում թախանձանօք բռնադրեաց զնա, և եղ աթաբէկ ի վերայ ամենայն տէրութեան իւրոյ մինչև ի Տփղիս և յԱնի և ի Կարս. և եղ ի ձեռս նորա զտղայն իւր՝ զԴաւիթ և զՄանուէլն, մնուցանել զնոսա և պահել:

Եւ յայնմհետէ առնէր Տարսայիճն [2] զաթաբէկութիւն աշխարհիս Հայոց, և բազում դիւրութիւն և ողորմութիւն առնէր նեղեալ ազգիս Հայոց: Եւ գնացեալ ի Տփղիս՝ եառ բերել զդիւանն արքունի և ընթերցաւ զամենայն դաւթարսն. և զի էին գրեալ ի դաւթարն անուանք վանորէից Հայոց, զի ի ներքոյ հարկի և դիւանի կայցեն, ապա եառ բերել զծիկնաւո-

[1] Այլ օր. գՀասան Մանլի շհին: — [2] Այլ օր. առնէր Տարսայիճն:

պար աւագ դիւանադպրութեանն և փոխանց զդաւթարն, և եհան զանուանս վանորէիցն աւելի քան զ150 և գհինն այլոյ հրով. և այնպէս ազատեաց զամենայն եկեղեցիս։ Եւ այնքան ողորմած և գթած եղև առ ամենեսեան, զի՛ի Եւտոխս գիւղ, որ է՛ի վերայ Ուրարդան գետոյ՝ խաչ կանգնէին և անուամբ նորա կոչէին զնա։

Սա արար ժողով բազում եպիսկոպոսաց և վարդապետաց և վանականաց աշխարհախումբ Հանդիսու՛ի գերափառ ուխտին Ոտրավանից և ետ ձեռնադրել զորդի իւր՝ Սահակաոս, ՛ի քահանայութիւն յ729 թուականին. և յետ հինգ ամի յուղարկեաց՛ի թագաւորութիւնն Ասոյ՛ի Վրկիկիա առ մեծ կաթողիկոսն՝ տէր Յակոբ, ՛ի ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան. որ և՛ի հասանելն անդ՝ վախճանեալ էր կաթողիկոսն, բազում պատիւ և մեծամեծ փառս ընդունէր՛ի թագաւորէն Ասոյ՝ Լեւոնէ, որ և յոլով թախանձանս առնէր նմա ձեռնադրել անդէն և նստել յաթոռ կաթողիկոսութեան Ասոյ։ Եւ մինչ ոչ առնոյր յանձն՝ ապա արարեալ մեծ աշխարհաժողով և բազում ընտրութեամբ կացուցանեն կաթողիկոս Ասոյց զտէր Կոստանդին յաւուր Ձրագալուցի Օ՛ատկին։ Եւ՛ի մեծի աւուր Օ՛ատկին ձեռնադրեն զՍահփանոս մեծաթոռ մեծ աթոռոյն Վրկնեայ՛ի վերայ այլոց եպիսկոպոսացն, որ կային աստ և անդ՝ ոմանք՛ի Ս՛այոց ձոր և ոմանք՛ի Տաթեւ, որք և միաբան թղթով և ընծայիւք յուղարկեալ էին զնա առ կաթողիկոսն վասն նորոգման սուրբ աթոռոյն հին պատուոյ և աստիճանին, որ բարձեալ էր՛ի վաղնջուց վասն աւերման և կործանման աշխարհիս։ Եւ այսպէս պահեալ զՍահփանոս ընդ սուրբ և առաքելական եկեղեցւոյն Տաթեւոյ՝ փնտռտացուցանեն այսմ աթոռոյ և գրեն շրջաբերական նամակ ոսկեգիր մագաղաթաւ՝ մեծարգի բանիւք և հաստատուն պայմանաւ նորոգելով զպատիւ աթոռոյն զմետրապօլտութեանն, և չքեղացուցեալ անհամեմատ

փառօք՝ զգեցուցանեն նմա զՀայրապետական զգեստն ոսկեթել հիւսուածով և դնեն թագ պատուական՝ ի գլուխ նորա. զայս կաթողիկոսն: Իսկ թագաւորն նմանապէս զգեցուցանէ՝ ի թագաւորական զգեստուց ըստ Հայրապետական ձևոյն՝ և դնէ կրկին անգամ թագ պատուական՝ ի համակ ոսկւոյ՝ ի գլուխն, որ և զանուն թագին ինքեանք միմեանց կոչէին. տայլին և զեմիփորոնն մեծախորհուրդ զերկքկրկինն, որ մեծապատուականն է՝ և խոյր ոսկեթել մարգարտապեռ յօրինուածով, նաև այլ բազում պարդևս մեծամեծս: Եւ այնպէս բարձրագոյն փառօք գնարձուցանեն այսրէն՝ ի թուականին 736:

Իսկ՝ ի գալ նորա՝ խնդաց Հայրն իւր Տարսայիճն և եղբարքն և ամենայն աշխարհն: Բայց յետ սակաւուց խանդացեալ եպիսկոպոսացն, որ՝ ի Տաթև՝ գնացին առ այլազգիսն և բազում ոճիրս սերմանեցին և յոլով վիշաս հասուցին եկեղեցւոյ. և մինչ՝ ի վախճան ինքեանց երկոցունցն՝ տէր Հայրապետին և տէր Յովհաննիսին, ոչ դադարեաց խաղին և խառնաթիւնն: Իսկ տեառն Սահմանեսի գնացեալ առ մեծ աշխարհակալն Ըրղուն և ցուցեալ նմա զնաամակ կաթողիկոսին՝ ծանոյց զամենայն որպիսութիւնն: Եւ նորա մեծապէս պատուով ընկալեալ զնա՝ յոյժ հաճեցաւ և հրամայեաց դրկել նմա ըստ իւրմանց օրինին եառնլիս, և հաստատեաց զամենայն եկեղեցիս և զաշխարհն և զեպիսկոպոսունսն՝ ի տէր Սահմանեսս և ետ նմա այր՝ ի դրանէն և վայիլայ և այնպէս յուզարկեաց յաթոռ իւր. որ և եկեալ՝ տիրեր ամենայնին՝ ի փառս Աստուծոյ: Եւ կային հնազանդութեամբ՝ ի ներքոյ նորա տէր Գրիգորն, որ էր ազգական տեառն Յովհաննիսի՝ և տէր Սարգիս, որ՝ ի Նորավանս: Այս տէր Սարգիս՝ որպէս յառաջն ասացաք, բազում արդիւնս ցուցեալ՝ ի Նորավանս՝ և առաւել սրտի զորձ մի երևելի, զի՝ ի գիւղն Ըռփոյ՝ ի վերայ դեռոյն կանգնեաց կամուրջ զարմանալի տաշածոյ վիմօք՝ յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացուցիչ տեսողաց, բազում

ծախիւք և անչափ աշխատութեամբ՝ հրամանաւ բարեպաշտին և մեծատաւ իշխանին Տարսայիճին, որում վարձատրեցաք Աբրհառոս հազարապահիկ։

Յայսմ ժամանակի երկպառակեցան զօրքն գան Ընդունին և անկաւ շփոթումն մեծ ի մէջ մեծամեծացն դլխաւորաց և հանին բազում արեան ճապաղիս, զի կային Ընդունն զմեծ զօրապետն գՈւղայ Ձինքսանն, որ կոչի աւագաց աւագ կամ տերանց տէր, և հապան գնա, զի խորհուրդ նենդութեան էին խորհեալ նմա. ընդ նմա և զամենայն համախոհս նորին՝ ըզ-գաղանն և զվտխալութեան հազարապետք, զԸրուխն, զՆձանն և այլ բազումք, սակս որոյ և զրպարտեալ զԹագաւորն Ա-բաց Դեմեարէ՝ բազբաղելով եղին ի վերայ բարուրս մեհեան և տարեալ սպանին տարտապարտ ի մեծ գաշտին Մովկանայ յերկր գետոյն Կուրայ ի թուին 738։ Իսկ քրիստոսասէր և ամենօրհնեալ իշխանացն իշխանն՝ Տարսայիճ, յետ բազում բարեպաշտութեանց և երևելի գործոց լցեալ զկեանս իւրոց՝ վախճանի յիւրում դարապասին յԱբխայ. և տարեալ ի Նորավանս մեծ աշխարհաժողով հոգիսիւ՝ դնի ընդ եղբօր իւրում՝ Ամբատայ, յիւրում ձեռակերտ դամբարանին, ի թուականին 739։ Եւ ապա որդիք նորա վիճէին ի վերայ տէրութեան և իշխանութեան հօրն. որք գնացեալ ի դուռն արքունի՝ յանդիման եղեն աշխարհակալ գան Ընդունին և ծանուցին զբանս իւրեանց։ Իսկ նորա յառաջ կոչեալ զառաջադոյն գՆերկումն և կարգեալ զնա ի տեղի հօրն՝ կացուցանէ իշխան ի վերայ ամենայնին։

Ապայ թէպէտ տիրեաց բոլոր հայրենեաց և իշխանութեանց հօրն, սակայն ոչ կամեցաւ զերկութիւն առնել եղբարցն. այլ եպիսկոպոսօք և վարդապետօք և ազատօք բաժանեաց զամենայն ժառանգութիւնն՝ և ետ բան պատշաճին զբաժին եղ-

---

[1] Ա՛յլ օր. որոյ էր յոյժ։

բոլն Ջ֊ալալին 'ի նա, և զբաժին հօրեղբօրորդւոյն Լ֊իսարտին 'ի նա: Եւ այնպէս կային միաբանութեամբ և վարէին զէրութիւն այսմ նահանգի մեծարգոյ և շքեղաշուք իշխանութեամբ պատուական և փառաւորեալ յաչս աշխարհակալացըն և մեծամեծացն՝ պահելով զաշխարհս զայս 'ի խաղաղութեան և զվանորայս 'ի շինութեան: Եւ զի յայսմ ժամանակի ամենայն աշխարհ աւերեալ և ապականեալ էր և վանորայք խափանեալ 'ի պաշտամանէ, ամենեքեան առ հասարակ զիմեալ 'ի տէրութիւն սորա՝ ասա զՀանդիստ առեալ զետեղէին, որպէս և հին կաթողիկոսն Աղուանից տէր Առեփաննոս և բնակէր առ տեառն Առեփաննոսի՝ եղբօր սորա, և այլ բազում եպիսկոպոսք և վարդապետք և յաղտա արանց: Եւ էր տեսանել շնորհօքն Աստուծոյ զտունս զայս իբր զտապանն Նոյեան 'ի մէջ աշխարհակործան ալեացն, զոր և տէր Աստուած անտապանելի պահեցէ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց մինչև 'ի կատարած աշխարհի:

Այլ այսու յոյժ գեղեցկացան. զի ինքեանք մարմնական իշխանութեամբն պայծառանային և եղբայր իւրեանց՝ տէր Առեփաննոս, հոգևոր շնորհօք և բարձր դիտապետութեամբ շքեղանայր. և յեռեալք սիրով ընդ միմեանս կային հանդարտութեամբ ըստ այնմ, եթէ «Օ՛ի բարի կամ զի վայելուչ՝ զի բնակին եղբարք 'ի միասին»: Եւ ունէին սոքա բողբոջս բարեբոյս զաւակաց. Ալիկումին որդիք երկու՝ Ռուբէել և Ռուզտայ անուն, և դուստր մի, զոր ետ 'ի կնութիւն գեղեցկածաղիկ իշխանին և մեծ կողմնակալին Նաչոյ՝ որդւոյ Ջաանայ որդւոյն Պռոշայ մեծ իշխանին, որ էր որդի Վասակայ քաջի, զոր վերագոյն յիշեցաք. իսկ Լիսարտի որդիք հինգ, որոց երիցագոյնն Ամբատ, որ փեսայացեալ էր տանն Աթաբէկի Սագունեաց, և միւսն Յովհաննէս, զոր առեալ տեառն Առեփաննոսի՝ սնոյց և վարժեաց ուսմամբ և աճ 'ի քահանայութիւն: Եւ արդ՝ ով ընթերցող, մի՛ լեզի ինձ

ոք պարսաւադէտ՝ որպէս թէ զևւր ազգ յարգէ և պատուէ, և կամ կարծիք ինչ տարցի, եթէ աւելի ինչ բանս յօդեալ պատուաստեցաք: Վ՚կայ է ինձ Ցէր, որ՝ ի սկզբանէ ձառիս մինչ՝ ի կատարածս բազում ձշդիւ քննեալ գտաք զստոյգն, և զոր մեր ականատես էր եղեալ՝ ՚ի բազմից զսակաւն և ըզձշգրիտն եդեալ կարգեցաք աստ: Եւ թէ զօտարաց ազգաբանութեանց և յիշատակաց, որք վաղ ժամանակօք անցին՝ փոյթ եղև մեզ, ապա ոչքան ևս առաւել զնին և զնմոյն [1]: Եւ զի յայս մատեան զՎիսական աշխարհի զոյցս կարգեցաք և ՚ի վերջոյ որդիքն Օրբէլեան կացին տէր և իշխեցող սմա, վասն այսորիկ հարկ եղև մեզ և զսոցայս ձառել: Եւ դու ընկալ անախտ մտօք և զմեզ թող առանց մեղադրութեան. փառք յաւիտեանս. Ամէն:

ԳԼՈՒԽ ԿԴ.

Վասն չէշտութեան և ժեքանութեան ասորեաց ընդդէմ Հայոց Լառնի ՚ի սուրբ և երկնահանդէս ուրուն Սիւնեաց ՚ի Տաթև, որ է յետն քան Հայրապետին՝ Սիւնեաց եպիսկոպոսէ:

Պատուհաս և պատուական ծերունին տէր Հայրապետ՝ եպիսկոպոս Սիւնեաց, յետ շինութեան սրբոյ ուխտին Տաթևու նորոգէ զեսախտեալ և զծակոտեալ դրախս սրբոյ եկեղեցւոյն, որ ՚ի շարժմանէ և ՚ի վաղ ժամանակաց հնութենէ ապականեալ էր: Եւ ՚ի ձեռն մեծահնար ձարտարաց քերածոյ քարամբք և կրաշաղախ ձուլմամբ յօրինէ զսալայարկս ծածկութի գմբէթին և ստորակայ սագիցն և գաւթին, որ ՚ի դրանէն: Եւ ՚ի սրբել գհին կազմուած աղիւսաձոյլ և վիմակարկատ գերբկացն, որ ՚ի վերայ ձեղունն՝ գտանեն ՚ի գլուխ առաջին

---

[1] Ընդ օր. ապա սրբոյն ևս առաքելոյն և նմոյն:

խորանին հիւսիսային կողման տուն գաղտանոց և ի նմա մեթեթս անհուն սրբութեանց և նշխարաց առաքելական, հայրապետական և մարտիրոսական, յորում կայր և առուտուր ընկալ խաչն Յարգենեան: Եւ մեծապէս զոհութեամբ իջուցանեն յեկեղեցին. և անհուն լինի խնդութիւն եղբայրութեանն:

Ապա յետ բազում աւուրց ծերական ալիք եպիսկոպոսն բարեբարոյ՝ առ Աստուած, յաղթեալ ի սիրոյ Տեառն իւրոյ՝ գնաց ի տեսութիւն առուտուածակոս տեղեացն Երուսաղեմի: Եւ հասեալ վտակապետին՝ ընդ զանազան երանելի ոգւոյն և զառնայ առ աստուածապատակ թագաւորն Լևոն Հայոց: Եւ նորա ի վաղ ժամանակաց ցանկացող եղեալ միաբանութեան սուրբ և գերափառ ուխտին Տաթեւոյ՝ խրախացաւ մեծապէս ընդ հանդիպումն եպիսկոպոսին. և ըստ մեծայոյս հաւատոյն կազմեալ ընծայ թագաւորական սուրբ և երկնաձեմ եկեղեցւոյն զգեստ սեղանոյն յաղքուն ական մեռաքսից զբուզանդացին, որ ի Յունաց ձարտարացն անունեան կիտուածօք, և խաչ պատուական ի սպիտակափայլ և առնտեսակ քարանց համակ կերպացեալ և պնդեալ յոսկւոյ, և սկիք պատուականք ի զուտ արծաթոյ և այլ բազում պարգեւս եպիսկոպոսին: Եւ գրէ իւրով ձեռամբ յիշատակ ինքեան.—

«Արդիւք, որ հոգւոյ աշխ յանվախճան կեանս հայեցան՝
Մինչդեռ ի մարմնի էին փրկութեան հոգւոյն ջանացան,
Յաղագս որոյ ես՝ Լեւոն, թագաւոր ազգիս Հայկազեան
Եւ խոստովանող ուղիղ հաւատոյ սուրբ Երրորդութեան,
Յայս աստուածընկալ սուրբ ուխտ խնդրեցի լինել միաբան՝
Որպէս զի հաղորդ եղէց ի նմանէ ամենից որ աստ բարութեան.
Որ և աղերսեմ առ ձեզ աստանօր՝ անձինք սրբազան,
Զի մեզ և նախնեաց մերոց [1], որք հանգեան յառաջ յարութեան՝

---

[1] Այլ օր. զի եղէ նախնեաց մերոց:

Լ֊իցի աղօթիւք ձերովք հասանել մեղաց թողութեան,
Եւ արքայութեան երկնից արժանի լինել հանգրստեան,
Ընդ որս և որդւոց մերոց և զարմից, որ գան մեր փոխան՝
Մնալ ՚ի յերկրի կենօք ընդ երկայն աւուրս բարութեան»։

՚Ի թուին ՟այոց 731։

Յեպիսկոպոսութեան Ալէնեաց տէր ՟այրապետայ և տէր Յովհաննէսի՝ հզօր և բարեպաշտ արքայն ՟այոց Լ֊ևոն տիրապետեալ արևմտեան նահանգին Միլեկիոյ, մեծագոյն յուսով և առատ պարգեւօք միաբանեցաւ ՚ի սուրբ ուխտս միեղէն եղբայրութեանս՝ որպէս յայտ առնեն վերոգրեալ բանքդ։ Եւդ որ գինի մեր գայք բնակել յայս ստուգածարնակ տեղի աղօթից և ամենայն բարեգործութեան, որ ստա կատարին՝ հաղորդ կալջիք զբարեսէր թագաւորն ՟այոց Լ֊ևոն հանապազորդ յիշմամբ առ տէրն մեր Փրկիչ օրհնեալն յաւիտեան։ Յաղագս գրոյս այսր յուսոյ և սիրոյ ստուգածագօր թագաւորին՝ եղբայրութեամբս կարգեցաք զօր սրբոյ Ծ֊ատակի Յարութեան միաշաբաթեան յիշատակ նմա, որ կատարին զպատարագն յամենայն եկեղեցիս անխափան միշտ ՚ի վախճան։

Գ֊ԼՈՒԽ ԿԱ֊

Վասն խնդրելոյ եղբարցն Հայոց որ գինի թեոտն Ցուխթայ, և ապէն ազգն պատահմանց նոցա և գերբնեանց, և հռոմկլայնն և մայրաքաղաքացն Փռանգաց, որ ՚ի ծովեզերքն։

Յետ սրբասէր կաթողիկոսին ՟այոց տեառն Յակոբայ մեծաւ հանդիսիւ և աշխարհամեծողով ամբոխիւ նստուցանեն կաթողիկոս ՟այոց ՚ի Աթս յաւագ եկեղեցին՝ սուրբ Սոփի, ըզԱրատանդին վարդապետ, որ էր առաջնորդ սուրբ և գերահռչակ վանացսանեին Խորին կոչեցեալոյ, մեծապատիւ շքով և արքունական ճոխու թեամբ, ձեռամբ թագաւորին ՟այոց Լ֊և֊

ւոնի՝ որդւոյն Հեթմոյ, ընդ որս էր և մեր Նուաստութիւնս։ Որպա կեցեալ ամն երիք յաթոռն՝ ապա վախճանեալ Թագաւորին Լևոնի, պայազատէ զեէրութիւն նորա երեց որդին Հեթում։ Ա՛ն նախանձ հակառակութեան բերեալ ՚ի սրտին ընդ կաթողիկոսին Կոստանդեայ՝ առնէ ինքեան խորհրդակից եպիսկոպոսաց և յիշխանաց գլխաւորագոյնան, նաև ՚ի վարդապետաց իսկ, և հրապուրեալ զամենեսեան սիրանենդ խորհրդով՝ առնէ ժողով ՚ի Սիս մայրաքաղաք և յառաջ կոչէ ըզքիլն չարաբանս. և դնեն բարւրս բաղումս զդատաստ բանից ՚ի վերայ հայրապետին՝ անարժան և անպատշաճ լսողաց. քննիչ եղեալ ծառայք՝ տեառն և հօտն՝ հովուին, դատափեթ առնէին զվոխանորդն Ըստուծոյ։ Եւ այսպէս զըպարտեալ զկաթողիկոսն, զորոյ զերեսն և զձշմարիտն Ըստուած միայն գիտէ։

Լսակ հեզն այն և հանդարտն ըստ սիրապատուէր հրամանին ոչ ինչ ընդդատանոյր. այլ զամենայնն յանձն առեալ՝ ասէր. «Ընդարմ են բանքդ այդ և ես ձշմարտիւ գործեցի զդատս, բայց այդ յայտնիքն. իսկ զծածուկն, որում վկայ է միայն ծածկագէտն, բիւրապատիկ քան զդոյն ունիմ ամբարեալ յոգիս՝ և չեմ արժանի այսմ աստիճանի. արդ զոր կամ է ձեզ՝ արարէք ընդ իս»։ Որում պատասխանեալ Թագաւորն և ժողովն, «՚Ի բաց հան ՚ի քէն, ասեն, զկաթողիկոսութիւնդ և տուր ցմեզ»։ Լուեալ զայս կաթողիկոսին՝ յանձն առնոյր յօժարութեամբ։ Եւ զգեցեալ զզգեստն հայրապետական ըզբազմախաչն և զեմիփորոնն հինգկրկին որ պատրիարգացն է, և զթագն պատուական եդեալ ՚ի գլուխն, և զվաւերականն մեծագին ածեալ ՚ի մատն, և առեալ ՚ի ձեռն զաջ սրբոյն Գրիգորի՝ օրհնեաց զթագաւորութիւնն զայն և զամենայն աշխարհ, և ասէ. «Գոհանամ զքէն՝ Տէր իմ Յիսուս, որ մատնեցեր զիս մարմնաւոր դատաստանաց և անցաւոր պատժոց և ամօթոյ, և ոչ պահեցեր յօրն մեծ՝ յորում դատաս-

տանքն ահեղ և պատիժքն անվճար և ամօթին յաւիտենական։ Ոչայց տուր սոցա առաջնորդ բարի և հովիւ ընտիր, զի ըստ կամաց քոց հովուեսցէ զբանաւոր հօտս քո. այլ պարանոց այսոցիկ, որք առին զդատաստանս քո և նախ քան զօրն իմ առաւաճառեալ գառեցին զիս՝ գու արասցես իրաւունս ընդ իս և ընդ նոսա»։

Եւ ապա հանեալ զզգեստն եդ՝ի վերայ արծաթի սեղանոյ. նահատակէս և զքիմն եպիսկոպոսութեան հանեալ ծալեաց և եդ՝ի վերայ նորա և ծածկեաց պատուական հանդերձիւ. ելհան՝ի մատնէն և զծանրագին մատանին և զգաւազանն և առ զամենայնն ցպատգամաւորան և ասէ. «Ընդ ողոր խնդրեքդ»։ Եւ ինքն ետ բերել մազեղէն մի սև և յոյժ խոշոր՝ և զգեցաւ, և՝ի նոյն մազեղինէն քուսիթայ եդ՝ի գլուխն և ողջունեալ զամենեսեան [1] և՝ի տանէ եպիսկոպոսարանին միայն և լուիկ, որ էր մերձ՝ի քաղաքն Ախս, զոր Վլխիբաց կոչեն [2]։ Ետ վաշշուէրքն այն և ջեռհալքն նախանձու և հեռիւ ոչ շտռացան և ոչ յադեցան այնու և ոչ զղջացան ընդ առնելիս նորա, այլ կարծիս ինն բերեալ՝ի միտս, եթէ ելանիցէ յայսմ իշխանութենէ և երթեալ՝ի վերին աշխարհն արևելից՝ անդ ընկալեալ լեցի պատուով կաթողիկոսութեան, և՝ի բաց հելքեսցին՝ի մէնջ [3], — յուզարկեալ ըմբռնեն զնա և տարեալ՝ի բերդն Լամբրոն դնեն՝ի մեռապս երկաթի կապանաք։ Եւ թէպէտ յետոյ բարձին զկապանան [4], բայց ոչ հանին յարգելանոցէն զամն 4։ Եւ եղև այս՝ի թուականին 738։

Օ այս պատկեր արարեալ յուզարկէ թագաւորն և ժողովն նահրակ՝ի կողմանս արևելից յաշխարհս ՚այոց, առ մեզ և առ այլ եպիսկոպոսունս և իշխանս աշխարհիս զՍտեփաննոս վարդապետ Սկևռացի, որ առ մեզ խոկ էր վարժեալ և ու-

[1] Այլ օր. զամենայն։ — [2] Այլ օր. ընդ Գլխիբաց խլին։ — [3] Այլ օր. և՝ ի բաց հերեսցի՝ ի գնջ։ — [4] Այլ օր. և յետոյ քաշին զկապանան։

սհալ՝ հրաւիրական նամակօք, յորում գրեալ էին զպատճառ աքսորման կաթողիկոսին ումեքէա բանիւք բաղդատեալ հայթհայթանս փաստաբանութեանց իրր զբրթաքաղս յաղթութեաց, և յօգնեալ բանս՝ի վերայ Աստանդեայ մինչև ցերեսուն, յորոց մին այս էր, եթէ յառաջ քան զպատարագն ընկէ շարբաթս. զոր թէ արարեալ լինի՝ ոչ վասն ագահութեան և ոչ վասն անհրկիզութեան, այլ վասն տկարութեան մարմնոյ։ Ա՛ւ երկրորդ՝ թէ առնու Տարկս՝ի լիառնոցացն, որ՝ի Հռոմկլայիս։ Ա՛ղ գատախազ՝ այդ սահման է յամենայն ընդհանրական քաղաքս Հայոց և Յունաց և ամենայն ազգաց, ՝ի դմանէ երբ կարգեցաւ բոզանոցն. և թէ էառ՝ ոչ համձ պատարագ կամ հրեխայրի՝ի տուն Տեառն, այլ տայր՝ի հռոդս սպայիկ բերդապահացն. և թէ ինքս է այդ, ընդէր կարգեցաւ Հայրապետական կանոնն՝ ՝ի պոռնկաց և՝ի շնացողաց և յամենայն ինքնակարաց տուգանս դահիկանաց տալ յեկեղեցին. և թէ բարեկարգութիւն խորհեցար առնել ազգիս, այդ թագաւորի է գործ. նախ՝ դու բարձ՝ի քումմէ թագաւորութենէդ և ապա հրամայեա ամենեցուն բառնալ։ Ա՛յսմանպէս և այլքն քան ամին օրինակի էին բանք, ոլք երբէք ոչ տային կարծիս ինչ՝ի հաւատս կամ յեկեղեցի, զոր աւելորդ և անկարգ համարեցաք գրել աստ։

Ա՛ւ յետ այսց բանից հրաւիրեալ էին զմեզ մեծարանօք գնալ՝ի ժողովն նորոգ ընտրութեան հայրապետի, որում պատասխանեալ ասացաք. «Մեք ոչ եմք հասու կամ խորհրդակից հղծման, զի և նորոգմանն հաղորդեացուք. որ զք ինքնահամ կամօք հղծուցին ասար՝ նոյն և զնորոգ ընտրութիւնն հռգասցէ և կամք Աքրարչին յայց լեցի իւրում եկեղեցւոյ։ Ա՛յս ձեալ ապա անդրէն նուիրակին և գտանէ նախ քան զպատարագխանիսն հաստատեալ յաթոռ կաթողիկոսութեան զՄխիթարեան ոմն անապատաւոր, զոր Հռոմայեցի կոչէին, այր լաւ և լի ամենայն առաքինութեամբ։

Կայր ի ժամանակս յայս զօրն եգիպտական, որոց զօրագլուխ սուլտանն Ալփի, զան բազմախուռն ամբոխիւ ի վերայ մեծ մայրաքաղաքին Տրապօլեայ, որ ի Ծովեզերին՝ յորում կայր աթոռ պատրիարքին Ընտիոքու և ըրնձին, որ կոչէր Թագաւոր։ Վանզի յառնուլն զԸնտիոք Փնտուխտաւ սուլտանին, որ ի 717 Թուականին, յորում գերեաց և կոտրեաց աւերէ քան զերկոտասան բիւր, և քակեաց զերկնաճեմ եկեղեցին և Ծովացոյց զմէջ պարսպին, յայնժամ փոխեցաւ աթոռ պատրիարքութեանն ի Տրապօլիս։ Եւ նատեալ սուլտանին շուրջ զքաղաքաւն, տայ ի գուբս զքաղաքն ասասուա-Ծանենդ և անիծեալ գոնթ մի փոանգ, որ էր իշխան մեծի քաղաքին։ Եւ առնուն զնա և անողորմ սրով կոտորեն և գերեն անհուն և անհամար քրիստոնեայս, քակեն և այրեն զեկեղեցին. և զանձնատոր պատկերն Քրիստոսի, որ կոյր յաւագ եկեղեցին պրկեալ ի վերայ խաչի, զոր երբեք մարդ ոչ կարէր նկատել զնա՝ եթէ յանշունչ նիւթոյ իցէ, այլ Թուէր յինքեան առնել զոգի և գշունչ, զայն ընկեցին ի վայր և առառնս կապեալ ի պարանոցն քարշէին ընդ փողոցս մինչև խորտակեր առնէին։ Եւ եղև սուգ մեծ ամենայն քրիստոնէից. և այս էր ի Թուականին 738։ Իսկ յետ միոյ ամի՝ յ740 Թուականին, առաւ և մեծ քաղաքն Աղրնթացւոց աշխարհաժողովն Ակքայիա ի նոյն Ծովեզերին, յորում կայր տուն և աթոռ եւրից Թագաւորացն Փռանգաց՝ գամիլուն և բոպիթալուն և ալամանուն. կայր ի նմա և մեծ արծուէքն Երուսաղէմի, այսինքն՝ արքիեպիսկոպոսն։ Վանզի յիւրից Թագաւորացն, որ անդ էին՝ մինն էր սէր և միաբան ընդ սուլտանին Աւսպայ, վասն որոյ խարեալ ի սուլտանէն, եթէ տուր զքաղաքդ ի ձեռս իմ և ես բառնամ զայլ Թագաւորսն և առամ զամենայն ի ձեռս քո, և այնպէս խարկանաք առնել զանառիկ քաղաքն և զանմարտելի ամուրն՝ քակեաց ի հիմանց և փղոյց զգլարմանակերտ շինուածն ամենայն, զոմանս կոտորեաց և բազումք

ընչիւք իւրեանց նաւեալ ՚ի նա՝ գնացին։ Այլ ընպիծալին, որ սէր էր ընդ նորա՝ ոչ ինչ վնասեցին, այլ խաղաղութեամբ հանին ՚ի քաղաքէն իւրայովքն, որ և անց յայնկոյս ծովու ՚ի մեծ աշխարհն Փռանգաց. վասն որոյ և անվախճան սուգ պատեալ էր զամենայն ազգս քրիստոնէից։ Ապա յետ այսր ամենայնի բարկացաւ Տէր ՚ի վերայ Ընաքանազեան ազինս ՚ոյոց և վասն ծովացեալ մեղաց մերոց արբոյց մեզ զմրուրն դառնութեան սկաւառակաւն բարկութեան, յիշեաց զզըպարտութիւնն Կոստանդեայ և զարթեաւ ՚ի վրէժխնդրութիւն իւրոյ եկեղեցւոյն, շարժեաց զսուլտանն Մսրայ անթիւ զօրօք և էած ՚ի վերայ անպատնէշ ամրոցին ՚ոռոմկլայից, որ էր գահ հայրապետացն և աթոռ կաթողիկոսացն ՚այոց, յորում կային անպատմելի սրբութիւնք և նշխարք առաքելական և հայրապետական և ամենայն գլխաւոր մարտիրոսացն և փառաւորացոյնն մերոյս գրոհի՝ աջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և գաւազանն և աթոռն և սեղանն, յորոյ վերայ պատարագէր ըզՔրիստոս, և հողաթաւն, նաև շղարշն, որ ՚ի գաստառակ սրբոյն ՚ոխխիմեայ, և պերճազան ներկեալ արեամբ։ Եւ ամ՚ սօրեայ ժամանակաւ պատերազմեալ՝ էառ նախ զքաղաքն և ապա զնեղքին բերդն՝ և ապա զբարձրագոյն կլայն, յորում կայր շինեալ գեղապատճոյճ եկեղեցին ՚ի Գրիգորէ կաթողիկոսէ և տուն դարպասի[1] հայրապետին։ Եւ ըմբռնեալ զկաթողիկոսն տէր Պետիանոս երկոտասան եպիսկոպոսօք և բազում քահանայիւք և սարկաւագօք՝ ածին առաջի սուլտանին. և առեալ յաւարի զբերդն՝ կապտեցին, կողոպտեցին զամենայն ապաս եկեղեցւոյն և զանկշռելի գանձն ասուսածայինն և զամենայն առացուածան, բայց զեկեղեցին ոչ քակեցին։ Ապա ՚ի մեծի խնդութեան եղեալ սուլտանին՝ խօսէր բազում բանիւք ընդ կաթողիկոսն և զայս իսկ հարցանէր. «Ընչափ ժամա-

---

[1] Այլ օր. դարպասի։

նակ է՝ աւելի քան զ100 ամ, որ դուք աստ նստէիք՝ և մեր սուրբանութիւնն բազում անգամ ջանացեալ են պատերազմաւ՝ չեն կարացեալ առնուլ զաս, ընդէ՞ր եղև այս, զի այժմ ի քո կաթողիկոսութեան այսպէս դիւրաւ առաւ ի մէնջ»։ Եւ պատասխանէ կաթողիկոսն և ասէ. «Ոչ գիտեմ՝ Աստուածդ միայն գիտէ, մի՛ թէ վասն մեղաց մերոց եղև»։ Ասէ սուրբանանն. «Այս չէր ի յիմ զօրութենէ, այլ Աստուածդն ձեր մատնեաց զձեզ և զերկիդ ի ձեռս իմ, զի ես երկար անգամ խորհեցայ գնալ և Աստուածդն ձեր ոչ կթողզիս, այլ սրգել և ետ զաս ինձ»։ Այս ասացեալ՝ կացոյց բերդապահս և հրամայեաց շինել զպարիսպն, որ բաբանոք էին փլուցեալ. և ինքըն յարուցեալ գնաց անդրէն և մտեալ ի Դմբըշխ՝ ցուցանէր քաղաքացեացն զկաթողիկոսն շրջեցուցանելով ընդ հրապարական. և անտի գնացեալ ի Ա՛ըսըր՝ տարաւ ընդ իւր երկաթի կապանաք։ Եւ անդ եղեալ ամ մի ի բանտի՝ վախճանեցաւ ի նոյն երջանիկ և փառաւորեալ կաթողիկոսն տէր Սահակն։ Եւ առեալ քրիստոնէից հրաման՝ տարան յեկեղեցի Սուրբ Աստուածնէ և պատուով եդին ի հանգստի. և այս կործանումն լինէր ի թուականին 741։ Եւ ամենայն սրբութիւնքն, որ գերեցան՝ կորեան անհետ և անգիւտ և բնաւ ոչ երևեցան, թէ և բազում անգամ յոյզ եղև ի թագաւորէն Հեթմոյ։ Այլ յետ առման Հռոմկլային թողեն ի նա և զառնուն Ռահհատին։

Ահա տեսեր՝ ով զաւակ զրպարտիչդ հայրապետին քո, եթէ որպէս փոյթ ընդ փոյթ էառ Աստուած զվրէժ պատուհասին ի վերայ և խնդրեաց իրաւունս. զի զոր դու ի Գլխիրաց եկեղեցւոյն արտաքսեցեր, նա զքոյդն արտաքսեաց ի մեծ աթոռոյ Հռոմկլային. զոր դու քո ձեռամբդ մերկացուցեր ի զգեստուն՝ նա մերկացոյց ձեռամբ սուրբանին Ա՛ըսըրայ զքո եղեալ Հայրապետան. զոր դու ի կապանս և ի բանտ առաքեցեր ի Լամբրոն, նա զքոյն առաքեաց ի կապանս և ի

բանս անզերծանելի զընդանին Մարայ։ Ոչ են այժմ զգեստքն հայրապետական, ոչ թագն պատուական, ոչ աջն և գաւազանն և աթոռն սրբոյն Գրիգորի, որով պարծիմք։ Բայց անմոռնալիանա մերոյ, եթէ յորպիսի տուգանս և՛ի պատուհաս մատնեցաք։

Իսկ արդ այս աթոռ, որ՛ի Հռոմկլայեն եդաւ՝ հաստատեալ էր՛ի սրբոյն Գրիգորիսէ կաթողիկոսէ, որ և Կայսրատէր կոչեցաւ, զի յայնմ ժամանակի ոչ գոյր աթոռ Հայոց, այլ աստ և անդ շրջէին։ Ա՛ս գանձագին արարեալ՛ի կնոջէ և յորդւոյ մեծ իշխանին փառանգ, որ Տաւղին կոչիւր՝ զերդ զայս, եղ՛ի սմա աթոռ և հաստատեաց տուն Հայրապետաց Հայոց, յորում նստան կաթողիկոսք տասն. — առաջինն՝ Գրիգորիս. ապա եղբայր նորա Ներսէս. ապա եղբօրորդի նոցա Գրիգորիս, որ շինեաց զեկեղեցին. ապա Տղայն Գրիգոր, որ անկաւ ընդ քարն Աղիտատայ. ապա Գրիգորիս Եպիսկոպոս. ապա Յովհաննէս. ապա Պետրոսնդին. ապա Յակոբ. ապա միւս Պետրոսնդին, որ աքսորեցաւ. ապա Մեհենիանոս, որ գերեցաւ՛ի Մերս և անդ մեռաւ։ Եւ էին ամք աւելի քան զ140 մինչև ցօր առման նորա։

Իսկ յետ այսր ամենայնի դիպուածոց զարձեալ առնէ ժողով Թագաւորն՝ եպիսկոպոսս և տայ ձեռնադրել կաթողիկոս՝ Հայոց զտէր Գրիգոր՝ Ընտանւոյ նախկապաս, այր դիտնական և առաքինի, սիրող եկեղեցւոյ, ոճնասէր և ոճնախնամիչ տօնից տէրունականաց և պայծառացուցիչ յիշատակաց մարտիրոսաց, ի թուականին 742։ Գիտէր զերեզս և զպատմութիւն լատին և յոյն ազգին։ Վերկրորդ ամին սորա եղև շփոթումն Օաստակաց և խանգարումն լսմանց ամենայն ազգաց, զի հասաք՛ի տուն սխալական՝ որ դրոշմեալ է՛ի Հինգհարիւրեկին, որ էր լուսին ըստ Յունաց Ապրիլի՛ի 6, և ըստ Ներսիսեցւոյն Վիսանի՛ի 16, և ըստ Հայոց անշարժ տումարին Մեհեկի 23. և գայր օր լսմանն՛ի կիւրակէի, զոր սարսուռ էր յա-

առաջի միւս կիւրակէն տալ։ Ապա որոյ մոլորեալ ի ճշմարտութենէն՝ կորուսին կուրապէս զհինգակս շաբաթացն և ածնեցին զօր Աղոթամենին Յարութեան և արարին Օտարիկ, և զպատսիկ չարչարանացն կերան և արբին ընդ աստուածատանն խրախանալով։ Իսկ ապք կացեալ ի ճշմարտութեան ստուգապէս. և որք էին Հերուսաղէմ ի մերոց եղբարց՝ եկեալ հաւատարմացուցին առ մեզ, թէ լոյսն, որ իջանէր ի շաբաթ օրն ի պատիւ գերեզմանին՝ ի մերն իջաւ ճշմարտիւ ի ճրագալուցի առնելն. որովհետեւ եղեալ փառաւորեցաք զԱստուած և կողմանք այլազգեացն զամօթի հարեալ՝ պատսպանէին։

Իսկ հայրապետն մեր տէր Գրիգոր աստանօր սխալանաց մեծապէս և ի բաց եկաց ի ճշմարտութենէն. զի թողեալ զբնական և զհայրենի շաւիղս նախնեացն սրբոց՝ հետևեցաւ ընդ թիւր և զարտուղի ընթացս Յունաց. և հաւանեցուցեալ զեպատաւորն՝ բռնութեամբ ածնեաց և ետ ածնել առնայն աշխարհին Մելիկեցւոց զօր Տատզարդարին Յարութեան և արար Օտարիկ առանց ազատութեան։ Այլ ի պարկեշտ վաներն ոչ ընկալան, նաև բազումք յեպիսկոպոսաց և ի վարդապետաց ոչ հաւանեցան և ոմանք ի ծածուկ պահեցին, վասն որոյ բազումք գանեալ և պատրեալ հալածական եղեն։ Եւ յայսմ առկարգ արարուածոց բազմաց գայթակղութիւն եղև ի կաթողիկոսէն։

Դարձեալ և եղ սահման, զի մի՛ լուծցին զձրագալոյցն յիղ և ի թան և յոր ինչ առանց մսոյ է, և մի՛ արասցին նաւագաստիս մեծախորհուրդ ածնիցն։ Եւ հրամայեաց ձէթ օրհնել հինգշաբաթ և մեղուցելոց և երեխայից. և սկսաւ առ սակաւ սակաւ զամենայն աւանդութիւնս Հոռոմոց եկեղեցւոյն սրբոյ պղծել մուծանել ի մերս եկեղեցի, և ի մերոյս ի բաց քեցել մի մի։ Եւ բազում դեսպանս և նամակ հաւանութեան առաքէր առ պատրիարքն ի Կոստանդնուպոլիս և խոստանայր

յանձն առնուլ զոր ինչ և խնդրեսցին։ Յուզարկեալ էր և առ Ընտանյն Ասուծոյ, որ նեստորական կաթողիկոսն է[1], նախ նապէս թուղթ յանձնառական միաբանութեան, զոր մեք իսկ տեսաք. բայց մեզ արեւելից կողմանցս ոչ ինչ ի վեր բերեալ ծանուցանէր, այլ միայն այսքան համբաւէր, թէ խնդրեմք զաթոռն Ընտիրոցս մեզ լինել, և ապա նուազեալ ժամանակիս կամիմք զմիաբանութիւն ընդ մեզ և զամենայն ազգաց։ Այլ յիկելոցն հոտ դառնագաժան մաղձիցն երևեալ լինէր ի տեղիս տեղիս. և ոմանք ևս ի մերոց աշխարհէս հաճեալ հաւանեցան և սկսան եպերել զնախնիսն մեր և առնել նորաձևութիւնս և այլաձևութիւնս։

Իսկ մեք հանապազ աղեցաւ և լերդախոց լինելով ի վերայ այսր ամենայնի՝ հաշեալ մաշէաք ծփական խորհրդովք ի տրտմէ և ի գիշերի. և ոչ գոյր տեղի յուսոյ կամ ապաստանի, զի տակաւ մի ախոյեան առ իս ընդդէմ կալ հոգևոր մարտին։ Երկնչէաք, եթէ յաւուրս մեր զարթնու չարն ի պատերազմ ընդ եկեղեցւոյ և յարուցանէ մրրիկ խառնութեան ի մէջ մեր և ընթացրեալ կործանէ զսինղերոյ ճեպաւուած ազգիս, յաղագըս որոյ պատճառանոց ի գալ նուիրակի նորա Կոստանդեայ եպիսկոպոսին Կեսարու՝ միաբան խորհրդով եպիսկոպոսաց աշխարհիս և իշխանաց զրեցաք մեք թուղթ մաղթանաց, նաև ողջամիտ հաւատոյ և կարդաց[2] այսոսանեաց եկեղեցւոյ և առ կաթողիկոսն մեր, տէր Գրիգոր՝ ոչ հիւանդանալ անողոջ ձանձրի ցաւոք, որ իբր զբաղդկեղ ձարակէ չարան թօթափել զհաստարակ անդամն եկեղեցւոյ. և նուիրակին այն գիտելով զանձանց վէրս՝ ոչ կամէր յանձն առնուլ զտարուճն թղթոյն բաղբաղելով պատճառանս ինչ։ Այլ էր օրինակ նամակին այս ինչ, զոր և ստորէն կարգեցից.—

---

[1] Ըստ օր. որ նեստոր իմն էր։ — [2] Ըստ օր. հայոցս եւ այլոց։

ԳԼՈՒԽ ԿԱ.

Թուղէի վան հաստատ. և կարգաց եկեղեցւոյ յաբեղեան աշխարհէս առ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր՝ գրեալ յերամբ պետան Սիւնեաց՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ընդ նմին և դատաւորին ուղղափառ հաստատ. արքայն Գրիգորի Սմբատեցւոյն և Ամենայն Աղեւանդրացւոյ *.

«Ստուածային անյաղթ զօրութեամբ բարձրացեալ և աներեւական աջով՝ զօրին պարապեալ, բարձր բազկաքն Քրիստոսի գգուեալ և հիացօր շնորհօք՝ ոգւոյն պերճացեալ՝ սուրբ, անբիծ, անարատ եկեղեցիս՝ այոց՝ անբասիր և անշաղախ հարսնս երկնաւոր փեսային՝ անկեալս և հիմնադրեալս ի սրբոց առաքելոցն Թադէոսէ և Բարդողիմէոսէ, մշակեալս և բեղմնաւորեալս ի պանծալի քրտանց ահարկու և անհամեմատ առնն Գրիգորիսի, նախ՝ գոհութիւն անբաւ բիւրաւորք և օրհնութիւն անհատ և անվճար Ընդարչին Իւրոյ վերընծայէ, որ ոչ ամենայնիւ ամենևիմբ զյետինն արբոյց բաժակ՝ և զանհնարին սպառուած կորստական հրապուրանացն էարկ ի վերայ ըստ արժանաժառանգ պատուհասի տոհմին դառնացողի. այլ յետ տատրիկ պատժոցն և ահաւոր արկածից կրկին կենդանութիւն վհատեալ հոգւոյս՝ և վերստին միխիթարութիւն սգապատ և լքեալ սրտիս շնորհէ։ Նաև փոխան կրնտութեանն՝ պսակ պանծալի, և մխիթարն և քրձոցն՝ զահոյք անարուեստք և խնձոյք խրախանաց։ Ապա որոյ զՄովսէսն նմին առեալ զձայն՝ ի ձահ զայ ինձ գոչել միաձայն. «Երգն-

---

* Մին յերկուց օրինակաց միոցդ այսպէս ունի զվերնագիրդ. — „Թուղէի վան հաստատ և կարգաց եկեղեցւոյ՝ յաբեղեան աշխարհէս առ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր՝ որ վասն կամակատանաց ինչ ակնածեալ եպիսկոպոսաց աշխարհիս՝ գրեցին զայս նամակ ուղղափառութեամբ և միաբանութեամբ՝ ի ձեռն տեառն Սահմանեաց՝ Սիւնեաց եպիսկոպոսի և գահերէց միաբանիս, որ է պատասխանդէս Սիւնեաց Հայոց“։

ծասցէ անձն իմ՝ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան, որպէս փեսայի եդ ինձ պսակ և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս». այլ և ընդ Դաւթայ յուսագնեալ ասացից [1]. «Ալէ իսպառ բարկանայ մեզ Տէր, և ոչ յաւիտեան պահէ ոխս»: Զեւտ որոյ ծնրադանդեցեալ գագաթաժաժ ողջունէ զզլուխ իւր պանծալի՝ զսիրալեզ բըռնաւից, զչքնաղդ և զեղորդ գերահրաշացեալդ ի ՚ոդւոյն ըզԳրիգորիոս՝ հայր հանուրց սեռից ՚այկայ և կաթողիկոս տիեզերական՝ ի դրանէ ՚ոնաց և Լ՚փնաց, ՚ի ծովէ Կասպից և՝ ի լեռնէ Մովկասեաց մինչ՚ի սահմանս եգիպտական և՝ ի ծովեզն աբևմտայինն, ուր զգիշերն ագանի ամէն տուընջենային: Եւ ընդ ողջունիս զայս իսկ ծանուցանէ պատուական գլխոյդ բերանով Թարմառար և հոգեկեր անձին Սահականոսի՝ Միւնեաց այցելուի և նահապահ սեղենի որ՚ի տանն տէրունի, ո՛հայր պատուական և պետ պանծալի՝ (ևթէ) գոն բաղայք բասրանաց՝ ի բերանս բիւրաւոր մարդկան՝ ի բայս և՝ ի բանս օտարս և՝ ի բազայս բարբրանաց, յորմէ երկուցեալ ակն ածելք. ո գիտէ՝ յաւուրս վերջինս տեղի գտեալ չարն՝ զագէտ կրսերութիւնս մեր ընթացարիալ ընդոստնէ, և զգեղեցիկ սաղարթ լուսալեր ոստոց հաւատոյ և զերկնահանգէտ կարգի սահմանելոյ՝ ի սուրբ եկեղեցւոջ, որ՚ի սրբոյն Գրիգորէ և յորդւոց իւր և յայլ սասպազեաց հալոցն սրբոց նախնեացն մերոց, ոլք ամբառ ջանիք, արեամբ և քրտամբ ուղեալ հաստատեցին՝ բոցաթոյն արկածիւ այլեալ մծրէ և ապականէ և շիջուցանէ զգեղեցիկ պայծառութիւնն:

«Եւ երկակի պատճառաւ դնեմք առաջի զայս. մի՝ վասն ամենևին մաքրութեան և սրբութեան հօրդ մերոյ և աներկբայ հաստատութեան յուցելոյ մեզ՝ ի ձեզ. և մի՝ վասն պարտելոյ և կոշկոճելոյ զբերանս զրաբան և ուռայնահոյզ պար-

[1] Ա՛ՀԼ օր. յաւուրէնալ ասացից:

սաւագիր արանց, որք իբրև զԱկիւթիանս և զՏերևինթոս՝ զօրէն Գաբաւոնացեացն շրջին, սպրդեալք տանէ՛ի տուն՝ և շշուկս չարակարծ զամենեքումբք արկանեն այսպէս. «Հռոմ է մեր կաթողիկոսն և ընդ նոսա դաշնադիր». զորոյ զճշմարիտն Աստուած գիտէ և դուք։ Եւ ոչ միայն այժմ, այլ և յայնժամ յորժամ էր մեր նուաստութիւնս առ ձեր փառաւորութեանդ, վանականք [1] կողման Կարմիր լերինն զականջս մեր խիտ առ խիտ տաղտկացուցին։ Հայապիսի բաղբաղանաց փաստ առեալ աստուածասպակ Թագաւորին և բնաւին ժողովոյն՝ ոչ օծին զընտրեալդ՛ի Հոգւոյն։ Ընդ յաղագս այսր պատճառի հայցեմք՛ի ձէնջ երկու իրս՝ զոմն հրաժարական և զոմն յանձնառական։ Եւ այս ոչ՛ի մտադիանէ, այլ գիտեմք թէ Հոգւոյն ազդմամբ վասն զգայեմ ակղութիւն բազմաց բառնալոյ և զմիտս տկարաց բժշկելոյ. յանձնառական՝ զսուրբ և առաքելական առնեն Գրիգորի՝ Հայոց Լուսաւորչին և զորդւոց և զթոռունց նորա, որք էին համախոհք և միաբանք երից աստուածազգեստ Միաւնհոգուացն՝ ունել անթերի զսահման հաւատոյ, որ՛ի Ձեր մեր Յիսուս Քրիստոս և՛ի սուրբ Աստուածածինն և՛ի սուրբ և՛ի փրկագործ խաչն, ընդ որում և զորոյր կարգ կանոնական՛ի սուրբ եկեղեցի, զոր ոչ է արժան կատարելոյդ յիմաստս մի ըստ միոջէ յիշատակել։ — Եւ յիտ այսր ամենայնի լրիւ պիտոյ ունել զկրկին նորոգեալ դաւանութիւն հաւատոյ և զճշդրիտ սահմանս, որ վասն կարգաց եկեղեցւոյ՛ի սուրբ Հոգւոյն Հայոց, որք վասն չար ազանդոյն Նեստորականաց... և Հոգւոյն Քաղկեդոնականացն յորով պատերազմեա և մեծաջան աշխատանօք յիւրաքանչիւր ժամանակս յընձիւղել չարին՝ ի հարկէ տաղտուտեալ Հոգւոյն՛ի քաղաքն Հայոց առաջնորդք եկեղեցւոյ և խշխանք ազգին և մեծախոյզ քննութեամբ ջան հղեալ՝ ի բաց

---

[1] Եայլ օր. ոչ և վանականք։

խլէին զբոյսս չար որոմանցն և սերմանէին զճշմարիտն և զաս-
բիւրք ուղղափառութիւնն, զորոց զլոյն երկանց ոչ է պարտ
տապալել և շինջուցանել, այլ միշտ վառ ունել յանձին։

«Այս ժողով ասացաք. ասեմք նախ՝ զՔ. ահագնիվանին, ընդ*որում էր անյաղթն յիմաստս Ընանիա՝ մեծապատիւ Սի-*
նեաց և աշակերտ Մեսրոբայ, որոյ գլուխ ժողովոյն ախոյեանն
հաւատոյ Յովհան Մանդակունի բոլոր եպիսկոպոսօք և իշ-
խանօք ՚այոց։ Ընդ սակս ժողովոյն Վաղկեդոնի և այլ մահ-
նաւոր բանից, որ ՚ի չարէն անկեալ էր յայդպս։

«Գարձեալ ժողով ՚ի Նոր քաղաքի՝ ՚այոց և Ըստուգու-*
ղղափառաց, վասն չար աղանդոյն Նեստորականացն, որ ՚ի Կու-
ժիկս և վասն կարգաց եկեղեցւոյ Կարգենիս կաթողիկոսիս
՚այոց, ընդ որում էր երանելին Մուշէ՝ մեծապատիւ Սի-
նեաց։

«Գարձեալ ժողով ՚ի Դուին յաւուրս Ներսիսի կաթող-*
կոսի, որ վասն քաղկեդոնական սահմանին և Նեստորի ա-
ղանդոյն, որ ՚ի պղծալից վանքն Գրիգորի Մանաժիհրի Ըռաժ-
կի. ընդ որում էր երանելի մեծապատիւն Սիւնեաց Պետրոս՝
աշակերտ Մովսիսի քերթողահօրն։

«Գարձեալ ժողով ՚ի նոյն Դուին Մովսիսու կաթողիկո-*
կոսիս վասն նոյն աղանդոյ քաղկեդոնականաց, ընդ որում էր
և մերն Պետրոս. յորում թուական ՚այոց եղաւ և «Աուր-
Ընառած խաչեցարն» սահմանեաց, և Յիզդբուզիդ վիշապաց։

«Գարձեալ ժողով ՚ի Դուին, երկիցս անգամ, Ընրահա-*
մայ կաթողիկոսիս, որ վասն բաժանման Վրաց պղծոյն Սի-
րիոնի և զատելոյն Ընդ անից, ընդ որում էր աքանչելին Պետրոս
տափոր՝ մեծապատիւ Սիւնեաց այլովք աթոռակալօքն ՚այոց,
յորում ամենեքին բարձին զընտանութիւն և զհաւատս քաղկեդոնականաց և ահագին նզովիւք վանեցին մեզ անհուպ
և անհաղորդ ճեալ նոցին։

«Գարձեալ ժողով ՚այոց ՚ի Պարտաւ առ Ընդանա եղբայ-

յիւ կաթողիկոսաւ ՚ի այոց՝ վասն նոյն քաղկեդոնականացն, յորում որոշեցին զ՚Աբրէս ումն՝ Ռահուբ կոչեցեալ, կաթողիկոս Աղուանից չար անարգանաք, և զԹագուհին Սպրամ, և զկարեալ հօտն խառնեալ միացուցին ընդ ՚այս:

«Դարձեալ ժողով նախ քան զայս ՚ի Թէոդուպօլիս՝ ՚այք և ՚ոռոմք, վասն միաբանութեան յաւուրս Աղբի կաթողիկոսի հրամանաւ կայսեր ՚Երակլի. յորում հաւանեալ Աղբի ոգիտաբար խմորեցաւ: Եւ Միւնիք և այլք յաթոռակալացն ոչ ընկալան զաղանդն, այլ ճնացին ամբողջ հնորհօքն Աստուծոյ. վասն որոյ անարգեալ Աղբայ արտաքսեցաւ Յովհան Մայրագոմեցի:

«Դարձեալ ժողով ՚ի Մանազկերտ յաւուրս Յովհաննու Օձնացւոյ, որ զխմորեալ աղանդն Աղբայ, որ յաւուրս վէց կաթողիկոսացն՝ մաքրեաց և ահագին նզովիւք հնուացոյց զվէզ ՚ի ՚ոռոմոց:

«Դարձեալ ժողով սուրբ հարցն Այնի, յորում քննեալ գտին համախոհ վ՚րաց զվ՚ահան կաթողիկոս, որ ՚ի Ռաղայ. և զի պատկեր եմոյծ յեկեղեցին ՚այոց, և յամենայն սեղանոյ բարձեալ էր խաչին պայծառութիւն և կանխիւք զարդարեալ՝ որոշեցին զնա նզովիւք և զՄաւիսանոս ումն եդին ՚ի տեղին:

«Ի ակ յաւուրս վերջին՝ ՚ի ժամանակս Օ՚աքարիայի սպասալարի և Ռամնէի աթաբէկին վ՚րաց, դարձեալ ժողով սուրբ հարցն եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից ՚ի Գհոտականն մերձ Պևան կղզւոյն և միանգամ Այնի՝ և չարաչար նզովիւք բարձին և հեռացուցին զամենայն համախոհսն վ՚րաց և ՚ոռոմոց:

«Ընդ այդ ամենայն հարք և սիւնհոդոսք մեծաւ քննութեամբ մաքրեցին զեկեղեցին ՚այոց յամենայն զանազան որոմանց՝ և զահման հաւատոյ և զկարգ եկեղեցւոյ անխախտելի կացուցին մեզ: Վ՚ան որոյ պարտ է ամենայն հպատա-

կութեամբ պիտոյ ունել զայս սահման առանց յաւելման և պակասութեան, միշտ ընթեռնուլ զնոցա գրեալն և նովիմբ վարիլ և վարել զեկեղեցիս Աստուծոյ ի դաւանութեան հաւատոյ և ի կարգս ծոնիցն և ի սահման կենդանարար խորհրդոյն, զոր ամենեւին մաքրեցին յամենայն անպատեհ խառնուածոց։ Զորոց զեգեալ սահմանն քաջ իսկ գիտէք, և աւելորդ է ինձ երկրորդել ասա։ Ընդ այսքիկ յանձնառականք, յորոց ոչ ունիմք հնար արեամբ և մահու չափ մնասամբ միով շեղիլ, այնքան նզովից պարտապան լինել. և ի մեր հարանցն մնանակցութենէ հեռանալ, իբրև որդիք ժանաք և խրամատիչք ցանկոյ հարցն, որոց պատիժն յայտնի է ի գրեալն։

«Ահա հրաժարականքն — ի բաց կալ ամենևին յամենայն միաբանութենանց հաւանելոցն Քաղկեդոնի, որք անպիտացեալք զՆեստորին հասատատելով զազանդ՝ ինքեանք զինքեանս նզովից և լուծին ի կենաց. նզովել ի բոլոր սրտէ զնոյն ժողով և զամենայն հաւանութեան նմա, որք չերկուս ճեղքեալ զանճառ միաւորեալն Քրիստոս՝ լինին աստուածամարդ և մարդագաւանք. հրաժարել և ամենևիմբ փակել յամենայն անկարգ խառնուածոց սուրբ խորհրդոյն յատկանիշ խոտորոյն և ջրոյն, յորում զաւազանին ուրանան զշնորհ և եղծանեն զլուացմանն խորհուրդ. զի զոր ի ծնունդ մեզ շնորհեցաւ՝ զայն յամենն փոխարկելով առնեն ընկելիս։ Ով թշուառք՝ անցայք գիտութեամբ և գործութեամբ ընդ նոյն իսկ առաչն այսմ պարգեաց և յաւելեք ի վերայ նորա զհամոն և զջուրն. ոչ ասէր առ աշակերտան՝ ի վեր առեալ զբաղարջն և զանապակ գինին՝ «Օ այս արարէք առ իմոյ յիշատակի». ընդէր ոչ յաւել զհամոն և (ոչ) ի կիր էարկ զջուրն։ Ապայ առ այս՝ մերթ ի վերայ ածեն գկողն հոտուածն ջրոյ ընդ արեան, և ոգէա կրսերութեամբն ոչ իմանան զիարհուրդն եկեղեցւոյ ի կողէն սկսեալ՝ յորմէնակ նախնւոյն Ադամայ և կողն իւրոյ, յորմէ ծնանին ամենայն ազգք քրիստոնէից գլուսաւորն և զան-

ախտաւ։ Օ՚ի նախ օրինակաւն եղոյց զերկուսն՝ Յորդանանու լուացմամբն և վերնատան խորհրդեամբն, և ապա յատուածային կոչեցն ազբիւրացուցեալ պարգեւեաց մեզ զերկակի շնորհն։

«Վարձեալ՝ ի ժամ սրբոյ խորհրդոյն կատարման ոչ ամբոխեալ՝ իբր՝ ի մարմնաւոր խորհուրդ ուսել՝ և զմի նշխարն յոմն և՝ ի ատան պատարագ բաժանել, այլ ահիւ և դողութեամբ առանձինն ընդ Աստուծոյ միանալ. և թէ պատուական կիցք էին՝ մերձ կացցեն և՝ ի նմանէ հաղորդեսցին՝ որպէս պարգեւ. և թէ զԽանխոռնն բերեն զԹուղթ յօժանդակ ինքեանց՝ սակայն ոչ ասէ նա բազմացն կատարողապէս լինել և սրբազնագործել. այլ զմինն հրամայէ կատարողապէս լինել նման Յիսուսի, և զայլսն ողջ ընդ ատուածայինն սեղանատն շուրջ պարեն, սրբազնագործեալ հաղորդեցուցանել կենաց հացին։ Վարձեալ զկեղեցին Աստուծոյ ոչ առնել տեղի մարմնաւոր սեղանոյ՝ հանդարձակութեամբ նստել և քնել[1] և զգլուխն անփակ թողուլ՝ ի կոխանս շանց և խողից՝ որպէս և մեք ականնատես եղաք. այլ պարկեշտութեամբ և սրբութեամբ և ամենայն զգուշութեամբ պահել՝ որպէս վայել է տան Աստուծոյ, յօրինակ առեալ զառնս մարմնաւոր թագաւորաց, թէ քանի պահապանաց և զգուշութեան պէտք լինին անդ։

«Վարձեալ՝ ոչ մնանել՝ ի հոգւոյ ակեղեցին և ածնակից լինել կամ հողոդիլ, և ոչ ընդ նոսա ածնել զՕնունդ կամ զԱւտիս, այլ զձշմարիտն գկարգեալն՝ ի սրբոյն Յակոբայ՝ ի վեցն յունաւարի՝ զՕնունդն, և՝ ի վեցն ապրիլի՝ զԱւտիսն։

«Վարձեալ՝ որպէս օրէն է, ամենայն պնդութեամբ՝ այսոց եկեղեցւոյս զՔրագալոյցն առնել նաւակատիս և նախաածնակ և խթիլ յեղ և՝ ի պանիր և յոր ինչ առանց մնոյ է։ Օ՚ի հինգ օր նաւակատիքն մեծ և պայծառ խորհրդովք լի են և ոչ է օ-

---

[1] Այլ օր. քնուլ։ — [2] Այլ օր. գնչի։ — Փարիզեան տպագիրն՝ գնդի։

բէն ամենեւին զնախատածնակ մեծի Յարութեանն և Հոննդնաւնելն ընդ այլ առուր պահոյն Հաւատարել։ Եւ թէպէտ բան և խորհուրդ շատ ունիմք՝ չէ պարտ մեզ երկայնել և որպէս ոչ գիտողն ուսուցանել, այլ սակաւն իմնասնոյդ բաւականացի։

«Վարձեալ՝ թէպէտ առաքելական իմանալոք կարդ զձէթ օրհնելն Հիւանդաց և մեղուցելոց՝ ի Հարցն ոչ ունիմք սովորութեամբ առանգեալ մեզ. կարծեմ և Հանդիձակութիւն յոյժ մատուցանէ ժրագունիցն ի մեզ՝ մեղօք ապականել զպիան յուսով ձիթին, և սակաւ դրամիկ մնիլով, ձէթ օրհնել և արդարանալ։ Ելյդ գիւտք շահիցն ի բաց ընկեցի ի մէնջ, և ընդ Հարցն շաւիղ անապրիսք ընթացուք ոտիք. բայց թէ զանկատար իւղն, որ վասն երախայիցն սահմանէք՝ ընդունելի է։ Եւ ընդէր է երկայնել մեզ զբանս. Հաւան եմք մեք ընդ մեր Հարսն ի դժոխս իջանել և ոչ ընդ Հռոմոյ յերկինս ելանել։ Ելյդ այդչափ և այդքանիւք բաւականացուք բանիւք։

«Վիտութիւն լեցի առաւաձայնն զլխոյ Հայրապետութեանդ, զի թէպէտ Հնազանդ եմք ամենայնիւ սեառնդ մերոյ. սակայն աղաչեմք զնոսի կարծիս կրսեր և տգէտ մատուս մերոց բառնել և բժշկել, զի զոկարն յամենայնի շահիլ պարտ է։ Եւ զոր խնդրեմքս՝ հինեսեփկն թղթովք ձեռնադրեալ, առնել ձեռնարկ Հաստատուն և անխախտ կտակ միաբանութեամբ սուրբ և երջանիկ եպիսկոպոսացդ և յուզարկել առ մեզ իրր զյեռկար անջինջ[1]. զի յայնժամ առաւել Հաստատութեամբ և Հզու Հպատակութեամբ Հնազանդ լեցուք առաւաձայնն զլխոյդ. և թագաւորեացս յեկեղեցիս մեր ջահաւորեալ՝ որպէս արեգական։

«Ապա թէ առնլի ինչ կամ պակաս կամիք մուծանել յեկեղեցիս մեր, զոր ոչ ունիմք ի Հարցն՝ և կամ գրեալքս խո-

---

[1] Ա՛յլ օր. ընդեռուզ անջինջ։

ասեն ին առ ձեզ, յայնժամ մի աշխատ լինիք և մի զմեզ աշխատ առնէք. ըստ ձեր կամաց լեցի աշխարհդ այդ և այլ՝ որ որ կամիցի՝ և զմեզ թողէք ի մեր սորուկ դերութեանս. և մեք կացցուք ձեռացուք՝ ակն ունելով վերին այցելութեան: Եւ թէ թագաւորական սուսիւ սպառժէք զմեզ՝ մեք սպառ բռատ եմք ի տանջանս, յաքսորս և ի բանտ, ի մահ և ի մեռանել ի վերայ սուրբ և առաքելական հարցն աւանդից:

«Ողջ լեր՝ թագաւորական արդասիւքդ ծնողդ խնամոխց և մայրդ ուղղափառութեան, աղբիւրդ հաւատոյ և անվախ ատխոյանդ սուրբ եկեղեցւոյ՝ Գրիգորիոս կաթողիկոս ՚այոց: Եւ Տէրն տերանց հովանաւոյն տիրական զվեսդ»:

Հրաւիրէ Ներսէս-ընեան եպիսկոպոսաց ապստամբ և վարդապետաց և իշխանաց:

«Մեք՝ տէր Սարգիս և տէր Գրիգոր, ի նոյն վիճակէ, հաստատեալ և միաբան եմք այս վերոյդրելոցս հարցն աւանդից. և որք ոչ միաբանին այսմ հայրենասանդ և հայրապետական հաստատութեանցս՝ նզովեալ եղիցին, որպէս Սաբէլ և Արիոս:

Եւ՝ տէր Յովհաննէս աթոռակալ Ռշնոյ, միաբան եմ և միաբան եմ այսմ վերոյդրեալ ուղղադաւան հայրենացանկ դաւանութեանս՝ և նզովեմ զոչ հաւանեալ հակառակողն ընդ չար հերձուածողացն:

Եւ՝ Գրիգոր աշակերտ և սպասաւոր բանիւ, որ մակադրեալ կոչեցայ Ռշնեցի՝ հրամանատար այսմ աթոռոյ, սերտ և անքակ միաւորութեամբ համախոհ եմ այսմ վերոյդրեալ դաւանութեանս սահմանիս մեհուն. և նզովեմ նզովիւք սուրբ հարցն զոչ հաւանողան:

Եւ՝ տէր Յովհաննէս՝ շնորհօքն Աստուծոյ եպիսկոպոս ՚ախբատայ, համախոհ և միաբան եմ լրով վիճակելովս այս

ուղղադաւան նամակիս. և նզովեմ զոչ հաւանողն ընդ այլ հերձուածողն:

Նա՝ տէր Մխիթար Ֆաւուց թաղու եպիսկոպոս, անքակ միաւորութեամբ համախոհ եմ այսմ վերոյգրեալ դաւանութեանս սահմանիս մահուն. և նզովեմ նզովիւք սուրբ հարցն զոչ հաւանողն:

Նա՝ տէր Մ՝աթգալէ եղբօրորդի Վ՝անական վարդապետին, համախոհ եմ վերոյգրելոցս՝ ի յանդարձեայ հօրեղբօրն իմոյ, որ հրամայէր թէ օձն կամի շարժիլ զտուան՝ ջանացարուք ոչ տալ տեղի գլխոյն և մի հաւատայք խաբողին. արդ հակառակողք այսմ առաջին հարցն աւանդիցս որոշեալ եղիցին՝ ի փառաց Աստուծոյ:

Նա՝ նուաստ եպիսկոպոս Գողթան, տէր Յարիաւազ՝ միաբան եմ այսմ աստուածաւանդ կտակիս. և ոչ հաւանեալքն նզովեալ եղիցին՝ ի սուրբ Երրորդութենէն:

Նա՝ Նասյի կրսեր բանասիրաց և յետին վարժապետ, իմով աշակերտօքս համախոհ եմ և միաբան եմ այսմ գրոյ և վերոյգրեալ արանցս. և որոշեմք նզովիւք զոչ ընդունողն:

Նա՝ Դաւիթ նուաստագի քարոզ բանի և վարդապետ Ֆայոստանս եկեղեցւոյ, համախոհ և միաբան եմ այսմ ուղղադաւան Թղթոյս, որ ունի ճշմարտիւ զսուրբ հարցն աւանդութիւնն. և որոշեմք նզովիւք զոչ հաւանողն և զհակառակողն:

Մեք անպիտան ծառայքս Աբրիատոսի՝ Նէլիկումն և Լիպարիտս, որդիք փառաւոր իշխանացն Տարսայիճին և Խաչնէի, եղբարբք մերովք և որդւովք և ամենայն ազատօք հաւան եմք և հնազանդք մահու չափ այսմ աստուածատուր և հայրենաւանդ կտակիս. և որ հակառակին՝ որոշեալ լեցին՝ ի սուրբ հարցն մասնակցութենէ:

Մեք մեղուցեալ ծառայքս Աստուծոյ՝ Պապաքս և Իշաչի, որդիք բարեպաշտ իշխանին Պռոշայ, մերովք ազատօքս հա-

մնկամ և համախոհ եմք ամենայն հնազանդութեամբ սուրբ հարցն աստուածութեանց վերոյգրելոցս ի նամակի առաք. և որ ոք հաւանի՝ նզովեալ և որոշեալ լինի ի սուրբ հարցն մեծոց և յաստուածարեալ եպիսկոպոսացս։

Սբ֊ոյն Գր֊ք֊ի Ա֊ն֊լ֊ց֊ի հ֊ա֊ց, ըստ ո֊ր֊ա֊ց՝ ի ը֊ն֊ա֊ր֊ա֊ր յայտնութիւնէ եղելոյ յԱ֊ռ֊ա֊ք֊ե֊ա֊նէն Ց֊վ֊հ֊ն֊ի֊ւ ը֊ս֊ ա֊ր֊ք֊ի֊ւ֊ն և հրամանէ ա֊ն֊ձ֊ն֊ա֊ւ֊ո֊ր֊ի և մ֊ե֊ղ֊ս ի֊ւ֊ր Մ֊ր֊ք֊ա֊ն Ա֊ռ֊ա֊ք֊ե֊ա֊լ։

Ա՛ի Աստուած և Հայր Լանջին կենդանւոյ, իմաստութեան անճառուրի և զօրութեան և կիրպարանի էութեանն, կառուցեալ կառարկոյ ծնող՝ Հայր Արդւոյ միածնին. մի Տէր միայն ի միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր Աստուածութեան, բան ներգործական, իմաստութիւն պարարտական բոլորից ընդ գոյացականութեամբ եղելոցս և զօրութիւն ամենից էացելոցս արարող։ — Արդի ճշմարիտ ի ճըշմարտէն, անտեսանելի յանտեսանելոյն, անապական յանապականէն, անմահ յանմահէն, միանձնեաւոր ի միանձնեաւորէն։ Եւ մի Հոգի սուրբ յԱստուծոյ զէութիւնն ունելով, Արդւով երևեալ և բացայայտեալ մարդկան, պատկեր Արդւոյ, կառարեալ կառարկոյ [1], կեանք և կենդանեաց պատճառ, սրբութեան բաշխիչ, որով ճանաչի Հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Արդին Աստուած, որով ամենայնքա։ Երրորդութիւն կառարեալ փառօք և միանձնեաւորութեամբ և թագաւորութեամբ՝ անբաժանելիք և անկարօտանալիք. քանզի և ոչ առաջական ինչ և ոչ ծառայ յԵրրորդութեանն կամ՝ ի ներքս ածական՝ որպէս թէ յառաջ ոչ եղեալ և յետոյ մտեալ. ոչ նուազեալ կրթեք Արդի ի Հօրէ. և Արդւոյ՝ Հոգի, այլ անփոփոխելի և անայլայլելի Երրորդութիւնն միշտ։

[1] Այլ օր. կատարեալ կատարող։

Եբռներէն Աբեառամ եպիսկոպոսաձեւին արտաքոյ կարգի ծայրն մարգասպանութեան բառին՝ յայտնելով զբնոյ ծագումն, որ ի նմին։

Յոստովանիմք զՈրդին Աստուծոյ նախ քան զյաւիտեան միանչենաբար ծնեալ ի Հօրէ. իսկ առ վերջնովք յաւիտենից քան զամն մերոյ փրկութեան ի Մարիամայ ծնեալ ըստ մարմնոյ՝ որպէս պատուածազան առաքեալն ասէ. «Իսկ յորժամ եկն լրումն ժամանակի՝ արտաքս առաքեաց Աստուած զՈրդին իւր եղեալ ի կնոջէ». և գոլ զնոյն Աստուած և Որդի Աստուծոյ ըստ Հոգւոյ. իսկ որդի մարդոյ ըստ մարմնոյ, ոչ երկուս բնութիւնս—զմին՝ Որդի, զմին՝ երկրպագական. այլ մի բնութիւն Աստուծոյն Բանի մարմնացելոյ և երկրպագեալ հանդերձ մարմնով իւրով միով երկրպագութեամբ։ Այլ և ոչ երկուս որդիս—այլ ոմն՝ Որդի Աստուծոյ ճշմարիտ և երկրպագեալ, իսկ այլ ոմն՝ ի Մարիամայ մարդ ոչ երկրպագեալ, որպէս և մարդիկ. այլ զի յԱստուծոյն և Աստուած՝ որպէս ասացեալ, մի որդի Աստուծոյ, և Աստուած զնոյն և ոչ զայլս, և ի Մարիամայ ծնեալ ըստ մարմնոյ առ վերջնովք աւուրբք, որպէս հրեշտակն [1] Աստուածածնի Մարիամայ յառնէն «Որդի եղիցի ինձ այս, զի զայր ոչ գիտեմ», ասէր «Հոգին սուրբ վիրկեսցէ առ քեզ և կարողութիւն Բարձրելոյն հովանասցէ քեզ, վասն զի ծնեալն սուրբ կոչեսցի և Որդի Աստուծոյ»։

Ծնեալն սուրբ կոչեցեալ և Որդի Աստուծոյ այսուհետև ի կաւսէն Մարիամայ՝ Որդի Աստուծոյ բնութեամբ և Աստուած ճշմարիտ և ոչ շնորհիւ և կոչմամբ. ըստ մարմնոյ միացեալ ի Մարիամայ մարմ, իսկ ըստ Հոգւոյն՝ ինքն Որդի Աստուծոյ և Աստուած. կրեալ զմեր կերս որպէս գրեալ է «Քրիստոսի կրեցելոյ վասն մեր մարմնով». և դարձեալ. «որ իւր Որդւոյն

---

[1] Այլ օր. որդեծն հրեշտակն

ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն եառ զնա». իսկ անկիւր ինացեալ և անայլայլակ ըստ աստուածութեանն ըստ առացեալսն՝ ի մարգարէին «Ես եմ Աստուած և ոչ այլայլիմ»: Սկսանելով զմերն մահ ըստ մարմնոյ վասն մեզաց, զի զմահն խողխողեսցէ՝ ի ձեռն վասն մեր մահուան ըստ առակին առաքելոյն [1] «Ընկղմեցաւ՝ մահ, յաղթութիւն քո. ո՛ւր մահ՝ խայթոց քո». և դարձեալ «Արիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրելոյն»: Ընդմբռնելի իսկ և անմահ մահուամբ ինացեալ յաղագս աստուածութեանն՝ իբրև անապատառ ՚օր զօրութիւն ըստ առակին Պետրոսի «Ոչ էր, ասէ, կարի ընդունել նմա ի մահուանէ». վերադնացեալ յերկինս և նստեալ ընդ յաջմէ ՚օր յերկրի բարձրացեալ մարմին Տանէն՝ ըստ ասելոյն Դաւթայ «Ասաց Տէր Տեառն իմում՝ նիստ յաջմէ իմմէ». և ի նմանէ ի Տեառնէ հաստատեալ և յառաքելոցն. իսկ ըստ աստուածութեանն զարուն[ա]կիւով ընդ ՚օր ի յաւիտենից յաւէտակից՝ զրպէս հայրական և անճառ զօրութիւն ըստ վարդապետին Պօղոսի «Արիստոս՝ Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն», զոլոց է ինքն Որդին Աստուծոյ և Աստուած՝ զրպէս և խոստացաւ, զառել զկենդանիս և զմեռեալս՝ զրպէս ասէ առաքեալն. զառիչն զծածկոյթս խաւարի և յայտնողն զնորհուրդս սրտից և զգովութիւն և զանզգոնութիւն ըստ արժանաւորութեանն՝ ի վերայ բերոզն իւրաքանչիւրումն [2]:

Իսկ եթէ ոք (առաւել) քան զայս յաստուածայնոց գրեցելոցն ուսուցանէ՝ միւս ասելով զՈրդին Աստուծոյ, և միւս՝ ի Սաբեմոյն մարդ. կամ եթէ ոք զՏեառն մերոյ մարմինն ի վերուստ ասէ և ոչ ի կուսէն Սաբեմոյ, կամ յեղեալ զաստուածութիւնն ի մարմին, կամ խառնեալ, կամ այլայլեալ, կամ

---

[1] Այլ օր. ըստ առացին առաքելոյ: — [2] Այլ օր. ըստ արժանաւորութեանն վերոբերեալ գիրս պնդութեանն:

ախտակիր զՄկրտչին աստուածութիւնն, կամ անիրկրպագելի զՏեառն մերոյ մարմինն՝ որպէս մարդոյ, և ոչ երկրպագելի իբրև Տեառն և Աստուծոյ մարմին. զսա նզովէ սուրբ և ընդհանրական եկեղեցի հաւանեալ աստուածատան առաքելոյն ասողն «Եթէ ոք ձեզ աւետարանէ աւելի քան զոր առէքն՝ նզովեալ եղիցի». ամէն և ամէն. եղիցի և եղիցի:

ԳԼՈՒԽ ԿԾ.

Վասն աշխարհալ արտոյէն ու եղէն գինի ընդ Արդունին, և վասն ամենայն անցից նոցա:

Ցախս և առաջին թագաւորէ աշխարհիս մերում յազգէն Նեմրոդայ Հուրատուն ամս 8. և ապա գինի նորա՝ երկոց որդիին նորա Ըպաղային, և ապա Արդունն ամս 7: Եւ պատճառ մահու նորա եղև հարճ մի յոյժ սիրելեալ, յորմէ զեղգակուր լինի և վճարի՝ ի դաշտին Մուղանայ՝ ի ծոնի Թէոդորոսին: Եւ՝ ի մահուան նորա լինի կոտորած[1] բազում մեծամեծ առաջնոյն՝ Խոջային՝ որ էր գանձապետ ալքայի, Սուվատանին՝ որ էր՝ ի վերայ կերակրոց և ըմպելեաց. Ձիշուին և Ըւրդուզանին, որք էին՝ ի վերայ դատաստանաց և մեծ գրաւանին՝ Սադադաւլին բարերարոյ Հայոց, որ էր՝ ի վերայ ամենայն հարկաց աշխարհիս. և բազում և անհուն գանձք արքունի ցան և ցիր եղեն: Իսկ զօրագլխացն և մեծամեծացն և զնախ յերկրին՝ որոնք կոչէին զԱյտուն՝ ի Ադրադայ՝ ազգական Արդունին, զև դիցեն՝ ի թախտն ալքայութեան, և որոնք փութացուցանէին զնորայր Արդունին զԲնդաթուն՝ ի Հոռոմոց, որ և եկեալ՝ նստաւ՝ ի թախտն ալքայութեան զան՝ ի վերայ ամենայն աշխարհի, ի թուականութեանս Հայոց 740:

---

[1] Ձայլ օր. կոտրած:

Սա եւս կոխել զբամ և զահեկան քարտիսէ՝ ունելով յին-
քեան զիր և խայտառածս, և կամէր բառնալ զարծաթի զբ-
րամն, զի այնու վաճառեսցեն. և սաստկացոյց զհրամանն ի
վերայ ամենայն քաղաքաց։ Եւ յետ 4 ամի տէրութեան իւ-
րոյ անկաւ աղմուկ շփոթի ի մէջ պալատան նորա, զի կա-
կածեաց յոմանս վասն երկմտութեան ինչ, որք նեղեալք ի դա-
ռէն և յանխափոխ զաղբատգործութեանց նորա՝ կամեցան ձեռն
տալ ի Ներսուն. և սկսաւ ըմբռնել զամենայն մեծամեծս իւր՝
զԵղջիտայն, որ էր ի վերայ որսական թռչնոց և զազանաց. զը-
Պատլատայն, որ էր ի վերայ ամենայն կերակրոց և ըմպելեաց.
զՈռնճիքաչն, որ էր ի վերայ զօրաց բազմաց, և այլս բազում
զորս երկաթի տոռատիք խառնեալ դնէր ի պահեստի առ գըլ-
խաւոր սրանց. և ինքն յառաջեալ գնայր զօրօքն ի հանդի-
պումն Ներսուին։ Իսկ կալանաւորքն ի ծածուկ ձեռն տը-
ւեալ ի բիւրապետ մի՝ Պուքալ անուն, և ի թագաւորազն
մի՝ Եղդար անուն, որ միաբանեալ զան ի վերայ և հանեն զը-
կալանաւորան և գնեն ի դիպահոլ զպահապանն նոցա, յո-
րոց մի էր մեծ հազարապետն Խուռումէն, զոր բերեալ ի վան-
սըն մեր Տաթև՝ եղեն առ մեզ ի պահեստի աւուրս բազում,
որ յետոյ ազատեցաւ և հասաւ յիւր իշխանութիւնն հրաշիւք
սուրբ եկեղեցւոյն։ Եւ ինքեանք անցեալ յայսկոյս գետոյն Ե-
րասխայ՝ եղեն զօր բազում և սկսան գնալ զկնի Ներսեթուին,
զոր լուեալ ամենայն զօրացն նորա և սրտաբեկեալ՝ թողեն զը-
նա և եղեն ցան և ցիր. և ինքն Ներսեթուն ձեռայր միայնակ,
և յոչ կամաց դառնայր և գայր ի պալատն իւր, զոր առեալ
պահէին զօրն ազատամարտաց։ Ապա տեսեալ զերծեալ կալանա-
ւորացն և մեծ զօրագլխացն՝ Եղդարին և Պուքալին՝ ըմբռ-
նեցին զնա և խեղդամահ սատակեցին և սպանին առ հասա-
րակ զամենայն հանախտն նորին. և գնացեալ ընդ առաջ Ներ-
սուին՝ մեծաւ ուրախութեամբ նստուցանեն զնա զան և թա-
գաւոր ի վերայ ամենայն աշխարհի, ի դաշտին Արտայ։

Եւ էր սա օրինաք քրիստոնեայ, և խափանել՝ ի զօրադլեայ իւրոց՝ հղել Մահմետի օրինաքն, և վարէր զարքայութիւն իւր թոյլ և վատթար և անարի տմարդութեամբ մինչև յաշնանային ժամանակին: Սա յուզարկեալ զՅալային՝ որդի Տալասպիճին, այլ և մուզալ արամբք՝ ի մեծ ախոռն Ըղունից Ամմարաս, որ՝ ի հինան լեալ էր ախոռ կաթողիկոսաց նոցին՝ եռ առնել առ ինքն զգառազան արբոյն Գրիգորիսի՝ որդւոյն Վարդանայ, որդւոյ արբոյն Գրիգորի Լուսաւորչի. քանզի կայր գերեզման նորին անդ, վասն որոյ և գառազանն՝ ի նմին հկեղեցւոջ պահեցաւ: Ընդ նմին տարան և զքնաչելի խաչն առտուածահրաշ, որ՝ ի հին ժամանակաց կայր անդ՝ կաղմեալ՝ ի համակ ակւոյ և զարդարեալ 36 ակամբք պատուականաւք. և այս՝ ի մնառնելոյ լերբ և անզգամ երիցու մի՝ ի նոյն վիճակէ: Եւ զի էր անդ գառաւոր կայսերն Յունաց՝ Գեոպինա անուն, որ ածեալ էր՝ ի կնութիւն Ալաղայ զանին և մուցեալ էր իւր յորդեգիրս զԿայաուն՝ սա բազում թախանձանաւք խնդրեաց զնաչէն և զգառազանն և յուզարկեաց՝ ի Թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս: Եւ այսու օրինակաւ կոզոպակեցաւ աշխարհն Ըղունից՝ ի պատուական և յառաջաւածայինն գանձուցն: Իսկ Կայաուն այն հասեալ յաշնանային ժամանակին՝ գայ՝ ի Խորասանայ Ղազանն՝ որդի Երզունեին, որդւոյ Ալաղային, ՝ի վերայ նորա՝ ի խնդիր հայրենական ախոռոյն՝ ամենայն զօրօքն Խորասանայ, զոր Ղարաունաս կոչէին, որոց զօրագլուխք էին մեծ և բարեբարոյ Խութլուշահն, որ Թարգմանի «Շնորհաւոր Թագաւոր», և անյաղթն՝ ի պատերազմունս և բազմահնարն Նաւռուզ, որ Թարգմանի «Նաւասարդ». — և ամենեքեան (ազգա) առհասարակ Թողեալ էին զընական սահման իւրեանց և մտեալ ընդ Մահմետի օրինաք: Եյս Նաւռուզ էր որդի Երզունեին, որ նկաց պետ և պատխուղ՝ ի վերայ ամենայն աշխարհիս և բազում ոճիրս գործեալ էր ապստամբութեամբ ընդ Երզունեւ և որդ-

ւով նորա Պ՝ազանիւ [1], և այժմ միաբանեալ էր ընդ սմա։ Սա յոյժ առեցող էր քրիստոնէից և թշնամի եկեղեցեաց. որ առաքաւակ աճեալ՝ գայր իբր զմրրիկ փոթորկեալ նախատաւրիկ լինել, զոր և մանղլայ կոչէին։ Եւ հարեալ սատակեաց զղօրս, որք զճանապարհն պահէին. և ապա անկաւ աղմուկ շփոթի և գոյժ աղաղակի՝ ի պարսան ազբատնի, որք անզգուշաբար կային անմտութեամբ. յորմէ երկուցեալ մեծ բիւրապետին Թաչարին՝ գնաց և խառնեցաւ ի Նաւռուզն. և յայնմանէ բեկեալ սիրտ կազմեաց Ռայաուին՝ ամենեքեան առ հասարակ թողին զնա և փախեան։ Փախչէր և յիմարն այն Ռայաուն և գայր առ Պուքային, որ նստեալ էր իւր զօրքն ի դաշտին Նախջաւանայ յիզր Երասխայ։

Տեսեալ զայն Պուքային՝ բեկաւ ամենայն զօրութիւն նորա և երկմտեցան ի նմանէ հապշտապիւք նորա. և ըմբռնեալ դարձուցին անդրէն զՌայաուն և յուղարկեցին առ Պ՝ազանն և ինքեանք փախեան այսր անդր։ Եւ Պուքային գնաց և մնաւ յամուրս Պ՝րայ, զոր յիւոյ ըմբռնեալ Ռեքային՝ տայր ի ձեռս Խուաուանդի, և նորա առեալ չարաչար սատակէր զնա։ Նմանապէս և Երզդաին փախչէր ի կողմն Կարնոյ քաղաքի. և զնաս իսկ գտան յիւոյ առ շեհի միոյ և սատակեցին։ Եւ այսպէս և զամենայն մեծամեծան սատակեցին՝ զօրամբ աճեալ առ հասարակ, ընդ որս և զբարեբարոյն բնաւից զԵրզնկեացին, որ մեր նահանգի էր իշխեցող և գլուխ 12,000 արանց, առածին ի Գիլանայ և չար մահու ամաւ սատակեցին։ Եւ այսպէս առանց մարտի և պատերազմի առին զաշխարհս ամենայն և նստուցին զՊ՝ազանն ի Թախտ ազբայութեան հօրն իւրոյ՝ Երզնկեին։

Ռայայ սատուածատեացն այն Նաւռուզ ի գալն՝ յառաջ հրամանն Հանն [2] առ հասարակ քակել զամենայն եկեղեցիս և

[1] Այլ օր. ընդ Երզնկեին և որդոյ իւրոյ Պ՝ազանին։ — [2] Այլ օր. յառաջոյ հրամանն Հանն։

կողոպտել զամենայն այր քրիստոնեայ և թլփատել զբահանայս։ Վասն որոյ բազում վիշտս և անհնարին ազէտս հասուցին քրիստոնէից ընդ ամենայն տեղիս։ Վանկցին բազում եկեղեցիս, խողխողեցին բազում քահանայս, կոտորեցին բազում քրիստոնեայս. և որք ի սրոյն Ճեացին՝ կողոպտեցին զամենայն ինչս նոցա. գերեցին բազում կանայս և մանկտիս։ Այլ ի Բաղդատ և ի Մուլ, ի Համիան, ի Դամբիժ, ի Մարաղայ, ի Հոռմն և ի Միջագետս տատարիկ և անպատմելի գործեցին ոճիրս վնասուց։ Իսկ ի մեր տահմանս կողոպտեցին զԱխջաստանու եկեղեցիս, գերեցին զբահանայս և բազում չարչարանս ածին ի վերայ. քարշեցին զգլուխս քաւարանացն, ընկեցին զնեղանս. բայց գլխատելքն ոչ թողացուցին քակել զեկեղեցիսն՝ ակն ածեալք ի Ա բաց զօրացն։ Եկին և ի մեծ աթոռն Սիւնեաց և կամէին քակել զեկեղեցին, զոր կաշառօք և բռնութեամբ ոչ թողացուցաք. կողոպտեցին և զվաներն, որ ի գաւառին Ախջաստան. իսկ այլ աշխարհք Հայոց, զորս Եղբասխայ գետն հատանէ՝ Ճեացին շնորհօքն Աստուծոյ։ Գալան և զկաթողիկոսն Սիւրուց, որ նրբատէր ի Մարաղայ՝ բազում անարգանօք չարչարեցին մերձ ի մահ և կողոպտեցին զամենայն ստացուածսն։ Ընկրկեցին և զեպիսկոպոսն Ռուաքիլոց զտէր Տիրացուն, ազգի ազգի անարգանօք ձաղեցին և առին զամենայն ինչս նորա. բայց ի վանքն նորա, որ էր շերիմ սուրբ առաքելոյն Թադէոսի՝ քանդեցին զշինուածս տանցն, աւերեցին, կողոպտեցին և խարտաւ կոչ ձանեցին։

Եկեալ էր և Թագաւորն Հայոց Լեմուամ առ Այաոուն, և հասաւ յայս տագնապ շփոթի. և կայր ի Մարագայ եկեղեցին, որ կաթողիկոսարանն էր՝ և նման իսկ հասուցին վիշտս. որ և գնացեալ առ Ղազանն յանդիման եղև նմա, և նա ընկալաւ զԹագաւորն մեծաշուք պատուով։ Ապա կացեալ առաջի՝ ճանուցանէր զբանս աղետից քրիստոնէից. իսկ

նորա՝ ի չքմեղս եղեալ ասէր. «Ես ոչ գիտեմ զայդ, այլ Նաւուզն գործեաց զամենայն»: Եւ հրամայեաց առ ժամայն զրբել հրովարտակ ընդ ամենայն աշխարհն, զի մի իշխեսցեն ձեռնարկել յիկեղեցիս և ի քրիստոնեայս, այլ խաղաղութեամբ բնակեսցեն՝ ամենայն ոք զիւր հաւատս և պաշտօն համարձակ ունելով: Եւ յայսմանէ սակաւ մի խաղաղացեալ եղեն հինք տաճնապին: Եւ ինքն թագաւորն մեծաւ պատուով և շքեղապաշուք փառօք դարձաւ անդրէն և գնաց խաղաղութեամբ յաշխարհն իւր Կիլիկիա:

Իսկ Պ. ազանն առեալ զզանութիւնն յ744 թուին յաշխարհն՝ փարեր ահեղ ուժով և ահարկու բռնութեամբ, հզօր և բարձր բազկաւ. և կացուցանէր նա ի վերայ ամենայն զօրաց իւրոց և աշխարհին զԽութլուշահն [1] այր բարի և հզօր և յաղթող ի պատերազմունս, որ էր յոյժ բարեկամ և օգնական քրիստոնէից. որ և փեսայացաւ ալքայի՝ առնելով զքոյր նորա ի կնութիւն. և ի սպրիսոյ սորա լինէր խաղաղութիւն մեզ և ամենայն աշխարհիս Հայոց: Այլ անիծեալ և անբանարբու զազանն՝ Նաւուզ, գնայր ի կոզին Խորասանայ հզօրագոյն աշխարհ. և խորհեալ ի միտս իւր կամեցաւ գալ ընդ հնարիւք զՊ. ազանն, զոր իմացեալ նորա՝ սատակեաց զամենայն ազգայինս, զեղբարս, զորդիս և զընտանիսն Նաւուզին: Եւ ինքն Նաւուզն իմացեալ, զի յայտնեցաւ միտս նորա՝ լինի փախստական ի նեղբատոյն Խորասան: Պ. ազան որոյ դումարիալ զօրս բազում Խութլուշահն՝ գնաց զկնի նորա, զոր Տէր Աստուած ետ ի ձեռս զանիծեալն զայն, և անհիւտ կոտորածեամբ ջնջեաց զնա յերկրէ: Օ. ի կալան մեծ հրաշիւք ի Տէրէ բազաքի, որ անդր է քան զԱմիդ և զՆաւուզ. ընդ որում էին իշխանք մեր՝ Լ. խաթարիա և Նաչի, որք թուք արձակեալ յերեսս Նաւուզին մեծ անտարգանօք ձաղէ-

---

[1] Ա.Ղ օր. Խութլու-թեն:

ին զնա: Ահա տեսեք զեղջիւր եկեղեցւոյ, եթէ որպէս մեծա-
դոյն պատուական զԹշնամին իւր և խնդրեաց վրէժ քակտե-
լոյն իւրոյ, զի ոչ տեսանց իշխանութիւն նորա ամ մի, այլ
իսպառ ջնջեցաւ ազգաւ և բարձաւ անուն նորա յայսմ աշ-
խարհէ: Գոհութիւն և փառք այսպիսի խնամողին զեկեղե-
ցի իւր:

Այլ նախ քան զայս յարեաւ ոմն՝ Ելման անուն, յար-
քունի ցեղէ և միաբանեալ ընդ ինքեան բազում զօրս և զօ-
րագլուխս՝ սկսաւ ի դաշտին Մուղանայ գնալ ի վերայ պա-
տատան զանելն. և անցեալ յայակոյս Եղասխայ, զի կռտեսցէ
այլ ևս ամբոխս հնձելոց, իմացեալ նորա առաքէ ի վերայ Ա-
ղանելն զօրս բազումս, որոց զօրագլուխ էին Ձաւփանն և Խու-
ռուսէին. որք եկեալ կռուեցան և հարեալ զԵլմանն՝ փախըս-
տական արարին. և ապա ըմբռնեալ զնա և զամենայն համա-
խոհս նորա՝ առ հասարակ սատակեցին: Եւ եղեն բազում ա-
րիան ճապաղիք. ապանաւ և վասն այսր պատճառի ի Խորա-
սան Աւրքայ՝ եղբօրորդի Ելպաղայիւն. և այս այսքան:

Այլ մանուկ Թագաւորն Վրաց Դաւիթ՝ որդի Դե-
միտրէի, ի գալն Աւռուղեն և ի քակել զեկեղեցիս՝ երկեաւ
և զնաց ամենայն նախարարօք և ազատագունդ արամբք ի Ա-
խթևուլէթ, մնաւ ի բերդն անառիկ որ կոչէր Մաւղ նախ[1],
այսինքն՝ «Նիկ և առ», և արար Թիկունս զԱխթևուլքն և
զՓխայքն և զամենայն ազգս շրջակայս և զրաւեաց յինքն ըզ-
գուռն Ելանաց, զոր հինքն Դարիալ կոչէին և այժմ՝ Ջա-
սանիւն կապ, և ևհան զպահակն Թամթարին, և նա է մեծա-
Խազրաց, Ելանաց, Օսից, Խիչազաց, և մեծ ալքայութեա-
նըն հիւսիսային աշխարհին Ռևզքայեանց. որոց էր այժմ զան
Թաւթամանկոյն և Նուխայն՝ Թագուհիք Խամուին[2] և Ար-
թախին: Այսն որոց բազում գնապանօք և երդմամբ ի խըն-

---

[1] Այլ օր. Մաւղ նախ: — [2] Այլ օր. Բայսուին:

դիր եղեն, և ոչ լուաւ և ոչ եկն արտաքս: Ապա յարուցեալ գնաց բազում զօրօք մեծն Խոսիքլուշահ և եհտւա ի վ՚իրս և նստաւ ի գաշտին Ա՛ուխրանայ, որ էր մերձ ի բերդն Թագաւորին. և ծանեան զանսահիկ ամրութիւն նորա, և կոչէր պատգամաւորօք ի դուրս զՊաւիթ և նա ոչ գայր. այլ խընդրէր պատանդս գրաւական ինքեան և ապա եկեսցէ: Ո՛ման ոք յոյ առաքէ զորդին իւր ոչ՚խպաւչին և այլ երիս արս ի մեծամեծ պատուաւորացն: Իսկ Թագաւորին եղեալ զնոսա ի վիսպահոջ՝ գայ առ Խոսիքլուշահն. և տեսեալ զնա բազում ընծայիւք՝ առնու և ի նմանել պատիւ և պարգեւս մեծամեծս և ոչխար երկման ոչ նենգել ինքեան: Եւ էր այսմ ամենայնի միջնորդ կաթողիկոսն իւր: Եւ այնպէս դառնայր ի բերդն իւր և արձակէր զպատանդսն: Եւ Խոսիքլուշահն դառնայր խաղաղութեամբ և մտանէր ի դաշտն Ո՛ստանայ ձմերել անդ:

ԳԼՈՒԽ Ի.

Ա՛ստն յեղին վերջ՚նլուրենան վերայ նահապետենան որ կոչեցաւ յեպիսկոպոսենն Սիւնեաց, և որ ինչ գրոյցք առ վերս:

Եւ Ստեփաննոս Թարմառաք անձամբ և հզկելի ոգւով՝ որոշեալ յարգանդէ մօր իմոյ և ընծայեալ ի տուն Տեառն, որդիացեալ մեծի և արքայաշուք իշխանին Ամրատայ, ի մօրէ Ծնեալ Աիսական և ի հօրէ՝ Օրբէլեան, որ Տարսայիճ կոչի՝ սիրեալ ի Ռաշտայ մինչև ցՄՀրաստան. իսկ հոգևոր ծննդեամբ սուրբ առաքեալն որդիացեալ տեառն ՚այրապետի՝ եպիսկոպոսի Աիւնեաց. մնեալ և ուսեալ առ ոտս աստուածարեալ սրանց. կրթեալ ի հրահանգս ընթերցման և երաժշտութեան՝ եղէ վաղտղ և անագանոս ի գաւիթս Տեառն, կոչեցայ ի դպրութիւն և ի սարկաւագութիւն Ըստուծոյ. քահանայացայ և մանկական տիոք կարգեալ կղերիկոս ահարկու

և աստուածընկալ բնմին անպատշաճ ոգւով և անարի անձամբ՝ վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տուր ից սակաւ մի առնալ զճաշակ ուսանի քաղցրութեան՝ առ ի հրամանն յաստուածազգեաց և յաշխարհալոյս բարեւնապետէն Գևրսխ և տհաս խակութեամբ նստայ յամօտ վարդապետական։ Եւս ինձէն խաւար գոլով՝ կամեցայ այլոց լոյս լինել. ես անմտաբար ոգի և աղտեղեալ պատկեր՝ սկսայ այլոց քաւչապետել։ Եւս առանց ՚ոգւոյն կոչման՝ իմով յանդգնութեամբ կամեցայ յառաջ մատչել. ես պատրաստեցի զսկանդա իմ լսել խաւարահրաւէր բանին՝ «՚անդրէն ոչ ունէիցին», «Եւ ծառայ չար և վատ»՝ նաև զառաքեալն իսկ՝ զի հնազանդ առանց և զժուխահրաւէր հրամանն ևթէ «երթ»։ Եւ՝ ի վերայ այսր ամենայնի այլ ևս յաւելի յանդգնութիւն, զի ժպրհեցայ յաստիճան հայրապետական։ Եւ ժողովեալ մերոց եպիսկոպոսաց առ հայրն իմ՝ հրաւիրեցին զիս ընթանալ ՚ի թագաւորական աշխարհն Ալլեկիա՝ առ երջանիկ կաթողիկոսն և աստուածազան թագաւորն ՚այոյ առնուլ ձեռնադրութիւն մեռելոտութեան ՚ի վերայ աթոռոյս Աիւնեաց. զոր և յանձն առեալ մեր յիմարութեամբ՝ անդիտացեալ զահարկու և անասանելի լծոյս ծանրութիւն՝ միայն առօրեայ փառաքն հիշատացայ ախտաւոր մտաք. վասն որոյ երանեմ զչեղեալսն և բիւր երանի յարդանդէ վիժելոցն։

Գնացաք ապա և հասաք ՚ի մայրաքաղաքն Ախս և գտաք գՀայրապետն փոխեալ յաստեացս. և սուգ մեծ եղև մեզ։ Եւ անտի գնացաք ՚ի միւս քաղաքն ՀԱզանա և հանդիպեալ թագաւորին՝ գտաք պատիւ ՚ի նմանէ ՚ի վեր քան զարժանն մեր։ Եւ յամեալ առ թագաւորին ամիսս երիս՝ մինչև աշխարհագումար ժողովով ընտրեցին աւուրս 40 այր մի արժանաւոր՝ Կոստանդին անուն, և օծին զնա պատրիարգ ՚այոց ՚ի մեծի ձրագալուցի Ս. Յակոբի. և ՚ի վաղուան աւուրն զմեզ իսկ ձեռնադրեցին և պսակեցին ընդ սուրբ և առաքելական

եկեղեցւոյն Միւնեաց, և պատուեցին մեծամեծ պարգեւօք և կրկին թագիւ կարգեալ յաստիճան մետրապոլտութեան, և կոչել պատուհասիրանդէս պատրիարգին ՚ի այոց, այսինքն՝ նախաթոռ լինել և գլուխ ամենայն եպիսկոպոսաց ՚ի այոց: Եւ այնպէս մեծաշուք պատուով դարձաք ՚ի նոցանէ և հասաք յաշխարհս մեր. և բազում վիշտս կրեալ յեպիսկոպոսացն որ ՚ի Տաթեւ, (մինչև) փոխեցան նոքա մահուամբ[1]: Եւ ինձ- ցաք մեք ՚ի գառն և վշտալից կենցաղավարութեանս միապե- տեալ զբաժանեալ վիճակս աթոռոյս, սահմանեցաք մի լինել առն միաբանութեան զՏաթեւ և զՆորավանս:

Այլ վասն հրահասան նզովիցն առաջին կաթողիկոսացն՝ տեառն Պետանդեայ և տեառն Յակոբայ և առաջին եպիս- կոպոսացն՝ տեառն Յովհաննիսի և տեառն Սահմանոսի և տեառն Սարգսի և միւս տեառն Սահմանոսի և տեառն Գր- բիգորոյ և տեառն Սարգսի, որք հաստատեալ էին զվ այոյձոր բոլոր ժառանգութիւն Նորավանից եկեղեցւոյն, ոչ խախ- տեցաք, այլ որպէս կալեալ էին մինչև ՚ի մեզ՝ նոյնպէս կալ- ցին. և զայն բուն աթոռն կալցի և մի լիցի երկոցունցս տոցա եպիսկոպոսութիւն և մի առաջնորդ և իշխեցող. և ո որ լիցի եպիսկոպոս՝ մի իշխեսցէ երկու ակամբ և երկու մաօք հայիլ ՚ի տաս՝ միոյն ունելն իսկամբ՝ տանելով. մի լիցի հետ և նախանձ ՚ի մէջ տանս այս և բնակիչք տոցա մի իշխեսցին տալ միմեանց՝ եթէ դու Տաթեւացի և կամ Նորավանեցի, այլ իբրև մի ան- ձին և մի սիրտ եղիցին. զի և յառաջին ժամանակացն մինչ ՚ի մեզ՝ նոյնպէս էին կացեալ: Եւ եթէ փոխոխումն լիցի ժամա- նակաց և աւեր հասցէ Տաթեւոյ՝ ժառանգութիւն այնր և- կեղեցւոյ Նորավանից եկեղեցին ժառանգեսցէ և բնակիչքն անդ բնակեսցին: Եւ եթէ Նորավանից հասցէ աւեր՝ ժառանգու- թիւն և գոտացուածս նորա Տաթեւոյ եկեղեցին վայելեսցէ և

[1] Ա.յլ օր. և բազում ինչ վէպ երթալ եպիսկոպոսացն ոչ ՚ի Տաթեւ՝ խնդրեցան նոքա մահուամբ:

բնակիչք նոցա անդր բնակեացին: Եւ թէ, յետ մեր խախտեցէք զայս վճիռ եւ կամ բոհրել՝ եւ դառնանալ խորհի՝ ի միւս կողմանէ՝ անէծս ցառապիւս ժառանգեսցէ՝ ի մէնջ եւ յամենայն հայրապետաց եւ նղովս առցէ՝ ի սուրբ Աղբորդութենէն եւ մանաւանդ լեցի ամենայն չարաղօծաց: Ապա եթէ այլ ինչ հակառակութիւն եւ շփոթումն զարթիցէ՝ որպէս եւ մեզ պատահեցաւ, հակառակողքն պարտապան լեցին անիծից եւ ժամանակին իշխեցողքն տեսցին զարժանն:

Դարձեալ՝ ի գալն մեր՝ ի Կիլիկիոյ՝ յետ աւուրց ինչ գնացաք առաջի աշխարհակալ ազգային Ընդունին եւ հանդիպեալ նմա՝ ընկալաւ զմեզ եւ յոյժ յարգեաց եւ սիրեաց. եւ մեք ծանուցաք զվիշտս մեր եւ ցուցաք զշրջաբերականն մեր, զոր եւ թարգմանել եւ ընթեռնուլ առաջի նորա: Ցուցաք եւ զսիգիլն հայրենեաց մարմնաւոր ժառանգութեանց զոր եւ հայրն իմ, զի հանեալ էր բաժին ժառանգութեան մեզ զվանորայն իւրոյ իշխանութենանն՝ զՋաթէ, զՆորավանս, զՅաղացքար, զԸրատիս եւ զայլսն ամենայն. զոր եւ տեսեալ հրամայեաց զընդել հրովարտակ հրամանի եւ վերատին հաստատեաց՝ ի մեզ զբովանդակն կրկին իշխանութեամբ հոգեւոր եւ մարմնաւոր. եւ հրամայեաց մեզ կալ եւ օրհնել զեկեղեցին՝ ի զրանն ազգութենէ, զոր առաքեալ էր մեծ պապն Հռոմայ: Ընդ որ եւ կաթողիկոսն Աստուոր երկոտասան եպիսկոպոսօք, որք եւ օրհնեցաք՝ ի միասին մեծաւ հանդիսիւ: Եւ ինքն Ընդունն զգեցուցանէր իւրով ձեռամբն զզգեստս հայրապետական, զոր ինքն էր տահմանեալ կաթողիկոսին եւ մեզ եւ ամենայն եպիսկոպոսացն: Եւ առեալ՝ ի ձեռն զժամահարն շրջէր՝ ի մէջ բանակին եւ հարկանէր եւ օրհնէր զամենայնն:

Եւ դարձեալ յետ սակաւուց եկն եւ եպիսկոպոս մի՝ ի նոյն պապէն եւ մկրտեաց զկրսեր որդի ազգային եւ անուանեաց Թո-

---

[1] Այլ օր. Խոբէլա գտաւճաձիլ՝

ոդոսիոս, զոր ինքեանք Կոստանդնուպոլսի կոչէին և եդ ՚ի գիրկս Փռանգ իշխանին, որ Ակրչալ ասէին: Իսկ յետ վախճանին սո-
րա թագաւորեաց Ալեքսիոս, որ կոչէին «Անջէլ Թուրնջէ», այսինքն՝ «Գոտաք գկորուսեալն»: Ընդ որ գնացեալ մեր և ՚ի նմանէ ընկալեալ պատիւ՝ որպէս յիշեցաք, և առաք հրովար-
տակ հրամանի վերատին հաստատութեամբ: Ապա յետ այսր ՚ի թագաւորել Ազանին գնացաք և առ նա՝ և բարձրագոյն ՚ի նմանէ ընկալաք փառս քան յայլոցն, զի ետ կրկնապատիկ ամրութեամբ զնոյն հրովարտակ և հրամայեաց ՚ի շրջեցու-
նել. շնորհեաց և մեզ փայլուցյ ոսկի, որ էր տախտակ ՚ի չափ թզոյ միոյ և կիսոյ գրեալ ՚ի վերայ զանուն Աստուծոյ և Ազա-
նին և այլ սակաւ բանք: Եւ մեք տեսեալ զանակնկալն ողոր-
մութիւնն՝ փառս և գոհութիւն արարչին վերընծայեցաք: Եւ այնպէս եկեալ ՚ի տուն՝ կայաք հաստատութեամբ:

Ապա սկիզբն արարեալ մեր շինութեան սուրբ եկեղեցւոյն ՚ի Տաթեւ, որ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ զի փլեալ էր և քակեալ մինչև յատակին: Եւ այս երրորդ ան-
գամ էր շինութիւն սորա. զի զառաջինն շինեցաւ ՚ի Փիլիպպէ իշխանէն ՚ի ժամանակս տեառն Գաւթի՝ եպիսկոպոսի Սիւ-
նեաց. և երկրորդն շինեցաւ ՚ի տէր Յովհաննիսէ հրամանաւ Ամրատայ թագաւորի. և երրորդս այս՝ զոր մեք սկսաք, զոր և շնորհօքն Աստուծոյ հաստահեղոյս քարամբք և գեղեցկաձև-
սիլ ձևով յարմարեցաք զշինուածն նորա: Այլ ՚ի քակելն մեր զսակաւ ճեացորդ հինգն հիւսիսային սեանն՝ գտաք զանպատ-
մելի գանձն աստուածային՝ զնշխար սրբոյն Գրիգորի Լուսա-
ւորչի զգազաթան մի կողին և զբարձին աջ բազկին եդեալ ՚ի փոքրիկ անդուկ փայտեայ և կապեալ և մատանեալ կապարեայ կնքով: Ընդ որ մեծապէս խրախացաք և բազում գոհութեամբ փառաւորեցաք զԱստուած: Եւ յետ շինուածոյն եդաք ՚ի նո-
սին խորանի ՚ի պատշաճաւոր տեղի՝ անյայտ ՚ի մարդկանէ:

Եւ առեալ մեր յեղբօրէն մերմէ՝ Յովհաննէն, վասն բաժնի

ժառանգութեան զգիւղն Երիա, որ վաղ ժամանակաք յա-
փըշտակեալ էր ի սուրբ եկեղեցւոյն՝ և նորին յօժարութեամբ
դարձուցաք անդրէն և տուաք ի մեր շինեալ եկեղեցին ի սուրբ
Գրիգորն, և գրեցաք յիշատակ անջնջելի մեզ և ի հաստա-
տութիւն գեղջն Երիայայ, զի յետ մեր մի ոք իշխեսցէ յա-
փըշտակել զնա ի սուրբ եկեղեցւոյն և խափանել զմեր յիշա-
տակն, մի փոխել, մի վաճառել, մի գրաւական դնել, մի և
այլ ինչ պատճառաւ դառնանել ի մերոց կամ յօտարաց,
յառաջաց կամ յեպիսկոպոսաց. և թէ յանդգնի ոք՝ ընդ սա-
տանայի յանդունդս կործանեցսի, ընդ Պայեին և Յուդայի և
Երիոսի դատապարտեցսի, ընդ Սոդոմայ և Գոմորայ տամբ
և զաւակօք հրոյն անշէջ ձարակ լեցի, ընդ նեսրինն աննկերկիլ
դատաստանաւ պատուհասեցսի: Եւ թէ տամ՛իկ իշխանու-
թիւն փոխի և յափշտակիլ ջանայ՝ Աստուծոյ ամենակալին
նզովեալ լեցի և յիւր փեղամբարձն Աահմեաէ և յօրինաց նո-
ցա ապիզաբ եղեցի. ընդ բուռփարիտան և ընդ աթաշփա-
րիտան կորիցէ և ի դժոխս իջցէ. իւր հալածն նման հարամ և-
ղեցի: Եւ եղև այս ի թուականիս 746:

Գարձեալ յառաջ քան զայս բերեալ էին ի գաւառէն Եր-
ձախայ զհրաշագործ նշանն աստուածընկալ խաչին. որոյ համ-
բաւ մեծամեծ հրաշիցն և զարմանագործ սքանչելեացն սրփ-
ռեալ էր ընդ ամենայն աշխարհս: Եւ էր նա ի կենտակիր փայ-
տէն, որ ունէր յինքեան [1] նիշ սրեան նեղկեալ յաստուածա-
յին կողիցն Տեառնէ, և պնդեալ յոսկւոյ [2] գուշնաքեայ պա-
հարանաւ: Եւ ունէին զնա հայրենեօք թոռունքն Գլենայ իշ-
խանի, այն որ ունէին եկեղեցի և բազում միաբանութիւն ի
Տաթև: Այլ զպատճառն գնալոյ աստուածընկալ սուրբ խա-
չին ի Հոռէն այսպէս լուաք ի ստուգագիտ արանց. եթէ մի-
այնաւոր ձգնաւոր մի յանծանօթ աշխարհէ, որ շրջէր ի պատ-

---

[1] Ընդ օր. որ ունէր զինքն: — [2] Ընդ օր. և պնդեալ յոսկեայ:

ձառս աղօթիւ՝ պատահեցաւ ի գիօղն Կղինայ ի մէջ ձմեռան[1] ունելով ի մաղաքն զայն առաւաձելէն և անկշիռ գանձ: Եւ օթեալ ի տան երիցուն տայ զմաղաքն ցտիրուհին և ասէ. «Կղի զդա ի սուրբ տեղի՝ մինչև երթիցիմ». և էր օրն ձրագալոյց Յայտնութեան: Եւ մանուկ տղայ մի երիցուն մեռեալ էր ի գիշերին, և ոչ հանին ի լոյս վասն ածելին: Ըսպա տարեալ կինոջն այն զմաղաքն միայնակեցին գնէր ի տնաքս մեռելոյն. և այն ինչ յետ երեկոյեան պաշտամանն կատարման՝ մինչ սակաւ մի ննջեցին, կենագործեալ կենսատու փայտին զմեռեալ մանուկն՝ սկսաւ աղաղակել առ մայրն: Իսկ մայրն զարթուցեալ ի քնոյն և զարհուրեալ՝ զարթոյց զերէցն. և գնացին ի ներսատուն՝ տեսին յարուցեալ զտղայն, որ նստեալ խաղայր ընդ մաղաքին: Եւ բաղում ժամս յահի եղեալ ապշեցան՝ և ոչ գիտէին զնչն:

Իմացեալ սպա ձգնաւորին՝ էառ զմաղաքն ի ծածուկ, մինչդեռ ասպնջականքն յիմարեալ կային՝ և գնաց փախստական, որք և ուշաբերեալ ծանեան զբանն. և եղեալ ձիչ բարձին առ տէր գեղջն և պատմեցին զեղեալ հրաշն: Եւ անկաւ աղաղակն ի շէնն և ամենեքեան գան ի տես մանկանն: Եւ յարուցեալ Կղինայ ծառայիւք և շինականօք պնդեցաւ զնոսի միայնակեցին ի կողմն Ըղունոյ գեաին: Իբրև իմացաւ նա, եթէ պնդեալ են զհետ իւր՝ ևհան զփոքրագոյն մանն փայտին ի պահպանէն՝ եղ ի կրկնաւաձս կնդղոյն, զոր ունէր՝ և զպահպանն ընկէց ի թուփ մի սալորի ի մէջ մացառախիտ մայրեացն՝ և ինքն գնայր: Եւկին սպա զրքն այնոքիկ և հասին ի տեղին յայն. տեսին յանկարծակի ի մէջ ձիւնատարած սառնամանեացն զթուփն զայն փթթեալ գեղեցիկ ծաղկօք և կանաչացեալ սաղարթօք՝ և բուրէր հոտ անման. և ի մէծ հիացման եղեալ՝ կարծեցին անդ պահեալ զնաչն:

---

[1] Այլ օր. ի Գլձորոփ:

Իբրև տեսին և նշմարեցին զտեղին՝ գային ՚ի մէջ թափոյն զօսկի պահարանիկն [1] դատարկ, և պնդեցան ղՀետ և հասին նմա յեզը գետոյն Ընդունայ: Դարձաւ միայնակեացն և տեսաւ զնոսա. և զչարեալ ՚ի միտս իւր՝ ելհան ՚ի կնգղոյն զփայտն և ընկէց ՚ի մէջ գետոյն. զոր և ըմբռնեալ ասացին՝ տանջեցին սաստկապէս, եթէ «Ցուր ՚ի մեզ զփայտն». և բացեալ զնա զպատն ոչ ինչ գտին, և մերկացուցեալ զնոցոր զբձիկն՝ տեզեկացան՝ և ոչ երևէր: Ապա հայեցան ՚ի գետն՝ տեսան յերկուս ձեղքեալ զջազմութիւն ջուրցն և մտանն ՚ի մէջ ցամաքին, և բոց բորբոքեալ ցոլանայր ՚ի վեր. և հոտ զարմանալի երբ ծուխ թանձր ցնդէր ՚ի տեղւոյն: Լցան ահիւ և խնդութեամբ, զողջոյն և ցնծալին խայտալով ընդ գիւտ անգին և անհամեմատ մարգարտին. և մտեալ ՚ի ջուրն առին զպիրկական փայտն՝ և եդեալ ՚ի պահարանին բերին ՚ի տուն իւրեանց: Եւ միայնակեացն գնացեալ զկնի ողբալով և բաղխելով զկուրծսն. և մինչ յուսահատեցաւ՝ անէծ չարաչար ըզտունն Վէնայ և անց գնաց: Եւ յայնմ օրէ և յետպս լինէր այն հայրենիք այնմ ազգի պատուհաս և մեծարեալ պատասրազօք յիշխանաց և յաշխարհաց. յետոյ աստուածասէր և բարեպաշտ մեծ իշխանաց իշխան՝ Ջալալ, շինէ եկեղեցի մի Վիշերաձոր անուն և կալմէ պահարան յարծաթոյ և անդ բնակեցուցանէ:

Ահա զայսպիսի աստուածահրաշ նշան վերին ակնարկմամբ բըն բերին յիշխանութիւնս մեր նեղեալ տեսլեք նորա յաւերմանէ գաւառին իւրեանց և ՚ի դառն և վերջին աղքատութիւնէ, ոլք եկեալ բնակեցան առ մեզ: Եւ սակս չարաչար կացեալ իւրեանց, որ էին պարտական այլազգեաց և կամէին գերի վարել, և տագնապէին ՚ի դառն և յանհնարին աղքատութիւնս, ծախեցին մեզ զհասն թոռունքն առագ Վէնեանց,

---

[1] Այլ օր. զսիւ պոհարանին:

որոց առաջն՝ Հասան անուն, այլ և երկու եղբարքը. և առնին ի մէնջ զդիներն լիով և անթերի՝ հինգ հարիւր դահեկան, որ լինի 5000 դրամ՝ և այլ բազում պարգևս ձիոց և եղանց և հանդերձից. զոր և մեք առեալ դարձուցաք առ տեարն զպահարանն ի 1000 դրամի հաշիւ՝ ոչ ի դիներն, այլ պարգևք. և առաք զմիւռ դին ու ծախոյն անխախտ պայմանաւ և կտակ յաւիտենական բազում վկայիւք: Եւ վերատին կազմեցաք պահարանս յոսկւոյ և յարծաթոյ և յօրինեցաք նախ զխաչն ոսկի ընտիր սուրբական՝ ունելով ի պատուանդանն խնձոր ոսկի ըստ քառակերպեան կենդանեացն և փողս, և եդաք ի վերայ ակունս ի յոյժ մեծագնոց՝ թուով հինգ ի ծիրանատեսիլ շափիւղայից. և ի մէջ ականցն մարգարիտս 4 մեծագին յառաւել պատուականաց. և եդաք ի ներքոյ միջի ականն զփայտն փրկական, որ ունի զիր մանրատեսակ շուրջ զանհնակապճաքն և գրեցաք ի թիկանց կուսէ նշան բանից. «այս աստուածընկալ սուրբ նշանս կազմեալ ի տէր Յովհաննուսէ՝ Աիւնեաց եպիսկոպոսէ, բնակեցեալ յաւիտեան ի սուրբ եկեղեցւոջս Նորավանից»: Նմանապէս եւս կազմել և զմեծագոյն պահարանն յոսկւոյ և յարծաթոյ ի ձև աղիւսակի դեղեցիկ յօրինուածովք և երկբացիկ դրամիք. և սնոհականեցաք զնա Նորավանից սուրբ եկեղեցւոյն և գրեցաք ի նմա յիշատակարան մեզ այսու օրինակաւ.—

«Յամն կոթճանման աշխարհիս ՚այոց՝ ի գառն և ի դժուիզնդակ ժամանակիս, յորում էր թուականն 743՝ ի 15 յոբելենիս, յաշխարհակալութեան Աղեքսանդր զանին, ի կաթողիկոսութեան ՚այոց տեառն Գրիգորի և ի թագաւորութեան Վրաց Դաւթի, յիշխանութեան այսմ նահանգի ամենօրհնեալ զարմիցն Հլեկումին և եղբարց իւր, ես յոդնաւոր պարտաւորս տէր Յովհաննուս՝ Աիւնեաց եպիսկոպոս, որդի մեծատոհմ իշխանին Տարսայիճին, առաջնորդ վանականն և աշխարհադէտ տանցս Տաթևոյ և Նորավանից՝ վերին

տեսչութիւնն պատահիկ անպատում պարգեւացս աստուածընկալ սուրբ նշանիս և տեսեալ ի սմա զներկուածն արեանն Յիսուսի, զոր բերեալ էին ի գաւառէն Աբճախայ, եռաց յիս սարսուռն սաստիկ և գնեցի զսա ի բուն հայրենատեղւանցն[1] ի Թոռանցն Վլենայ 500 դահեկանի միագլուխ զսա ի յայլ բազում պարգեւացն, զոր վասն գառն և չար կարեացն և պարտուցն իւրեանց մեծայօժար կամօք ծախեցին մեզ: Եւ մեք առեալ զարդարեցաք յոսկւոյ սրբոյ և յականց պատուականաց նախ զնոսին և ապա զպահարանն ի յոյս և ի բարեխօս առ Քրիստոս վասն եղկելի հոգւոյս. Թերևս գտից ողորմութիւն յանաչառ ատենին: Եւ ընծայեցի զսա սուրբ և գեղեցիկ ուխտիս Նորավանից հայրենի գտեղւոյս մեր: Եհ զոր նենգել կամ հանել Ջանայ զսա ատաւ՝ ընդ Պայենի և Յուդայի և Երիսի գատեցի, յերկնաւորաց և յերկրաւորաց և յամենայն սրբոց նզովեալ եղիցի ի մահ և կիանք և մեր մեզացն պարտական եղիցի: — Ընդ՝ յիշեցեք զիս և զեղբարսն իմ՝ զարի և զՀզոր իշխանան զՆելկուճն և զ՝Խաթրիան և զայլ եղբարսն և զբարի քոյրն իմ զՄաւքանն. և դուք յիշեալ լեջիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ. ամէն»:

Յայսմ աւուրս էր այր մի մեծազգի՝ Ամիրա անուն, բնակեալ հայրենեօք ի գեղն Ուփայ, որդի Ջուրջին, Թոռն իշխանացն Կապանեցի, զոր Մահմանիանք կոչէին: (Ա) գնէ զՂրիթայ այգին, որ յՈւփայ ի մեծ իշխանէն Տարսայիճէն, որ էր և նոցա գնուածք ի բուն հայրենատեղւանցն՝ և տայ ի գինն 4000 դրամ: Եւ միաբանեալ սուրբ եկեղեցւոյն Նորավանից՝ աւանդեցաւ ի ձեռս մեր. և նա գրել արձան յատեանական, զի մի ոք իշխեսցէ հանել զնա ի սուրբ ուխտէն. և կարգեցաւ նզովս մեծամեծս: Վասն որոյ և մեք սահմանեցաք նմա հինգ պատարագ յամենայն ամի անխափան կատարել: Եւ

---

[1] Եւս որ ի բուն հայրենեաց:

և ի հին աւուրց տուեալ ի վանան զԱյնկի քարոյ այգին հոգեւատուր Ելիաննայեցն և այլոց ումանց՝ և արձանագրով և նզովիւք հաստատեալ, զի մի ոք հակառակեսցի:

Գնեցաք և մեք ի միջոցին գյուղով մեան ի հայրենատերանցն ընդ 2500 դրամի և բոլորեցաք զայգին ի բոլոր Ծակուտ քարէն մինչ ի վեր ի ապառուած այգւոյն, որ մեծ սահն է: Եւ տուն և հոգեւատուր այգի մի ի Պամբջայ խելքին և այլ բազում հայրենիս՝ հողս և տունս. շինեալ էին և երկու ակն ջրաղացս առ կամրջին. և այս ամենայն հալալ և անխախտ հայրենիք էր և ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն Սորավանայ՝ ոչ ի զրկանէ և յափշտակութենանց, այլ էր՝ որ հոգեւատուր էր, և էր՝ որ գանձագին եպիսկոպոսաց և իշխանաց, զոր չունի ոք հրաման յատագաց կամ ի ձեռնաւորաց՝ ո ոք և լինի իշխան, ի վերայ այս գեղջս Ուխայոյ, և կամ յազատաց և տանուտերաց տեղւոյս հակառակ կալ և կամ յափշտակել ջանալ և կամ այլ ինչ գաւ և զրկանք խորհիլ, կամ վասն ագահութեան, կամ վասն նախանձու, կամ վասն այլ պատճառի յայս ժառանգութենանցս: Եպա թէ յանդգնի ոք և լրբենի դիմօք ձեռնարկէ ինչ՝ Հայրն Ամենակալ նորա նզովեսցէ և Որդին Ամենաճ զորդիս նորա նզովեսցէ, միաբանական սուրբ Երրորդութիւնն զմարմին նորա նզովեսցէ, և ամենայն անէծք մարգարէականք և առաքելականք և հայրապետականք ի վերայ գլխոյ նորա և տան նորա եկեսցեն. ջնջեսցի յիշատակ նորա յերկրէ և ինքն անբուն որդանցն և անշէջ հրոյն ճարակ եղիցի: Իսկ հնազանդքն և օգնականքն և աւանդապահքն օրհնեալ եղիցին յԱմենաճոյ և յամենայն սրբոց: Եւ թէ տաճիկ իշխանութիւն փոխն և նա նենգել և բռնաբարել և յափշտակել խորհի՝ յԱմենաճոյ և յիւր Մահմետէն ապիրատ լինի. և իւր հալալն հարամ եղիցի. և 100,000 նալաթ ի վերայ նորա և ազգի նորա և զաւակաց նորա եղիցի մինչ ի 1000 աման:

Դարձեալ՝ և այժմ զհմոյ հէգ և թշուառ անձինս կարգեցից ատա յիշատակ հոգւոյ անջինջ արձանի։ Ո՛ւմն որոյ մաղթեմ մեծայոյս թախանձանօք զյոյսն հաստարակաց, որ Տէրն է հոգւոց և Ընտուած բոլորից՝ զի ընկալցի զսա ընդ խերևէշ այրուին՝ և ընդ շանցն մուրողաց ոչ խնայեսցէ և ինձ զսակաւիկ փշրանսն։ Ընդ՝ ատացայ ինձ յիշատակ զնկեղեցիքս Նորավանից և արարի ինձ միջնորդ և բարեխօս առ Ք՛րիստոս զատուածակիր սուրբ նշանքս, զաւագ խաչս ատուածընկալ, զոր իմով ձեռամբ կազմեցի և ընծայեցի ի սոսա զիմ հալալ հայրենիքն և զգանձագին գիւղն Ձուայ իւր ամէն սահմանօքն, հողով և ջրով և այգեստանեօք և բոլոր բնակչօք, զոր գնեալ է իմ յիմ եղբօրէն՝ Յ՛ալալէն, ազատ յամենայն հարկաց և ի դիւանէ անդաւթ և անհաշիւ յամենայն կողմանց, յեղբարց և յաւազաց. և տուեալ էաք ի գինն 21,000 դրամ. և զգիւղն Ընտաշէն և զսուրբ Սահակ, որ իմ հայրենաբաժին էր ի մեր հալալ ընչից և հայրենեաց։ Եւ արդ՝ մի ոք իշխեսցէ իշխանութիւն վարել ի վերայ այս շինոյս՝ և կամ հարկ, կամ գիւան, կամ մաղ, կամ այլ ինչ գնել ի վերայ. այլ միայն իշխեսցեն առաջնորդք սուրբ ուխտիս Նորավանից և վայելեսցեն ժառանգաւորք տանս և ազատաւորք սրբոց նշանացս, և զմեզ աղօթից և պատարագաց հանապազ հաղորդս կացցեն ի սուրբ եկեղեցիս։

Դարձեալ՝ վասն տօթոյ տեղւոյս, որ յամարանի չկարէին բնակել եպիսկոպոսքն և ազատաւորքն՝ սահմանեցաք զԷրատեսի վանքն, որ ի վերոյ Նղիգեայ՝ և տուաք ամենայն հաստատութեամբ զվանքն և զգիւղն իւր ամենայն շրջակայ սահմանօքն և հոգևցատուր ժառանգութեամբքն ի սուրբ եկեղեցիս, զի սոքա կալցին հայրենեօք և վայելեսցեն զնա. բայց շինութեան տեղւոյն և լուսաւորութեան եկեղեցւոյն ամենայն սահմանօք ի վայելումն և ի ժառանգութիւն առաջնորդաց տանս և այլ եղբայրութեանս։ Եւ յայսմ հետէ մինչև յաւի-

տեան հաստատ հայրենիք լինի նա սուրբ եկեղեցւոյս Նորավանից։ Եւ թէպէտ ժառանգաւորք սոքա լինին, այլ զշինուածենէ վանից և զուսաւորութենէ եկեղեցւոյն մի անտեղեակ առնացին, այլ ամենայն ջանիւ հոգացին որպէս զսեպհական տանէ։ Եւ արդ՝ մի ոք իշխեսցէ այսմ հակառակել, կամ ինչ և իցէ պատճառս խափանել խորհիլ և քակտել զիմ ընծայեալ հոգեցատուրս՝ի սուրբ եկեղեցւոյս Նորավանից, զի գիտեն Ձուայ իմ զանձապին էր, և Ագաթէս և Յարկոփն՝ իմ հաւատալ հայրենաբաժին, որ ոչ առպի և իշխեցողն, ոչ այլ ումեք ոչ ինչ հաշիւ կայր՝ի նմա։ Եւ թէ յանդգնի ոք՝՝ի սուրբ Աստուածենէն նզովեալ եղեցի՝ի մահ և՝ի կեանք. և ամենայն անէծք, որ յօձէն մինչև՝՝ի նեռն կայ՝՝ի վերայ ամենայն չարագործաց՝՝ի վերայ նորա եղեցի, ընդ Յուդայի մատնակցեսցի և ընդ ուրացող Աստակայ որդնալից սատակեսցի. մեր մեղացն ու խղճին պարտապան եղեցի և յաւիտենական հրոյն մատնեսցի. իսկ կամեցողք և հնազանդքն օրհնեալ լինին Աստուծոյ և յամենայն սրբոց նորա։

Եւ թէ տաճիկ իշխանութիւն փոխի և յափշտակել ջանայ՝ ինքն Աստուծոյ և յիւր փեղամբարէն ապիրատ եղեցի. և տամ և զաւակաք յանդունդս կործանեսցի. 100,000 նաւլեթ՝՝ի նորա վերայ եղեցի։ Եւ արդ՝ մինչ կարգեցաք զայս յիշատակ և հաստատեցաք զայս հոգեցատուրս, ապա ժառանգաւորք տանս միեղէն եղբայրութեանս համակալ սիրով սահմանեցին մեզ յիշատակ՝՝ի սուրբ եկեղեցւոջս մի քառասունք պատարագ Քրիստոսի. և զկնի Արքեպազատակին[1] մինչ՝՝ի Հոգեգալստեան յամենայն առաւօտս Ամբիծք և աւետարան հանգստեան յիմում դամբանի[2]. և զօր մեծի տօնախմբութեան սուրբ Պենտեկոստէին առնեն մեզ յիշատակ հոգեհանգիստ զնեմամբ զուարակաց և զառանց, և առաս ոռճկօք կերակ-

---

[1] Այլ օր. ա զինի երիոյ զարին։ — [2] Այլ օր. յիմում գամբարանին։

րոց և ընկելեաց լցուցանեն զսիեաս աղքատաց և կարօտելոց։ Եւ յայն օր յամենայն ևկեղեցիքս պատարագ մեղ արասցեն և խնդրեսցեն յԱստուծոյ ի ողոյն զենմամբ փառակցին թողութիւն մեր մեղաց և փշրանս ողորմութեան, թերևս կարացիցս ապրել յահաւոր ամենից ահեղ հրապարակին, ուր բանքն ըսպառին և գործքն թազաւորեն։

Այլ թէ ոք յառաջնորդաց և յեպիսկոպոսաց տեղւոյս կամ ի փակակալաց, կամ յայլ ժառանգաւորաց տանս Ծուլանան կատարել զմեր յիշատակդ, կամ նախանձին, կամ պատճառեն պատճառս ինչ՝ որչափ ևկեղեցիքս ի հաստատութեան և ի շինութեան են՝ մանն նոցա և բաժին ընդ Յուդայի և ընդ ասալաճաճասան քահանայիցն եղիցի. ի սուրբ Աղբորդութենէն որոշեալ լիցին և մեր անհուն և ծովացեալ մեղացն պարտապան և պատասխանատու եղիցին։ Իսկ կատարիչքն օրհնեալ եղիցին և ընդ ամենայն սուրբս մանն և վարձ ընկալցին. ամէն։

Եւ արդ աստանօր՝ ով եղբարք՝ յիշեմ և զխոցուած լերդի իմոյ, զի սակաւ մի յառաջ քան զգծագրութիւն տառիս հասաւ մեզ սուգ անվերանալի. զի կրակր և սիրելի եղբայրն իմ՝ Փանոտագաւեցին, ի զարդ և ի դեղ մանկական հասակի՝ մինչ տէգ մօրուացն փարիաջեալ[1] լինէր թխատիպ տեսակաւ շուրջ բոլորեալ զպատշաճագեղ ծնօտիւքն՝ և սիրտ նորա զբաւարձ խնդամտական խորհրդոք ի վայելս քաղցրաբերս կենցաղոյս, և կամք նորա ի վազս և ի թիւս իշխանաշուք փառաց՝ յանկարծակի հասեալ օրհասն կենաց՝ խզեաց զբոյն քաջութիւն և խլեաց զառունկն ծաղկափթիթ, երբարձ տարաժամ ըզբաղձալին հնձ, որ և հրաժարեալ ի մէնջ գնաց յատեանս առանց իրիք յիշատակի. զոր և տարեալ նգիւն ընդ հօրն իւրում ի տապանի։ Որում Տէրն իմ Յիսուս փոխանակ աստի զլկանացս անդ ողորմեսցի և անտես արարեալ զմեղսատեսակ

---

[1] Ա՛յլ օր. փոքրիկ լինէր։

կիրս մարմնոյ նորա զուարճացուցէ՝ ի վայելն անմահական և յուրախութիւնն անպատական. ամէն:

Եւ այժմ ահա՝ ով ընթերցասէր, պատշաճ համարիմ յայտարարման մատենիս դնել նախ զանուանս և զկարգ եպիսկոպոսացն Ալունեաց և ապա իբր զնմանեակ ոսկի՝ ի պարանոց և կամ կնիք թագաւորական՝ ի վերայ պատուական գանձուց՝ կարգել զանուանս սուրբ և երջանիկ հայրապետացն Հայոց՝ ի դլուխ կատարման շինուածոյս մերոյ, զի Աստուծոյ սկսեալ՝ յաստուածապգեաց սուրբն պարտ է յանդիցուցանել:

ԳԼՈՒԽ ՀԸ

Եպիսկոպոսք Ալունեաց, ահ և ընծք նոցին:

Առաջին եպիսկոպոս ձեռնադրեալ՝ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ

Գրիգորիս ան	47 [1]	Վրիստափոր ան	10
Աշտոց ան	»	Դաւիթ ան	27
Ընանիա ան	42	Աթոռապալատ քերթող	18
Եուն ան	8	Ընդեղ ան	8
Դաղատ ան	17 [2]	Բրահամ ան	30
Աուշէ ան	36	Յովսէփ ան	19
Եղիցակ ամ	1	Յովհան ան	22
Աակար ան	28	Աովսէս ան	7
Պետրոս քերթող ան	10	Ընանիա ան	7
Գիւդան ան	3	Յովհան ան	9
Ալբիանէս ան	23	Ստեփաննոս ամ	1
Գրիգոր ան	15	Յովսէփ ան	17

[1] Այլ օր. 46: — [2] Այլ օր. 15:

Յովակիմ ամն	17
Սադովկ ամն	32
Յովհաննէս ամն	2
Սաղոմոն ամն	7
Նղկա ամն	8
Թովդոդոս ամն	18
Վէղդ ամն	8
Վաւխիթ ամն	17
Յովհաննէս ամն	10
Սաղոմոն ամն	17
Յովհաննէս ամն	33
Յակոբ հիրձուածող	41
Վ՚ահան ամն	6
Ճշոա ամն	17
Յովհաննէս ամն	6 և կէս
Ճշոա նոյն՝ ամն	5 և կէս
Սամուէլ ամն	3
Յակոբ	»
Գրիգոր	»
Յովհաննէս ամն	52
Գրիգոր ամն	58
Սահփանոս ամն	27
Ղարսեղ ամն	5
Գրիգոր ամն	20
Սահփանոս ամն	46
Յովհաննէս ամն	38
Ներսէս ամն	20
Սաղոմոն ամն	40
Յովհաննէս ամն	3

Եկաք որք նստան ի Կորտաձոս ի նոյն ցեղէ ամբոխակալք են այսոքիկ.—

Ընաջէն՝ Յովհաննէս կա- պանեցին ամն իննչ	Արշիս ամն 20
Սահփանոս որդի անառն	Սահփանոս ամ 20
Գրիգորի ամն իննչ	Գրիգոր ամ 1
	Արշիս ամն 24

Եւ ապա միաբանեալ զերկոսին ամբոխն (նստի)

Սահփանոս (Օրպէլեան) եպիսկոպոս Սիւնեաց և Կորտա- նից՝ եօթնևերորդ։

Ընդ՝ որոյ ամբոխս ի բոլոր թէ մի եղեալ վանք և անա- պատք են սոքա. Մեղոյ սուրբ Յովհաննէս անուն վանքն. Մեծ անապատն արանց. Ներսէս անապատն արանց. Շքն-

Հերու Աստուածածնին անապատան կուսանաց. Հոլի ձորու կուսանաց անապատան. Մանկուս ամենափրկիչ անապատան կուսանաց. Գանձափաթախու վանքն. Պարձևանու սուրբ ուխան, Յովհաննու և Օրիծեռնակու սուրբ վանքն:

Կոխուիլուս Հայոց, ամէ և ընէ Նոցա:

Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ ամն	30	Յովսէփ	12
Երիստակէս	7	Գիւա	10
Վրթանէս	15	Յովհան Մանդակունի	6
Յուսիկ	6	Խաթգէն	5
Փառներսէհ	4	Սահակ	10
Սուրբն Ներսէս	20	Մուշէ	8
Շահակ	4	Սահակ	5
Օ՛ւաէն եղբայր Շահակայ	1	Գրիգորապոր	6
Աստուածակէս եղբայր սոցա	3	Գևոնդ	3
Սուրբն Սահակ	51	Ներսէս	9
		Յովհաննէս	17
		Մովսէս	44

Ի սրբոյն Գրիգորիսէ մինչև ի 4 ամն Մովսիսի, ուր եղաւ Թուականն Հայոց՝ ամք 249. և յ9 Թուականին եղաւ Հինգհարիւրեակն. ի Երիստոսէ ամք 553:

Երեսամ ամն	23	Սահակ	26
Յովհան ամն	16	Նղիա	14
Սամիտաս	8	Յովհան Օձնեցին	11
Երիստափոր	3	Դաւիթ	12
Նզը	11	Տրդատ	23
Ներսէս	21	Տրդատ	3
Ընտատաս	6	Աբոն	8
Խոսրով	10	Նասրի	13

Առեփաննոս	2
Յակոբ առիս	6
Սաղոմեն	1
Գէորգ	3
Յովսէփ	11
Գաւիթ	27
Յովհաննէս ի Կոստիկ	22
Օ՛սաբարիա ի Զագայ	21
Գէորգ ի Գառնուց	21
Ա՛աշոց ի Աւանայաւիա	7
Յովհաննէս պատմաբան	27
Առեփաննոս	1
Թէոդորոս	10
Նղխսէ	7
Ընանիա	22
Վահան	2
Առեփաննոս	2
Ընդ-[illegible]	1
Խաչիկ	19
Սարգիս	27
Պետրոս	40
Խաչիկ	6
Գրիգոր	40
Նաբսեղ	24
Գրիգորիս	53
Ներսէս	7
Գրիգոր	20
Նղբօրորդի սոցին՝ Գրիգորիս	1

Սա արգելեալ ի բերդն Կոպիտարայ՝ ի գիշերի կախեալ ընդ պարիսպն՝ անկաւ և մեռաւ:

Գրիգորիս Եպիրատն	7
Յովհաննէս մեծաբարոյն	18
Կոստանդին	47
Յակոբ	19
Ա՛իւս Կոստանդին 3 ամ կեցեալ աքսորեցաւ	
Առեփաննոս Հռոմկլայեցին	

2 ամ կեցեալ՝ վարեցաւ ի գերութիւն ի Ա՛ղար. և յետ մի ամի վախճանեցաւ ի բանտն և ի կապանքն: Եւ այժմ է տէր Գրիգոր՝ Ընտաւարգայ եպիսկոպոսն:

ԳԼՈՒԽ ՃԻ՛

Ցչաստախօսան մոգինէս նորին Սոխփանոսէ։

Ակիզբն և կատարած ամենայնի Աստուած, զի՛ ի նմանէ սկսեալ և նովաւ յառաջացեալ և՛ ի նոյն կատարի ամենայն [1]՝ որպէս՛ ի կարգաւորակերտ բոլորութեն է տեսանել, զի ուստի սկըսաւ՛ ի նոյն յանգեալ միացաւ՝ ՛ի ծոց իւր գրաւեալ զբազմատրական մասունսն։ Տիւնա և՛ ի տպաւորութեն շնորհեն է տեսանել. զի հոսեալ յորդառատ յականակիտ յաղբերէն՝ անցանէ ընդ բնաւն, բաշխելով իւրաքանչիւրոցն զմանաւորն ըստ պատշաճին։ Նւ այնպէս գործեալ յամենեսեան զօգուտն և զօգտակարն՝ ինքն նոյն պարզութեամբն միանայ, ուստի բղխեցաւն [2]։ Աստ որում և ես իսկ շնորհօք վերնային՝ բարութ ստորնային, ձևով երկնային, վարուք հզեռնային, կերպիւ կենաբաշխ, ոգւով կենագրաւ, անուամբ քաւչապետ և բանաբերութեն գործապետ, առեալ յաստուածային շնորհացն՝ կամեցաք սակաւ մի սեղանաւորել. և սկիզբն արարեալ Աստուծով՝ յառաջացաք նովքեմբ, զոր և աւարտեացուք՛ ի նոյնն։

Ընդ գոհութիւն և փառք Սահգծողին էիցս, անճառին և անհասին, պարգևողին առատաբաշխ և խնամողին [3] բոլորիցըս. օրհնութիւն, պատիւ և երկրպագութիւն անբաւ բիւրութ, անհաս և անվճար՛ ի հրաբուն սեռից երկնաւորաց և՛ ի նիւթեղէն տարրականաց երկրածին կենդանեացս, ՛ի բոլոր և զականաց և՛ ի բնաւից գոյութեանց արարածոցս, որ կարողացօյց վեսակերպի ահասութիւն իմոյ մտացս և զքաւալից տպաւորութիւն ծովահեղձիկ [4] հոգւոյս տեսանել զաւարտ առարկութեանս և հասանել՛ ի կատարումն սկսմանս՛ ի դա-

---

[1] Այլ օր. Ե՛ ի նոյն կոտորէ ցիրն։ — [2] Այլ օր. բխեաւն։ — [3] Այլ օր. Ե խնամող բոլորիցս։ — [4] Այլ օր. ծովահեղձիկ։

ոչն աւուրս և ի սովամահոյց[1] մահաշունչ ժամանակի, յո-
բում մահն[2] ցանկալի և երանական, և կեանքն առեալ և թը-
շուառական. հանապազորդեալ ամենեցունց զցայգն ի ցաւ և
զցերեկն ի ցնորք. և ակնկալութիւն ոչ ի բարին, այլ օր ըստ
օրէ յանհնարին վիշտս և ի նեղութիւն: Եւ արդ՝ ի կամս
կարող և հզօրին Աստուծոյ ±օր, և ի շնորհս զթութեան
միածնի Որդւոյն Յիսուսի և յողորմութիւն նախանձառող և
ազատիչ սուրբ ±ոգւոյն՝ ես նուաստս և յոգնամեղ ծառայ
Քրիստոսի Ստեփաննոս և ողորմութեամբ նորին եպիսկոպոս
Սիւնեաց երկոտասան գաւառաց, նաև ըստ ներոյ կամաց նո-
րին նստեալ ի գահ մեծապատուութեան տանս, տեսաք նուա-
զեալ և ժխտեալ[3] զանուն և կորուսեալ զժառանգութիւնս
եկեղեցեաց. և ի վաղուց հետէ ցանկացեալ այսմ նորոգման
և վիպադրութեան՝ բազում ջանիւ և յոլով աշխատութեամբ
որոնեալ հաւաքեցաք ի հին և նոր պատմագրաց ±այոց, նաև
յարձանագրութեանց եկեղեցեաց և ի հնադոյն նամակաց, որ
կայր պահեալ յամուրս տեղեացն աշխարհախուռն հանդիսա-
րանին Տաթևոյ. էր ինչ և որ յաւանդութեանց ստուգագէտ
արանց՝ որում վկայէին իրքն և տեղիքն, զհետ մնեալ ամենայն
ճշդիւ ստուգութեան ի բաց ձգեալ և զունայնախոյզ զբաս-
նութիւն, զի մի՛ տաղտկացին լսողք՝ կարճառան վիպասա-
նութեամբ ցուցաք համառօտիւ զառաւել պիտանին և զձա-
հադոյնն. և զրեցաք զայս պատմութիւն[4] հանդէպ դպրու-
թեանց յիշատակարանաց առաջնոցն՝ ոչ ընդհանրական, այլ
առանձին Սիսական աշխարհիս, որ կոչի Յիշատակաց մա-
տեան: Եւ թողաք զսա արձան անջնջելի և յիշատակ գովե-
լի յապա ժամանակաց ի հաստատութիւն սուրբ և երկնա-
հանդէս աթոռոյս Սիւնեաց և ի պայծառութիւն եկեղեցեաց,

---

[1] Այլ օր. ի սազմածոյց: — [2] Այլ օր. կենաց մահն: — [3] Այլ օր. ծփեալ: — [4] Այլ
օր. զայս ժողովրդեան պատմութիւն:

որ ընդ սոքին այցելութեամբ: Եւ բարձեալ զսա մեղսաներկ բազկօքս՝ տարեալ ընծայեցաք ի տուն Տեառն խայբխա խորհրդական և զահամոնա նուիրական կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյս Տաթեւոյ և ամենայն աստուածաբնակ տաճարաց այսմ իշխանութեան: Եւ ի գուռն անկեալ աղաչեմք և յոգնահառաչ ձայնիւ[1] պաղատիմք, ոմն գերապանծ և լուսաճեմ առագաստս երինաւոր փեսային՝ հայցեա ամենայն սրբովք ի Վլհոյն քո սեպհական ընդունել զսա յիւր աստուածային դանձարան զայս պատուղ շրթանոց և ծնունդ հոգւոյ պատարագ համելի, և թէ ոչ ընդ պատուականան, սակայն ընդ չքաւորիսան առ խորանաւն ոյք մաղ մատուցանէին, նաև ընդ բաժակ մի[2] ցուրտ ջրոյն կամ ընդ երկու լոմայիւն: Եւ շնորհաւորիլով զսա եկեղեցւոյն իւրում՝ տացէ մեզ անդն ունել բարեաց և առատաձիր պարգեւին՝ եթէ ոչ կատարելոյն, այլ փշրանացն, յորմէ շունք կերակրին: Օ՜ի քանքարս զոր ետուր ցիս, ոչ բնաւին ընդ անբանութեամբ փակեալ թողից, այլ սակաւ մի ըստ իմում սակի արկի ի սեղանաւորն, վասն որոյ մի՛ լիցի ինձ լսել եթէ «Ծառայ չար և վատ»՝ այլ յաներկիւղ առնուն մեծի, ուր բանք ապառին և գործք թագաւորին՝ արժանասցուք երանեալս ձայնիւն, եթէ «Եկ, մուտ յուրախութիւն Տեառն». որում գոհութիւն և փառք յաւիտեան եղիցի այժմ և յանապատ յաւիտեանս. ամէն:

Աղդ՝ յարմարեալ այս հանդէսք բանի շարադրեցաւ յաշխարհակալութեան մեծի և ինքնակալ արքայի զան Վ՛ազանին՝ որդւոյ Աբղունին, ի տիրել տիեզերաց ցեղին Վնտադաց, ի թագաւորութեանն Վ՛րաց Գաւթի՝ որդւոյ Դաւիթի, և Հ՛այոց Հ՛եթմոյ՝ որդւոյ Լևոնի թագաւորի, յիշխանութեան այսմ Տահանդի օրհնելոյն և բարեպաշտի Հելիկոսիին՝ որդւոյ Տարսայիճին և եղբարց իւրոց, յամս տասը-

[1] Այլ օր. յոգնահառաչ ձայնիւ: — [2] Այլ օր. նաև ընդ բաժակ մի:

ւածասպատիւ և հոգևոր տեառն Գրիգորի՝ ինքնագլուխ պատրիարքի, և տեառն Պետիաննոսի՝ Ընդանից կաթողիկոսի, ի թուականութեան անժամանակ Լանին 1299, և ըստ հայոյն ի 14 յոթելենին և 46 համարին, ի 186 ոլոմպիադին և յերկրորդ ամին, ի յիսուն ընդլիքտիոնին պակասեալ թըւով, իսկ ըստ քառնեւթենեակ շրջանի արեգականն միոյ հինգհարիւրեակին, յ214 թուին, ի վանս վսեմական և փառաբեր նակ ուխտիս Աղթամարայ, ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս և աստուածակիր նշանացս, ի նժդեհ և ի դառնադաժան աւուրս, մինչ կայաք ի մէջ տիեզերահոծ ապտնապի միշտ զգուշալ երկբայեան դիմակցութեամբ՝ ակնակառոյց միայն վերին այցելութեան։ Ո՞ւմն որոյ մայրատեաճ դիմաք մաղթեմ զգաստ սրբազանիցդ, զի յիշման գործոյ արտաքինք արժանի, և ոչ առնէք անտես զանէութիւնս իմ, որ կամ հոգացեալ ի կորզացեալ գերեզմանէ, այլ առաջի աչաց հանարևանջիք զոգ ի վեր քարշեալ զօրէն մեւրոզաց. շառագունեալ դիմաք և տատայեալ երեսաք խնդրել ի ձէնջ փշրանս ողորմութեան, այսինքն՝ միով նուագիւ երկնաւոր գենմանն առնել արժանի։ Եւ թէ սխալանս ինչ կամ թերի գտանէք ի սմա, յանկուաճ կամ պակասութիւն, մի՛ սխտաւոր մտաք պարսաւանջիք, զի բնութիւն է մարմնոյ զթել և սկսրանալ ի բանս և ի գործս. այլ ողջախոհ կամաք ուղղել և աստուածատրաբար սիրով ներել մեզ և շնորհել գթանցանան։ Եւ ձեզ աՄենեցուն լեցի միոյն բիւրապատիկ գտանել ողորմութիւն յողորմածէն Աստուծոյ կրկին կենաց։

Այլ պատուէր դնեմ ամենեցուն, որք հանդիպիք սմա՝ ոչ քեցել ի բանից սորա և կամ այլանդակել գեղանակ կարգին, և կամ ժխտել ի ամենի, կամ թուղթ հատանել վասն նախանձու և նենգութեան և կամ այլ ինչ պատճառի։ Ընպա թէ որ ժպրհի յանդուգն լրբութեամբ՝ ջնջեալ եղիցի ի դպրութենէն կենաց և կորեալ ի կատակէն յաւիտենից, ընդ

Յուդայի և խաչահանուացն վարձատրեսցի, ընդ սատանայի և ամենայն չարագործացն դատապարտեսցի. և որ զք ընդօրինակէ զսա և զիւրն ընդ այլոց և զսակաւագիծ յիշատակս՝ սո. հասարակ ամենեքեան մեք և դուք ի միասին դայցուք ո՞ դորմութիւն յարարչական սիրոյն Աստուծոյ ի մարմին և ի գերեզմանի, և յանեղեկ աւուրն մեծի: Եւ նմա փառք յաւիտեան արարածոց և գոհութիւն յամենայն բանականաց յերկնաւորաց յամենայն ժամանակաց և յանվախճան յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ ՀԳ

Սիմեոնոց երէցապետն քաջասացն հարիւր եպիսկոպոսացն ըստ հին սահմանին այս է

Ա. ԾԳՈՒԹԻՒՔ ԳԱՒԱՌՈՒ

Նորիք 12. Տաթև 10. Յուր 6. Նաւատպդ 10. Խոլիա 8. Տաշու 5. Հարժիք 10. Երիա 6. Ռևրգկանևրևչի 6. Աբծիւ 6. Խոտուք 8. Լծէն 6. Ելնէն 8. Արտան 10. Ռևրգէն 10. Ոպնի 6. Նրէծ 6. Նրտամք [1] 6. Ղուևրծ 10. Մոզպք 10. Մրուց 8. Լոր 12. Մարդակապք [2] 6. Մշկաճոր 6. Մատան [3] 6. Սապատաճոր 8. Մազազնի 6. Փոքրոյծ 8. Տոլղք [4] 12. Տորունիք 10. Տորունկոյք [5] 8. Տխունիք 12. Եքաճի 12. Թործոզու 6. Պատատակերն 10. Գրիակ 6. Մևճիք 12. Պիտաք 6. Ըզաթմատաթ 6. Խուբէք 6. Յոզունի 10. Մորնի 12. Երևէս 7. Ռնուևիք 6. Երթէք 10. Եմղէք 12. Նննի 12. Որդիքիք 12. Ոզևհի 10. Ըշակամայրի 12. Գնատակից 12. Ռզևան 6. Խանք 12. Արձաբերդ [6] 12. Նաղիա 12. Ատոմի 12. Նհզեմի 12. Սիրատոսիկ 12. Ռանատուխ [7] 12. Ըզատակիկ 7. Պատմատանք 10.

---

[1] Այլ օր. Երթփ: — [2] Մարդոյք: — [3] Տատ: — [4] Տրնի: — [5] Տրունոյ: — [6] Որդ-բերդ: — [7] Ռանոխ:

Գայլոնց վանք [1] 10. Վ՚ասակակերտ [2] 12. Մուցք 10. Շ՚աղատ 12. Շ՚աղատոց վանք 6. Ըզարանից գետ 10. Շ՚ոքար 10. Մեծաձոր 10. Փեթականոց 6. Վ՚ազատին 12. Ըզատու [3] 12. Գոմեր 7. Կուրատանք 7. Կաքաւաւոր [4] 12.

Բ. ԵՒԱՑԱԼԱԽ ԳԱՒԱՌ

Վ՚ազատակ 12. Շ՚աքէ 12. Յ՚աքէի վանք 12. Լ՚երին վանք 12. Գաստակերտ 10. Ընկեզակոթ 10. Վ՚արունջ 10. Ռոտաի 12. Վ՚երին Ռոտաի 12. Գղվդոտ 6. Խուրտաի վանք 6. Խազատամոլք [5] 12. Այլափարախ [6] 6. Ըռւսական գետ 10. Գոդաձոր ներքին 7. Գխնական գետ 10. Գոդաձոր վերին 10. Որդան հայր 12. Ըկանք 10. Չկնապաճ 12. Մեծաձոր միւս 12. Չզահայրևանք 10. Կռռոշոփոր 7. Սաղատաձոր 8. Մ՚ազազնէ [7] 6. Ռոզոտի ջուր 6.

Գ. ՎԱՑՈՑ ՁՈՐ ԳԱՒԱՌ

Գհաիկ 12. Գևրքն 10. Գոզոշաի վանք 6. Ըզէի ձոր 10. Ըզատոց գետ 6. Տհատնավանք 12. Մ՚ատարերտս 7. Ըզատրանք 6. Խարձի շէն 12. Մ՚այրագուղք 12. Ընջոզք 10. Մ՚ոխրոց 6. Կապոյտք 12. Կարծնք 10. Գևգն 10. Ըզհատ 10. Ըզրաճ [8] 12. Ռոր 10. Ընջատագատիճ 6. Փշոնք 15. Գատատայ 10. Խոզատատ 10. Կորատանեանք [9] 6. Լ՚իճ 6. Ըզվէնք 6. Կամրջոց ձոր 8. Խորձայ 8. Ըզոպէն 8. Յ՚հատայ 8. Վ՚հաշէ մարզ 6. Նկհատն [10] 10. Նչրերտանք 10. Գնեշէն .6 Ռակերտ 10. Նչրգհչ, 10. Որգոտրեգի 6. Ըզատայ 6. Վ՚ազգենիք 10. Մ՚սեն 12. Ը՚ացիք 7. Ըզարակի ձոր 5. Ըլբրբուն 12. Նգհգնաձոր 12. Ը՚ոլիք 12. Ռերգի մայր 20. Ը-

---

[1] Ընդ. օր. Գոյլոց վանք։ — [2] Վ՚ասակերտ։ — [3] Ըզէատ։ — [4] Կաքաւաւորք։ — [5] Խազատամոլք։ — [6] Այլափարախ։ — [7] Մ՚ազազնէ։ — [8] Ըզրոճ։ — [9] Կորոտանք։ — [10] Նէհան։

մաղու [1] 10. Կուբանք 12. Ըրկաթուկկրա 6. Հոլք 12. Ոզնան 10. Խարաշկօնք 10. Ըռատաբուխ [2] 10. Ըրօր [3] 7. Փրակոյ [4] 12. Ընգեղէ 12. Գրկի [5] 6. Եղեգնիք 12. Աարկողովք 20. Մոզն 12. Ըգարակ 12. Ըրկաղն 12 Եղիժու 6. Փշատիք 6. Ըրենի 12. Եղիւն 10. Ըաշար 6. Խոտորձի 12. Եղերունք միւս 10. Ընգանք [6] 6. Ակչուա 6. Պրակը 12. Ջ՚եմեռկ 12. Ըղճարուն 6. Եղկայն արա [7] 6. Շ՚աստախ 6. Շ՚աստախ միւս 6. Գոտոյնի [8] 12. Յրատագա [9] 6. Հաւս 6. Ըրատնիք 6. Միջագետք 6. Ը՚ռեզի 8. Խնձորուա 6. Եղնեակ [10] 10. Գրունք 10. Ուռիք 8. Կաքաւուց աղբիւր 6. Գոմք 6. Ընջոյք 10. Եղինիսան 6. Ըղնջոց բերդ 6. Գնգեմանք 10.

Գ. ԳԵՂԱՔՈՒՆԻ ԳԱՒԱՌ

Կոճ 20. Կակոյք 12. Գոճոյ ձոր 12. Ակերա 10. Ջրջոնի [11] 7. Խնձի թաղ 7. Ոփեաց ձոր 6. Կորաշէն 7. Եւանակաց հուն [21] 7. Ոզնի 12. Գանձաղ անտառ 7. Գողաձոր 7. Եղիզկոյք [13] 15. Գատտակիր [14] 10. Վ՚ասակաշէն 10. Օ՚առայ ագարակ [15] 7. Ըմատրեայ [16] 15. Վ՚աժոց 10. Կամբրիւն 15. Հոգք [17] 15. Խոկաւ ինձ 12. Խորտան 15. Ըզգիձի 10. Թամակ 15՝ Մեհոդաճ 10. Հոլուաց ագարակ [18] 7. Ձագ 17. Կածիք 15. Ուխթրուն 12. Յուշաբերէա [19] 6. Վ՚արգինիք 6. Նեղբին Վ՚արգինիք 15. Թամբարարք 12. Եղերուք 15. Ընջոյ հուն 15. Գոմք 12. Պահամանք 6. Կուտրակագոմք 10. Վ՚անաւան 7. Փառականք 10. Րհան 12. Գ՚ևիք 10. Րտոխ այրք 12. Շ՚իկակարբն 15. Գևրաիու 15. Ծատկայ 7. Ըխայնիք [20] 15.

---

[1] Այլ օր. Ամագա։ — [2] Ուրտաքոյն։ — [3] Ուրաբ։ — [4] Փրոյ։ — [5] Գրիի։ — [6] Ընգնա։ — [7] Երկնարերկ։ — [8] Գոտոյնի։ — [9] Գրտոփիա։ — [10] Եճիղէ։ — [11] Ցընդի։ — [12] Ասանոյց հուն։ — [13] Եղիվոյ։ — [14] Գոտոյմիրք։ — [15] Զատոյ։ — [16] Ամուրիա։ — [17] Հոգի։ — [18] Հուզոց ագարակ։ — [19] Ցուշաբերդ։ — [20] Ալինա։

Ե. ՍՈՊԻՑ ԳԱՒԱՌ

Ա՛թիք [1] 20. Ա՛ախաթաղք 7. Ա՛նջխաձոր 7. Ա՛ստաթաղք 7. Ա՛տան 12. Ա՛ամամաբակ 7. Ա՛րաւխաբակ [2] 6. Գ՛ուկասիձոր 15. Տրէտուք 8. Ա՛ախչի անապատ [3] 8. Խոթաթագիա 8. Վ՛արդանաբակ 6. Ն՛ոդրաբակք 6. Վ՛ասակաշէն 10. Կուխն 12. Ա՛նապատ 12. Ա՛րխունչն 12. Շ՛ատջրեք 10. Կուձկունիք 10. Ք՛ասրկոյք 12. Վ՛ազաւեր 10. Ա՛ռասկարք 15. Ա՛մեռնաւոր 15. Շ՛ատման 10. Շ՛ինիք 15. Ա՛տուածածին 10. Ե՛րէզ 12. Ք՛ասկաւոր 12. Մ՛աքենոց 15. Ե՛զեցիք 12. Ջ՛ուղիշատ 12. Ա՛սխոզ 10. Ա՛զբերաձոր 7. Ա՛ռիճաք 17. Ա՛նապատ 7. Շ՛ապուհաթաղ [4] 7. Կատակք 10. Վ՛աչէի բակք 6. Ջ՛աղացաձոր 10. Ջ՛աչուրաբակ 7. Պաշուկք 12. Տիառնատեան 12. Ք՛երդաձոր 8. Գ՛ուռնք 12. Ա՛ղձոնիք 15. Գ՛ադանք [5] 15. Գ՛ադանակ 15. Ա՛խուատուն 15. Ա՛զմանք 12. Պաշուք Նէլբին [6] 12. Զահոյ 12. Խորատատանաբակ [7] 6. Ա՛րակիք [8] 12. Ա՛կանք [9] 10. Գ՛ոզոյ ագարակ 12.

Ը՛ՐՔ

Գ՛ոզամաբակ 10. Կախան աղբիւր 8. Ա՛ահակաբերդ [10] 7. Խոնթիակաբակ 7. Ջ՛աղացաբակ [11] 6. Ա՛ղբուծ [12] 8. Գ՛ադրաբակ 6. Գ՛գոլաբակ 6. Ա՛տրմիճնաբակ 12. Խորհայ [13] 12. Ա՛ճառձոր 6. Ն՛ադ 15. Գ՛հատաբակք 10. Ե՛րէզի 8. Վ՛արժակի աղբիւր [14] 10. Ա՛ռնջինք 7. Ե՛ղջերունիք 8. Ա՛նապատ 10. Ա՛ձի գետ [15] 6.

Ջ. ԱՂԱՃԻՋ ԳԱՒԱՌ

Ա՛ժէն 10. Ա՛նէժ 12. Տանձուտ 7. Ա՛ստհաց աղբիւր 12. Վ՛հաղաձոր 10. Ա՛ակ 15. Ա՛րատգետ 12. Մ՛եղի 12. Ա՛

---

[1] Ա՛յլ օր. Ա՛ֆթ։ — [2] Ա՛բխաբակ։ — [3] Ա՛փշանապատ։ — [4] Շ՛ապուհաթայ։ — [5] Ց՛ադան։ — [6] Պ՛ալոյ։ — [7] Խորատանաբակ։ — [8] Ա՛ռաքիք։ — [9] Ա՛կան։ — [10] Ա՛ահակաբերդ։ — [11] Ջ՛աղացաբակ։ — [12] Ա՛ղուց։ — [13] Խորհայ։ — [14] Վ՛արժանիկ աղբիւր։ — [15] Ա՛ձի գետ։

կանք 8. Ընուական 6. Մշենի 6. Վաշաթաղք 6. Վ՚երին շէն 6. Չիասալ [1] 6. Մասրակերա 6. Մննի 6. Ջունջաք [2] 12. Մարգք 10. Խոզխոչոխ [3] 10. Սուրբ Գէորգ 8. Լ՚ողք 8. Ընգարակի գետ 10. Հ՚ասրակի [4] 7. Կարկասան 6. Խաղախանիք [5] 12. Մոշինք 10. Ոլրոքոյ քար 8. Ընահուձ 6. Նորճաուռվանք 10. Ջայկիակ 6. Կաղոհորինք 12. Մաքուշն 10. Խոտ 8. Զորացիք 10. Խոտղոիք [6] 12. Վ՚ժնաբերդ 12. Ջայրի 8. Ընուշաւան 12. Ընգասա [7] 6. Հ՚ամբեայ 8. Ընքոյ 6. Վ՚ասակակերա 10. Ընսրակ [8] 12։

Ի· ՀԱՒՈՒՆԴ ԳԱՒԱՌ

Ընգախերտ [9] 12. Խախաղք [10] 8. Կաղաւանք 8. Խնձորեակ [11] 10. Վ՚անոցայ 20. Մրկաքար 12. Խորհա 7. Հ՚ոռնոխոյ 12. Տանձիակ 7. Թաղհուն 7. Տնդ 12. Վոչագիղ 12. Պատանդաւանք 7. Ընդնի 7. Նորաշենիկ 6. Խանասճախ [12] 20. Վ՚ազաթա 12. Ընկարման [13] 10. Խորխոռ 7. Մակաղոց 10. Կարբինք վերին 8. Մակաղոց միւս 7. Կարբինք ներքին 8. Պնդի [14] 12. Պորու 20. Կոմայ 6. Լ՚աւակունք [15] 10. Խազմաճակք 6. Հ՚ապվայ 10. Ընտաշէն [16] 6. Ընձկայք 6. Վրմանք [17] 20 Պնենաթաղիք [18] 6 Պնդաշէն 12. Պ՚ոկանի [19] 8. Խոզեան 12. Յօղունի [20] 12. Խորտան [21] 15. Ընգարակ 8. Ը՚դուկն 12. Ընձկայք 12. Ընկանա 10. Զագաձոր 12. Պետրոսկայ վանք 10. Նախանձոր [22] 8. Ընդնոյ ջրիկ [23] 8. Պորայք 10. Ոսկաճակ [24] 8. Խոտա 12. Սաորին 12. Մարգաձոր 8. Խահիզաձոր 18.

---

[1] Այլ օր. Չհասալ։ — [2] Հունջաք։ — [3] Պախուշխ։ — [4] Շոպկի։ — [5] Պախախանիք։ — [6] Խախնիք։ — [7] Ընգասա։ — [8] Ասրակ։ — [9] Ընգախերտ։ — [10] Խալխալ։ — [11] Խնկրիակ։ — [12] Խանճախ։ — [13] Ընկրման։ — [14] Ցնդի։ — [15] Լաւախանք։ — [16] Ընդաշէն։ — [17] Գրմանք։ — [18] Գինինաթաղք։ — [19] Պ՚ոկանի։ — [20] Ցօղունի։ — [21] Քաբտան։ — [22] Նախանձոր։ — [23] Ընդնջրիկ։ — [24] Ոսկաճակ։

Խաքս։ 10. Նախակաշէն 12. Ընբոյ 10. Թաղապայ 8. Հաթիթաղք 8. Հնոյ հիւղք 24. Ջալէ 8.

Ը. ԲԱՂՔ ԳԱՒԱՌ

Ընջաղու 8. Նձանան 12. Խարերվայր 6. Հիկքս 12. Վարդավանք 6. Տորթնի [2] 26. Տախեար 6. Ընարագետ 10. Տագամար 20. Խոտեան [3] 12. Նղինդն 6. Նորաշինիկ 6. Նորաշինիկ միւս 6. Խնեայ ձոր 6. Ոլն 6. Գոդեվանք 12. Ընտ 10. Ընրուքս 6. Ջոզար 8. Կրուագետ [4] 6. Խըմայձ 6. Կաւարտ 8. Ընկանի ձոր 10. Տոզող 6. Օձարերի դասկերտ 10. Տաթենեղիշէն 10. Տկրանդատ 8. Ընգարակ 20. Թուրք 12. Մոզարակ [5] 6. Ընտկան [6] 7. Միւս Ընտկան 7. Պարքոն 6. Պարքոն միւս 6. Գուղաբունի 10. Ալիզ 10. Գուկական 10. Փառատագ 8. Մնձամորդ 12. Գիւղ Կոմսական 12. Ընձանաձոր 6։

Թ. ՄԻՒՍ ԲԱՂՔ, ՈՐ ԱՆՈՒԱՆՆ ՓԱՃՈՒՆԻՔ [7]

Նրէճ 12. Խոզվանի 10. Գատտակերտ 6. Տանձավայր 8. Վանանդ 10. Մաճ 7. Ընտատաց ձոր 6. Հռոնոխոյ 8. Նրմենի շէն [8] 6. Խաղիք 12. Նւեղի 7. Ջուուտուք [9] 6. Մոզք 6. Մարզահանի [10] 10. Խյան 6. Գոզար [11] 6. Ընւիք 6. Տաճկաձոր 6. Գիղք [12] 8. Կոճորու 7. Մաղճատուք 6. Խոզի 6. Ա՛ատք 8. Տուտուտք [13] 7. Պնճնեակ 6. Ընի 6. Խարկուրի վանք 12. Տախն 12. Մերթակերտ 6. Ջայնեան 6. Ջղու 8. Գատա 12. Խարկուշատ 12. Խիլք 12. Տրեայ 12. Ընգատի 8. Ա՛ապկուտ 12. Գոզարգիտ [14] 6. Ընդոկաբերդ 12. Նակորզան 20. Ընտէն [15] 10. Նախջա-

---

[1] Ալշ. օր. Խոփ։ — [2] Տորթն։ — [3] Խոտանան։ — [4] Կրուագետ։ — [5] Զուրէյտ։ — [6] Տէրընդատ։ — [7] Մոխրոտ։ — [8] Ընտքան։ — [9] Մէտս Խաչ, որ Սուրանի Ընտնի։ — [10] Կէրմենիկ։ — [11] Հոզոզատ։ — [12] Մոտոխանի։ — [13] Տուզար։ — [14] Տիխ։ — [15] Տուտուտուտ։ — [16] Ճոխորն։ — [17] Կոբոյկն։ — [18] Ընտն։

ւանիկ 10. *Ա֊բիեկ* [1] 10. *Թով* 8. *Թով միւս* 7. *Ըղա֊հոլդ* 10. *Ւահու բերդ* 7. *Ըժգակ* 12. *Ըմխոցք* 12. *Ե֊թուանդակերտ* 6. *Վ֊աժանիք* [2] 8. *Կամեն* 6։

Ժ. ԿՈՎԱՍԱԿԱՆ ԳԱՒԱՌ

Ւցան [3] 12. *Ւռնի* 6. *Շ֊տատուք* 6. *Ողոյհի* [4] 12. *Փա֊ռատարոյ վանք* [5] 6. *Ւռնևևիրջի* 8. *Ա֊ուակոր* [6] 6. *Վ֊աժնա֊տուք* 10. *Ւռոտա* 10. *Մատագաթ* [7] 12. *Գադաւանք* 6. *Մենիք* 6. *Թամթու մայդ* 6. *Գալք* 5. *Մարուր* 8. *Վ֊ա֊բոսի վանք* 10. *Գան* 5. *Ա֊ոյնոցկոր* 5. *Եբիգիք* 7. *Տախա֊բեան* 10. *Ա֊ամուլք* [8] 6. *Վ֊ատամազբուր* 6. *Մաճկան* 6. *Ցանուշակի մայդ* 6. *Նախկատան* 6. *Գիլին* [9] 8. *Լ֊իմ* 8. *Ջամատուք* [10] 8. *Լ֊իմ վիլին* 8. *Լ֊իմակովիա* [11] 6. *Փշատե֊ցարատս* 6. *Գիլ մայրի* 6. *Ւռիքնի* 8. *Ըշտարակ* 6. *Ար֊գաբ* 6. *Կիրեն* 12. *Սղաթաղք* 12. *Շ֊իւահողք* 12. *Պօղո֊սի վանք* 7. *Վ֊ախտանգաձոր* 7. *Թախոյ կիլ* 7. *Շ֊աշոյ գետ* [12] 10. *Ըղբախտանայրի* 17. *Ծանտաղու* 20. *Մատի* [13] 6. *Ւռա֊ձուխտաղ* [14] 6. *Լ֊ուց մայրի* 6. *Նորաշէնիկ* 8. *Տարվանտոտ* 12. *Խոզաձոր* 7. *Գռնակերտ* 7. *Ծորի* 12. *Կիծ* 15։

ԺԱ. ԱՐԵՒԻՔ ԳԱՒԱՌ

Ըղոյ վանք [15] 7. *Կատատի* 15. *Մայրի* 8. *Ըրկատանք* 8. *Մոլունատ* [16] 8. *Տափեատ* 8. *Մնդոյ վանք* 20. *Լ֊ոհա֊վանք* [17] 30. *Որդիշոյ վանք* 20. *Լ֊ուսկայ վանք* 12. *Խոլա֊վանք* 12. *Ջ֊ուարի վանք* 12. *Կարճատան* 12. *Մոլշոն* [18] 12. *Տաշատուն* 12. *Կուբատանք* [19] 8. *Ըգարակ* 8. *Մանա֊*

---

[1] Ա֊յլ օր. Ըրբիկ։ — [2] Վ֊աժանիք։ — [3] Ի ցան։ — [4] Ողոհի։ — [5] Փառարոյ վանք։ — [6] Ա֊ուակոր։ — [7] Մատաղոն։ — [8] Համալ։ — [9] Գիլին։ — [10] Ա֊ամատուք։ — [11] Ա֊իմակովիա։ — [12] Շ֊աշիկ։ — [13] Տատի։ — [14] Բուրգուխաղ։ — [15] Ըղվանք։ — [16] Մատանատ։ — [17] Ա֊հավանք։ — [18] Մոլշան։ — [19] Կուբօրք։

ղու 8. Պիկ 6. Տհհի 8. Կորնկնիք 10. Թաղամնդրի 6. Խոզուշիւղ[1] 6. Վ՚արպանաձոր[2] 6։

ԺԲ. ՁՈՐՔ ԳԱՒԱՌ

Խաղաբերդ 12. Ղորադիւղ 12. Տինիք 12. Խակամանք 12. Ծաղեձանու 6. Կահուրայ 6. Գեղոյ վանք 20. Ընէթի 6. Խնխոլուտ 8. Շ՚արպոյ 8. Խիշ 6. Կամճամուտ[3] 8. Խաքախու[4] 8. Ակոյք[5] 8. Ընջարաջ[6] 10. Վ՚աժունիք[7] 12։

ԺԳ. ԵՐՆՋԱԿ ԳԱՒԱՌ

Խուտա 12. Տևի 12. Ընմասրոյ վանք 12. Ղորակերտ 12. Ազոհի 12. Թախճակ 8. Գուգամանք 8. Ոսկէձոր միւս 12. Ընկուզիք 12. Ղորադիւղիկ 12. Էրևէք 8. Շ՚ահկերտ 8. Սուրբ Գէորգ՝ 2 դահկան և 8 դրամ. Ջուաջրի վանք 12. Վ՚ան 12. Ընպարանք 12. Գոչին 8. Գադ 12. Մայրիակ 12. Ոփիք 8. Ընգուլիք 12. Վ՚անանդ 12. Ընմասաշէն 10. Տիրկունիք 12. Տքուիւա 8. Ովզաս 12. Վարկոփ 12. Ընբակունիք 12. Ոստատա * 52. Խերդիկ 12։

ԺԴ. ՃԱՀՈՒԿ ԳԱՒԱՌ

Ճ՚ահուկ 20. Ընդերկաշ 50. Խախ 12. Կարմիր եկեղեցի 12. Ոլդոք 12. Խլուր 12. Պահետա 12. Գ՚ապէն 12. Բզդաւն 12. Ը՚նջզակերտ 12. Ղորադիւղ 10. Կուքի 12. Խոռատունիք[8] 12. Տիզէն 12. Գահինիք 12. Ընմասաշէն 10. Աղուատունք[9] 8. Ձագա 8. Ղեծանայ 8. Թամնաշաղ

---

[1] Ալ. օր. Խազըպիւղ։ — [2] Վրիճանայր։ — [3] Կամճայ։ — [4] Խախխու։ — [5] Ակէ։ — [6] Ընքէջ։ — [7] Վ՚ժունէ։

* Փարիզեան տպագիրն զայսոսիկ և եթ՝ իւրմէ բերէ զանուանս չինիկ երնջակ դաւառաւ. — «Խուտա, Ակոմիկ, Խնկերտունիք, Ամասաշէն, Ովզու, Գեղոյնայ, Ընբակունիք, Քարկոփ, Խերդիկ և Ոստատա»։

[8] Ալ. օր. Խոռահէ։ — [9] Ա՚ղաղատունէ։

12. Ափիք 12. Նորագիւղ միւս 12. Թամիկք 12. Շաւեն [1] 12. Նորբերդ 12. Կիսոի 12. Նշատունք 12. Ընդարակ 8. Պալարինք 8. Կրան 8. Կոյլք 12. Խոռունիք 6. Պրահամիկ 6. Նօաւոյք 2. Ընդու 12. Պայլակալ 10. Ջուր 8. Ալենի 8. Խարունք [2] 21. Տախտակք 8. Ընդուգետ 12. Ընուշաւան 12. Ընդաւ 6. Նորաշենիկ 6. Շրմըթայի 8. Ընքոյքա 6. Վասակակերտ [3] 10. Ընհրակի 12։

Եւ Կրիատոսի փառք յաւիտեանս. ամէն։ Վերջացաւ հինից գումարն է, վեց հարիւր եօթանասուն և եօթն։

---

[1] Այլ օր. Շահն։ — [2] Բոքոտ։ — [3] Վասակերտ։

ՑԱՆԿ

Եր.

ԳԼՈՒԽ Ա. — Նախագրութիւն գրոցս և պատճառ առանձին . . . 1

ԳԼՈՒԽ Բ. — Սակս ազգապանութեան և նախնական նախակարգութեան, եթէ յուսա սերեցան նահապետութիւնք Սիսական ազգին յԱդամայ հետէ 6

ԳԼՈՒԽ Գ. — Սակս նախակարգութեան Սիսական տոհմին, թէ որպէս կարգեցաւ ՚ի Վաղարշակայ թագաւորէ Հայոց 8

ԳԼՈՒԽ Դ. — Սակս լուսաւորութեան աշխարհիս այսմիկ աստուածգիտութեամբ և հաւատալոյ իշխանացն ընդ Տրդատայ ՚ի ձեռն սուրբ լուսաւորչին մերոյ Գրիգորի ՚ի Քրիստոս Աստուած, և աւերելոյ զմեհեանան և չինելոյ եկեղեցիս, և ձեռնադրութիւն եպիսկոպոսին Սիւնեաց, և այլ զոյգք պիտանիք . . . 10

ԳԼՈՒԽ Ե. — Զոյգք հին ժամանակաց որ վասն գալոյ սուրբ առաքելոյն Բարթողիմէոսի յաշխարհս Սիւնեաց ՚ի գաւառն Գողթան, և դարձուցանել ՚ի հաւատս զմանս, հաստատել սեզան և ձեռնադրել եպիսկոպոս 13

ԳԼՈՒԽ Զ. — Ցաշտս եպիսկոպոսաց և իշխանաց Հայոց, եթէ ոչք են գահերէց և գահակալութ կարգեալ ՚ի մեծէն Տրդատայ և սրբոյն Գրիգորէ և յորդւոց և ՚ի թոռանց իւրոց. և վասն առանձին պատուոյ և աստիճանի եպիսկոպոսին Սիւնեաց 15

ԳԼՈՒԽ Է. — Վասն վախճանին Գրիգորի մեծապատկառելի և փոխանորդելոյ զմեծաձայն սրբոյն Մաշտոցի 18

ԳԼՈՒԽ Ը. — Վասն Անգոկայ Սիւնեաց իշխանի, թէ զինչ գործ գործեաց, և թէ որպիսի անցք անցին ընդ աշխարհս Սիսական ՚ի Շապհոյ պարսից արքայէ, և երթին նորա առ կայսրն Յունաց առ մեծն Թէոդոս և անդ վախճանիլ, յաստացուածոց սրբոյն պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի 19

Եր.

ԳԼՈՒԽ Թ. — Վասն գալոյ Բարկայ ՚ի Հռոմմոյ առ Ջապուհ և քաջութեանն զոր եցոյց և վերստին տիրեցին Հայրենեաց իւրոց և շինութեան նորա, և նախագահ պատուով լինելոյն ընդ Բագրատունեան ՚ի նոյն ձառիցն տէառն Պետրոսի. և այս եղև ՚ի վախճանեալոյդ ումեքոյդ ամի թագաւորութեանն Ջապհոյ. 25

ԳԼՈՒԽ Ժ. — Յայտնութիւն եկեղեցւոյն Ջաղատոյ, և գիւտ անչափ սրբոցն որ ՚ի նմա խաչից և նշխարաց, և հաւատալն Գորոյ և Գազանայ և այլ Պարսից, և պարգեւքն Տիրոտ երիցու. . 27

ԳԼՈՒԽ ԺԱ. — Դարձեալ ՚ի նոյն ձառից տէառն Պետրոսի՝ յիւր բազում ժամանակաց զոյգք վասն գիւտի նշխարաց սրբոց որ ՚ի Ջաղատոյ եկեղեցին, և որ յատուրս Յովակիմայ եպիսկոպոսի վիճմունքն սակս նախագահութեան տանուտէրոյ և դիւղից Սիւնեաց, թէ ո՞ր նախապատիւ և գահակալութ տահմանեցաւ. 32

ԳԼՈՒԽ ԺԲ. — Դարձեալ վասն իշխանաց որ զկնի Բարկայ . . . 34

ԳԼՈՒԽ ԺԳ. — Կարգ Իշխանացն Սիւնեաց, որ ՚ի Բարկայ մինչև ցՔուրդոյ 35

ԳԼՈՒԽ ԺԴ. — Վասն գալոյ աւուրց վարդապետին Մեհրուժոյ ՚ի Սիւնիս և ՚ի Գողթն և շրջելոյ ընդ գաւառսն և զղօղեալ կառապետութիւնն ՚ի տէղիս տէղիս սրբել օգնութեամբ Վաղինակայ Իշխանին և Ջաբխիայի 37

ԳԼՈՒԽ ԺԵ. — Վասն նորոգ եպիսկոպոսութեան Սիւնեաց տէառն Ընտնէոյի. և երթն յԱղուանս. և պատուիլ ՚ի թագաւորէ նոցունց. 38

ԳԼՈՒԽ ԺԶ. — Գործ անարի և վատ իշխանին Սիւնեաց Վասակայ և պատճառ նորա կորստեանն 40

ԳԼՈՒԽ ԺԷ. — Վկայութիւն աւուրց և վաւառօրեալ տեղուհին Սիւնեաց երանելոյն Ցազդոյ ՚ի Ձեռաց Մհերանոյ ՚ի մէջ Պարսից Հանգիստն 45

ԳԼՈՒԽ ԺԸ. — Վասն վկայիցն որ կան ՚ի հանգստի ՚ի Վայոց ձոր գաւառի ասա և անդ, և վասն վկայարանին որ շինեցաւ ՚ի գետափնջին Եղեգեաց և Մոգան. 48

ԳԼՈՒԽ ԺԹ. — Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց, որ յաջորդեցին զկնի Ընտնէոյի և վասն տէառն Երիցակայ. 52

ԳԼՈՒԽ Լ. — Պատմութիւն համառօտ հօրն Դիւտոյ և Քրիստոսասիրին, և շինութիւն վանացն, որ յԵզեր Երասխոյ 57

ԳԼՈՒԽ ԼԱ. — Յաղագս Մակարայ և Պետրոսի, Դիպանոյ և Ա[illegible]րմանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսաց. 64

Եր.

ԳԼՈՒԽ ԻՌ. — Թուղթ զոր Հայոց կաթողիկոսն ասէր ցովհաննէս և այլ եպիսկոպոսք արարին առ Սիւնեաց եպիսկոպոսն և իշխանն. 66

ԳԼՈՒԽ ԻԳ. — Եթէ յորում աւուր եգաւ Թուականն Հայոց, և «աւուրք Աստուած որ խաչեցարն» առհմանեցաւ 69

ԳԼՈՒԽ ԻԴ. — Վախճան Վրթանիսի և յաջորդելն Գրիգորի և Քրիստափորի, և որ ինչ զրոյցք եղեն յաւուրս նոցա 70

ԳԼՈՒԽ ԻԵ. — Ցաշգաս միաբանելոյն Հայոց և միապետելոյն ասեան Աբրահամու, և վասն մեծ ժողովոյն որ ի Դուին, և վասն ինն կարգաց եկեղեցւոյ, և վասն վրաց բաժանմանն զրոյցք յօլովք և պիտանիք, զորս հաւաքեցաք ի հին նամակաց և յԱխտանիսի գրոց, և առակ Ղուանից արքեպիսկոպոսութեան և Սիւնեաց միաբաշխութեանն, և վասն Սիւնեաց Խաչին թէ էր ազագաւ տուաւ 72

ԳԼՈՒԽ ԻԶ. — Վասն ինն դասուց եկեղեցւոյ թէ որք են և որպէս վարին 78

ԳԼՈՒԽ ԻԷ. — Վասն Մամիսոնացւոյն Սիւնեաց եպիսկոպոսի և վասն ժողովոյն Կարնոյ որ ի Հերակլեայ, և վասն Եզբայ խմբելոյն ի կրօնն քաղկեդոնի 82

ԳԼՈՒԽ ԻԸ. — Թուղթ Մամիսոնացւոյն Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց Հրամանաւ ասեան Եզբի Հայոց կաթողիկոսի, և այլ եպիսկոպոսաց Հայոց՝ առ Թագաւորն Հերակլ վասն Հաւատոյ. 87

ԳԼՈՒԽ ԻԹ. — Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց, որք յաջորդեցին գնոքա ասեան Մամիսոնացւոյն քերթողի 94

ԳԼՈՒԽ Լ. — Վասն ասեան Սահմանադրի Սիւնեցւոյ վարք և վախճան, և որ ինչ պատմի գնմանէ 95

ԳԼՈՒԽ ԼԱ. — Ցհսիլ որբոյն Մեխոգի՝ եպիսկոպոսին Պատաքայ և վկայի, յազգս անցելոյն, Ներկայիս և ապառնեացն, առացուածք յԱստուածաշունչ գրոց, զոր Թարգմանեալ է ասեան Սահմանադրի՝ Սիւնեաց եպիսկոպոսի. 105

ԳԼՈՒԽ ԼԲ. — Վասն գալոյ Մրվանայ առաջիկ զօրավարին ի Սիւնիս, և փետացանալոյ Բարանոյ պարսկի Սիւնեաց ասեան Վասակայ, և այրելոյ զՄաբէնոցն, և կատրելոյ զԽնդզարունի և զքաղաքական 115

ԳԼՈՒԽ ԼԳ. — Վասն Թանահատի վանաց և Հօրն Մխիթարայ . . 116

ԳԼՈՒԽ ԼԴ. — Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց, որ գնոքա որբոյն Սահմանադրի յաջորդեցան ի ասէին 118

Եր-

ԳԼՈՒԽ ԼԵ. — Վասն Շահանդխտոյ արքայազն աղջկանն, և հրաշից նորա, որ եղեն յաշխարհիս Սիւնեաց 119

ԳԼՈՒԽ ԼԶ. — Ցաղագս իշխանացն Սիւնեաց Սահակայ և այլոց, գործք և վախճանք նոցին որ յերկրիւրն և յեօթանասուն թուականէն և այսր 121

ԳԼՈՒԽ ԼԷ. — Գալն Ցուսեփայ ի Սիւնական աշխարհս, և պէրճումն և կառուցումն գաւառացս, վախուտս իշխանացն, սիրելութիւնն առգնալ և հրակէզ հրդեհումն երկնառելոյ բարկութեանն, վկայական մահն Սմբատայ թագաւորին, և կրկին գարձ պերճլոյն և վախառէից. զոյգք որ յ358 թուականէն Հայոց ընդ այս ածեալ ձգի 134

ԳԼՈՒԽ ԼԸ. — Վասն եպիսկոպոսարանին Ցաթևոյ, և վասն սուրբ խաչին և այլ սրբոց, և վասն ժառանգութեան հայրապետացն. 146

ԳԼՈՒԽ ԼԹ. — Վասն սեառն Սաղմանի, և որ ինչ նովաւ եառն ի սուրբ եկեղեցիս ժառանգութիւն 156

ԳԼՈՒԽ Խ. — Վասն սեառն Ցովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և շինութեան մեծ կամոզիկէ եկեղեցւոյն որ յեպիսկոպոսարանին անդ ի Ցաթև և վասն այլ շինուածոց 161

ԳԼՈՒԽ ԽԱ. — Վասն ժառանգութեան եկեղեցւոյն և հայրապետացն, զոր եառն թագաւորքն և իշխանքն, և սահման վանացն, զոր գտաք գրեալ ի վերայ մագաղաթի և ընդեալ արքունական մատանեաւ 166

ԳԼՈՒԽ ԽԲ. — Գիր վճռի չրջակոյ սահմանին Ցաթևոյ 168

ԳԼՈՒԽ ԽԳ. — Վասն խոտակերաց վանիցն, որ կոչեցաւ Քարկոփ, կործանմանն ի չարժէ, և վերստին շինելոյն ի Շուշանայ սիրելոյն և ի սէր Ցովհաննիսէ 171

ԳԼՈՒԽ ԽԴ. — Շինութիւն Ցովհաննու վանիցն ի Վահանայ որդւոյ Զագկայ 174

ԳԼՈՒԽ ԽԵ. — Վասն սեառն Գէորգայ քահանայի, որ էր որդի իշխանացն Սիւնեաց. 176

ԳԼՈՒԽ ԽԶ. — Վասն շինութեան Ծորամանից, որ ի գաւառին Բղենոյ 179

ԳԼՈՒԽ ԽԷ. — Վասն Ցուրայ բերդի աւերելոյն և նզովիցն, որ այլ ոչ շինի 180

ԳԼՈՒԽ ԽԸ. — Վախճան սեառն Ցովհաննիսի, և յաջորդելն սեառն Ցակոբայ. և որ յաւուրս նորին եղեն յաւելուածք ժառանգութեան եկեղեցւոյն 184

Եր-

ԳԼՈՒԽ ԽԹ. — Շինութիւն եկեղեցեաց և վանորէից ՚ի ձեռն տեառն Ցակոբայ և Ստեփաննոս իշխանին որ ՚ի Վայոց ձոր գտաւթ, և վասն սրբոյն Գառնայ 188

ԳԼՈՒԽ Ծ. — Վասն ժառանգութեանցն որ առաւ հոգեցատուր և յաւէտ ՚ի սուրբ եկեղեցին Ցամիւոյ ՚ի ձեռն տեառն Ցակոբայ եպիսկոպոսի 194

ԳԼՈՒԽ ԾԱ. — Ապաստանութիւնն Ցակոբայ և կառաւրած կենաց նորա, և գալն Ննանիայի՝ Հայոց կաթողիկոսի երից անգամ ՚ի Սիւնիս և ձեռնադրել զՎահան եպիսկոպոս, և հնազանդել զԶուանս 200

ԳԼՈՒԽ ԾԲ. — Վասն տեառն Վահանայ և կառաւրածի կենաց նորա. 210

ԳԼՈՒԽ ԾԳ. — Եպիսկոպոսք Սիւնեաց, որ կարգեցան գկնի տեառն Վահանայ 212

ԳԼՈՒԽ ԾԴ. — Համառօտ զոյցք և կարգ իշխանացն Սիւնեաց և թագաւորել նոցին ՚ի վերջին ժամանակս 216

ԳԼՈՒԽ ԾԵ. — Վասն եպիսկոպոսութեան տեառն Յովհաննէսի և գործոց նորին 221

ԳԼՈՒԽ ԾԶ. — Շրջաբերական նամակ տեառն Ցարդսի Հայոց կաթողիկոսի Սիւնեաց յողջոյ վիճակին 226

ԳԼՈՒԽ ԾԷ. — Գալն Խամսէլայոց և կոթծանել զեկեղեցիս և այրել զվանսն Ցամիւոյ, և նորոգ շինութիւն եկեղեցեաց և վանացն ՚ի տէր Յովհաննէսէ 228

ԳԼՈՒԽ ԾԸ. — Վասն թագաւորացն Սիւնեաց. 232

ԳԼՈՒԽ ԾԹ. — Վասն եպիսկոպոսին Սիւնեաց տեառն Գրիգորի, որ գկնի տեառն Յովհաննէսի և գործոց նորին. 235

ԳԼՈՒԽ Կ. — Պատճառ աւերման Կապանին և առման բերդիցն, և բնակչինք ապաստանն թագաւորութեանն Բաղաց, և վախճան կառաւրածի Սիսական ազգիս 243

ԳԼՈՒԽ ԿԱ. — Վանորայք և ուխտք եկեղեցեաց, թէ քանի էին յայսմ աշխարհի 248

ԳԼՈՒԽ ԿԲ. — Եպիսկոպոսք, որք կարգեցան գկնի տեառն Գրիգորի. 249

ԳԼՈՒԽ ԿԳ. — Սկիզբն և պատճառ շինութեան և նախապատիւ գահերիցութեան սուրբ և գերապատիւ վարդապետին և աշխարհագէտ խմբագրութեանն Ստեփաննոսի 253

ԳԼՈՒԽ ԿԴ. — Վասն շինութեան եկեղեցւոյն Ստեփաննոսի և հոգեցա-

Եր-

տուբ ժառանգութիւնից Նորա, և այլ շինուածոց և արդեանց
որ եղեն ի Լիպարանէն և յիշխանացն Օրբէլեանց 259

ԳԼՈՒԽ ԿԶ. — Վասն մնոյ նախարարութեանն Օրբէլեանց, եթէ ուա-
տի էին և որպէս, և վասն գալոյ նոցա յաշխարհս յայս, և վասն
բազում բանից և գործոց զորս գործէք յոլով 369

ԳԼՈՒԽ ԿԷ. — Վասն յիշատակի և միաբանութեան առաւածապատակ
հիւպատոսին Հայոց Լևոնի ի սուրբ և երկնահանգէտ աթոռն
Սիւնեաց ի ՑամԹև, որ ի ձեռն առաւն Հայրապետին՝ Սիւ-
նեաց եպիսկոպոսի 317

ԳԼՈՒԽ ԿԸ. — Վասն կամաւորութեան Հայոց որ զկնի առաւն Ցա-
կոբայ, և ազգի ազգի պատահմանց նոցա և գերութեանց, և
հաւատացին և մկրտաբաղաքացին Փառանգաց, որ ի Ռովիգերին . 319

ԳԼՈՒԽ ԿԹ. — Թուղեմ վասն հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ յարեւելեան
աշխարհէս առ կամաւորիկսն Հայոց տէր Գրիգոր՝ գրեալ ձե-
ռամբ տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ընդ նմին
և դատաստանութիւն ուղղափառ հաւատոյ սրբոյն Գրիգորի Ա քան-
չելագործի և Ընթանական Ընկերականդրացւոյ 329

ԳԼՈՒԽ Հ. — Վասն աշխարհակալ արքայիցն որ եղեն զկնի գնան Ար-
ղունեին, և վասն ամենայն անցից նոցա 342

ԳԼՈՒԽ ՀԱ. — Վասն յետին վերջակալութեան մերոյ նուաստութեանն
որ կարգեցար յեպիսկոպոսութիւն Սիւնեաց, և որ ինչ գործք
առ մեօք 349

ԳԼՈՒԽ ՀԱՆ. — Եպիսկոպոսք Սիւնեաց, ամք և թիւք նոցին . . . 363

ԳԼՈՒԽ ՀԲ. — Ցիշատակարան մատենիս նորին Ստեփաննոսի . . . 367

ԳԼՈՒԽ ՀԳ. — Սիւնեաց երկոտասան գաւառաց Հարկք եկեղեցւոյ բա-
հին սահմանին 371

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ

1. Վերադարձութիւն հայկական լեզուի, Մոսկվա, 1846։ — 1 ռուբլ 50 կոպ. արծաթով։
2. Ընտիր հատուածք՝ քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց Հայոց, հանդերձ բառագրովք ի հայկականէ ի Ռուսաց բարբառ, Մոսկվա, 1849։ — 3 ռուբլ արծաթով։
3. Վէպք հնոյն Հայաստանի, քննութիւն, Մոսկվա, 1850։ — 1 ռուբլ արծաթով։
4. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1853։ — 3 ռուբլ արծաթով։
5. Վարդապետ Փարպեցւոյ Թուղթ առ Վահան՝ տէրն Մամիկոնէից, Մոսկվա, 1853։ — 1 ռուբլ արծաթով։
6. Исторія Арменіи Моисея Хоренскаго въ русскомъ переводѣ, Москва, 1858 г. — *Въ Москвѣ* и *въ С. П. Бургѣ 3 руб. серебр.*, съ пересылкою въ прочіе города *3 руб. 50 коп.*
7. Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից Աշխարհի, Մոսկվա, 1860։ — 2 ռուբլ արծաթով։
8. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860։ — 1 ռուբլ արծաթով։
9. Վարդանայ Արձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861։ — 2 ռուբլ արծաթով։
10. Սահմանոսի Միհնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Միհրանեան, Մոսկվա, 1861։ — 3 ռուբլ արծաթով։